Ս. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԿԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ

[Φ 9]

ՀԱՍՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

М. Г. САКЯН

БОЕВОЕ БРАТСТВО СОВЕТСКИХ ВОИНОВ В БОЯХ ЗА ЛЕНИНГРАД

(1941-1944)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

9(47+57)/24
Ղ 9(479.25)/1941/1945
ԸՆԹԵՐՑԱՍՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ

(1941-1944)

Ա II 29435

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1986

ԳՄԴ 63.3(2)722.72
Ս 150

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու
Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գիրքը նրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր Ա. Պ. ՍԻՄՈՆՅԱՆ, պատմական
գիտությունների թեկնածու Ե. Մ. ԽԱԼԵՅԱՆ

Սահակյան, Մ. Գ.
Ս 150 *Սովետական ռազմիկների մարտական եղբայրությունը Լենինգրադի համար մղված մարտերում (1941—1944) /Պատ. խմբ. Կ. Ա. Հարությունյան—Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 271 էջ. 12 թերթ նկ.*

Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ պատմ. ին-տ.

Աշխատությունում լուսաբանվում է սովետական բազմազգ ժողովուրդների ակտիվ մասնակցությունը Լենինգրադի 900-օրյա հերոսամարտին։ Ցույց է տրվում ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում նրանց բազում սխրանքները, ինտերնացիոնալիզմը, ջերմ հայրենասիրությունը։ Լուսաբանված է նաև հայ ժողովրդի զավակների մասնակցությունն այդ մարտերին։

Հասցեագրվում է ընթերցող լայն շրջաններին։

Ս $\frac{0505030202}{703(02)-86}$ 17—85 ԳՄԴ 63.3(2)722.72

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1986

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1985 թ. ամբողջ առաջադեմ մարդկությունը խորին երախտագիտությամբ և աշխարհում ամենուր խաղաղություն հաստատելու հավատով տոնեց Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի և նրա փառապանծ զինված ուժերի՝ գերմանական ֆաշիզմի դեմ տարած պատմական մեծ հաղթանակի 40-ամյակը: Բարի կամքի տեր բոլոր մարդիկ մեր մոլորակի տարբեր մասերում գլուխ խոնարհեցին սովետական ռազմիկների, այդ թվում Լենինգրադի պաշտպանների առաջ, որոնք արիաբար դիմացան իրենց բաժին ընկած ահեղ փորձությանը և անձնվիրաբար պաշտպանեցին սոցիալիստական հեղափոխության օրրանը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության տարեգրության մեջ ոսկե տառերով են գրված Մոսկվա, Լենինգրադ, Ստալինգրադ, Օդեսա, Սևաստոպոլ, Կուրսկ և այլ հերոս քաղաքների անունները, որոնց պատերի տակ ջախջախվեցին Եվրոպայի մեծ մասը նվաճած և մինչ այդ «անպարտելի» համարվող ֆաշիստական բանակները:

Առանձնահատուկ է հատկապես Լենինգրադի 900-օրյա հերոսամարտը, որն, իրավամբ, դարձավ ռուս ժողովրդի և նրա շուրջը հավաքված մեր երկրի բազմազգ ժողովուրդների զավակների մարտական ու աշխատանքային սխրագործությունների և խիզախումների ծննդավայր:

«Լենինգրադը,—գրում է «Правда» թերթը,—երևելի տեղ է գրավում Հայրենական պատերազմում: Նա իրեն է գամել Հիտլերյան բանակի լավագույն ուժեր և իր շրջակայքը դարձրել գերմանական հոմակների ընդարձակ գերեզման: Լենինգրադն իր բաժինն է ներդրել Ստալինգրադի ապատագրման գործում, նպաստել Մոսկվայի մոտ, Ուկրաինայում և Կովկասում գերմանացիների ջախջախմանը»[1]:

Լենինգրադի մեծ հերոսամարտի մասին ստեղծվել է բավական հա-

---

1 «Правда», *28 հունվարի, 1944 թ.»*

ռուստ գրականություն: Այժմ՝ ավելի քան չորս տասնամյակ անց, նորից անդրադառնալով այդ ահեղ ու հերոսական օրերի պատմությանը, նոր փաստերի լույսի տակ տեսնում ենք այն մեծ հերոսական սխրանքը, որ կատարել են ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների կավակները Լենինի քաղաքի համար մղված դաժան մարտերում:

Լենինգրադը, որպես հեղափոխության մայրաքաղաք, որտեղ առաջին անգամ աշխարհում հռչակվեց բանվորների և գյուղացիների իշխանություն, թանկ ու հարազատ է Սովետական Միության բոլոր ժողովուրդներին:

Լենինգրադն իր հերոսական պատմական անցյալով, երեք հեղափոխություններում մարտական մկրտություն ստացած բանվոր դասակարգով, գիտության, արվեստի ու մշակույթի տաղանդավոր գործիչներով ճանաչում է գտել ամբողջ աշխարհում և իրավամբ վաստակել «հեղափոխության օրրան» և «Լենին» անունները:

Լենինգրադը քաղաք-թանգարան է, որի բազմաթիվ թանգարաններում պահվում են համաշխարհային և ռուսական կուլտուրայի գլուխգործոցների հարվածյուռ նմուշներ: Համաշխարհային ճանաչում ունեն ճարտարապետական այնպիսի կոթողներ, ինչպիսիք են Ձմեռային պալատը, Սմոլնին, Ծովակալության շենքը, Տավրիկյան և Մարինյան պալատները, քաղաքի փողոցներն ու այգիները զարդարող գեղեցիկ ու գրավիչ պատմական հուշարձանները:

Լենինգրադը ոչ միայն գիտության, արվեստի, մշակույթի, այլև տրնտեսական և քաղաքական խոշոր կենտրոն է, ռազմական տեսակետից ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող հանգույց, որտեղից երկրի տարբեր ծայրերն են ձգվում երկաթուղային գծեր ու խճուղային ճանապարհներ: Լենինգրադի նշանակությունը միայն դրանով չի սպառվում: Պատերազմի ժամանակ այն Սովետական Միության բոլոր ժողովուրդների պայքարի ու հաղթանակի խորհրդանիշն էր, որի կորուստը բարոյական ծանր հարված կլիներ ինչպես մեր ժողովրդի, այնպես էլ ֆաշիզմի դեմ մարտնչող աշխարհի բոլոր հայրենասիրական ուժերի համար:

Լենինգրադ անվան հետ է կապված Սովետական Միության բազմապզ ժողովուրդների՝ դարերի ընթացքում համառ պայքարով նվաճած ապատությունը: Այդ պատճառով էլ համախմբված ավագ եղբոր՝ ռուս մեծ ժողովրդի զավակների շուրջը, անսահման նվիրվածությամբ Լենինգրադի պաշտպանության համար թշնամու դեմ հերոսաբար մարտնչեցին ուկրաինացին ու բելոռուսը, դաղախն ու ուզբեկը, վրացին ու հայը, ադրբե-

ջանցին ու կիրգիզը, լատվիացին ու լիտվացին, էստոնացին ու կարելը և այլ ազգերի ներկայացուցիչներ: «Ես երջանիկ եմ,—գրել է Լենինգրադի պաշտպանության ակտիվ մասնակից, հրաձգային գնդի հրամանատար Ս. Խաչիկյանը,—որ գտնվում եմ հերոս Լենինգրադցիների շարքերում, հպարտանում եմ իմ զորամասով, որը կազմված է ռուսներից, ուկրաինացիներից, բելոռուսներից, հայերից, ադրբեջանցիներից, վրացիներից, ուզբեկներից ու դաղախներից: Պաշտպանելով Լենինգրադը, մենք լավ գիտենք, որ պաշտպանում ենք Ուկրաինան, Բելոռուսիան, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը: Հեռու չէ այն օրը, երբ մենք գլխովին կջախջախենք թշնամուն Լենինգրադի մոտ»[2]: Լենինգրադի համար մղված ահեղ մարտերին մասնակցել են ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների հազարավոր զավակներ, որոնք ծանր ու դժվարին պայմաններում դրսևորեցին մարտական եղբայրության, համերաշխության, բարեկամության անկրկնելի օրինակներ:

Նրանք հերոսաբար մարտնչել են թշնամու դեմ Կարելական պարանոցում, Նևայի Դուբրովկայում, Տիխվինի, Սինյավինի, Յամ-Իժորի շրջաններում, Պուլկովոյի բարձունքում, Լուգայի, Կինգիսեպի, Գատչինայի պաշտպանական ամրությունների մոտ և ամեն տեղ, ուր պայքար էր գընում Լենինգրադի համար:

Աշխատության նպատակն է նորահայտ արխիվային փաստաթղթերի հիման վրա լուսաբանել Լենինգրադի հերոսամարտում սովետական բանակի շարքերում եղբայրական բազմազգ ժողովուրդների զավակների մարտական եղբայրությունը, համագործակցությունը, համերաշխությունը, ինտերնացիոնալիզմը, անսահման սերը Լենինգրադի նկատմամբ, նրանց մասնայական սխրագործություններն ու հերոսությունները, պատերազմ վարելու հնարքներին տիրապետելու հմտությունն ու վարպետությունը:

Աշխատությունը շարադրելիս հիմնականում օգտվել ենք ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության կենտրոնական արխիվի Հյուսիսարևմըտյան, Հյուսիսային, Լենինգրադյան, Վոլխովյան, Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատների և նրանց կազմի մեջ մտնող 2-րդ հետևակային, 8-րդ, 11-րդ, 21-րդ, 23-րդ, 42-րդ, 52-րդ, 54-րդ, 55-րդ, 67-րդ համազորային, 13-րդ և 14-րդ օդային բանակների, կորպուսների, դիվիզիաների, բրիգադների, գնդերի ֆոնդերի նյութերից, ՍՍՀՄ ռազմածովային նավատոր-

---

[2] *С. В. Хармандарян,* Боевое содружество армянского народа с народами Советского Союза в Великой Отечественной войне, Ереван, 1955, с. 24.

մի Գատչինայի Կենտրոնական, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր ՄԼԻ Լենինգրադի և Հայկական մասնաճյուղերի, Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվների նյութերից, ինչպես նաև Լենինգրադի հերոսամարտին նվիրված հարուստ գրականությունից:

1984 թ. լրացավ մեծ հերոսամարտի՝ Լենինգրադի բլոկադայի վերացման 40-րդ տարելիցը: Սովետական ժողովուրդը մեծ հանդիսավորությամբ նշեց և արժանվույն հատուցեց բոլոր նրանց, ովքեր ակտիվորեն մասնակցել են այդ հերոսամարտին:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԵՐՈՒՄ

1. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սովետական Միության դեմ պատերազմ սկսելով, ֆաշիստական Գերմանիան և նրա զորքերի գլխավոր հրամանատարությունն առաջին հերթին նկատի ունեին Լենինգրադի գրավումը, որովհետև սովետական զորքերի ջախջախումն այդ ուղղությամբ համարում էին Մոսկվայի դիմադրությունն ընկճելու վճռական պայման։ Պատերազմի հենց առաջին ամիսներին մեր մեծ Հայրենիքը և նրա եղբայրական ժողովուրդները ծանր փորձություն ապրեցին։

Զորսամսյա կատաղի ու արյունալի մարտերից հետո, կենդանի ուժի ու տեխնիկայի հսկայական կորուստների գնով, ֆաշիստական զորքերը գրավեցին սովետական Մերձբալթիկան և ներխուժեցին Լենինգրադի մարզի սահմանները։ Ֆաշիստական զորքերը գրավեցին Ուկրաինան, Բելոռուսիան, մոտեցան Մոսկվային։ Սակայն Հիտլերյան հրամանատարությանը չհաջողվեց իրականացնել իր պլանները՝ շրջապատել ու ոչնչացնել Հյուսիսարևմտյան ռազմաճակատի զորքերին, ընկճել Հյուսիսային ռազմաճակատի զորքերի դիմադրությունը և «գետնին հավասարեցնել» Լենինգրադը։

Երկու ռազմաճակատների զորքերը ոչ միայն կարողացան կասեցնել ֆաշիստական տանկերի հաղթարշավը դեպի Լենինգրադ, այլև 1941 թ. վերջին Տիխվինի շրջանում ծանր պարտության մատնեցին թշնամուն՝ ձախողելով Լենինգրադը կրկնակի օղակի մեջ առնելու նրա հրեշավոր մտադրությունը։ Ֆաշիստական զորքերը ժամանակավոր հաջողություններով արբեցած, վստահ իրենց ուժերի գերազանցությանը, առանց հաշվի առնելու ծանր կորուստները, նետվում էին Լենինգրադ։

Հուլիսի սկզբին թշնամին ներխուժեց Լենինգրադի մարզի սահմանները: Կենաց և մահու պայքար սկսվեց յուրաքանչյուր բնակավայրի, ավանի, տան, յուրաքանչյուր թիկ հողի համար: Սովետական ռազմիկները մեծագույն զոհողությունների գնով, չինայելով կյանքը, ամեն ինչ անում էին փակելու ֆաշիստական հրոսակախմբերի ճանապարհը դեպի Հոկտեմբերյան հեղափոխության օրրանը:

Օր ու գիշեր չէին դադարում մարտերը Լենինգրադի ուղղությամբ: Կուսակցության Լենինգրադի քաղաքային կոմիտեի կոչով քաղաքի ու մարզի ամբողջ բնակչությունը ոտքի ելավ պաշտպանելու հարազատ քաղաքը: Էշելոն-էշելոնի ետևից Լենինգրադից դուրս էին գալիս գնացքները և ուղղություն վերցնում դեպի Լուգա գետի շրջանը և Կարելական պարանոցը, պաշտպանական կառույցների վրա աշխատելու համար այնտեղ հասցնում Լենինգրադ քաղաքի և մարզի հարյուր հազարավոր բնակիչների:

Պաշտպանական ամրությունների վրա աշխատում էին գործարանների, ֆաբրիկաների բանվոր-ծառայողներ, գիտական հիմնարկների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, տեխնիկումների դասախոսներ, գիտնականներ, ուսանողներ, դպրոցների աշակերտներ և ուրիշներ: Մեծ եռանդով ու նվիրումով էին աշխատում Լենինգրադի օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողուհի Նելլի Բարաթյանը, գեղարվեստի ակադեմիայի ուսանողներ Վահան Հարությունյանը, Նիկոլայ Նիկողոսյանը, Հակոբ Հակոբյանը, Գաբրիել Գաբրիելովը, Լենինգրադի կոնսերվատորիայի դասախոսներ Տիգրան Մարտիրոսյանը, Գեորգի Տիգրանովը, ճարտարապետներ Սերգեյ Թումանյանը և շատ ուրիշներ: Պաշտպանական ամրությունների կառուցման աշխատանքներում ընդգրկվեցին Լենինգրադի նշանավոր գիտնականներ՝ ակադեմիկոսներ Ա. Ա. Բայկովը, Ա. Ֆ. Իոֆֆեն, Ա. Ն. Կրիլովը, Մ. Ա. Շատելենը, պրոֆեսորներ Ա. Ա. Մորոզովը, Ա. Ն. Կուզնեցովը, Ա. Ա. Ուրազովը, Բ. Ե. Վորոբյովը, Ն. Մ. Բելյաևը և ուրիշներ: Լուգա գետի և քաղաքի անմիջական մատույցների շրջանում պաշտպանական կառույցների աշխատանքները ղեկավարողների՝ դոցենտներ Յե. Ա. Մոսկալենկոյի, Կ. Դ. Մորոզովի, Ա. Պ. Պավլովի և մյուսների շարքերում էր նաև հայազգի Գ. Ա. Տեր-Սիմոնովը[3]:

Կարճ ժամանակում Լենինգրադը և նրա մոտիկ ու հեռու մատույցնե-

---

[3] *А. В. Карасев,* Ленинградцы в годы блокады 1941—1943 гг. М., 1959, с. 70—73.

ը պատվեցին պաշտպանական ուժեղ ամրություններով։ Հուլիս-օգոստոս ամիսներին կառուցվեց 5000 դզոտ և դոտ, 635 կմ փշալարային արգելակ, 700 կմ հակատանկային փոս, 2700 կմ խրամատ և այլն[4]*։ Լենինգրադը վերածվեց անառիկ ամրոցի։ Կուսակցության Լենինգրադի քաղաքային ու մարզային կոմիտեների ղեկավարությամբ ստեղծվեցին 10 աշխարհազորային դիվիզիա, 14 հրետանային գումարտակ, 7 պարտիզանական գունդ և այլ ստորաբաժանումներ*[5]*։ Մինչև հուլիսի 6-ը նոր կազմավորվող աշխարհազորային դիվիզիաներում ընդգրկվեց 100000 լենինգրադցի*[6]*։*

Աշխարհազորայինին զինվորագրվեցին Լենինգրադի բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսներ, ուսանողներ, գիտության, մշակույթի ու արվեստի գործիչներ, բանվորներ, բոլոր նրանք, ում թանկ էր հարազատ քաղաքը։ Աշխարհազորային դարձան Լենինգրադի պետական համալսարանի 2500 դասախոս ու ուսանող, 80 գրող[7]*։ «Ես ստացա հեռագիր Տոմսկ էվակուացվելու մասին,—գրում է ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Մ. Պ. Կոստենկոն,—բայց ես որոշեցի ուղարկել միայն իմ ընտանիքը, իսկ ես հրաժարվեցի մեկնելուց։ Ես ավելի լավ է մնամ Լենինգրադի բանվորների հետ պաշտպանելու իմ սիրելի քաղաքը»։ Աշխարհազորային գրվեցին ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Գնեդինը՝ որդու հետ միասին*[8]*, լոգի համաշխարհային ռեկորդակիր Լեոնիդ Մեշկովը, անվանի մարզիկ Եվգենի Բելկովսկին։ Քաղաքից հրաժարվեցին հեռանալ ակադեմիկոսներ Ս. Ա. Ժելբելևը, Ի. Յու. Կրաչկովսկին, Հ. Ա. Օրբելին, Ա. Ա. Ուխտոմսկին։ Ռազմաճակատ մեկնելու ցանկություն հայտնեցին Լենինգրադի կոնսերվատորիայի 200 դասախոսներ ու ուսանողներ։ Նրանցից էին կոմպոզիտոր Դ. Դ. Շոստակովիչը, դաշնակահար Պ. Ա. Սերեբրյակովը, երգիչ Մ. Օ. Ռեյզենը, գրողներ Ն. Ս. Տիխոնովը, Վ. Մ. Սայանովը, Ա. Ա. Պրոկոֆևը, Ա. Ե. Ռեշետովը և ուրիշներ*[9]*։ Աշխարհազորային շատ դասախոսներ ու գիտնականներ դարձան օրինակելի հրամանատարներ ու քաղաշխատողներ։ Նրանցից են ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր պրոֆեսորներ Տ. Պ. Կրավեցը, Յու. Վ.*

---

[4] *А. Н. Мушников,* Балтийцы в боях за Ленинград. М, 1955, с. 63.

[5] «Вопросы истории КПСС», 1952, № 5, с. 104.

[6] *С. Беляев, П. Кузнецов,* Народное ополчение Ленинграда, Л., 1959, с. 24.

[7] «Очерки истории Ленинграда», т. 5. (Ленинград в Великой Отечественной войне. 1941—1945), Л., 1967, с. 48—49.

[8] *А. В. Карасев,* Ленинградцы в годы блокады, с. 39.

[9] *В. Е. Зубаков,* Героический Ленинград. М., 1957, с. 18.

Վինիկը, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Մ. Պ. Տրոյանը, պատմական գիտությունների թեկնածու Լ. Ի. Լավրովը, դոցենտ Ս. Ս. Չերնիկովը, հնագետ Ն. Ն. Վորոնինը և ուրիշներ։ Հրամանատարական լավագույն հատկություններ դրսևորեց արևելագետ Մ. Ի. Դյակոնովը։ Աշխարհազորայինների շարքերը մտան Լենինգրադի հիմնարկ-ձեռնարկությունների բազմաթիվ հայ երիտասարդներ և անմիջապես մեկնեցին ռազմաճակատ։ Ռազմաճակատ մեկնեցին Լենինգրադի Օտտի անվան մանկավարժա-գիտնեկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտներ Վերգինե Հարությունյանը, Ելենա Բուտնազյանը, Վերա Հարությունյանը, բժշկուհիներ՝ Քնարիկ Ջմշկյանը, Թամարա Օգանովան, 2-րդ բժշկական ինստիտուտի շրջանավարտներ՝ քույրեր Սոֆյա և Ռուզաննա Լալայանները, պետական համալսարանի դոցենտ Ե. Շ. Հայրապետյանցը, ֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտ Արամ Դասպարյանը, տեխնոլոգիական ինստիտուտի դասախոս Խ. Բալայանը, նույն ինստիտուտի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղար Վ. Ակիզյանը, ուսանողներ Հ. Ա. Ադուզումցյանը, Տ. Ս. Նաջարյանը, Ա. Պ. Հարությունյանը, ասպիրանտներ Գ. Լ. Պետրոսյանը, պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Ս. Նարինյանը, պատմաբան Հովսեփ Օրբելու ասպիրանտ Պարույր Հարությունյանը, քանդակագործներ Պետուշ Արշակունին, Սահակ Մովսեսյանը, նկարիչներ Սաքո Հովհաննիսյանը, Պադո Գրիգորյանը, երիտասարդ տաղանդավոր կոմպոզիտոր Տունիկ Հովհաննիսյանը, ջութակահար Կորյուն Անանյանը, «Союзинкельовпроект»-ի աշխատակից Անդրանիկ Գրիգորյանը և շատ ուրիշներ։ Մարդիկ, ովքեր պետք է պայքարեին մարդու առողջության համար, ստեղծեին արդյունաբերությանն անհրաժեշտ նոր մեքենաներ, հետախուզեին երկրի ընդերքը, կտավին հանձնեին աշխատանքային սխրագործություններով մեր ժողովրդի հերոսական առօրյան, հորինեին մարդկանց ոգևորող նոր երգեր։

Սկսված պատերազմը շատ-շատերին ստիպեց կամավոր մեկնել ռազմաճակատ, զենքը ձեռքին կռվել թշնամու դեմ։ Իսկ հակառակորդը, առանց հաշվի առնելու ծանր կորուստները, շարունակում էր առաջ շարժվել Լենինգրադի ուղղությամբ։

Հուլիսի 5-ին թշնամու 41-րդ մեքենայացված կորպուսը գրավեց Օստրով քաղաքը, մոտեցավ Պսկովին և փորձեց ընթացքով մտնել քաղաք ու հաշվեհարդար տեսնել դեռևս քաղաքից չհեռացած, մարտերում հյուծված սովետական զորամասերի հետ։

Սպառնալից վիճակ էր ստեղծվել։ Սովետական հրամանատարությունը թշնամու տանկային հարձակումը կասեցնելու համար 50-րդ ինժենե-

բական գումարտակին հրամայեց պայթեցնել Պսկով տանող վեր.ի.կայա գետի կամուրջները։

Հուլիսի 8-ին սակրավորները ոչնչացրին դրանք, թողնելով մեկը՝ սովետական զորամասերի նահանջն ապահովելու համար։ Օրվա կեսին թշնամին ընդհուպ մոտեցավ կամուրջին։ Սակրավորների խումբը ղեկավարող լեյտենանտ Ս. Դ. Բայկովը միացրեց էլեկտրական հոսանքը, բայց պայթյուն տեղի չունեցավ, հոսանքն անջատվել էր։ Լարված պահ էր։ Թշնամու տանկերը կարող էին անցնել կամրջով և ներխուժել քաղաք։

Այստեղ դրսևորվեց սովետական մարդուն հատուկ խիզախ հայրենասիրություն, կարմիրբանակայինի երկաթե կամք և բարձր գիտակցություն՝ կյանքը չխնայել հանուն ընկերների, հանուն հայրենիքի։

Հերոս սակրավորները զգալով քաղաքին սպառնացող վտանգը, խուճապի չմատնվեցին, արագ կերպով արկերին միացրին այրվող լաթն ու պայթեցրին կամուրջը։ Նրանք զոհվեցին, իրենց կյանքի գնով փակելով թշնամու ճանապարհը։ Ս. Դ. Բայկովին ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[10]։

Հուլիսի 9-ին թշնամին գրավեց քաղաքը։ Պսկովը գրավելուց հետո թշնամու 4-րդ տանկային խմբի 41-րդ մեքենայացված կորպուսը հուլիսի 10-ին սկսեց զարգացնել հարձակումը Նովգորոդի և Լուգայի ուղղությամբ։ Շրջապատվելու ռեալ սպառնալիք ստեղծվեց 8-րդ բանակի համար։ Զորակայանը նկատի ունենալով, որ Հյուսիսարևմտյան ռազմաճակատն իր ուժերով ի վիճակի չէ կասեցնելու թշնամու առաջխաղացումը Լենինգրադ, Լուգա գետի շրջանում մարտերի մեջ մտցրեց Հյուսիսային ռազմաճակատի զորամասերը։ Զորակայանի ցուցումով հուլիսի 6-ին ստեղծվեց Լուգայի օպերատիվ խումբը, որի կազմի մեջ մտան 70-րդ, 171-րդ, 177-րդ, 191-րդ հրաձգային և 1-ին, 2-րդ, 3-րդ աշխարհազորային դիվիզիաները։ Օպերատիվ խումբը պաշտպանություն գրավեց Լուգա քաղաքից մինչև Իլմեն լիճը։

Ծանր վիճակ ստեղծվեց Հյուսիսարևմտյան ռազմաճակատի համար։ 41-րդ հրաձգային և 1-ին մեքենայացված կորպուսները լարված մարտեր մղելով թշնամու ուժերի դեմ, նահանջեցին Լուգայի ուղղությամբ։

Մարտական գործողությունների այդ հատվածում խառն իրադրության մեջ զորամասը ղեկավարելու լավագույն հատկություններ դրսևորեց ռազմաճակատի օպերատիվ բաժնի պետի տեղակալ մայոր Անդրանիկ

[10] «Борьба за Советскую Прибалтику в Великой Отечественной войне 1941—1945 гг. Рига, книга первая, 1966, с. 99.

Սարգսյանը[11]։ Ռազմաճակատի ռազմական խորհրդի հրամանով նրան հանձնարարվեց մեկնել մարտական գործողությունների վայրը, պարզել իրադրությունը Նիկոլաևի, Սերեբրյակով կայարանի, Պլյուսա և Մոգոլիցի բնակավայրերի շրջանում և այդ մասին զեկուցել հրամանատարությանը։ Հուլիսի 7-ին հասնելով նշված վայրը, նա հանդիպեց 3-րդ մոտոհրաձգային գնդի անկանոն նահանջող մարտիկներին։

Ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Բոչկովի հրամանով Սարգսյանն իր վրա վերցրեց գնդի հրամանատարությունը և կարճ ժամանակում զորամասի թվական կազմը հասցրեց 1500-ի։ Շնորհիվ Ա. Սարգսյանի վճռական և արագ գործողությունների, գունդը վերականգնեց մարտունակությունը և դիմագրավեց թշնամու աճող ճնշմանը։ Գունդը Սարգսյանի գլխավորությամբ 10 օր (8—18. 7. 1941) մարտեր մղեց թշնամու քանակապես գերազանցող ուժերի դեմ, ժամանակավորապես կասեցնելով նրա առաջխաղացումը Լուգայի ուղղությամբ[12]։

Մարտերից մեկի ժամանակ գնդին անձամբ գրոհի տարավ Ա. Սարգսյանը, իր օրինակով ոգևորելով հրամանատարներին և մարտիկներին։ Հարձակումից առաջ նա դիմեց գնդի անձնակազմին. «Նայեցեք դեպի արևելք, ովքեր են այնտեղ. Ձեր ծնողները, հարազատները, մեր մայրենի հողը։ Դուք ռուսներ եք։ Դուք գիտեք, որ ռուս ժողովուրդը երբեք չի պարտվել»[13]։ Գունդը այդ օրը ծանր կորուստներ պատճառեց թշնամուն։

Մարտական առաջադրանքը հաջող կատարելու համար Անդրանիկ Սարգսյանը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1941 թ. հուլիսի 25-ի հրամանագրով պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով, արժանացավ ռազմաճակատի հրամանատարության շնորհակալությանը և ստացավ արծաթե սուր[14]։

Ծանր էին մարտերը Լուգայի ուղղությամբ։ Հուլիսի 13-ին հակառակորդը տանկերի աջակցությամբ կարողացավ մխրճվել մեր զորքերի

---

11 Անդրանիկ Սարգսի Սարգսյանը ծնվել է 1906 թ. ՀՍՍՀ Սիսիանի շրջան Ախբենդ (այժմ՝ Աշոտավան) գյուղում, 1940 թ. ավարտել է Մ. Վ. Ֆրունզեի անվան ակադեմիան։ 1942 թ. նշանակվել է Հայկական 89-րդ դիվիզիայի հրամանատար։ Այնուհետև վարել է բանակի շտաբի պետի պաշտոնը։ Մահացել է 1965 թ.։

12 ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՍՍՀՄ ՊՄԿԱ), Ա. Ս. Սարգսյանի անձնական գործ № 1580362, թ. 13։

13 Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվ, ֆ. 284, գ. 4 (այսուհետև՝ ՀՄՊՊԿ)։

14 Նույն տեղում։

պաշտպանության մեջ, բայց չկարողացավ զարգացնել հաջողությունը։ Հաջորդ օրը 177-րդ հրաձգային և 24-րդ տանկային դիվիզիաների մարտիկները հակագրոհի անցնելով, հակառակորդին ստիպեցին նահանջել և նորից դիրքեր գրավել Պլյուսա գետի շրջանում։ Ավագ լեյտենանտ Ա. Վ. Յակովլևի հրետանավորները ոչնչացրին հակառակորդի 10 տանկ[15]։

Լուգա քաղաքը և նրա պաշտպանական սիստեմը միանգամից հաղթահարելու անհաջող փորձից հետո թշնամին ուղղություն վերցրեց դեպի հյուսիս, նպատակ ունենալով Լադոգայի հյուսիս-արևմուտքից կատարել ճեղքում և շարունակել հարձակումը դեպի Լենինգրադ։ Հուլիսի 14-ին նա Կինգիսեպի շրջանում 20 տանկով անցավ Լուգա գետը և չհանդիպելով լուրջ դիմադրության, գրավեց մի քանի բնակավայր։ Թշնամու հաջողությունը վտանգի տակ դրեց Լուգայի պաշտպանական ամբողջ համակարգը։ Ստեղծված ծանր վիճակը փրկելու համար այնտեղ ուղարկվեց աշխարհազորային 2-րդ դիվիզիան, որը մեծ դժվարությամբ կասեցրեց թշնամու հարձակումը, բայց չկարողացավ նրան դուրս շպրտել գրաված հենակետից։ Հաջորդ օրը մարտերի շրջանը եկավ Հյուսիսարևմտյան ուղղության զորքերի գլխավոր հրամանատար, Սովետական Միության մարշալ Կ. Ե. Վորոշիլովը։ Մարտական գործողությունների հատվածներից մեկում աշխարհազորայինները մի պահ ընկրկեցին և սկսեցին նահանջել։ Մարշալը նկատելով այդ, առանց վարանելու արագ հասավ նահանջողներին և ոգևորիչ խոսքով նորից գրոհի առաջնորդեց նրանց։ Մարշալի ներկայությունից ոգևորված աշխարհազորայինները հուժկու գրոհով թշնամուն դուրս շպրտեցին գյուղից[16]։

Աշխարհազորային 2-րդ դիվիզիայի ձախ թևում՝ Բոլշոյ Սաբսկի շրջանում թշնամու դեմ հերոսաբար մարտնչեցին Լենինգրադի Ս. Մ. Կիրովի անվան Կարմրադրոշ հետևակային ուսումնարանի կուրսանտները՝ գնդապետ Գ. Վ. Մուխինի հրամանատարությամբ։ Հերոսի մահով ընկան գումարտակի հրամանատար փոխգնդապետ Ա. Կուզնեցովը, ավագ քաղղեկ Գ. Ե. Բոևը, լեյտենանտ Պ. Ի. Շումիլինը, կուրսանտներ՝ Ա. Ֆ. Շարկովը, Ա. Ա. Անտիպովը և շատ ուրիշներ։ Ցուցաբերած արիության համար շատ կուրսանտներ արժանացան կառավարական բարձր պարգևների, իսկ ուսումնարանի դրոշին ամրացվեց Կարմիր դրոշի երկրորդ շքանշանը[17]։ Իրենց դիրքերը ամուր պահեցին և հակառակորդին ծանր կո-

---

[15] «История ордена Ленина Ленинградского военного округа, М., 1974, с. 206.

[16] ՍՍՀՄ ՊՄԿԱ ֆ. 1240, ց. 1, գ. 1, թ. 6։

[17] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 207.

ռուստներ պատճառեցին Սովետական Միության հերոս Գրիգոր Միքայելի Հայրապետյանի դասակի մարտիկները։ Աչքի ընկավ մարտիկ Աշոտ Վաղարշակի Ղազարյանը[18]։ Աշոտ Ղազարյանը հետագայում դարձավ տանկիստ և մարտական փառապանծ ուղի անցավ։

Լուգա—Կինգիսեպ շրջանում սովետական զորքերի կազմակերպած դիմադրության շնորհիվ թշնամու 41-րդ մեքենայացված կորպուսի հաղթարշավը կասեցվեց։

Այդ ժամանակ Ստարայա Ռուսսայի և Խոլմի ուղղությամբ մարտերով և ծանր կորուստներով առաջ էին շարժվում 18-րդ բանակի 41-րդ մեքենայացված և 16-րդ բանակի 56-րդ տանկային կորպուսները։ Հարձակման ընթացքում այդ բանակների միջև առաջացել էր 100 կմ ազատ տա-

---

[18] *Ա. Վ. Ղազարյանը ծնվել է 1921 թ. Վրացական ՍՍՀ Ծալկայի շրջանի Զիֆթբելիսա գյուղում։ 1939 թ. միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, մասնակցել 1939—1940 թթ. սովետա-ֆիննական պատերազմին։ Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, նա որպես շարքային զինվոր ծառայում էր Մերձբալթյան հատուկ ռազմական օկրուգի 8-րդ բանակի 90-րդ հրաձգային դիվիզիայի 286-րդ հրաձգային գնդում։ Ակտիվորեն մասնակցել է սովետական Մերձբալթիկայի և Լենինգրադի հերոսամարտերին։ Պարգևատրվել է «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով։ Հերոս քաղաքի մատույցներում Ղազարյանը վիրավորվում է։ Ապաքինվելուց հետո հրամանատարությունը նրան ուղարկում է կրտսեր հրամանատարների պատրաստման վեցամսյա կուրսերում սովորելու։ Ավարտելուց հետո նա որպես տանկային դասակի հրամանատար 196-րդ առանձին տանկային բրիգադի կազմում մասնակցել է Ռժևի, Սմոլենսկի, Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրման մարտերին։ Մարտերում ցուցաբերած արիության համար նա երկու անգամ պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով և առաջ քաշվել սկզբում՝ տանկային վաշտի, ապա՝ տանկային գումարտակի հրամանատար։ 1943 թ. ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը։ 1945 թ. սկզբին Բելոռուսական 3-րդ ռազմաճակատի 117-րդ տանկային բրիգադի կազմում մասնակցում է սովետական զորքերի Արևելապրուսական հարձակողական գործողություններին։ Տանկային գումարտակը նրա հրամանատարությամբ 1945 թ. հունվարի 17—23-ը մարտերով անցավ 150 կիլոմետր։ Խիզախ հայորդուն շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Ա. Վ. Ղազարյանը 1949 թ. ավարտել է զրահատանկային զորքերի ռազմական ակադեմիան և բանակում վարել մի շարք պաշտոններ։ Նա այժմ գեներալ-մայոր է և զբաղեցնում է Հայկական ՍՍՀ զինկոմի պաշտոնը։ ՍՍՀՄ գրողների միության անդամ է, հանրապետության ճանաչված ու սիրված գրողներից մեկը։ Նրա գրչին են պատկանում «Քառորդ դար տանկերի վրա» և «Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր» շորս հատորով գրքերը։*

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1985 թ. նոյեմբերի 29-ի որոշմամբ Աշոտ Վաղարշակի Ղազարյանին՝ «Պատերազմ, մարդիկ, ճակատագրեր» քառահատոր գրքի համար շնորհվեց պետական մրցանակ։ Այսպիսին է զինվորի, գեներալի, գրողի մարտական ու աշխատանքային սխրանքների ուղին։

բածություն։ Այդ պահը հնարամտորեն օգտագործեց սովետական հրամանատարությունը։ 11-րդ բանակը, որի կազմի մեջ մտցվեց 21-րդ տանկային դիվիզիան, հուլիսի 14-ին Սոլնցի շրջանում ուժեղ հակահարված հասցրեց թշնամուն։

Հարվածի նպատակն էր շրջանցել և ոչնչացնել Շիմսկի շրջանում գտնվող թշնամու խմբավորումը և դրանով իսկ կասեցնել նրա հարձակումը Նովգորոդի ուղղությամբ։ Հուլիսի 14-ին սովետական զորքերը հուժկու հարված հասցրին թշնամուն, կտրեցին նրա նահանջի ճանապարհը։ Հուլիսի 17-ին նրանք գրավեցին Սոլնցե քաղաքը, իսկ հաջորդ երկու օրում դուրս եկան Շելոն գետի հարավային ափը։ Այդ մարտերի ժամանակ գլխովին ջախջախվեցին թշնամու 8-րդ տանկային դիվիզիան և 56-րդ տանկային կորպուսը։ Տանկային զորամասերը ետ շպրտվեցին 40 կմ արևմուտք։ Շարունակվում էին համառ մարտերը Պորխով—Նովգորոժև ուղղությամբ, ուր մեր 11-րդ և 27-րդ բանակները հակառակորդի մի քանի անգամ գերակշռող ուժերի ճնշման տակ ետ քաշվեցին Ստարայա Ռուսսա և Խոլմ։

Հուլիսի 17-ին Դնո քաղաքի մոտ մեծ սխրագործություն կատարեց 415-րդ կապի գումարտակի ռադիովաշտի քաղղեկի տեղակալ էստոնացի Արնոլդ Մերին։ Թշնամին խոշոր ուժերով հարձակվեց զորամասի շտաբի վրա։ Մարտը ղեկավարում էր Արնոլդ Մերին, որն իր համարձակ գործողություններով ոգևորեց մարտիկներին։ Մարտի թեժ պահին վերջանում են փամփուշտները, Արնոլդը առանց տատանվելու, գնդակների տարափի տակ կռվող մարտիկներին է հասցնում փամփուշտներ և հրամայում «Ոչ մի քայլ ետ, դիմացեք մինչև վերջ»։ Նա երեք անգամ վիրավորվեց և միայն 4-րդ վերքը ստանալուց հետո հեռացավ մարտի դաշտից[19]։ Խիզախ էստոնացուն շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Այդ նույն ժամանակ թշնամու թիկունքում համարձակ արշավ կատարեց կործանիչ ջոկատը՝ մայոր Գորյաինովի հրամանատարությամբ։ Ոչնչացնելով երկու հրետանային դիվիզիոն, 300 ավտոմեքենա և գերի վերցնելով 12 հիտլերական, ջոկատը նորից անցավ ռազմաճակատի գիծը և միացավ յուրայիններին։ Այդ շրջանում թշնամու թիկունքում մեծ ավերածություններ կատարեց նաև մի խումբ խիզախներից կազմված մարտական ջոկատը՝ Մ. Գ. Կիսելևի, Կ. Գ. Մաշկովի և Ն. Ի. Երմոլովի հրամանատարությամբ[20]։

[19] «Знамя Советов», 26 августа 1941 г.

[20] «Борьба за Советскую Прибалтику в Великой Отечественной войне 1941—1945», Книга первая, с. 111.

2—534

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՆ. ՀԱՆ. ՀՐԱԴԱՐԱՆ

Կարմիր բանակի հերոսական դիմադրությունը և հարձակողական ակտիվ գործողությունները թշնամու հրամանատարությանը ստիպեցին հուլիսի 19-ին դադարեցնել հարձակումը Լենինգրադի ուղղությամբ։

Գերմանական զորքերի անհաջողությունից անհանգստացած, հուլիսի 21-ին «Հյուսիս» բանակների խմբի շտաբ եկավ Հիտլերը և պահանջեց հրամանատարից արագ «վերջացնել» հաշիվը Լենինգրադի հետ, հայտարարելով, որ այդ քաղաքը հեղափոխության օրանն է և նրա անկմանը կը-հետևի «բոլշևիզմի կրախը»[21]։ Հուլիսի 30-ին հիտլերյան գլխավոր հրամանատարությունը արձակեց № 34 դիրեկտիվը, որի համաձայն «Հյուսիս» և «Հարավ» բանակների խմբերը պետք է շարունակեին հարձակումը, իսկ «Կենտրոն» բանակների խումբը, որը հարձակվում էր Մոսկվայի ուղղությամբ, ժամանակավորապես անցներ պաշտպանության[22]։

Կենդանի ուժի ու տեխնիկայի նոր համալրումներ ստանալով, հակառակորդը օգոստոսի 8-ին վերսկսեց հարձակումը Կինգիսեպի, իսկ 10-ին Լուգա, Նովգորոդ, Ջուդովո ուղղություններով։ Նորից վերսկսվեցին համառ ու արյունալի մարտերը Լենինգրադի ուղղությամբ։ Օգոստոսի 12-ին թշնամին մարտի մեջ մտցնելով նոր համալրված 8-րդ տանկային դիվիզիան, կարողացավ հաղթահարել աշխարհազորային 2-րդ դիվիզիայի դիմադրությունը, մոտենալ Կինգիսեպ—Գատչինա երկաթուղուն, և այնուհետև գրավել Վեյմարն ու Մոլոսկովիից կայարանները։

Հակառակորդի առաջխաղացումը կասեցնելու համար այդ շրջանն ուղարկվեցին 1-ին տանկային, 281-րդ հրաձգային և աշխարհազորային 1-ին դիվիզիաները։ Օդից մեր զորքերին աջակցում էին 5-րդ, 73-րդ և Բալթյան կարմրադրոշ նավատորմի 13-րդ ավիացիոն գնդերը։ Մարտերն ավելի դաժան բնույթ ստացան։ Օգոստոսի 8-ին ուժեղ հրետանային գրնդակոծությունից հետո հակառակորդը աշխարհազորային 2-րդ դիվիզիայի դեմ շարժեց երեք մոտորացված և մեկ հետևակային դիվիզիա։ Ծանր կորուստների գնով հակառակորդի տանկերին հաջողվեց ճեղքել պաշտպանությունը և խոր մխրճվել աշխարհազորայինների դասավորության մեջ։ Մի ակնթարթ ընկրկեցին աշխարհազորայինների որոշ մասի մարտական շարքերը։ Այդ լարված պահին գումարտակի հրամանատար, կոմունիստ Լաբուտինը, դասակի հրամանատարներ Սավկինի, Բելովի և Շապոշնիկովի հետ միասին հակագրոհի տարան 1-ին վաշտին և դուրս շպրտեցին դիվիզիայի պաշտպանությունը ներխուժած հակառակորդին։ Տանկերը չբս-

[21] *Г. Гот*, Танковые операции. М., 1961, с. 125.

[22] *И. П. Барбашин, А. И. Кузнецов, В. П. Морозов, А. Д. Харитонов, Б. Н. Яковлев.* Битва за Ленинград, М., 1964, с. 47.

տանալով հետևակի աջակցությունը, ետ դարձան։ Օգոստոսի 9—11-ը հակառակորդի ձեռնարկած բոլոր գրոհները նույնպես ձախողվեցին։ Միայն օգոստոսի 12-ին նա մարտի մեջ մտցրեց 100 տանկ, ավելի քան 40 զրահամեքենա և 50 ինքնաթիռ։ Շրջապատումից խուսափելու համար աշխարհազորայինները ետ քաշվեցին։ Մարտերի ժամանակ աչքի ընկան գումարտակի հրամանատարներ Մ. Գ. Լուպենկովը, Մ. Ս. Միրովը, դասակի հրամանատարներ Բ. Կուզմինը, Կ. Բարանովը, Ն. Ալեքսեևը և ուրիշներ[23]։ Օգոստոսի 11-ին հակառակորդը աշխարհազորային 1-ին դիվիզիայի մարտակարգերի դեմ նետեց 38 տանկ, իսկ 4 ինքնաթիռներ խուզիչ թռիչքով ռմբակոծում ու գնդակոծում էին նրանց դիրքերը։ Մարտական անհրաժեշտ պատրաստություն չանցած աշխարհազորայինները կռվում էին անձնազոհաբար, դրսևորելով հերոսության բազում օրինակներ։ Առաջին գնդի 2-րդ գումարտակը շարքից հանեց 5 տանկ։ Կրտսեր լեյտենանտ Կուկանովը նռնակով ոչնչացրեց թշնամու տանկը, այնուհետև ոչնչացրեց բոցավառվող տանկից դուրս նետվող 6 տանկիստների։ Թշնամու տանկերը 4 անգամ անցան կրտսեր լեյտենանտ Կոզլովի դասակի դիրքերի վրայով, ձգտելով թրթուրներով ճզմել խիզախ մարտիկներին, բայց ապարդյուն։ Թշնամին ետ շպրտվեց։ Օգոստոսի 13-ին նորից սկսվեց հոգեբանական գրոհը աշխարհազորայինների դիրքերի վրա։ Մանր մարտից հետո հրամանատարության հրամանով դիվիզիայի զորամասերը օգոստոսի 17-ի գիշերը ետ քաշվեցին և նոր դիրքեր գրավեցին Կլեպիկովո, Գուբանից, Ռոդովիցի, Վոլգովո սահմանագծում։ Սնայպեր Եգորովը հրացանային կրակոցով խփեց թշնամու մեկ ինքնաթիռ։ Օգոստոսի 11—17-ը աշխարհազորային 1-ին դիվիզիան ոչնչացրեց 50 տանկ, ռազմամթերքի 3 պահեստ և այլն[24]։

Հակառակորդը Լուգա քաղաքի դեմ նետեց Փարիզի ոստիկանության էսէսական 1-ին, 269-րդ հետևակային ու 8-րդ տանկային դիվիզիաները։ 177-րդ հրաձգային դիվիզիայի մարտիկները դրսևորելով բացառիկ դիմացկունություն ու արիություն, ետ շպրտեցին թշնամու բոլոր գրոհները։ Հերոսի մահով ընկավ դիվիզիայի 706-րդ հրետանային գնդի մարտկոցներից մեկի ամբողջ անձնակազմը, չնահանջելով ոչ մի քայլ, կրակելով մինչև վերջին արկը։ Սերժանտ Գրիգորևն անձամբ ոչնչացրեց գնդացրային երկու կրակակետ, Ֆյոդորովը սպանեց 20 հիտլերական և գնդացրային

---

[23] *П. И. Кузнецов,* Великий патриотический подвиг, с. 37—40.
[24] *ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1228, ց. 1, գ. 1, թ. 103—106։*

կրակով ստիպեց թշնամուն նահանջել։ Մարտերի ժամանակ սպանվեց էսէսական 1-ին դիվիզիայի հրամանատար գեներալ Մուդֆերշտադը[25]։

Օգոստոսյան մարտերի ժամանակ անմահ սխրագործություն կատարեց Լենինգրադի համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի անվանական թոշակառու Արամ Գասպարյանը։ Շնորհալի երիտասարդին խոստումնալից ապագա էր սպասվում, բայց նա որպես աշխարհազորային մեկնեց ռազմաճակատ։ Մեկնելուց առաջ նա համալսարանի ընդհանուր ժողովում հայրենասիրական ելույթ ունեցավ, ասելով. «Հիմա թշնամու հետ մենք պիտի խոսենք գնդացրի, նռնակի, թնդանոթի, տանկի լեզվով։ Ես այսօրվանից ինձ հայտարարում եմ հայրենիքի զինվոր... Կամավոր գնում եմ բանակ»[26]։

Գասպարյանը դրսևորեց խիզախ ռազմիկին հատուկ ամենալավագույն հատկությունները։ Մարտերից մեկի ժամանակ նա ոչնչացրեց թշնամու տանկը և փրկեց ծանր վիրավորված հրամանատարին։ Զորամասի հրամանատարությունը Արամ Գասպարյանին նշանակեց ջոկի հրամանատար և հրամայեց պաշտպանել ետ քաշվող զորամասի նահանջը։ Խիզախ կամավորները 30 ժամ թույլ չտվեցին թշնամուն առաջ անցնելու։ Անհավասար մարտում զոհվեցին ջոկի բոլոր ռազմիկները։ Վիրավորվեց Գասպարյանը, բայց հաղթահարելով տանջող ցավերը, նա շարունակեց մարտը։ Լրագրող Մ. Մերժանովը այսպես է նկարագրել Գասպարյանի կյանքի վերջին րոպեները. «Քսան քայլ էր բաժանում նրան իր թշնամիներից։ Գլուխը պոկեց գետնից, նետեց ևս մեկ նռնակ, պայուսակից հանեց մնացածները։ Նա տեղից բարձրացավ, մի պահ դողաց, ուժեր հավաքեց և գրոհեց մնացածների վրա։ Թռավ և երկրորդ նռնակը։ Նրանք փախան։ Փախչողները, երբ նկատեցին օգնության հասնող նոր զինվորների, կանգ առան և սրտապնդվելով ետ դարձան։ Անօգնական վիրավորի սիրտը այրվում էր, շուրթերը պապակում էին։

Նա թևով սրբեց արյունոտ դեմքը։ Աչքերը, որոնք վառվում էին տենդով, լի էին և՛ կյանքով, և՛ սիրով, և՛ կարոտով ...

—Ո՛չ, շնե՛ր, դուք ինձ կենդանի չեք բռնի... Եկեք, որքան ուզում եք եկեք, չեք սարսափեցնի... Եվ դորովով նայեց վերջին նռնակին, որի մեջ էր և՛ իր փրկությունը, և՛ մահը։

Այսպես... ամե՛ն ինչ վերջացավ...

Խոր շունչ քաշեց, արյունաքամ կրծքից պոկվեց վերջին հառաչը։ Օդի մեջ նռնակի հետ բարձրացավ միակ ձեռքը, թափով իջավ և ոտների տակ

---

[25] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 177-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 484382, գ. 1, թ. 3-4։

[26] «Խիզախներ» (գիրք առաջին), 1941, էջ 118։

մի ահեղ պայթյուն լսվեց։ Ֆաշիստները Գասպարյանի փոխարեն գերի վերցրին մի սև խոռոչ...»[27]։ Հերոսական մահով զոհվեց Արամ Գասպարյանը, որը մինչև վերջ սրբորեն կատարեց քաղաքացիական պարտքը հայրենիքի նկատմամբ և իր կատարած սխրանքով դարձավ անմահ։ Օգոստոսի 16-ին պաշտպանական ծանր մարտերից հետո թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ մեր զորքերը թողեցին Կինգիսեպը, իսկ 21-ին՝ Նարվան։ Ժամանակավոր հաջողությունից արբեցած, թշնամին ցանկացավ միանգամից գրավել Գատչինան և տանկային ոստյունով հասնել Լենինգրադ։ Սակայն հակառակորդի հարձակողական թափը փշրվեց, հանդիպելով մեր զորքերի ամրակուռ դիմադրությանը։

Լուգա—Նովգորոդ—Չուդովո ուղղությամբ թշնամին հարձակման անցավ օգոստոսի 10-ին։ Հարձակումը ուղեկցվում էր օդից ուժեղ ռմբակոծությամբ։ Օգոստոսի 15-ին թշնամու մոտո-մեքենայացված զորամասերը ճեղքեցին աշխատարշավայինների պաշտպանությունը, գրավեցին երկաթուղային կարևոր հանգույց Բատեցկը, դուրս եկան Լենինգրադ—Դնո երկաթուղին և մարտեր սկսվեցին Նովգորոդի գրավման համար։ Նույն օրը թշնամու զորամասերը մտան Նովգորոդ։ 48-րդ բանակը ծանր մարտեր մղելով, նահանջեց Չուդովո—Լուբան ուղղությամբ։

Կարմիր բանակի հրամանատարությունն այդ ուղղությամբ թշնամու շարժումը կասեցնելու համար որոշեց 11-րդ և նոր կազմակերպված 34-րդ բանակների, ինչպես նաև 22-րդ էստոնական հրաձգային կորպուսի ուժերով Ստարայա Ռուսսայի շրջանում հակահարված հասցնել թշնամուն։ Օգոստոսի 12-ին սկսված հակահարվածը շփոթեցրեց թշնամուն և նա ըստիպված Նովգորոդի և Լուգայի շրջաններից դեպի Ստարայա Ռուսսա նետեց «Մեռած գլուխ» էսէսական դիվիզիան, 3-րդ մեքենայացված դիվիզիան, իսկ Սմոլենսկի շրջանից՝ 39-րդ մեքենայացված կորպուսը։

Սովետական զորքերը ռազմաճակատի այդ մասում առաջ շարժվեցին 60 կմ և գրավեցին Ստարայա Ռուսսան, բայց թշնամու պատասխան ուժեղ հակահարվածը ստիպեց մեր զորքերին նահանջել Լովատ գետի ափերեզյան ափը։ Այդ բոլորից մի բան պարզ էր՝ ձախողվել էին ֆաշիստական հրամանատարության հաշիվները։

Սովետական զորքերի հակահարվածը որոշ չափով թուլացրեց ֆաշիստական զորքերի հարձակումը Նովգորոդի շրջանում, բայց և այնպես

---

[27] Նույն տեղում, էջ 122։

կասեցրեց թշնամու մեծաքանակ ուժերի առաջշարժումը։ Այստեղ հակառակորդին ուժեղ դիմադրություն էր ցույց տալիս 28-րդ տանկային դիվիզիան՝ գնդապետ Ի. Դ. Չերնյախովսկու հրամանատարությամբ։

Օգոստոսի 24-ին, երբ դիվիզիան առանց տանկերի (ծանր մարտերում բոլոր տանկերը դուրս էին եկել շարքից) ետ էր քաշվել Մալի Վոլխովեց գետը, մարտիկները ընկան Կիրիլովսկի եկեղեցում ամրացված թշնամու գնդացրային խաչաձև ուժեղ կրակի տակ։ Գրոհի նետվեցին լեյտենանտ Պլատոնովի վաշտի մարտիկները։ Ուժեղ կրակը թույլ չէր տալիս նրանց առաջ շարժվել։ Այդ ժամանակ կրտսեր քաղղեկ Ալեքսանդր Պանկրատովն առաջ վազեց և նետեց նռնակը։ Գնդացիրը մի ակնթարթ լռեց, բայց հետո նորից ուժեղ կրակ բացեց։ Խիզախ ռազմիկն առանց վարանելու նետվեց կրակակետը և իր մարմնով ծածկեց հրակնատը։ Վաշտը գրոհով գրավեց եկեղեցին։ Հերոսի մահով զոհվեց ռուս ժողովրդի պանծալի զավակ, վոլոգդացի 24-ամյա Ալեքսանդր Կոնստանտինովիչ Պանկրատովը։ Խիզախ քաղղեկին եռամահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[28]։

Հայտնի էր, որ 1943 թ. փետրվարի 23-ին կարմիր բանակի 25-րդ տարեդարձի օրը Կալինինյան ռազմաճակատի 3-րդ հարվածային բանակի 254-րդ հրաձգային դիվիզիայի 56-րդ գվարդիական գնդի մարտիկ 19-ամյա Ալեքսանդր Մատրոսովին նման սխրագործություն կատարելու համար շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում և նրա անունն առհավետ գրանցվեց զորամասի անձնակազմի ցուցակում։ Նրա զոհվելու վայրում կանգնեցված հուշարձանի վրա գրվեց Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանը, ուր ասված է. «Ընկեր Մատրոսովի սխրանքը պետք է կարմիր բանակի բոլոր ռազմիկների համար մարտական արիության ու հերոսության օրինակ ծառայի»։ Հուշարձանը դարձավ արիության ու զինվորական փառքի խորհրդանիշ, որի առաջ խոնարհվում և երդվում էին այդ ճանապարհով դեպի ռազմաճակատ մեկնող երիտասարդ ռազմիկները, իսկ Մատրոսովի սխրանքը կրկնողները սկսեցին կոչվել մատրոսովականներ։ Միայն հետագայում հայտնի դարձավ, որ սովետագերմանական ռազմաճակատի տարբեր հատվածներում Մատրոսովից առաջ այդպիսի անձնազոհության էին դիմել բազմաթիվ ռազմիկներ։ Միայն Լենինգրադյան ռազմաճակատում[29] մինչև 1943 թ. փետրվարի 23-ը արդեն

---

[28] *А. В. Буров.* Твои герои. Ленинград, 1970 г. с. 67.

[29] Գերագույն գլխավոր հրամանատարի 1941 թ. օգոստոսի 23-ի դիրեկտիվի համաձայն Հյուսիսային ռազմաճակատը բաժանվեց Լենինգրադյան և Կարելական ռազմաճակատների։

կատարվել էր 12, իսկ մյուս ռազմաճակատներում՝ ավելի քան 30 նման հերոսություն[30]։

Թշնամին ավելի ու ավելի էր մոտենում Լենինգրադին։ Շրջապատումից խուսափելու համար 45-օրյա հերոսական պաշտպանությունից հետո, օգոստոսի 20-ին մեր զորքերը թողեցին Լուգա քաղաքը։ Նույն օրը թշնամին գրավեց Զուդովոն և կտրեց «Հոկտեմբերյան» երկաթուղին։ Այնուհետև նրա 1-ին և 28-րդ բանակային կորպուսները հարավ-արևելքից շարունակեցին հարձակումը Լենինգրադ, իսկ 39-րդ մոտորացված կորպուսը՝ դեպի Լադոգա լիճը, նպատակ ունենալով միանալ ֆիննական զորքերին։ Հարավից և հարավ-արևմուտքից Լենինգրադ էր շարժվում ֆաշիստական 18-րդ բանակը։ Օգոստոսի 19-ին ռազմաճակատը մոտեցավ Գատչինային։ Այստեղ հակառակորդին շեշտակի հարված հասցրեց ու ծանր կորուստներ պատճառեց Կարմրադրոշ 1-ին տանկային դիվիզիան՝ Սովետական Միության հերոս գեներալ-մայոր Վ. Ի. Բարանովի հրամանատարությամբ։ Աչքի ընկավ ծանր տանկերի 1-ին առանձին տանկային գումարտակի տանկային վաշտը, որի հրամանատարն էր Զ. Գ. Կոլոբանովը։ Հրամանատարությունը վերջինիս և ավագ լեյտենանտ Ա. Մ. Ուսովին պարգևատրեց Կարմիր դրոշի և Լենինի շքանշաններով։

Անձնազոհաբար մարտնչեցին անհրաժեշտ մարտական փորձ չունեցող աշխարհազորային 2-րդ դիվիզիայի մարտիկները, որոնք զոհողությունների մեծ գնով թույլ չտվեցին հակառակորդին առաջ անցնելու։ 2-րդ գնդի 1-ին գումարտակի հրամանատար կոմունիստ Ն. Ա. Շորինը դիմեց իր մարտիկներին, կոչ անելով. «Գերմանացիների ճանապարհը պետք է փակել։ Սովետական ռազմիկի օրենքն է՝ մեռնել կամ հաղթել»։ Մարտիկները սրբորեն կատարեցին իրենց հրամանատարի կոչը։ Եվ, երբ արկի բեկորից զոհվեց հերոս հրամանատարը, նրանք առանց խուճապի մատնվելու շարունակեցին մարտը և ետ մղեցին հակառակորդի գրոհները։ Մարտերի ամբողջ ընթացքում թշնամու թիկունքում համարձակ էին գործում աշխարհազորային դիվիզիայի դիվերսիոն-հետախուզական խմբերը՝ քաղղեկ Ա. Մ. Շուբինի, կապիտաններ Կ. Սաղաթելյանի, Վ. Ուրալովի, լեյտենանտ Ա. Յակովլևի հրամանատարությամբ[31]։

Գատչինայի պաշտպանական ամրությունների բնագիծը հակառա-

---

[30] *В. Л. Солдатов,* Матросовы в битве за Ленинград. Л., 1966, с. 5.
[31] *П. И. Кузнецов,* Великий патриотический подвиг, с. 12.

կորդը մոտ մեկ ամիս չէր կարողանում հաղթահարել։ Մարտերն այնքան համառ էին, որ գյուղերը մի քանի անգամ ձեռքից-ձեռք էին անցնում։

Աշխարհազորայինները Վելկոտո, Մալո Ռուդիլովո, Կայբոլովո, Գորկա, Դոմաշևո, Մալոյե Կորշանի գյուղերի շրջանում ետ էին մղում հակառակորդի չդադարող գրոհները։ Օգոստոսի 29-ին՝ ժամը 2[40]-ին թշնամին գրավեց Վելկոտո գյուղը, իսկ շատ չանցած աշխարհազորայինները հուժկու գրոհով ետ խլեցին այն, սակայն ժամը 8-ին գյուղը նորից թշնամու ձեռքն անցավ։ Հատկապես աչքի ընկան «Էլեկտրոսիլա» գործարանի կամավորներ, քույր ու եղբայր Թամարա և Ալեքսանդր Կանոնովները։ Օգոստոսի 29-ին Ալեքսանդրն իր գնդացրով ոչնչացրեց մի քանի տասնյակ հիտլերական, իսկ քույրը՝ ռազմի դաշտից դուրս բերեց 20 վիրավոր։ Առաջավոր գծից ետ դառնալիս նա տեսավ եղբորը ծանր վիրավոր վիճակում։ Անմիջապես ցույց տվեց առաջին օգնությունը, վիրակապեց և նրան հեռացրեց վտանգավոր վայրից, բայց եղբայրը խնդրեց վերադառնալ առաջավոր գիծ և փրկել ծանր վերք ստացած 2-րդ դումարտակի կոմիսար ավագ քաղղեկ Տուչկովին։ Երբ նա ետ դարձավ, Ալեքսանդրն արդեն մահացել էր[32]։ Այսպիսի մեծ զոհողությունը, որ կատարեցին Կանոնովները, կարող էին կատարել միայն ամուր կամքի տեր մեծ հայրենասերները։ Մինչև օգոստոսի վերջը թշնամին գրավեց Լուբանը, Տոսնոն, Մգան, սեպտեմբերի 8-ին՝ Շլիսելբուրգը, դուրս եկավ Լադոգա լիճը և ցամաքից շրջապատեց Լենինգրադը։ Ծանր ու համառ մարտերից հետո թշնամին այնուհետև գրավեց Գատչինան, Սլուցկը, Պուշկինոն, Ուրիցկը և Օրանիենբաումի շրջանում շրջապատեց 8-րդ բանակին։ Մահացու սպառնալիք ստեղծվեց քաղաքի համար։

Հաջողություններից ոգևորված ֆաշիստական հրամանատարությունը որոշեց խոշոր ուժերի միջոցով սրընթաց գրոհով ճեղքել սովետական զորքերի պաշտպանությունը և ներխուժել Լենինգրադ։ Այդ նպատակով սեպտեմբերի 8-ին ուժեղ ռմբակոծության ենթարկվեց քաղաքը, իսկ հաջորդ օրը առավոտյան Պուլկովյան բարձունքներից մինչև Շլիսելբուրգ բոլոր ուղղություններով միաժամանակ սկսվեց գրոհը։ Այդ ծանր պահին ավելի խրոխտ ու մարտական դարձան Վ. Ի. Լենինի ոգեշունչ խոսքերը, որոնք նա ասել էր 1919 թ. Պետրոգրադի վրա Յուդենիչի հարձակման ժամանակ. «Գրավվել են Կրասնոյե Սելոն, Գատչինան, Վիրիցան։ Կտրված են դեպի Պիտեր տանող երկու երկաթուղի։ Թշնամին ձգտում է կտրել եր-

---

[32] Նույն տեղում, էջ 42,46։

որդը՝ Նիկոլաևյան երկաթուղին, և չորրորդը՝ Վոլոգդայի երկաթուղին, որպեսզի Պիտերը գրավի սովի մատնելու միջոցով։

Ընկերնե՛ր։ Դուք բոլորդ գիտեք և տեսնում եք, թե ինչպիսի վիթխարի սպառնալիք է կախվել Պետրոգրադի վրա։ Մի քանի օրում վճռվում է Պետրոգրադի ճակատագիրը, իսկ այդ նշանակում է, որ կիսով չափ վճռվում է սովետական իշխանության ճակատագիրը Ռուսաստանում։ ...մենք շատ ավելի ուժեղ ենք, քան թշնամին։ Կուվեցեք մինչև արյան վերջին կաթիլը, ընկերնե՛ր, պահեցեք ամեն մի թիզ հողը, տոկուն եղեք մինչև վերջ, հաղթանա՞կը հեռու չէ, հաղթանակը մերը կլինի»[33]։

Լենինգրադի ռազմաճակատում կարմիրբանակայինները, նավաստիներն ու աշխարհազորայինները կռվում էին մեծ ոգևորությամբ ու վճռականությամբ։ Պատմության մեջ մինչ այդ չտեսնված հերոսամարտն իր վրա էր գամել ինչպես Սովետական Միության, այնպես էլ աշխարհի խաղաղասեր ժողովուրդների ուշադրությունը։ Նրանք լարված հետևում էին այդ գոտեմարտին։ Աշխարհը զարմացած էր երկաթե կամքի տեր մարդկանց անձնազոհ պայքարով։

Հիտլերյան հրամանատարությունը քաղաքի գրավումը օրերի հարց էր համարում և նույնիսկ կազմել էր հաղթանակի պատվին «Աստորիա» հյուրանոցում տրվելիք մեծ խնջույքի ճաշացուցակը. «Այսօր ֆյուրերը ինձ նշանակեց Լենինգրադի գեներալ նահանգապետ,—իր օրագրում գրում է գերմանական գեներալ Լեոնիդ Լինչը.—ճիշտ է Լենինգրադը մեր կողմից դեռևս չի գրավված, բայց դա օրերի հարց է։ Ֆյուրերի իմաստուն հեռատեսությունը բոլորի վրա ուժեղ տպավորություն թողեց։ Ինձ բոլորը շնորհավորում են։ Էլզան հիացմունքի մեջ է։ Նա արդեն պատվիրել է իր երեկոյան զգեստը մեր առաջին պարահանդեսի համար, որ պետք է տանք Զմեռային պալատում»[34]։ *Բայց կարմիր բանակի, նավատորմի և լենինգրադցիների հերոսական պայքարը ձախողեց թշնամու պլանը։*

Լենինգրադի ուղղությամբ օր ու գիշեր շարունակվում էին արյունահեղ մարտերը։ Չկանգնելով ծանր կորուստների առջև, ֆաշիստները նորանոր թարմ ուժեր էին նետում մարտի մեջ, ամեն կերպ ձգտելով ներխուժել Լենինգրադ։ Մեր զորքերը ճիգերի գերագույն լարումով ետ էին մղում հակառակորդի գերակշռող ուժերի գրոհները։ Մարտեր էին գնում յուրաքանչյուր բնագծի, յուրաքանչյուր դոտի, դղոտի ու տան համար։

Կենաց ու մահու պայքարում հերոսաբար զոհվում էին ռուս ժողովուրդ-

---

[33] Վ. Ի. Լենին, *Երկ*, հատ. 39, էջ 286—287։

[34] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 364, ց. 6306, գ. 7, թ. 36։

դի և նրանց հետ ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների լավագույն զավակները՝ ուկրաինացիները, բելոռուսները, ղազախները, ուզբեկները, հայերը, վրացիները, ադրբեջանցիները, թաթարները, չուվաշները, որոնք առանց վարանելու իրենց կյանքի գնով պատնեշում էին ֆաշիստական դորշ լավայի շարժումը դեպի Լենինգրադ։

Հակառակորդը զարմացած էր սովետական ռազմիկների այդպիսի չտեսնված անձնազոհության ու համառության վրա։ Լենինգրադի գրոհին մասնակցող գերմանական բանակի լեյտենանտ կոմս ֆոն-Գոգենբրոյչը այդ օրերին իր օրագրում նշում է. «Մենք կռվել ենք և՛ Ֆրանսիայում, և՛ Բալկաններում, բայց առաջին անգամ էինք տեսնում, որ մարդիկ այդպիսի սպանիչ կրակի տակ կանգ չառնելով, ալիք առ ալիք գնան գրոհի»[35]։

Լենինգրադյան ռազմաճակատում առանձին ազգային միավորումներ ու զորամասեր չեն եղել, բայց միութենական ազգային հանրապետություններից զորակոչված հրամանատարներ ու զինվորներ կային բոլոր զորամասերում ու ստորաբաժանումներում։ Այսպես, օրինակ, Լենինգրադյան ռազմական օկրուգի 123-րդ հրաձգային դիվիզիայի, որը սկզբից մինչև վերջ մասնակցել է Լենինգրադի համար մղված մարտերին, ազգային կազմը ըստ տարիների այսպիսի պատկեր ուներ[36]։

	Ռուսներ	Ուկրաինացիներ	Բելոռուսներ	Հայեր	Վրացիներ	Ադրբեջանցիներ	Ուզբեկներ	Ղազախներ
11 Նոյեմբերի 1939	10002	3312	432	670	121	4	131	96
22 հունիսի 1941	5569	1932	881	251	138	7	126	166
4 սեպտեմբերի 1941	2532	889	386	64	49	3	53	86
1 հունվարի 1943	5832	1827	512	81	68	4	93	164

Սիրտդ օրինական հպարտությամբ է լցվում, երբ բարձրացնելով արխիվային փաստաթղթերը, կարդում ես, թե ինչպիսի հերոսությամբ, անձնազոհությամբ ու խիզախությամբ են կռվել, ինչպիսի կամք ու տոկունություն են ցուցաբերել հայ ժողովրդի զավակները Լենինգրադի համար մղված մարտերում։

Սովետական Միության պաշտպանության մինիստրության կենտրո-

---

[35] Նույն տեղում, ֆ. 1240, ց. 1, գ. 1, թ. 1։

[36] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 123-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 345110, գ. 1, թ. 12։

նական արխիվի համապատասխան ֆոնդերում, Հյուսիսարևմտյան, Հյուսիսային և Լենինգրադյան ռազմաճակատների թերթերում, պատերազմի վետերանների գրավոր ու բանավոր հուշերում մասունքի պես պահպանվում են բազմաթիվ հայ ռազմիկների անունները, որոնց մասին հարազատներն այդ ահեղ օրերից միայն այնքանը գիտեն, ինչ որ համառոտ ծանուցված է եղել՝ «ընկավ հերոսի մահով»։ Իսկ ազատագրված գյուղերում ու քաղաքներում լավագույն դեպքում գիտեն միայն ընկած հերոսների սխրագործության մասին։ Մինչդեռ նրանք արժանի են, որպեսզի ապրեն երկրորդ կյանքով՝ անմահության կյանքով և մարդկային սխրագործության, հայրենասիրության ու բարձր առաքինության օրինակ լինեն մեզ համար, գալիք սերունդների համար։ Անանուն հերոսներ, անհայտ հերոսներ բառերի տակ քանի-քանի հազարավոր հերոսների ենք ընդհանրացնում, մինչդեռ նրանցից ոչ մեկն անհայտ և անանուն չի եղել։

Այսպիսի մի անհայտ և անմահ հերոս է Գուրգեն Երեմի Գրիգորյանը...

1941 թվականի մայիսն էր։ Գուրգեն Գրիգորյանը նոր էր ավարտել սպայական դպրոցը և սպասում էր երկամսյա արձակուրդի, որ պիտի անցկացներ կապույտ Սևանի ափին, ծննդավայր Նորադուզում, որտեղից շուրջ հինգ տարի էր արդեն, որ բացակայում էր։ Այդ տարիները ռազմական և քաղաքական հասունության, իսկական մկրտության տարիներ էին։ Զինվորական խիզախությամբ լի կյանքը, որի մասին նա երազել էր վաղ հասակից, լսելով քաղաքացիական կռիվներում բարի համբավ վաստակած Երեմ հոր և Արամ հորեղբոր մասին, հիմա ամբողջովին հափշտակել էր նրան։ Պատանեկան տարիները նրա տենչերի իրականացման համարվել էին ամենակարևորը՝ անվախություն, ճարպկություն և ֆիզիկական արտակարգ կոփվածք։ Իսկական ռազմիկի այս հատկանիշները զինվորական ծառայության ընթացքում դրսևորվել էին բազմիցս։ Զիավարժության մեջ հմտացած պատանին կարմիր բանակի հեծյալ գնդում մասնակցեց Մոնղոլիայում ճապոնական զավթիչների դեմ մղված մարտերին։

1939—1940 թթ. սովետաֆիննական պատերազմի ժամանակ Մաններհեյմի պաշտպանական գծի խորտակողների առաջին շարքերում էր նաև Գուրգեն Գրիգորյանը։ Նա առաջավոր կրակային գծում կատարում էր մարտական ծանր հանձնարարություններ։

Ճապոնական սամուրայների և սպիտակ ֆիննների դեմ մղված մարտերում ձեռք բերած գիտելիքները Գուրգեն Գրիգորյանը տեսականորեն հարստացրեց սպայական դպրոցում։ Ռազմական նոր տեխնիկան առաջի-

կա պատերազմում ենթադրում էր մարտեր մղելու նոր եղանակներ. նոր ստրատեգիա ու տակտիկա, ռազմական նոր, բարձր արվեստ։ Գուրգեն Գրիգորյանն ուսման մեջ դրսևորեց արտակարգ ջանասիրություն և ընդունակություն։ Սպայական դպրոցը ռազմական ու քաղաքական կոփվածության ամուր հիմքեր տվեց նրան։ Երիտասարդ սպան մտադիր էր ստանալ նաև ռազմական բարձրագույն կրթություն։ Բայց հունիսյան մի առավոտ պայթեց պատերազմը։

8-րդ բանակը ընդհուպ սեղմված էր Լենինգրադի պաշտպանական գոտուն։ Չնայած թշնամին անհամեմատ շատ զոհեր ու տեխնիկայի մեծ կորուստ էր կրել, բայց անընդհատ համալրում ստանալով առաջ էր նետվում։ Նրա ուժերը սեպի նման խրվելու փորձեր էին անում՝ բանակը բաժանել երկու մասի՝ Ռոպշա—Օրանիենբաում—Իժորա աղեղով և Գատչինա—Պուշկինո—Ուրիցկ ուղիղ գծով, ոչնչացնել մեր զորամասերը և ներխուժել Լենինգրադ։

1941 թ. սեպտեմբերյան այդ թեժ մարտերի օրերին 118-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը պաշտպանական դիրքեր էին գրավել Ռոպշայի հարավարևելյան աղեղում։ Դիվիզիայի և նրա զորամասերի առջև խնդիր էր դրված համառ դիմադրությամբ թշնամու ուշադրությունը շեղել հարվածի հիմնական՝ հյուսիսային, լենինգրադյան ուղղությունից։ 118-րդ հրաձգային դիվիզիայի 463-րդ հրաձգային գունդը, որի պարետային դասակի հրամանատարն էր Գուրգեն Գրիգորյանը, պաշտպանական դիրքեր գրավեց Նիկոլսկոյի, Բոլշոյ Կիպենի շրջանում։ Նրանցից աջ Վլոսովո-Վիսելկի գիծը պաշտպանում էր 527-րդ հրաձգային գունդը։

Սեպտեմբերի 7-ի առավոտյան թշնամու ուժեղ ճնշման տակ 527-րդ գունդը սկսեց նահանջել դեպի Ռոպշա, դրանով վտանգի տակ դնելով հարևան գնդին։ Ֆաշիստները տանկերի և հրետանու ուժեղացրած կրակի պաշտպանությամբ առաջ նետվեցին 463-րդ գնդի մերկացած աջ թևի վրա, ձգտելով հոգեբանական գրոհով ընկճել սովետական ռազմիկների դիմադրությունը։ Գունդը, որը Սովետական Մերձբալթիկայի պաշտպանական մարտերում ձեռք էր բերել մարտական փորձ, խիզախ ու համարձակ կապիտան Նիկոլայ Նիկոլաևիչ Ազովցևի[37] հրամանատարությամբ բավական կարճ ժամանակում դարձել էր կուռ ու համերաշխ մարտական միավորում։ Երբեմն ակտիվ պաշտպանությունից գունդն անսպասելի

---

[37] Նիկոլայ Նիկոլաևիչ Ազովցևն այժմ ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության ռազմական պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող է, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌՍՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ։

անցնում էր հակագրոհի և սվինամարտով փախուստի մատնում հակառակորդին։ Եվ ահա Լենինգրադի համար ճակատագրական նշանակություն ունեցող այդ ծանր մարտերի պահին մի նոր փորձություն էր սպասում գնդին։ Կապիտան Ազովցևի համար դժվար չէր կռահել թշնամու մտադրությունը՝ կտրել նահանջի ճանապարհը, մեկուսացնել և գլխովին ջախջախել գունդը։ Բայց կապիտանն իր հրամանատարների հետ համարձակ ծրագիր մշակեց, որը և հավանության արժանացավ դիվիզիայի հրամանատարության կողմից։ Գնդի երկու գումարտակներն ուժեղացրած կրակի տակ առան առաջ շարժվող թշնամուն և թույլ չտվեցին հետևակին տանկերի հետ միասին թափանցել պաշտպանության առաջավոր գիծը։ Օգտվելով վրա հասած մթությունից, լեյտենանտ Յոլկինի գումարտակը խնամքով քողարկվեց։ Երբ թշնամին արդեն ծուղակն էր ընկել, կրակն իր վրա ընդունած կրտսեր լեյտենանտ Լյուլկայի գումարտակը ետ շրջվեց և «Ուռա» գոչելով սվինամարտի նետվեց։ Նրա հետ միասին գրոհի գնաց նաև լեյտենանտ Գուրգեն Գրիգորյանի պարետային դասակը։ Նույն պահին ֆաշիստների թիկունքից սվինամարտի նետվեց Յոլկինի գումարտակը։ Երկու կողմերից սվինների մեջ սեղմված ֆաշիստները մեծ զոհեր տալով ու նյութական կորուստ կրելով, ետ փախան։

Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 8-ին վաղ առավոտյան գազազած թշնամին առաջ քաշելով պահեստային ուժերը, տանկերի աջակցությամբ կրկին հարձակման անցավ։ Նա հրետանային ու գնդացրային ուժեղ կրակով գետնին գամեց 463-րդ գնդի 1-ին և 2-րդ գումարտակները, իսկ մի այլ ստորաբաժանումով գրոհեց գնդի հրամանատարական կետի վրա։ Բայց այստեղ նա հանդիպեց համառ դիմադրության և հարձակման ուղղությունը փոխեց հյուսիս, դեպի Ռոպշա, գրավեց քաղաքի մի մասը և 463-րդ գունդը կտրեց հիմնական ուժերից։ Բայց գնդի մարտիկները իրենց խիզախ հրամանատարի ղեկավարությամբ շրջանցեցին հակառակորդին և միացան դիվիզիային։

Դիվիզիայի հրամանատարությունը նկատի ունենալով գնդի աննկուն ոգին, ռազմական աննախադեպ սխրանքը և մասսայական հերոսությունը, մի համարձակ ծրագիր մշակեց՝ սեպտեմբերի 9-ի առավոտյան, վաղ արշալույսին թշնամու վրա ճակատային հարձակում գործել 527-րդ հրաձգային գնդի և դիվիզիայի մյուս ուժերով, իսկ թևերի ոչնչացման խնդիրը դրվեց 463-րդ գնդի վրա։

Հակառակորդի զորամասերն ամուր պաշտպանություն էին գրավել Մալայա Գորկայի արևելյան ծայրամասում։ Կապիտան Ազովցևը գունդը բաժանեց երկու մասի, մի մասն ուղարկեց Մալայա Գորկայի կողմը,

Մյուսը՝ Բոլշոյ Կիպենի։ Նրա խնդիրն էր թշնամու երկու թևերին հարվածելով, թույլ չտալ նրա ուժերի կենտրոնացում։ Գունդը վեց անգամ գրոհի նետվեց և փողոցային մարտերում թշնամուն մեծ կորուստներ պատճառելով՝ դուրս քշեց գյուղական գերեզմանոցից և նկեղեցուց։ Գերմանացիների մի այլ զորամաս անտառի կողմից շարժվեց դեպի Ռոպշայից հարավ գտնվող գետակը։

Ծանր ու այրունահեղ մարտ էր սպասվում խիզախների դեմ, որը դաժան կռիվներում արյունաքամ էր եղել, կիսով չափ կորցրել մարտական ուժն ու տեխնիկան։ Անհաջողությունից դաղաղած հակառակորդը մեծաթիվ ուժերով գրոհեց շտաբի վրա։ Գնդի հրամանատար կապիտան Նիկոլայ Աղովցևը շտաբը պաշտպանող պարետային դասակի հրամանատար լեյտենանտ Գուրգեն Գրիգորյանին հրամայեց իր տրամադրության տակ գտնվող ուժերով կասեցնել հակառակորդի հարձակումը՝ մինչև շտաբը կտեղափոխվեր ապահով վայր[38]։

Կապիտան Աղովցևն իր հրամանատարների հետ նլք էր որոնում ծանրը վիճակից դուրս գալու համար, երբ կրակոցներ լսվեցին։ Լեյտենանտ Գուրգեն Գրիգորյանը ձեռքի գնդացրով դուրս նետվեց, բայց հենց դռների մոտ հանդիպեց երկու ֆաշիստի, որոնց ոչնչացնելուց հետո կրակ բացեց շտաբին մոտեցող հիտլերականների վրա։ Խիզախ հրամանատարի արարքից ոգևորված մարտիկներն ուժեղ կրակով կարողացան գետնին սեղմել հակառակորդին։ Փամփուշտները սպառվում էին, լեյտենանտը զինվորներից մեկին ուղարկեց փամփուշտ բերելու։ Քիչ անց զինվորը վերադարձավ ռազմամթերքի պաշարով և գնդի հրամանատարի՝ «Դիմադրել մինչև արյան վերջին կաթիլը» կարգադրությամբ։ Միայն լեյտենանտ Գրիգորյանը ձեռքի գնդացրով ոչնչացրեց 50 հիտլերական[39]։

Գրիգորյանի տրամադրության տակ դրվեց պարետային դասակի երկու ջոկատ։ Թշնամին նոր ուժերով բորբոքեց կռիվը։ Ականանետների և հրետանու կրակի ներքո բոցավառվեց գնդի շտաբի շենքը։ Կենաց ու մահու կռվի էին կանգնել զինվորներն ու նրանց երիտասարդ հրամանատարը։ Իր բզկտված երկու ջոկատը մարտի նետեց լեյտենանտ Գուրգեն Գրիգորյանը։ Դեմընթաց խոյանալով առաջին իսկ գերմանացու վրա, Գրիգորյանը բռունցքի հարվածով գետին տապալեց հիտլերականին և նրա ձեռքից խլած հրացանով ոչնչացրեց ևս 7 հիտլերական[40]։ Ռուսական սվինը հնձում էր ահաբեկված ֆաշիստներին, խուճապի մատնելով նրանց։ Արյունածոր

---

38 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 344, ց. 5592, դ. 33, թ. 270—273։

39 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1323, ց. 1, դ. 20, թ. 64։

40 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 682524, դ. 84, թ. 27—28։

վերքից ուժասպառ ընկավ դասակի հրամանատարը։ Ծանր կորուստների գնով հակառակորդն ի վերջո ներխուժեց գնդի շտաբի շենքը։ Համախմբված գնդի հրամանատար, կապիտան Նիկոլայ Աղովցևի շուրջը, անհավասար մարտում հերոսաբար կռվեցին գումարտակների հրամանատարներ Լյուլկան, Յոլկինը, Պետրովը, Նիկոլաևը և ուրիշներ։ 8-րդ բանակի քաղբաժնի զեկուցագրերից մեկում գրված է. «Գրիգորյանը ձեռքի գնդացրից կրակեց այնքան ժամանակ, մինչև ստիպեց թշնամուն նահանջել։ Հակառակորդը կորցրեց ավելի քան 100 զինվոր, իսկ 463-րդ գնդի հրամանատարությունը հնարավորություն ունեցավ միանալ գնդի հիմնական ուժերին։ Սեպտեմբերի 9-ին լեյտենանտ Գրիգորյանը զոհվեց հերոսի մահով»[41]։

Քաջաբար զոհված Գուրգեն Գրիգորյանի մարմինը ամփոփված է Լենինգրադյան հողում։

Լենինգրադյան ռազմաճակատի հրամանատարի 1942 թ. փետրվարի 3-ի № 0281 հրամանով լեյտենանտ Գուրգեն Երեմի Գրիգորյանը ետմահու պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[42]։

Հայրենիքին ու կոմունիստական կուսակցությանն անսահման նվիրվածության օրինակ է աշխարհազորային Անդրանիկ Գրիգորյանի մարտական սխրանքը։

1959 թ. Լենինգրադում հրատարակված Ս. Բելյաևի և Պ. Կուզնեցովի «Լենինգրադի ժողովրդական աշխարհազորայինները» գրքում կարդում ենք. «267-րդ գումարտակի և նրա հետ միասին Լենինգրադի Կույբիշևյան շրջանի աշխարհազորայինները օրինականորեն հպարտանում են «Союзникельовпроект»-ի նախկին աշխատակից, հետախուզական ջոկատի հրամանատար, բոլշևիկյան կուսակցության հավատարիմ զավակ Անդրեյ Գրիգորիևի անմահ սխրանքով»[43]։

Սեպտեմբերի սկզբին Գատչինայի շրջանում կատաղի մարտեր սկսվեցին հարձակման անցած հակառակորդի և աշխարհազորային 1-ին դիվիզիայի միջև։ 267-րդ գումարտակը, որտեղ ծառայում էր Անդրանիկ Գրիգորյանը, տեղեկություն ստացավ, որ կարմիրբանակայինի համա-

---

41 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 344, ց. 5592, գ. 33, թ. 273։

42 Նույն տեղում, ֆ. 33, ց. 682524, գ. 34, թ. 27—28։

43 С. Беляев, П. Кузнецов, Народное ополчение Ленинграда, с. 84. Անդրանիկ Սիմոնի Գրիգորյանը ծնվել է Ադրբեջանական ՍՍՀ Շամախի քաղաքում, այնուհետև ընտանիքով տեղափոխվել է Կիրովաբադ։ 18 տարեկան հասակում ընակություն է հաստատել Լենինգրադում։ Պատերազմի նախօրյակին աշխատում էր Լենինգրադի «Союзникельовпроект» գիտահետազոտական ինստիտուտում։ Անդրանիկ Գրիգորյանին ռուս ընկերները կոչում էին Անդրեյ Սեմյոնի Գրիգորին։

զգեստ հագած ֆաշիստները, շրջանցելով հսկիչ պոստերը, ներխուժել են Գատչինային մոտիկ բնակավայրերից մեկը և վտանգ ստեղծել գումարտակի համար։ Անդրանիկ Գրիգորյանի ջոկատի առաջ խնդիր դրվեց՝ ոչնչացնել գյուղ ներխուժած թշնամիներին։ Սեպտեմբերի 6-ին 35 հետախույզներ, Գրիգորյանի գլխավորությամբ, տարբեր կողմերից ներխուժեցին գյուղ և ոչնչացրին 150 հոգուց բաղկացած կայազորը[44]։ Ջոկատը, այնուհետև, հանկարծակի մի շարք համարձակ հարձակումներ գործեց թշնամու առաջապահ ստորաբաժանումների վրա, պատճառելով կենդանի ուժի ու տեխնիկայի կորուստներ։ Սակայն Գատչինան պաշտպանող աշխարհազորայինների շարքերը նոսրանում էին, իսկ թշնամին ստանալով նոր թարմ համալրումներ, սեպտեմբերի 10-ին 200 ծանր տանկի և ռմբակոծիչ ավիացիայի աջակցությամբ ճեղքեց աշխարհազորայինների պաշտպանական գիծը։ Մեկամսյա պաշտպանությունից հետո որոշվեց թողնել քաղաքը, իսկ նոր քաշվող զորամասերի նահանջի պաշտպանության ղեկավարումը հանձնարարվեց Անդրանիկ Գրիգորյանին։ Նա վերջին անգամ դիմելով Համկ(բ)կ Լենինգրադի Կույբիշևյան շրջկոմի քարտուղար Ն. Վ. Լիզունովին, ասաց. «Եթե հարկ լինի մեռնել, ապա կոմունիստի անունը չեմ խայտառակի»[45]։

Եվ, իրոք, հետագայում պարզվեց, որ նա սրբորեն էր կատարել մարտական առաջադրանքը, բարձր պահել կոմունիստի անունը։

Գատչինայից սովետական զորքերի հեռանալուց հետո հետախույզների ջոկատը Գրիգորյանի գլխավորությամբ փողոցային մարտեր սկսեց թշնամու ստորաբաժանումների դեմ։ Շենքերի տանիքներից ու լուսամուտներից ձնդացրային ու ավտոմատային ուժեղ կրակով հետախույզները ծանր կորուստներ պատճառեցին թշնամուն, ձգտելով ամեն կերպ կասեցնել նրա առաջշարժումը և հնարավորություն տալ աշխարհազորայիններին ամրանալու նոր դիրքերում։ Երբ Գրիգորյանին հաղորդեցին, որ աշխարհազորայինները դուրս են եկել թշնամու կիսաօղակից, նա մարտիկներին հրամայեց քաշվել անտառ։ Նույն գիշերը նա մի քանի հետախույզների հետ թափանցեց քաղաք և փորձեց փրկել վիրավոր ընկերներին, բայց գործողությունն ավարտվեց անհաջողությամբ։ Ջոկատն ընդհարվեց թշնամու գերազանցող ուժերի հետ, կրեց ծանր կորուստներ, իսկ Գրիգորյանը վիրավոր վիճակում գերվեց թշնամու կողմից և ենթարկվեց ծանր խոշտանգումների։ Հիտլերականները դիմեցին գազանային միջոցների նը-

---

[44] «Пламя над Невой», Л., 1964, с. 43.

[45] *С. П. Князев, М. П. Стрешинский, И. М. Франтишев, П. В. Шевердалкин, Ю. Н. Яблочкин,* На защите Невской твердыни. Л., 1965, с. 160.

րանից տեղեկություններ կորզելու համար, բայց ապարդյուն։ Հայորդին արիաբար տարավ բոլոր տանջանքները և չխոնարհվեց թշնամու առաջ։ Կատաղած հիտլերականները որոշեցին ցուցադրական դատաստան տեսնել նրա հետ։ Քաղաքի բնակիչների ու գերի կարմիրբանակայինների ներկայությամբ Գրիգորյանին կանգնեցրին կախաղանի մոտ։ Նա վերջին անգամ ոգևորիչ խոսքով դիմեց յուրայիններին. «Մի տխրեք, տղաներ, գերմանացիները Լենինգրադում չեն լինի, իսկ ռուսները Բեռլինում եղել են ու դեռ կլինեն»[46]։ Գաղաղած ֆաշիստը հրացանի կոթով հարվածեց Գրիգորյանին։ Հավաքելով սպառվող ուժերը, նա ամբողջ ուժով գոչեց. «Մահ ֆաշիստական դավթիչներին»։ Սպան նետվեց դեպի Գրիգորյանը, բայց մինչ նրա հասնելը, Գրիգորյանը օղակը հագցրեց իր պարանոցը և հրեց արկղը[47]։

Շուրջ երկու տարի Անդրանիկ Գրիգորյանի անունն անհայտ մնաց։ 1943 թ. հուլիսին հայ ժողովրդի փառապանծ զավակի անմահ սխրանքի մասին պատմեց ականատես, սանիտարուհի Կլավդիա Ֆյոդորովնան։ Լենինգրադի թերթերը գրեցին նրա քաջագործությունների մասին։ 1943 թ հուլիսի 16-ին «Ленинградский партизан» *թերթում տպագրվեց մայոր Ս. Բոյցովի «Լենինգրադի որդին» հոդվածը։ Համառոտ հերոսապատումը ավարտվում է հետևյալ խոսքերով. «Լենինգրադը երբեք չի մոռանա իր զավակի՝ Անդրեյ Գրիգորիևի մեծ ու անմահ սխրագործությունը»[48]։ Գատչինայի երախտապարտ բնակիչները նրա անունը հավերժացնելու համար քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը կոչել են Անդրեյ Գրիգորիևի անունով։*

Թշնամու դեմ մղված հերոսական կռիվներում աչքի ընկավ աշխարհազորային ստորաբաժանումներից մեկի քաղղեկ Պետրոսյանը։ Մարտերի ժամանակ, երբ խուճապ կամ իրարանցում էր նկատվում, Պետրոսյանն իր բոցաշունչ խոսքով և կենդանի օրինակով ոգևորում էր մարտիկներին ու գրոհի տանում նրանց։ «Մենք՝ սովետական մարտիկներս,—ասում էր Պետրոսյանը,—պետք է ոչ ոքից և ոչնչից չվախենալով պաշտպանենք հայրենիքը։ Մի մտածիր մահվան մասին, մի վախեցիր նրանից և նա քեզ չի գտնի։ Եթե հարկ լինի առանց վարանելու նույնիսկ կյանքդ տուր մեր արդար գործի համար[49]։

---

[46] «Ленинградский партизан», 16 июля 1943.

[47] *В. П. Свиридов, В. П. Якутович, В. Е. Василенко*, Битва за Ленинград 1941—1944, Л., 1962, с, 114.

[48] «Ленинградский партизан», 16 июля 1943 г.

[49] «На защиту Ленинграда», 26 сентября 1941 г.

Աշխարհազորային հայ ռազմիկներից թշնամու դեմ հերոսաբար մարտնչեցին Մինաս Մարտիրոսյանը, Աշոտ Ղամբարյանը (աշխարհազորային 2-րդ դիվիզիա), Գևորգ Բալասանյանը, Աշոտ Առաքելյանը, Սուրեն Հովհաննիսյանը և շատ ուրիշներ։

1941 թ. սեպտեմբերի 4-ին թեժ մարտեր բռնկվեցին Տոսնո քաղաքի ճանապարհի վրա գտնվող Նովո-Լիսինա բնակավայրի շրջանում։ Այստեղ հիտլերականների անընդհատ գրոհները փշրվում էին, հանդիպելով սովետական ռազմիկների հակագրոհներին։ Անհաջողությունից գաղտագած թշնամին 168-րդ հրաձգային դիվիզիայի 402-րդ գնդի վաշտերից մեկի դեմ նոր ուժեր նետեց։ Հարձակվող ֆաշիստներին օդից աջակցում էր ավիացիան։ Սպանվեց վաշտի հրամանատարը, կարմիրբանակայինները սկսեցին ետ քաշվել։ Այդ ժամանակ լսվեց քաղմարտիկ Վացուրայի խրոխտ ձայնը. «Ով վախենում է թող գնա թիկունք, մյուսներն իմ ետևից, առաջ»։ Ոգևորված ընկերոջ անձնական օրինակով, մարտիկները մեկ մարդու պես գրոհի նետվեցին և հակառակորդին ոչ միայն դուրս շպրտեցին խրամատներից, այլև հետապնդելով փախչող թշնամուն, նոր դիրքեր գրավեցին։ Որոշ դադարից հետո հակառակորդը վերսկսեց գրոհը, նպատակ ունենալով ամեն գնով ընկճել սովետական մի բուռ մարտիկների դիմադրությունը։ Անհավասար գոտեմարտում զոհվեցին Վացուրան և նրա ընկերները։ Թշնամին ռազմադաշտում թողեց հարյուրից ավելի սպանված[50]։

Նույն բնակավայրի շրջանում հակառակորդը գրոհեց նույն գնդի լեյտենանտ Աշոտ Մուսաթյանի[51] դասակի վրա, ձգտելով ամեն կերպ հաղթահարել մի խումբ խիզախների դիմադրությունը, բայց ապարդյուն։ «Այստեղից ոչ մի քայլ ետ» հրամայեց Մուսաթյանը իր մարտիկներին։ Թշնամու բոլոր գրոհները ետ մղվեցին։ Մուսաթյանը վիրավորվեց և այդ վիճակում էլ շարունակեց ղեկավարել դասակի գործողությունները։

Հոսպիտալում ապաքինվելուց հետո նա նորից վերադարձավ զորամաս։ Նրա դասակի առաջ խնդիր դրվեց՝ հայտնաբերել թշնամու կրակակետերը և ոչնչացնել դրանք։ Ստանալով հետախուզական տվյալներ հա-

---

[50] «Оборона Ленинграда 1941—1944» (Воспоминания и дневники участников), Л., 1968, с. 261—262.

[51] Աշոտ Աթանեսի Մուսաթյանը ծնվել է 1918 թ. Սիսիանի շրջանի Անդեղակոթ գյուղում, գյուղացու ընտանիքում։ Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը։ 1937 թ. զորակոչվել է բանակ և մասնակցել Խալխին գոլի մարտերին։ Մեծ հայրենականին մասնակցել է 1941 թ. հունիսից մինչև նրա հաղթական ավարտը։ Այժմ բնակվում է Նովոռոսիյսկում, աշխատում է դպրոցում որպես ուսուցիչ։

կառավորդի ուժերի դասավորության մասին, Մուսաթյանը յուրաքանչյուր զինվորի տվեց մարտական առաջադրանք և տանկերի աջակցությամբ հարձակման տարավ իր դասակին։ Կրտսեր սերժանտ Կուրկինն ականանետային կրակով ոչնչացրեց մի քանի կրակակետ։ Մարտիկ Կուզնեցովը սողալով մոտեցավ թշնամու խրամատին և նռնակներով ոչնչացրեց 11 հիտլերական, իսկ կապավոր Կուշնիրը ապահովեց հետախուզային կապը տանկերի հրամանատարի հետ։

Մարտական առաջադրանքը կատարվեց փայլուն կերպով։ Հրամանատարությունը նկատի ունենալով խիզախ հրամանատարի մարտական փորձը, նրան նշանակեց աշխարհազորային զորամասերից մեկում դասակի հրամանատար։ Եվ հենց այդ ժամանակ Լենինգրադի աշխարհազորայինների կենտրոնական օրգան «На защиту Родины» թերթը մի մեծ հոդված տպագրեց նրա մասին՝ «Աշոտ Մուսատյան» խորագրով։ «Լեյտենանտ Մուսաթյանի դասակի մարտիկները,—գրում է թերթը,—լենինգրադցի էլեկտրիկներ, փականագործներ, ուսանողներ, ծառայողներ են։ Մի քանի օրվա ընթացքում նրանք ամուր կապվեցին իրենց հրամանատարի, արևոտ Հայաստանի որդու հետ։ Նրանք հավատում են նրան ու պատրաստ են նրա հետ միասին գնալ մարտի ամենադժվար ու վտանգավոր տեղամասը»[52]։ Այդ հավատով էլ մարտի գնալով՝ նրանք դրսևորեցին մարտական սխրագործությունների բազմաթիվ օրինակներ։

Մգա քաղաքից արևմուտք, Վորոնովոյի շրջանում թշնամու դեմ հերոսաբար կռվեց ռուս ժողովրդի պանծալի զավակ, 122-րդ տանկային բրիգադի տանկային դասակի հրամանատար, կրտսեր լեյտենանտ Ֆիլիպ Ուլյանովիչ Ուլյանովը։ Թշնամին 30 տանկերի աջակցությամբ փորձեց ճեղքել մեր զորքերի պաշտպանությունը, գրավել Պուտիլովան և դուրս գալ Լադոգա լիճը։ Կրտսեր լեյտենանտի դասակի առաջ խնդիր էր դրվել ծուղակից հանկարծակի հարվածել հակառակորդին և թույլ չտալ նրան իրականացնելու իր մտադրությունը։ Ընտրելով հարմար պահ, սկզբում թնդանոթային կրակով խուճապ ստեղծեց հակառակորդի շարքերում, իսկ հետո տանկերով սրընթաց մխրճվեց թշնամու տանկերի դասավորության մեջ։ Ուլյանովը անձամբ ոչնչացրեց 8 տանկ, ընդ որում չորսին շարքից հանեց խոյահարման միջոցով։ Նրա տանկիստները թույլ չտվեցին թշնամուն առաջ անցնել։ Սեպտեմբերի 24-ին Ուլյանովի դասակը, մարտական առաջադրանք ստացավ ջախջախել Գայտոլոյի շրջանում տեղավորված թշնամուն և օգնել հետևակին գրավելու այն։ Իսկ մինչ այդ մի

[52] «На защиту Родины», 13 ноября 1941 г.

քանի անգամ փորձեր էին արվել գրավելու այդ ամրացված բնակավայրը, բայց անարդյունք։ Բնակավայրը շրջապատված էր դզոտներով, դոտերով և ուներ հակատանկային ամուր պաշտպանություն։ Ուլյանովը մանրամասնորեն ուսումնասիրելով հակառակորդի ուժերը, յուրաքանչյուր տանկիստի տալով մարտական խնդիր, գրոհի տարավ իր տանկիստներին։ Հնարամտորեն մանևրելով՝ նրանք գտան հակառակորդի պաշտպանության թույլ օղակը և տանկերով մխրճվեցին նրա դասավորության մեջ։ Ոչնչացվեց 1 դզոտ, 6 կրակակետ, 2 տանկ, 2 ամենազնաց և ավելի քան 30 հիտլերական։ Թշնամու գնդակից խոցված հերոսաբար զոհվեց խիզախ տանկիստ հրամանատարը։ Նա ետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով[53]։

Ծանր ու լարված մարտեր էին գնում Շլիսելբուրգ—Նևսկի Դուբրովսկի—Իվանովսկոյե—Յամ-Իժորա—Պուլկովո—Ուրիցկ աղեղով։ Թշնամին մարտի նետելով մեծաթիվ ուժեր, փնտրում էր թույլ օղակ՝ ճեղքելու սովետական զորքերի պաշտպանությունը։ Բայց նրա բոլոր ջանքերը վերջանում էին անարդյունք, իսկ զոհերի ու կորուստների թիվը գնալով աճում էր։

Ծանր ու կատաղի մարտեր էին գնում Պուլկովոյի շրջանում, ուր հակառակորդն ամեն կերպ ձգտում էր ճեղքել 42-րդ բանակի պաշտպանությունը, գրավել Կիրովի գործարանը և մտնել քաղաք։ Այդ հատվածում պատնեշի նման հակառակորդի դեմ էր կանգնել հիմնականում սահմանապահներից կազմված ինտերնացիոնալ կազմ ունեցող 109-րդ հրաձգային դիվիզիան՝ գեներալ-մայոր Մ. Դ. Պապչենկոյի հրամանատարությամբ։ Այստեղ ուս-ուսի մարտնչում էին ռուսն ու ուկրաինացին, բելոռուսն ու կարելը, ուզբեկն ու ղազախը, հայն ու վրացին, ադրբեջանցին ու մոլդավացին և այլ ազգությունների զավակներ։ Մարտից-մարտ թափված արյամբ ավելի ու ավելի էր ամրապնդվում նրանց եղբայրությունը։ Ուկրաինացի Վիկտոր Բարբաշի, ղազախ Կարսբեկ Յեղիմբաևի, հայ Սերգո Ղազարյանի, բելոռուս Վլադիմիր Լապկոյի մարտական բարեկամությունը մի ամուր բռունցք էր, որի դեմ խորտակվում էին հակառակորդի մեկը մյուսին հաջորդած հոգեբանական գրոհները։ Գամված մայր

---

53 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1234, գ. 327, թ. 234։ Ֆիլիպ Ուլյանովը ծնվել էր 1912 թ. Լենինգրադի մարզի Լոպատինո գյուղում (այժմ՝ Նովգորոդի մարզ)։ Նախապատերազմյան տարիներին աշխատել է ատաղձագործ, իսկ հետո Մինսկի գործարաններից մեկում՝ փականագործ։ 1934 թ. նա բելոռուսական ռազմական օկրուգի 1-ին տանկային բրիգադի կուրսանտ էր, իսկ 1940 թ. ծառայում էր Մերձբալթյան հատուկ ռազմական օկրուգի 3-րդ տանկային գնդում, որպես տանկային դասակի հրամանատար։

հողին նրանք մինչև վերջ իրենց ձեռքում պահեցին շատ կարևոր բնագիծը և ոչ մի քայլ չնահանջեցին[54]։

Սեպտեմբերի 17-ին Լենինգրադի ռազմաճակատի ռազմական խորհուրդը Գ. Կ. Ժուկովի, Ա. Ա. Ժդանովի, Ա. Ա. Կուզնեցովի, Մ. Ս. Խոզինի ստորագրությամբ հրաման ուղարկեց 42-րդ և 55-րդ բանակների հրամանատարությանը ամեն գնով կասեցնել թշնամու առաջշարժումը. «Ոչ մի քայլ ետ. Լենինգրադի մերձակա մատույցներում ոչ մի թիզ հող չհանձնել»[55]։ Ռազմաճակատի հրամանատար Ժուկովի պահանջով մեր զորքերը Լենինգրադի շրջանում անցան ակտիվ պաշտպանության։ Դա նշանակում էր, բացի պաշտպանությունից, անհրաժեշտ էր հակառակորդին հասցնել ուժեղ հակահարվածներ և դրանով ջլատել նրա ուժերը։

Սեպտեմբերի 20-ին ծանր մարտեր բռնկվեցին Նևա գետի մոտ Շլիսելբուրգից հարավ, Մոսկովսկայա Դուբրովկայի շրջանում։ Այդ օրը 115-րդ դիվիզիայի (հրամանատար գեներալ-մայոր Վ. Ֆ. Կոնկով) 638-րդ գընդի երկու գումարտակ գետանցում են Նևան, գրավում № 6 բանվորական ավանը և 3 կմ երկարությամբ կտրում Շլիսելբուրգ—Իվանովսկոյե երկաթուղին։ Այնուհետև գետանցում են ծովային հետևակի և ՆԳԺԿ 1-ին հրաձգային դիվիզիայի ստորաբաժանումները։ 11 օրվա մարտերի ընթացքում թշնամին կորցրեց 1000 սպանված զինվոր ու սպա, 6 տանկ, 2 զրահամեքենա, 43 գնդացիր, 200 ավտոմեքենա և այլ ռազմական տեխնիկա[56]։ Հակառակորդին այդ օրերին ծանր կորուստներ պատճառեց 115-րդ դիվիզիայի 576-րդ գնդի 3-րդ ականանետային վաշտը՝ 21-ամյա կրտսեր քաղղեկ Հովհաննես Խաչիկի Թուրքմենյանի հրամանատարությամբ։ Մի քանի օրվա ընթացքում նրա ականանետայինները ետ մղեցին երեք գրոհ, ոչնչացրին 100 հիտլերական, քարուքանդ արեցին 5 գնդացրային կրակակետ, 1000 արկ նետեցին թշնամու դիրքերի վրա։ Քաջ հայորդին պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[57]։

Սեպտեմբերը Լենինգրադի համար մղված մարտերի ամենավճռական ու լարված ամիսն էր, երկու կողմերի ուժերի գերագույն լարվածության դագաթնակետը, երբ որոշվում էր քաղաքի բախտը։ Շրջապատված Լենին-

---

[54] «Солдаты сто девятой», Л., 1963, с. 116—120.

[55] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 241. *1941թ. սեպտեմբերի 13-ին Լենինգրադի ռազմաճակատի զորքերի հրամանատար էր նշանակվել բանակի գեներալ Գ. Կ. Ժուկովը։*

[56] *ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1315, ց. 1, գ. 1, թ. 2։*

[57] *ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1234, գ. 258, թ. 62։*

գրադի շուրջն ամենուր կատաղի ու համառ պայքար էր գնում։ Սովետական մարտիկները «Հանուն Հայրենիքի», «Հանուն Լենինգրադի» խոսքերը շուրթերին դրսևորում էին հերոսության, անձնազոհության ու համարձակության մասսայական օրինակներ։ Հայրենիքին անսահման նվիրվածությունը, բարոյական բարձր ոգին պատնեշեցին թշնամու տանկային լավայի առաջշարժումը և թույլ չտվեցին նրան մտնել Լենինգրադ։ Սեպտեմբերի 19-ին Լիգովո, Պուլկովո, Կոլպինո գծում հակառակորդի առաջընթացը կանգնեցվեց։

Սեպտեմբերի 25-ին «Հյուսիս» բանակների խմբի շտաբը հիտլերյան գլխավոր հրամանատարությանը հայտնեց, որ իր ուժերով չի կարող գրավել քաղաքը։ Իսկ նոյեմբերի 8-ին Հիտլերը հրապարակայնորեն հայտարարեց. «Նա ով սահմանից անցել է մինչև Լենինգրադ, կարող է անցնել ևս 10 կմ և մտնել քաղաք։ Դրանում չպետք է կասկածել։ Քաղաքը շրջապատված է, ոչ ոք երբեք նրան չի կարող ազատել և նա կլինի մեր ձեռքում»[58]։ Այդ 10 կմ թշնամին չկարողացավ հաղթահարել և դա ֆաշիստական ստրատեգիական «Կայծակնային» պլանի խոշոր ձախողումն էր։ Նա այլևս չէր կարող, ինչպես նախատեսված էր, «Կենտրոն» բանակների խումբը համալրել «Հյուսիս» բանակների խմբի ուժերով և հարված հասցնել Մոսկվային։

Շրջափակումն ավելի ամրացնելու և Լադոգա լճով փոխադրումներին վերջ տալու նպատակով թշնամին իր ուժերն ուղղեց դեպի Տիխվին, Լադոգա լճի արևելյան ափին ֆիններին միանալու և քաղաքը մեկուսացնելու համար։ 1941 թ. նոյեմբերի 8-ին մեծաքանակ տանկերի ու ինքնաթիռների աջակցությամբ հակառակորդը գրավեց Տիխվինը և Լադոգա լճի ափը տանող երկաթուղային միակ ճանապարհը։ Մահացու վտանգ ստեղծվեց առանց այն էլ ծանր օրեր ապրող Լենինգրադի համար։ Սովետական հրամանատարության Ջորակայանի ձեռնարկած շտապ միջոցառումները կանգնեցրին թշնամու հետագա առաջշարժումը, իսկ մեկ ամիս անց հարձակման անցնելով, մեր զորքերը դեկտեմբերի 9-ին ազատագրեցին Տիխվինը և թշնամուն շպրտեցին Վոլխով գետի մյուս ափը։ Լենինգրադը մեկուսացնելու թշնամու պլանը տապալվեց։ Տիխվինի ուղղությամբ թշնամու կրած պարտությունը կարևոր նշանակություն ունեցավ Լենինգրադի համար։ Այն հնարավորություն տվեց վերականգնել երկաթուղային շարժումը մինչև Բայբոկալա և արագացնել բեռների փոխադրումը Լենինգրադ։

---

[58] «Очерки истории Ленинграда», том 5, с. 157.

Տիխվինի շրջանում կռվող մեր զորքերին աջակցելու և Լենինգրադի բլոկադան ճեղքելու համար իրենց գործողությունները ակտիվացնում են Մոսկովսկայա Դուբրովկայում (Նևսկի Պյատաչոկ) գտնվող սովետական միավորումները։ Անձնազոհաբար էին կռվում գնդապետներ Ա. Մ. Անդրեևի, Ա. Պ. Իվանովի, Լ. Ա. Բոնդարևի, Ի. Դ. Ռոմանցովի, Գ. Ի. Վեխինի 86-րդ, 20-րդ, 168-րդ, 10-րդ, 177-րդ հրաձգային դիվիզիաները։ Իվանովսկի ավանի շրջանում համարձակորեն գրոհի էին նետվում 55-րդ բանակի 70-րդ, 85-րդ, 90-րդ, 125-րդ և 268-րդ հրաձգային դիվիզիաները։ Մեր զորքերի գործադրած մեծ ջանքերը՝ ճեղքել Լենինգրադի շրջափակումը և միանալ 8-րդ բանակին, չհաջողվեց։ Այդ մարտերի ժամանակ հերոսի մահով զոհվեցին գնդային կոմիսար Ն. Դ. Աֆանասևը և 84-րդ առանձին տանկային գումարտակի հրամանատար մայոր Կ. Պ. Ուշակովը։

Տիխվինի շրջանում բորբոքված մարտերի ժամանակ ծնվեցին նոր հերոսներ։ Նրանցից առավել խիզախներին՝ թվով 11 հոգու, կրտսեր լեյտենանտ Վ. Մ. Ջայցևին, լեյտենանտ Ի. Ա. Կովշարովին, քաղղեկ Մ. Կ. Կուզմինին, շարքային Ի. Մ. Մանանովին, լեյտենանտ Վ. Դ. Պանֆիլովին, ավագ լեյտենանտ Մ. Յե. Պյատիկոպին, կրտսեր սերժանտ Ա. Ի. Ռաշչուպկինին, ավագ լեյտենանտ Ա. Պ. Սիլանտևին, կապիտան Լ. Ի. Գրեկովին, լեյտենանտ Ն. Դ. Լեսկոնոժենկոյին, լեյտենանտ Ն. Վ. Օպլեսնինին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Մարտերի ժամանակ մեծ համառություն ու դիմացկունություն դրսևորեցին 310-րդ հրաձգային դիվիզիայի մարտիկներն ու հրամանատարները՝ բելոռուսական ժողովրդի զավակ գնդապետ Նիկիֆոր Մատվեյի Զամիրովսկու հրամանատարությամբ։ Դիվիզիան կազմավորվել էր Ղազախական ՍՍՀ-ում և ուներ ինտերնացիոնալ կազմ։ 1941 թ. դիվիզիայի անձնակազմի 40 տոկոսը ղազախներ էին, 30 տոկոսը ռուսներ, 25 տոկոսը ուկրաինացիներ, 5 տոկոսը այլ ազգությունների ներկայացուցիչներ[59], իսկ 1943 թ. հունվարին դիվիզիայի գերակշռող մասը արդեն ռուսներ էին։ Դիվիզիայում կար 3886 ռուս, 624 ուկրաինացի, 97 բելոռուս, 132 ղազախ, 92 ուզբեկ, 14 հայ, 5 ադրբեջանցի, 1 տաջիկ, 1 թուրքմեն[60]։ Մարտիկներն ու հրամանատարներն առաջին մարտական մկրտությունը ստացան 1941 թ. սեպտեմբերի 9-ին, Գոնտովայա Լիպկայի շրջանում։ Այնուհետև դիվիզիան հերոսաբար կռվեց Զյորնայա գետի, Սինյավինի և Առաջին Էստոնական ավանից արևելք ընկած շրջաններում։ Համառ մարտերի ժամանակ

---

[59] «Вторая мировая война» (книга первая), М., 1966, с. 94.

[60] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1368, ց. 484186, գ. 1, թ. 8։

զգալիորեն նվազեց դիվիզիայի կազմը։ Հոկտեմբերին դիվիզիայում կար 3735 զինվոր ու սպա, 36 գնդացիր, 7 ականանետ, 27 թնդանոթ՝ նախկին կազմի մեկ երրորդը[61]։ Եվ այդպիսի կազմով հերոսության հրաշքներ գործեցին ղազախստանցի զինվորներն ու հրամանատարները։ Հոկտեմբերի 19-ին 54-րդ բանակի կազմում դիվիզիան հարձակման անցավ № 7 բանվորական ավանի ուղղությամբ։ Առաջինը ֆաշիստական խրամատ ներխուժեցին լեյտենանտ Տրոֆիմենկոյի մարտիկները, իսկ նրա ետևից 1080-րդ հրաձգային գունդը՝ դիվիզիայի շտաբի օպերատիվ բաժնի պետ՝ փոխգնդապետ Շալվա Իվանի Մելիքաձեի հրամանատարությամբ (գնդի հրամանատարը շարքից դուրս էր եկել)։ Հոկտեմբերի 20-ին Մելիքաձեի մարտիկները գրավեցին № 7 ավանը և Գոնտովայա Լիսկան։ Բանակի ռազմական խորհուրդը շնորհակալություն հայտնեց դիվիզիայի անձնակազմին[62]։ Այդ մասին նշվեց նաև սովինֆորմբյուրոյի հոկտեմբերի 26-ի հաղորդագրությունում[63]։

Տիխվինի համար մղված մարտերում աչքի ընկավ 1082-րդ հրաձգային գնդի հետախուզական դասակի հրամանատար Սամիտ Կարամեդդինովը։ Խիզախ հետախույզը 8 կարմիրբանակայինների հետ անցավ թշնամու թիկունքը և ոչնչացրեց 20 հիտլերական[64]։ Նա զոհվեց 1941 թ. դեկտեմբերի կեսին Սորոկինո կայարանի մոտ։

Ղազախստանցի զինվորները և հրամանատարները Լենինգրադի համար մղված մարտերում դրսևորեցին մեծ մարտունակություն ու դիմացկունություն, բարձր պահելով սովետական ռազմիկի կոչումը։

Դեկտեմբերի 8-ին Լաղարևիչ բնակավայրի մոտ հերոսաբար կռվեցին 46-րդ տանկային գնդի տանկային դասակի հրամանատար, կարելական ժողովրդի զավակ, Կարելիայի սովխոզների նախկին ժողովրդական կոմիսարի տեղակալ, լեյտենանտ Վասիլի Միխայլովիչ Զայցևը և նրա հրաձիգ-ռադիստ, ռուս ժողովրդի զավակ Անդրեյ Իվանովիչ Ռաշչուպկինը։

Զորամասի հրամանատարը Զայցևին տվեց մարտական առաջադրանք՝ հետախուզել Տիխվինից մի քանի կիլոմետր հեռու գտնվող Լաղարևիչ բնակավայրում ամրացված հակառակորդի դիրքերը։ Առաջադրանքը կատարվեց։ Երբ նա այդ մասին զեկուցում էր հրամանատարին, ներս մը-

---

[61] *И. П. Барбашин, А. Д. Харитонов*, Боевые действия Советской Армии под Тихвиной в 1941 г., с. 18.

[62] «В решающий бой», 23 октября 1941 г.

[63] «Сообщения советского информбюро», т. 1, М., 1944, с. 322.

[64] *Նույն տեղում, էջ 427—428։*

տավ շտաբի պետը և հայտնեց, որ հրաման է ստացվել հետախուզել Լաղարևիչից ավելի հեռու գտնվող Պոդորելեց գյուղը։ Զայցևը խնդրեց իրեն ուղարկել, պատճառաբանելով, որ իրենք պատրաստ են առաջադրանքը կատարելու և, բացի այդ, լավ գիտեն ճանապարհն ու տեղանքը։ Հրամանատարը համաձայնեց։ Շուտով ռադիստ Ռաշչուպկինը հաղորդեց՝ «Լաղարևիչից անցանք հաջող», «Պոդորելցում հայտնաբերեցինք գերմանական շտաբ, ոչնչացրինք, վերադառնում ենք»։ Որոշ դադարից հետո լսվեց ծանոթ ձայնը. «Լաղարևիչի ճանապարհին հանդիպել ենք դարանի, մարտ ենք մղում»։ Հրամանատարը անմիջապես օգնություն ուղարկեց։ Լսվեց Ռաշչուպկինի վերջին ռադիոհաղորդումը՝ «Այրվում ենք... թշնամուն չենք հանձնվում»։

Երբ տանկիստները մտան գյուղ, Զայցևի այրված տնակի շուրջը տեսան 50-ից ավելի սպանված ֆաշիստական զինվոր ու սպա[65]։ Այսպես հերոսաբար զոհվեցին տարբեր ազգությունների պատկանող սոցիալիստական հայրենիքին անսահմանորեն նվիրված, սովետական ժողովրդի երկու խիզախ զավակները։ Նրանց ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

Տիխվինի համար մղված մարտերում աչքի ընկավ 65-րդ հրաձգային դիվիզիայի 38-րդ հրաձգային գնդի 2-րդ դումարտակի զինկոմ Մարտիրոս Համբարձումի Առաքելյանը և նրա հայրենակիցներ Հայկազ Օհանյանը և Ռուբեն Դադյանը։ Վերջինս հերոսաբար զոհվեց, իսկ Մարտիրոս Առաքելյանը ծանր վիրավորվեց։ Մինչ վիրավորվելը Մ. Հ. Առաքելյանը մի խումբ մարտիկների հետ միասին մի քանի անգամ թափանցեց Տիխվին քաղաքը և հրամանատարությանը ներկայացրեց հետախուզական անհրաժեշտ տվյալներ[66]։ Զինկոմը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով։ Նույն դիվիզիայի կազմում հերոսաբար մարտնչեց լեյտենանտ Էդուարդ Աբգարի Մելիքսեթյանը, որն իր դասակի մարտիկներին մի քանի անգամ գրոհի տարավ հակառակորդի դեմ և դիվիզիայի մյուս ստորաբաժանումների հետ միասին դեկտեմբերի 9-ին հաղթականորեն մտավ Տիխվին։ Այստեղ էլ նա վիրավորվեց ոտքից։

1941 թ. նոյեմբերի սկզբին, երբ սովետական զորքերը համառ ու դա-

---

[65] *А. В. Буров,* Твои герои, Л., с. 116—119.

[66] *Մարտիրոս Առաքելյանն այժմ Երևանի պետական համալսարանի դասախոս է, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր և Հայրենական պատերազմին նվիրված մի շարք արժեքավոր աշխատությունների հեղինակ։*

ժան մարտեր էին մղում թշնամու գերակշռող ուժերի դեմ Տիխվինի շրջանում, նույն ժամանակ Ստարայա Ռուսսայի մոտ, Հյուսիսարևմտյան ռազմաճակատի 11-րդ բանակի հրամանատարության կողմից պլանավորվեց և թշնամու թիկունքում իրականացվեց մարտական մի համարձակ գործողություն, որի մասին քաղաքացիներին նշվելուց բացի, ոչ մի տեղ չի գրվել և հրապարակվել այդ շատ կարևոր մարտական առաջադրանքի փայլուն կատարման հանդուգն մասնակիցների հերոսական սխրանքի մասին։ Այդ մասին չի հիշատակվել նաև սովինֆորմբյուրոյի ամփոփագրերում։

Նոյեմբերի 9-ն էր։ Բանակի զորամասերի և ստորաբաժանումների անձնակազմերը ծանոթանում էին 1941 թ. նոյեմբերի 7-ին Կարմիր հրապարակում կայացած զորահանդեսում Գերագույն գլխավոր հրամանատարի ելույթի տեքստին։ Յուրաքանչյուր մարտիկ իր պատասխանատվությունը հայտնեց բոլոր ուժերով կռվել թշնամու դեմ և ամեն ինչ անել նրանց մեր սրբազան հողից դուրս շպրտելու համար։ Նույն օրը բանակի շտաբի կործանիչ ջոկատում անձնակազմին ելույթի տեքստը ծանոթացնելուց հետո, կարդացվեց բանակի ռազմական խորհրդի հրամանը, որի համաձայն ջոկատը պետք է կատարեր մի կարևոր ու բարդ առաջադրանք. աննկատելի անցնել թշնամու թիկունքը և հանկարծակի գրոհով գրավել Բեգլովո կայարանը, շարքից հանել երկաթուղագիծը, պայթեցնել կառույցները և ռազմական տեխնիկայով բեռնված էշելոնները։ Ջոկատի հրամանատար նշանակվեց ավագ լեյտենանտ Բրոսլավսկին, իսկ կոմիսար՝ ավագ քաղղեկ Բարիշևը։ Ելնելով առաջադրանքի բարդությունից ու դժվարությունից, մեկ օրում կատարվեց նախապատրաստական մեծ աշխատանք։ Հրամանատարը և կոմիսարն առանձին զրույց ունեցան յուրաքանչյուր մարտիկի հետ։ Առաջադրանքը կատարելու համար ընտրվեցին նախաձեռնող, համարձակ ու ճարպիկ 50 ռազմիկներ, որոնցից 4-ը կոմունիստ, 25-ը՝ կոմերիտական։ Ջոկատին ամրացվեց 9 սակրավոր և 7 պարտիզան։ Վերջիններիս լավ ծանոթ էր քաղաքը և ամբողջ տեղանքը։ Ջոկատում կային տարբեր ազգությունների մարտիկներ, նրանց մեջ էին նաև Նոր Բայազետի շրջանի Բաշքենդ (այժմ՝ Կամոյի շրջանի Գեղարքունիք) գյուղի բնակիչներ, կարմիրբանակայիններ Երեմ Սերգեյի Ավետիսյանը և Միքայել Բալաբեկի Մանուկյանը։ Մեկնելուց առաջ Ավետիսյանը կոչ արեց ընկերներին՝ սրբորեն կատարել մարտական առաջադրանքը։ Նոյեմբերի 9-ին ջոկատն անցավ ռազմաճակատի գիծը։ Տեղանքին լավ ծանոթանալուց հետո, նոյեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը նրանք բաժանվելով երկու խմբի, տարբեր կողմերից հարձակվեցին կայարանի վրա։ Մինչ այդ

Երեմ Ավետիսյանը շարքից հանեց պահակին և աննկատ մոտենալով հանրակացարանին, լուսամուտից ներս նետեց երկու հակատանկային նռնակ։ Սպանվեցին շատ հիտլերականներ։ Պայթյունը հարձակման ազդանշան էր։ Ավետիսյանն ու Մանուկյանը մի խումբ մարտիկների հետ ոչնչացրին էշելոնների պահակախումբը։ Մարտը տևեց 4 ժամ։ Բացառիկ վճռականություն ու հնարամտություն դրսևորեցին ջոկատի հրամանատար Բրոսլավսկին և կոմիսար Բարիշևը։ Ոչնչացվեց 12 հաուբից, արկերով բեռնված մի քանի վագոն, վառելիքի երկու ցիստերն, 70 ֆաշիստական զինվոր ու սպա, շարքից հանվեցին երկաթուղագծերը, երկաթուղային սլաքները, կառույցները, պայթեցվեց 5 շենք։ Մարտական առաջադրանքը կատարելու ժամանակ աչքի ընկան լեյտենանտ Վինոգրադովը, ֆելդշեր Կոնոպիցինը, դասակի հրամանատարներ Սմոլենցևը, Ռոմաշկինը և ուրիշներ։ Ամբողջ գործողության ընթացքում ջոկատը տվեց 4 վիրավոր։ Առաջադրանքը կատարելուց հետո ջոկատն արագ հեռացավ կայարանից և հաղթահարելով սառույցի բարակ շերտով ծածկված ճահճային տեղամասը (20 կմ), բարեհաջող վերադարձավ զորամաս։ Հոսպիտալում ծանր վերքից մահացավ կարմիրբանակային Բարդան։ Մարտական առաջադրանքը փայլուն կատարելու համար բանակի ռազմական խորհուրդը ողջ անձնակազմին հայտնեց շնորհակալություն, իսկ 11-ին ներկայացրեց կառավարական պարգևի[67]։

Բանակի քաղբաժնի շրջաբերականով մարտական այդ սխրանքի մասին իմացան բոլոր միավորումների ու զորամասերի անձնակազմերը։ «Մարտում հատկապես աչքի ընկան,— գրված է շրջաբերականում,— սակրավորների խմբի հրամանատար Վինոգրադովը, դասակի հրամանատար Սմոլենցևը, կրտսեր սերժանտ Ռոմաշկինը, կարմիրբանակայիններ Մանուկյանը և Ավետիսյանը։ Վերջինս անձամբ վերացրեց պահակին և մոտենալով գերմանական զինվորների հանրակացարանին, իրար ետևից այնտեղ նետեց երկու հակատանկային նռնակներ[68]։

Սովետական ռազմիկների միասնական շարքերում այսպես խիզախաբար ու նվիրվածությամբ էին կռվում նաև մեր հայրենակիցները։

Լենինգրադի համար ծանր իրավիճակ էր ստեղծվել նաև հյուսիսում՝ Կարելական պարանոցում, ուր սպիտակ ֆիններն գետանցելով Վուոկսի գետը, օգոստոսի 11-ին ուժեղ հարձակում էին սկսել Վիբորգի շրջանում

---

[67] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 357, ց. 5984, գ. 5, թ. 93—95, ֆ. 33, ց. 1386, գ. 277, թ. 27, 43։
[68] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 357, ց. 5984, գ. 2, թ. 24։

գտնվող սովետական զորքերի դեմ։ Չէին դադարում արյունահեղ մարտերը Սվիրի ուղղությամբ, որտեղ Լադոգա—Օնեգա պարանոցում 7-րդ բանակն ամեն ինչ անում էր կասեցնելու թշնամու առաջշարժումը։

Դաժան մարտերի բոցերում ծնվում էին նորանոր հերոսներ։ Սովետական ռազմիկները կռվում էին մինչև վերջին փամփուշտը։

Հիտլերականները Խիտոլա կայարանի մոտ հաղթահարելով ՆԳԺԿ 14-րդ մոտո-հրաձգային գնդի ստորաբաժանումներից մեկի դիմադրությունը, փորձեցին գերի վերցնել սանհրահանգիչ Անատոլի Ալեքսանդրովիչ Կոկորինին։ Հերոսը թույլ տվեց ֆաշիստներին մոտենալ, իսկ հետո գոչելով՝ «չեկիստները գերի չեն հանձնվում», նռնակով պայթեցրեց իրեն, սպանելով ևս մի քանի հիտլերականի։ Կոմերիտական Անատոլի Կոկորինին ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[69]։

Օգոստոսի սկզբին կատաղի մարտեր էին գնում Անտրեա հանգուցային կայարանի և նրա մոտ գտնվող Վուոկսի գետի վրայով անցնող երկաթուղային մեծ կամուրջի համար։ Այն պաշտպանում էր 9-րդ երկաթուղային բրիգադի (հրամանատար մայոր Վ. Ա. Մատիշև) գումարտակը, լիտվական ժողովրդի զավակ մայոր Պետրայտիսի հրամանատարությամբ։ Հակառակորդն անընդմեջ գրոհում էր, ձգտելով թույլ չտալ պայթեցնել կամուրջը։ Պետրայտիսը հրամայեց կարմիրբանակային-պայթեցնող Դատյանին միացնել լարը, բայց պայթյուն չէր լսվում։ Դատյանը առանց վարանելու, թշնամու ուժեղ կրակի տակ նետվեց դեպի կամուրջը և միացրեց վնասված լարը։ 164 մետրանոց հսկա կամուրջը խորտակվեց[70]։

Սեպտեմբերին Կարելական պարանոցում դրությունը նույնպես կայունացվեց և հակառակորդը կանգնեցվեց սովետա-ֆիննական պետական նախկին սահմանի վրա։

Լենինգրադի համար ծանր ու դժվարին մարտերը շարունակվում էին։ Թշնամին քաղաքը պաշարել էր չորս կողմից։

* *
*

1941 թ. երկրում մեծ հիացմունք առաջացրեց Լենինգրադի ծովային հեռավոր մատույցները պաշտպանող Խանկո թերակղզու ռազմածովային

---

[69] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 215.
[70] Նույն տեղում։

բաղայի փոքրաթիվ կայազորի հերոսական պայքարը մի քանի անգամ գերակշռող սպիտակ ֆինների դեմ։

Խանկո Թերակղզին և նրա շուրջը գտնվող մոտ 400 մանր ու մեծ կղզիները 1940 թ. սովետա-ֆիննական պայմանագրի համաձայն 30 տարով վարձակալության էր տրվել Սովետական Միությանը։

Թերակղզին պաշտպանող ստորաբաժանումներում կային ՍՍՀՄ տարբեր ազգությունների պատկանող շատ զինվորներ ու սպաներ, որոնք ռուս ընկերների հետ, հավատարիմ զինվորական երդմանը, 163 օր հերոսաբար ու անձնազոհաբար կռվեցին սպիտակ ֆինների դեմ՝ պաշտպանելով Լենինգրադի հեռավոր ծովային դարպասը։

Բազմազգ սպայական կազմը, որը հիմնականում բաղկացած էր ռազմականապես պատրաստված և սովետա-ֆիննական պատերազմի բովով անցած, կոփված հրամանատարներից, ստեղծված բարդ իրադրությունում գործում էր համերաշխ ու պատասխանատվության մեծ զգացումով, հրաստակերեն կատարում ծառայական պարտականությունները։ Ռազմածովային բաղայի հրամանատարն էր ռազմական ու զինվորական ծառայության մեծ փորձ ունեցող, հրետանու հմուտ մասնագետ գեներալ-լեյտենանտ Սերգեյ Իվանովիչ Կաբանովը։ Նրա տեղակալն էր համարձակ ու նախաձեռնող հրամանատար՝ բրիգադային կոմիսար Արսենի Լվովիչ Ռասկինը։ Բաղան ցամաքից պաշտպանող 8-րդ հրաձգային բրիգադի հրամանատարն էր Կարմիր դրոշի շքանշանակիր գնդապետ Նիկոլայ Պավլովիչ Սիմոնյակը։ Քաջահմուտ հրամանատարներ էին գնդապետներ Ն. Դ. Սոկոլովը, Ն. Ս. Կուպրիանովը, Մ. Դ. Պոլեգանը, 2-րդ կարգի կապիտաններ Պ. Գ. Մաքսիմովը, մայորներ Ն. Ս. Նիկանորովը, Ի. Ռ. Մորոզովը Ս. Ս. Կոբեցը, Գ. Գ. Մուհամեդովը, Ն. Ա. Կուզմինը, Ա. Դ. Գուբինը, կապիտաններ Բ. Մ. Գրանինը, Ս. Ֆ. Կուդրյաշևը, Լ. Մ. Տուդերը, Կ. Ա. Զիկովը, ավագ լեյտենանտներ Ի. Ս. Նիչիպորուկը, Վ. Ա. Բրագինը, Պ. Մ. Ժիլինը, Պ. Վ. Կուրիլովը և շատ ուրիշներ։ Թերակղզում պաշտպանական ամրություններ կառուցելու գործում հսկայական աշխատանք կատարեցին զինվորական ինժեներներ Ս. Յե. Կիսիլյովը, Ն. Ս. Կոտովը, Ա. Մ. Անանյանը։ Վերջիններիս ղեկավարությամբ սակրավորները, զինվորները, ծովայինները թշնամու կրակի տակ ամրացնում էին պաշտպանական ամրությունները, կառուցում նոր դզոտներ, դոտեր և կրակակետեր։ Թշնամու դիրքերից 150 մետր հեռավորության վրա, անաղմուկ, առանց հակառակորդի ուշադրությունը գրավելու 270-րդ գնդի հակատանկային մարտկոցի 96 հրետանավորներ 10—15 օրում կառուցեցին 11 ամրացված կետ։ Անձնազոհ աշխատեցին դասակի հրամանատարներ Լյաշչենկոն, Եֆիմովը,

սերժանտներ Սորոկինը, Ռոգովը, կրտսեր սերժանտ Օմարովը, կարմիրբանակայիններ Կուրմագազինը, Ռեշետնիկովը, Սարգսյանը, Տոպուրկովը և Գլեբիխը։ Նրանց բոլորին գնդի հրամանատարի հրամանով շնորհակալություն հայտնվեց։ Համերաշխ և եռանդուն էին աշխատում 3-րդ գնդացրային վաշտի կրտսեր սերժանտներ Աբաշիձեն ու Սանթրոսյանը[71]։ Այս վաշտում էին ծառայում Դիլիջանից բանակ զորակոչված մի խումբ երիտասարդներ՝ Մուշեղ Հակոբյանը, Ստյոպա Սարգսյանը, Յակով Տարասովը, Ռաֆիկ Սանթրոսյանը։ Վաշտի քաղղեկի տեղակալ Մուշեղ Հակոբյանը հարազատներին ուղարկած նամակներից մեկում գրում է. «Պատերազմում կռվելու պահին մենք մեկս մյուսի խոսք տվեցինք, ջանք չխնայել հայրենիքի պաշտպանության համար։ Պաշտպանելով այդ հեռավոր կղզին, մենք, միաժամանակ, պաշտպանած կլինենք մեր Դիլիջանի հպարտ սարերը, ձորերը և քչքչան առվակները[72]։

Դիլիջանցի Ստյոպա Սարգսյանը Հայաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող ցուրտ ու փոքր հողակտորում, օրվա լարված մարտերից հոգնած ռազմիկների սրտերը ջերմացնում ու ոգևորում էր հայկական սրտաբուխ երգերով։ Մեր ժողովրդին հատուկ կենսասիրությամբ ու կենսախնդությամբ լի հայ մարտիկները երբեք չընկճվեցին դժվարությունների առաջ, այլ իրենց երգերով և սուր կատակներով բարձրացնում էին կռվող մարտիկների տրամադրությունը, մոռացնել տալիս հոգնածությունն ու լարվածությունը։

Անընդհատ ռմբակոծությունների տակ շատ-շատերի կյանքը փրկեցին զինվորական բժիշկներ Մ. Գ. Ռոյտմանը, Յու. Վ. Լուկինը, Ա. Ս. Կորովինը և Բ. Մ. Շվարցգորնը։ Սովետական ռազմիկների բարոյաքաղաքական ու մարտական ոգու բարձրացման գործում մեծ ավանդ ներդրին քաղաշխատողները, որոնք հայրենասիրական խոսքով և անձնական օրինակով քաջալերում և գրոհի էին տանում մարտիկներին։ Այդպիսիներից էին՝ գնդային կոմիսար Պ. Ի. Վլասովը, ավագ քաղղեկներ Ա. Ի. Ռումյանցևը, Պ. Գ. Կարուզեն, քաղղեկներ Ա. Ա. Սիլանյանը, Ն. Կ. Տարասովը և ուրիշներ։ Նպատակասլաց ու կազմակերպչական մեծ աշխատանքի շնորհիվ էր, որ կայազորի ակտիվ պաշտպանության ամբողջ ընթացքում կոմունիստական կուսակցության շարքերն ընդունվեցին 4000 զինվորներ ու սպաներ, իսկ կոմերիտմիության շարքերը՝ ավելի քան 1000 մարդ[73]։

---

[71] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1781, ց. 1, գ. 14, թ. 283, 324։

[72] ՀՄՊՊԿ արխիվ, ֆ. 243, գ. 19, թ. 11։

[73] «Борьба за Советскую Прибалтику в Великой Отечественной войне 1941—1945» (книга первая), с. 148.

Հերոսական էր ռազմածովային բազայի կայազորի մարտական ոգին։ Անձնակազմը՝ զինվորից մինչև բարձրաստիճան սպաները լի էին վճռականությամբ՝ մինչև վերջ պաշտպանել Լենինգրադի պաշտպանության համար կարևոր նշանակություն ունեցող հենակետը։ 335-րդ գնդի կարմիրբանակայինների ժողովներից մեկում զինվոր Տուչկովը հայտարարում է. «Սենք ամուր կպահենք Լենինի փառավոր քաղաքի բանալին։ Կմեռնենք բայց այն չենք հանձնի»[74]։

Կայազորի ստորաբաժանումներում ծառայող տարբեր ազգությունների ռազմիկներն իրար հետ կապված էին բարեկամական ու եղբայրական սմենաջերմ կապերով։ Օտար ու հեռավոր երկնքի տակ նրանք կռվում ու պայքարում էին մի ընդհանուր ձգտումով՝ որքան հնարավոր է ավելի շատ ուժեր ներգրավել իրենց վրա և թեթևացնել Լենինգրադի պաշտպանների վիճակը։ Մարտերի ժամանակ հերոսաբար զոհվեցին Ֆետիսովը, Շվեցովը, Խիտուրունը, Առաքելյանը, Վասիլևը և ուրիշներ։ Մարտական պոստում զոհվեց ռազմածովային բազայի հոսպիտալի պետ Յու. Վ. Լուկինը. Մարտական ընկերների զոհվելը միաժամանակ բազմապատկում էր նրանց ատելությունը թշնամու նկատմամբ, մղում նորանոր սխրագործություններ։ 270-րդ գնդի 3-րդ վաշտի մարտիկներ Սալանովը, Կարետնիկը և Պետրոսյանը հերոսաբար զոհված ջոկի հրամանատար Առաքելյանի գերեզմանի առաջ երդվեցին՝ ոչ մի ֆաշիստի թույլ չտալ ոտք դնելու բազայի տերիտորիան[75]։

Հուլիսի 1-ին, գիշերվա ժամը 2-ին սպիտակֆիններ հրետանային ու ականանետային ուժեղ գրոհով Լապպվիկա կայարանի մոտ փորձեցին ճեղքել 8-րդ հրաձգային բրիգադի 335-րդ գնդի (հրամանատար՝ մայոր Ն. Ս. Նիկանորով) պաշտպանությունը և ներխուժել մեր զորքերի դասավորությունը, բայց ապարդյուն։ Հակառակորդի գրոհները ետ մղելու գործողություններում աչքի ընկան ուկրաինացի Պյոտր Սոկուրը և ռուս Նիկոլայ Անդրիենկոն, որոնք մնալով գրոհող թշնամու թիկունքում, թաքստոցից ավտոմատային կրակով և նռնակներով շփոթություն առաջացրին նրա շարքերում։ Թշնամին նահանջեց, իսկ Սոկուրն ու Անդրիենկոն զինաթափեցին և գերի վերցրին հինգ սպիտակֆիններ։ Պ. Տ. Սոկուրին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Հետևակայիններին մեծ օգնություն ցույց տվեց 30-րդ դիվիզիոնի հրետանային մարտկոցը՝ Ն. Դ. Ռուդենկոյի հրամանատարությամբ։ Հուլիսի 8—9-ը հակառակորդը նորից

---

[74] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1781, ց. 1, գ. 14, թ. 310։

[75] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1781, ց. 1, գ. 14, թ. 172։

փորձեց ճեղքել մեր զորքերի պաշտպանությունը և ծանր կորուստներ կրեց։ Թշնամին կանգ չառնելով բազմաթիվ զոհերի առաջ, անընդհատ գրոհում էր այն տեղամասը, որ պաշտպանում էին 3-րդ գնդացրային հաշվարկի հրամանատար Խորեն Ակոպովը և ուկրաինացի Սիմարշուկը, որոնք մինչև վերջ մնացին իրենց վստահված դիրքերում[76]։

Դաժան ու արյունալի մարտերի ընթացքում մի շարք կղզիներ մի քանի անգամ ձեռքից ձեռք էին անցնում։ Բացի ճակատային գրոհներից, հակառակորդը ամեն օր թերակղզու վրա արձակում էր մինչև 4000 ական ու արկ[77], ձգտելով կազմալուծել սովետական զորքերի պաշտպանությունը, հոգեբանական ճնշում գործադրել սովետական զինվորների ու սպաների վրա։ Սովետական փոքրաթիվ կայազորը ոչ միայն պաշտպանվում էր, այլև հանկարծակի հակագրոհներով լարված վիճակում պահում թշնամուն։

Հակառակորդին ծանր հարվածներ հասցրին կամավորներից կազմված մայոր Ն. Ա. Կուզմինի և Բ. Մ. Գրանինի ջոկատները։ Հուլիսի 19-ին Գրանինի ջոկատը հակառակորդին դուրս շպրտեց Խորսե կղզուց։ Այնուհետև զարգացնելով հարձակումը, գրավեց Ստարկերն, Ուգսկատան, Թուսարե և ուրիշ կղզիներ, որտեղից հակառակորդը կրակի տակ էր պահում Գանգուտ քաղաքը։ Կուզմինի ջոկատն ազատագրեց Լոնգխոլմ, Վարնիուլմ, Գրիսլոմ կղզիները։ Մինչև օգոստոսի 19-ը գրավվեց 19 կղզի։ Թերակղզում լայն ծավալ ստացավ սնայպերական շարժումը։ Գրանինի ջոկատում հմուտ սնայպերներ էին դարձել Իսակովը, Ռեզնիկը, Ժելեզովը, Սիմանովսկին և ուրիշներ։ Միայն Գրիգորի Իսակովը ոչնչացրեց թշնամու 118 զինվոր ու սպա[78]։

Հերոսության ու անձնազոհության օրինակներ դրսևորեցին զաղախական ժողովրդի զավակներ Շամբետովը, Այտուգանովը, Արդուսալիմովը, Իտբայկենովը, Մոլդախմետովը, Բայազիտովը և ուրիշներ[79]։

Խանկոյի համար մղված մարտերում ցուցաբերած արիության ու խիզախության համար Բալթիկայում առաջինը Սովետական Միության հերոսներ դարձան ուկրաինական ժողովրդի պանծալի զավակներ՝ օդաչուներ կապիտան Ալեքսեյ Կասյանովիչ Անտոնենկոն, լեյտենանտ Պյոտր Անտոնովիչ Բրինկոն և կարմիրբանակային Պյոտր Տրոֆիմովիչ Սոկուրը։

---

[76] ՀՄՊՊԿ արխիվ, ֆ. 243, ց. 19, թ. 1։

[77] *С. И. Кабанов,* На дальних подступах. М., 1971, с. 150.

[78] «Борьба за Советскую Прибалтику в Великой Отечественной войне 1941—1945» (книга первая), с. 147.

[79] «Красный гангут», 10, 17, 18, 21 и 30 ноября 1941 г.

Հուլիսի 4-ին Խանկոյի երկնքում խփվեց թշնամու առաջին երեք ինքնաթիռը։ Երկուսը ցած գցեցին օդաչուներ Ալեքսեյ Անտոնենկոն և Պյոտր Բրինկոն։ Կարճ տևեց այդ համարձակ ու նվիրված ռազմիկների խիզախումներով ու սխրանքներով հարուստ մարտական կյանքը։ Նրանք թշնամու ոչնչացված ինքնաթիռների հաշիվը հասցրին 30-ի։ Անտոնենկոն զոհվեց հուլիսի 26-ին՝ վայրէջք կատարելու պահին, իսկ Բրինկոն օդային մարտում՝ սեպտեմբերի 14-ին։ Բալկար ու թաթար ժողովուրդների զավակներ Ալիմ Յուսուպովիչ Բայսուլթանովը և նրան հետևող Անատոլի Իվանովիչ Կուզնեցովը հուլիսի 5-ին Տուրկույի շրջանում ոչնչացրին թշնամու երկու կործանիչ, խորտակեցին մեկ կատեր և հաջող վայրէջք կատարեցին Խանկոյի օդանավակայանում[80]։ Հակառակորդին ծանր կորուստներ պատճառեցին օդաչուներ Միխայիլ Տարասովիչ Լեոնովիչը, Գեննադի Դմիտրևիչ Յոկոլաևը, Լեոնիդ Գեորգևիչ Բելոուսովը և ուրիշներ։

Նոյեմբերի սկզբին սպիտակ ֆիններն նորից փորձեցին կոտրել կայազորի քաջարի մարտիկների դիմադրությունը և գրավել թերակղզին։ Եվ նորից ծանր կորուստներով ետ շպրտվեցին։ Այդ օրերին, երբ թերակղզում համառ մարտեր էին գնում հակառակորդի դեմ, «Правда» թերթը գրեց. «Կանցնեն տասնամյակներ, դարեր կանցնեն, բայց մարդկությունը չի մոռանա, թե ինչպես սովետական երկրի մի բուռն խիզախ հայրենասերներ, հրետանային ու ականանետային փոթորկալի կրակի տակ, հանուն հաղթանակի, արհամարհելով մահը, ոչ մի քայլ չնահանջեցին մինչև ատամները զինված մեծաթիվ թշնամիների առաջ, ցուցաբերելով չտեսնված արիության ու հերոսության օրինակներ... Մեծ պատիվ ու անմահ փառք Ձեզ, Խանկոյի հերոսներ։ Ձեր սխրանքը ոչ միայն հիացնում է սովետական մարդկանց, այլև ոգեշնչում է նոր խիզախումների, սովորեցնում, թե ինչպես պետք է պաշտպանել երկիրը դաժան թշնամուց, անխնա պայքարի է կոչում ընդդեմ ֆաշիստական կատաղած գազանի»[81]։

Մեր զորքերի կողմից Տալլինը թողնելուց հետո Խանկոյի ռազմամբթերքի և պարենամթերքի մատակարարումը դադարեց։ Պաշարված Լենինգրադը հնարավորություն չուներ օգնելու Խանկոյի հերոսներին։ Հոկտեմբերի վերջերին թերակղզու պաշտպանների դրությունը սկսեց վատանալ։ Զգացվում էր փամփուշտների, արկերի ու պարենամթերքի սուր պակաս։ Հոկտեմբերի 23-ին Գերագույն գլխավոր հրամանատարության Զորակայանը որոշեց կայազորը էվակուացնել Լենինգրադ։

---

[80] *С. И. Кабанов*, На дальних подступах, с. 158—160.

[81] «Правда», 13 ноября 1941 г.

Խանկոյից դուրս գալու նախօրյակին բաղայի տեխնիկ մասնագետները և ինժեներները, նրանց թվում նաև երկրորդ կարգի զինտեխնիկ Ավետիս Մինասի Անանյանը, կատարեցին մարտական շատ կարևոր առաջադրանք, որը օգնեց առանց կորստի մինչև վերջին զինվորին նավ նստեցնել[82]։ 8-րդ հրաձգային բրիգադի հրամանատար, գնդապետ Ն. Պ. Սիմոնյակի հրամանով Անանյանը նշանակվեց 101 լավագույն մարտիկներից բաղկացած ջոկատի հրամանատար, որը պետք է քողարկեր կայազորի հիմնական ուժերի էվակուացումը։ Հանձնարարված խնդիրը կատարվեց մեծ վարպետությամբ։ Նա թերակղզու տարբեր մասերում տեղադրված գնդացիրների վրա պատրաստեց այնպիսի հարմարանքներ, որոնց օգնությամբ, առանց միջամտության, ընդհատումներով ուժեղ կրակ էր տեղում թշնամու դիրքերի վրա, նրա մոտ ստեղծելով այն տպավորությունը, որ սովետական զորամասերի դիրքերում ոչ մի փոփոխություն չի կատարվել։ Խանկոն թողնելու վերջին օրը Անանյանի փոքրաթիվ խումբն ուժեղ կրակ բացեց թշնամու դիրքերի վրա և նավեր նստելուց առաջ գործի դցեց ավտոմատ գնդացիրները։ Այն նավը, որի վրա էր գտնվում Անանյանի խումբը, ճանապարհին խորտակվեց ականի պայթյունից։ Սովետական նավաստիների անձնվեր գործողությունների շնորհիվ ջոկատի անձնակազմի մեծ մասը փրկվեց։ Ավետիս Անանյանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[83]։

1941 թ. նոյեմբերի 2-ից մինչև դեկտեմբերի 2-ը Խանկոյից Լենինգրադ տեղափոխվեց 22822 զինվոր ու սպա, որոնք համալրեցին Լենինգրադի պաշտպանների շարքերը[84]։

* * *

Լենինգրադի համար մղված մարտերում իրենց սխրագործություններ-

---

[82] Ավետիս Մինասի Անանյանը ծնվել է 1913 թ. Ադրբեջանական ՍՍՀ Զաքաթալա քաղաքում։ Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը։ 1938 թ. զորակոչվել է բանակ և ակտիվորեն մասնակցել մի շարք պաշտպանական ամրությունների նախագծման ու կառուցման աշխատանքներին։ ՍՄԿԿ շարքերն է ընդունվել 1941 թ., Խանկո թերակղզում։ 1959 թ. զորացրվել է բանակից և զեկավար աշխատանքի անցել Երևանի շինարարական կազմակերպություններից մեկում։

[83] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1234, գ. 254, թ. 40։

[84] «Борьба за Советскую Прибалтику в Великой Отечественной войне 1941—1945» (книга первая), с. 150.

րով ու համարձակ գործողություններով սովետական զորքերին հսկայական աջակցություն ցույց տվեցին սովետական օդաչուները։ Պատերազմի միայն հինգ ամսում Լենինգրադյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերը կատարեցին 59083 ինքնաթիռ-թռիչք, ոչնչացրին 1498 ֆաշիստական ինքնաթիռ, որից 711-ը օդային մարտում[85]։

Լենինգրադյան օդաչուներից մարտական հաշիվը հունիսի 23-ին առաջինը բացեց 158-րդ ավիացիոն գնդի օդաչու լեյտենանտ Ա. Վ. Զիրկովը, իսկ համագնդեցի ավագ լեյտենանտ Պ. Ա. Պոկրիշևը ոչնչացրեց ֆաշիստական մեկ ինքնաթիռ։

Կարելական պարանոցից Լենինգրադին զանգվածային օդային հարված հասցնելու թշնամու մտադրությունը ձախողելու համար Գերագույն գլխավոր հրամանատարության Զորակայանը Հյուսիսային ռազմաճակատի հրամանատարությանը հրամայեց օդից ուժեղ հարվածներ հասցնել հակառակորդի օդանավակայաններին՝ Ֆինլանդիայում և Նորվեգիայում։ Հունիսի 25-ին 236 ռմբակոծիչներ և 224 կործանիչներ ռմբակոծեցին թշնամու օդանավակայանները։ Վեց օր անընդհատ զանգվածային հարվածը շարունակվեց։ Ոչնչացվեց ավելի քան 130 ինքնաթիռ[86]։ *Լենինգրադյան օդաչուները դրսևորեցին բացառիկ սառնասրտություն, դիմացկունություն ու խիզախություն։ Եվ պատահական չէր, որ Մեծ հայրենականի առաջին Սովետական Միության հերոսներ դարձան Լենինգրադյան օդաչուներ Պ. Տ. Խարիտոնովը, Մ. Պ. Ժուկովը և Ս. Ի. Զդորովցևը։ Նրանց օրինակին հետևեց խիզախ օդաչուների մի ամբողջ համաստեղություն, որն իր փառապանծ գործերով ոսկե էջեր գրեց սովետական ռազմական ավիացիայի պատմության մեջ։*

Հյուսիսարևմտյան ուղղությամբ սովետական բազեների ակտիվությունն այնքան բարձր էր, որ ֆաշիստական գլխավոր հրամանատարության շրջանում սկսել պատկերացում էր ստեղծվել երկու կողմերի ուժերի հարաբերության մասին։ Հուլիսի 11-ին ֆաշիստական զորքերի գլխավոր հրամանատար ֆելդմարշալ ֆոն Բրաուխիչը լինելով «Հյուսիս» բանակների խմբի շտաբում, ծառայական օրագրում նշում է. «Ավիացիայի գծով առավելությունը հակառակորդի կողմն է»։ Ուժերի հարաբերությունը փաստորեն 2։1 էր՝ հօգուտ հիտլերականների[87]։ *Լուգայի պաշտպանական*

---

[85] *ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1217, գ. 32, թ. 464։*

[86] «Советские военно-воздушные силы в Великой Отечественной войне 1941—1945», М., 1968, с. 36—37.

[87] «Военно-исторический журнал», 1969, № 1, с. 70—71.

գոտու մարտերի ժամանակ Լենինգրադի հակաօդային պաշտպանության 7-րդ ավիակորպուսի օդաչուները կատարեցին 2000 մարտական ինքնաթիռ-թռիչք, ոչնչացրին մեծ թվով կենդանի ուժ, 120 ավտոմեքենա, 9 թնդանոթ, 40 տանկ և այլն։ Ռազմաճակատի օդային ուժերը մինչև հուլիսի 19-ը ոչնչացրին 400 ինքնաթիռ, 1800 ավտոմեքենա, 120 տանկ, 425 թնդանոթ, 375 ցիստերն հեղուկ վառելիք։ Միայն սեպտեմբեր ամսին Բալթյան կարմրադրոշ նավատորմի ավիացիան ոչնչացրեց ավելի քան 100 տանկ, 280 ավտոմեքենա, 50 թնդանոթ և ռազմական այլ տեխնիկա[88]։

Մեծ Հայրենականում օդում առաջին խոյահարումը հունիսի 27-ին կատարեց լենինգրադյան 158-րդ ավիագնդի օդաչու, կոմերիտական Պ. Տ. Խարիտոնովը։ Հուլիսի 4-ին առաջին ճակատային խոյահարումը կատարեց նույն գնդի օդաչու, 19-ամյա կոմերիտական, սիբիրցի Ն. Յա. Տոտմինը (զոհվեց 23.10.1941 թ.)։ Նույն օրը կրտսերային խոյահարում կատարեց 10-րդ ռմբակոծիչ ավիագնդի էսկադրիլիայի հրամանատար, լենինգրադցի կոմունիստ, կապիտան Լ. Վ. Միխայլովը, որն այրվող ինքնաթիռն ուղղեց թշնամու ուժերի վրա։

Հակառակորդին խոյահարելու խիզախ օդաչուների օրինակին հետևեցին Ա. Մ. Լուկյանովը (զոհվեց 28.1.1942թ.), Վ. Ի. Մատվեևը (զոհվեց 1.1.1942թ.), Ի. Ս. Չերնիխը (զոհվեց 16.12.1941թ.), Ս. Վ. Կոսինովը (զոհվեց 16.12.1941 թ.), Ն. Պ. Գուբինը (զոհվեց 16.12.1941 թ.)[89] և շատ ուրիշներ։ Պատերազմի միայն երեք ամսում Լենինգրադյան օդաչուները կատարեցին օդային 30 խոյահարում[90]։

Հյուսիսարևմտյան ուղղությամբ մեծ ակտիվությամբ էր գործում 4-րդ խառը ավիացիոն դիվիզիայի 38-րդ ավիացիոն գունդը՝ գնդապետ Բորիս Արսենևիչ Սիդնևի հրամանատարությամբ։ Նրա հրամանատարությամբ գունդը կատարեց 2849 մարտական թռիչք, ոչնչացրեց թշնամու 98 ինքնաթիռ։ Այդ ինտերնացիոնալ մարտական կոլեկտիվում կողք-կողքի հերոսաբար կռվում էին ռուսներ Վ. Ա. Արմյանինովը, Վ. Ն. Գրիշինը, Յե. Ա. Ֆյոդորովը, Մ. Գ. Գորբանևը, Ի. Ի. Շեխովցևը, Գ. Լ. Լոբաչը, Ա. Ս. Կորյաևը, ուկրաինացիներ Վ. Դ. Դերևյանկոն, Ի. Ս. Վոկալը, վրացիներ Գ. Մ. Լոմաձեն, Ա. Ս. Քաֆթառաձեն և շատ ուրիշներ։ Այդ խիզախ ու հա-

---

[88] «Оборона Ленинграда 1941—1944» (Воспоминания и дневники участников), Л., 1968, с. 90—91.

[89] *А. В. Буров*, Твои герои, Ленинград, с. 17—20.

[90] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 247.

մարձակ օդաչուների մարտական ընտանիքում իր սխրագործություններով ու համարձակ գործողություններով աչքի ընկան նաև հայ ժողովրդի զավակները։ Ճանաչված օդաչու Լազար Սերգեյի Զափչախովը, որն իր ռազմական գործերով աչքի էր ընկել սովետական Մերձբալթիկայի համար մղված օդային մարտերում, հերոսական նոր սխրագործություններ կատարեց Լենինգրադի հեռավոր մատույցներում։ Նա իր մարտական ընկերներ Ելիսովի, Մելնիկովի, Կոնոնենկոյի, Կորյաևի, Վոկալի, Նաումովի, Սագարաձեի, Գուդմանենկոյի հետ միասին 1941 թ. օգոստոսին Իլմեն լճի շրջանում բազմիցս ծանր հարվածներ հասցրեց հակառակորդի ուժերին։

Մարտական գործողություններին զուգընթաց Զափչախովն իր մարտական հարուստ փորձը հաղորդում էր երիտասարդ օդաչուներին, օգնում նրանց արագ տիրապետելու մարտական տեխնիկային և օդային մարտի գաղտնիքներին։ Զափչախովի անունը մի շարք անգամ հիշատակվեց կարմիր բանակի գլխավոր քաղվարչությանն ուղարկված զեկույցներում։ 1941 թ. օգոստոսի 2-ի և 8-ի զեկուցագրերում մասնավորապես ընդգծված է, որ «38-րդ ավիացիոն գնդի էսկադրիլայի կոմիսար Զափչախովն իր անձնական օրինակով դաստիարակում է արիասիրտ օդաչուներ։ Զափչախովի դաստիարակած օդաչուներ Միխայիլ Գորբանևը, Իվան Շեխովցևը և ուրիշներ մարտական պայմաններում առաջադրանքը կատարում են գերազանց։ Օդային մարտերում նրանք խփել են յոթ ինքնաթիռ»[91]։ Հյուսիսարևմտյան ռազմաճակատի «За Родину» թերթը նրա մասին գրեց. «Կոմիսար Զափչախովը զորամասի ոգին ու հայրն է։ Նա միշտ հոգ է տանում, որպեսզի մարտական առաջադրանքը հասցվի յուրաքանչյուր օդաչուի, հետաքրքրվում է, թե ինչպես է ինքնաթիռը նախապատրաստված թռիչքի և մարտական առաջադրանքի համար հրամանատարի հետ միասին ընտրում է մարդկանց։ Կոմիսարը գիտե ամեն մի օդաչուի ունակությունները և մարտական թռիչքի համար առանձնացնում է մարդկանց»[92]։ Ավիացիոն գնդի հրամանատարությունը որոշ ժամանակ անց նրան նշանակեց էսկադրիլիայի հրամանատար։ Բարձրացավ ստորաբաժանման մարտունակությունը։ Օդաչուները հավատով էին լցված արդեն լայն ճանաչում գտած իրենց փորձված հրամանատարի նկատմամբ և աշխատում էին նմանվել նրան։ Էսկադրիլիան կատարեց 1800 մարտական թռիչք և ոչնչացրեց հակառակորդի 60 ինքնաթիռ։ Անձամբ Զափչախովը կատարեց 268 մարտական թռիչք, օդային մարտում ոչնչացրեց ութ

---

[91] Մ. Գ. Սահակյան, *Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում*, Երևան, 1981, էջ 41—42։

[92] «За Родину», 8 августа 1941 г.

ինքնաթիռ, իսկ 19-ը՝ խմբային մարտում։ Հրամանատարությունը հաշվի առնելով նրա հնարավորություններն ու կարողությունները, նրան նշանակեց 416-րդ կործանիչ ավիագնդի հրամանատար, բայց յոթ օր անց՝ 1942 թ. ապրիլին նա զոհվեց օդանավակայանում, մարտական հանձնարարությունը կատարելու պահին[93]։ Ցուցաբերած արիության ու խիզախության համար 1941 թ. նոյեմբերին Լազար Զափչախովը պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ 1942 թ. հուլիսի 21-ին նրան շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

Հակառակորդի դեմ մղված մարտերում ճակատային յուրաքանչյուր օր ծնում էր նոր հերոսներ։ Այդ օրերին անմահ սխրագործություն կատարեց ռուս ժողովրդի զավակ, 402-րդ ավիացիոն կործանիչ գնդի օդաչու լեյտենանտ Աֆանասի Մամոնտովը։ Հուլիսի 29-ին Մուր օդանավակայանի մոտ նա մարտի բռնվեց թշնամու երկու ինքնաթիռների հետ և մեծ վարպետությամբ խփեց նրանցից մեկին, իսկ մյուսի հետ մարտը տևեց երկար ու համառ։ Սպառվեցին փամփուշտները։ Խիզախ օդաչուն արհամարհելով մահը, ինքնաթիռով խոյահարեց թշնամուն, որը ծխի քուլաների մեջ պարուրված մխրճվեց գետին։ Զոհվեց նաև Աֆանասի Մամոնտովը[94]։ Այդ գնդից հերոսաբար կռվեցին օդաչուներ Ն. Պ. Բաուլինը, Վ. Մ. Գլոդդեը, Ս. Ֆ. Սենկևիչը, Դ. Ի. Դանդիկովը։ Նրանք բոլորն էլ պարգևատրվեցին Կարմիր դրոշի շքանշանով[95]։

Իր պարտականությունները հստակորեն էր կատարում նույն գնդի ավիատեխնիկական դասակի ինժեներ Անդրեյ Նեստերովիչ Բանձելաձեն։ Նրա կողմից սպասարկվող ինքնաթիռների օդաչուները ոչնչացրին 6 ֆաշիստական ինքնաթիռ։ Մինչև 1941 թ. հոկտեմբերի վերջը Բանձելաձեն ապահովեց 130 ինքնաթիռի թռիչք[96]։

Հյուսիսարևմտյան ռազմաճակատում իր մարտական գործողություններով ճանաչված օդաչու էր նաև 2-րդ ավիացիոն դիվիզիայի արագաթռիչք 44-րդ ավիացիոն գնդի 2-րդ էսկադրիլիայի օդակի հրամանատար Գեղամ Ենոքի Պետրոսյանը։ Պատերազմի առաջին օրերին նա ընկերների հետ միասին մասնակցեց թշնամու կենդանի ուժի, ռազմական տեխնիկայի ու օբյեկտների ռմբակոծմանը։ 1941 թ. հուլիսի 7-ին Պետրոսյանը առաջադրանք ստացավ՝ ռմբակոծել Կոուվոլայի մոտ գտնվող թշնամու

---

93 «Դիրք հերոսների մասին», Երևան, 1964, էջ 76։

94 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 221, ց. 1362, գ. 16, թ. 105։

95 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 221, ց. 1386, գ. 65, թ. 20։

96 Նույն տեղում, ֆ. 221, ց. 1386, գ. 59, թ. 59։

ուժերը և երկաթուղային հանգույցները։ Նպատակակետին մոտենալու պահին հակառակորդի զենիթային հրանոթները ուժեղ կրակ են բաց անում մեր ինքնաթիռների վրա։ Նրանցից մեկը բոցավառվում է, սակայն արկերի պայթյունները չեն շփոթեցնում Պետրոսյանի ինքնաթիռի անձնակազմին, որը հաջողությամբ ռմբակոծում է նպատակակետերը և ծանր կորուստներ պատճառելով թշնամուն, վերադառնում օդանավակայան։ Նույն օրը երեկոյան Պետրոսյանի անձնակազմը, յոթ ինքնաթիռների հետ միասին, ռմբակոծեց Օստրովի ուղղությամբ հարձակվող թշնամու տանկային ու հետևակային ուժերի մարտակարգերը։ Սովետական ինքնաթիռների վրա հարձակվեց թշնամու արագընթաց ինքնաթիռների խումբը, որին հաջողվեց խփել մեր ռմբակոծիչներից հինգին և սկսեց գրոհել Պետրոսյանի վրա։ Հմուտ օդաչուն վարպետորեն մանևրելով, խուսափեց հարվածներից և հարմար պահ ընտրելով, խփեց թշնամու ինքնաթիռներից մեկին, ապա վայրէջք կատարեց իր օդանավակայանում։

1942 թ. հունվար-փետրվար ամիսներին Պետրոսյանը Մգայի, Վեյմարի, Տոսնոյի, Գատչինայի, Կրասնի Բորի շրջաններում իր ռմբակոծիչով ոչնչացրեց թշնամու բազմաթիվ պաշտպանական ամրություններ ու կրակակետեր։ Նա կատարեց 119 մարտական թռիչք, որից 92-ը՝ գիշերը, իսկ Լենինգրադյան ռազմաճակատի օդային ուժերի շտաբի տասը հատուկ առաջադրանքի կատարման համար ստացավ գերազանց գնահատական[97]։ 1942 թ. մայիսի 14-ին Գ. Պետրոսյանը չվերադարձավ մարտական առաջադրանքից[98]։

Հմուտ մասնագետ էր 125-րդ ռմբակոծիչ ավիացիոն գնդի ինքնաթիռների անխափան թռիչքներն ապահովող գնդի գլխավոր ինժեներ Կարապետ Վարդանյանը։ Տեխնիկական լավ սպասարկման շնորհիվ գունդը կատարեց 738 թռիչք։ Նա օրական ապահովում էր հինգ խմբային թռիչք և կարճ ժամանակում վերանորոգեց 99 ինքնաթիռ, իսկ 467 վնասված շարժիչները փոխարինեց նորերով։ Ինքնաթիռների վերանորոգումը բարձր որակով կատարելու համար Կ. Վարդանյանն ստացավ դրամական խրախուսանք և պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[99]։

4-րդ կործանիչ ավիացիոն դիվիզիայի ավագ ինժեների տեղակալի

---

[97] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1234, գ. 253, թ. 201, գ. 329, թ. 74—75։

[98] Նույն տեղում, Գ. Պետրոսյանի անձնական գործ № 364383, թ. 28։ Գեղամ Սնորի Պետրոսյանը ծնվել է Լենինական քաղաքում։ 1931 թ. մեքենավարի օգնական էր։ 1933 թ. ընդունվել է Ստալինգրադի ավիացիոն բարձրագույն դպրոցը։ Ավարտելուց հետո ծառայում էր Լենինգրադի ռազմական օկրուգում։

[99] Նույն տեղում, ֆ. 217, ց. 1234, գ. 317, թ. 230։

պաշտոնն էր զբաղեցնում Գեորգի Պալիևը։ Նրա ղեկավարությամբ տեխնիկական անձնակազմը 1942 թ. նոյեմբերից մինչև 1943 թ. դեկտեմբերը սպասարկեց 12291 մարտական թռիչք։ Բացի զենքերի վերանորոգումից ու տեղադրումից, Պալիևը ձգտում էր որքան հնարավոր է բարձրացնել կործանիչների կրակային հզորությունը։ Նա հինգ ինքնաթիռների վրա լրացուցիչ տեղադրեց «ՈՒՊՍ» մակնիշի գնդացիրներ։ Դրանք օդային մարտերում ցույց տվեցին լավ արդյունք[100]։

Լենինգրադի մատույցներում ֆաշիստական գիշատիչների դեմ հերոսաբար էր կռվում ՌՍՖՍՀ Դերագույն սովետի դեպուտատ, 169-րդ ավիացիոն գնդի հրամանատարի օգնական կապիտան Լ. Ի. Գրեկովը։ Նախքան պատերազմը նա մարզային թերթի խմբագիր էր։ Այնուհետև կոմերիտմիության ուղեգրով ընդունվեց ավիացիոն դպրոց և դարձավ օդաչու։ Չորս ամիս նա կռվեց թշնամու դեմ, խփեց մի քանի ինքնաթիռ։ 1941 թ. հոկտեմբերի 29-ին գնդի օդանավակայանը պաշտպանելու ժամանակ հերոսաբար զոհվեց։ Դեպուտատ-օդաչուին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[101]։

Իվանովսկի, Սյուցկի, Կրասնոյե Սելոյի, Գատչինայի շրջաններում հակառակորդին ծանր հարվածներ հասցրեց սկզբում 19-րդ, իսկ հետո 195-րդ և 26-րդ կործանիչ ավիացիոն գնդերի էսկադրիլիան մայոր Ի. Պ. Նեուստրուևի հրամանատարությամբ։ 1941թ. հունիսի 22-ից մինչև նոյեմբերի 11-ը նրա էսկադրիլիան կատարեց 1298 մարտական թռիչք, օդում ոչնչացրեց 46, իսկ գետնին՝ 20 ինքնաթիռ։ Նեուստրուևը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով, իսկ հետո նրան շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[102]։ Նույն գնդից խիզախ օդաչուի հետ միասին Լենինգրադն էին պաշտպանում ավագ լեյտենանտ Գ. Ս. Ժուլկովը, լեյտենանտ Ի. Դ. Պիդտիկանը, կրտսեր լեյտենանտներ Վ. Ն. Խարիտոնովը, Գ. Ա. Մամկինը, Ա. Պ. Սալչենկոն և ուրիշներ։

Լենինգրադի համար սեպտեմբերի վերջը ամենածանր օրերն էին։ Այդ ամսին հակառակորդը 23 անգամ օդային զանգվածային հարձակում կատարեց Լենինգրադի վրա։ 2712 ինքնաթիռներից քաղաքի օդային տարածությունը հաջողվեց ներխուժել միայն 675-ին։ Ներխուժածներից 309-ը

---

100 Նույն տեղում, ֆ. 33, ց. 686044, գ. 2138, թ. 64։ Գեորգի Պալիևը ազգությամբ հայ է։

101 *А. В. Буров*, Твои герои, Ленинград, с. 85—86.

102 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 793756, գ. 33, թ. 206—207։

իրենց գերեզմանը գտան լենինգրադյան հողում[103]։ Մարտական այդպիսի արդյունքը, լենինգրադյան օդաչուների ու ղեկավարների մարտական վարպետության, հմտության ու խիզախության վառ վկայությունն է։ Լենինգրադյան թերթերում հաճախակի էին գրվում ինքնաթիռի պատուակով ճակատային, կրակային, գիշերային խոյահարումների մասին։ Նման խիզախում կատարելու համար անհրաժեշտ էր ունենալ ամուր ջղեր, կամք, արիություն և դրանց գումարած ինքնաթիռը վարելու մեծ վարպետություն։ Այդպիսի հատկություններով էին օժտված Լենինգրադյան ռազմաճակատի օդաչուները, որոնց սխրանքները սահման չունեին։ Օգոստոսի 19-ին Գուբանիցի—Կլոպիցի երկաթուղին ռմբակոծելու ժամանակ զենիթային կրակով խփվեց 7-րդ կործանիչ ավիացիոն գնդի էսկադրիլիայի հրամանատար ավագ լեյտենանտ Նիկոլայ Սվիտենկոյի ինքնաթիռը։ Օդաչուն մեծ դժվարությամբ վնասված ինքնաթիռով վայրէջք կատարեց թշնամու գրաված տարածքում։ Ինքնաթիռն այրվելուց հետո Սվիտենկոն ուղղվեց անտառ՝ թաքնվելու համար։ Այդ պահին այրվող ինքնաթիռի կողքին վայրէջք կատարեց նրան հետևող Օսեթիայի զավակ կրտսեր լեյտենանտ Ալիբեկ Սլոնովը։ Ընկերոջը վերցնելով ինքնաթիռի թևի վրա, Սլոնովը նորից օդ բարձրացավ։ Այդ խիզախության համար Ալիբեկ Սլոնովը պարգևատրվեց Լենինի շքանշանով[104]։ Վեց օր անց 158-րդ ավիացիոն կործանիչ գնդի օդաչու կրտսեր լեյտենանտ Պյոտր Խարիտոնովը կատարեց իր երկրորդ խոյահարումը։ Վնասվեց նաև Խարիտոնովի ինքնաթիռը։ Նա ստիպված թողեց ինքնաթիռը և պարաշյուտով վայրէջք կատարեց։ Նրանից ոչ հեռու իջավ նաև խփված ֆաշիստական ռմբակոծիչի անձնակազմը։ Հիտլերականները կրակ բացեցին Խարիտոնովի վրա։ Այդ ժամանակ Վիկտոր Խոզիցը, որ հետևում էր դեպքերի ընթացքին, գընդացրային կրակով ստիպեց լռել հակառակորդին[105]։

Լենինգրադի պաշտպաններից էին Կիրիլ Մուրգան և լեյտենանտ Ալեքսեյ Նիկիտինը։ 153-րդ ավիացիոն կործանիչ գնդի այս օդաչուները բազում սխրանքներ կատարեցին թշնամու դեմ մղված օդային մարտերում։ Արխիվային փաստաթղթերից մեկում Ալեքսեյ Նիկիտինի մասին 1943 թ. գրված է. «Նա օդային մարտի վարպետ է։ Հայրենական մեծ պատերազմի ընթացքում մասնակցել է 66 օդային մարտի, անձամբ

---

[103] «История ордена Ленина Ленинградского Военного округа», с. 245.
[104] *А. В. Буров*, Блокада день за днем, с. 259—260.
[105] «Военно-исторический журнал», 1970, № 4, с. 72—73.

խփել 9-ը, իսկ խմբի կազմում՝ 5 ինքնաթիռ։ Կատարել է 147 մարտական թռիչք[106]։ Ա. Ի. Նիկիտինին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

* *
*

Կարմիր բանակի զորամասերի հետ սերտ համագործակցությամբ թշնամուն խորտակիչ հարվածներ հասցրին նաև Բալթյան կարմրադրոշ նավատորմայինները։ Նավաստիները, օդաչուները, հրետանավորները, ծովային հետևակայինները ոչ միայն հուսալիորեն պաշտպանեցին քաղաքի ծովային մատույցները, այլև աջակցեցին ցամաքային ուժերին։

Ռազմական արվեստի և ծովային պատերազմի պատմության մեջ չկա նմանօրինակ երևույթ, երբ նավատորմը գտնվելով բլոկադայի ենթարկված քաղաքում, բացի պաշտպանական մարտերից, նաև ռազմական ակտիվ գործողություններ է մղել ծովում, ցամաքում և օդում։

«Մեր նավատորմը,—գրում է նավատորմի ծովակալ,— Ի. Ս. Իսակովը,—մեծ օգնություն ցույց տվեց ռազմաճակատին, ռազմածովային բազաների հերոսական պաշտպանությամբ։ Տալլինում, Գանգեում, Կրասնայա Գորկայի շրջանում, Օդեսայում, Սևաստոպոլում, Կերչում, Նովոռոսիյսկում ծովայինները կարմիր բանակի զորամասերի հետ միասին ոչ միայն պաշտպանում էին սովետական տերիտորիայի ամենաարժեքավոր կետերը, այլև երկար ժամանակ կասեցնելով և իրենց վրա գրավելով թշնամու զգալիորեն գերակշիռ ուժեր, ուժասպառ էին անում նրանց և դրանով իսկ արգելակում գլխավոր ուղղությամբ գերմանական հարձակման ընդհանուր ընթացքը»[107]։

Բալթյան կարմրադրոշ նավատորմի սուզանավերը միայն 1941 թ. խորտակեցին 12 խոշոր փոխադրանավ՝ 100000 տոննա ջրատարողությամբ, ծովային ավիացիան ջրասույզ արեց 93 նավ, ոչնչացրեց 348 տանկ, 13 ծանր թնդանոթ, 335 ինքնաթիռ, 1737 ավտոմեքենա, 14 զրահամեքենա, 11 պահեստ և այլն[108]։ Բացառիկ հերոսական սխրանք էր թշնամու կրակի օղակի միջով Բալթյան կարմրադրոշ նավատորմի նավերի ծովային արշավը Տալլինից Կրոնշտադտ։

---

[106] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 793756, գ. 33, թ. 245։ Ա. Ի. Նիկիտինը զոհվեց 1944 թ. սեպտեմբերի 2-ին, մարտական ծառայությունը կատարելու պահին։

[107] Ի. Ս. Իսակով, ՍՍՀՄ ռազմածովային նավատորմը Հայրենական պատերազմում, Երևան, 1946, էջ 19։

[108] *Л. Н. Мушников,* Балтийцы в боях за Ленинград с. 52, 58.

Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, օգոստոսի 29—31-ը Լենինգրադ հասան կենդանի ուժով և ռազմական տեխնիկայով բեռնված 200 նավ։ Ճանապարհին խորտակվեց 25 փոխադրանավ և 10 ռազմանավ[109]։ Սովային անցման ժամանակ հատկապես աչքի ընկան «Ցուգաս», «Գաֆել», «Վերսլ», «Շպիլ», «Տ-217», «Պատրոն», «Գակ», «Ռիմ», «Տ-215» և «Տ-218» ականաղերծիչ նավերի ծովայինները՝ Վ. Պ. Գիլերմանի, Ե. Ֆ. Շկրեբտիենկոյի, Գ. Ա. Բագախայի, Ն. Ս. Դոբելովի, Մ. Պ. Եֆիմովի, Ի. Յա. Ստանովայի, Ա. Վ. Պանկովի, Ա. Մ. Սավլևիչի, Գ. Ս. Դուսյայի, Ի. Ի. Մալևսկիի հրամանատարությամբ։ Այդ հնարամիտ ու նախաձեռնող հրամանատարներն ապահովեցին ռազմանավերի մեծ մասի հաջող անցումը դեպի Լենինգրադ։

Սովետական ցամաքային ուժերին ցույց տված աջակցության ու ծովային մարտերում ցուցաբերած արիության համար Ա. Ի. Աֆանասևին, Ի. Ս. Իվանովին, Ա. Ա. Օսիպովին և Վ. Պ. Գումանենկոյին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Աչքի ընկան նավերի խմբի հրամանատար Գ. Ս. Աբաշվիլին, ծովային թեթև ուժերի հրետանու հրամանատար Ա. Սագոյանը։ Տալլինի, Մոնզուդյան կղզիների ու Խանկո թերակղզու համար մղված մարտերում աչքի ընկավ ականորս նավի մարտական մասի հրամանատար, ավագ լեյտենանտ Պետրոս Պետրոսյանը։ Տալլինից Կրոնշտադտ սովետական նավերի երթի ժամանակ նա անձամբ փրկեց ծովում խեղդվող քսան մարտիկի կյանք։ Ականորս նավով նա հինգ անգամ կտրեց անցավ Կրոնշտադտ—Խանկո տարածությունը՝ թերակղզու պաշտպաններին հասցնելով պարենամթերք ու ռազմամթերք, իսկ կայազորի էվակուացման ընթացքում փոխարինելով վիրավորված հրամանատարին, նավը դուրս բերեց թշնամու կրակի տակից և հաջողությամբ հասցրեց Լենինգրադ[110]։ Աչքի ընկավ ականաղերծիչ նավի հրամանատարի օգնական կրտսեր լեյտենանտ Գուրգեն Խաչատուրովը։ 1941 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նա ակտիվորեն մասնակցեց Գոգլանդ և Բիյորկի կղզիներից 1500 սովետական ռազմիկների փոխադրմանը Լենինգրադ։ Այնուհետև շատ ջանք ու եռանդ ներդրեց տիղմի վրա նստած սուզանավի փրկման գործում[111]։ Նավատորմում իրենց լավ դրսևորեցին բաշկիր Դանիսլամ Մուխադինովը, թաթար Նիկոլայ Մինգալիմովը, ռուս Իվան Միլի-

---

[109] А. Гречанюк, В. Дмитриев, Ф. Кринацын, Ю. Чернов, Балтийский флот. М., 1960, с. 247.

[110] ՍՍՀՄ ռազմածովային կենտրոնական արխիվ (այսուհետև ՌԾԿԱ), ֆ. 78, ց. 2, գ. 521, թ. 170։

[111] ՌԾԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 602, թ. 100։

կովը, ուկրաինացի՝ Ալեքսանդր Ստեբելը, մորդվին Գերասիմ Իլինը, բելոռուս Կուզմա Նովիկը, հայեր՝ Վլադիմիր Սարգսյանը, Արամայիս Օսիյանցը, ադրբեջանցի Իսմադ Մամեդովը և ուրիշներ։

Նախաձեռնող քաղաքխատող էր «Լյայնն» հրետանավակի կոմիսար էստոնացի Պավել Գեորգևիչ Կաուլեն, որը հաջողությամբ կատարեց հրամանատարության մարտական առաջադրանքները։ Օգոստոսից մինչև դեկտեմբեր ամիսը 10 անգամ Խանկոյից Օսմուսսաար կղզին տեղափոխեց անհրաժեշտ կենդանի ուժ ու ռազմական տեխնիկա։ Հետագայում հրետանավակը մասնակցեց մեր զորքերի տեղափոխմանը Խանկոյից Կրոնշտադտ։ Հրամանատարությունը խիզախ քաղաքխատողին պարգևատրեց Կարմիր դրոշի շքանշանով[112]։

1941 թ. հուլիս—դեկտեմբեր ամիսներին Ֆիննական ծոցում հակառակորդի սուզանավերի ու կատերների դեմ համարձակորեն էին գրոհում նավատորմի ջրային շրջանի պաշտպանության կատերները, որոնք հունիսի 22-ից օգոստոսի 28-ը 500 անգամ ուղեկցեցին ռազմական և այլ տեսակի նավերի[113] և ապահովեցին վերջիններիս անվտանգությունը։ Աչքի ընկան «Տ-204», «ՄՕ-142», «ՄՕ-201» կատերները՝ Ս. Ֆ. Տումորինի, Ա. Ա. Օբուխովի, Վ. Ի. Բասովի հրամանատարությամբ։

Մարտական առաջադրանքը կատարելու պահին Ֆիննական ծոցում ողջ անձնակազմով խորտակվեցին՝ «ՄՕ-301» կատերը (հրամանատար՝ Մ. Դ. Մակարենկո), ականաղերծիչ «Վերպը» (հրամանատար՝ Ն. Պ. Սմիրնով), «Ազիմուտ» և «Մենժինսկի» նավակները (հրամանատարներ՝ Ա. Ֆ. Յորել, Պ. Ն. Պորիտով, Ֆ. Ի. Օբրոսով)[114]։

Բալթյան կարմրադրոշ նավատորմում հմուտ ու համարձակ հետախույզ հրետանավոր էր առափնյա պաշտպանության օպտիկական մարտկոցի 1-ին դասակի 32-րդ դիտակետի հրամանատար Ս. Վ. Տափուրիձեն։ «Մաքսիմ Գորկի» հածանավի հրետանու կրակը ճշգրտելու համար նա օգոստոսի վերջերին կամավոր ծառայության մտավ ցամաքային զորքերում։ Նրա հաղորդած տվյալներով Լենինգրադի մատույցներում հածանավի հրետանու կրակը ցիրուցան արեց հակառակորդի տանկերի, ավտոմեքենաների ու կենդանի ուժի կուտակումները։ Սեպտեմբերի առաջին կեսին, մարտերի լարված պահին, նրա դիտակետը տեղափոխվեց Պուլկո-

---

112 Նույն տեղում, ֆ. 3, ց. 1, գ. 455, թ. 73։

113 Ю. В. Ладинский, На фарватерах Балтики, М., 1973, с. 30.

114 Նույն տեղում, էջ 69։

վո, ուր 10 անգամ նա կանոնավորեց հածանավի հրետանու կրակը։ Խիզախ ռազմիկը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[115]։

Բալթյան ծովային մարտերում իրենց հերոսական գործերով փառք ու պատիվ վաստակեցին նաև Բալթյան կարմրադրոշ նավատորմի օդային բաղենները։

Բազում սխրագործություններ կատարեցին 8-րդ ավիացիոն բրիգադի օդաչուները, փառապանծ հրամանատար գնդապետ Ե. Ն. Պրեոբրաժենսկու հրամանատարությամբ։ Բրիգադի քաղբաժնի պետի տեղակալը Գրիգորի Օգանեզովն էր։ Ավիացիոն մարտական կոլեկտիվի կազմում կային ՍՍՀՄ տարբեր ազգերի նեկայացուցիչներ՝ ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, հրեաներ, հայեր, վրացիներ, թաթարներ, ադրբեջանցիներ և այլն։ Այստեղից իր մարտական ուղին սկսեց հայ ժողովրդի պանծալի զավակ, Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը։ Նա իր գրոհիչ ինքնաթիռով Լենինգրադի մարտերում ռմբային ծանր հարվածներ հասցրեց թշնամու տանկային ու մոտոմեքենայացված ուժերին, նավերին ու մերձծովյան պաշտպանական ամրություններին, այնուհետև կռվեց Կովկասում ու Ղրիմում և նորից վերադարձավ Լենինգրադ։ 1941թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 13-ը, մոտ 15 օրում, կատարեց 20 մարտական թռիչք և իր խմբի հետ միասին ոչնչացրեց 8 տանկ, 59 ավտոմեքենա, 3 զրահապատ, 19 զենիթային թնդանոթ, 40 զենիթային գնդացիր, 8 սայլակ և 4 քարշակ[116]։ Իսկ մինչև 1942 թ. մայիսի վերջը նրա օդակը ոչնչացրեց 25 տանկ, 102 ավտոմեքենա, 66 զենիթային թընդանոթ, 7 զրահապատ, 55 զենիթային գնդացիր, 3 վագոն, 1 պահեստ և այլն[117]։ Մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու համար նա պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ երեք ամիս հետո նրա կրծքին երևաց երկրորդ Կարմիր դրոշի շքանշանը։ Բալթիկայի հայ բալեի մարտական յուրաքանչյուր օրը մահ ու ավերածություն էր բերում թշնամուն, յուրաքանչյուր օր ավելանում էր նրա ոչնչացրած թշնամու տանկերի, ինքնաթիռների, նավերի թիվը։ Հայրենիքը բարձր գնահատեց անվեհեր օդաչուի մարտական սխրագործությունները և նրան արժանացրեց ամենաբարձր պարգևին։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1942 թ. հոկտեմբերի 23-ի հրամանագրով կապիտան Նելսոն Ստեփան-

---

115 ՌՍԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 571, թ. 286։

116 ՌՍԿԱ, ֆ. 3, ց. 1, գ. 450, թ. 106։

117 «Нельсон Степанян» (Сборник документов и материалов), Ереван, 1973. с. 37—38.

յանին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[118]։ Նրա քաջագործությունների մասին գրեցին „Правда“, „Красная звезда“,„ Боец РККА“ և այլ թերթեր։

Հակառակորդին կենդանի ուժի ու տեխնիկայի ծանր կորուստներ պատճառեց Յակով Եգորի Երեմյանցը։ Փաստաթղթերից մեկում Երեմյանցի մասին գրված է. «Անվախ է ու համարձակ, կատարելապես տիրապետում է «Ի-66» մարտական կործանիչին, ինքնաթիռի խաղաշարժը հիանալիորեն համակցում է կրակի հետ։ Օդային մարտի տեխնիկան գիտե գերազանց։ Մարտում նախաձեռնող է։ Մինչև վերջ նվիրված է հայրենիքին և ամբողջ հոգով ատում է թշնամուն»[119]։

Երեմյանցը բազմիցս ուղեկցել ու պաշտպանել է ռմբակոծիչներին և նավերին օդային հարձակումներից։ 1942 թ. մարտի 12-ից մինչև դեկտեմբերի 12-ը նա կատարեց 171 մարտական թռիչք, մասնակցեց 17 օդամարտի և խփեց հակառակորդի վեց ինքնաթիռ[120]։ Մի անգամ իր մարտական ընկերոջ՝ Կովալևի հետ Կոնևեց կղզու մոտ հանդիպեցին ֆաշիստական «Ֆիատ» տիպի 12 ինքնաթիռի։ Սովետական օդաչուներն առանց վարանելու մարտի բռնվեցին։ Երկուսը՝ 12-ի դեմ։ Երեմյանցը խփեց «Ֆիատներից» մեկին և հանդուգն գրոհով խուճապ առաջացրեց թշնամու մարտակարգերում։ Հանկարծակի եկած ֆաշիստները ռումբերը նետեցին անընպատակ և փախուստի դիմեցին։ Ցուցաբերած խիզախության համար հրամանատարությունը 3. Երեմյանցին պարգևատրեց Կարմիր դրոշի շքանշանով[121]։ 21-ամյա խիզախ օդաչուի կյանքի թելը կտրվեց 1943 թ. փետրվարի 9-ին։ Այդ օրը «Իլ-2» ինքնաթիռներին ուղեկցելու ժամանակ թշնամու կործանիչների դեմ մղված օդային մարտում Յակով Երեմյանցը զոհվեց հերոսաբար[122]։

Բրիգադի հմուտ օդաչուներից էր լեյտենանտ Մամեդով Ասաֆ Մահմեդ Հուսեյն օղլին։ Մինչև 1941 թ. սեպտեմբեր ամիսը նա կատարեց երեսուն մարտական թռիչք։ Զուգ լճի շրջանում ոչնչացրեց 12 տանկ, 3 զրահապատ, շարքից հանեց Պերնովի և Կլոպիցի հակառակորդի օդանավակայանների թռիչքադաշտերը, դեռևս վրա պայթեցրեց 2 ինքնաթիռ։ 1942 թ. սկզբներին չորս անգամ ռմբակոծեց Կոտկա և երկու անգամ Տալլին նավահանգիստները, օդային մարտում խփեց թշնամու մեկ ինքնաթիռ։

---

118 «Գիրք հերոսների մասին», Երևան, 1964, էջ 134։

119 ՌՇԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 291, թ. 342։

120 Նույն տեղում, ֆ. 4742, ց. 5, գ. 112734, թ. 22։

121 ՌՇԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 291, թ. 342։

122 Նույն տեղում, ֆ. 165, ց. 3, գ 16, թ. 144։

Ա. Մամեդովը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[123]։ Որոշ ժամանակ անց նրա կրծքին շողշողաց երկրորդ Կարմիր դրոշը[124]։

Իր ժողովրդի արժանավոր զավակ, ծովային օդաչու Հուսեյն Ալիևը մասնակցեց 50 օդային մարտի։ Հուլիսի 18-ին նա Գոստիլիցի շրջանում մարտի բռնվելով չորս «Մեսսերշմիդտի» հետ, խփեց երկուսին, արկի պայթյունից վնասվեց նրա ինքնաթիռը, իսկ ինքը ծանր վիրավորվեց։ Արյունաքամ օդաչուն մեծ դժվարությամբ վայրէջք կատարեց օդանավակայանում։ Քսան բոպե անց խիզախ ադրբեջանցին մահացավ։ Յուցաբերած արիության համար Հուսեյն Ալիևը հետմահու պարգևատրվեց Լենինի շքանշանով[125]։

Ռուս օդաչու, էսկադրիլիայի հրամանատար Նիկոլայ Զելենկովի օդում երևալը ահ ու սարսափ էր թշնամու համար։ 1941թ. նրա էսկադրիլիան ոչնչացրեց 21 տանկ, 58 ավտոմեքենա, 12 զենիթային թնդանոթ, 11 զրահամեքենա, 24 զենիթային գնդացիր, 127 սայլակ ու քարշակ։ Էսկադրիլիայի հրամանատար, ազգությամբ հրեա Միխայիլ Պլոտկինը ռմբակոծեց Շտետինը, Քյոնիգսբերգը, Կոտկան, Պսկովը, Զուդովոն, Դվինսկը, չորս անգամ՝ Բեռլինը և այլն[126]։

8-րդ ավիացիոն բրիգադի ծովային օդաչուների մարտական սխրագործություններին սահման չկար։ Լենինգրադի հերոսական պաշտպանության կենաց-մահու գոտեմարտում բազում սխրագործություններ կատարեցին ծովային օդաչուներ՝ ռուսներ Վիկտոր Բեզրուկովը, Ալեքսանդր Բոյչևսկին, Միխայիլ Գորբունովը, Վիկտոր Ժդանովը, ուկրաինացիներ՝ Ալեքսանդր Սավչենկոն, Պավլո Տիմչուկը, բելոռուսներ՝ Դմիտրի Բորտնովսկին, Եվգենի Նովիցկին, վրացի՝ Արկադի Կոտիձեն, կաբարդին՝ Աբդուլախ Տիտակումաշևը, թաթար՝ Կանյաֆի Խամիտովը, օս՝ Գենադի Ցոկոլաևը, ադրբեջանցի՝ Հուսեյն Բաղիրովը, բալկար՝ Ալիմ Բայսուլթանովը, հայեր՝ Տարաս Կուրուզյանը, Մամիկոն Սերգիյանը[127] և շատ ուրիշներ։ Օդաչուների այդ բազմազգ ընտանիքը սովետական ժողովուրդների մարտական բարեկամության մի վառ օրինակ է։

---

[123] Նույն տեղում, ֆ. 88, ց. 2, գ. 525, թ. 144։

[124] Նույն տեղում, թ. 145։

[125] *Т. А. Жданова*, Крепость на Неве, М., 1960, с. 34., *А. В. Буров*, Блокада день за днем, с. 27.

[126] ՌԾԿԱ, ֆ. 3, ց. 1, գ. 450, թ. 124։

[127] Մամիկոն Սերգիյանը պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով։ Նա 1943 թ. մարտի 17-ին լվերադարձավ մարտական առաջադրանքից։ ՌԾԿԱ, ֆ. 165, ց. 5, գ. 15, թ. 16։

1943թ. թշնամու կողմից ձեռնարկած պաշտպանական միջոցների հետևանքով, երբ Բալթիկ ծովում խիստ սահմանափակվեցին սովետական ռազմանավերի գործողությունները, ավելի ակտիվ սկսեցին գործել ծովային ավիացիայի ականակիր ինքնաթիռները։ Աչքի ընկավ ականակիր ինքնաթիռի օդաչու Նիկիտա Սաղաթելովը, որը երկրորդ անգամ Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվելուց հետո կատարեց 15 մարտական թռիչք, ականապատեց Տալլինի ու Հելսինկիի ծովային մատույցները, խորտակեց թշնամու մեկ փոխադրանավ և մեկ տանկեր՝ յուրաքանչյուրը 6000—7000 տոննա ջրատարողությամբ, ջրասույզ արեց «Ռաումա» լողացող փարոսը։ Նա պարգևատրվեց Կարմիր դրոշի երրորդ շքանշանով[128]։ Ծովային օդաչուների շրջանում գերազանց հետախույզի համբավ ուներ Սիմոն Ափինյանը։ Նա 1942թ. կատարեց 47 մարտական թռիչք, որի ընթացքում յոթ անգամ նկարահանեց թշնամու ռազմական օբյեկտները, այդ թվում Մակսլախտի օդանավակայանը, Կոյվիստո նավահանգիստը, Վեյմար երկաթուղային հանգույցը, ինչպես նաև օդային մարտում ոչնչացրեց թշնամու երեք ինքնաթիռ[129]։

Լենինգրադի ռազմաճակատի բոլոր հատվածներում Պուլկովոյի, Կոլպինոյի, Նևայի շրջաններում, Կարելական պարանոցում, սովետական տարբեր ազգությունների պատկանող ռազմիկները՝ ծովային, տանկիստ, օդաչու, հրետանավոր, հետախույզ, ռադիստ, սակրավոր, կռվեցին անձնուրաց, ամենաբարդ իրադրություններում հստակորեն կատարեցին հրամանատարության կողմից առաջադրված դժվարին առաջադրանքները, դրսևորեցին ռազմական տեխնիկային տիրապետելու բարձր ունակություններ։ Ստեղծված ծանր իրադրությունում սովետական ռազմական դպրոցով անցած շատ ու շատ հրամանատարներ ու զորահրամանատարներ դրսևորեցին ոչ միայն զորամասեր, միավորումներ, զորախմբեր ղեկավարելու ընդունակություններ, այլև ցուցաբերեցին անձնական օրինակ, համարձակություն ու խիզախություն։

* *
*

Չորս ու կես ամսվա մարտական գործողությունների ընթացքը ցույց տվեց, որ ձախողվել է թշնամու «կայծակնային» պլանը, բայց և

---

128 ՌՕԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 159։

129 ՀՄՊՊԿ արխիվ, ֆ. 224, գ.11, թ. 8—9։

անժխտելի էր, որ հակառակորդը ծանր կորուստների գնով ոչ միայն հասել էր զգալի հաջողությունների, այլև շարունակում էր իր ձեռքում պահել ստրատեգիական նախաձեռնությունը։

Սովետական զորքերի սկզբնական շրջանի ծանր պարտությունների և այդքան մեծ տերիտորիայի կորստի պատճառներն են. «Գերմանիայի էկոնոմիկայի ու ողջ կյանքի ռազմականացումը, զավթողական պատերազմի երկարատև նախապատրաստությունը և Արևմուտքում մղած պատերազմական գործողությունների փորձը, սպառազինության ու զորքերի թվի դերազանցությունը, որոնք նախապես կենտրոնացված էին սահմանամերձ գոտիներում։ Նրանց տրամադրության տակ էին գրեթե ամբողջ Արևմտյան Եվրոպայի տնտեսական ու ռազմական ռեսուրսները։

...Զգալ տվեց նաև այն, որ այն ժամանակ սովետական զորքերը ժամանակակից պատերազմի պայմաններում խոշոր գործողություններ վարելու բավականաչափ փորձ չունեին»[130]։ Անհաջողություններից էր նաև այն, որ թույլ էր մեր զորամասերի ու ստորաբաժանումների զենավարման ռադիո-հեռախոսային կապը, համագործակցությունը տարբեր զորամիավորումների ու զորատեսակների միջև, չկային թիկունքային պաշտպանական ամուր գծեր, ականապատված գոտիներ, փշալարային պատնեշներ և այլն։ Կարմիրբանակայինները չունեին անհրաժեշտ փորձ։

Հյուսիսային, իսկ հետո Լենինգրադյան ռազմաճակատի զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների քաղաքացիները և կուսակցական կազմակերպությունները ի գիտություն ընդունելով այդ, հիմնական ուշադրությունը նվիրեցին կարգապահության ամրապնդման, վախկոտների ու խուճապ տարածողների դեմ անխնա պայքարելու հարցերին։ Կոմունիստական կուսակցության Կենտկոմը այդ կապակցությամբ ընդունեց մի շարք կարևոր որոշումներ, նվիրված կարգապահության ամրապնդմանը[131]։

Կուսակցական-քաղաքական աշխատանքը զորամասերում ու ստորաբաժանումներում տարվում էր տարբեր ձևերով ու մեթոդներով։ Մարտիկների հետ անցկացվում էին անձնական ու խմբային զրույցներ, ժողով-

---

130 ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի Բեղիսները։ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50 տարին», Երևան, 1967, էջ 25։

131 1941 թ. հուլիսի 16-ին հրապարակվեց Պաշտպանության պետական կոմիտեի որոշումը, իսկ օգոստոսի 16-ին՝ Գերագույն գլխավոր հրամանատարության Զորակայանի դիրեկտիվը, որտեղ պահանջվում էր խիստ միջոցներ ձեռնարկել նրանց նկատմամբ, ովքեր խախտում են երդումը և դրսևորում անկայունություն։

ներ, միտինգներ, կարդացվում էին դասախոսություններ՝ կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության արտաքին ու ներքին քաղաքականության մասին, պարզաբանում սովետագերմանական ռազմաճակատում տիրող վիճակը, ցույց տալիս հակառակորդի հրեշավոր նպատակները, նրա գաղանությունները սովետական խաղաղ բնակչության նկատմամբ, վերհանում ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ու հայրենասիրությունը։ Պրոպագանդվում էին ռազմիկների սխրանքները, լավագույն զորամասերի մարտական փորձը, ուսումնասիրվում զենքի տարբեր տեսակների օգտագործման կանոնները, թշնամու տանկերի դեմ կռվելու ձևերն ու մեթոդները և այլն։ Ուժեղացվեց զորքերի օպերատիվ ղեկավարությունը։ Հրամանատարների ու զինվորների առաջ հանդես եկան ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամներ Ա. Ա. Ժդանովը, Ա. Ա. Կուզնեցովը, Տ. Ֆ. Շտիկովը, Ն. Վ. Սոլովյովը, ռազմաճակատի քաղվարչության պետ Կ. Պ. Կուլիկը, բանակների ռազմական խորհրդի անդամներ Բ. Հ. Գալստյանը, Գ. Պ. Ռոմանովը, միավորումների կոմիսարներ ու քաղբաժնի պետեր Մ. Ա. Բասովսկին, Լ. Յու. Զվոնովը, Ա. Ի. Իգնատևը, Ի. Մ. Սոկոլովը, Գ. Վ. Ժուրբան, Ա. Յե. Խմելը, կոմերիտական աշխատողներ Ի. Ս. Բուչուրինը, Պ. Ֆ. Իսակովը։ Զորքի մեջ տարվող քաղաշխատանքներին ակտիվորեն մասնակցեցին ռազմաճակատի քաղվարչության ու բանակների քաղբաժինների ագիտատորներ Գ. Դ. Լոկտիկը, Ս. Մ. Մարոն, Ա. Ա. Իվանովը, Ֆ. Ֆ. Վերովը, Վ. Մ. Դենիսենկոն, Ի. Կ. Սմուլյանը, Ֆ. Ե. Կարնաչը, Ն. Վ. Կլուկովը, Ն. Ն. Ուտկինը, Ա. Ա. Սիմկինը և ուրիշներ։

Ռազմաճակատի միայն քաղվարչության դասախոսների կողմից ամեն ամիս կարդացվում էին 100—110 դասախոսություններ[132]։

Ամբողջ ռազմաճակատում հայտնի էին 136-րդ հրաձգային դիվիզիայի գումարտակի զինկոմ Ա. Սիլանյանի, 123-րդ հրաձգային բրիգադի գումարտակային կոմիսար Հ. Հ. Մելքոնյանի, 268-րդ հրաձգային դիվիզիայի վաշտի քաղղեկ Ն. Լուկինի, 70-րդ հրաձգային դիվիզիայի սերժանտ Մ. Սերգեևի անունները։

Լենինգրադյան ռազմաճակատում մեծ հեղինակություն էր վայելում 42-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Բենիամին Գալստյանը։ Նա հիանալի քաղաշխատող էր և հմուտ ռազմագետ, վաստակել էր «Պուլկովոյի բարձունքի Նախիմով» պատվավոր անունը և նվաճել զինվորների սերն ու համակրանքը։ Հրետանու գնդապետ Սարգիս Խաչիկ-

[132] «Партийно-политическая работа в Советских Вооруженных Силах в годы Великой Отечественной войны», М., 1968, с. 97.

յանը նրա մասին գրում է. «Ընկ. Գալստյանը օժտված էր արիությամբ և հերոսականությամբ։ Նա ոչ միայն ղեկավարում էր, այլև անձնական վարվելակերպով ցույց էր տալիս տոկունության օրինակներ։ Այսպես, 1941 թ. դեկտեմբերին հակառակորդը գերակշռող ուժերով անցավ կատաղի հարձակման զորամասի դիրքերի վրա։ Թշնամու հարձակման կենտրոնական հատվածը պաշտպանող մեր վաշտը ենթարկվեց տանկերի ու հետևակի կատաղի ճնշմանը. ռազմիկներից ոմանք սկսեցին թողնել իրենց դիրքերը և ետ քաշվել։ Մեկ էլ, այդ վաշտի դիրքերում երևաց կոմիսար Գալստյանը. զինվորները լսեցին նրա ձայնը. «Ո՛չ մի քայլ չնահանջեք, ընկե՛ր զինվորներ։ Եկեք ինձ հետ, ետ մղենք թշնամու տանկերը, բարբարոսներին չթողնե՛նք մտնեն Լենինգրադ»[133]։ Ոգևորված իրենց հրամանատարի անձնական օրինակով, ռազմիկները ետ մղեցին հակառակորդի բոլոր գրոհները։

Գալստյանի մեջ համարձակությունը զուգորդվում էր քաղաքական աշխատանքը կատարելապես տիրապետելու հմտության հետ։ Նա հասկանում էր ամեն մի զինվորի, հոգեբանի նման թափանցում նրա սիրտը, միաժամանակ օգտագործում յուրաքանչյուր պատեհ առիթ՝ բորբոքելու նրա մեջ վրեժի ու ատելության զգացմունք թշնամու նկատմամբ։ Հայրենասիրական դիպուկ խոսքը Գալստյանը ամենուրեք մասսայականացնում էր։ Զորամասերից մեկում տեղի ունեցած միտինգին մի տարեց զինվոր կարդում է իր բանաստեղծությունը.

«Հանուն վշտից տառապող քո Բելոռուսիայի ենք կռվում մենք, Պետրուս։

Սովետական հայրենիքի խիզախ մարտի՛կ, Ուզբեկստանի զավա՛կ, դու իմ եղբայր Մեդամի՛նով։ Դու ինձ համար, ես՝ քեզ։

Քեզ եմ ասում, հայ մարտիկ Արմենակ Սարգսյա՛ն։ Դու կոմերիտական ես, ես՝ կոմունիստ։ Ես մարտնչում եմ Հայաստանի և մայր Ռուսիայի համար, իսկ դու՝ Ռուսիայի և Հայաստանի։ Ահա մեր կարծիքը. ես քեզ համար, դու՝ ինձ։ Հենց դա՛ է Հոկտեմբերի միությունը։

Քեզ եմ դիմում, Նիկո Լազաշվիլի՛։ Հատկապես քեզ եմ դիմում, որովհետև դու արդեն թխկացրել ես մոտ հարյուր ֆրից։ Դու հպարտ տղա ես, լեռների արծիվ։ Հոկտեմբերի առաջին օրից դու իմ հարազատն ես։ Ես քեզ համար, դու՝ ինձ։

Հենց դա՛ է միությունը Հոկտեմբերի»[134]։

---

[133] Տե՛ս Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, 1954, Երևան, էջ 307—308։

[134] Տե՛ս Ա. Ա. Հովսեփյան, Անմահ կոմիսարը, 1968, էջ 45—46։

Բանաստեղծությունը շատ դուր եկավ Գալստյանին։ Նա կարգադրեց թերթի խմբագրին այն տպագրել թերթում։ 1942 թ. Գալստյանը նշանակվեց սկզբում Նևսկի օպերատիվ խմբի ղեկավար, ապա՝ 42-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ։ Այդ պաշտոններում նա շատ բան արեց բանակի ստորաբաժանումների ու զորամասերի բարոյական ոգու և մարտունակության բարձրացման ուղղությամբ։

Ռազմաճակատային թերթերում տպագրված նրա «Դաստիարակել մարտական ավանդույթների հիման վրա», «Հրամանատարի պահանջկոտությունը», «Բանակի ու թիկունքի միասնությունը մեր բարոյական ուժի աղբյուրն է» ծավալուն և մի շարք ուրիշ հոդվածները թարմություն մտցրին քաղաքական աշխատանքում։ Այնտեղ արծարծվում էին կարգապահության, մարտունակության բարձրացման, ինտերնացիոնալիզմի, հայրենասիրության, զինվորների նկատմամբ հոգատարության, մարտական լավագույն փորձի փոխանակման և այլ կարևոր հարցեր։ «Այժմ,— գրում է նա հոդվածներից մեկում,— երբ մեր հայրենիքի վրա կախվել է մահացու վտանգ, երբ վտանգված է մեր երկրի ժողովուրդների գոյությունը, յուրաքանչյուր կարմիրբանակայինի վարքագիծը պետք է արտահայտվի երկաթյա կարգապահության, հրամանների անվերապահ կատարման և մինչև վերջ մարտական կայունության մեջ։ Թշնամու ջախջախման գործում հենց այդ հատկություններն են հարկավոր»[135]։

Գալստյանին չվիճակվեց տեսնել սիրելի քաղաքի շրջափակման վերացումը։ 1942թ. դեկտեմբերի սկզբներին Պուլկովոյի բարձունքում, արկի ուղղակի հարվածից, խրամատում զոհվեց Բենիամին Գալստյանը։ Հրացանների համազարկերի որոտի տակ նրան թաղեցին Լենինգրադում, Ալեքսանդրա Նևսկի մայրավանքի գերեզմանատանը։

Այդ օրերին ռազմաճակատի թերթն այսպես գրեց նրա մասին. «Հեռավոր Հայաստանի զավակը, կռվելով Իլյիչի քաղաքի համար, իր բոլշևիկյան կամքով ցեմենտում էր Լենինգրադի պաշտպանների շարքերը, նրանց տանում պայքարի, իսկ մարտերում ինքն առաջինն էր միշտ։ Նրա վերքերը չէին հասցնում սպիանալ։ Նա արհամարհում էր մահը»[136]։ Նիկոլայ Տիխոնովը նշելով մարտական կոմիսարի արժանիքները, գրել է. «Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների՝ Լենինգրադի պաշտպանների անջնջելի ցուցակում և կհիշենք նրան ընդմիշտ, որպես մեր մեծ քաղաքի սքանչելի հայրենասերի»[137]։

---

135 Նույն տեղում, էջ 69։

136 Նույն տեղում, էջ 43։

137 Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, էջ 309։

Երախտապարտ լենինգրադցիները չմոռացան հերոսին։ Նրանք քաղաքի գեղեցիկ փողոցներից մեկը կոչեցին Բենիամին Գալստյանի անունով։

Լենինգրադյան ռազմաճակատում քաղաշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու, ինչպես նաև ագիտատորների ու պրոպագանդիստների տեսական-գաղափարական մակարդակը բարձրացնելու համար անցկացվեցին միամսյա սեմինարներ, քաղվարչությունը մարտիկների հետ անցկացվող զրույցի համար հրատարակեց բրոշյուրներ։ 1941 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հրատարակվեց «Ժողովուրդների միացյալ ճակատը ընդդեմ ֆաշիզմի», «Թշնամու թիկունքում», «Հերոսության մասին», «Լենինի քաղաքը չենք հանձնի», «Ամոթ վախկոտներին» բրոշյուրները և 8 տարբեր պլակատներ[138]։ Քաղվարչության ուշադրության կենտրոնում էին մարտիկներին ու հրամանատարներին թշնամու նկատմամբ ատելություն սերմանելու, իր ուժերի ու ապագա հաղթանակի նկատմամբ հավատի, կուսակցությանը նվիրվածության ոգով դաստիարակելու հարցերը։

Հուլիսի 19-ին հակառակորդը ժամանակավորապես դադարեցրեց հարձակումը Լենինգրադի ուղղությամբ։ Այդ ընթացքում կուսակցական ու քաղաքական օրգանները հսկայական աշխատանք կատարեցին զորքի բարոյաքաղաքական ու մարտական ոգին բարձրացնելու ուղղությամբ։ Բոլոր զորամասերում ու ստորաբաժանումներում տեղի ունեցան ժողովներ ու միտինգներ, ուր սովետական ռազմիկները երդվում էին սրբորեն կատարել զինվորական պարտքը հայրենիքի նկատմամբ, մինչև վերջ կռվել թշնամու դեմ և եթե հարկ լինի զոհել կյանքը, բայց թշնամուն թույլ չտալ մտնելու հեղափոխության մայրաքաղաքը։ «Այլևս չպետք է նահանջել,— հայտարարեց կոմերիտական զինվոր Ավագյանը 48-րդ հրաձգային դիվիզիայի 268-րդ զնդի կոմերիտական կազմակերպության ժողովում,— մեղ տեղ չկա նահանջելու, եռևում է մեր հայրենիքի երկրորդ մայրաքաղաք Լենինգրադը։ Անհրաժեշտ է հարձակվել, թշնամին վախենում է մեր ամեն մի հարվածից։ Հանուն մեր հայրենիքի կկռվեմ մինչև արյանս վերջին կաթիլը»[139]։ Հայրենասիրական ջերմ զգացմունքներով էր ստոգորված զաղախ մարտիկ Կոսումբեկովի ելույթը միտինգում, որտեղ նա հայտարարեց. «Ընկեր մարտիկներ, զաղախներ, ուզբեկներ, ռուսներ։ Պաշտպանելով Լենինգրադը, մենք պաշտպանում ենք Զաղախստանը, Կովկասը և մեր ամբողջ սոցիալիստական Հայրենիքը»։ Իսկ ուկրաինացի մարտիկներից մեկը

---

[138] «Партийно-политическая работа в Советских Вооруженных Силах в годы Великой Отечественной войны», с. 98.

[139] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 344, ց. 5592, գ. 19, թ. 83։

նույն միտինգում իր ելույթում նշեց. «Ես ուկրաինացի եմ, բայց ինձ համարում եմ լենինգրադցի, որովհետև բոլորի հետ միասին պաշտպանում եմ քաղաքը գերմանական զավթիչներից»[140]։ Լատիշական 76-րդ հրաձգային գունդը, որ աչքի էր ընկել մարտերում, երդման ուղերձ ուղարկեց Լենինգրադի պաշտպանության ղեկավարներին. «Մենք լատիշական 76-րդ հատուկ հրաձգային գնդի մարտիկները, քաղաքացիաստղները և հրամանատարները հանդիսավորապես երդվում ենք մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել Լենինի քաղաքը, հոկտեմբերյան հեղափոխության օրրանը... Ֆաշիստները երբեք չեն տեսնի մեր սիրելի Լենինգրադ քաղաքը»[141]։

Երդում էր հայրենասիրական շնչով գրված մի խումբ հայ մարտիկների նամակը՝ ուղղված իրենց հարազատներին։ Նրանք Լենինգրադի համար կռվելը համարում էին պատվի ու փառքի գործ։ «Թանկագին ծնողներ, քույրեր, եղբայրներ և կանայք,— գրված էր նամակում,— մենք Լենինգրադի ճակատում գտնվող հայ կարմիրբանակայիններս ու հրամանատարներս, որ աճել ու սնվել ենք ծաղկուն Հայաստանում, գտնվելով հայրենիքի համար պատերազմող բանակի շարքերում, եղբայրական ռուս մեծ ազգի և մնացած ազգերի հետ միասին խոսք ենք տալիս Ձեզ է՛լ ավելի ուժեղացնել պայքարը մարդկային կերպարանքը կորցրած ֆաշիստական բանակների դեմ ու բնաջնջել նրանց երկրի երեսից։ Թանկագին ծնողներ, քույրեր, եղբայրներ, մենք խոստանում ենք անշեղորեն կատարել Ձեր բոլոր ցուցումները և լինել հավատարիմ սովետական ժողովրդին, որ շուտով կտեսնի իր փողոցներում մեր ժողովրդի սքանչելի հաղթանակի օրը»[142]։ Հայ մարտիկները պատվով ու փառքով կատարեցին իրենց խոստումը՝ թշնամու դեմ մղվող պայքարում ներդնելով իրենց բոլոր ուժերը, ընդունակությունները, եռանդն ու կամքը։

«Боевая красноармейская» թերթում տպագրվեց աշխատավորների դեպուտատների Տաշքենդի մարզային սովետի նախագահի նամակը Լենինգրադի պաշտպաններին։ Կարդալով նամակը, ուզբեկ հրամանատար Իսման Պուլատովը հայտարարեց. «Այստեղ, Լենինգրադի տակ մենք գերմանական լծից պաշտպանում ենք Ուզբեկստանի ծաղկող դաշտերը, մեր քույրերին ու մայրերին։ Ես ոչնչացրել եմ 5 գերմանական զինվոր և մեկ սպա, իսկ դասակի մարտիկները ոչնչացրել են 43 ֆաշիստ։

---

140 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1217, գ. 226, թ. 403։

141 *И. З. Захаров*, Дружба, закаленная в боях. М., 1970, с. 54.

142 ՀՄՊՊԿ, ֆ. 265, գ. 1, թ. 5։

Կկռվեմ երեքի փոխարեն, չեմ խնայի ուժերս՝ ֆաշիստական բարբարոսներից իմ հայրենիքի փրկության համար»[143]։

Չնայած հակառակորդի գերակշռությանը, սովետական ռազմիկներն զգում էին իրենց ուժը և հավատում, որ այդ ուժն անպայման կհաղթի և թշնամին Լենինգրադի պատերի տակ կգտնի իր գերեզմանը։ Կրասեր քաղղեկ Առուստամովը կնոջն ուղարկած նամակում գրում է. «Երեկ ստացա քո նամակը։ Դու գրում ես, որ մեր ամբողջ քաղաքը համերաշխ աշխատում է հարազատ Հայաստանի դաշտերում։ Ես հպարտանում եմ դրանով, իմ ընկեր։ Եթե դուք դաշտերից շատ բերք հավաքեք, մեզ հեշտ կլինի ջախջախել թշնամուն։ Սովետական մարդկանց բարեկամությունը դա մեծ ուժ է։ Մենք՝ Լենինգրադի պաշտպաններս ամրապնդում ենք բարեկամությունը մարտի դաշտում։ Մեզ բոլորիս՝ հայերին, վրացիներին, ուկրաինացիներին, ռուսներին, հրեաներին միավորում է մեկ ձգտում, արագ ոչնչացնել ֆաշիստական սրիկաներին և մենք նրանց կջախջախենք։ Կարող ես այդ բանում հավատացած լինել, իմ սիրելի»[144]։

Այսպիսի դիտակցությամբ ու նվիրվածությամբ էին մարտնչում սովետական բազմազգ ռազմիկները թշնամու դեմ։ Նրանց բոլորին համակել էր մեկ ընդհանուր ձգտում, մինչև վերջ պաշտպանել հեղափոխության օրրանը, մինչև վերջին հնարավորությունը մարտնչել և թույլ չտալ թշնամուն գրավել քաղաքը։ Այդ էր թելադրում նրանց խիզճը։

Կուսակցական-քաղաքական աշխատանքի հզոր ղենքն էր տպագիր պրոպագանդան, ռազմաճակատային մամուլը, որի միջոցով զինվորական մասսաներին էր հասցվում սովետական տարբեր աղդություններին պատկանող ռազմիկների մասսայական հերոսությունը, թերթերում լուսաբանվում էր ՍՍՀՄ ժողովուրդների և նրանց ռազմիկ զավակների մարտական եղբայրությունը, ցույց տրվում ռազմաճակատի հերոսներին, ռազմիկների մեջ դաստիարակում հայրենասիրություն, դիմացկունություն և այլն։

Այդ գործում հսկայական աշխատանք կատարեցին «На страже родины» (Լենինգրադյան ռազմաճակատ, խմբագիր Մ. Գորդոն), «На разгром врага» (242-րդ բանակ, խմբագիր Ս. Սենդունով), «Боевая красноармейская» (55-րդ բանակ, խմբագիր Լ. Դրոսկովսկի), «Знамя победы» (23-րդ բանակ, խմբագիր Լ. Պրուսյան), «Боевая тревога»

---

[143] «Партийно-политическая работа в Советских Вооруженных Силах в годы Великой Отечественной войны», с. 101.

[144] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1217, գ. 186, թ. 330։

(13-րդ ավիացիոն բանակ, խմբագիր Լ. Պերեպելով, «Защита родины» (Հակաօդային պաշտպանության բանակ, խմբագիր Բ. Բորիսով)։

Բացի զինվորական թերթերից զորամասերը ստանում էին նաև Լենինգրադի մարզային թերթը՝ «Ленинградская правда»-ն, որի էջերում հաճախակի տպագրվում էին ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությանն ու եղբայրությանը վերաբերող հոդվածներ։ «Ռազմի դաշտերում աճում ու ամրապնդվում է ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը» հոդվածը նվիրված է տարբեր ազգությունների պատկանող ռազմիկների, ռուս՝ Ռագուլինի, ուկրաինացի՝ Ն. Շելչկայի, բելոռուս՝ Ի. Կորնիլենկոյի, տաջիկ՝ Շ. Ուլմասովի, բուրյաթ՝ Ն. Դորժիևի, հայ՝ Պ. Թադևոսյանի, վրացի՝ Ս. Բերիձեի, ադրբեջանցի՝ Պ. Նուրուլլաևի մարտական բարեկամությանը։ Տպագրվեցին «Մարտական դաշինք», «Խոսք մարտիկներին», «Ժողովուրդների բարեկամությունը՝ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության մեծ նվաճումն է» և նման բովանդակությամբ շատ հոդվածներ[145]։

Գրչով ու զենքով մարտնչեցին լրագրողներ Ս. Ֆարֆելը, Վ. Կարպը, Մ. Կարպովիչը, Վ. Լոկշինը, Ա. Սապարովը, Պ. Կարելինը, Բ. Ֆրանտիշևը, Գ. Թևոսյանը, Վ. Արդաշնիկովը, Ա. Բորովը, Վ. Մայակովը, Յա. Սուխոդինը, Ս. Բոյցովը և շատ ուրիշներ։ Թերթերի էջերում հոդվածներով, բանաստեղծություններով, պատմվածքներով հաճախակի հանդես էին գալիս Վսեվոլոդ Վիշնևսկին, Օլգա Բերգգոլցը, Վերա Իբները, Վսեվոլոդ Ռոժդեստվենսկին, Ալեքսանդր Զակովսկին, Պավել Լուկնիցկին, Միխայիլ Դուդինը, Գեորգի Խոլոպովը (Խոլոպյան), Սերգեյ Նարովչատովը, Միքայել Շաֆիրյանը, Ալեքսանդր Մեժիրովը և ուրիշներ։

Լավագույնների շարքում հանդիպում ենք նաև գումարտակային կոմիսար Սարգիս Միքայելի Խաչիկյանին։ Քաղաշխատանքին նվիրված իր ուսանելի ու բովանդակալից հոդվածներով նա ճանաչում ու հեղինակություն էր ձեռք բերել Լենինգրադյան ռազմաճակատում։ Ռազմաճակատային մամուլում տպագրված «Մենք վրեժ կլուծենք», «Կուսակցական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրները», «Մարտիկների դաստիարակությունը սպաների հարազատ գործն է», «Խոսուն թվեր» և ուրիշ այլ հոդվածներում Ս. Խաչիկյանը կենդանի փաստերով լուսաբանում էր զորամասում տարվող քաղաշխատանքը, իր աշխատանքային փորձը, վեր հանում տարբեր ազգությունների մարտիկների մարտական եղբայրությունը, նրանց ինտերնացիոնալիզմը, հայրենասիրությունն ու մարտական սխրանքները։ «Մինչև վերջ ոչնչացնել,— գրում էր Խաչիկյանը իր հոդված-

---

[145] *В. А. Мурадян.* Боевое братство, М., 1978, с. 90—91.

ներից մեկում,—որպես զավթիչներ մեր հայրենիքի տերիտորիան ներխուժած բոլոր գերմանացիներին։ Ելնելով այդ խնդրից մենք պետք է վերակառուցենք մեր ամբողջ կուսակցական-քաղաքական աշխատանքը։ Առաջին հերթին անհրաժեշտ է ճիշտ տեղաբաշխել կուսակցական-քաղաքական ուժերը։ Ոչ մի մարտիկ չպետք է դուրս մնա բարոյական դաստիարակների՝ կուսակցական-քաղաքական աշխատողների տեսադաշտից»[146]։

Պատերազմի սկզբում Խաչիկյանը 125-րդ դիվիզիայի կազմում ակտիվորեն մասնակցեց սովետական Մերձբալթիկայի պաշտպանական մարտերին, իսկ հետո դարձավ Լենինգրադում կազմավորված 7-րդ աշխարհազորային դիվիզիայի քաղբաժնի պետ (այդ դիվիզիան հետագայում վերակազմվեց 56-րդ հրաձգայինի)։ 1942 թ. օգոստոսից նրան տեսնում ենք 168-րդ հրաձգային դիվիզիայի 412-րդ հրետանային գնդի հրամանատարի պաշտոնում։ Հրամանատարությունը բարձր գնահատեց Ս. Խաչիկյանի մարտական ծառայությունները։ Նա երկու անգամ պարգևատրվեց Կարմիր աստղի, իսկ հետո, Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանի շքանշաններով։

Մարտիկներին ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու գործում մեծ աշխատանք կատարեց ռազմաճակատի Կարմիր բանակի տունը։ Պատերազմի սկզբից մինչև 1942թ. մայիսն այդ հաստատության ուժերով ռազմաճակատի բանակների անձնակազմի համար կարդացվեց 9000 զեկուցում ու դասախոսություն, կազմակերպվեց 13550 համերգ, 1362 կինոդիտում, պատրաստվեց 137 նշանառու-հրահանգիչ, 30719 սպիտակեղեն ու համազգեստ, 24000 նվեր-ծանրոց[147]։

8-րդ, 42-րդ և 54-րդ բանակներում մեծ աշխատանք էր տարվում ազգային հանրապետություններից զորակոչված մարտիկներին սովետական ժողովրդի հերոսական պատմության ավանդույթների ոգով դաստիարակելու ուղղությամբ։ 125-րդ, 268-րդ հրաձգային դիվիզիաներում ցուցադրվեց «Հրացանավոր մարդը», «Մենք Կրոնշտադտից ենք», «Ջապան» կինոնկարները և այլն[148]։

Պաշտպանական ծանր մարտերի ընթացքում ռազմաճակատի ռազմական խորհուրդը, զորամիավորումների ու զորամասերի հրամանատարությունը, կուսակցական և քաղաքական մարմինները հիմնական ուշադրությունը դարձնում էին այն բանին, որպեսզի բոլոր ստորաբաժանումնե-

---

[146] «Комсомольская правда», 8 ноября 1941 г.

[147] «Партийно-политическая работа в Советских Вооруженных Силах в годы Великой Отечественной войны», с. 103.

[148] *В. А. Мурадян,* Братство, скрепленное кровью. М., 1969, с. 41.

ում ապահովվի կոմունիստների ու կոմերիտականների անհրաժեշտ քանակը։ Սովետական պետության ստեղծման առաջին օրից կուսակցությունը մոբիլիզացնում էր կոմունիստներին, նրանցում տեսնելով այն ուժը, որով հնարավոր էր հաղթահարել ստեղծված ծանր վիճակը։ Այս կապակցությամբ Վ. Ի. Լենինը գրել է. «...ամեն անգամ, երբ պատերազմի միջոցին դժվարին պահ էր լինում, կուսակցությունը մոբիլիզացնում էր կոմունիստներին և առաջին հերթին նրանք էին զոհվում առաջին շարքերում, նրանք հաղարներով ընկան Կոլչակի և Յուդենիչի ռազմաճակատներում, զոհվում էին բանվոր դասակարգի լավագույն մարդիկ, որոնք իրենց զոհաբերում էին իրենց, հասկանալով, որ իրենք կզոհվեն, բայց կփրկեն սերունդներ, կփրկեն հազարավոր ու հազարավոր բանվորների ու գյուղացիների»[149]*։ Պատերազմի հենց առաջին օրերին Լենինգրադը ռազմաճակատ ուղարկեց 29 հազար կոմունիստ և ավելի քան 18 հազար կոմերիտական։ Աշխարհազորայինների շարքերը ընդգրկվեցին 11386 կոմունիստ, որից 986-ը դարձան քաղաշխատողներ, իսկ մյուսները՝ քաղմարտիկներ*[150]*։ Առաջին երեք ամսում Լենինգրադում անցկացվեց 11 կուսակցական մոբիլիզացիա*[151]*։*

Լենինգրադի համար այդ ծանր օրերին հազարավոր սպաներ ու զինվորներ դիմում էին կուսակցության շարքերն ընդունվելու համար և ցանկանում էին մարտի գնալ որպես կոմունիստ։ Կուսակցության շարքերն ընդունվելու համար պատերազմի առաջին 10 օրում ռազմաճակատի կուսակցական կազմակերպություններին տրվեց ավելի քան 1000 դիմում[152]*։ Եթե 1941թ. առաջին կեսում ռազմաճակատի կուսակցական կազմակերպության շարքերն ընդունվեցին 3779 անդամ և 14934 թեկնածու, ապա 1942թ. 8 ամսում համապատասխանաբար 20689 և 52557։ Այդ ժամանակաշրջանում կոմերիտական կազմակերպության շարքերն ընդունվեց 51703 մարտիկ։ Կուսակցության շարքերն ընդունվածների 70 տոկոսը մարտերում իրեն լավ դրսևորած մարտիկներ ու հրամանատարներ էին*[153]*, 23-րդ բանակում հուլիս—նոյեմբեր ամիսներին կուսակցության շարքերն ընդունվեցին 610 անդամ և 2157 անդամության թեկնածու։ Նույն ժամա-*

---

[149] Վ. Ի. Լենին, *երկ, հ. 40, էջ 357։*

[150] *В. Е. Зубаков.* Ленинград—город-герой, с. 19, 36.

[151] «Оборона Ленинграда 1941—1944», с. 382.

[152] «История ордена Ленина Ленинградского Военного округа», с. 195.

[153] «Партийно-политическая работа в Советских Вооруженных Силах в годы Великой Отечественной войны», с. 92.

նակ 123-րդ, 168-րդ, 43-րդ հրաձգային դիվիզիաներում կուսակցության շարքերն ընդունվեցին համապատասխանաբար 440, 630, 421 մարտիկներ ու հրամանատարներ[154]։ 8-րդ բանակի վեց հրաձգային դիվիզիաներում, երբ 1941թ. հուլիսից մինչև սեպտեմբերի 1-ը կուսակցության մեջ ընդունվեց 283 մարդ, ապա հոկտեմբերի 25 օրում նույն դիվիզիաներում ընդունվեց 300 մարդ[155]։ 1942թ. միայն Լենինգրադյան ռազմաճակատում յուրաքանչյուր ամիս կուսակցության շարքերն էին ընդունվում 9 հազար, կոմերիտմիության մեջ՝ 7 հազար մարտիկ ու հրամանատար[156]։

Զգալիորեն ամրապնդվեցին Բալթյան կարմրադրոշ նավատորմի նավերի, զորամասերի ու ստորաբաժանումների կուսակցական կազմակերպությունները։ Երբ ծովային 8-րդ ավիացիոն բրիգադում 1941թ. հունվարի 1-ից մինչև 1941 թ. հունիսի 22-ը կուսակցության շարքերն ընդունվեցին 45 անդամ և 14 անդամության թեկնածու, ապա պատերազմի 5 ամսում՝ կուսակցական հանձնաժողովի կողմից կուսակցության շարքերն ընդունվեցին համապատասխանաբար 60 և 65 մարդ, իսկ կուսակցական կազմակերպություններում՝ 67 և 76 մարդ։ Այդ ընթացքում կոմերիտմիության շարքերն ընդունվեց 80 հոգի, երեք անգամ շատ, քան 1941 թ. առաջին կիսամյակում։ Մինչև 1941 թ. դեկտեմբերի 1-ը բրիգադում կար 800 կոմերիտական[157]։

Ծանր պահին կոմունիստական կուսակցության շարքերն ընդունվելու հազարավոր մարտիկների ու հրամանատարների բուռն ցանկությունը սոցիալիստական պետությանը և կոմունիստական կուսակցությանը անսահման նվիրվածության դրսևորումն էր։ Ստորաբաժանումներում խտանում էր կոմունիստների շարքերը, ամրապնդվում կուսակցական կազմակերպությունները, ուժեղանում կուսակցության ազդեցությունը զինվորական մասսաների վրա։ Բնականաբար, գնալով բարձրանում էր զինվորական կարգապահությունը, յուրաքանչյուր միավոր-ստորաբաժանում դառնում ավելի կուռ, միաձույլ ու մարտունակ, ընդունակ լուծելու պատասխանատու-բարդ մարտական առաջադրանքներ։

Մոբիլիզացիոն ճանապարհով բանակ զորակոչված և ռազմաճակատում կուսակցության շարքերն ընդունված բազմաթիվ կոմունիստներ հետագայում առաջ քաշվելով, դառնում էին հմուտ քաղաքխատողներ ու

---

154 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1217, դ. 32, թ. 385։

155 Նույն տեղում։

156 «Партийно-политическая работа в Советских Вооруженных Силах в годы Великой Отечественной войны», с. 92.

157 ՌԾԿԱ, ֆ. 102, ց. 1, դ. 138, թ. 190—192։

մարտական հրամանատարներ։ 1942թ. հունվարի 1-ից ապրիլի 20-ը Լենինգրադյան ռազմաճակատում 300 կրտսեր հրամանատար ու շարքային նշանակվեցին հրամանատարական պաշտոնների կամ էլ ընդգրկվեցին կուսակցական քաղաքական աշխատանքի մեջ[158]։

Ռազմաճակատի բոլոր հատվածներում, ամենաբարդ ու դժվարին պայմաններում, հարձակողական, թե պաշտպանական մարտերի ժամանակ քաղաշխատողները, կոմունիստներն ու կոմերիտականները անձնական օրինակով ոգևորում էին մարտիկներին և նրանց մղում նոր սխրանքների։ 8-րդ բանակի 101-րդ հրետանային գնդի 1941թ. նոյեմբերի 14-ի քաղղեկուցագրերից մեկում գրված է. «Լավ է աշխատում կուսակազմակերպությունը, որտեղ կուսակազմակերպիչ է ընկ. Երմակովը։ Ինքը՝ Երմակովը, կոմունիստներ Զուգանովը, Անտոնյանը, Բոնդարչուկը գործով իրականացնում են կոմունիստի ավանգարդային դերը մարտում, դաստիարակում անձնակազմին քաջության ու արիության, թշնամու նկատմամբ հաղթանակի աննկուն հավատով, շնորհիվ դրա վաստակելով մեծ հեղինակություն մարտիկների ու հրամանատարների շրջանում»[159]։

Ապագայի նկատմամբ այդպիսի հավատով, համոզվածությամբ ու գիտակցությամբ էին աշխատում ու մարտնչում Լենինգրադի ռազմաճակատի կոմունիստները։

Լենինգրադի հերոսական պաշտպանության սկզբից մինչև նրա հաղթական ավարտը, մարտական գործողությունների բոլոր փուլերում կոմունիստներն ամենուրեք դրսևորեցին իրենց ավանգարդային դերը և անձնական օրինակով հերոսության ու սխրանքի ոգեշնչեցին հարյուրավոր մարտիկների։

* * *

Ավարտվում էր սովետական ժողովրդի կենաց ու մահու պայքարի, հերոսական, մարտական ու աշխատանքային սխրանքներով լեցուն Մեծ հայրենականի ամենածանր ու դժվարին 1941 թվականը։ Կոմունիստական կուսակցության հմուտ ու օպերատիվ ղեկավարության շնորհիվ սովետական ժողովուրդը դիմացավ այդ ծանր փորձությանը, շատ կարճ ժամանակում կարողացավ ոչ միայն համախմբել իր բոլոր ուժերն ու հնարավո-

---

[158] «Партийно-политическая работа в Советских Вооруженных Силах в годы Великой Отечественной войны», с. 94.

[159] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 344, ց. 5592, գ. 6, թ. 604։

ությունները՝ դիմագրավելու իմպերիալիզմի հարվածային ջոկատի՝ ֆաշիստական Գերմանիայի ռազմական հզոր մեքենայի ճնշմանը, այլև Մոսկվայի դարպասների մոտ ծանր պարտության մատնել Եվրոպայով հաղթարշավով անցած հիտլերյան «ընտիր» բանակներին։ Մեր զորքերը պաշտպանական մարտերի ընթացքում հակառակորդին արյունաքամ արեցին Մերձբալթիկայում, Լենինգրադի մատույցներում, Բելոռուսիայում, Ուկրաինայում, Ռոստովի մոտ։ Կանգուն մնացին հեղափոխության օրրանը՝ Լենինգրադը և մեր հայրենիքի սիրտը՝ Մոսկվան։ Հակառակորդը կորցրեց իր հզոր թափը և այլևս ի վիճակի չէր մի քանի ուղղություններով ծավալելու մեծ մասշտաբի հարձակողական գործողություններ։ Տապալվեց հիտլերյան ստրատեգների խնամքով մշակած «կայծակնային» պլանը՝ ավիացիայի զանգվածային հարվածներով և տանկային բռունցքով պարտության մատնել սովետական բանակին։

Հիտլերյան ստրատեգները շարաշար սխալվեցին իրենց հաշիվներում։ Սովետական բազմազգ ժողովրդի և նրա հերոս զավակների մեծ հայրենասիրությունն ու նվիրվածությունը սոցիալիստական հայրենիքին, սերտ համագործակցությունն ու եղբայրությունը, որն ուղեկցվում էր բազում հերոսություններով ու սխրագործություններով, ձախողեցին պատերազմն իրենց օգտին ավարտելու հիտլերականների 1941 թ. նախատեսած բոլոր պլանները։ Չնայած այդ ամենին, ստրատեգիական նախաձեռնությունը դեռևս շարունակում էր մնալ հակառակորդի ձեռքին։ Սպասվում էին նոր փորձություններ ու նոր, համառ մարտեր։

2. ՊԱՇԱՐՈՒՄ։ ԼԵՆԻՆԳՐԱԴԸ ԴԻՄԱՆՈՒՄ Է ԴԺՎԱՐԻՆ։ ՓՈՐՁՈՒԹՅԱՆԸ

Լենինգրադը գրավելու ձգտումը շատ թանկ նստեց հիտլերականների վրա. մինչև սեպտեմբերի 25-ը ոչնչացվեց թշնամու 190000 զինվոր ու սպա, 500 հրանոթ, 700 տանկ և այլ ռազմական տեխնիկա[160]։

Լենինգրադը գրոհով վերցնելու առաջին անհաջող փորձերից հետո հիտլերյան հրամանատարությունը որոշեց երկարատև պաշարման միջոցով կոտրել նրա պաշտպանների դիմադրությունը, սովի ճիրաններում նրանց խեղդել, իսկ հանձնվելու առաջարկի դեպքում մերժել կապիտուլյացիան։

---

[160] *А. В. Карасев,* Ленинград в годы блокады 1941—1944, с. 116.

1941թ. Լենինգրադի շրջապատման առաջին օրերին քաղաքի կյանքում առանձնակի փոփոխություններ չէին նկատվում։ Սովորականի նման երթևեկում էին տրամվայները, ավտոբուսները, լարված աշխատում էին գործարաններն ու ֆաբրիկաները։ Չնայած կուսակցության ու կառավարության ձեռնարկած բոլոր միջոցառումներին, շրջափակումն աստիճանաբար սկսեց զգացնել տալ։ Նվազեցին պարենամթերքի պաշարները, սպառվեց վառելանյութը, էլեկտրաէներգիան, դադարեց աշխատելուց ջրմուղը, փակվեցին բաղնիքները։

Ծանր ու ողբերգական օրեր սկսվեցին Լենինգրադի համար։ Թշնամուց ավելի զորեղ էր սովը, որն անողոք սկսեց գրոհել քաղաքի բոլոր անկյունները։ Մարդիկ մեռնում էին փողոցներում, ցուրտ բնակարաններում, աշխատանքի վայրում, հացի հերթերում։ 1942թ. հունվարին ամեն օր մահանում էր 3500—4000 մարդ։ Միայն հունվար-փետրվար ամիսներին մահացան 200000 մարդ[161], իսկ ամբողջ բլոկադայի ընթացքում այդ թիվը հասավ 623253-ի[162]։ Աննկարագրելի տանջանքներն ու զրկանքները չընկճեցին լենինգրադցիներին, ընդհակառակը, ավելի ամրապնդեցին ու ցեմենտեցին մահվան դեմ մարտնչողների շարքերը, որոնք ապրում, աշխատում և պայքարում էին մեկը՝ բոլորի, բոլորը՝ մեկի համար նշանաբանով։ Նրանք հաղթանակ էին կոփում գործարաններում ու ֆաբրիկաներում՝ բանակին ուղարկելով ռազմական տեխնիկա, տաք հագուստ և այլն։ 1941թ. պատերազմի վեց ամսվա ընթացքում Լենինգրադը կարմիր բանակին տվեց 713 տանկ, 480 զրահապատ մեքենա, 58 զրահագնացք, 3053 թնդանոթ, 10600 ավտոմատ, 9977 ականանետ, 39740 ավիառումբ, 2982000 նռնակ և այլն[163]։ 1942 թ. ինն ամսում Լենինգրադում արտադրվեց 1935 ականանետ, 1975 գնդացիր, 22000 ավտոմատ, 22000 ավիառումբ, 1260000 նռնակ, վերանորոգվեց 187 տանկ, 360 թնդանոթ և այլն[164]։

Լենինգրադցիների աշխատանքային այդ անօրինակ սխրագործությունների ոգեշնչողն ու կազմակերպիչը կոմունիստական կուսակցության մարզային ու քաղաքային կոմիտեներն էին, որոնց ղեկավարությամբ հրակայական գործ կատարվեց աշխատանքի ճիշտ կազմակերպման ու կարգապահության բարձրացման, ձեռնարկությունների միջև սոցիալիստական

---

[161] «Очерки истории Ленинграда», т. 5, с. 197—198.

[162] Դ. Վ. Պավլով, Լենինգրադը պաշարման մեջ, Երևան, 1970, էջ 188։

[163] *С. П. Князев, М. П. Стрешинский, И. М. Франтишев, П. Р. Шевердалкин, Ю. Н. Яблочкин,* На защите Невской твердыни, Л., 1965, с. 302.

[164] *И. П. Барбашин, А. И. Кузнецов, В. П. Морозов, А. Д. Харитонов, Б. П. Яковлев,* Битва за Ленинград 1941—1944, с. 197.

մրցության ծավալման ու բնակչության շրջանում քաղաքական զգոնության բարձրացման ուղղությամբ։

Մեծ ծանրաբեռնվածությամբ ու լարվածությամբ էր աշխատում Ս. Մ. Կիրովի անվան գործարանը, ուր աշխատանքի կազմակերպման, արտադրության և հսկողության բոլոր գործերն իր ձեռքն էր վերցրել գործարանի կուսակցական կոմիտեն։ Աշխատանքային մեծ եռանդով էին աշխատում կուսկոմիտեի քարտուղար Մ. Դ. Կոզինը և նրա օգնական Ի. Ի. Սաֆյանը։ Նրանք հիմնականում գտնվում էին ցեխերում, արտադրական տեղամասերում, հետևում, որպեսզի ժամանակին կատարվեն ստանձնած պարտավորությունները, բանվորներին բացատրում առաջադրանքների կարևորությունը։ Կուսակցական կազմակերպությունն առաջ քաշեց լոզունգ. «Յուրաքանչյուր կոմունիստ և կոմերիտական պետք է աշխատի երկուսի, երեքի փոխարեն, որպեսզի փոխարինի ռազմաճակատ մեկնած ընկերոջը»։ Գործարանում ծավալված սոցիալիստական լայն մրցությունը տվեց իր արդյունքը։ Օգոստոս ամսին կիրովցիները բանակին տվեցին 207 վերանորոգված տանկ՝ 180-ի փոխարեն[165]։

Կարևոր նշանակություն ունեցող գործարաններին վառելանյութով ապահովելու համար Լենինգրադի մարզկոմը դիմեց տորֆագործներին, կոչ անելով ավելացնել տորֆի հանույթը։ Կոչը մեծ արձագանք գտավ տորֆագործների շրջանում, ծավալվեց սոցիալիստական մրցություն։ Կարճ ժամանակում տորֆի հանույթն ավելացավ կրկնակի։ Տորֆային դաշտերում ցուցաբերած աշխատանքային սխրագործության համար տորֆագործներ Ե. Վոնաշևը, Ս. Գրիգորյանը, Կ. Օվչիննիկովը պարգևատրվեցին շքանշաններով։

Լենինգրադի մարզկոմի առաջին քարտուղար Ա. Ա. Ժդանովի կոչով քաղաքում կազմակերպվեցին բնակչության կենցաղային սպասարկման ու հակահրդեհային ջոկատներ։ Կոմերիտականները գիշեր ու ցերեկ պարեկություն էին անում փողոցներում, հսկում կամուրջներն ու արդյունաբերական ձեռնարկությունները, պայքարում քաղաք սողոսկած թշնամու լրտեսների ու նրանց աջակցողների դեմ։ Համարձակ ու անձնազոհ գործողություններով նրանք ցույց տվեցին, որ իրենք Պետերի պրոլետարիատի արժանավոր հետնորդներն են ու նրանց փառապանծ գործի շարունակողները։ 1941 թ. հոկտեմբեր—դեկտեմբեր ամիսներին կոմերիտական ջո-

---

[165] *С. П. Князев, М. П. Стрешинский*... На защите Невской твердыни, с. 122, 126.

կատները վնասազերծեցին 3000 հրաձգային ռումբ և վերացրին 2500 հրդեհի օջախ[166]։

Պաշարված քաղաքի բնակչությանը մշտական սարսափի մեջ պահելու համար, թշնամին Լենինգրադին մոտ շրջաններից հեռաձիգ, ծանր հրանոթներով պարբերաբար ռմբակոծում էր քաղաքը։

Տոսնոյի կողմից սեպտեմբերի 4-ին թշնամին 240 մմ տրամաչափի հրանոթներից քաղաքի վրա արձակեց առաջին արկերը։ Երեք օրվա ընթացքում սպանվեց 53 և վիրավորվեց 101 մարդ[167]։ Թշնամու ավիացիայի և հեռաձիգ հրանոթների Լենինգրադի ռմբակոծությունը շարունակվեց մինչև շրջափակման լրիվ վերացումը։

Թշնամու հեռահար հրանոթների դեմ պայքարելու համար ստեղծվեցին հրետանային հատուկ խմբեր՝ հրետանու գեներալ-մայոր Վ. Պ. Սվիրիդովի հրամանատարությամբ։ Այդ պատասխանատու գործում ընդգրկվեցին հմուտ-մասնագետ հրետանավորներ՝ դեր-ծովակալ Ի. Ի. Գրենը, գեներալ Մ. Ս. Միխալկինը, կորպուսային հրետանային գնդերի հրամանատարներ՝ փոխգնդապետներ Ի. Պ. Պոտիֆորովը, Ն. Ն. Ժդանովը, Ս. Վ. Գնիդինը և Ն. Պ. Վիտտեն։ Մարտական ղենքը հմտորեն օգտագործելու օրինակներ ցույց տվեց վերջինիս հրամանատարությամբ գործող, ինտերնացիոնալ կազմ ունեցող 47-րդ կորպուսային հրետանային գունդը, որը, պետական սահմանից սկսած, պաշտպանական մարտեր մղելով թշնամու դեմ, Մերձբալթիկայից հասել էր Լենինգրադ։ Կորպուսային հրետանային գունդը սկզբից մինչև վերջ մասնակցեց քաղաքի հերոսական պաշտպանությանը և մյուս հակամարտկոցային հրետանային գնդերի հետ միասին դարձավ Լենինգրադի անխոցելի կրակային վահանը։ Գունդը մինչև 1942թ. հունվարի 15-ը ոչնչացրեց 7220 գերմանական զինվոր ու սպա, 73 թնդանոթ ու ականանետ, 21 տանկ, 64 ավտոմեքենա, 16 դզոտ, 9 դիտակետ և այլն[168]։ Իրենց լավ դրսևորեցին արդեն մարտական փորձ ձեռք բերած, կոփված ռազմիկներ Ֆյոդոր Կորովինը, Վլադիմիր Լուշենկոն, Միխայիլ Գրյազնովը, Իվան Կուլիշը, Պյոտր Լիսաբոյը, Վասիլի Ռիշակինը, Երեմ Վարոսի Մարտիրոսյանը, Վարազդատ Աղատի Խաչատրյանը, Ռուբեն Սիմոնի Եղիազարյանը, Մեխակ Ավետիսի Հովհաննիսյանը, Յոլակ Ավոյի Մեսոյանը, Նավասարդ Ստեփանի Ստեփանյանը, Պապիկ Կարապետի Ղազարյանը, Վազգեն Մարտիրոսի Վարդանյանը, Նշան Հով-

---

166 «Военно-исторический журнал», 1968, № 9, с. 5.

167 Դ. Վ. Պավլով, Լենինգրադը պաշարման մեջ, էջ 48։

168 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 14-րդ գվ. հրետ. գունդ, ց. 456578, գ. 2, թ. 20։

հանելի Մայիլյանը, Թոռնիկ Միհրանի Աղասյանը, Մամանդար Իսմայիլովը, Յուլդաշ Ռուզիևը, Զախար Նասաձեն, Աբդրաշա Իսկանդարովը և շատ ուրիշներ։ Լենինգրադը ոմբակոծող թշնամու հեռահար հրանոթների ոչնչացման գործում հակամարտկոցային հրետանային նշանառու կրակի համար 5-րդ մարտկոցի 152 մմ հրանոթների հրամանատարներ Ա. Ի. Զևելևին, Ի. Պ. Սուրժակին, Թ. Մ. Աղասյանին և Ա. Լ. Օմելնիցկուն շնորհվեց «Նշանառուական հրանոթի հրամանատարներ» կոչումը[169]։

Գնդի հրամանատարությանը հսկայական աջակցություն էին ցույց տալիս կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները։ Մեկ տարվա ընթացքում 204 լավագույն ռազմիկներ ընդունվեցին Համկ(բ)կ շարքերը, 108-ը դարձան կուսակցական անդամության թեկնածուներ։ Կոմերիտմիության շարքերն ընդունվեց 79-ը հոգի։ Պատրաստվեց 58 նշանառու և 72 ավտովարորդ։ Այդ ժամանակաշրջանում ցուցաբերած արիության համար 78 ռազմիկներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով[170]։ Հակամարտկոցային կրակի ժամանակ Մեխակ Հովհաննիսյանի հաշվարկը երեք ժամ անընդհատ կրակեց թշնամու հեռաձիգ հրանոթների դիրքերի վրա և ստիպեց նրան դադարեցնել կրակը։ Ռուբեն Եղիազարյանի հաշվարկի վրա թշնամին արձակեց 300 արկ, բայց չկարողացավ ստիպել խիզախ հրետանավորին դադարեցնել կրակը[171]։ Եղիազարյանը դիպուկ նշանառությամբ ոչնչացրեց երկու հրամանատարական դիտակետ, երեք ձեռքի գնդացիր, 50 հիտլերական, արձակած 38 արկից 36-ը հասցրեց նպատակակետին[172]։ Նա այնուհետև ոչնչացրեց թշնամու 76 մմ երկու ծանր հրանոթ և խոշոր տրամաչափի գնդացրային մեկ դզոտ[173]։

Հրետանային գնդի անձնակազմի մարտական ու բարոյական ոգին բարձր էր, բոլոր օղակներում տիրում էր ամուր կարգապահություն ու զգոնություն։ Յուրաքանչյուր մարտիկ պատրաստ էր նեղ պահին օգնության հասնել ընկերոջը, փրկել նրա կյանքը։ Հակամարտկոցային մեկամարտերից մեկում թշնամու հեռաձիգ հրանոթից արձակած արկի պայթյունը հողաթաղ արեց 9-րդ մարտկոցի հրանոթներից մեկի անձնակազմը։ Մինչև հարևան հրանոթի անձնակազմի օգնության հասնելը, հր-

---

169 Նույն տեղում, թ. 43—44։

170 Նույն տեղում, ֆ. 14-րդ գվ. հրետ. գունդ, ց. 595975, գ. 1, թ. 27-28։

171 «Улар по врагу», 11 мая 1942 г.

172 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 14-րդ գվ. հրետ. գունդ, ց. 456578, գ. 2, թ. 45։

173 Նույն տեղում, ֆ. 33, ց. 686044, գ. 3606, թ. 266։

բաշքով փրկված շարքային Յուլդաշ Ռուզիևը վտանգելով կյանքը, հողի տակից հանեց վիրավոր 5 հրետանավորներին և տեղափոխեց ապահով տեղ։ Խիզախ ուղբեկ ռազմիկը պարգևատրվեց «Մարտական ծառայության համար» մեդալով[174]։

Լենինգրադի պաշտպանության գործում դրսևորած մեծ ծառայությունների համար Գերագույն գլխավոր հրամանատարի հրամանով 1942թ. մարտին գունդը վերակազմվեց գվարդիականի և սկսվեց կոչվել 14-րդ գվարդիական հրետանային գունդ։ Հրետանային այդ զորամասը մասնակցեց Մեծ հայրենականի հաղթական ճակատամարտերին և նրա փառապանծ անձնակազմից պարգևատրվեցին. Սուվորովի 3-րդ աստիճանի շքանշանով—1, Կարմիր դրոշի—23, Կուտուզովի 3-րդ աստիճանի—1, Ալեքսանդր Նևսկու—12, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի—54, 2-րդ աստիճանի—89, Կարմիր աստղի—264, Փառքի 3-րդ աստիճանի—39, «Արիության համար» մեդալով—326 և «Մարտական ծառայության համար» մեդալով—318[175]։

Լենինգրադը գնդակոծող հակառակորդի «Ռեյնմետալ», «Տոլստայա Բերտա» և դրանց նման հեռաձիգ ծանր հրանոթների դեմ հաջողությամբ էր մարտնչում Պուլկովոյի բարձունքի մոտ գիրքեր գրված 42-րդ բանակի 541-րդ հաուբիցային առանձին հրետանային գունդը։ Հակամարտկոցային պայքարում հատկապես աչքի ընկավ համամյուեցի (այժմ՝ Սպիտակ) ավագ սերժանտ Գրիգոր Գալուստի Ասատրյանի թնդանոթային հաշվարկը։ Նա իր մարտական ընկերներ Ն. Ֆ. Կուզովկինի և Ս. Ա. Բլենկոյի հետ միասին նշանառու կրակով ոչնչացրեց թշնամու մի շարք կրակակետեր։ Աչքի ընկան նաև հաշվարկների հրամանատարներ Վ. Ալավերդյանը և Ռ. Կարապետյանը։ Յուցաբերած արիության համար Գրիգոր Ասատրյանը պարգևատրվեց «Արիության համար» մեդալով, իսկ ստորաբաժանման կուսակցական կազմակերպությունը նրան ընդունեց ՀամԿ(բ)Կ շարքերը։ 1943 թ. վերջին գունդը ստացավ ավելի կատարյալ զենք՝ 152 մմ տրամաչափի թնդանոթներ։ 80-րդ ծանր հաուբիցային հրետանային բրիգադի կազմում Ասատրյանի հաշվարկը մասնակցեց Լենինգրադի բլոկադայի լրիվ վերացման սովետական զորքերի մարտական գործողություններին։ Գետանցեց Լուգան, մասնակցեց Պսկովի ազատագրմանը, հասավ Տալլինի մատույցները, իսկ հետո իր հրետանավորներով արդեն որպես հրետանային դասակի հրամա-

---

174 Նույն տեղում, ֆ. 14-րդ գվ. հրետ. գունդ, ց. 270319, գ. 2, թ. 19։

175 Նույն տեղում, ց. 595975, գ. 1, թ. 41։

նատար կուվեց Լենինգրադի համար։ 1945 թ. ապրիլին նրա հրետանային դասակն աջակցում էր Բեռլինը գրոհող մեր հրաձգային զորամասերին։ Հայրենիքը բարձր գնահատեց խիզախ հրետանավորի մարտական ծառայությունը։ Նա պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[176]։

Լենինգրադցիները և ռազմաճակատի զորքերն այդ ծանր օրերին մշտապես զգում էին մեր բազմազգ երկրի բարոյական ու նյութական աջակցությունը, եղբայրական ժողովուրդների ջերմությունն ու հոգատարությունը։ Եվ դա ավելի լիցքավորում, նոր թափ ու եռանդ էր հաղորդում նրա հերոս պաշտպաններին, ամրապնդում վստահությունը սեփական ուժերի նկատմամբ և մղում նոր սխրագործությունների՝ հանուն սիրելի քաղաքի։

Լենինգրադի հերոս պաշտպանները բազմաթիվ նամակներ էին ստանում «Մեծ երկրից», որտեղ սովետական մարդիկ կոչ էին անում դրսևորել դիմացկունություն, արիություն և խոստանում իրենց եղբայրական աջակցությունը։ Մեծ արձագանք ու լայն տարածում ստացավ Ղազախստանի ժողովրդական բանաստեղծ Ջամբուլի՝ «Լենինգրադցիներ, իմ երեխաներ, Լենինգրադցիներ՝ իմ հպարտություն» անմոռանալի ուղերձը, որը հատկապես մեծ ազդեցություն գործեց ղազախ ռազմիկների վրա, բարձրացրեց նրանց բարոյական ոգին և էլ ավելի բորբոքեց ատելությունը թշնամու նկատմամբ։ «Ես կարդացի քո նամակը, Ջամբուլ,—գրում է հայտնի նշանառու ժուլսենբայ Շինբեկովը,—և այն այրեց իմ սիրտը և ես նետվեցի մարտի։ Մարտում ֆաշիստական գնդակը սպանեց ղազախ ռազմիկ Ժուսուպովին։ Նա սպանել էր 50 գերմանացի։ Նրա գերեզմանի մոտ հրամանատարը բարձրացրեց հրացանը, տվեց ինձ և ասաց. «վրեժ լուծի»։ Իմ շնորհիվ 170 գերմանացիներ դադարեցին գոյություն ունենալուց[177]։

Հերոս մարտնչողներին իր հայրենասիրական բանաստեղծությամբ դիմեց նաև հայ գրող Սուրեն Վահունին.

«Քո կառուցման ահեղ օրից
Դեռ չի հաղթել քեզ թշնամին,

---

176 Գրիգոր Ասատրյանը այժմ բնակվում և աշխատում է Երևանում։ Աշխատանքային լավագույն ցուցանիշների համար նա պարգևատրվել է Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով։

177 «Во славу Родины», 21 ноября 1942 г.

Եվ քո նախկին թափով նորից
Կռվում ես դու
Կռվում ես դու և այդ պահին
Ֆինլանդական կայարանում
Կանգնած իր կուռ զրահապատին
Լենինն է քեզ հպարտ նայում։
Հպա՜րտ կռվիր, վսեմ բաղաք
Մերն ես եղել ու մերն ես դու
Ահա շողում է քեզ համար
Մեր կայծակ սուրը»[178]։

Բացի նամակներից, 1942թ. սկզբից սկսած երկրի տարբեր ծայրերից Լենինգրադ էին գալիս պատվիրակներ՝ Ղազախստանից, Ուզբեկստանից, Կիրգիզիայից, Կրասնոյարսկի երկրամասից, Օմսկի, Սարատովի, Յարոսլավլի և Վոլոգդայի մարզերից։ Նրանք բերում էին տաք հագուստներ, պարենամթերք, ծանրոցներ, հանդիպումներ էին ունենում բանվորների, Լենինգրադի ռազմաճակատի և Բալթյան կարմրադրոշ նավատորմի ռազմիկների հետ։ Ամենուրեք այդ հանդիպումները վերածվում էին սովետական բազմազգ ժողովուրդների եղբայրության ու բարեկամության ցույցերի։

1942 թ. առաջին ամիսներին Լենինգրադ եկան Ղազախստանի պատվիրակները՝ հանրապետության Գերագույն սովետի նախագահության նախագահ Ա. Կաղակպաևի գլխավորությամբ։ Նրանք բերել էին 1428 տոննա պարենամթերք[179] և Ղազախստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի, Մինիստրների խորհրդի ու Գերագույն սովետի նախագահության նամակն ուղղված հերոս պաշտպաններին։ «Թող այդ նվերները հիշեցնեն ձեզ,— գրված էր նամակում,— որ մեր մտքերը, մեր լավագույն զգացմունքները միշտ ձեզ հետ են։ Ընդունեք մեր նվերները, որպես եղբայրական ձեռքի օգնություն, որպես ձեզ հետ մեր միասնության արտահայտություն, որպես անկոտրում ցանկություն՝ արագացնել հաղթանակը թշնամու դեմ»[180]։ Իսկ շրջափակման ճեղքումից հետո 1943 թ. Ղա-

---

178 «Սովետական Հայաստան», 1944, 2 հոկտեմբերի։

179 П. С. Белан, Казахстан в боях за Ленинград. Алма-Ата, 1973, с. 26—27.

180 «Казахстан в период Великой Отечественной войны Советского Союза 1941—1945 (Сборник материалов и документов)», Алма-Ата, т. I, 1964, с. 588.

զախստանից նորից երկու անգամ Լենինգրադ եկան պատվիրակներ, իրենց հետ բերելով 108 վագոն պարենամթերք[181]։ Ղազախստանը մեծապես օգնեց նաև Լենինգրադի մարզի շրջաններին, ուղարկելով 63 հազար գրուպ ճարպ, 6000 ցենտներ միս, 526 խոշոր եղջերավոր անասուն, 279 ձի, 1854 ոչխար, 800 խոզ, շատ այլ մթերքներ և 2 միլիոն ռուբլի դրամ[182]։ 1942 թ. մարտին Լենինգրադ ժամանեցին Կիրգիզիայի պատվիրակները, որոնք բերել էին 48 վագոն պարենամթերք[183], մայիսին՝ Ուզբեկստանի պատվիրակները։ Նրանք հանդիպումներ ունեցան Լենինգրադի բանվորների հետ, եղան Լենինգրադը պաշտպանող զորամասերում, նվերներ հանձնեցին առավել աչքի ընկած ռազմիկներին։ Ստորաբաժանումներից մեկում ընդունելով նվերը, ուզբեկ Աբդուլա Նաշանովն ասաց. «Ես ուզբեկ եմ և խնդրում եմ հաղորդել մեր ժողովրդին, որ մյուս մարտիկների հետ պաշտպանում և պետք է պաշտպանեմ սովետական յուրաքանչյուր կտոր հողը։ Մարտերից մեկում ես անձամբ ոչնչացրել եմ թշնամու տանկը և նրա անձնակազմը։ Ռուսներն ու ուզբեկները, ղազախները, թաթարները, վրացիները, բոլորս պատ ենք կանգնել մեծ քաղաք Լենինգրադին»[184]։

Լենինգրադի հերոսամարտերին հետևում էր ամբողջ երկիրը։ Առանց հաշվի առնելու հեռավորությունն ու դժվարությունները սովետական մարդիկ ձգտում էին հնարավորության սահմաններում օգնել հեղափոխության մայրաքաղաքին։

1941թ. վերջերին, երբ թշնամին կենդանի ուժի ու տեխնիկայի ծանր կորուստներ կրելով մոտենում էր Կովկասին, Երևանի աշխատավորները Բալթյան նավատորմայիններին ուղարկեցին մեծ թվով ծանրոց-նվերներ՝ թուզթ, ծխախոտ, տաք հագուստեղեն և այլն։ «Թանկագին բալթիկցիներ,—գրված էր երևանցիների նամակում,—մենք օր-օրի հետևում ենք ձեր քաջագործություններին, ոգևորվում դրանցով։ Մարդկության ոխերիմ թշնամու՝ ֆաշիզմի դեմ մղվող մարտերում դուք անօրինակ սխրագործություն եք կատարում։ Մենք՝ թիկունքում մնացածներս ձեզ հետ ենք։

Արևավառ Հայաստանի աշխատավորներն այժմ ավելի մեծ թափով

---

181 *П. С. Белан,* Казахстан в боях за Ленинград, с. 28.

182 *А. Жумасултанов,* Братская помощь трудящихся Казахстана Ленинграду и Ленинградской области в Великой Отечественной войне. Известия АН КазССР, вып. 2, с. 89—90.

183 *А. В. Буров,* Блокада день за днем, с. 158.

184 *В. А. Мурадян,* Боевое братство, с. 104.

հավաքում են սոցիալիստական դաշտերի առատ բերքը։ Ընդունեք մեր այս համեստ նվերը, այդ մեր անկեղծ սիրո ու նվիրվածության ցուցադրումն է ձեզ։ Կռվեցեք է՛լ ավելի արիաբար և խիզախությամբ։ Փառք հերոս բալթիկցիներին»։ Ղամարլուի շրջանի (այժմ՝ Արտաշատ) կոմերիտականները 1943 թ. Բալթյան կարմրադրոշ նավատորմի հասցեով ուղարկեցին 71500 ռուբլի և 75000 ռուբլու պետական փոխառության պարտատոմս՝ ռազմանավ կառուցելու համար։ Ուղարկված միջոցներով կառուցվեց զրահանավակ և նրան տրվեց «Հայաստանի կոմերիտմիություն» անունը, իսկ ներսում փակցվեց հուշատախտակ, ուր նշվեց, որ նավակը կառուցվել է Ղամարլուի կոմերիտականների միջոցներով[185]։

Սովետական բազմազգ ժողովուրդների եղբայրական ջերմ զգացմունքներն ու օգնությունը, պատվիրակների ժամանումը և նրանց հանդիպումները հերոս պաշտպանների հետ ամբողջությամբ պրոպագանդվում էին Լենինգրադի թերթերում ու ռազմաճակատի մամուլում։ «Փորձության ահեղ օրերին,—գրում է «Ленинградская правда» թերթը,— նոր, պայծառ կրակով բոցավառվեց ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը...

Հերոս լենինգրադցիներ՛ը, սովետական ամբողջ երկիրը մեզ հետ է։ Մեզ հետ են Մոսկվայի ու Ուրալի, Դոնբասի ու Բաքվի, Կիևի ու Խարկովի բանվորները, Ուկրաինայի ու Կուբանի, Պովոլժիեի ու Սիբիրի կոլտնտեսականները, մեզ հետ են Կովկասի լեռնականներն ու անդրբևեռյան որսորդները, Ադրբեջանի ու Ուզբեկստանի բամբակագործները։ Լենինգրադ քաղաքի պաշտպանությունը համաժողովրդական գործ է...

Կրտսեր սերժանտ, ուկրաինացի Եժկովը չէր մոռանում, թե ինչպես գերմանացիները 1918 թ. սպանեցին իր հորը։ Նա ասում էր. «Ես պետք է պաշտպանեմ Լենինգրադը մինչև արյանս վերջին կաթիլը։ Լենինգրադ քաղաքը իմ քաղաքն է»։ «Լենինգրադ քաղաքը իմ քաղաքն է», կրկնում և մարտական ու փառապանծ գործերով այդ էին հաստատում և՛ ադիգեյցի հրետանավոր Աբաձեն, որը ուղիղ նշանառությամբ ոչնչացնում էր թշնամու տանկերը, և՛ լեյտենանտ, լեռնական Տաղաևը, որն իր դիպուկ կրակով վնասում էր թշնամու ինքնաթիռները, և՛ կապավոր ադրբեջանցի Կուլիզադեն, և՛ մեր Լենինգրադի ռազմաճակատի ուրիշ շատ հերոսներ...

---

185 «Սովետական Հայաստան», 11 օգոստոսի 1941 թ.։ „Советская Армения в годы Великой Отечественной войны", Сборник документов и материалов, Ереван, 1975, с. 243.

Մեզ հետ է ողջ երկիրը, մեզ հետ է ամբողջ առաջավոր մարդկությունը: Մենք կհաղթենք»[186]:

Այդ ծանր օրերին Լենինգրադը մշտապես գտնվում էր Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտկոմի և Պաշտպանության պետական կոմիտեի ուշադրության կենտրոնում: Արվում էր ամեն ինչ Լենինգրադի վիճակը թեթևացնելու համար: Պաշարված քաղաքի բնակչությանը և Լենինգրադյան ռազմաճակատի զորքերին պարենամթերքով ապահովելու ղեկավարման գործն իրականացնում էր Պաշտպանության պետական կոմիտեի անդամ Ա. Ի. Միկոյանը: Նրա կարգադրությամբ Թաթարական ԻՍՍՀ-ից, Վոլոգդայի, Յարոսլավլի, Կոստրոմայի, Կիրովի և այլ մարզերից Լենինգրադ ուղարկվեց 5500 տոննա սերմացու կարտոֆիլ[187]: *Ա. Միկոյանի միջամտությամբ 1941 թ. դեկտեմբերին, կարճ ժամանակում, վերացվեց Յարոսլավլ—Ռիբինսկ երկաթուղային ճանապարհի հատվածում զինվորական էշելոնների կուտակման պատճառով առաջացած խցանումը և 50000 տոննա ալյուր ու 1200 տոննա այլ մթերքներ ժամանակին տեղափոխվեցին Լադոգայի մյուս ափը*[188]: *«Անտարակույս է նաև այն,—գրում է Դ. Վ. Պավլովը,—որ Ա. Ի. Միկոյանի եռանդուն և հեղինակավոր միջամտությունն օգնում էր պարենը տեղ հասցնելը արագացնելուն: Նա ամեն օր հետևում էր գնացքների բարձման և շարժման ընթացքին և ամենափոքր խոչընդոտի դեպքում էլ անձամբ մասնակցում էր այս կամ այն արգելքի վերացմանը»*[189]:

«Դիստրոֆիան, այդ հավոր հիվանդությունը, որ մասսայականորեն հնձում էր բնակիչներին, չէր խնայում նաև երեխաներին: Նրանց փրկելու համար Ա. Միկոյանի կարգադրությամբ 1000 ցեղական կով ուղարկվեց Լենինգրադ»[190]:

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը լիստ արժանվույն գնահատեց նրա ծառայությունները: ՍՍՀՄ Դերագույն սովետի նախագահության 1943թ. սեպտեմբերի 30-ի հրամանագրով Ա. Ի. Միկոյանին շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Հերոսամարտի տարեգրության մեջ պատվավոր տեղ է գրավում

---

186 «Ленинградская правда», 11 сентября 1941 г.

187 *Н. А. Моньков*, В кольце блокады, Л., 1961, с. 115.

188 Դ. Վ. Պավլով. *Լենինգրադը պաշարման մեջ, էջ 224:*

189 *Նույն տեղում, էջ 225:*

190 «Оборона Ленинграда. 1941—1944 (Воспоминания и дневники участников)», с. 717.

ռազմածովային նավատորմի խոշոր գիտակ, ՍՍՀՄ նավատորմի ծովակալ Հ. Ս. Իսակովի անունը։ Լինելով Հյուսիսարևմտյան, իսկ այնուհետև Լենինգրադյան ռազմաճակատի հրամանատար Կ. Ե. Վորոշիլովի տեղակալը, Հ. Ս. Իսակովը պատերազմի առաջին օրից մինչև 1941թ. սեպտեմբերը ղեկավարեց Բալթյան ծովային թատերաբեմում տեղի ունեցած բոլոր ռազմական գործողությունները։ Նրա անմիջական ղեկավարությամբ կատարվեց Բալթյան կարմրադրոշ նավատորմի նավերի տեղափոխումը Տալլինից Լենինգրադ։ Իսկ երբ թշնամին մոտեցավ Լենինգրադի անմիջական մատույցներին, նա որպես ռազմածովային գծով ռազմաճակատի հրամանատարի տեղակալ, նավատորմի հրամանատար փոխծովակալ Տրիբուցի և նավատորմի հրետանու պետ Գրենի հետ միասին նևայի վրա ռազմանավերն այնպես տեղադրեցին, որպեսզի հզոր կրակը շրջափակման ամբողջ ընթացքում հուսալիորեն աջակցի համառ մարտեր մղող կարմիր բանակի զորամասերին։ Այդ օրերին նրան հաճախակի կարելի էր տեսնել Լենինգրադի նավամատույցներում, ռազմանավերի վրա, ծովային առափնյա պաշտպանական կառույցների բանվորների շրջանում։ Նա իր խորհուրդներով, դիտողություններով և ցուցումներով օգնում էր հրամանատարներին՝ վերացնելու տեղ գտած թերությունները ու վրիպումները։

«Խորապես համոզված եմ,—գրում է Սովետական Միության մարշալ Գ. Կ. Ժուկովը,—որ Հ. Ս. Իսակովը եղել է Սովետական Միության ռազմածովային նավատորմի ամենաուժեղ ու տաղանդավոր զորապետներից մեկը։ Նրա ղեկավարությամբ Բալթյան նավատորմի հրամանատարությունն ու հրետանավորները կարճ ժամկետում կազմեցին ծովային հետևակի 6 առանձին բրիգադ, Լենինգրադյան ռազմաճակատը ուժեղացնելու համար։ Ռազմաճակատի հրետանու պետ գեներալ Վ. Պ. Սվիրիդովի հետ միասին նա արագ կազմակերպեց նավատորմի և ռազմաճակատի փոխգործողությունը, ստեղծելով հեռահար հուժկու հակամարտկոցային խումբ»[191]։

1942 թ. սեպտեմբերի 9-ին Լենինգրադյան ռազմաճակատի ռազմական խորհրդի որոշմամբ Լադոգա լճով Լենինգրադ պարենամթերք տեղափոխելու ղեկավարությունը հանձնարարվեց նավատորմի ծովակալ Հ. Ս. Իսակովին։ Լճի անմարդաբնակ ափերի մոտ նրա ղեկավարությամբ շինարարական մեծ աշխատանք ծավալվեց։ Հաղթահարելով տեղանքի բնական դժվարությունները, շատ կարճ ժամանակում նավաստիների, զինվորների ու բանվորների ջանքերով փոխադրանավերի համար կա-

---

[191] Գ. Կ. Ժուկով, *Հիշողություններ և խորհրդածություններ*, Մ. 1978, էջ 504։

ուղղվեցին նավամատույցներ, բեռների պահեստավորման հարմարություններ, կարգավորվեցին դեպի Լենինգրադ տանող խճուղային ճանապարհները և այլն։ Հ. Ս. Իսակովը միաժամանակ ղեկավարում էր Լենինգրադի պաշտպանությունը լճի կողմից։ Այս երկու շատ կարևոր առաջադրանքները նա կատարեց պատասխանատվության մեծ զգացումով։ Նրա եռանդուն աշխատանքի շնորհիվ զգալիորեն ավելացավ բեռների տեղափոխումը Լենինգրադ։ Այս կապակցությամբ Սովետական Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանը գրում է. «Իսակովի, որպես մեծ կամք, երկաթե ներվեր ու արտասովոր կազմակերպչական տաղանդ ունեցող զինվորական ղեկավարի ընդունակությունները երևան եկան պաշարված Լենինգրադում։ ...Իվան Ստեպանովիչը մեծ ուշադրություն ու եռանդ նվիրեց Լճային շրջանի և Լենինգրադի անմիջական պաշտպանության ուժեղացման հարցերին, այդ նպատակի համար ընդգրկելով ծովային ավիացիան, նավատորմի հրետանին, ծովային հետևակից կազմված դեսանտայիններին և այլն։ Լենինգրադցիները Ի. Ս. Իսակովին ճանաչում են որպես Լադոգա լճի վրայով փոխադրումների ակտիվ կազմակերպիչներից մեկի»[192]։ Դ. Վ. Պավլովը «Լենինգրադը պաշարման մեջ» գրքում գրում է. «Այն հողագործի նման, որն առաջին ակոսն է քաշում խոփի երես չտեսած հողի մեջ, նա խորացրեց վայրի լճի քարքարոտ հատակը և նավակայաններ կառուցեց նրա լերկ ափին։ Ամեն օր նա հինգ-յոթ անգամ շրջում էր ապագա նավահանգստի տարածքում, խրախուսելով ու ոգեշնչելով հոգնած բանվորներին, զինվորներին, նավաստիներին։

Իվան Ստեպանովիչին հաջողվեց շատ բան անել և ամենից առաջ ավելացնել բեռների ներբերումը, բայց նրան չվիճակվեց մինչև վերջ հասցնել հաջող սկսած գործը։ Բալթիկ ծովում գերմանացիների ակտիվ գործողությունները հաշվի առնելով, Ի. Ս. Իսակովը վերադարձվեց իր պարտականությունների կատարմանը»[193]։

1941 թ. վերջին կարմիր բանակի հրամանատարությունը նպատակահարմար գտավ նրան նշանակել Հյուսիսային-Կովկասյան ռազմաճակատի հրամանատարի տեղակալ։

1941 թ. սեպտեմբերի 12-ից դեկտեմբերի 1-ը Լադոգա լճով Լենինգրադ տեղափոխվեց 60 հազար տոննա պարենամթերք, ռազմամթերք և վառելիք, «Մեծ երկիր» տեղափոխվեց 39 հազար մարդ[194]։ Իսկ երբ լիճը սառեց, բեռների փոխադրումը շարունակվեց օդով։ Այդ գործում ընդ-

---

192 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 2, էջ 60։

193 Դ. Վ. Պավլով, Լենինգրադը պաշարման մեջ, Երևան, 1970, էջ 60—61։

194 *В. Е. Зубаков*, Героический Ленинград, с. 71.

գբրկվեցին 70 փոխադրական ինքնաթիռներ՝ Ս. Ի. Շարիկինի հրամանատարությամբ։ Ամեն օր Լենինգրադ էր տեղափոխվում 100-150 տոննա բեռ[195]։

Սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 7-ը Լենինգրադ տեղափոխվեց 27 հազար տոննա ցորեն, 17 հազար տոննա ալյուր, ձավար և մակարոն, 20 հազար տուփ պահածո, 1 միլիոն տուփ խտացրած կաթ և այլ պարենամթերք[196]։ Բայց դա էլ շատ չնչին էր բավարարելու բնակչության ու զորքի նվազագույն պահանջները։

Նոյեմբերի 19-ին Լենինգրադյան ռազմաճակատի ռազմական խորհուրդը որոշում ընդունեց ավտոմեքենաներով փոխադրումներ կազմակերպել Լադոգա լճի սառույցի վրայով։ Լենինգրադի համար կենսական նշանակություն ունեցող սառցե ճանապարհը շահագործման հանձնվեց շատ կարճ ժամանակում։ Ճանապարհի ղեկավար նշանակվեց ինտենդատական ծառայության փորձված աշխատող գեներալ-մայոր Ա. Մ. Շիլովը։ Բեռների փոխադրումը իրականացնում էր 17-րդ ավտորբիգադը Ի. Ա. Լաշինինի հրամանատարությամբ։ Նոյեմբերի 22-ին Լենինգրադից «Մեծ երկիր» ուղևորվեց առաջին ավտոշարասյունը, մայոր Վ. Ա. Պորչունովի ղեկավարությամբ։ Նրա կազմում էր նաև 389-րդ ավտոգումարտակի ավտովաշտը՝ Համլետ Վարդանի Մաքսապետյանի հրամանատարությամբ։ Հաջորդ օրը վարորդները Լենինգրադ տեղափոխեցին 33 տոննա պարենամթերք։ Այսպես սկսվեց սովետական վարորդների և նրանց սպասարկող անձնակազմի անձնազոհ աշխատանքը, հերոսական ջանքերը՝ թեթևացնելու Լենինգրադի հոգսերը։ Դիշեր ու ցերեկ ավտոճանապարհին էին հրամանատարներ, մայորներ՝ Ա. Դ. Սուխովեյը, Վ. Ա. Պորչունովը, կապիտաններ՝ Լ. Ա. Զակլինովը, Վ. Ա. Տրուբչենկոն, ավագ լեյտենանտներ՝ Ի. Դ. Իգնատևը, Դ. Ս. Պոպովը և շատ ուրիշներ։ Այդ օրերին հսկայական աշխատանք կատարեց ավտոճանապարհի քաղաքական բաժինը ավագ գումարտակային կոմիսար Մ. Դ. Օրլովսկու ղեկավարությամբ։ Լարված էին աշխատում ստորաբաժանումների կոմիսարներ Պ. Ս. Գլուխովը, Լ. Վ. Ժելդինը, Ի. Ս. Սերգեևը, Ֆ. Կ. Ռումյանցևը, Ա. Մ. Պետրոսյանը, Վ. Ի. Կորոտկովը, Յե. Ա. Կոֆմանը, Ն. Մ. Կոլիվերդովը և ուրիշներ։ Անձնազոհությամբ ու մեծ եռանդով էին աշխատում վարորդներ Յե. Ֆ. Վասիլևը, Մ. Ե. Տվերդոխլեբը, Ա. Դ. Տրիխոնովիչը, Ս. Պ. Կոնդրինը, Սմագուլ Կարիևը, Մ. Ս. Կոսովը,

---

[195] «Военно-исторический журнал», 1973, № 2, с. 89—92.

[196] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 265.

Կոշկոմբայ Օսպանովը, Ն. Ի. Վորոնոնիկովը, Գ. Վ. Վարլամովը, Վ. Պ. Օվեչկինը, Գ. Պ. Ցարենկոն, Վ. Տ. Կարգինը, Ն. Վ. Կուզնեցովը և ուրիշներ։ Այդ անձնազոհ մարտիկները հաղթահարելով ամեն տեսակ դժվարություններ ու հոգնածություն, ձգտում էին որքան հնարավոր է շատ բեռ փոխադրել, քաջ գիտակցելով, որ իրենց տեղափոխած յուրաքանչյուր կիլոգրամ սննդամթերքը կփրկի մի կյանք։ Ավտոմեքենաների անխափան աշխատանքն ապահովելու համար սառցե ճանապարհին ստեղծվել էին մի քանի տեխնիկական սպասարկման կայաններ։ Արդյունավետ էին աշխատում հավաքման ցեխի պետ Սոմինիչը, գլխավոր նախագծող Ասեսկը, գլխավոր տեխնոլոգ Կրիվոնոսովը, էլեկտրացեխի պետ Հովհաննիսյանը, բանվորներ Լոսևը, Պրոկոֆևը, Իպատովը, Օլենիչևը և ուրիշներ։

Օդից ավտոճանապարհի անվտանգությունն էր ապահովում Լենինգրադի ռազմաճակատի և Բալթյան կարմրադրոշ նավատորմի ավիացիան։ Հերոսաբար կռվեցին օդաչուներ Լ. Գ. Բելոուսովը, Վ. Ի. Մատվեևը, Պ. Ա. Պիլյուտովը, Խանկոյի հերոս Ա. Յու. Բայսուլթանովը, Պ. Ա. Պոկրիշևը, Պ. Պ. Կոժանովը, Յե. Պ. Վորոնցովը, Գ. Ա. Ժիդովը, Վ. Ի. Պետրովը, Յե. Ա. Ցիգանովը, Գ. Գ. Լագուտկինը և շատ ուրիշներ։

Օդային մարտերից մեկի ժամանակ խփվեց կոմերիտական Սեմյոն Գորգալի ինքնաթիռը։ Մահացու վերք ստացած օդաչուն ճիգերի մեծ լարումով կարողացավ ինքնաթիռը իջեցնել սառույցի վրա և կյանքի վերջին րոպեին սեփական արյունով գրեց. «Հայրենիք, կոմերիտմիություն, ես մարտնչել եմ թշնամու դեմ ինչպես երդվել եմ կոմերիտական տոմսը ստանալիս, չխնայելով սեփական կյանքս։ Ես մեռնում եմ, բայց գիտեմ, որ մենք կհաղթենք։ Ես ազնվորեն կատարեցի իմ պարտքը։ Մնաք բարով բարեկամներ։ Մնաք բարով լենինգրադցիներ։ Մեռնում եմ հանուն հայրենիքի։ Հաղթանակը մերը կլինի»[197]։

«Կյանքի ուղի» անունը ստացած «Սառցե ճանապարհի» վրա աշխատող և նրա անվտանգությունն ապահովող սովետական ռազմիկները, հաղթահարելով աներևակայելի դժվարություններ ու զրկանքներ, անում էին ամեն ինչ՝ պաշարվածների վիճակը թեթևացնելու համար։ 1942 թ. հունվարի 5-ին Լենինգրադյան ռազմաճակատի ռազմական խորհրդի անդամ Ա. Ա. Ժդանովը դիմեց նրանց. «...Լենինգրադի ու ռազմաճակատի անունից խնդրում եմ ձեզ նկատի ունենալ, որ դուք դրված եք մեծ ու

---

[197] «Страны Балтики», 11 апреля 1958 г.

պատասխանատու գործի վրա և կատարում եք պետական ու ռազմական առաջնակարգ կարևորություն ունեցող խնդիր։

Բոլոր նրանք, ումից կախված է ճանապարհի նորմալ աշխատանքը՝ վարորդները, կարգավորողները, ճանապարհը ձյունից մաքրողները, նորոգողները, կապավորները, հրամանատարները, քաղաշխատողները, ճանապարհի վարչության աշխատողները՝ յուրաքանչյուրն իր պոստում պետք է իր գործը կատարի այնպես, ինչպես մարտիկն առաջավոր դիրքում։

Գործի լծվեցեք այնպես, ինչպես վայել է սովետական հայրենասերներին՝ աղնվորեն, սրտով, ուժեր չխնայելով, ոչ մի ժամ չուշացնելով, որպեսզի Լենինգրադի և ռազմաճակատի համար արագ կատարվի պլանով նախատեսված բեռների փոխադրումը։

Հայրենիքը և Լենինգրադը երբեք չեն մոռանա ձեր աշխատանքը»[198]։

Կոշը ջերմ արձագանք գտավ։ Կարճ ժամկետում, սառնամանիքի դաժան պայմաններում սառույցի վրա կառուցվեց վեց ուղի, վերացվեց ավտոմեքենաների հանդիպակաց շարժումը, բարձրացավ տեղափոխումների արդյունավետությունը։ Յուրաքանչյուր օր արևելյան ափից արևմտյանն էր փոխադրվում ավելի քան 1,5 հազար տոննա բեռ։ Բարձրացան բնակչությանը տրվող հացի նորմաները։ 1942 թ. հունվարի 24-ից բանվորներն սկսեցին ստանալ 400 գրամ, ծառայողները՝ 300, խնամքի տակ գտնվողները և երեխաները՝ 250, առաջին գծի զորքերը՝ 600, թիկունքային զորամասերի զորքերը՝ 400 գրամ[199]։

1941 թ. նոյեմբերի 24-ից 1942 թ. ապրիլի 21-ը «Սառցե ճանապարհով» Լենինգրադ տեղափոխվեցին 361109 տոննա տարբեր բեռներ, այդ թվում 262419 տոննա պարենամթերք, 8357 ֆուրաժ, 22818 տոննա ածուխ, 34717 տոննա հեղուկ վառելիք, 31910 տոննա ռազմամթերք, էվակուացվեց 554186 մարդ[200]։

«Կյանքի ուղի» ճանապարհի կառուցման գործում ցուցաբերած արիության համար շատ ռազմիկներ պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով։ 1942 թ. մայիսի 9-ին «Правда» թերթը գրեց. «Լադոգայի ճանապարհի պատմությունը պոեմ է սովետական մարդկանց արիության, համառության ու դիմացկունության մասին։ Ճանապարհը ապրում էր ռազմաճակատային լիարյուն կյանքով։ Դա նաև ռազմաճակատ էր։ Տասնյակ հազարավոր սովետական մարդկանց

198 Դ. Վ. Պավլով, Լենինգրադը պաշարման մեջ, էջ 229։

199 Նույն տեղում, էջ 230, 237։

200 «Очерки истории Ленинграда», т. 5, с. 237—241.

անձնազոհ աշխատանքի շնորհիվ Լենինգրադը ոչ միայն ապահովվեց ամեն անհրաժեշտությամբ, այլև ստեղծվեց անհրաժեշտ պաշար»[201]։

Աստիճանաբար սկսվեց վերականգնվել քաղաքային տնտեսությունը։ Ամբողջությամբ սկսեց գործել կոյուղու ցանցը, բացվեցին բաղնիքները, լվացքատները, կենցաղ-վերանորոգման արհեստանոցները, վարսավիրանոցները, փողոցները դարձան մարդաշատ[202]։ Սկսեց ավելանալ արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը։ Չնայած այդ ամենին, զգացվում էր վառելիքի մեծ պահանջ։ Քաղաքին և ռազմաճակատին անհրաժեշտ էր հազարավոր տոննաներով բենզին, նավթ, մազութ։ Մի շարք մասնագետների մեջ համարձակ միտք հղացավ՝ լճի միջով անցկացնել նավթատար, բենզինատար խողովակներ։ 1942 թ. ապրիլի 2-ին ՍՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահի տեղակալ Ա. Ի. Միկոյանի մոտ տեղի ունեցած խորհրդակցությունում հավանություն տրվեց առաջարկությանը, իսկ ապրիլի 25-ին Պաշտպանության պետական կոմիտեն որոշում ընդունեց նավթամուղ կառուցելու մասին։ Կատարման հսկողությունը դրվեց Պաշտպանության պետական կոմիտեի լիազոր Ա. Ն. Կոսիգինի վրա։ Հունիսի 19-ին 29 կիլոմետրանոց խողովակաշարը (որից 21 կիլոմետրը ջրի տակ) շահագործման հանձնվեց[203]։ Այդ շատ կարևոր գործի ակտիվ մասնակիցներից էր Լադոգա լճի նավատորմիղի Օսինովեցի ռազմածովային բազայի ջրային տեղամասի պետ՝ կապիտան-լեյտենանտ Խաչատուր Նիկոլայի Մամյանը[204], որի անմիջական ղեկավարությամբ Լադոգա լճի հատակով, արևելյան ափից արևմտյանն անցկացվեցին հեռախոսային, հեռագրային և էլեկտրական բարձր լարման կաբելներ, որոնց շնորհիվ Լենինգրադը պաշարման ամբողջ ընթացքում էներգիա էր ստանում, կանոնավոր կապ պահպանում «Մեծ երկրի» հետ։ Բացի դրանից, նրա ղեկավարությամբ, հաղթահարելով բազում դժվարություններ, շինարարները կարողացան լճի հատակով անցկացնել նավթատար ու բենզինատար խողովակաշարեր։ Լենինգրա-

---

201 «Правда», 9 мая 1942 г.

202 *В. Е. Зубаков*, Героический Ленинград, с. 98.

203 «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 295.

204 *Խ. Ն. Մամյանը ծնվել է 1912 թ. ՀՍՍՀ Դիլիջան քաղաքում, զինվորականի ընտանիքում։ Խաչատուր Մամյանը հետպատերազմյան տարիներին ռազմածովային նավատորմում վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ։ Առաջին կարգի կապիտան Խ. Ն. Մամյանը մահացել է 1961 թ.։*

դի մի շարք գործարաններ, որոնք կանգ էին առել վառելիք չլինելու պատճառով, սկսեցին աշխատել։ Լինելով ջրային տեղամասի պետ, խաչատուր Մամյանը նաև հետևում էր, որպեսզի պարենամթերքով և ռազմական տեխնիկայով բեռնված փոխադրանավերն ապահով հասնեն Լադոգայի արևմտյան ափը[205]։ Նա մինչև վերջ մասնակցեց Լենինգրադի հերոսամարտին և ցուցաբերած մարտական ու աշխատանքային սքխրանքների համար պարգևատրվեց Հայրենական պատերազմի առաջին և երկրորդ աստիճանների, երկու Կարմիր աստղի շքանշաններով ու մի շարք մեդալներով։

Անառիկ ամրոցը Նևայի վրա շարունակում էր իր հերոսական պայքարը։ Պաշարված քաղաքում հսկայական աշխատանք կատարեցին գիտնականները, ինժեներները, բժիշկները, արվեստագետները, սովետական-կուսակցական հիմնարկների աշխատողներն ու փառապանծ բանվոր դասակարգը։

1941թ. երկրորդ կեսին Լենինգրադի արդյունաբերությունը ռազմամթերքի արտադրությունը 10 անգամ ավելացրեց։ 1942 թ. արդյունաբերությունը յուրացրեց զենքի ու ռազմամթերքի 50 տեսակ արտադրություն։ Այդ գործում հսկայական ավանդ ներդրեցին ակադեմիկոսներ Ն. Ն. Սեմենովը, Բ. Գ. Գալերկինը, ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Մ. Ա. Շատելենը, պրոֆեսորներ Յա. Բ. Զելդովիչը, Ա. Ա. Պետրովը, Ն. Ն. Միրոլյուբովը, Դ. Վ. Տիշչենկոն, Յու. Բ. Խարիտոնը, Ա. Ն. Կուզնեցովը, Պ. Պ. Կոբեկոն, Ա. Լ. Զատուլինը, Ն. Մ. Ռեյնովը, Ն. Պ. Անտոնովը և ուրիշներ։ Նրանց շարքերում էին նաև հայ ժողովրդի զավակները։

Լենինգրադի խոշոր գործարաններից մեկի դիրեկտորն էր Ոսկան Ոսկանյանը[206]։ 1942 թ. նա նշանակվեց ժողկոմի տեղակալ և իր ձեռքը վերցրեց քաղաքի էլեկտրաարդյունաբերության ղեկավարությունը, կազմակերպեց արտադրանքի անհրաժեշտ տեսակների մատակարարումը ռազ-

---

[205] ՌԾԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 415, թ. 167։

[206] Ոսկան Աղարեկի Ոսկանյանը ծնվել է 1960 թ. Նախիջևանի ԻՍՍՀ-ի Մեսրոպավան գյուղում։ 1927 թ. ավարտել է Երևանի ինդուստրիալ տեխնիկումը։ Այնուհետև մեկնել է Լենինգրադ ուսումը շարունակելու։ Միաժամանակ աշխատել է։ Նա պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի և «Պատվո նշան» շքանշաններով։ Ո. Ոսկանյանը ՀամԿ(բ)Կ Լենինգրադի քաղաքային կոմիտեի անդամ էր և Լենինգրադի քաղսովետի դեպուտատ։ Արտադրության տաղանդավոր կազմակերպչի կյանքի թելը կտրվեց 1944 թվականին։

մաճակատին։ Ոսկանյանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով և «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով[207]։

Քիմիատեխնոլոգիական ինստիտուտի դոցենտ Ա. Ի. Տատուսյանցը կատարելագործեց արկերի լիցքավորման տեխնոլոգիական պրոցեսը, հարյուրավոր տոննա խիստ կարիք զգացվող նյութերի խնայողություն կատարեց։ Շուտով Ա. Տատուսյանցի ղեկավարությամբ տեխնոլոգիական նոր պրոցեսին տիրապետեցին հարյուր մարդ[208]։

Հսկայական աշխատանք կատարեցին առողջապահության բնագավառի աշխատողներ Ա. Ա. Ուխտոմսկին, Վ. Ա. Կոշետովը, Ն. Ն. Պետրովը, Ս. Մ. Սիմոնովը, Ս. Ա. Ռեյնբերգը, բժիշկներ Պ. Ա. Կուպրիանովը, Դ. Ն. Վերխովսկին, Վ. Ա. Ալեքսանդրովը, Ն. Ա. Գերբիլսկին, Ս. Ս. Գերգոլովը, գնդային բժիշկներ Բ. Ի. Կապուտինը, Ի. Ի. Կրասնոպեևը, Ա. Վ. Մեդվեդևը, Պ. Ա. Գուլտյաևը, Վ. Ա. Գնուսովը, Ա. Ա. Ստարշինինը, Վ. Ի. Գուրկինը և հայ ժողովրդի շատ զավակներ։

Լենինգրադի գլխավոր նևրոպաթոլոգն էր Ստեփան Կարճիկյանը, իսկ կորպուսային բժիշկ Արթուր Կյուշարիանցը ղեկավարում էր ռազմաճակատի բուժաշխատողների վերաորակավորման կուրսերը, ինչպես նաև համատեղ կատարում 283-րդ ու 1171-րդ հիվանդանոցների և ռազմաճակատի պահեստային սանիտարական վարչության պետերի պարտականությունները։ Աշխատելով մեծ ծանրաբեռնվածությամբ, նրանք իրենց գիտելիքները հաղորդում էին երիտասարդ մասնագետներին, սովետական բանակի համար պատրաստելով որակյալ կադրեր[209]։ Մեծ եռանդով էին աշխատում բժիշկներ Քնարիկ Ջմշկյանը, Թամարա Օգանովան, Ելենա Բուռնազյանը, Վերգինե Հարությունյանը և ուրիշներ։

Հերոս քաղաքի պաշտպանների շարքերում էր նշանավոր գիտնական, պետական էրմիտաժի դիրեկտոր, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, որի անմիջական ղեկավարությամբ ու մասնակցությամբ կատարվեց էրմիտաժի թանկարժեք ցուցանմուշների տեղափոխումը երկրի խորքը։ Զբաղված հսկայական զբաղվածության, նա հաճախակի լինում էր «Կիրով», «Հոկտեմբերյան հեղափոխություն», «Պոլյարնայա զվեզդա», «Ավրորա» և շատ ուրիշ խոշոր նավերում, նավաստիների համար կարդում դասախոսություններ ու զեկուցումներ։ Մինչև 1942 թ. մարտի 20-ը Լենինգրադի

---

207 Տե՛ս «Սովետական Հայաստան», 14 նոյեմբերի 1944 թ.։

208 *Г. Л. Соболев*, Ученые Ленинграда в годы Великой Отечественной войны 1941—1944 г., Л., 1966, с. 48.

209 Ա. Մալխասյան, *Սովետական բանակի հայ զորձիչները*, Երևան, 1965, էջ 577, 581։

աշխատավորության, սովետական բանակի մարտիկների ու նավաստիների համար նա կարդաց 200 դասախոսություն[210]։ 1941թ. դեկտեմբերի 22-ին հանդես գալով զորամասերից մեկում, Օրբելին կոչ արեց զինվորներին՝ անխնա հարվածել ֆաշիստներին. «...Ռուսական հին քաղաքները՝ Նովգորոդն ու Պսկովը վերածվել են ավերակների։ Հիտլերը հետամտում էր խելացնոր նպատակ՝ ոչնչացնել ռուս մեծ ժողովրդի մշակույթը։ ...Մեկնելով ռազմաճակատ երիտասարդ ռազմիկ, Լենինգրադի պաշտպան, հիշիր, որ դու կոչված ես ֆաշիստական բարբարոսներից պաշտպանելու Լենինի քաղաքը, համաշխարհային մշակույթի օջախը։ Մենք՝ լենինգրադցիներս հանուն մեծ նպատակի կտանենք և՛ ցուրտը, և՛ սովը»[211]։ Օրբելու անմիջական նախաձեռնությամբ ու գլխավորությամբ Լենինգրադի գիտնականները պետական էրմիտաժի շենքում նշեցին աղբրբեջանական ժողովրդի մեծ պոետ Նիզամու ծննդյան 800-ամյակը (1941 թ. հոկտեմբեր) և ուզբեկական գրականության հիմնադիր Ալիշեր Նավոյիի ծննդյան 500-ամյակը (1941թ. դեկտեմբեր)[212]։

Լենինգրադի քաղաքային կուսակցական կազմակերպության կոմիտեն և նավատորմի հրամանատարությունն անում էին հնարավոր ամեն ինչ՝ օգնելու պետական էրմիտաժի դիրեկտորին։ Սուզանավերի բրիգադի հրամանատար, Սովետական Միության հերոս Ա. Վ. Տրիպոլսկու հրամանով Ձմեռային պալատի դիմաց, Նևա գետում կանգնած սուզանավից հաղորդալարերով էլեկտրաէներգիա անցկացվեց Օրբելու առանձնասենյակը[213]։

Լենինգրադում իրենց գիտահետազոտական աշխատանքներն էին շարունակում գիտնականներ Արտեմ Ալիխանյանը, Էդրաս Հասրաթյանը, Մուշեղ Դուրմիշյանը, Գեորգի Տումանովը և ուրիշներ։

Ֆիզիկոս Արտեմ Ալիխանյանի ստեղծած մագնիսական ծովային ականները մինչև պատերազմի վերջը հաջողությամբ օգտագործվում էին Կարմրադրոշ Բալթյան նավատորմի կողմից։ Հսկայական աշխատանք կատարեցին մեր երկրի խորքերը էվակուացված Լենինգրադի մի խումբ ակադեմիկոսներ։ Նշանավոր գիտնականներ Ա. Ա. Բայկովի, Ա. Ֆ. Իոֆֆեի, Ն. Տ. Գուդցովի, Ն. Ն. Սեմենովի, Պ. Ի. Ստեպանովի, Վ. Գ. Խլոցինի, Ա. Պ. Ալեքսանդրովի, Ի. Վ. Կուրչատովի հետ միասին եռանդով,

---

[210] *Г. Л. Соболев,* Ученые Ленинграда в годы Великой Отечественной войны 1941—1944 г., с. 88.

[211] *С. П. Варшавский,* Подвиг Ленинграда, Л., 1966, с. 109.

[212] *К. Н. Юзбашян,* Академик Иосиф Абгарович Орбели, с. 103—104.

[213] «Девятьсот дней», Л., 1962 г., с. 103—104.

նվիրվածությամբ և մեծ արդյունավետությամբ աշխատեցին մեր հայրենակիցներ ակադեմիկոսներ Լ. Ա. Օրբելին, ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամներ Ա. Ի. Ալիխանովը և Վ. Հ. Համբարձումյանը։

1941թ. սեպտեմբերին Լենինգրադի համալսարանի մասնաճյուղը էվակուացվեց Թաթարական ԻՍՍՀ-ի Ելաբուգա քաղաքը։ Գիտական հաստատության ղեկավար նշանակվեց համալսարանի պրոռեկտոր, աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ, ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Վիկտոր Համազասպի Համբարձումյանը։ Մասնաճյուղը հաջողությամբ կատարեց իր առջև դրված խնդիրները։ Մի խումբ աշխատողներ 1944թ. արժանացան կառավարական բարձր պարգևների, իսկ Վիկտոր Համբարձումյանը՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի։

Պաշտպանական կարևոր խնդիրներ լուծելուց բացի մասնաճյուղը, Վիկտոր Համբարձումյանի ղեկավարությամբ, կատարեց գիտական և գործնական նշանակություն ունեցող տեսական մի շարք ուսումնասիրություններ։ Մասնավորապես մի այնպիսի խնդիր, ինչպիսին մթնոլորտում և, ընդհանրապես, պղտոր միջավայրում լույսի ցրման պրոբլեմն է[214], որի ուղղությամբ ֆիզիկոսները և աստղաֆիզիկոսները մինչ այդ աշխատել են տասնամյակներ, իր լուծումը գտավ միանգամայն նոր մեթոդների հիման վրա։ Այդ աշխատանքի համար Վիկտոր Համբարձումյանն արժանացավ ՍՍՀՄ պետական մրցանակի։ Հայտնի է, որ մասնաճյուղում մշակված «ինվարիանտության սկզբունքները» այժմ էլ ելակետ են ծառայում լույսի և տարբեր մասնիկների տարածման հետ կապված հարցերի լուծման գործում։ Գիտական բեղմնավոր աշխատանքի համար 1945 թ. հունիսին Վիկտոր Համբարձումյանը պարգևատրվեց Լենինի շքանշանով։

Ակնառավոր գիտնականն այժմ Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս է և արդեն 40 տարի է, ինչ ղեկավարում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան։ Ակադեմիկոսներ Ա. Ա. Բայկովը, Ա. Ֆ. Իոֆֆեն և Լ. Ա. Օրբելին ընտրվեցին ՍՍՀՄ ԳԱ վիցեպրեզիդենտներ։ Սովետական բանակին գիտատեխնիկական օգնություն ցույց տալու համար ՍՍՀՄ ԳԱ նախագահությունը ստեղծեց հատուկ հանձնաժողովներ, որոնցից շատերի ղեկավարումը վստահվեց Լենինգրադի գիտնականներին։ Ռազմածովային տեխնիկական հանձնաժողովը Ա. Ի. Իոֆֆեի ղեկավարությամբ և անվանի ֆիզիկոսներ Ա. Պ. Ալեքսանդրովի ու Ի. Վ. Կուրչատովի ակտիվ մասնակցությամբ ստեղծեց նավերի հակաականային

---

[214] «Ленинградский университет. 1919—1944», М., 1945, с. 174—175.

պաշտպանության սիստեմ, որը հաջողությամբ կիրառվեց պատերազմի ընթացքում։

Ակադեմիկոսներ Ն. Ն. Սեմենովի և Լ. Ա. Օրբելու ղեկավարությամբ գործող հակատանկային և ռազմասանիտարական հատուկ հանձնաժողովների գիտական նորույթները մեծ չափով նպաստեցին կարմիր բանակի մարտունակության բարձրացմանը։ Ա. Ա. Բայկովը, Ա. Ֆ. Իոֆֆեն, Հ. Ա. և Լ. Ա. Օրբելի եղբայրներն առաջիններից էին, որ պարգևատրվեցին «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալներով[215]։

Լենինգրադի հերոսամարտին մինչև վերջ մասնակցեց մեծանուն արվեստագետ, Հայկական ու Ադրբեջանական ՍՍՀ ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանը։ Այդ օրերին նրան հաճախակի կարելի էր տեսնել գործարաններում, ֆաբրիկաներում, նավերի վրա, կարմիր բանակի ստորաբաժանումներում, ուր հայրենասիրական թեմաներով ելույթներ էր ունենում բանվորների, գինվորների ու նավաստիների առջև։ Նա իր ոգևորող արվեստով բարձրացնում էր մարդկանց բարոյական ոգին, հայրենասիրության զգացմունքը և մղում մարտական ու աշխատանքային նորանոր սխրագործությունների։ «Երջանիկ եմ,—գրել է Փափազյանը,—որ այդ արհավիրքի օրերին իմ շուրթերով խոսել էին Դանտեն ու Պետրարկան, ինչպես Հյուգոն ու Կոռնելը, բարեկամության անքակտելի կապը հիշեցնելով և մոտալուտ փրկությունն ու վերածնունդը ավետելով դրացի ու մտերիմ ժողովուրդների ռումբերից չարչարված երկինքների միջից, առ ի հաստատումն ավելորդ անգամ այն սրբազան ճշմարտության, թե արվեստն ամեն բանից առաջ մի անսահման բարեկամություն է»[216]։

Պաշարման օրերին Լենինգրադում և ռազմաճակատի զորամասերում շատերն էին ճանաչում շնորհալի երգչուհի Արփիկ Բալասանի Գաբրիելյանին, որը մեծ հաջողությամբ կատարում էր Գլինկայի, Չայկովսկու, Դորգոմիժսկու, Շտրաուսի, Ռախմանինովի ստեղծագործությունները, ինչպես նաև ՍՍՀՄ ժողովուրդների երգերն ու պարերը։ «Զորամասերից մեկում մի վրացի մարտիկ,—գրում է Ա. Գաբրիելյանը,—աշխուժացրեց բոլորին իր լեզգինկայով, բոլորի ցանկությամբ ես միացա նրան և մենք երկու կովկասցիներս մեծ ոգևորությամբ կատարեցինք աշխույժ լեզգինկան։ Ես ուղղակի չեմ հավատում, թե ինչպես կարողացա իմ վտիտ, նիհարած մարմնովս պարել լեզգինկան, դարձյալ երկաթյա ներվերս օգնե-

---

[215] *Г. Л. Соболев,* Ученые Ленинграда в годы Великой Отечественной войны 1941—1945, с. 148, 159.

[216] Վ. Փափազյան, *Հետադարձ հայացք (երկրորդ գիրք), Երևան, 1981, էջ 457։*

ցին, ում տվեց, քաջալերեց ինձ մեր կատարած անհրաժեշտ գործի գիտակցությունը»[217]։ Նա 1942 թ. վերջերին կտրեց, անցավ «Կյանքի ուղի» սառցային ճանապարհը և համերգներ տվեց Վոլխովյան ռազմաճակատի զինվորների համար։ Լարված ու անհանգիստ աշխատանքը, հյուծվածությունն ու քաղցը Գաբրիելյանին երեք ամիս դամեցին անկողնում։ Երեք ամիս բժիշկները պայքարեցին նրա կյանքի պահպանման համար և հաղթեցին մահին։ Նա նորից մեկնեց ռազմաճակատ և 75-րդ հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցեց Լենինգրադի մարզի ազատագրման մարտերին։

Մեր ժողովուրդների ներկայացուցիչները բոլոր բնագավառներում դրսևորել են իրենց որպես մեծ հայրենասերներ։ Հետաքրքիր ու հուզումնալից էր փոքրիկ հայրենասեր, Լենինգրադի 21-րդ դպրոցի աշակերտուհի, պիոներուհի Վարդուհի Զարուխչյանի 1943թ. փետրվարին գրած նամակը՝ ուղղված Լենինգրադի կուսակցության մարզկոմի քարտուղար Ա. Ա. Ժդանովին[218]։ Նամակում ասված է. «Ընկ. Ժդանովին. Թանկագին Անդրեյ Ալեքսանդրովիչ, իմ հայրն ու երկու քեռիներս զոհվել են՝ պաշտպանելով մեր սիրելի հայրենիքը։ Այժմ ինձ հետ է միայն մայրս և ծովային ավտոմատավոր քեռիս։ Խնդրում եմ Ձեզ իմ խնայողությունների 300 ռուբլի գումարով, որ հայրս է թողել ինձ ռազմաճակատ գնալու ժամանակ, գնել հրացան կամ ավտոմատ և հանձնել համարձակ ծովային Սաշա քեռուս։ Թող նա վրեժ լուծի անիծված գազանից մեր բոլոր տրխրությունների համար, պապայի համար, քեռիներիս ու մամայի արցունքների համար»[219]։

Նամակն ուղարկելուց մի քանի օր անց Ա. Ա. Ժդանովի հանձնարարությամբ Զարուխչյանների բնակարանն է գալիս կապիտան Կոզլովը։ Նա հայտնում է, որ փոքրիկ հայրենասերի խնդրանքը բավարարված է և առաջարկում է ավտոմեքենայով գնալ ռազմաճակատի գիծը և ավտոմատը հանձնել քեռի Սաշային։ Ուշ երեկոյան, Վարդուհին և մայրը՝ Լիդա Ալեքսանդրովնան հասնում են զորամաս։ Ծովային ավտոմատավորները շարքի են կանգնում։ «Առավոտյան մենք գնում ենք մարտի,— ռազմիկներին է դիմում գումարտակի հրամանատարը,— մարտի հանուն Լենինգրադի, հանուն լենինգրադցիների, հանուն ահա այսպիսի սիրելի ու փառավոր աղջկա, ինչպիսին Վարդուհին է։ Նա ոչինչ չի խնայել, բոլորը

---

217 ՀՄՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 7, թ. 6։

218 Վարդուհի Միհրանի Զարուխչյանը բնակվում է Լենինգրադում։ Նա երկու երեխաների մայր է և աշխատում է քաղաքի ձեռնարկություններից մեկում։

219 «На страже Родины», 2 марта, 1943 г.

տվել է հաղթանակի համար։ Դրանում է կայանում իսկական հայրենասիրությունը»։ Ռազմիկների շարքի առաջ Վարդուհին ավտոմատը հանձնեց քեռի Սաշային։ Վերջինս վերցնելով ավտոմատը, հանդիսավոր երդվեց, որ այն կպահպանի աչքի լույսի պես և առանց կյանքը խնայելու կոչնչացնի ավելի շատ ֆաշիստներ։ Փոքրիկ հայուհու հայրենասիրական օրինակը հուզել էր բոլորին։ Հաջորդ օրը վաղ առավոտյան ծովային մարտիկները վրեժխնդրությամբ լցված, հանում Լենինգրադի դրոհի գընացին։ Վարդուհին և մայրը մնալով հրամանատարական դիտակետում, հետևեցին մարտին։ Մարտը դաժան ու համառ էր։ Շատերի թվում այդ օրը հերոսաբար զոհվեց նաև Վարդուհու քեռին[220]։

12-ամյա հայուհու անունը հայտնի դարձավ լենինգրադցիներին, Լենինգրադը պաշտպանող ստորաբաժանումներին և մարտական նավերի անձնակազմին։ Վարդուհին դարձավ զինվորների ու նավաստիների մըշտական հյուրը։ Նա լինում էր Լենինգրադը պաշտպանող ստորաբաժանումներում, այցելում վիրավոր ռազմիկներին, զրուցում նրանց հետ։

* *
*

Չնայած ձեռնարկած բոլոր միջոցառումներին, քաղաքի բնակչության վիճակն անմխիթար էր։ Պահանջվում էր անհապաղ վերացնել շրջափակումը և թշնամուն դուրս շպրտել Լենինգրադի մարդի սահմաններից։ Այդ նպատակով 1941թ. վերջին և 1942թ. սկզբին սովետական զորքերը ձեռնարկեցին մի շարք հարձակողական գործողություններ, որոնք, սակայն, հաջողություն չունեցան։

1941թ. դեկտեմբերի 20-ին հրետանային և ավիացիոն նախապատրաստությունից հետո հարձակման են անցնում 55-րդ բանակի միավորումները։ Հատկապես հաջող էր հարձակվում 268-րդ հրաձգային դիվիզիայի 942-րդ գունդը, որը, սերտորեն համագործակցելով 86-րդ առանձին տանկային գումարտակի հետ, ընդհուպ մոտեցավ Կրասնի Բորին։ Այդ շրջանում հերոսական սխրագործություն կատարեց Տ-26 տանկի հրամանատար, ավագ սերժանտ Երվանդ Աղասու Ավետիսյանը[221]։ Հետախուզական մարտերից մեկի ժամանակ նա իր տանկով համարձակորեն

---

220 Նույն տեղում։

221 Երվանդ Աղասու Ավետիսյանը Ադրբեջանական ՍՍՀ Հադրութի շրջանի Կոչրեկ գյուղից է։

դրոհեց թշնամու դիրքերի վրա։ Գերմանացիները խուճապահար փախուստի դիմեցին, իսկ Ավետիսյանը հրետանային ու գնդացրային կրակով ոչնչացրեց 37 հիտլերական և տանկի թրթուրներով գետնին հավասարեցրեց թշնամու կրակակետերը։ Մարտի ժամանակ արկի պայթյունից վնասվեց տանկը։ Երեք օր թշնամու հրետանու կրակի տակ անձնակազմը կարողացավ վերացնել վնասվածքը և կրկին նետվել մարտի։ Միայն դեկտեմբերի 23—27-ը Երվանդ Ավետիսյանն իր տանկով ոչնչացրեց 30 հիտլերական, խոշոր տրամաչափի 3 գնդացիր, 3 բլինդաժ, մարտից դուրս բերեց Տ-50 տանկը և փրկեց վիրավոր անձնակազմին։ Թշնամուն պատճառած վնասի և ընկերներին փրկելու գործում ցուցաբերած արիության համար Երվանդ Ավետիսյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[222]։

Մինչև դեկտեմբերի վերջն այդ շրջանում արյունահեղ մարտերը շարունակվեցին, հակառակորդը ստանալով նոր համալրումներ, անընդհատ գրոհներով կասեցրեց 55-րդ բանակի հարձակումը։ Հակառակորդի դեմ ակտիվ գործողություններ սկսեցին 42-րդ բանակի 13-րդ, 21-րդ և 189-րդ հրաձգային դիվիզիաները։

1942 թ. սկզբին իրենց գործողությունները ակտիվացրին Լենինգրադյան ռազմաճակատի 54-րդ, Վոլխովյան ռազմաճակատի 2-րդ հարվածային, 4-րդ, Հյուսիսարևմտյան ռազմաճակատի 11-րդ և 34-րդ բանակները։ Վոլխովի ափին անմահ սխրանք կատարեցին 2-րդ հարվածային բանակի 255-րդ հրաձգային դիվիզիայի 299-րդ գնդի մարտիկներ Ի. Ս. Գերասիմենկոն, Ա. Ս. Կրասիլովը և Լ. Ա. Զերեմնովը։ Նովոկուզնեցկ քաղաքի այդ ռուս երիտասարդներն արհամարհելով մահը, հանուն ընկերների, իրենց մարմնով փակեցին թշնամու կրակակետի հրակնատը և ապահովեցին ստորաբաժանման գրոհը։ Երեք խիզախներին ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[223]։

1942 թ. փետրվարի 16-ին 54-րդ բանակի հարձակողական գործողությունների շրջանում 124-րդ տանկային բրիգադի 1-ին առանձին տանկային գումարտակը Դուբոկ գետի շրջանում ճեղքեց թշնամու պաշտպանությունը և ներխուժեց նրա թիկունքը։ Սովետական տանկիստների դրոհը ղեկավարում էր գումարտակի քաղղեկ Վլադիմիր Խորենի Պետրոսյա-

---

222 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1234, գ. 321, թ. 183։

223 *А. В. Буров,* Твои герои, Ленинград, с. 177—179.

նը[224]։ Տանկիստների գրոհն այնքան արագ ու շեշտակի էր, որ թշնամին սկսեց անկանոն նահանջել։ Պետրոսյանն անձամբ ոչնչացրեց 30 հիտլերական, իսկ հետո փոխարինեց զոհված վարորդ-մեխանիկին և անվթարթուրներով գետնին հավասարեցրեց 15 դզոտ։ Մարտերի մի այլ հատվածում, գրոհի ժամանակ նա գնդակահարեց գումարտակի հրամանատար Ռիբակովի վրա կրակել պատրաստվող գերմանական սպային և փրկեց նրան։ Այդ օրը նա ոչնչացրեց 60 հիտլերական։ Հայորդին պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[225]։

Լյուբանի ուղղությամբ 54-րդ բանակի հարձակողական գործողություններին ակտիվորեն մասնակցեց և հակառակորդին ծանր կորուստներ պատճառեց 32-րդ հրաձգային բրիգադը, վրաց ժողովրդի արժանավոր զավակ մայոր Սերգեյ Պոլիկարպի Կետիլաձեի հրամանատարությամբ։ 1942 թ. մարտի 18-ին նա ստանձնեց բրիգադի հրամանատարությունը, իսկ 19-ին գրոհի տարավ իր մարտիկներին։ Հաղթահարելով ճահճային դժվարին տեղամասը, բրիգադը հակառակորդի պաշտպանության ձախ թևից հանկարծակի գրոհով գրավեց Մալինովկա, Դիդվինյե և Միլաևկա բնակավայրերը։ Լյուբանից 20 կմ հեռու կատաղի մարտեր սկսվեց հակառակորդի թարմ ուժերի և նրա պաշտպանությունը ներխուժած մայոր Կետիլաձեի բրիգադի միջև։ Հակառակորդը հակագրոհի էր դիմում մեծաթիվ տանկերի և ավիացիայի աջակցությամբ։ Բոլոր ստորաբաժանումներին հայտնվեց հրամանատարի հրամանը՝ «Ոչ մի քայլ նահ»։ Մինչև վերջ շարունակեց ղեկավարել բրիգադի մարտական գործողությունները։ Ապրիլի 1-ին նա զոհվեց հերոսի մահով։ Ս. Պ. Կետիլաձեին ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[226]։

Լենինգրադի համար մղված մարտերի բոլոր հատվածներում սովետական ռազմիկները կռվում էին անձնազոհությամբ, դրսևորելով հերոսության բազմաթիվ օրինակներ։ Դեմյանսկի շրջանում, 1942 թ. հունվարի 8-ին 34-րդ բանակի 182-րդ հրաձգային դիվիզիայի 232-րդ գնդի հարձակման ժամանակ արկի պայթյունից կտրվեց դասակի հրամանատար կրտսեր լեյտենանտ Անատոլի Վասիլևիչ Սոլոմանովի ձեռքը։ Նա ընկավ, բայց բարձրանալով դիմեց մարտիկներին. «Դուք տեսնում եք, որ կտրը-

---

[224] Վլադիմիր Խորենի Պետրոսյանը ծնվել է 1921 թ. Թբիլիսիում, զինվորականի ընտանիքում։ 1939 թ. ավարտել է Մոսկվայի № 233-րդ դպրոցը։

[225] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1234, գ. 326, թ. 62։

[226] *А. В. Буров*, Твои герои, Ленинград, с. 187—188.

վել է իմ ձեռքը, բայց ես գնում եմ առաջ, առա՛ջ ընկերներ, իմ ետևից, խփե՛ք սրիկաներին»։ Խիզախ ռազմիկը պարգևատրվեց Լենինի շքանշանով[227]։

Մարտերի այդ նույն հատվածում մարտական վարպետության փայլուն օրինակ ցույց տվեց սերժանտ Ալեքսանդր Միքայելի խաչատրյանը։ 202-րդ հրաձգային դիվիզիայի 652-րդ հրետանային գնդի 4-րդ մարտկոցի հրետանու հաշվարկը, որը բաղկացած էր երիտասարդ ու մարտական փորձ չունեցող մարտիկներից, տեսնելով թշնամու տանկերը և նրանց ետևից ամբողջ հասակով շարժվող ֆաշիստ ավտոմատավորներին, փախուստի դիմեցին։ Սերժանտ Ալեքսանդր Խաչատրյանը միայնակ մընալով, չկորցրեց իրեն։ Նա սառնասրտորեն թնդանոթի փողն ուղղեց դեպի թշնամին և դիպուկ կրակով խփեց երկու տանկ ու ոչնչացրեց 50 հիտլերական[228]։ Նույն դիվիզիայի 645-րդ հրաձգային գունդը մայոր Սեմյոն Նատրոշվելու գլխավորությամբ սրընթաց գրոհով ճեղքեց թշնամու պաշտպանությունը, թափանցեց նրա թիկունքը, գրավեց 7 բնակավայր, գլխովին ջախջախեց «Մեռած գլուխ» դումարտակը և գրավեց մեծ թվով ռազմավար, չտալով ոչ մի սպանված, ամուր պահեց գրաված բնագիծը, մինչև հիմնական ուժերի մոտենալը։ Վրաց ժողովրդի զավակը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[229]։

1942 թ. մարտի 18-ին Վոլխովյան ռազմաճակատի հատվածներից մեկում Լյուբինե Պոլյա գյուղի մոտ անմահ սխրագործություն կատարեցին 52-րդ բանակի 111-րդ դիվիզիայի 1-ին բաժանմունքի պետ փոխգնդապետ Ռուբեն Ասատուրի Հարությունյանը և Սովետական Միության հերոս Նիկոլայ Վասիլևիչ Օպլեսնինը։ Հարությունյանը դիվիզիայի հրամանատարի ցուցումով ղեկավարում էր ստորաբաժանումներից մեկի գրոհը։ Նրա հետ էր մարտական լավագույն ընկերը՝ Նիկոլայը։ Մարտիկները, ոգևորված իրենց հրամանատարների անձնական օրինակով, ճեղքեցին համառորեն դիմադրող թշնամու պաշտպանությունը և ստիպեցին նրան նահանջել։ Մարտի լարված պահին, երբ ջախջախված հակառակորդը նոր էր նահանջում, արկի պայթյունից զոհվեցին Հարությունյանը և Օպլեսնինը։ Դիվիզիայի հրամանատարն այդ ողբերգական մահվան մասին նամակով հայտնեց հերոսի ընտանիքին։ «Դիվիզիայի հրամանատարությունը խոր վշտով հայտնում է մեր հայրենիքի հավատարիմ զա-

---

227 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 226, ց. 1386, գ. 261, թ. 1—2։

228 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 221, ց. 1386, գ. 297, թ. 11։

229 Նույն տեղում, գ. 275, թ. 11—12։

վակ, մարտիկների ու հրամանատարների սիրելի՝ փոխգնդապետ Ռուբեն Ասատուրի Հարությունյանի հերոսական մահվան մասին...

Մարտիկներն ու հրամանատարները այդ մարտում Հարությունյանի ու Օպլեսնինի մահվան համար վրեժ լուծեցին, մարտադաշտը ծածկելով ֆաշիստների արյամբ ու դիակներով։

Մարտում մեր հայրենիքի թշնամիների դեմ նրա հերոսությունը, դիմացկունությունը ոգևորում է նոր սխրանքների և վրեժի է կոչում սովետական մարդկանց տանջանքների համար, մեր սիրելի Ռուբեն Ասատուրովիչի համար...»[230]։ Հարությունյանը համահու պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[231]։

Լենինգրադի համար մղված մարտերում ծնունդ առավ սնայպերական շարժումը, որը մինչև 1942 թ. հունվարի 20-ը ընդգրկեց 4200 մարտիկ։ 23-րդ, 42-րդ, 55-րդ բանակների և մերձծովյան օպերատիվ խմբի սնայպերները 1942 թ. հունվար ամսին 20 օրում ոչնչացրին 7000 հիտլերական[232]։ Հայրենիքը բարձր գնահատեց նրանց հերոսությունը։ Նշանառուներ Ի. Դ. Վեժլիվցևին, Պ. Ի. Գոլիշենկոյին, Ա. Ա. Կալինինին, Ն. Ա. Կոզլովին, Ս. Պ. Լոսկուտովին, Վ. Ն. Պչելինցևին, Ֆ. Ֆ. Սինյավինին, Ֆ. Ա. Սմոլյաչկովին, Ֆ. Ֆ. Ֆոմինին, Մ. Ի. Յակովլևին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

1943թ. Լենինգրադի նշանառուները բաց նամակ ուղարկեցին Անդրկովկասյան ռազմաճակատի ռազմիկներին։ «Թանկագին ընկերներ,—գրված էր նամակում,—Լենինգրադյան ռազմաճակատի ռազմիկները լարված ուշադրությամբ հետևում էին Կովկասի համար մղվող ձեր հերոսական ճակատամարտին և ձեզ հետ միասին հրճվում ձեր հաղթանակներով։

Լենինգրադյան ռազմաճակատի զորքերը ոչ մի րոպե չեն դադարեցրել և չեն դադարեցնում ակտիվ ու անողոք պայքարը թշնամու դեմ։ Ամեն օր նրանք հարվածներ են հասցնում ֆաշիստական գազանին, որն անթիվ տառապանքներ է պատճառում Լենինի քաղաքին։

Արդար վրեժի հաշիվն անընդհատ բազմապատկում են նաև Լենինգրադյան նշանառուները, որոնք յուրաքանչյուր օր բնաջնջում են հարյուրավոր ֆաշիստական ավազակների... Ո՞ւմ հայտնի չէ սնայպերական շարժումը նախաձեռնողի՝ Սովետական Միության հերոս Ֆեոդոսի Սմոլյաչկովի անունը, որը բնաջնջեց հիտլերյան 125 զինվոր ու սպա,

---

230 ՀՄՊՊԿ արխիվ, ֆ. 217, գ. 3, թ. 8—11։

231 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1234, գ. 329, թ. 74։

232 «Партийно-политическая работа в Советских Вооруженных Силах в годы Великой Отечественной войны», с. 85.

ծախսելով ընդամենը 126 փամփուշտ։ Ժողովրդական հերոս Սմոլյաչկովը քաջի մահով զոհվեց հանուն հարազատ Լենինգրադի, բայց նրա անունը ընդմիշտ կապրի որպես մեծ քաջության, սովետական ռազմիկի փայլուն վարպետության խորհրդանիշ...

Լենինգրադի համար մղվող հերոսական ճակատամարտերում է՛լ ավելի ամրապնդվեց Սովետական Միության ժողովուրդների մեծ եղբայրությունը, է՛լ ավելի պայծառորեն ծաղկեց նրանց բարեկամությունը։ Լենինի քաղաքը պաշտպանել ու պաշտպանում են Միության բոլոր ազգերի ներկայացուցիչները։ Լենինգրադյան սնայպերների բազմահազար ընտանիքը հպարտանում է իր հերոսների անուններով՝ ռուսների, ղազախների, բաշկիրների, թաթարների, ուզբեկների, ուկրաինացիների, բելոռուսների և այլն։ Մեր ռազմաճակատի սնայպերների մեջ քիչ չեն Անդրկովկասի ժողովուրդների՝ հայերի, վրացիների, ադրբեջանցիների հերոսական զավակները։

Լենինգրադյան ռազմաճակատի զորամասերում ու ստորաբաժանումներում սիրում ու հարգում են նշանառուներ՝ նֆրեյտոր Հասանովին, ավագ Զաքարյանին, կրտսեր սերժանտ Կորախիձեին, որոնք պաշտպանելով Լենինի քաղաքը, բարձր են պահում Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի իրենց ազատասեր ժողովուրդների պատիվը...»[233]։ Լենինգրադյան ռազմաճակատում հայտնի էին կիրգիզ Իվան Ալի Շաքիրովի, հայ Սերգո Սայիդի Ղազարյանի, վրացի Ամիրան Վլադիմիրովիչ Զաշավայի, թաթար Ախատա Ախմետյարովի, ղազախ Ժյուսենբայ Շինբեկովի, ուզբեկ Կայում Ռախմանովի անունները։ 1942 թ. հոկտեմբերի 23-ին «Ленинградская правда» թերթը ջերմությամբ գրեց Լենինգրադյան ռազմաճակատի նշանառու, ղազախական ժողովրդի զավակ Ժյուսենբայ Շինիբեկովի մասին, որը իր հրացանով ոչնչացրել էր 165 ֆաշիստական զինվոր ու սպա[234]։

2-րդ հրաձգային դիվիզիայում հմուտ նշանառուի անուն էր վաստակել Ղափանի շրջանի Վերին Խոտանան գյուղի բնակիչ լեյտենանտ Իշխան Ղահրամանի Դավթյանը, որն իր հաշվին գրանցել էր 98 սպանված ֆաշիստական զինվոր ու սպա։ Խիզախ ռազմիկը հայրենասիրական նամակներ էր ուղարկում իր հայրենակիցներին՝ կոչ անելով նրանց ավելի եռանդուն աշխատել և շատ պղինձ հանձնել պետությանը։ Նամակներից մեկում նա գրել է.

---

233 «Մարտիկ», 9 հունվարի 1944 թ.։

234 *В. А. Мурадян,* Братство, скрепленное кровью, с. 90.

—Հայ հանքափորներ, դուք զափանցի,
Հանքախորշերից շատ պղինձ հանեք,
Գործարաններում շատ զենք կռեք,
Որ ֆաշիստներին շուտ բնաջնջենք...[235]

Իշխան Դավթյանն անվեհեր հետախույզ էր։ Նա բազմիցս անցնում էր ռազմաճակատի գիծը և վերադառնում արժեքավոր «լեզուներով»։ Մարտերում խիզախ լեռնցին վիրավորվել էր 11 անգամ, որից 4 անգամ ծանր, սակայն միշտ էլ մնացել էր շարքերում և կռվել մինչև հաղթանակ։ Անվանի նշանառուի և հետախույզի կուրծքը զարդարում էին Կարմիր աստղի շքանշանը, «Մարտական ծառայությունների» և «Արիության համար» մեդալները[236]։ Նրա լուսանկարը տպվեց ճակատային թերթում։ Դավթյանի սխրանքների մասին է վկայում անվանի գրող Սերո Խանզադյանը[237], որը ծառայում էր նույն դիվիզիայի 261-րդ հրաձգային գնդում, որպես ականանետային վաշտի հրամանատար։ Նրանք միասին էին ավարտել հրամանատարական դասընթացները և երկար ժամանակ մարտընչել նույն միավորման շարքերում[238]։

1943թ. հունիսին բաժանվեցին հայրենակից սպաների մարտական ուղիները։ Ս. Խանզադյանը մնաց նույն դիվիզիայում, իսկ Իշխանը նշանակում ստացավ 377-րդ հրաձգային դիվիզիայում որպես 432-րդ առանձին հետախուզական վաշտի դասակի հրամանատար։ Սակայն նրանց մարտական բարեկամությունը երբեք չընդհատվեց։ Այն շարունակվեց նաև պատերազմի հաղթական ավարտից հետո։

Այդպիսի հայրենասեր, անձնազոհ ու հայրենիքին նվիրված ռազմիկներ էին կռվում Լենինգրադի համար։ Հակառակորդը ինչպիսի զենք էլ գործադրեր, բնականաբար չէր կարող ընկճել այդպիսի հավատով մարտընչող Լենինգրադի պաշտպանների դիմադրությունը։

* *
*

Լենինգրադի պաշարման ընթացքում Լադոգա լճի երկրորդ նավագընացությունը սկսվեց 1942 թ. մայիսի 22-ին և շարունակվեց ավելի քան

---

235 ՀՄՊԿ արխիվ, ֆ. 246, գ. 15, թ. 10, 48։
236 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 6520, թ. 81։
237 Տե՛ս Ս. Խանզադյան, Երեք տարի 291 օր, Երևան, 1972, էջ 206։
238 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 686196, գ. 6437, թ. 204։

վեց ամիս։ Այդ ժամանակ Լադոգայի արևմտյան ափը տեղափոխվեց 780 հազար տոննա բեռ, 12 հազար գլուխ անասուն և 4400 ձի։ Լենինգրադի ռազմաճակատը նոր համալրում ստացավ՝ 300 հազար զինվոր ու սպա, 122 հազար տոննա ռազմամթերք, զենք, 631 թնդանոթ, 292 տանկ։ Երբ սառեց լիճը, ավտոմոբիլային ճանապարհով 1942—1943 թթ. Լենինգրադ տեղափոխվեց 215 հազար տոննա բեռ։ Պաշարման ամբողջ ընթացքում Լադոգայի սառցային ու ջրային ճանապարհով Լենինգրադ փոխադրվեց 1870 հազար տոննա բեռ[239]։ «Մեծ երկրի» մեծ օգնությունը բարոյական նոր լիցք հաղորդեց Լենինգրադի պաշտպաններին։ Այլևս ոչ մի ուժ չէր կարող սասանել նրանց անկոտրում կամքն ու համառությունը։

1942 թ. ամռանը հիտլերյան հրամանատարությունը հաստատեց Լենինգրադի գրավման նոր պլան՝ «Ֆոյերցաուբեր» ծածկանվամբ և «Հյուսիս» բանակների խմբին հանձնվեց Մանշտեյնի 11-րդ բանակը։ Մինչ ֆաշիստական բանակները կպատրաստվեին հարձակման, 1942 թ. հուլիս-օգոստոսին Լենինգրադյան ռազմաճակատի զորքերը հակահարձակման անցան։ Լենինգրադի մատույցներում նորից բորբոքվեցին կատաղի մարտերը։ Մի քանի օրվա ընթացքում գլխովին ջախջախվեցին ֆաշիստական դիվիզիաները և նորից ձախողվեցին Լենինգրադը գրավելու հիտլերականների պլանները։

Հուլիսի 23-ին Կոլպինոյից հարավ-արևելք հակառակորդի պաշտպանությունը գրոհեցին 268-րդ դիվիզիայի զորամասերը՝ 220-րդ տանկային բրիգադի աջակցությամբ։ Կոտրելով թշնամու համառ դիմադրությունը, առաջինը Պուտրոլովո մտավ դիվիզիայի 947-րդ հրաձգային գնդի 2-րդ գումարտակը, ադրբեջանական ժողովրդի զավակ կապիտան Հասան Մուստաֆաևի հրամանատարությամբ։ Ռազմիկները ոգևորված հրամանատարի անձնական օրինակով, ճեղքեցին թշնամու պաշտպանության առաջավոր գիծը, քարուքանդ արեցին 9 դոտ, գրավեցին 23 գետնափոր պաշտպանական կետ, 3 թնդանոթ, 3 գնդացիր, ռազմամթերքի պահեստ և այլ ռազմավար, գերեցին 5 հիտլերական։ Գումարտակը փայլուն կատարեց հրամանատարության մարտական առաջադրանքը, գրավեց Պուտրոլովո բնակավայրը և կտրեց Յամ—Իժորա—Կատալովո—Պուտրոլովո—Պուշկինո խճուղային ճանապարհը։ Խիզախ հրամանատարը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[240]։ Զարգացնելով հարձակումը, դիվիզիայի զորամասերը գրավեցին Յամ-Իժորա ուժեղ ամրացված հենա-

---

239 «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 296—297.
240 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 8058, գ. 333, թ. 393։

կետերը։ Աշքի ընկան Ա. Ա. Սուխովի, ավագ լեյտենանտներ Ս. Գ. Զույկովի և Գ. Կ. Շոկունի գումարտակները։ Մեծ համառությամբ թշնամու դիրքերն էին գրոհում 85-րդ և 109-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը։ 85-րդ հրաձգային դիվիզիայի 103-րդ գնդի ստորաբաժանումների հարձակմանը, Ստարո-Պանովո բնակավայրի ուղղությամբ, աջակցում էր գնդի հրետանային մարտակոցը՝ կապիտան Տաճատ Արմենակի Սահակյանի հրամանատարությամբ։ Հուլիսի 21-ին Տ. Սահակյանը ծանր վիրավորվեց[241]։

1942 թ. հուլիսի վերջին մարտերը ցույց տվեցին, որ զգալիորեն բարձրացել է Լենինգրադը պաշտպանող դիվիզիաների մարտունակությունը։ Օգոստոսի 19-ին սկսվում է Լենինգրադի ռազմաճակատի՝ Սինյավինի հարձակողական գործողությունը։ Նորից աշքի ընկավ 268-րդ հրաձգային դիվիզիան՝ գնդապետ Ս. Ի. Դոնսկովի հրամանատարությամբ։ Արագ ու վճռական գործողությունների շնորհիվ դիվիզիայի ստորաբաժանումները գրավեցին Իվանովսկի հենակետը։ Աշքի ընկան ավագ լեյտենանտ Ա. Յա. Կոստրուբոյի դեսանտայինները և Ն. Կուկորենկոյի գումարտակը։ Հատկապես համառ էին մարտերը Տոսնո գետի արևելյան ու արևմտյան ափերը միացնող կամուրջի շրջանում։ Նիկոլայ Կուկորենկոյի գումարտակից իրենց մարտիկներին առաջինը գրոհի տարան ավագ քաղղեկ Գենեզդիլովը և կարմիրբանակային Վերտլյուգովը, բայց հակառակորդի դզոտի գնդացրային կրակը խանգարում էր հարձակմանը։ Սողալով դզոտին են մոտենում կարմիրբանակայիններ Իսմատովն ու Սաբուրովը և նռնակներով լռեցնում գնդացրային կրակը։ Կամուրջը գրավվում է։ Մարտերի ժամանակ աշքի ընկան նույն դիվիզիայի կապավորներ Ռուվիմ Սպրինցոն, Միխայիլ Տյուտևը, Սերգեյ Բուբնովը և Վլադիմիր Լյուկայտիսը։ 268-րդ հրաձգային դիվիզիայի հաջողությունները զարգացնելու համար Իվանովսկի հենակետը ուղարկվեցին 43-րդ, 70-րդ և 136-րդ հրաձգային դիվիզիաների ստորաբաժանումները։ Հենակետի պաշտպանությունն ավելի ամրապնդվեց։ Օգոստոսի 27-ին հարձակման անցավ Վոլխովյան ռազմաճակատի 8-րդ բանակը՝ Սինյավինի ուղղությամբ։ Հակառակորդը Շլիսելբուրգ-Մգա խմբավորման շրջապատման սպառնալիքը վերացնելու համար այդ շրջանը նետեց խոշոր ուժեր և կասեցրեց մեր զորքերի հարձակումը։ Բարդություններից խուսափելու համար Զորակայանը սեպտեմբերի 12-ին հրամայեց դադարեցնել գործողությունը։ Սեպտեմբերի վերջին մարտական ակտիվ գործողություններ սկսվեցին Մոսկովյան Դուբ-

---

241 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 682524, գ. 107, թ. 557։

բովկայի շրջանում։ Հրետանային ու ավիացիոն նախապատրաստություններից հետո 70-րդ, 86-րդ հրաձգային դիվիզիաների 169-րդ և 252-րդ գնդերն ուժեղ գրոհով Նևայի ձախ ափում գրավեցին հենակետը։ Աջի ընկավ 70-րդ հրաձգային դիվիզիայի 329-րդ գունդը, որը փոխգնդապետ Մ. Ի. Զալիաշվիլու հրամանատարությամբ ետ մղեց հակառակորդի մի քանի հակագրոհները և ամուր պահեց գրաված բնագիծը։ Այդ մարտերի ընթացքում իրեն լավ դրսևորեց 136-րդ հրաձգային դիվիզիայի կապի դասակի հրամանատար ավագ լեյտենանտ Նիկոլայ Գաբրիելի Գաբրիելյանը։ Նա սկզբից մինչև վերջ մասնակցեց Լենինգրադի համար մղված բոլոր ճակատամարտերին։ Մարտնչեց Խանկոյում, Կարելական պարանոցում, մասնակցեց Լենինգրադի բլոկադայի վերացման վճռական մարտերին։ Ցուցաբերած արիության համար պարգևատրվեց Կարմիր աստղի և Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով։ Հենակետի ընդլայնման մարտերում աջի ընկան փոխգնդապետներ Ֆ. Ա. Բուդանովը, Ս. Ա. Պոդլուցկին, մայորներ Ս. Զ. Կադացկին, Պ. Ֆ. Կուզնեցովը, կապիտաններ Դ. Վ. Լուկինը, Մ. Դ. Սկոտնիկովը։ Հերոսի մահով զոհվեց 70-րդ հրաձգային դիվիզիայի զինկոմ Գ. Վ. Ժուրբան[242]։

Հերոսական գործերով փառք ու պատիվ վաստակեցին Բալթյան կարմրադրոշ նավատորմի ռազմանավերում, նավախմբերում, ավիացիոն, հրետանային ու հետևակային զորամասերում թշնամու դեմ մարտնչող փառապանծ նավատորմայինները։

1942 թ. նավատորմն իր հզոր կրակով մեծապես աջակցեց սովետական զորքերի հարձակողական գործողություններին Լյուբանի, Իվանովսկի, Յամ-Իժորի, Սինյավինի շրջաններում։ Հակամարտկոցային կրակով ոչնչացվեցին թշնամու մի քանի տասնյակ հեռաձիգ թնդանոթներ, ռազմական պահեստներ, պաշտպանական ամրություններ և այլն։ Միայն Լյուբանի հարձակողական գործողությունների ժամանակ նավատորմի հրետանին 14050 ական կրակեց հակառակորդի դիրքերի վրա։ Թշնամուն ծանր կորուստներ պատճառեց նավատորմի ավիացիան։ Գրոհող օդաչուներից աջի ընկան Ա. Ս. Պոտապովը, Մ. Գ. Կլիմենկոն, Ն. Գ. Ստեփանյանը, Ա. Ն. Մազուրենկոն, կործանիչ օդաչուներ Յա. Զ. Սլեպենկոն, Ի. Ի. Գորբաչևը, Վ. Մ. Սուշկինը, Պ. Ի. Պավլովը և ուրիշներ։ Հսկայական էր նավատորմի դերը բեռների փոխադրման գործում։ 1942 թ. Լենինգրադ—Կրոնշտադտ, Օրանիենբաում—Լիսինոս—Կրոնշտադտ և հա-

---

[242] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 304—306.

կառակը տեղափոխվեց 112142 տոննա բեռ և 94962 մարդ։ Լադոգա լճով տեղափոխվեց 1063600 տոննա բեռ և 884000 մարդ[243]։

Համախմբված ռուս ժողովրդի զավակների շուրջը, նավատորմի կազմում թշնամու դեմ հերոսաբար մարտնչեցին մեր երկրի տարբեր ազգությունների շատ զավակներ, որոնք մարտական սխրանքներով իրենց համեստ ավանդը ներդրին Լենինի քաղաքի պաշտպանության հերոսամարտում։

Հիտլերյան ծովահենների դեմ մղված մարտերում հմուտ հրամանատարի հատկություններ դրսևորեց Կրոնշտադտի պաշտպանական շրջանի կործանիչ կատերների ջոկատի հրամանատարի քաղաքով տեղակալ, 3-րդ կարգի կապիտան Ստեփան Ժամկոչյանը։ 1942 թ. նա անձամբ մասնակցեց Բիորկե-Զունդում և Լուգայի ծովախորշում հակառակորդի ստորաբաժանումների ջախջախման մարտական գործողություններին[244]։

1942 թ. մայիսի 5-ին ֆիննական ծոցում անմահ սխրագործություն կատարեց ականորս նավերի բրիգադի 3-րդ դիվիզիոնի օղակի հրամանատար լեյտենանտ Վահան Ակոպովը[245]։ Նրա պարգևատրման թերթիկում գրված է. «Կատեր ականորսները հակառակորդի կողմից ենթարկվեցին հրետանային ուժեղ ռմբակոծության։ Ընկեր Ակոպովն անձնական օրինակով ոգևորելով անձնակազմին, հակառակորդի հրետանաականանետային հզոր կրակի տակ հմտորեն ծխաքողարկեց կատեր ականորսներին։ Հակառակորդը ծխաքողարկման մեջ նկատելով պատուհան, լուսարձակներով լուսավորեց կատերները և կրկին սկսեց հրետանային ուժեղ ռմբակոծությունը։ Տեսնելով կատերներին սպառնացող վտանգը, ընկ. Ակոպովն այդ լարված պահին կատարեց լրացուցիչ ծխաքողարկում։ Կատերին հասցված վեց դյույմանոց արկի ուղիղ հարվածով սպանվեց լեյտենանտ Ակոպովը։ Արհամարհելով մահը, նա պատվով կատարեց մարտական առաջադրանքը, փրկելով 14 ականորս կատեր, որոնք հաջողությամբ վնասազերծեցին Լենինգրադ—Կրոնշտադտ տարածությունը»[246]։ Վահան Ակոպովը եռմահու պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով և նավատորմի հրամանատարի հրամանով առհավիտ գրանցվեց ստորաբաժանման անձնակազմի ցուցակում։

---

[243] «Борьба за Советскую Прибалтику в Великой Отечественной войне 1941—1945», т. I, с. 156, 160, 169.

[244] ՌԾԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 96, թ. 107։

[245] Վահան Սեմյոնի Ակոպովը ծնվել է 1920 թ. Կրասնոդար քաղաքում։

[246] ՌԾԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 173, թ. 52։ Ա. Ն. Մնացականյան, Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմում, էջ 311։

Նույն թվականի օգոստոսի վերջերին, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով, Դանցիգ նավահանգստի մատույցները հասավ «ՇՉ-310» սուզանավը։ Նավի մարտական մասի հրամանատարն էր Գեորգ Շահինյանը։ Սուզանավից սեպտեմբերի 31-ին արձակած առաջին տորպեդով խորտակվեց Թշնամու 10000 տոննա[247] ջրատարողությամբ փոխադրանավը[248]։ Թշնամու կատերները նետվեցին դեպի սուզանավը, նրա վրա գցելով 30 ական, բայց սուզանավը մանևրելով, դուրս եկավ հարվածի շրջանից և նորից դիրքավորվեց։ Երկրորդ անգամ, մեկ ուրիշ նավի վրա հարձակվելու ժամանակ, նավը վնասվածք ստացավ և ուղղություն վերցրեց Դոգլանդ կղզին։ Ճանապարհին դիպչելով մագնիսական ականի, սուզանավը ծանր վնասվածք ստացավ։ Շահինյանը մի խումբ նավաստիների հետ 12 ժամ մինչև կոկորդը ջրի մեջ ընկղմված վիճակում մի կերպ վերացրեց վնասվածքը, որից հետո նավը մեծ դժվարությամբ հասավ Կրոնշտադտ[249]։ Հրամանատարության մարտական առաջադրանքը կատարելու համար Շահինյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով։

Թշնամու դեմ մղված մարտերում հերոսաբար կռվեցին Վռամ Հարությունյանի, Գուրգեն Առուստամովի, Համբարձում Մարտիրոսյանի, Գեորգ Իլյարովի, Գուրգեն Խաչատուրովի, Միր Սարկիսովի, Վլադիմիր Սարգսյանի, Արամայիս Ալարյանի, Արթուր Հակոբյանի, Հովհաննես Մկրտչյանի, Ասատուր Վարդանյանի, Արմենակ Ակոպովի, Պետրոս Պետրոսյանի, Հակոբ Հովակիմյանի ստորաբաժանումներն ու նավերի անձնակազմերը։ Օդային հարձակումներից «Հոկտեմբերյան հեղափոխություն» խոշոր գծանավի անվտանգությունն էր ապահովում նավի զենիթային մարտկոցը՝ ավագ լեյտենանտ Հակոբ Հովակիմյանի հրամանատարությամբ։ Հակառակորդի ռմբակոծիչները մեծ ջանքեր գործադրեցին խորտակելու գծանավը, բայց ապարդյուն։ Նրանք միշտ հանդիպում էին զենիթայինների խաչաձև կրակին և ռումբերը նետում աննպատակ։ Հակառակորդի ինքնաթիռները քսան անգամ գրոհելով նավի վրա, նետեցին 300 ռումբ, բայց արդյունքի չհասան[250], փոխարենը կորցրին չորս ինք-

---

[247] 10000 տոննա ջրատարողությամբ նավը կարող է տանել 5000—6000 տոննա օգտակար բեռ, մեկ երթում կարող է տեղափոխել 70—80 ծանր տանկ, կամ 200 միջին տանկ, մինչև 200 զրահապատ մեքենա, 2000 զինվոր։ Այսպիսի նավի խորտակումը կզրկի 5 դիվիզիայի մատակարարումը մոտ 2 ամիս։

[248] ՀՄՊՊԿ արխիվ, ֆ. 253, գ. 35ա, թ. 4։

[249] Նույն տեղում, թ. 4—20։

[250] «Боевой путь Советского Военно-морского флота», М., 1964, с. 355.

նաթիռ։ Նավատորմի հրամանատարությունը 1941 թ. Հ. Հովակիմյանին պարգևատրեց Կարմիր դրոշի շքանշանով[251]։

Նավատորմում զգալի թիվ էին կազմում Միջին Ասիայի հանրապետություններից զորակոչվածները, որոնք շրջափակման ամբողջ ընթացքում մեծ նվիրվածությամբ մարտնչեցին սիրելի քաղաքի համար։ «Կիրով» գծանավի շենքությունը իրականացնում էր Ղազախստանի կոմերիտական կազմակերպությունը։ Նրա պատվիրակները 1942—1943 թթ. երկու անգամ եղան նավում։ Ղազախստանի ԼԿԵՄ Կենտկոմի որոշմամբ 50 ղազախ կոմերիտականներ ուղարկվեցին Լենինգրադ՝ նավում ծառայելու համար[252]։ Լենինգրադի համար հերոսաբար մարտնչեցին ծովային-հետևակային բաշկիր Դանիելամ Մուխատինովը, թաթար նավատիներ Նիկոլայ Մանգալիմովը, Իսմադ Մամեդովը, էստոնացի Յուլիաս Վախտը, մորդվաներ Պավել Ասպաևան, Դերասիմ Դլինը, վրացիներ Շոթա Մոնասելաձեն, Ամերոն Զիչինաձեն և շատ ուրիշներ։ Ունենալով այդպիսի նվիրված հայրենասեր պաշտպաններ, որոնք ներկայացնում էին բազմազգ սովետական բանակը, Լենինգրադն այդ մեծ դոտեմարտում դիմացավ դաժան փորձությանը և հաղթանակով դուրս եկավ ծանր վիճակից։

Այսպիսով, Լենինգրադյան, Վոլխովյան և Հյուսիսարևմտյան ռազմաճակատների ակտիվ գործողությունները ձախողեցին հիտլերյան հրամանատարության՝ Լենինգրադը գրավելու նոր պլանը։ Ավելին, դրանք մեծ չափով օգնեցին Ստալինգրադի ու Հյուսիսային Կովկասի շրջաններում կռվող մեր զորքերին։

1942 թ. մարտական գործողությունների ընթացքում Լենինգրադը պաշտպանող սովետական զորքերն ավելի կոփվեցին ու ամրապնդվեցին, ձեռք բերեցին անհրաժեշտ փորձ։ Դեռևս Սինյավինի օպերացիայի ընթացքում, Լենինգրադյան ռազմաճակատի հրամանատարությունը և ռազմական խորհուրդն առանձնակի ուշադրությամբ պատրաստվում էին ձրմեռային մարտական գործողություններին՝ շրջափակումը ճեղքելու համար։ Նախօրոք մշակված «Իսկրա» պլանով ճեղքումը պետք է իրականացվեր հանդիպակաց հարվածով՝ Շլիսելբուրգ—Սինյավին ելուստում, 67-րդ (Լենինգրադյան ռազմաճակատ) և 2-րդ հարվածային (Վոլխովյան ռազմաճակատ) բանակների կողմից։ Լենինգրադյան ռազմաճակատից մարտական գործողությանը մասնակցում էին 7 հրաձգային դիվիզիաներ,

---

251 ՌՇԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 460, թ. 22։

252 «Казахстан в период Великой Отечественной войны Советского Союза 1941—1945», Сборник документов и материалов, т. I, с. 552.

3 հրաձգային, 3 տանկային և 1 դահուկային բրիգադներ։ Վոլխովյան ռազմաճակատից մասնակցում էին 11 հրաձգային դիվիզիաներ, 4 տանկային, 2 դահուկային և 2 ինժեներասակրային բրիգադներ։ Օդից մեր հարձակվող զորքերին պետք է աջակցեին 13-րդ և 14-րդ ավիացիոն բանակները՝ ավիացիայի գեներալ-մայորներ Ս. Դ. Ռիբալչենկոյի և Ի. Պ. Ժուրավլյովի հրամանատարությամբ[253]։

Շրջափակումը ճեղքելու մարտական գործողություններին ակտիվորեն մասնակցեցին մեր երկրի տարբեր ազգությունները ներկայացնող հազարավոր ռազմիկներ։

Հարձակման նախօրյակին 1942 թ. հոկտեմբերի 25-ի տվյալներով Լենինգրադյան ռազմաճակատի կազմը այսպիսի պատկեր ուներ[254]։

Ազգություն	կազմում է՝ 23-ը	կազմում է՝ 42-ը	կազմում է՝ 55-ը	կազմում է՝ 69-ը	կազմում վիճակագրական տվյալներով	Մրցակցությունների տվյալներով
Ռուսներ	70,0	76,3	78,1	79,1	77,9	79,6
Ազգային փոքրամասնություններ	30,0	23,7	21,9	20,9	22,1	20,4

Հարձակմանը մասնակցող 67-րդ բանակի 45-րդ գվարդիական, 13-րդ, 136-րդ, 268-րդ, 123-րդ և 46-րդ հրաձգային դիվիզիաներում 1943 թ. հունվարի 1-ին կար ռուս՝ 39516, ուկրաինացի՝ 5746, բելոռուս՝ 1692, ղազախ՝ 1453, ուզբեկ՝ 412, թուրքմեն՝ 223, հայ՝ 197, վրացի՝ 163, կիրգիզ՝ 158, ադրբեջանցի՝ 103 և այլ ազգություններ[255]։ 2-րդ հարվածային բանակի 11-րդ, 191-րդ, 256-րդ, 239-րդ, 376-րդ հրաձգային դիվիզիաներում 1943 թ. հունվարի 1-ին կար ռուս՝ 26055, ուկրաինացի՝ 2885, բելոռուս՝ 718, ղազախ՝ 813, ուզբեկ՝ 610, հայ՝ 73, վրացի՝ 70, ադրբեջանցի՝ 61, թուրքմեն՝ 61, կիրգիզ՝ 49, տաջիկ՝ 27 և այլ ազգություններ[256]։

---

253 *В. Е. Зубаков*, Героический Ленинград, с. 11—12.

254 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1217, գ. 176, թ. 83։

255 Նույն տեղում, ֆ. 45-րդ գվ. հր. դիվ., ց. 1, գ. 1, թ. 61, ֆ. 1074, ց. 1, գ. 1, թ. 23, ֆ. 1192, ց. 1, գ. 1, թ. 19, ֆ. 268-րդ հր. դիվ., ց. 484294, գ. 1, թ. 9։ Հաշվումները կատարվել են մեր կողմից։

256 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1069, ց. 1, գ. 1, թ. 27, ֆ. 1249, ց. 484369, գ. 1, թ. 17, ֆ. 239-րդ հր. դիվ., ց. 484321, գ. 1, թ. 26, ֆ. 256-րդ հր. դիվ., ց. 484430, գ. 1, թ. 33, ֆ. 376-րդ հրաձգ. դիվ., ց. 484306, գ. 1, թ. 177։

Զորքերի մարտունակությունը, նրա բարոյաքաղաքական ոգին բարձրացնելու գործում հսկայական աշխատանք կատարեցին կուսակցական-քաղաքական օրգանները։ Կուսակցական ազդեցությունը ստորաբաժանումներում ամրապնդելու համար հիմնական ուշադրությունը դարձվեց այն խնդրին, որ բոլոր վաշտերում ու մարտկոցներում ստեղծվեն լիարյուն կուսակցական ու կոմերիտական կազմակերպություններ։ Կուսակցության շարքերը համալրվեցին մարտերում իրենց լավ դրսևորած ռազմիկներով։ 1942 թ. դեկտեմբերին Վոլխովյան ռազմաճակատի 2-րդ հարվածային բանակում կոմունիստների թիվն ավելացավ 2048-ով, 67-րդ բանակի երեք դիվիզիաներում տրվեց 2380 դիմում՝ կուսակցության և կոմերիտմիության շարքերն ընդունվելու համար[257]։ 45-րդ գվարդիական դիվիզիայից 1942թ. դեկտեմբերի 9-ից մինչև 1943թ. հունվարի 9-ը կուսակցության շարքերն ընդունվեցին 350 մարդ։ Հարձակման նախապատրաստման վերջին օրերին կուսակցության ու կոմերիտմիության շարքերն ընդունվելու համար 136-րդ, 86-րդ և 123-րդ հրաձգային դիվիզիաներից համապատասխան դիմեցին 1200, 680, 500 զինվոր ու ըսպա[258]։

Այդ ընթացքում 67-րդ և 2-րդ հարվածային բանակներում կուսակցության շարքերն ընդունվեցին ավելի քան 28000 զինվոր ու սպա[259]։ Հարձակմանը նախապատրաստվող բոլոր զորամասերում ու ստորաբաժանումներում տեղի էին ունենում ժողովներ, միտինգներ, կուսակցական ու կոմերիտական ժողովներ։ 2-րդ հարվածային բանակի 5 միավորումներում տեղի ունեցավ 176 միտինգ, ուր բուռն հայրենասիրական ելույթներով հանդես եկան բազմաթիվ զինվորներ ու հրամանատարներ։ Միտինգները վերածվում էին երդման արարողության։ 90-րդ հրաձգային դիվիզիայում մարտիկները վաշտերով երդում էին տալիս. «Առաջիկա մարտում մենք կկռվենք համառ, արիաբար ու խիզախ,—ասված է երդման տեքստում,—հաղթանակի համար չենք խնայի մեր ուժը, արյունը, կյանքը... Երդվում ենք, որ թշնամու դեմ կկռվենք այնպես, որ 90-րդ Կարմրադրոշ հրաձգային դիվիզիայի մարտական փառքը նշանավորվի նոր սխրանքներով»[260]։

Միտինգներից մեկում 268-րդ հրաձգային դիվիզիայի 952-րդ գնդի

---

257 *И. П. Барбашин, А. И. Кузнецов...*, Битва за Ленинград, с. 249.

258 *В. М. Ярхунов*, Через Неву. М., 1960, с. 42.

259 «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 365.

260 *Նույն տեղում, էջ 255։*

մարտիկ Մարտուսյանը հայտարարեց. «Հաղթանակի համար երկիրը տրվել է մեզ ամեն ինչ։ Մենք լավ զինված ենք... Ֆաշիստներն այս անգամ չեն դիմանա Լենինգրադի տակ։ Նրա դեմ յուրաքանչյուրի հոգում եռում է ցասումը։ Հիտլերականներին հարվածում ու քշում են հարավից և Կովկասից։ Այժմ նրանք հարված կստանան Նևայի մոտ»[261]։

Քաղաշխատանքում զգալի տեղ հատկացվեց զինվորական կարգապահության և զգոնության բարձրացման հարցերին։ Կարդացվեցին դասախոսություններ՝ «Կոմունիստական կուսակցությունը . սովետական ժողովրդի ու բանակի հաղթանակի կազմակերպիչն ու ոգեշնչողն է», «Լենինգրադի հերոսական պաշտպանությունը», «Ստալինգրադյան մեծ ճակատամարտը» թեմաներով։ Հատուկ պլանով 67-րդ բանակում աշխատանք տարվեց տարբեր ազգությունների պատկանող ռազմիկների շրջանում։

Հարձակումից մեկ օր առաջ բանակների ռազմական խորհուրդները դիմեցին անձնակազմերին՝ կոչ անելով անողոքաբար կռվել թշնամու դեմ և Լենինգրադն ազատել պաշարումից։

3. ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՃԵՂՔՈՒՄԸ։ ԱՆԱՌԻԿ ԱՄՐՈՑԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄԱՐՏՆՉԵԼ

1943 թ. հունվարի 12-ին Լենինգրադյան և Վոլխովյան ռազմաճակատների հազարավոր հրանոթների հուժկու համազարկերը ցնցեցին հողը, ազդարարելով Լենինգրադի շրջափակման ճեղքման ահեղ ճակատամարտի սկիզբը։ Երկինք խոյացան սովետական փառապանծ օդաչուները, մահ ու ավեր տարածելով թշնամու մարտակարգերում։ Երկու ժամ անց հարձակման անցավ հետևակը։ Երկու կողմից՝ 12—13 կմ ճակատով հարձակվող Լենինգրադյան ու Վոլխովյան ռազմաճակատների երկու բանակներին բաժանում էր 13—14 կմ տարածություն։ Թվում էր, թե կարելի է հեշտությամբ հաղթահարել այդ տարածությունը և միանալ միմյանց։ Բայց իրականում դա դժվարին խնդիր էր։ Թշնամին այդ փոքր շրջանը ծածկել էր ցիմենտբետոնից կառուցված բազմաթիվ պաշտպանական ամրություններով, որոնց հաղթահարումը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Չնայած դրան, անանցանելի համարվող այդ տեղամասը հաղթահարվեց սովետական բանակների կողմից։ «Հանուն հայրենիքի»,

---

[261] *В. Е. Зубаков*, Прорыв блокады, М., 1963, с. 14։

«Հանուն Լենինգրադի», «Մահ ֆաշիստներին» կոչերով հրամանատարները, կոմիսարները և քաղաշխատողներն իրենց հետևից գրոհի տարան մարտիկներին։ Գրոհողների առաջին շարքերում էին կոմունիստներն ու կոմերիտականները։ Հակառակորդի դիմադրությունը հատկապես ուժեղ էր Շլիսելբուրգի և Մոսկովսկայա Դուբրովկայի շրջաններում։ Դեպի Շլիսելբուրգ հարձակվող 86-րդ հրաձգային դիվիզիայի հարձակումը դարգացնելու համար այդ շրջանն ուղարկվեց 61-րդ թեթև տանկերի բրիգադը՝ փոխգնդապետ Վ. Վ. Խրուստիցկու հրամանատարությամբ։ Տանկիստները մեծ արագությամբ անցան Նևա գետը, թևից ու թիկունքից հարվածելով հակառակորդին, ներխուժեցին Մարինի անտառակը։ Տանկային գրոհի նախաձեռնողներն էին տանկիստներ Ստեպանովը, Կոպիտը, Սեմյոնովը, Զաբելինը, Մելքոնյանը, Օսատյուկը և Մակարենկոն[262]։ 136-րդ հրաձգային դիվիզիան, գեներալ Ն. Պ. Սիմոնյակի հրամանատարությամբ, հուժկու հարձակմամբ ճեղքեց թշնամու պաշտպանությունը և համառ մարտերից հետո գրավեց Պիլնոյ Մելնիցա և Մարինի բնակավայրերը։ Հաջորդ օրը դիվիզիան առաջ շարժվեց 5—6 կմ և դուրս եկավ 5-րդ բանվորական ավանի շրջանը։ Այստեղ, հանդիպելով թշնամու ուժեղ դիմադրությանը, դադարեցրեց հարձակումը։

Համառ մարտերով թշնամու պաշտպանությունը հաղթահարող 67-րդ լանակի միավորումներում ծնվեցին նոր հերոսներ, որոնք քաջության ու անձնազոհության բազմաթիվ օրինակներ դրսևորեցին։

Երբեք չի մոռացվի 136-րդ հրաձգային դիվիզիայի 270-րդ հրաձգային գնդի կապավոր, ուկրաինացի Դիմիտրի Մոլոդցովի անմահ սքրագործությունը։ Մարտիկների մի խումբ գրոհի նետվեց՝ նպատակ ունենալով ոչնչացնել թշնամու հրետանային մարտկոցը, բայց թշնամու գնդացրային կրակը թույլ չտվեց մարտիկներին առաջ շարժվելու։ Դիմիտրի Մոլոդցովը հրամանատարի թույլտվությամբ սողալով մոտեցավ կրակակետին և մի քանի նռնակներ նետեց։ Լսվեցին ուժեղ պայթյուններ։ Հիտլերականների մեծ մասը սպանվեց, բայց կենդանի մնացած ֆաշիստները նորից սկսեցին կրակել։ Այդ ժամանակ առանց վարանելու հերոսը բարձրացավ տեղից, վազեց դեպի դզոտը և իր մարմնով փակեց մահվան հրակնատը։ Ստորաբաժանումը գրոհի նետվեց և ոչնչացրեց թշնամու ծանրը հրետանու մարտկոցը[263]։ Դիմիտրի Մոլոդցովին ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

---

[262] *С. П. Свиридов, В. П. Якутович, В. Е. Василенко.* Битва за Ленинград, с. 309.

[263] *В. А. Солдатов,* Матросовы в битве за Ленинград, с. 23—24.

Հերոսաբար մարտնչեց նաև Մոլոդցովի հայրենակից, 61-րդ թեթև տանկային բրիգադի 549-րդ առանձին տանկային գումարտակի տանկային վաշտի հրամանատար Դիմիտրի Օսաուլովը և մեխանիկ-վարորդ Իվան Մակարենկովը։ Խիզախ տանկիստները հմտորեն համագործակցելով 136-րդ հրաձգային դիվիզիայի 270-րդ գնդի ստորաբաժանումների հետ, հարձակողական գործողությունների ամբողջ ընթացքում 9 անգամ գրոհեցին հակառակորդի դիրքերի վրա, ոչնչացրին 11 թնդանոթ, 17 հակատանկային հրացան, 9 գնդացիր և 500 զինվոր ու սպա[264]։ Խիզախ տանկիստներին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Այդ մարտերում աչքի ընկան Սերգեյ Պատուցան, Նիկոլայ Ֆիլիպովը, Իվան Արտեմը և ուրիշներ։

Հունվարի 13-ին 3-րդ բանվորական ավանի մոտ սրընթաց գրոհով նույն բրիգադի 548-րդ առանձին տանկային գումարտակի տանկային դասակը լեյտենանտ Վարշամ Մկրտիչի Պատվականյանի հրամանատարությամբ կոտրեց թշնամու դիմադրությունը, ոչնչացրեց մեծ թվով հիտլերականներ և նպաստեց մյուս ստորաբաժանումների առաջշարժմանը[265]։ 61-րդ մոտոհրաձգային գնդացրային գումարտակի ջոկատի հրամանատար Հակոբ Ջանոյանն առաջինը ներխուժեց հակառակորդի խրամատը և անձամբ ոչնչացրեց 15 հիտլերական[266]։ Ավագ լեյտենանտ Ալեքսանդր Յրվետկովի ականանետային դասակը ոչնչացրեց 12 դզոտ, 200 հիտլերական։ Արագ ու եռանդուն էր գործում դասակի սանիտարուհի Նինա Կոսարևան, որը ռազմի դաշտից դուրս բերեց 61 վիրավոր ռազմիկների[267]։

Յոթօրյա մարտերում ցուցաբերած արիության ու խիզախության համար 61-րդ տանկային բրիգադի 250 զինվորներ, տանկիստներ ու հրամանատարներ պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով։ Բրիգադին շնորհվեց գվարդիականի կոչում և սկսվեց կոչվել 30-րդ գվարդիական տանկային բրիգադ[268]։

Շրջափակման ճեղքման ու հետագա մարտերի ընթացքում աչքի ընկան Գրիգորի Ռոյը, Ռուբեն Համազասպի Սարոյանը, Վասիլի Բոդինովը, Կորյուն Արշակի Մուշեղյանը, Եվգենյա Գոլկովսկայան, Սադիկով Նա-

---

264 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 3112, ց. 2, գ. 6, թ. 32։

265 Նույն տեղում, գ. 7, թ. 26։

266 Նույն տեղում, թ. 54, Հակոբ Արզումանի Ջանոյանը ծնվել է 1917 թ., Կամոյի շրջանի Կարմիր գյուղում։ Նա զոհվեց 1943 թ. հուլիսի 25-ին, Լենինգրադի մարզի Արրուզովո ընակավայրի մոտ։ Թաղված է № 3 եղբայրական գերեզմանոցում։

267 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 3112, ց. 2, գ. 7, թ. 25, 54, 70։

268 «Оборона Ленинграда 1941—1944», с. 286.

զիֆը, Կոնստանտին Կորոբովը, Նիկոլայ Գալիխինը, Բոգդան Արտեմի Բաղդասարովը, Մահրամ Հուսեյնովը և շատ ուրիշներ։

Սովետական ռազմիկները կռվում էին մեծ համառությամբ։ Իրենց խիզախ հրամանատար կապիտան Ռոդիոնովի հետ հերոսաբար զոհվեցին 136-րդ հրաձգային դիվիզիայի հրետանային դիվիզիոնի մարտիկները։ Հրետանավորների դեմ հակառակորդը նետեց 16 տանկ։ Նշանառու կրակով տանկերը մեկը մյուսի ետևից դուրս էին գալիս շարքից։ Նոսրանում էին նաև հրետանավորների շարքերը։ Հրետանավորները կյանքի գնով թույլ չտվեցին հակառակորդին կատարելու թևային շրջանցում[269]։

Լենինգրադի համար մղվող այդ դաժան ու ծանր կռիվներում ամրապնդվում էր մարտական բարեկամությունն ամենատարբեր ազգությունների պատկանող ռազմիկների միջև։ Թշնամու մարտակարգերի վրա գրոհելով՝ ռուսների հետ միասին խիզախության ու անձնազոհության օրինակներ դրսևորեցին ուկրաինացին ու բելոռուսը, հայն ու վրացին, ղազախն ու ուզբեկը, տաջիկն ու ադրբեջանցին, օսն ու թաթարը և այլ ազգությունների ներկայացուցիչներ։ Հերոսական մեծ սխրանք կատարեցին հակառակորդի ամրությունները գրոհող Լենինգրադյան և Վոլխովյան ռազմաճակատների 123-րդ հրաձգային բրիգադի և 372-րդ հրաձգային դիվիզիայի տարբեր ազգությունների պատկանող ռազմիկները, որոնց առաջինին բախտ վիճակվեց ճեղքել շրջափակումը և միանալ իրար հետ։ Հերոսամարտի պատմության մեջ առհավետ գրանցվեց ռուս և հայ ժողովրդի զավակներ, մայորներ Պավել Մելնիկովի և Հայկ Մելքոնյանի[270] անունները, որոնք հմտորեն ղեկավարելով ենթակա ստորաբաժանումների մարտական գործողությունները, առաջինը ճեղքեցին Լենինգրադի շրջափակումը և իրենց ստորագրությունը դրեցին երկու ռազմաճակատների զորքերի միացման պատմական ակտի տակ։

---

[269] *В. П. Свиридов, В. П. Якутович...* Битва за Ленинград, с. 313—315.

[270] Հայկ Հովհաննեսի Մելքոնյանը ծնվել է 1911 թ. Արևմտյան Հայաստանի Բլուրմակ գյուղում (Թուրքիա)։ 1915 թ. ընտանիքով գաղթում են Արևելյան Հայաստան և բնակություն հաստատում Աբովյանի շրջանի Ջրվեժ գյուղում։ Երբ սկսվեց Հայրենական պատերազմը, նա զրաղեցնում էր ՀԿԿ Երևանի Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը։ 1957—1961 թթ. նա հանրապետության ներքին գործերի մինիստրն էր։ 1961 թ. նա Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի գործերի կառավարիչն էր։ Հայկ Մելքոնյանը մահացավ 1979 թվականին։

Պավել Վասիլևիչ Մելնիկովը ծնվել է 1919 թ. Օդեսայի մարզի Կարլովո գյուղում։ Հայրենական պատերազմից հետո նա մի շարք պատասխանատու պաշտոններ է վարել ՍՍՀՄ զինված ուժերում։ Այժմ էլ գտնվում է զինվորական ծառայության մեջ։

Կոմունիստ հրամանատար Հայկ Մելքոնյանի կյանքի ուղին լի է դժվարությունների հաղթահարման, աշխատանքային ու մարտական սխրագործությունների փառապանծ էջերով։ 1941 թ. նոյեմբերին Հ. Հ. Մելքոնյանը հանրապետության մի շարք կուսակցական ու սովետական աշխատողների հետ զորակոչվեց բանակ։ Մոսկվայում ավարտելով Վ. Ի. Լենինի անվան ռազմական ակադեմիայի չորսամսյա կուրսերը, նա նշանակվեց Լենինգրադյան ռազմաճակատի 67-րդ բանակի 123-րդ առանձին հրաձգային բրիգադի առաջին առանձին գումարտակի կոմիսար։ Հ. Մելքոնյանի անմիջական ղեկավարությամբ ավելի մարտական դարձավ գումարտակի կուսակցական կազմակերպությունը։ Սոցիալիստական խաղաղ շինարարության տարիներին կուտակած կոմերիտական, կուսակցական աշխատանքի հարուստ փորձը երիտասարդ հրամանատարը հմտությամբ կիրառեց ռազմաճակատային պայմաններում և հասավ զգալի հաջողությունների։ Կազմակերպությունը համալրվեց նոր անդամներով։ Գումարտակը պատրաստ էր մարտական գործողությունների։

1943 թ. հունվարի 14-ին, երկրորդ էշելոնում գտնվող 123-րդ առանձին հրաձգային բրիգադը համառ մարտերով հաղթահարեց թշնամու մի շարք պաշտպանական ամրությունները։ Հակառակորդը նոր, թարմ ուժեր մարտի նետեց, ձգտելով խափանել երկու ռազմաճակատների միացումը։ Սակայն նա այլևս ի վիճակի չէր փոխել պայքարի ելքը։ Երկու ռազմաճակատների սովետական զորամասերը կոտրելով թշնամու դիմադրությունը, մոտենում էին իրար։ Հարձակվող յուրաքանչյուր ստորաբաժանում ձգտում էր առաջինը միանալ յուրայիններին։ Դեպի առաջին բանվորական ավանը գրոհող սովետական զորամասերի առջևից էր ընթանում 123-րդ առանձին հրաձգային բրիգադի առաջին առանձին գումարտակը։ Մարտի վճռական պահին գումարտակի հրամանատար կապիտան Բաննիկովը ծանր վիրավորվեց[271]։ Կոմիսար Հայկ Մելքոնյանը, առանց վարանելու, հրամանատարությունը վերցրեց իր վրա և շարունակեց հարձակումը։ Բրիգադի ստորաբաժանումների հետ սերտ համագործակցությամբ գումարտակը գրավեց № 2 բանվորական ավանը։ Համառ ու արյունալի կռիվներ սկսվեց № 1 բանվորական ավանի համար։ Մելքոնյանի ցուցումով մանևրելով, դեպի հակառակորդի դզոտներն են շարժվում գրոհայինները և զրահահարները։ Մարտիկները կռվում էին մեծ ոգևորությամբ, նույնիսկ վիրավորները չէին ցանկանում թողնել մարտի դաշտը։ Վիրավոր մարտիկներ Սոլովյովը, Նովիկովը, Ժուկովը

---

271 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 123-րդ, հր. բրիգադի, ց. 15679, գ. 14—50, թ. 6, 48։

շարունակում էին կրակ տեղալ թշնամու դիրքերի վրա։ «Մենք այստեղից ոչ մի տեղ չենք գնա,—դիմեց ընկերներին վիրավոր Պոլուդինը,—որտեղ մենք, այնտեղ և Լենինգրադը, ո՞վ կթողնի հարազատ քաղաքը»։ Իվանովի գրոհայինները կտրվելով հիմնական ուժերից, շրջապատում են հակառակորդի երկհրաձգային դզոտը, որը խանգարում էր գումարտակի առաջշարժմանը։ Թշնամին օգնություն ուղարկեց շրջապատված դզոտին։ Սկսվեց ծանր ու դժվարին մարտ մի խումբ սովետական ռազմիկների և թվական գերակշռություն ունեցող թշնամու միջև։ Նրանց մեծ մասը զոհվեց։ Ծանր վերք ստացավ հրամանատար Իվանովը, բայց մարտական առաջադրանքը կատարեց կյանքի գնով։ Դզոտը պայթեցվեց։ Գումարտակը գրավեց թշնամու պաշտպանական բնագիծը և դուրս եկավ № 1 բանվորական ավանի ծայրամասը։

Թշնամու խրամատներից 28 մետր հեռավորության վրա, գետնին գամված, ծանր վերք ստացած գրոհայինների հրամանատար ավագ լեյտենանտ Իվանովին և լեյտենանտ Մոիսենկոյին սանիտարները երեք անգամ փորձեցին դուրս բերել ռազմադաշտից, բայց ապարդյուն, թշնամու գնդացրային կրակը թույլ չէր տալիս մոտենալ նրանց։

—Տերենտև,—դիմեց Մելքոնյանը ավագ սերժանտին,—հիշում ես Սուվորովի խոսքերը։

—Ինքդ զոհվիր, իսկ ընկերոջդ փրկիր,—պատասխանում է Տերենտևը։

—Գնա,—հրամայում է Մելքոնյանը։

Գրիգոր Տերենտևը, կապավոր Օլենինի հետ միասին, վտանգելով սեփական կյանքը, կատարեց կոմիսարի հրամանը։ Վիրավոր հրամանատարների կյանքը փրկվեց[272]։ Ծանր կորուստներից խուսափելու համար անհրաժեշտ էր պարզել հակառակորդի կրակակետերի դասավորությունը և ոչնչացնել դրանք։ Մելքոնյանը արագ կողմնորոշվեց։ Ականանետային ներին և զրահահարներին հրամայեց ուժեղ կրակ բացել թշնամու դիրքերի վրա։ Հակառակորդը պատասխան կրակ բացեց, իսկ հատուկ նշանակված դիտորդները քարտեզի վրա նշեցին կրակակետերի դասավորությունը։

1943 թ. հունվարի 18-ի լուսաբացն էր։ Հայկ Մելքոնյանը շտապում էր որքան հնարավոր է շուտ սկսել հարձակումը։ Վերջին կարգադրություններն անելով վաշտի հրամանատարներին, նա հրամայեց ականանետային ուժեղ կրակ բացել թշնամու՝ արդեն հայտնի կրակակետերի ու

---

[272] «Прорыв» (Политуправление Ленинградского фронта), Л., 1943, с. 121—122.

խրամատների վրա և նախապատրաստվել գրոհի։ Երբ սկսվեց գրոհը, առաջինն ինքը նետվեց առաջ, իր ետևից տանելով գումարտակի մարտիկներին։ Թշնամու դզոտից գնդացրային ուժեղ կրակը հարձակվող ռազմիկների շղթաները գամեց գետնին։ Պահը ճակատագրական էր։ Մելքոնյանն առանց ժամանակ կորցնելու, սողալով մոտեցավ թշնամու կրակակետին և նռակներով լռեցրեց այն[273]։ Գումարտակը նորից գրոհի նետվեց։ Համագործակցված ու համերաշխ, հակառակորդի երկաթբետոնե ամրությունները գրոհեցին գումարտակի վաշտերը՝ Կալուգովի, Ռակովի, Իվանովի և Գոլուբեևի գլխավորությամբ։ Չդիմանալով սովետական ռազմիկների հուժկու գրոհին, հակառակորդը խուճապահար նահանջեց։

Կոմիսարը գոհ էր մարտի արդյունքից, գրավված էր 30 հրանոթ, ռազմամթերքի մի քանի պահեստ, գերի էր վերցված թշնամու 300 զինվոր ու սպա։ Բայց չախչախված հակառակորդը դեռևս հուսահատորեն շարունակում էր դիմադրել, ձգտելով որքան հնարավոր է ժամանակ շահել՝ համալրում ստանալու համար։ Եվ, մինչ թշնամին ուշքի կգար, Հայկ Մելքոնյանը. անցած իր քաջերի գլուխ, մխրճվեց հակառակորդի շարքերը, սկսվեց սվինամարտը։ Ռազմաճակատային թերթի թղթակիցներ մայոր Ա. Միխայլովը և կապիտան Վ. Վասիլևսկին «Ճեղքում» գրքում այսպես են նկարագրել երկու ռազմաճակատների հանդիպման պահը. «Մելքոնյանը վազում էր դեպի ավանը, նա այնքան մարտիկներ չուներ, որքան խիզախություն։ Ֆրիցները չդիմացան, շշմած վազեցին դեպի անտառը, բայց մերոնք հասան նրանց և ոչնչացրին։ Շատ ֆաշիստների սև արյունը լերդացավ Մելքոնյանի հրացանի սվինի վրա։

Գերմանացիների հաշիվն արդեն վերջացած էր։ Մելքոնյանը և նրա կապավոր Անիսիմովը դանդաղ գնում են անտառ։ Նրանք հանդիպեցին սպիտակ խալաթավոր դահուկավորների։ Մերոնք են։ Եվ մի քանի բոպե անց, Մելքոնյանը երջանիկ ծիծաղով գրկում է վոլխովցի մայոր Մելնիկովին»[274]։

№ 1 բանվորական ավանը լրիվ ազատագրված էր։ Լենինգրադցիների համար հասավ բաղձալի պահը, ճեղքվել էր Լենինգրադի շրջափակումը։

№ 1 բանավանի շրջանում գտնվող 2-րդ հարվածային բանակի զորահրամանատարի դիտակետում գտնվող Սովետական Միության մարշալ Գ. Կ. Ժուկովն իր հիշողություններում գրում է. «Ես տեսա, թե ինչպես

---

[273] ՍՍՀՄ ՊՄԿԱ. ֆ. 67-րդ բանակի, ց. 20261, գ. 1, թ. 30։

[274] «Прорыв» (Политуправление Ленинградского фронта). с. 123.

շրջափակումը ճեղքած ռազմաճակատների մարտիկներն ինչպիսի ուրախությամբ վազեցին իրար ընդառաջ։ Ուշադրություն չդարձնելով Սինյավինյան բարձունքների կողմից հակառակորդի վարած գնդակոծությանը, զինվորները եղբայրաբար ամուր գրկում էին միմյանց։ Դա հիրալի տառապանքով ձեռք բերված ուրախություն էր»[275]։

Երկու ռազմաճակատների հանդիպումը հավերժացնող ակտում գրվեց. «1943 թ. հունվարի 18-ին ժամը 9[30]-ին Լենինգրադի շրջափակումը ճեղքած Լենինգրադյան ռազմաճակատի 123-րդ առանձին բրիգադի առաջին առանձին գումարտակը, հրամանատարի քաղդծով տեղակալ մայոր Մելքոնյանի հրամանատարությամբ, № 1 բանվորական ավանի մոտ հանդիպեց Վոլխովյան ռազմաճակատի 372-րդ հրաձգային դիվիզիայի 1240-րդ գնդի առաջին հրաձգային գումարտակին, որին գլխավորում էր դիվիզիայի շտաբի առաջին բաժանմունքի պետ Մելնիկովը»[276]։ Այդ պատմական փաստաթղթի տակ ստորագրում են ռուս ու հայ ժողովրդի զավակները՝ մայոր Հայկ Մելքոնյանը, վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Խաչատուր Կալուգովը, ռուս Իվան Անիսիմովը, վոլխովցիների կողմից ռուսներ՝ մայոր Պավել Մելնիկովը և ավագ լեյտենանտ Կիրիլ Իշիմովը։

Պատմական փաստաթուղթը իրենց ստորագրությամբ հաստատեցին 123-րդ առանձին հրաձգային բրիգադի հրամանատար գնդապետ Ֆյոդոր Շիշովը և 372-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գնդապետ Պյոտր Ռադիգինը։

Հայկ Մելքոնյանի և Պավել Մելնիկովի ստորաբաժանումներն առաջինն էին, որ ճեղքեցին Լենինգրադի շրջափակումը և միացան իրար, իսկ մի քանի ժամ հետո իրար հանդիպեցին նաև երկու ռազմաճակատների մյուս զորամասերը։

Հետաքրքիր է իմանալ, թե ինչպես դասավորվեց պատմական այդ կարևոր փաստաթուղթը ստորագրած մեր խիզախ հայրենակիցների ճակատագիրը։ Ռոստովցի Խաչատուր Ալեքսանի Կալուգովին չվիճակվեց տեսնել հաղթանակի օրը։ 1942 թ. դարնանը Սմոլենսկի մարզում մղված հերոսամարտերի ակտիվ մասնակիցը, Կարմիր դրոշի շքանշանակիր ռազմիկը 1943 թ. փետրվարին հերոսաբար զոհվեց Սինյավինի մատույցներում։

Շրջափակման ճեղքումից հետո, հունվարի 31-ին, Մգա քաղաքի

---

[275] Գ. Կ. Ժուկով, *Հիշողություններ և խորհրդածություններ*, Երևան, 1978, էջ 536։

[276] «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945 гг», М., 1964, том 3, с. 137.

մոտ թշնամու տանկերի դեմ մղված մարտերի ժամանակ Հայկ Մելքոնյանը ոտքից ծանր վիրավորվեց և չորս ամիս պառկեց հիվանդանոցում։ Բուժվելուց հետո նա նորից վերադարձավ հարազատ զորամասը, որը վերակազմվել էր 124-րդ հրաձգային դիվիզիայի։ Նա նշանակվեց դիվիզիայի քաղբաժնի պետի տեղակալ։ Նոր պաշտոնում դրսևորվեցին խիզախ հրամանատարի և հմուտ քաղաշխատողի լավագույն հատկությունները։ Հայկ Մելքոնյանը 124-րդ հրաձգային դիվիզիայի կազմում մասնակցեց Նարվայի և Վիբորգի ազատագրմանը, մարտերով անցավ Մերձբալթիկայով, իր քաջարի ռազմիկների հետ գրոհեց Քյոնիգսբերգը։ Նա իր հաղթական երթը ավարտեց հեռավոր Արևելքում՝ Մանջուրիայի տափաստաններում։ Հայրենիքը բարձր գնահատեց ռազմիկ-հրամանատարի մարտական սխրանքները։ Հայկ Մելքոնյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանների, Կարմիր աստղի շքանշաններով և մի շարք մեդալներով։ Եռապատերազմյան խաղաղ շինարարության տարիներին նա պարգևատրվեց նաև աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանով։ Լենինգրադցիների կողմից պատմական ակտը ստորագրած սերժանտ Իվան Անիսիմովը[277] շրջափակման ճեղքումից հետո 1943 թ. փետրվարի 10-ին 1-ին դումարտակից տեղափոխվեց 3-րդը, որից հետո նրա մասին տեղեկություն չունենք։

Շատ հարուստ է վոլխովցիների կողմից պատմական ակտը ստորագրած, ռուս ժողովրդի փառապանծ զավակ փոխգնդապետ Պավել Մելնիկովի կենսագրությունը։ Նա դարձավ 372-րդ հրաձգային դիվիզիայի շտաբի պետ, ակտիվորեն մասնակցեց Լենինգրադի մարզը ֆաշիստական զավթիչներից ազատագրելու, Էստոնիայի քաղաքների ու գյուղերի և հատկապես Տարտուի համար մղված մարտերին, հաղթականորեն անցավ Լեհաստանով և պատերազմն ավարտեց Արևելյան Պրուսիայում։ Նա պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի, Կարմիր դրոշի երեք, Կուտուզովի 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշաններով և մի շարք մեդալներով։ Նա այժմ գեներալ-գնդապետ է և բարձր պաշտոն է զբաղեցնում ՍՍՀՄ զինված ուժերում։ Նովոսիբիրսկցի, ավագ լեյտենանտ Կիրիլ Իշիմովը[278] ծանր վիրավորվեց 1943 թ. փետրվարի 15-ին և տեղափոխվեց թիկունք։

123-րդ առանձին հրաձգային բրիգադի հրամանատար գնդապետ

---

[277] Իվան Միխայիլովիչ Անիսիմովը Սմոլենսկի մարզի Կոզելսկի շրջանի Պոլնա գյուղից է։

[278] Կիրիլ Ֆիլիպովիչ Իշիմովը ծնվել է 1916 թ. Նովոսիբիրսկի մարզի Մասլյանսկի շրջանի Ռարենչիկովա գյուղում։

Ֆյոդոր Շիշովը 1944 թ. օգոստոսի 5-ին հերոսաբար զոհվեց Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում[279]։

Պատմական ակտն իր ստորագրությամբ հաստատած, 372-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, արդեն գեներալ-մայոր դարձած Պյոտր Ռադիգինը իր մարտական կենսագրությունն ավարտեց Արևելյան Պրուսիայում[280]։

Ահա սրանք այն հերոսներն են, ովքեր առաջինը ստորագրեցին այդ պատմական փաստաթուղթը։ Մի հետաքրքիր փաստ ևս։ 33 տարվա անջատումից հետո փաստաթուղթն ստորագրած երկու գլխավոր հերոսները նորից հանդիպեցին։ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի վարչական մարմինների բաժնի վարիչ Մ. Դավթյանի և հանրապետության զինվորական կոմիսար Ա. Ղազարյանի նախաձեռնությամբ Երևանում 1976 թ. մայիսին կազմակերպվեց Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատար գեներալ-գնդապետ Պավել Վասիլևիչ Մելնիկովի հանդիպումը Հայկ Մելքոնյանի հետ։ Մարտական ընկերները հուզված, ջերմ գրկախառնվեցին[281]։

Կանցնեն տարիներ, բայց երբեք չի մոռացվի սովետական ժողովրդի այդ քաջարի ու փառապանծ զավակների անմահ սխրանքը։

Հակառակորդի դեմ անձնազոհաբար մարտնչեցին Լենինգրադյան ու Վոլխովյան ռազմաճակատների մյուս զորամիավորումների, զորամասերի ու ստորաբաժանումների ռազմիկները։ Ռազմական տեխնիկան հմտորեն օգտագործելու ու թշնամուն դիպուկ հարվածելու փայլուն օրինակներ ցույց տվեցին օդաչուները, ծովայինները, հրետանավորները, տանկիստները, հետախույզները, կապի և այլ զորատեսակների ռազմիկները։ 372-րդ հրաձգային դիվիզիայում (Վոլխովյան ռազմաճակատ) հայտնի էր Ալեքսանդր, Վասիլի, Սեմյոն, Լուկա, Իվան և Ավկսենտիյա Շումով եղ-

---

279 Ֆյոդոր Ֆյոդորովիչ Շիշովը ծնվել է 1901 թ. Իվանովկի մարզի Սաբինսկի շրջանի Լուտինա գյուղում։ ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 5986, թ. 61։

280 Պյոտր Իվանովիչ Ռադիգինը ծնվել է 1896 թ. Կիրովի մարզի Նեմսկի շրջանի Օստրի Միս գյուղում։ Քաղաքացիական կռիվների ակտիվ մասնակից է։

281 Լենինգրադի հերոսամարտի պատմության մեջ մտած նրանց անունները և կատարած սխրանքի մասին հիշատակված է մի շարք գրքերում, նրանց մասին գրվել է Վ. Յ. Չուրակովի «Լենինգրադի շրջափակման ճեղքումը», Ֆ. Ի. Սիրոտայի «Լենինգրադը հերոս քաղաք է», Ռ. Ն. Լուկնիցկու «Լենինգրադը գործում է», Լենինգրադի ռազմաճակատի բաղվարչության «Ճեղքում», Մ. Ի. Գորդոնի «Նևսկի—3», «Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի պատմություն (1941—1945)», III հատոր, «Լենինի շքանշանակիր Լենինգրադի ռազմական օկրուգի պատմությունը» և մի շարք այլ գրքերում։

բայրների ականանետային հաշվարկը, որոնց հաշվին գրանցված էր մի քանի հարյուր սպանված թշնամու զինվոր ու սպա։ Աչքի ընկավ 18-րդ հրաձգային դիվիզիայի 359-րդ հակատանկային կործանիչ հրետանային դիվիզիոնի հրետանավոր արտաշատցի Արտաշ Նիկողոսի Նազարյանը, որը նշանառու կրակով քարուքանդ արեց հակառակորդի մի քանի դոտ և ճանապարհ հարթեց դիվիզիայի հարձակվող ստորաբաժանումների համար[282]։

Շրջափակման ճեղքման հաջորդ օրը հերոսի մահով զոհվեց նույն դիվիզիայի 200-րդ գումարտակի հրամանատար կապիտան Վազգեն Շիրինի Գալուստյանը։ Փաստաթղթերից մեկում նրա մասին գրված է. «Գալուստյանը № 5 բանավանի վրա գրոհելու ժամանակ ծանր վիրավորվեց հակառակորդի սնայպերի կողմից և մահամերձ վիճակում դիմեց մարտիկներին. «Ընկերներ, խփեք ֆաշիստական սրիկաներին, առա՜ջ, հանուն հայրենիքի»։ 2-րդ հարվածային բանակի հրամանատար գեներալ Ռոմանովսկին հայ քաջորդուն ներկայացրեց Լենինի շքանշանի պարգևատրման[283]։ Այդ դիվիզիայի ռազմիկները հունվարի 18-ին միացան Լենինգրադյան ռազմաճակատի 136-րդ հրաձգային դիվիզիային։

Արհամարհելով մահը, հրաձգային զորամասերի հետ սերտ համագործակցությամբ, հետևակայինների հարձակմանն էր աջակցում 32-րդ գվարդիական առանձին տանկային գունդը և 507-րդ առանձին տանկային գումարտակը՝ 2-րդ հարվածային բանակի զրահատանկային զորքերի բաժնի պետի տեղակալ, վրաց ժողովրդի զավակ, փոխգնդապետ Իոսիֆ Վաշակաշվիլու հրամանատարությամբ։ Տանկիստների գրոհը հմտորեն ղեկավարելու համար փոխգնդապետը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[284]։ Համարձակ էր գործում 207-րդ առանձին տանկային գումարտակի դասակը՝ լեյտենանտ Նիկոլայ Ստեպանովի հրամանատարությամբ։ Ականի պայթյունից տանկը դուրս եկավ շարքից, բայց տանկիստները չլքեցին խփված մեքենան, այլ գրավելով պաշտպանություն, թնդանոթային կրակով շարունակեցին աջակցել հարձակվող հետևակին։ Այդ մարտում տանկի անձնակազմը ոչնչացրեց հակառակորդի երկու տանկ և 30 ֆաշիստական զինվոր ու սպա։ Խիզախ տանկիստը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[285]։

---

282 ՍՍՀՄ ՊՏԿԱ, ֆ. 33, ց. 744808, գ. 1616, թ. 62։ Ա. Ն. Նազարյանն այժմ բնակվում ու աշխատում է Արտաշատ քաղաքում։

283 Նույն տեղում, ֆ. 309, ց. 4106, գ. 50, թ. 1։

284 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 309, ց. 4106, գ. 55, թ. 1։

285 Նույն տեղում, ֆ. 309, ց. 4106, գ. 53, թ. 1։

Բարձր էր սովետական ռազմիկների մարտական, քաղաքական ու բարոյական ոգին։ Առանց խնայելու սեփական կյանքը, նրանք մարտի էին նետվում թշնամու դեմ, ձգտելով որքան հնարավոր է արագ վերացնել Լենինգրադի շրջափակումը։

Հուզիչ է այդ մարտերում հերոսաբար զոհված Երևանի Կիրովյան շրջսովետի գործկոմի նախագահի տեղակալ, ավագ քաղղեկ Հուսիկ Օհանջանյանի նամակը՝ ուղղված ընտանիքին. «Իմ սիրելի բալիկներ՝ Ռիմա, Լիպսարիտ, Ռոզա, Ռաղմիկ, պատերազմը միայն ռազմաճակատում չեն մղում։ Դուք էլ կարող եք ձեր գործերով մասնակից լինել նրան։ Որպես պիոներ-կոմերիտականներ ամառային արձակուրդների ժամանակ մեկնեցեք մոտակա կոլտնտեսությունները, աշխատեցեք, օգնեցեք բերքահավաքին, որպեսզի ավելի շատ հացահատիկ հավաքվի։

Հայրենիքի համար ընկնելը անմահություն է, թեկուզ շատերի հետ ես էլ չվերադառնամ, դուք չվհատվեք, իմացեք, որ ձեր հայրը զոհվել է ձեր և մյուս երեխաների, մայրերի, ժողովրդի համար»[286]։

Այդ մարտերում զոհված ուզբեկ զինվոր Կայում Ռախմանովի գրպանում գտնված նամակում, որը չէր հասցրել ուղարկել հարազատներին, գրված էր. «Ես եկել եմ պաշտպանելու Լենինգրադը։ Առանց Մոսկվայի, առանց Լենինգրադի, առանց Ռուսաստանի չկա ազատ Ուզբեկիստան»[287]։ Այդպիսի բարձր գիտակցությամբ ու ոգևորությամբ էին կռվում Լենինգրադի շրջափակման ճեղքման մարտական գործողությունների ժամանակ սովետական տարբեր ազգությունների ռազմիկները։

«Շրջափակման ճեղքումը,—գրում է Սովետական Միության մարշալ Գ. Կ. Ժուկովը,—ցուցադրեց սովետական հասարակության բարոյա-քաղաքական միասնության, մեր հայրենիքի ժողովուրդների բարեկամության մեծ ուժը։ Լենինգրադի մոտ կռվում էին Սովետական Միության բոլոր ազգությունների ներկայացուցիչները, որոնք ցուցաբերեցին անօրինակ քաջություն և մասսայական հերոսություն»[288]։

Լենինգրադի շրջափակման ճեղքումը պատմական խոշոր իրադարձություն էր։ Ուրախալի լուրը արագ տարածվեց քաղաքում։ Փողոցներում երևացին լողունգներ, կարմիր դրոշակներ, տեղի ունեցան մասսայական ցույցեր ու ժողովներ։ Ամենուրեք ցնծություն և ուրախություն էր։ Բնակչությունը կարծես մոռացել էր կրած ծանր տառապանքները։ Կյանքը հաղ-

---

286 «Նամակներ փառքի ու անմահության» Երևան, 1978, էջ 338։

287 «Узбекистан в годы Великой Отечественной войны 1941—1945», с. 32.

288 Գ. Կ. Ժուկով, Հիշողություններ և խորհրդածություններ, էջ 539։

Ինչ էր մահին և դա կյանքի հաղթանակի ուրախություն էր։ Այդ կապակցությամբ ԱՄՆ-ի պրեզիդենտ Ֆրանկլին Դ. Ռուզվելտը հատուկ պատվոգիր ուղարկեց Լենինգրադին։ «Ամերիկայի Միացյալ Նահանգների անունից,—գրված է պատվոգրում,—ես այդ պատվոգիրը հանձնում եմ Լենինգրադ քաղաքին՝ ի հիշատակ նրա քաջարի ռազմիկների և հավատարիմ տղամարդկանց, կանանց ու երեխաների, որոնք զավթիչների կողմից մեկուսացված լինելով իրենց ժողովրդի հիմնական մասից, չնայած մըշտական ռմբակոծություններին և ցրտից, սովից ու հիվանդություններից կրած անասելի տառապանքներին, հաջողությամբ պաշտպանեցին իրենց սիրելի քաղաքը՝ 1941 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 1943 թվականի հունվարի 18-ն ընկած կրիտիկական ժամանակաշրջանի ընթացքում և դրանով սիմվոլացրին ագրեսիայի ուժերին դիմադրող Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովուրդների և աշխարհի բոլոր ժողովուրդների անվեհերությունը»[289]։

Շրջափակման ճեղքման օրը՝ հունվարի 18-ին Պաշտպանության կոմիտեն որոշում ընդունեց շատ կարճ ժամկետում Նևա գետի վրա կառուցել կամուրջ և երկաթուղի Շլիսելբուրգ—Պոլյանա հատվածում։ Շինարարության ղեկավար նշանակվեց Ի. Դ. Զուբկովը։ Երկաթգիծը կառուցվեց 18 օրում։ Այդ լուրջ ու պատասխանատու գործում մեծ ջանք ու եռանդ ներդրեց հայ ժողովրդի զավակ, հմուտ ինժեներ, կամրջաշինարարական շարասյան պետ Նիկոլայ Արտեմի Նարինյանը[290]։ 1943 թ. հունվարին Լենինգրադի շրջափակման ճեղքումից հետո Ն. Նարինյանին հանձնարարվեց Նևա գետի վրա սեղմ ժամկետում կառուցել երկաթուղային կամուրջ, որով Լենինգրադ պետք է փոխադրվեին պարենամթերք, ռազմական տեխնիկա ու կենդանի ուժ։ Նա կառավարական այդ շատ կարևոր առաջադրանքը կատարեց որակով և կամուրջը ժամանակին հանձնեց շահագործման[291]։ Փետրվարի 7-ին Լենինգրադ ժամանեց պարենամթերքով բեռնված առաջին գնացքը։ Բարձր գնահատելով Նարինյանի ծառայությունները, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թ.

---

289 Դ. Վ. Պավլով, Լենինգրադը պաշարման մեջ, էջ 256։

290 Ն. Ա. Նարինյանը ծնվել է 1905 թ. Լեռնային Ղարաբաղի Մարդակերտի շրջանի Վանք գյուղում։ 1927 թ. ավարտել է Թբիլիսիի երկաթուղային դպրոցը։ Աշխատել է երկաթուղային ամենապատասխանատու շինարարություններում։ Եղել է Սիբիրում, Հեռավոր Արևելքում։

291 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ը. 687526, գ. 905, թ. 25։

Նոյեմբերի 5-ի հրամանագրով նրան շնորհվեց Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում[292]։ Կարճ ժամկետում կառուցված նոր երկաթուղով Լենինգրադ տեղափոխվեցին 4,4 միլիոն տոննա տարբեր բեռներ, որի շնորհիվ բարելավվեց քաղաքի բնակչության վիճակը։ Այլևս ոչ մի ուժ չէր կարող սասանել լենինգրադցիներին, որոնք 16 ամիս շարունակ անձնազոհ պայքարով հերոսաբար դիմադրեցին թշնամու լավ զինված գերակշռող ուժերին և 1943 թ. պատմական հաղթանակով առհավետ թաղեցին հիտլերյան ստրատեգների՝ Լենինգրադը գրավելու բոլոր փորձերը։

1943 թ. ընթացքում սովետական զորքերը Լենինգրադի մոտ ձեռնարկեցին մի շարք հարձակողական գործողություններ, բայց ստրատեգիական լուրջ հաջողությունների չհասան։ 1943 թ. ընթացքում 43 ռազմիկների շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Նրանց մեջ մենք հանդիպում ենք ղազախ ու տաջիկ ժողովուրդների պանծալի զավակներ Սուլթան Բայմագամետովին և Տոյչի Էրջիգիտովին, որոնք կրկնեցին Ալեքսանդր Մատրոսովի սխրանքը։ 1943 թ. հուլիսին Սինյավինի հարձակողական գործողությունների ժամանակ աչքի ընկան 63-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի վաշտի հրամանատարներ՝ գվարդիայի լեյտենանտներ Ի. Ա. Բաբայանը և Ս. Ս. Մահմեդովը, որոնք առաջինը ներխուժեցին հակառակորդի պաշտպանական գիծը և սվինամարտով դուրս շպրտեցին նրանց։ Աչքի ընկավ գնդացրորդ եֆրեյտոր Ի. Ֆ. Շուշինը, սանիտար Մ. Կլիմինոն և շատ ուրիշներ։

Այդ մարտերի ժամանակ աչքի ընկավ 12-րդ սակրային առանձին գումարտակը, որը 1942 թ. սկզբին վերակազմավորվեց 10-րդ առանձին գրոհային ինժեներասակրավորային գումարտակի։ Հակառակորդի հրետանային ու գնդացրային կրակի տակ Աշոտ Հարությունյանը, Վարդգես Սիմոնյանը, Ակիմ Դանիելյանը, Մարատ Հալաջյանը, Հայրապետ Շատվորյանը, Արամ Բարխուդարյանը, Մամիկոն Ջալումյանը և ուրիշներ ականաղերծում էին տեղանքը, կառուցում կամուրջներ, ճանապարհ բացում հետևակի, տանկերի համար։

Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի Սինյավինի հարձակողական գործողությունը մասնակի հաջողություններով շարունակվեց մինչև 1943 թ. օգոստոսի 2-ը և տապալեց հիտլերականների մտադրությունը՝ վերականգնել նախկին վիճակը, փակել Լենինգրադը «Մեծ երկրի» հետ կապող 8—11 կիլոմետր լայնությամբ միջանցքը։

1942—1943 թթ. մարտական սխրանքներով ու համարձակ գործողու-

---

292 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ՀՊՊԿ արխիվ, ֆ. 283, գ. 1։

Գ. Կ. Ժուկով

Ի. Ս. Իսակով



Լենինգրադյան ռազմաճակատի հրամանատար Լ. Ա. Գովորովը և ռազմական խորհրդի անդամ Ա. Ա. Ժդանովը

Լենինգրադյան ռազմանավատի մի խումբ քաղաքացիատողներ—հրամանատարներ (ձախից աջ). 70-րդ հրաձգ. դիվ. կոմիսար Գ. Բ. Ժուրբա, 42-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ Բ. Հ. Գալատյան, 70-րդ հրաձգ. դիվ. հրամանատար Ա. Ս. Կրասնով և Նևսկի օպերատիվ խմբի հրամանատար Ի. Ֆ. Նիկիտին:

Ֆիլիպ Ուլյանովիչ Ուլյանով

Անդրանիկ Սիմոնի Գրիգորյան

Աշոտ Վաղարշակի Ղազարյան

Գրիգոր Միքայելի
Հայրապետյան

Նիկոլայ Նիկոլանիչ Ազովցև

Գուրգեն Երեմի Գրիգորյան

Նելլի Ռուբենի Բարաթյան

Վարդուհի Միհրանի Չարուխչյան

Աշոտ Աթանեսի Մուսաթյան

Իլդար Մանանովիչ Մանանով

Ռուբեն Ասատուրի
Հարությունյան

Նիկոլայ Վասիլևիչ Օպլեսնին



Սերգեյ Պոլիկարպովիչ
Կետիլաձե

Վլադիմիր Խորենի Պետրոսյան

541-րդ հաուբիցային հրետանային գնդի Գրիգոր Գալուստի Ասատրյանի հրետանային հաշվարկը հրետանակոծում է հակառակորդի դիրքերը (Լենինգրադ, 1942)։



Գրիգոր Գալուստի Ասատրյան

Տուչի Երջիգիտով

Սերո Նիկոլայի Խանզադյան

Հրաչյա Քոչար

Իշխան Ղահրամանի Դավթյան

Արտաշ Նիկողոսի Նազարյան

135-րդ գվ. առանձին կապի գումարտակի վաշտի հրամանատար Նիկոլայ Գաբրիելի Գաբրիելյանը մարտական առաջադրանք է տալիս դասակի հրամանատարներին (Լենինգրադ, 1942):

Նիկոլայ Գաբրիելի Գաբրիելյան

Ալեքսանդր Անդրեևիչ Մանին

Ալեքսան Մաթևոսի
Կիրակոսյան

Համլետ Վարդանի
Մաքսապետյան

Էդուարդ Աբգարի Մելիքսեթյան

Մարտիրոս Համբարձումի
Առաքելյան

Հայրապետ Հովսեփի
Շատվորյան

Վարդգես Յոլակի Սիմոնյան

Աշոտ Վահանի Հարությունյան

Մամիկոն Ավետիսի Զալումյան

Սոֆյա Լևոնի Հալայան

Ռուզաննա Լևոնի Հալայան

Արամ Գրիգորի Ղուկասյան

Անդրանիկ Սարգսի Հակոբյան

Ե. Ն. Պրեոբրաժենսկին և
Պ. Ի. Խոխլովը

Գենադի Դմիտրևիչ Յոկոլան

Եֆիմ Գրիգորևիչ Ուդալցով

Ալիմ Յուսուպովիչ
Բայսուլթանով

Վասիլի Իվանովիչ Ռակով

Նելսոն Գևորգի Ստեփանյան

Նիկոլայ Վասիլևիչ Զելենկով

Ալեքսեյ Եֆիմովիչ Մազուրենկո

Լազար Սերգեյի Չափչախով

Գեղամ Ենոքի Պետրոսյան

Արմենակ Մարտիրոսի Բաբայան



Սերգեյ Պրոկոֆևիչ Լիսին

Գևորգ Տաճատի Սարգսյան

Սուրեն Սարգսի Ոսկանյան



Ռուբեն Սիմոնի Եղիազարյան

Յոլակ Ավոյի Մետոյան



Անատոլի Պետրովիչ
Ալեքսանդրով

Վիկտոր Համազասպի
Համբարձումյան

Լևոն Արգարի Օրբելի



Հովսեփ Արգարի Օրբելի

Աբրահամ Իսահակի Ալիխանով

Արտեմ Իսահակի Ալիխանյան

Լենինգրադյան ռազմաճակատի մի խումբ քաղաշխատողներ (ձախից աջ) Վ. Ա. Կալմիկով, Ա. Ա. Պրոկոֆև, Ի. Մ. Շլյապին, Մ. Գ. Ջերոյան, Ս. Վ. Գլուշանկով

Լենինգրադյան և Վոլխովյան ռազմաճակատների զորքերի հանդիպումը 1943 թ. հունվարի 18-ին (Լենինգրադի շրջափակման ճեղքումը):

Դիմիտրի Իվանովիչ Օսատյուկ

Խաչատուր Ալեքսեյի Կալուգով

Լենինգրադյան և Վոլխովյան ռազմաճակատների զորքերի հանդիպման և Լենինգրադի շրջափակման ճեղքման մասին ակտի ստորագրողներ Հայկ Հովհաննեսի Մելքոնյանի (ձախից) և Պավել Վասիլևիչ Մելնիկովի հանդիպումը տարիներ անց (Երևան. 1976):

Պյոտր Իվանովիչ Ռադիգին

Ֆյոդոր Ֆյոդորովիչ Շիշով

Արամ Արշակի Սիլանյան

Յարգիս Միքայելի Խաչիկյան

Վլադիմիր Վասիլևիչ Պլատիցին

Նիկոլայ Նիկոլաևիչ Տոմաշևիչ

Գրիգոր Զաքարի Ասատուրով

Գևորգ Խաչատուրի
Բաղդասարյան

Սամվել Սիմոնի Հարությունյան

Ալեքսանդր Մկրտիչի Ագասյան

Միխայիլ Դիմիտրևիչ Կոնոնով

Ալեքսանդր Սիդորի Մնացականով

Մկրտիչ Սմբատի Մկրտչյան



Գրիշա Պողոսի Հովսեփյան

Սպարտակ Կարապետի
Խաչատրյան

Ժորժ Ստեփանի Սարգսյան

Ակիմ Հովհաննեսի Դանիելյան

Տիգրան Հարությունի
Խեչումյան

Հմայակ Արամի Աղուզումցյան

Կոնստանդին Հակոբի Մկրտումյան

Հովսեփ Սողոմոնի Մելքոնյան

Սերգեյ Սահակի Օգանեսով

թյուններով նորից աչքի ընկան 13-րդ, 14-րդ ավիացիոն բանակների ու Կարմրադրոշ բալթիական նավատորմի բաղնները, որոնք մեծապես աջակցեցին ցամաքային զորքերին ու նավատորմին։ Օդային մարտերում ցուցաբերած արիության ու հերոսության համար 48 օդաչուների շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Նրանցից 14-ը՝ Ի. Դ. Պիդտիկանը, Վ. Յե. Շալիմովը, Դ. Յե. Օսկալենկոն, Ա. Դ. Բուլաևը, Մ. Յա. Վասիլևը, Ա. Ի. Կուզնեցովը, Կ. Վ. Սոլովյովը, Յու. Խ. Կոսենկոն, Ֆ. Ս. Յուրչենկոն, Մ. Ս. Սավուշկինը, Ս. Դ. Լիտավրինը, Ի. Մ. Շիշկինը, Յու. Ե. Բունիմովիչը և Գ. Դ. Վասիլևը հերոսաբար զոհվեցին հարազատ քաղաքի համար մղված օդային մարտերում։ Ռուս ժողովրդի այդ քաջարի զավակների կողքին մարտնչեցին մեր մեծ հայրենիքի տարբեր ազգությունների բազում զավակներ, որոնք իրենց փառապանծ գործերով ցույց տվեցին, թե ինչ կարող է անել եղբայրական ինտերնացիոնալ ընտանիքում մեծացած ու դաստիարակված սովետական մարդը։

Նավատորմի 4-րդ կործանիչ ավիացիոն գնդի կազմում, որի ճնշող մեծամասնությունը ռուսներ էին, Վասիլի Դոլուբևի, Միխայիլ Վասիլևի և ուրիշ շատերի հետ մարտական առաջադրանքի էին թռչում օս և թաթար ժողովուրդների զավակներ Դենադի Յոկոլաևը, Ալիմ Բայսուլթանովը և Անատոլի Կուզնեցովը։ Այդ խիզախ օդաչուները, որոնք հակառակորդին ծանր կորուստներ էին պատճառել Խանկոյի երկնքում ֆիննական ավիացիային, հակառակորդին կործանիչ հարվածներ հասցրին նաև Լենինգրադի անմիջական մատույցներում։ Նրանց խիզախության մասին գրեցին ռազմաճակատային թերթերը։ Լենինգրադի համար մղված մարտերում հերոսաբար կռվեցին հայ ժողովրդի պանծալի զավակ Նելսոն Ստեփանյանը և ավիացիոն տարբեր ստորաբաժանումներում ծառայող նրա համերկրացիներ Մանուկ Հակոբյանը, Մամիկոն Դավթյանը, Նիկոլայ Վարդանյանը, Պարույր Դավթյանը, Գեղամ Սողոմոնի Պետրոսյանը և շատ ուրիշներ։ Վերջինիս հրամանատարությամբ գործող էսկադրիլիան մարտական պատրաստակամությամբ, ուսուցմամբ ու կարգապահությամբ գնդում միշտ առաջին տեղն էր գրավում[293]։

Տարբեր զորատեսակների կազմում թշնամու դեմ կռվող սովետական բազմազգ ռազմիկներն իրենց հերոսական գործերը շարունակեցին ու բազմապատկեցին Լենինգրադի շրջափակման լրիվ վերացման համար մղված մարտերում։

Սովետական ռազմիկներին հատկապես ոգևորեցին ու մարտական

---

[293] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 686044, գ. 1563, թ. 146։

լիցք հաղորդեցին մեր հայրենիքի տարբեր ծայրերից ստացվող բարեկամության ու եղբայրության, սովետական հայրենասիրության շնչով գրված նամակները՝ ուղղված տարբեր ռազմաճակատներում թշնամու դեմ մարտնչող իրենց զավակներին։ Նամակներում կոչ էր արվում անողոքաբար պայքարել ֆաշիստական զավթիչների դեմ և որքան հնարավոր է շուտ ազատել մեր հողը դարշնագույն ժանտախտից։

Հայրենասիրական այդ շարժման նախաձեռնող հանդիսացավ ուզբեկ ժողովուրդը, որի նամակը հրապարակվեց 1942 թ. հոկտեմբերի 31-ին։ Այնուհետև 1943 թ. առաջին կեսին իրենց ռազմիկ-զավակներին նամակով դիմեցին Ղազախստանը, Հայաստանը, Կիրգիզիան, Թուրքմենիան, Ադրբեջանը, Տաջիկստանը և մյուս միութենական ու ինքնավար հանրապետությունները։ «Մեր քաջարի մարտիկներ...,—գրված է հայ ժողովրդի նամակում,—եղբայրների ազատագրության այդ մեծ պայքարում թող ձեզ ոգեշնչի հայկական հին ավանդությունը, որն ասում է, թե իսկական մեծ մարդու անուն է ստանում նա, ով իր անձը մոռանալով՝ եղբորն ազատում է դժբախտությունից։

«Մեծ մարդու անուն դու այժմ ստացար՝
Եղբորդ հիշեցիր ու քեզ մոռացար»։

Հիշեք, մեր զավակներ, ռազմաճակատի որ հատվածումն էլ կռվելիս լինեք գերմանական ֆաշիստների դեմ, դուք կռվում եք հարազատ Հայաստանի գոյության, փրկության, ազատության համար... Մեր հայրենիքը հզոր է սովետական ժողովուրդների բարեկամությամբ։ Մեր ավագ եղբայր ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ, եղբայրական ժողովուրդների զավակների հետ ձեռք-ձեռքի տված, կռվեք թշնամու դեմ։ Ռազմաճակատներում ամրապնդեք անխախտ բարեկամությունն ու եղբայրությունը։ Հիշեք, որ այդ եղբայրության, ժողովուրդների բարեկամության մեջ է մեր հզոր հայրենիքի՝ Սովետական Միության անպարտելիությունը»[294]*։ Յուրաքանչյուր ժողովրդի նամակ հագեցված էր սիրո ու եղբայրության զգացումով՝ գրված թշնամու նկատմամբ ատելության ոգով, մեր մեծ ուխտին նվիրվածության ու հավատարմության ոգով։ «Երբ մենք խոսում ենք հայրենիքի մասին,—գրված է տաջիկ ժողովրդի նամակում,—մեր աչքի առաջ կանգնում են ոչ միայն լիուլի առատ Վախշի հովիտը, ոչ միայն Լենինաբադի ծիրանի ու խնձորի այգիները, ոչ միայն իր գագաթներով երկինք խոյացող Պամիրի ձյունե լեռները, հայրենիքը՝*

[294] «Правда», 27 февраля 1943 г.

այդ Ռուսաստանի կանաչ անտառներն ու ջրառատ գետերն են, Ուկրաինայի բերքատու դաշտերը, Սևծովյան գեղատեսիլ ափերն ու Կովկասի լեռներն են և հեղափոխության օրրան մեծ Լենինի քաղաքն է»[295]։

Սովետական ժողովուրդներն իրենց նամակներում կուսակցությանն ու կառավարությանը հավաստիացնում էին, որ ջանք ու եռանդ չեն խնայի ռազմաճակատին ապահովելու պարենամթերքով ու ռազմամթերքով։ Ադրբեջանական ժողովուրդն իր զավակներին ուղղված նամակում գրում է. «Մենք ոգևորված ձեր սխրագործություններով օր ու գիշեր աշխատում ենք գործարաններում ու ֆաբրիկաներում, նավթահանքերում, կոլտնտեսության դաշտերում, գիտական լաբորատորիաներում, որպեսզի ապահովենք ձեր կարիքները»[296]։

Նամակները տպագրվեցին միութենական, հանրապետական և ռազմաճակատային թերթերում։ Լենինգրադյան ու Վոլխովյան ռազմաճակատների բանակների, դիվիզիաների և տարբեր զորամասերի ու ստորաբաժանումների քաղաքականները նամակների ընթերցումը մտցրին իրենց աշխատանքային ծրագրերի մեջ։ Նամակների ընթերցումը վերածվում էր հանդիսավոր երդման արարողությունների։

Պատասխան նամակ ուղարկեցին իրենց համերկրացիներին 314-րդ հրաձգային դիվիզիայի զաղաս մարտիկները, որտեղ նրանք երդվում էին մինչև վերջ կատարել իրենց ժողովրդի հղած պատգամները։ Լենինգրադի ռազմաճակատի 124-րդ հրաձգային դիվիզիայի հայ ռազմիկների պատասխան նամակը ներծծված էր ջերմությամբ, սիրով ու նվիրվածությամբ դեպի ռուս ժողովուրդը, պատրաստակամություն արտահայտելով մինչև վերջ մարտնչել հարազատ քաղաքի համար։ «Հայ ժողովրդի շատ որդիներ,— ասված էր պատասխան նամակում,— դաղտաղած թշնամու դեմ մղվող դոտեմարտում անթառամ փառքով պսակեցին իրենց։ Նրանք հերոսական ռուս մարտիկների հետ պաշտպանում են մեր մեծ հայրենիքի պատիվն ու ազատությունը։ Լենինգրադյան ռազմաճակատի հայ ռազմիկները շատ լավ գիտեն, որ պաշտպանելով Լենինգրադը՝ պաշտպանում են հայ ժողովրդի պատիվն ու ազատությունը, իրենց հայրերի, մայրերի, կանանց, քույրերի ու եղբայրների պատիվը։

Լենինգրադը հեղափոխության միջնաբերդն է։ Այդ մեծ քաղաքի համար մղվող մարտերում հայ մարտիկներն ու հրամանատարները բարձր են պահում հայ ժողովրդի պատիվը։

---

295 Նույն տեղում, 20 մարտի 1943 թ.։

296 «Наказ народа», М., 1943, с. 86.

Քանաքեռդէսի շինարարության մասնակից, այժմ շքանշանակիր մայոր Մուշեղ Աղաջանյանը Լենինգրադի հերոսական պաշտպանների շարքերում է։ Նրա հրամանատարությամբ գործող զորամասը հաճախ ջախջախիչ հարվածներ է հասցրել անիծյալ թշնամուն։ Կրկնակի շքանշանակիր, ավագ լեյտենանտ Խաչատուր Կալուգովը աչքի է ընկել իր արիությամբ։ Լենինգրադի բլոկադան ճեղքելիս նրա ստորաբաժանումն առաջինը միացավ Վոլխովի ուղղությամբ գործող մարտական ընկերներին։

Մարտական սխրագործություններով փառավորվեցին շքանշանակիր Մելիքյանը, անվեհեր հետախույզ Գևորգ Սարգսյանը, Գուրգեն Աբովյանը, Նիկոլայ Ամիրջանյանը, անասնաբուժական ինստիտուտի նախկին ուսանող Վարազդատ Մարտիրոսյանը և ուրիշներ»[297]։

Սովետական ժողովուրդների պատգամների ընթերցումը և պատասխան նամակների ուղարկումը, որը կատարվում էր հանդիսավոր պայմաններում ու պրոպագանդվում ռազմաճակատային մամուլում, մեծապես նպաստեց տարբեր ազգերի ռազմիկների ինտերնացիոնալ համախմբվածությանը, մարտական եղբայրության ամրապնդմանը, բարձրացրեց կարգապահությունը, անձնակազմի հարձակողական թափը, ուժեղացրեց ատելությունը թշնամու նկատմամբ և ձգտումը՝ հակառակորդին որքան հնարավոր է հեռու շպրտել քաղաքի մատույցներից։

1943 թ. սկզբին ու ամառվա ամիսներին Լենինգրադի մոտ թշնամին կրեց ծանր պարտություններ ու անվերադարձ կորցրեց ստրատեգիական նախաձեռնությունը։ Ֆաշիստական բանակները ծանր պարտություններ կրեցին Վոլգայի ափերին, Հյուսիսային Կովկասում և Կուրսկի աղեղում։ Նախաձեռնությունն անցավ կարմիր բանակի ձեռքը և նախապայմաններ ստեղծվեցին վերացնելու Լենինգրադի շրջափակումը։

Հիտլերյան հրամանատարությունը «կայծակնային» պլանից անցավ պատերազմը որքան հնարավոր է ձգձգելու տակտիկային։ Եվ այդ նպատակով էլ «Հյուսիս» բանակների խումբը Լենինգրադի շրջակայքն ու նրա հեռավոր մատույցները ծածկեց պաշտպանական ամրությունների խիտ ցանցով։

1944 թվականին սպասվում էին ավելի ուժեղ ու համառ մարտեր։

---

[297] «Коммунист», 1 августа 1943 г.

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՍՍՀՄ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ԼՐԻՎ ՎԵՐԱՑՄԱՆ ԵՎ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՄԱՐՏԵՐՈՒՄ

1. ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ԼՐԻՎ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Ավարտին էր մոտենում Լենինգրադի հերոսամարտը։ Երկու և կես տարի ֆաշիստական հրոսակախմբերը դոփում էին Լենինգրադի պատերի տակ, չկարողանալով խափանել հերոս պաշտպանների անսասան դիմադրությունը։ Երկու և կես տարի Լենինգրադը պաշտպանող սովետական զորքերը պաշտպանական ակտիվ մարտերում լարված պահեցին թշնամուն, թույլ չտալով նրան օգնության հասնել մյուս ռազմաճակատներում կռվող զորքերին։ Ռուսական փառքը խորհրդանշող անառիկ ամրոցը նևայի վրա շարունակում էր հերոսամարտը։

1942 թ. համեմատությամբ զգալիորեն բարելավվեց Լենինգրադի վիճակը։ Կարգավորվեց վառելիքի ու էլեկտրաէներգիայի մատակարարման, բնակչությանը պարենամթերքով ապահովելու և բժշկական սպասարկման գործը։ Մեկը մյուսի հետևից շարք մտան քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունները։ Չնայած դեպի լավը գնացող տեղաշարժին, Լենինգրադը շարունակում էր ապրել ծանր ու լարված օրեր։

1943 թ. ֆաշիստական բանակների ծանր պարտությունները Ստալինգրադում, Հյուսիսային Կովկասում և Կուրսկի աղեղում փոխեցին օպերատիվ իրադրությունը և սովետագերմանական ռազմաճակատի բոլոր հատվածներում ստրատեգիական նախաձեռնությունն անցավ սովետական զորքերի կողմը։ Հաղթանակի հաճույքը միշտ վայելած Հիտլերը և նրա համախոհները չէին ցանկանում հաշտվել պարտության հետ։ Նրանք համախմբեցին երկրի ամբողջ հնարավորությունները, նպատակ ունենալով որքան հնարավոր է ձգձգել պատերազմը և իրենց ձեռքում պահել ծա-

նը՝ կորուստների գնով գրավված տարածքները։ Պարտությունները բարոյապես, տնտեսապես ու քաղաքականապես ջլատել էին թշնամուն, բայց չէին սպառել նրա ուժերը։ Նա դեռևս պահպանում էր իր մարտունակությունը՝ տրամադրության տակ ունենալով պատերազմը վարելու բավական ուժեր ու միջոցներ։ Մեծ ուժ էր ներկայացնում «Հյուսիս» բանակների խումբը, ուր հաշվվում էր 741000 զինվոր ու սպա, 10070 հրանոթ ու ականանետ, 370 ինքնաթիռ, 385 տանկ և այլ ռազմական տեխնիկա[1]։ Թշնամին Լենինգրադի ու Նովգորոդի մարզերում կառուցել էր երկաթբետոնե հզոր ամրություններ, յուրաքանչյուր քաղաք վերածել բերդամրոցի՝ պաշտպանական խորությունը հասցնելով 230-260 կմ[2]։

Պաշտպանական հզոր ամրությունների ետևում դիրքավորված և լավ զինված թշնամու դիմադրությունը ճնշելու համար անհրաժեշտ էր ոչ միայն կենդանի ուժի, այլև տեխնիկայի՝ տանկերի, ինքնաթիռների, հրանոթների, դնդացիրների զգալի առավելություն։ Սովետական զորքերը Լենինգրադի տակ արդեն առավելություն ունեին և զենքի ու կենդանի ուժով գերազանցում էին ֆաշիստական զորքերին։

Սովետական հրամանատարության առաջ ծառացած հիմնական խնդիրն էր՝ ջախջախել թշնամու «Հյուսիս» բանակների խումբը, դուրս շպրտել նրան Լենինգրադի սահմաններից և նախապայմաններ ստեղծել Մերձբալթիկան լրիվ ազատագրելու համար։

Կարմիր բանակի գլխավոր հրամանատարությունը մշակեց Լենինգրադի տակ թշնամու ջախջախման պլանը, որն իրականացվելու էր Լենինգրադյան, Վոլխովյան և Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատների, Բալթյան կարմրադրոշ նավատորմի և պարտիզանական միավորումների ուժերով։ Ռազմաճակատների կազմում հաշվվում էր 1241000 զինվոր ու սպա, 21000 թնդանոթ ու ականանետ, 1475 տանկ ու ինքնագնաց հրանոթ, 1500 ինքնաթիռ և այլ ռազմական տեխնիկա[3]։ Սովետական գերագույն գլխավոր հրամանատարության մտահղացմամբ առաջին հերթին պետք էր ջախջախել թշնամու 18-րդ բանակը և շպրտել Լուգա գետի սահմանը, իսկ այնուհետև զարգացնելով հարձակումը, Պսկովի ու Իզբիցի սահմանագծում ջախջախել 16-րդ բանակը։ Հարձակվող սովե-

---

[1] «Великая Отечественная война Советского Союза 1941—1945 гг.», М., Краткая история, 1967, с. 315.

[2] «Очерки истории Ленинграда», т. 5, с. 413.

[3] «Великая Отечественная война Советского Союза 1941—1945 гг.», Краткая история, 1967, с. 315.

տական զորամասերին օդից պետք է աջակցեին 13-րդ, 14-րդ, 15-րդ ավիացիոն բանակները, իսկ ծովից՝ Բալթյան կարմրադրոշ նավատորմը։

Առաջիկա վճռական մարտերին լավ նախապատրաստվելու համար ռազմաճակատների և նավատորմի բոլոր ստորաբաժանումներում ծավալվեց ակտիվ կուսակցական-քաղաքական աշխատանք։ Վաշտերի, գումարտակների ու գնդերի կուսակցական կազմակերպությունները համալրվեցին կուսակցության նոր անդամներով։ Երեք ամսվա ընթացքում յուրաքանչյուր դիվիզիայում կուսակցության շարքերն ընդունվեց 800—1000 մարդ։ Հարձակման նախօրյակին Լենինգրադյան ռազմաճակատում արդեն հաշվվում էր 148 հազար կոմունիստ և 101 հազար կոմերիտական[4]։ Ռազմաճակատի բոլոր միավորումներում, զորամասերում ու ստորաբաժանումներում տեղի ունեցան ժողովներ, միտինգներ, կազմակերպվեցին հանդիպումներ Լենինգրադի աշխատավորության ներկայացուցիչների հետ։ Զինվորների ու հրամանատարների մեջ թշնամու նկատմամբ ատելության ու վրեժի զգացումն ավելի ուժեղացնելու համար բոլոր զորամասերում ցուցադրվեցին օկուպացված շրջաններում ֆաշիստների գազանությունները հետաքննող Պետական արտակարգ հանձնաժողովի նյութերը և լուսանկարները։

Հարձակման նախօրյակին շատ զինվորներ ու հրամանատարներ իրենց կուսակցական ու կոմերիտական տոմսերի մեջ դնում էին երկտող, արտահայտելով իրենց նվիրվածությունը հայրենիքին ու կուսակցությանը։ «Հարազատ կուսակցություն,— գրում է կարմիրբանակային Ի. Դ. Գորշկովը,— գնալով մարտի, ես ցանկանում եմ ասել, որ հանդիսանում եմ քո նվիրված որդին և այդպիսին կմնամ մինչև իմ վերջին շունչը։ Եթե պատահի հանդիպեմ մահին, ես կընդունեմ այն, ինչպես վայել է կոմունիստին։ Այդ խոր համոզվածությունը հյուսված է ինձ կյանքով։ Ես հավատում եմ մեր հաղթանակին։ Մարտի եմ գնում հանուն հայրենիքի, Լենինի գործի համար, հարազատ Լենինգրադի համար, իմ ընտանիքի երջանիկ կյանքի համար»[5]։ Հերոսաբար զոհված կրտսեր լեյտենանտ Միխայիլ Միտրոֆանովի կուստոմսում գտնված երկտողում գրված էր. «Եթե անսպասելի գնդակը կամ արկը սպանի ինձ, թող կոմունիստներն ու կոմերիտականները հիշեն, որ մենք կռվել ենք հանուն հայրենիքի, մեր հարազատ մայրերի ու հայրերի, եղբայրների ու քույրերի, մեր սիրելի հարսների համար։ Այդ սրբազան գործի համար զոհվել են հազա-

---

[4] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 343—344.

[5] Նույն տեղում, էջ 348—349։

բավոր որդիներ։ Մոտ է հաղթանակի օրը։ Ուժեղ հարված թշնամուն։ Խտացրեք շարքերը։ Թող ամբողջ աշխարհն իմանա, որ մենք միլիոններ ենք, թող իմանան թշնամիները, որ մենք ուժեղ ենք և կհաղթենք։ Կեցցե հաղթանակը»[6]։ Այդպես էին մտածում ու գործում Լենինգրադյան ռազմաճակատի կոմունիստները։

1944 թ. հունվարի 14-ին, հրետանային ու ավիացիոն ուժեղ նախապատրաստությունից հետո, Օրանիենբաումի շրջանից դեպի Ռոպշա ուղղությամբ հարձակման անցան Լենինգրադյան ռազմաճակատի 2-րդ հարվածային բանակը, իսկ հաջորդ օրը Կինգիսեպի շրջանից 42-րդ բանակը՝ Կրասնոյե Սելո ուղղությամբ։

Հրետանու դիպուկ կրակի հմուտ մասնագետներ, ռազմաճակատի հրետանու հրամանատար՝ գեներալ-լեյտենանտ Գ. Ֆ. Օդինցովի, հրետանու շտաբի պետ՝ գեներալ-մայոր Գ. Մ. Բրուսերի, բանակների հրետանու հրամանատարներ՝ գեներալ-մայորներ Մ. Ս. Միխալկինի, Բ. Բ. Զերնյավսկու, Վ. Ս. Կորոբչենկոյի, 3-րդ հակամարտկոցային հրետանային կորպուսի հրամանատար՝ գեներալ-մայոր Ն. Ն. Ժդանովի, նավատորմի հրետանու հրամանատար՝ կոնտր-ադմիրալ Ի. Ի. Գրենի հրամանատարությամբ սովետական հրետանավորները 65 րոպե կրակային հեղեղ տեղացին թշնամու գլխին՝ կազմալուծելով նրա պաշտպանությունը։ Հարվածն այնքան ուժեղ էր, որ թշնամին 30—40 րոպե մեր հարձակվող զորամասերին դիմադրում էր միայն հրացանաավտոմատային ու գնդացրային կրակով։ Այդ հմուտ հրամանատարների, հրետանային կրակի վարման դիտակների շարքում հանդիպում ենք նաև սովետական մեծ ընտանիքի տարբեր ազգությունների պատկանող հրամանատարների, որոնք նույնպես հսկայական աշխատանք կատարեցին այդ գործում։ Այդպիսիներից էր 2-րդ հարվածային բանակի 122-րդ կորպուսի հրետանու հրամանատար գնդապետ Գրիգոր Զախարի Ասատուրովը։ Պարթևահասակ, ամուր կամքի տեր, եռանդուն ու գործունյա հրամանատարի անունը Հայրենական պատերազմի տարիներին ահ ու սարսափ էր ֆաշիստների համար։ Նա Սմոլենսկի, Մոսկվայի, Ստալինգրադի և Լենինգրադի մեծ ճակատամարտերի ակտիվ մասնակիցներից էր։ Բազում սխրանքների հեղինակ։ Նրա գլխավորած հրետանավորների մարտական սխրագործությունները բազմիցս նշվել են բանակների ու ռազմաճակատների հրամանատարության զեկուցագրերում։ Գրիգոր Ասատուրովը ծըն-

---

[6] «Политическое обеспечение великой победы под Ленинградом», с. 39—40.

վել է 1905 թ. Հյուսիսային Կովկասի Արմավիր քաղաքում։ Դեռևս պատանեկության արշալույսին Գրիգորը զգաց կյանքի բոլոր դառնությունները և դաժանությունները։ Ընդամենը 12 տարեկան էր, երբ աշխատանքի անցավ քաղաքի հարուստներից մեկի մոտ։ 1919 թ. մահացավ մայրը, Գրիգորը հեռացավ տնից և աշխատեց ու ապրեց որտեղ պատահի։

Շուտով Կուբանում սկսվեցին քաղաքացիական կռիվները։ Գրիգորը Հյուսիսային Կովկասից նահանջող սովետական զորամասերի հետ մեկնեց հարավ և երկու տարի տարբեր վայրերում աշխատելուց հետո, 1921 թ. 16 տարեկան հասակում կամավոր մտավ կարմիր բանակի շարքերը։ Ստավրոպոլի մարզում նա ակտիվորեն մասնակցեց սպիտակգվարդիական մնացորդների ջախջախմանը։

Հաղթականորեն ավարտվեցին քաղաքացիական կռիվները։ Ընկերներից շատերը վերադարձան տուն, բայց նա մնաց և շարունակեց ծառայությունը։

Զորամասի հրամանատարությունը Ասատուրովին 1921 թ. ուղարկեց Մոսկվա՝ հրետանային դասընթացներում սովորելու, որը, սակայն, ընդհատվեց՝ առողջական վիճակը վատանալու պատճառով։

Ասատուրովի համառ ձգտումը՝ ստանալ հրետանային մասնագիտական կրթություն ի վերջո պսակվեց հաջողությամբ։

1928 թ. նա ավարտեց Լենինգրադի «Կարմիր հոկտեմբերի» անվան 1-ին հրետանային դպրոցը, իսկ 1938 թ. դերազանց գնահատականներով՝ Ֆրունզեի անվան ակադեմիայի հրետանային բաժինը։

Ակադեմիան ավարտելուց հետո Ասատուրովը նշանակվեց 12-րդ հրաձգային դիվիզիայի 12-րդ հրետանային գնդի հրամանատար, իսկ երբ սկսվեց պատերազմը, նա Վորոնեժ քաղաքում 19-րդ հրաձգային դիվիզիայի 103-րդ հաուբիցային հրետանային գնդի հրամանատարն էր։

Հայրենական պատերազմում Գրիգոր Ասատուրովի մարտական կենսագրությունը սկսվեց 1941 թ. հուլիսի 1-ին Սմոլենսկի մարզի Ելնյա քաղաքի մոտ, որտեղ առաջին անգամ դրսևորեց հրետանու հրամանատարի մարտական բարձր պատրաստակամություն և հրետանային կրակը մեծ վարպետությամբ վարելու հմտություն։

1941 թ. հուլիսի 22-ին Ելնյայից հյուսիս-արևելք, 19-րդ հրաձգային դիվիզիայի գոմարտակներից մեկի հրամանատարը դրսևորելով վախկոտություն, նահանջելու հրաման տվեց։ Թշնամին օգտվելով դրանից, 18 տանկի աջակցությամբ սկսեց գրոհել դիվիզիայի ստորաբաժանումների վրա։ Թշնամու հարձակման անցած հետևակին և տանկերին

օդից աջակցում էր ֆաշիստական ավիացիան, որն անընդհատ ռմբակոծում և գնդակոծում էր Ասատուրովի հրետանային դիվիզիոնների մարտակոցները։

Ստեղծված բարդ իրադրությունը չշփոթեցրեց անվախ հրամանատարին, նա արագ կողմնորոշվեց և հրամայեց ուղիղ նշանառությամբ կրակ բացել հարձակվող տանկերի ու հետևակի վրա։ Մեկը մյուսի ետևից ռազմադաշտում բոցավառվում են թշնամու տանկերը։ Հրետանավորների դիպուկ ու խորտակիչ հարվածը շշմեցուցիչ էր։ Հանկարծակիի եկած թշնամին դադարեցրեց հարձակումը։ Այստեղ Ասատուրովը դիմեց համարձակ քայլի։ Մինչ թշնամին ուշքի կգար, նա աշխարհազորայիններին և 288-րդ գնդի երկու գումարտակների գլուխն անցած, «հանուն հայրենիքի» գոչելով, գրոհեց թշնամու մարտակարգերի վրա։ Թշնամին լիակատար պարտություն կրեց։ Այդ օրը ոչնչացվեց 6 տանկ, 12 ականանետային հարմարանքով ավտոմեքենա, գրավվեց 6 թնդանոթ, 6 ականանետ և գերի վերցվեց ֆաշիստական 137 զինվոր ու սպա։

Նույն օրը Ասատուրովի հրամանատարությամբ սովետական ստորաբաժանումները գրավեցին Խոլմ, Յուրովկա, 1-ին և 3-րդ Պրիլեպի բնակավայրերը։

1941 թ. օգոստոսի 13—25-ը Ելնյայից հյուսիս-արևելք Կլեմատինո-Վիդրինո բնակավայրերի շրջանում թշնամին կենտրոնացնելով խոշոր ուժեր, տանկերի աջակցությամբ նորից սկսեց գրոհել 19-րդ դիվիզիայի մարտակարգերի վրա, նպատակ ունենալով ճեղքել պաշտպանությունը, դուրս գալ Ելնյա—Վյազմա խճուղին և զարգացնել հարձակումը Մոսկվայի ուղղությամբ։

Ասատուրովը, որը գլխավորում էր Օժեգինոյ—Վիդրինո, Կլեմատինո, Վորոկսինո բնակավայրերի և Ելնյա—Սպասկ—Դեմյանսկ երկաթգծի հատվածում տեղադրված հրետանային դիվիզիոնները, հրամայեց՝ ոչ մի քայլ չնահանջել, որովհետև Կլեմատինոյի մարտերը մղվում էին Մոսկվայի համար։ Հմտորեն ղեկավարելով հրետանային կրակը, Ասատուրովը ետ մղեց հակառակորդի հետևակի և տանկերի բոլոր գրոհները։

Բանակի գեներալ Գ. Ժուկովը, որ ղեկավարում է Ելնյայի ֆաշիստական խմբավորման ջախջախման գործողությունը, երեք օր անընդհատ գտնվում էր Ասատուրովի հրամանատարական դիտակետում։ Հրետանային կրակը մեծ հմտությամբ վարելու համար հրետանավորները և անձամբ Ասատուրովը արժանանում են բանակի գեներալի բարձր գնահատականին։

Այդ մարտերից հետո Ասատուրովը վաստակեց «Ողջպատե փոթո-

րիկի հրամանատար», իսկ հրետանավորները՝ «Ասատուրովցիներ» անունները։

1942 թ. սկզբներին Ասատուրովը նշանակվեց նոր կազմավորվող 64-րդ հրաձգային դիվիզիայի 1029-րդ հրետանային գնդի հրամանատար։ Այդ նույն գնդում էր ծառայում Ասատուրովի դուստրը՝ Վալենտինա Ասատուրովան։ Երիտասարդ հայուհին սկզբում սանիտարուհի էր, իսկ հետո դարձավ հրետանու հաշվարկի հրամանատար և հոր հետ միասին ակտիվորեն մասնակցեց Ստալինգրադի ու Լենինգրադի համար մղված հերոսամարտերին։

Ասատուրովի գլխավորած հրետանային գունդը 1942 թ. օգոստոսից հոկտեմբեր ամիսը արյունալի մարտեր մղեց Ստալինգրադի ուղղությամբ հարձակվող թշնամու դեմ։ Շուտով նա նշանակվեց Ստալինգրադյան կարմրադրոշ 196-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու հրամանատար, որը թարմ ուժերով համալրվելուց հետո ուղարկվեց Լենինգրադյան ռազմաճակատ։ 1943 թ. հունվարից մինչև օգոստոսի վերջերը Ասատուրովի հրետանավորները Սինյավինոյի շրջանում մահացու հարվածներ հասցրին հակառակորդին, նրան պատճառելով մարդկային ուժի ու տեխնիկայի ծանր կորուստներ։ 196-րդ հրաձգային դիվիզիայի հրետանավորներն Ասատուրովի գլխավորությամբ այնուհետև կռվեցին Կրասնի Բորի, Պուլկովոյի, Կոլպինոյի շրջաններում։

1943 թ. Ասատուրովը նշանակվեց 42-րդ բանակի 122-րդ հրաձգային կորպուսի հրետանու հրամանատար և, տեղափոխվելով Օրանիենբաումի շրջանը, ակտիվորեն մասնակցեց Լենինգրադի շրջափակման վերացման մարտական գործողություններին։

Թշնամուն կենտրոնացված հարված հասցնելու, նրա պաշտպանական ամրությունները ոչնչացնելու, ռազմական տեխնիկային ու կենդանի ուժին ծանր կորուստներ պատճառելու համար գնդապետ Ասատուրովը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով։ 1944 թ. մայիսի 1-ին Ասատուրովը գործուղվեց Մոսկվա՝ սովորելու Կ. Ե. Վորոշիլովի անվան գլխավոր շտաբի ակադեմիայում։

Ավարտելով մեկ տարվա դասընթացները, նա նշանակվեց Հեռավոր Արևելքում գտնվող 15-րդ բանակի հրետանու հրամանատարի տեղակալ։ Ասատուրովը խնդրեց իրեն նշանակել 5-րդ հրաձգային կորպուսի հրետանու հրամանատար։ Այդ կորպուսի կազմում նա մասնակցեց Մանջուրիայում Կվանտունյան բանակի ջախջախմանը։ Ճապոնիայի կապիտուլյացիայից հետո Ասատուրովը նոր նշանակում ստացավ

Կիևի ռազմական օկրուգում։ Մինչև թոշակի անցնելը նա այդ օկրուգում վարեց մի շարք պատասխանատու պոստեր։

Ասատուրովը բանակից զորացրվեց 1957 թ.։ Մեծ են Ասատուրովի ծառայությունները հայրենիքին։ Դրա վկայությունը՝ Լենինի, Կարմիր դրոշի շքան, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններն ու բազմաթիվ մեդալներն են։

—«Գնդապետ Ասատուրովը գործունյա և իր գործը լավ իմացող բարեխիղճ հրամանատար է»։ Այսպիսի գնահատական է տվել նրան Կիևի ռազմական օկրուգի նախկին հրամանատար, ՍՍՀՄ պաշտպանության նախկին մինիստր, Սովետական Միության մարշալ Գրեչկոն[7]։

Նույն կորպուսի հմուտ հրամանատար-հրետանավորներից էր 131-րդ հրաձգային դիվիզիայի հրետանու պետ, գվարդիայի գնդապետ Գևորգ Խաչատուրի Բաղդասարյանը[8]։ Դիվիզիայի հրետանավորները նրա ղեկավարությամբ հարձակման ամբողջ ընթացքում կենդանի ուժի ու տեխնիկայի ծանր կորուստներ պատճառեցին թշնամուն և պատվով կատարեցին հրամանատարության մարտական խնդիրները։ Հատկապես աչքի ընկան 409-րդ հրետանային գնդի լեյտենանտներ Վասիլի Միխայլովիչ Դեմիդովի, Դիմիտրի Դանիլովիչ Կասյանովի, 482-րդ հրաձգային գնդի լեյտենանտ Վասիլի Պետրովիչ Պրիդանի կրակային դասակները, Վիկտոր Ֆյոդորովիչ Զոլոտովի ականանետային վաշտը և այլ ստորաբաժանումներ։ 593-րդ հրաձգային գնդի ավագ լեյտենանտ Օլիմպի Նիկոլաևիչ Զումակովի մարտկոցի հրետանավորները ետ մղեցին հակառակորդի երեք հակագրոհ և ոչնչացրին 4 տանկ։ Հրետանավորներ Ֆյոդոր Իվանովիչ Իվանովը և Վասիլի Ալեքսեևիչ Ռուակավշինիկովը ոչնչացրին մեկական տանկ և մի քանի կրակային կետեր[9]։ Մարտերում ցուցաբերած արիության համար այդ խիզախ ռազմիկները պարգևատրվեցին կառավարական շքանշաններով ու մեդալներով։

Հրետանային կրակը ճիշտ կազմակերպելու շնորհիվ դիվիզիայի ստորաբաժանումները ճեղքեցին թշնամու պաշտպանական գիծը և մի քանի օրվա համառ մարտերից հետո, հունվարի 19-ին գրավեցին Ռոպշան։ Թշնամու պաշտպանությունը ճեղքելու և նրա հզոր ամրություննե-

---

[7] ՍՍՀՄ ՊՄԿԱ, Գ. Զ. Ասատուրովի անձնական գործը, № Կ—39488, թ. 8-57։

[8] Գևորգ Խաչատուրի Բաղդասարյանը ծնվել է 1905 թ., Բաքու քաղաքում, ծառայողի ընտանիքում։ 1923-26 թթ. սովորել է Հայկական միացյալ զինվորական դպրոցում։ Երբ սկսվեց Մեծ հայրենականը, նա զբաղեցնում էր 23-րդ բանակի 43-րդ հրաձգային դիվիզիայի 162-րդ հրետանային գնդի շտաբի պետի պաշտոնը։

[9] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1313, ց. 2, գ. 57, թ. 29, 190, 195։

ը հաղթահարելու, ինչպես նաև բարձրագույն հրամանատարության առաջադրանքը ժամանակին ու օրինակելիորեն կատարելու համար 131-րդ դիվիզիայի հրամանատար, գնդապետ Պ. Լ. Ռոմանենկոյին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում, իսկ Գևորգ Բաղդասարյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[10]։

Հակառակորդի պաշտպանական ամրությունների հաղթահարումը արագացնելու համար 2-րդ հարվածային բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Ի. Ի. Ֆեդյունինսկին մարտի մեջ մտցրեց 2-րդ էշելոնում գտնվող գեներալ-մայոր Պ. Ֆ. Ռատովի 196-րդ հրաձգային դիվիզիան և գնդապետ Ա. Զ. Օձկոտսկու տանկային բրիգադը։ Գեներալ Պ. Ֆ. Ռատովի մոտիկ զինակիցներից էր դիվիզիայի հրետանու հրամանատար փոխգնդապետ Սամվել Սիմոնի Հարությունյանը, որը հրետանային կրակը վարպետորեն վարելու մեծ հմտություն դրսևորեց։ Դիվիզիայի հրետանավորները նրա հրամանատարությամբ դիպուկ ու նշանառու զանգվածային կրակով քարուքանդ արեցին թշնամու բազմաթիվ պաշտպանական ամրություններ ու դիմադրության հենակետեր, դրանով իսկ ապահովեցին ստորաբաժանումների հաջող հարձակումը։ Կարճ ժամանակում դիվիզիայի զորամասերը ազատագրեցին Գլյադինո, Իվանովկա, Զաբորոդյե, Խաբանի խոշոր բնակավայրերը և հունվարի 20-ին Ռյուցեմիլյուի շրջանում միացան Լենինգրադի կողմից հարձակվող 42-րդ բանակի 291-րդ հրաձգային դիվիզիային։ Այնուհետև, զարգացնելով հարձակումը, մինչև հունվարի 26-ը 196-րդ հրաձգային դիվիզիան ազատագրեց Ռուսկո-Վիսոցկի, Գորկի, Կիպեն, Պեդլինո, Զերնովո, Վոյսկովիցի բնակավայրերը, կտրեց Կրասնո—Կինգիսեպ երկաթգիծը[11]։ Հարձակման ամբողջ ընթացքում հատկապես աչքի ընկան դիվիզիայի 725-րդ հրետանային գնդի հրետանավորները։ Ավագ լեյտենանտ Ալեքսեյ Դիմիտրովիչ Սուլեյկինի 5-րդ մարտկոցը միայն հարձակման առաջին օրը ոչնչացրեց 4 գնդացրային կրակակետ, 3 թնդանոթ, 1 հրամանատարական կետ և մեկ դասակից ավելի ֆաշիստական զինվոր ու սպա։ Հրետանավոր, սերժանտ Իվան Իվանովիչ Վարլամովը դիպուկ կրակով քարուքանդ արեց 3 դոտ։ Փոքր Գորկայի շրջանում նֆրեյտոր Դմիտրի Իլյիչ Պրոկուդինը ոչնչացրեց 2 տանկ[12]։ Աչքի ընկան հրետանավորներ՝ լեյտենանտ Ն. Գ. Պլատոնովը, սերժանտ Ի. Ի. Վարլամովը, լեյտենանտ Յե. Կ. Գորդելյանը, սերժանտ Ա. Ա. Դանիլովը, Ս. Ա. Դասպարյանը, Դ. Մ.

---

10 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 686196, դ. 5550, թ. 26։

11 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1255, ց. 47271, գ. 1, թ. 19։

12 Նույն տեղում, ֆ. 196-րդ հր. դիվիզիա, ց. 2, գ. 17, թ. 39, 78։

Հարությունովը, Ա. Ս. Կուրբատովը, Մ. Ս. Ալեքսինը, Վ. Ն. Անտոնյանը և շատ ուրիշներ։ Վերջինս ռազմիկների բարոյաքաղաքական ու մարտական ոգին բարձրացնելուց բացի մեծ ուշադրություն էր դարձնում կազմակերպությունը նոր կոմունիստներով համալրելուն, մշտապես պահպանելով նրա մարտունակությունը։ Հարձակողական մարտերի ժամանակ հրետանային դիվիզիոնի կուսակցության կազմակերպությանը ավելացավ 6 անդամ և 10 անդամության թեկնածու։ Կուսակցական աշխատանքը լավ կազմակերպելու համար Վ. Անտոնյանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[13]։ Ռոպշա, Գորկի և Նեկուզնմյակի շրջանում մարտի մեջ մտած 152-րդ տանկային բրիգադի ստորաբաժանումների տեղաշարժումներին հուժկու կրակով աջակցում էր 17-րդ առանձին գվարդիական կարմրադրոշ տանկային գնդի հրետանային մարտկոցը՝ գվարդիայի ավագ լեյտենանտ Բենիամին Տիգրանի Մինասյանի հրամանատարությամբ։ Ոգևորված իրենց հրամանատարի անձնական օրինակով, հրետանավորները դրսևորեցին ամուր կամք ու վճռականություն մինչև վերջ կատարելու մարտական առաջադրանքը՝ ապահովելով տանկերի կենտրոնացումը 130,3 բարձունքում, որտեղից պետք է սկսվեր գրոհը Ռոպշայի վրա։ Հրետանավորները շարքից հանեցին 6 դզոտ, 3 թնդանոթ, 2 հաստոցային գնդացիր և այլն։ Խիզախ հրամանատարը, որ նախկինում պարգևատրվել էր Ալեքսանդր Նևսկու շքանշանով, այս անդամ պարգևատրվեց Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով[14]։

Հունվարի 16-ին Իսաևո-Մալկունովո բնակավայրի շրջանում 43-րդ դիվիզիայի ստորաբաժանումների գրոհը չէր ստացվում։ Թշնամու դիրքերից արձակվող գնդացրային ուժեղ կրակը հարձակվողների շղթաները դամել էին գետնին։ Հատկապես երեք հրակնատանոց դզոտից գնդացրային կրակը ծանր վիճակի մեջ դրեց 65-րդ հրաձգային գնդի ստորաբաժանումներին։ Հրետանավոր Ն. Ա. Ռոտովը իր մարտական ընկերների՝ Մատվեևի, Ֆիլատովի և Ժումգալիևի հետ թնդանոթը բաց դիրք դուրս բերեց, որպեսզի ուղիղ նշանառությամբ հարվածեն դզոտին։ Երբ պատրաստվում էին կրակել, շատ մոտիկ պայթեց արկը, որից զոհվեցին ընկերները։ Ռոտովը վիրավոր վիճակում նշան բռնեց և դզոտը շարքից դուրս նկավ, իսկ հետևակը սրընթաց գրոհով գրավեց բնակավայրը։ Հակառակորդը որոշ դադարից հետո անցավ հակագրոհի։ Ռոտովը նորից մարտի մեջ մտավ։ Ուժասպառ հրետանավորը վերջին նռնակը նետեց դե-

---

13 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 321, թ. 37։

14 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 660, թ. 128։

պի իր կողմը շարժվող հիտլերականների վրա և սպանեց ևս վեց հիտլերական։ Հերոսն անձնազոհությամբ հաղթեց հակառակորդին[15]։

90-րդ հրաձգային դիվիզիայի հետ սերտ համագործակցությամբ, հունվարի 14-ին ճեղքելով թշնամու պաշտպանությունը, հաջողությամբ էր հարձակվում 98-րդ առանձին տանկային գունդը։ Տանկիստները երրորդ օրն արդեն մարտեր էին մղում Դյատլիցը ազատագրելու համար։ Հարձակման առաջին օրը գնդի ավագ լեյտենանտ Ա. Ի. Սպիրինի տանկային վաշտը ոչնչացրեց ֆաշիստական երկու տանկ, 38 գետնատնակ և դզոտ, 46 գնդացրային կետ, 12 ականանետ և ավելի քան 30 թնդանոթ։ Հունվարի 16-ին Սպիրինի տանկիստները մոտեցան Դյատլիցին։ Հետախուզության տվյալներից գիտեին, որ թշնամին այստեղ կենտրոնացրել է հարուստ տեխնիկա։ Վաշտի հրամանատարը որոշեց մինչև հիմնական ուժերի մոտենալը, երեք տանկերով ներխուժել Դյատլից։ Նա հրամայեց տանկերի երկու անձնակազմերին աջից շրջանցել բնակավայրը, իսկ ինքն իր տանկով ձախից շարժվեց դեպի թշնամու դիրքերը։ Տանկի դիմաց դուրս եկան ֆաշիստական 8 տանկ (Վագր)։ Սկսվեց անհավասար մարտը։ Առաջին իսկ համազարկից այրվեց թշնամու «Վագր» տանկերից մեկը։ Հակառակորդի պատասխան կրակից Սպիրինի տանկը այրվեց։ Սպանվեցին լիցքավորող տանկիստը և մեխանիկ-վարորդը։ Սպրիրինը դուրս եկավ տանկից և ավտոմատից կրակ բացեց դեպի տանկը շարժվող հիտլերականների վրա և սպանեց 60 ֆաշիստական զինվոր։

Ավագ լեյտենանտ Ալեքսանդր Սպիրինը և ավագ սերժանտ Նիկոլայ Ռտովը իրենց անմահ սխրանքը կատարեցին հունվարի 16-ին և հերոսաբար զոհվեցին նույն օրը։ Գերագույն սովետի հրամանագրով նրանց շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[16]։

Բազմաթիվ նոր հերոսներ ծնվեցին Լենինգրադի կողմից հարձակվող 42-րդ բանակի միավորումներում և զորամասերում։ Սովետական ռազմիկները կոտրելով հակառակորդի համառ դիմադրությունը, կանգ չառնելով ոչ մի զոհողության առաջ, համարձակորեն գրոհում էին նախօրոք կառուցված նրա հզոր պաշտպանական ամրությունները՝ այն բարձր դիտակցությամբ, որ հասել է երկար սպասված բաղձալի ժամը, վերջ տալու լենինգրադցիների ծանր տառապանքներին և զրկանքներին։

Վաշտի կոմերիտական կազմակերպիչներ Ալեքսանդր Տիպանով, Իվան Սկրուդին, սերժանտ Տիմոֆեյ Ֆյոդորով, կրտսեր լեյտենանտ Ա-

---

[15] *А. В. Буров*, Твои герои. Ленинград. с. 372—374.

[16] *Նույն տեղում, էջ 369-374։*

լեքսանդր Վոլկով։ Ահա նրանք, որոնք հաղթանակը բարձր գերադասեցին անձնական կյանքից։ Կրկնելով Ալեքսանդր Պանկրատովի և Ալեքսանդր Մատրոսովի անմահ սխրանքը, նրանք շարունակեցին հերոսների անմահ գործը, ցուցադրելով սովետական ռազմիկի մարտական ու բարոյաքաղաքական բարձր հատկություններ։ Ստամահու նրանց շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

Հարձակման առաջին օրը՝ հունվարի 15-ին, 42-րդ բանակի միավորումները ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը և առաջ շարժվեցին 4,5 կմ։ 30-րդ գվարդիական հրաձգային կորպուսի (հրամանատար՝ գեներալ-մայոր Ն. Պ. Սիմոնյակ) 63-րդ և 64-րդ գվարդիական հրաձգային դիվիզիաները, ճնշելով հակառակորդի դիմադրության օջախները, հարձակման երկրորդ օրը ընդհուպ մոտեցան Կրասնոյե Սելոյին։, Դուդերգոֆին և Վորոնա Գորային։ Թշնամին տագնապում էր Պետերգոֆ-Ստրելնի խմբավորման շրջապատումից։ Նա պահեստային նոր ուժեր մտցրեց մարտի մեջ, բայց դա էլ չփրկեց վիճակը։ Սովետական զորքերի շարունակվող հուժկու հարձակումը ձախողեց թշնամու պլանները։ 63-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 190-րդ հրաձգային գնդի վաշտի հրամանատար կապիտան Վլադիմիր Մասալսկին վիրավոր վիճակում, անձնական օրինակով ոգևորելով մարտիկներին, գրոհի տարավ նրանց, մինչև վերջ կատարելով մարտական առաջադրանքը։ Խիզախ հրամանատարին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Նույն գնդից աչքի ընկան լեյտենանտներ Ֆյոդոր Վիխաևը, Իվան Մարչենկոն, Ալեքսանդր Միրգոնովը, Միրզա Միրզաևը, Պավել Մատվեևը։ Սանիտար Իվան Մոլոդչենկոն ռազմադաշտից դուրս բերեց 25 վիրավոր զինվոր ու սպա[17]։ 192-րդ գվարդիական հրաձգային գնդից հերոսաբար մարտնչեցին կապի դասակի հրամանատար լեյտենանտ, աբխազ Իվան Ագրունը, շարքայիններ Իվան Լապինը, Պավել Լասկովը, Վլադիմիր Իկերտը և շատ ուրիշներ[18]։

Հարձակման ամբողջ ընթացքում ավանգարդում էին քաղաշխատողները, կոմունիստները և կոմերիտականները, որոնց անձնական օրինակը ոգևորում ու նոր սխրագործությունների էր մղում հաղարավոր մարտիկների։ Այդպիսիներից էր Լենինգրադյան ռազմաճակատի ճանաչված քաղաշխատող 63-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 188-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատարի քաղգծով տեղակալ մա-

---

[17] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1192, ց. 2, գ. 87, թ. 179։

[18] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1192, ց. 2, գ. 87, թ. 93, 94, 123, 168, 179։

յոր Արամ Արշակի Սիլանյանը[19]։ Նա հայրենական պատերազմի երկու և կես տարում խանկո թերակղզու հերոսական պաշտպանության և Լենինգրադի շրջափակման ճեղքման մարտական գործողությունների ժամանակ ձեռք բերելով հարուստ փորձ, դարձել էր հմուտ հրամանատար։ Նրա քաղաքական-կուսակցական աշխատանքի կազմակերպչական եռանդն ու ընդունակությունները միահյուսվում էին անձնական խիզախության, համարձակության ու վճռականության հետ։ Եվ դրա համար նա զորամասում վայելում էր մեծ հեղինակություն ու համակրանք։ Խամալյանե բնակավայրի համար մղված մարտերի ժամանակ գնդի գումարտակներից մեկը թշնամու կրակի տակ պառկեց գետնին, որով և դանդաղեցրեց մյուս գումարտակների հարձակումը։ Սիլանյանը մեկնեց ստորաբաժանում, տեղում պարզեց վիճակը, իր ձեռքը վերցրեց հրամանատարությունը և բոլոր միջոցները գործադրեց մարտական առաջադրանքը հաջող կատարելու համար։ Գումարտակը հարևան զորամասերի սերտ համագործակցությամբ դրավեց Խամալյանե հենակետը։ Արամ Սիլանյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[20]։ Նա միշտ հասցնում էր լինել այնտեղ, որտեղ պահանջվում էր փորձված քաղաշխատողի և բոլշևիկի միջամտությունը։ Նրա ցուցումով յուրաքանչյուր մարտից առաջ իրենց լավ դրսևորած կարմիրբանակայիններին հանձնվում էին կարմիր դրոշներ։ Նարվայից հարավ-արևմուտք, մարտերի ժամանակ վաշտի անձնակազմի առաջ այդպիսի մի դրոշակ հանձնվեց սերժանտ Զալետովին։ Հաջորդ օրը, երբ սկսվեց գրոհը, Սիլանյանը հրամանատարական դիտակետից տեսավ, որ Զալետովն առաջինն անցավ գետի մյուս ափը և դրոշակն ամրացրեց թշնամու դզոտին։ Համարձակ սերժանտի սխրագործությունն անմիջապես հայտնի դարձավ գնդում և նույն օրը զորամասի ողջ անձնակազմի ներկայությամբ նրան հանձնվեց Փառքի 3-րդ աստիճանի շքանշան։ Բացի այդ, Սիլանյանը հրամանատարության անունից շնորհակալական նամակ ուղարկեց հերոսի ծնողներին, որ մեծացրել ու դաստիարակել են այդպիսի հերոսի, ինչպիսին էր Նիկոլայ Զալետովը[21]։

Յուրաքանչյուր սխրագործություն և լավ արարք չէր վրիպում նրա

---

[19] Արամ Արշակի Սիլանյանը ծնվել է 1918 թ. Բարու քաղաքում։ Գերազանցիկի դիպլոմով ավարտել է Լենինգրադի ռազմաքաղաքական ակադեմիան։ Հայրենական պատերազմի սկզբին մասնակցել է Խանկո թերակղզու, այնուհետև Լենինգրադի համար մղված մարտերին։

[20] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 397, ց. 9272, գ. 148, թ. 13։

[21] Նիկոլայ Զալետովը հետագայում դառնում է Փառքի շքանշանների ասպետ։

ուշադրությունից։ Նա կենդանի օրինակներով ձգտում էր ոգևորել, քաջալերել մարտիկներին, բարձրացնել անձնակազմի բարոյական ոգին ու մղել նրանց նոր, համարձակ գործերի։ Սիլանյանը բազմաթիվ նամակներ էր ստանում վիրավոր կարմիրբանակայիններից ու հրամանատարներից։ «Ընկեր գվարդիայի մայոր,— գրում է լեյտենանտ Զախարենկոն,— ես ամեն ինչ կտամ, որպեսզի նորից լինեմ իմ զորամասում։ Երբ մենք գնում էինք մարտի, այն ժամանակ դուք ասացիք, հավատացեք ինձ։ Եվ ես բոլորը, ինչ որ դուք ինձ ասել էիք, պատվով կատարեցի և չերեցի ոչ մի բանի առաջ։ Ես պատրաստ եմ հարազատ զորամասի համար տալ ամեն ինչ, նույնիսկ կյանքս»։ Կապիտան Տրոշինը գրում է. «Ընկեր մայոր, իմ նկատմամբ ցուցաբերած հոգատարության և շքանշանի համար պարտք չեմ մնա»։ «Դուք ինձ,— գրում է սերժանտ Բարկալովը,— և մեր մյուս մարտիկների ու հրամանատարների համար եղել եք դաստիարակ և ընկեր։ Դուք իմ հիշողության մեջ եք մնացել առհավետ»[22]։ Արամ Սիլանյանը մինչև վերջ մասնակցեց Լենինգրադի շրջափակման վերացման համար մղված մարտերին[23]։

Օրանիենբաումի շրջանից ընդառաջ շարժվող 2-րդ հարվածային բանակի զորամասերի հետ արագ միանալու համար 42-րդ բանակի հրամանատար, գեներալ-գնդապետ Ի. Ի. Մասլեննիկովը մարտի մեջ մտցրեց 1-ին և 220-րդ տանկային բրիգադները։ 220-րդ տանկային բրիգադի 51-րդ և մայոր Ուշակովի անվան 84-րդ տանկային գումարտակներից առանձնացվեց մի խումբ և հրամայվեց ճեղքել հակառակորդի պաշտպանությունը, խորանալ նրա ուժերի դասավորության մեջ և կազմալուծել թիկունքը։

Հունվարի 17-ին տանկային խումբը, որի կազմում էին ուկրաինական, բելոռուսական և հայ ժողովրդի պանծալի զավակներ, 51-րդ տանկային գումարտակի հրամանատար կապիտան Միխայիլ Դիմիտրովիչ Կոնոնովը, տանկի հրամանատարներ, լեյտենանտներ Ցեզար Կազիմիրովիչ Մալինովսկին և Ալեքսանդր Սիդորի Մնացականովը, փոքրաթիվ ուժերով հմտորեն շրջանցելով ճահճուտները, իսկ երբեմն էլ ուղղակի հաղթահարելով ջրային բնական արգելքները, թափանցեցին թշնամու թիկունքը և մտան նրա ուժերի դասավորության շրջանը։ Հիտլերական-

---

22 «Политическое обеспечение великой победы под Ленинградом», с. 135.

23 Արամ Սիլանյանը մարտերում ցուցաբերած արիության ու խիզախության համար պարգևատրվել է Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 1-ին և 2-րդ աստիճանի և Կարմիր աստղի շքանշաններով։

ները սովետական տանկերին ընդունեցին որպես յուրայիններ և դադարեցրին կրակը։ Փոխադարձ համագործակցությամբ, աշալրջորեն հետևելով հակառակորդի գործողություններին, խիզախ տանկիստներն արագություն հաղորդելով իրենց երկաթե նժույգներին, առանց արգելքի մբատան թշնամու Տելզի ամրացված հենակետը և բոլոր կողմերից անբսպասելի գրոհեցին էվակուացիայի պատրաստվող կայազորի վրա։ Տանկերը մխրճվեցին ռազմական հանդերձանքով բեռնված ավտոմեքենաների շարասյան մեջ՝ թրթուրներով, հրետանային ու գնդացրային կրակով ոչնչացրին 12 թնդանոթ, 50 ավտոմեքենա, 38 քարշակ, 6 շտաբային ֆուրգոն, 200 հիտլերական և այլն։ Ջախջախելով հակառակորդի շտաբը, տանկիստները ապահովեցին բրիգադի ուժերի մուտքը Կուսկո-Վիսոցկի բնակավայրը և առանց դադար առնելու առաջ շարժվեցին։ Հունվարի 19-ի գիշերը գրավեցին Կիպեն քաղաքը և առաջինը միացան 2-րդ հարվածային բանակի զորամասերին[24]։ Երկու բանակների հանդիպման պահը հավերժացվեց հատուկ ակտով, որի տակ ստորագրեցին գնդապետ Ի. Մ. Տուրյանը, փոխգնդապետներ Ի. Կ. Խարմիշևը, Մ. Դ. Ջերնիշը, լեյտենանտ Մ. Պ. Ֆիսենկոն և ուրիշներ։ Կապիտան Մ. Դ. Կոնոնովի գլուխը ծանր վիրավորվեց, բայց մինչև վերջ մնաց տանկիստների հետ. և ղեկավարեց գումարտակի մարտական գործողությունները։ Տանկիստները գրավեցին Ռեխմոզի, Սալոզի, Ջերնովո ամրացված հենակետերը և Վոյսկովիցի երկաթուղային հանգույցը։ Տանկային գումարտակը ոչնչացրեց բեռնված երկու շարասյուն ավտոմեքենա, 54 թնդանոթ, 28 ականանետ, 59 գնդացիր, 126 դզոտ և ավելի քան 900 ֆաշիստական զինվոր ու սպա։ Վոյսկովիցի կայարանի մոտ Կոնոնովի տանկը խփվեց։ Երկրորդ անգամ գլխից ծանր վիրավոր, նա տանկից դուրս եկավ և ղեկավարեց հետևակայինների գրոհը[25]։ Ոգևորված իրենց հրամանատարի անձնական օրինակով, հերոսաբար կռվեցին և հակառակորդին ծանր կորուստներ պատճառեցին մարտական եղբայրությամբ ու ընկերակցությամբ ամուր կապված ռուսներ՝ տանկային դասակի հրամանատարներ, լեյտենանտներ Պյոտր Ֆյոդորովիչ Գավրիլովը, Յակով Պավլովիչ Գավրիլովը, ուկրաինացի Վասիլի Սեմյոնովիչ Կաղաչյոկը, հայ Լևոն Մեսրոպի Ադամյանը։ Վերջինիս տանկադեսանտային դասակը տանկերի վրա նստած մոտիկ տարածությունից ավտոմատային

---

24 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 220-րդ առանձին տանկային բրիգադի, ց. 2, գ. 23, թ. 197, 199։

25 Նույն տեղում, թ. 199։

նշանառու կրակով գնդակահարում էր համառորեն դիմադրող հիտլերականներին, թույլ չտալով նրանց վնասելու առաջ շարժվող տանկերին[26]։ Դեսանտայիններից, կոմի ժողովրդի զավակ, կրտսեր սերժանտ Միխայիլ Խոլոպովն ավտոմատային կրակով ոչ միայն ոչնչացրեց 7 հիտլերական, այլև ընթացքից նետված նռնակներով պայթեցրեց երկու քարշակ։ Լարված ու եռանդուն գործեց գումարտակի Ֆելդշեր լեյտենանտ Իվան Տրետյակովը, որը, բացի վիրավորների էվակուացիան ղեկավարելուց, անձամբ մարտի դաշտից դուրս բերեց 15 վիրավոր[27]։

Կապիտան Կոնոնովի տանկիստների հետ միասին թշնամու ամրություններն էին գրոհում մայոր Ուշակովի անվան 84-րդ տանկային գումարտակը մայոր Գենեդովի հրամանատարությամբ։ Աչքի ընկան տանկի հրամանատարներ՝ ավագներ Սերգեյ Պավլովիչ Կոլչանովը, Պյոտր Պոդոսի Պետրոսյանը, տանկի ռադիստ Ալեքսանդր Վասիլևիչ Դավիդովը, մեքենավար Միխայիլ Դմիտրովիչ Բարիկովը և ուրիշներ։ Սանիտար Լիդա Ֆեոդորովնա Բիկովան մարտի դաշտից դուրս բերեց 22 վիրավոր։ Մարտական գործողությունների ընթացքում տանկիստներին արդյունավետ աջակցություն ցույց տվեցին բրիգադի սակրային ստորաբաժանումները՝ ավագ լեյտենանտ Անատոլի Լոպատինի հրամանատարությամբ։ Սակրավորները վերականգնեցին 10 և կառուցեցին 5 կամուրջ, ականազերծեցին 500 ականանետային ական, ճահիճներից դուրս հանեցին 15 տանկ[28]։

Կիպենի շրջանում երկու բանակների հանդիպման նախորդ օրը՝ հունվարի 18-ին, 42-րդ բանակի միավորումները ծանր մարտեր սկսեցին հակառակորդի Կրասնոյե Սելո—Դուդերգոֆ—Վորոնա Գորա պաշտպանական հզոր ամրություններով միմյանց շղթայակցված հենակետերի վրա։ Պաշտպանական գոտու բանալին հանդիսացող Վորոնա Գորայի վրա էր գրոհում երեսունամյա գնդապետ Ա. Ֆ. Շչեգլովի 63-րդ գվարդիական հրաձգային դիվիզիան։ Հունվարի 19-ի առավոտյան փոխգնդապետներ Ա. Ի. Շերստնևի և Ա. Գ. Աֆանասևի 188-րդ և 190-րդ գվարդիական գնդերը գրոհով գրավեցին Վորոնա Գորան և մեծապես աջակցեցին 64-րդ գվարդիական, 291-րդ և 224-րդ հրաձգային դիվիզիաներին տանկային զորամասերի աջակցությամբ աղատագրել Կրասնոյե

---

26 Նույն տեղում, թ. 117։

27 Նույն տեղում, թ. 114։

28 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 220-րդ տանկային բրիգադի, ց. 2, գ. 23, թ. 136, 279։

Սելոն։ Այդ մարտերում աչքի ընկավ 224-րդ հրաձգային դիվիզիայի 160-րդ հրաձգային գնդի հետախուզական ջոկատի հրամանատար, սերժանտ Իվան Վլադիմիրովիչ Գղիրիշվիլին։ Ջոկի հրամանատարն իր հետախույզներով գիշերով հետախուզեց Կիրպուն բնակավայրի և Տայցի կայարանի շրջանում թշնամու պաշտպանական ամրությունները և հրամանատարությանը ներկայացրեց գերի վերցված գերմանացուն, որի արժեքավոր տեղեկությունները նպաստեցին գնդի ստորաբաժանումների հաջող գործողություններին։ Ի. Վ. Գղիրիշվիլին պարգևատրվեց Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով[29]։

Լենինգրադյան ռազմաճակատի 2-րդ հարվածային և 42-րդ բանակների հուժկու հարձակմամբ ու սովետական ռազմիկների մասսայական սխրագործությունների շնորհիվ հակառակորդի Պետերգոֆ-Ստրելնի խմբավորումը հունվարի 20-ին դադարեց գոյություն ունենալուց։ Ռոպշան և Կրասնոյե Սելոն ազատագրելու առթիվ Մոսկվայում հունվարի 19-ին Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի պատվին տրվեց հրավառություն։ Անհաջողությունից դաղաղած հիտլերականները, վերախմբավորելով ջախջախված ստորաբաժանումները, փորձեցին դուրս գալ շրջապատումից։ Ծանր կորուստների գնով միայն մի մասին հաջողվեց փախչել։ Տանկիստ Մնացականովի տանկն առաջինը դուրս եկավ Իժոր գետի սահմանը և գրաված տեղամասը ձեռքում պահեց այնքան ժամանակ, մինչև մոտեցան բրիգադի հիմնական ուժերը։

Հրամանատարության մարտական առաջադրանքը մինչև վերջ օրինակելիորեն կատարելու, 2-րդ հարվածային բանակի զորամասերին առաջինը միանալու և թշնամուն տեխնիկայի ու կենդանի ուժի ծանր կորուստներ պատճառելու համար 220-րդ առանձին տանկային բրիգադից բելոռուս և հայ ժողովրդի զավակներ կապիտան Մ. Դ. Կոնոնովին և լեյտենանտ Ա. Ս. Մնացականովին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Շքանշաններով ու մեդալներով պարգևատրվեցին մեծ թվով տանկիստներ։

42-րդ բանակի հարձակողական գործողությունների ժամանակ Լենինգրադյան 3-րդ հրետանային կորպուսի հրետանային կրակը արդյունավետ ու նպատակային դարձնելու պլանների մշակման, ինչպես նաև կորպուսի շտաբին, հրետանային բրիգադներին և մյուս ստորաբաժանումներին գործնական օգնություն ցույց տալու համար, կորպուսի

---

29 ՍՍՄՀ ՊՄԿԱ, ֆ. 23, ց. 690155, գ. 674, թ. 85։

օպերատիվ բաժնի պետ, մայոր Սերգեյ Իվանի Նարինյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[30]։

Լենինգրադյան ռազմաճակատի երկու բանակների միացումից հետո, ինչպես բոլոր զորամասերում, այնպես էլ 220-րդ առանձին տանկային բրիգադում անցկացվեցին միտինգներ, կուսակցական և կոմերիտական ժողովներ «Մարտերի արդյունքները և հետագա կռիվներին նախապատրաստվելու խնդիրները» թեմայով։ Զեկուցումներով ելույթներ ունեցան զորամասերի հրամանատարներ, մարտերում աչքի ընկած մարտիկներ ու սպաներ։ Տանկադեսանտային դասակի հրամանատար Լևոն Ադամյանը, որ աչքի էր ընկել հարձակման ընթացքում, իր ելույթում նշեց, «որ իր դասակը գործում էր լավ, անձնակազմը ցույց տվեց հերոսության ու արիության օրինակներ։ Երբ ավտոմատավորներից մեկը վիրավորվեց, նա չհեռացավ մարտից, այն ժամանակ նրան հրամայեցի գնալ սանմաս, բայց նա արցունքն աչքերին խնդրեց մնալ շարքում»։

Ավտոմատավորի նման շատ-շատերը չէին ցանկանում դուրս գալ մարտից։ Թշնամու նկատմամբ կուտակված ատելությունը յուրաքանչյուր ռազմիկի մղում էր անօրինակ սխրանքի, ուժերի հնարավորության սահմաններում և նույնիսկ կյանքի գնով օգտակար լինել հայրենիքին։ Տանկային բրիգադի ստորաբաժանումներից մեկում հայրենասիրական ջերմ խոսքերով ելույթներ ունեցան ավագ սերժանտ Մարտիրոսյանը և կարմիրբանակային Կոնոնովը։ «Առաջիկա մարտում,—հայտարարեց Մարտիրոսյանը,—ֆաշիստական ավազակներին ես կհարվածեմ անխնա այնքան ժամանակ, քանի դեռ սիրտս աշխատում է»[31], իսկ Կոնոնովը իր ելույթում կոչ արեց ֆաշիստական սրիկաներին հարվածել այնպես, ինչպես իրենց հերոսական նախնիներն են արել։ Նրանց նորից խնդրել Զուդ լճում, որ այլևս չհամարձակվեն ոտք դնել մեր հողի վրա[32]։

220-րդ առանձին տանկային բրիգադի հետ սերտ համագործակցությամբ նույն ժամանակաշրջանում հակառակորդին կենդանի ուժի ու տեխնիկայի ծանր կորուստներ պատճառեցին կարմրադրոշ 1-ին տանկային բրիգադի ստորաբաժանումները։ Բրիգադի 2-րդ տանկային դու-

---

[30] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 955, թ. 33։

[31] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 220-րդ առանձին տանկային բրիգադի, ց. 308757, գ. 4, թ. 27, 33։

[32] Նույն տեղում, թ. 40։

մարտակի հրամանատարի տեղակալ, կապիտան Սուրեն Լևոնի Իոնեսյանի հրամանատարությամբ մի քանի տանկեր ու ինքնագնաց հրանոթներ Ռոտալի բնակավայրի շրջանում ճեղքեցին թշնամու պաշտպանությունը և մտան նրա ուժերի դասավորությունը։ Խիզախ տանկիստները ոչնչացրին 300 հիտլերական[33]։ Այդ համարձակ գործողության համար Իոնեսյանը պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով։

Լենինգրադյան ռազմաճակատի ձախ թևում նույն ժամանակաշրջանում, հունվարի 14-ին հարձակման անցած Վոլխովյան ռազմաճակատի 59-րդ բանակի զորամասերը, մի քանի օրվա համառ մարտերից հետո քիմիական ստորաբաժանումների առաջացրած քողարկիչ ծխածածկույթի տակ, որը շատ հմտորեն ղեկավարեց քիմիական ծառայության պետ փոխգնդապետ Իվան Նիկոլայի Կիստոստուրովը, հաջողությամբ գետանցեցին Վոլխովը, ընդհուպ մոտեցան Զուդովո—Նովգորոդ երկաթգծին, կտրեցին Պոդբերեզ—Դոլգովո տանող ճանապարհը և զարգացրին հարձակումը դեպի Վյաժիշչե։

Վոլխովի գետանցմանը բանակի զորամասերին հսկայական աջակցություն ցույց տվեց 1-ին ինժեներական սակրային բրիգադը՝ փոխգնդապետ Վ. Աֆանասևի հրամանատարությամբ։ Սակրավորները բրիգադի 2-րդ բաժանմունքի պետ ինժեներ-կապիտան Հայկ Սերգեյի Միքայելյանի ղեկավարությամբ կառուցեցին կամուրջներ՝ զորքերի ու տեխնիկայի անցման համար։ Անխուսափելի ջախջախումից խուսափելու համար թշնամին Նովգորոդից սկսեց դուրս հանել իր զորքերը, սակայն նրան չհաջողվեց փրկվել շրջապատումից։ Հունվարի 19-ին Նովգորոդից դեպի արևմուտք տանող բոլոր ճանապարհները գրավվեցին 59-րդ բանակի զորամասերի կողմից, իսկ հաջորդ օրը գեներալ-մայորներ Ռ. Ի. Պանինի և Պ. Ա. Արտյուշենկոյի հրաձգային կորպուսների զորամասերն ազատագրեցին ռուսական հինավուրց քաղաք, տնտեսական ու մշակութային կարևոր կենտրոն Նովգորոդը։ Քաղաքի կենտրոնական շենքերից մեկի վրա սկսեց ծածանվել սպաներ Վ. Ա. Նիկոլաևի և Ա. Պ. Շվագիրևի ամրացրած կարմիր դրոշը։

Քիմիական ստորաբաժանումների գործողությունները հմտորեն ղեկավարելու համար հայորդի Ի. Ն. Կիստոստուրովը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով։ Քաղաքի ազատագրմանն առավել աչքի ըն-

---

33 Նույն տեղում, ֆ. 397, ց. 6095, գ. 152, թ. 3։

կած զորամասերին ու ստորաբաժանումներին Գերագույն գլխավոր հրամանատարության կողմից հայտնվեց շնորհակալություն, իսկ մի քանի միավորումների շնորհվեց Նովգորոդյան անվանում։ Հունվարի 20-ին Մոսկվան, ի պատիվ Վոլխովյան ռազմաճակատի զորքերի, հաղթական հրավառություն տվեց։

Նովգորոդի ազատագրման մարտերում հատկապես աչքի ընկան բանակի շարժական ուժերը՝ 7-րդ գվարդիական առանձին, 29-րդ և 122-րդ տանկային բրիգադները։ 29-րդ տանկային բրիգադի 2-րդ տանկային գումարտակը Տյուտին բնակավայրի շրջանում դեսանտայիններ աջակցությամբ, մայոր Վլասյակի հրամանատարությամբ սրընթաց գրոհով ճեղքեց հակառակորդի պաշտպանությունը և մխրճվեց նրա հրետանային մարտկոցների դասավորության մեջ։ Տանկիստները ոչնչացրին երկու մարտկոց։ Շշմեցուցիչ հարվածից ուշքի եկած հակառակորդը վերադասավորելով ուժերը, սկսեց շրջապատել իր թիկունքը ներխուժած տանկիստներին։ Հերոսաբար կռվեցին տանկային վաշտի հրամանատարներ Ուլիտենկոն, Բուխտոյարովը, տանկային դասակի հրամանատարներ Կուրաշենկոն, Կրավչենկոն, Խանինը և ուրիշներ։ Սովետական ռազմիկները մինչև վերջ իրենց ձեռքում պահեցին գրաված դիրքերը, մինչև օգնության հասան 1-ին տանկային գումարտակի տանկիստները։ Հերոսի մահով զոհվեցին շատ տանկիստներ, այդ թվում հրամանատարներ Ուլիտենկոն և Կուրաշենկոն[34]։

Կոտրելով հակառակորդի համառ դիմադրությունը, հաղթականորեն Նովգորոդ մտավ Ղազախստանյան 310-րդ հրաձգային դիվիզիան՝ փորձված հրամանատար գեներալ-մայոր Ն. Վ. Ռոգովի գլխավորությամբ։ Շնորհալի գեներալը մեկ տարի գտնվելով դիվիզիայի հրամանատարի պաշտոնում, կարողացել էր կարճ ժամկետում այն դարձնել կուռ միավորում, ընդունակ կատարելու մարտական բարդ առաջադրանքներ։ Կուսակցական-քաղաքական աշխատանքի շնորհիվ կուսակցական-կոմերիտական կազմակերպությունները համալրվել էին մարտերում աչքի ընկած լավագույն ռազմիկներով։ Հարձակման նախօրյակին դիվիզիայի կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունների շարքերում արդեն հաշվվում էր 2740 կոմունիստ և 579 կոմերիտական, որը բարձրացրել էր դիվիզիայի մարտունակությունը և հարձակողական թափը։ Մարտական գործողությունների բոլոր հատված-

---

[34] Նույն տեղում, ֆ. 416, ց. 10442, գ. 179, թ. 12։

ներում առչևում կոմունիստներն ու կոմերիտականներն էին, որոնք իրենց համարձակ ու նախաձեռնող օրինակով ոգևորեցին և նոր սխրանքների մղեցին բաղմաթիվ ռազմիկների։ Նրանցից էին կոմունիստ, 1082-րդ հրաձգային գնդի վաշտի հրամանատար ավագ լեյտենանտ Ա. Պ. Չիբիսովը, կոմերիտականներ՝ սերժանտ Ա. Գորոդիսկին, Ա. Կովալենկոն և ուրիշներ[35]։ 310-րդ հրաձգային դիվիզիային մեծ աջակցություն ցույց տվեց 20-րդ թեթև հրետանային բրիգադը։ Այդ մարտական միավորումում, Նովգորոդի համար մղված մարտերում, բաղում սխրանքներ կատարեց զապաս ժողովրդի անվեհեր զավակ Ժունուսբայ Կաիպովը։ Հերոսը զոհվեց Նովգորոդից ոչ հեռու, Պերեդոլսկ կայարանի շրջանում։ Նրան ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[36]։ Այդ բարձր պատվին արժանացավ նաև կոմի ժողովրդի զավակ Ս. Մ. Չերեպանովը։

Վերախմբավորելով ուժերը, հունվարի 21-ին 2-րդ հարվածային և 42-րդ բանակները վերսկսեցին հարձակումը դեպի Գատչինա, իսկ 59-րդ բանակը՝ Լուգա։ Այդ ուղղություններով սովետական զորքերի հաջող հարձակումը ռեալ վտանգ ստեղծեց Մգայի, Տոսնոյի և Չուդովո ամրամանագիծը պաշտպանող թշնամու զորքերի համար։ Վախենալով շրջապատումից, հունվարի 21-ին հակառակորդն իր զորքերը դուրս հանեց այդ շրջաններից։ Նույն օրը 67-րդ բանակը ազատագրեց Մգա քաղաքը։

Հարձակողական գործողությունների ընթացքում 59-րդ բանակի հետևակային դիվիզիաներին մեծ աջակցություն ցույց տվեցին շարժական ուժերը։ Հունվարի երրորդ տասնօրյակում համառ մարտեր սկսվեցին Դոլգովո բնակավայրի, Տատինո կայարանի և Կշենտիցի գյուղի շրջանում։ Դոլգովո-Տատինո ուղղությամբ հունվարի 21-ին 112-րդ հրաձգային կորպուսի 377-րդ հրաձգային դիվիզիան և 122-րդ տանկային բրիգադը հաղթահարելով թշնամու կողմից ականապատված գոտին, մարտերով մտան Տատինո կայարանը և կտրեցին Լենինգրադ—Նովգորոդ երկաթգիծը։ Առաջինը Տատինո մտավ 1-ին տանկային գումարտակը՝ Ն. Ֆ. Էֆիմենկոյի հրամանատարությամբ։ Առջևից ընթացող ավագ լեյտենանտ Սպիժևոյի տանկային դասակը հրետանային կրակով ու թրթուրներով քարուքանդ արեց հակառակորդի կրակակետերը և փակեց նահանջի ճանապարհը։ Այդ օրը մեքենայի 1-ին տանկային գումարտակը

---

[35] Նույն տեղում, ֆ. 310-րդ հրաձգ. դիվիզիայի, ց. 248833, գ. 1, թ. 1։

[36] А. В. Буров, Твои герои Ленинград, с. 578.

ոչնչացրեց 7 թնդանոթ, 1 ականանետ, 250—300 հիտլերական, գրավեց 2 ավտոմեքենա և 4 ձեռքի գնդացիր։ Աչքի ընկան տանկիստներ Սեմիվանովը, Պլիտնևը, Զիժկովը և ուրիշներ։ Ռազմի դաշտում հերոսի մահով ընկան՝ 1-ին տանկային գումարտակի հրամանատար Ն. Ֆ. Եֆիմենկոն, քաղդծով տեղակալ Վ. Կ. Շարովսկին և տանկի հրամանատար Ա. Գ. Գումերովը[37]։ Տանկիստները պատվով կատարեցին մարտական խնդիրը։ Հունվարի 16-ին «Գերազանց կատարել մարտական առաջադրանքը» կոչով միտինգի հավաքված տանկային բրիգադի ողջ անձնակազմը խոստացավ ջանք ու եռանդ չխնայել թշնամուն դուրս շպրտելու սրբազան հողից։ Միտինգում ելույթ ունեցան բրիգադի հրամանատար գընդապետ Կլիմենկոն, նրա տեղակալ՝ գնդապետ Ալեքսեևը, 2-րդ տանկային գումարտակի հրամանատար Կուզնեցովը, շարքային Նիկիշինը և ուրիշներ։ Հայրենիքին, պետությանը և կուսակցությանը նվիրվածությունը արտահայտվում էր կոմունիստական կուսակցության շարքերն ընդունվելու շատերի ցանկությամբ։ Միայն երկու օրում, հունվարի 16—17-ը, բրիգադի մոտոհրաձգային գումարտակում 65 լավագույն ռազմիկներ դիմեցին ընդունվելու կուսակցության շարքերը։ Դասակի հրամանատար Ս. Ֆ. Նովիկովն իր դիմումում գրում է. «Մեր սոցիալիստական հայրենիքի ազատագրության վճռական մարտերում կկռվեմ թշնամու դեմ մինչև արյան վերջին կաթիլը, իսկ եթե պահանջվի՝ կյանքս կտամ կուսակցության ու Լենինի գործի համար»[38]։ Այսպիսի բարձր գիտակցությամբ, պատասխանատվության մեծ զգացումով մարտի էին նետվում սովետական բազմազգ ռազմիկները։ Միտինգում տանկիստների արտահայտած հայրենասիրական ջերմ խոսքերը գործի վերածվեցին ռազմի դաշտում և Տատինո կայարանի շրջանում պարտության մատնեցին հակառակորդին, նրան պատճառելով կենդանի ուժի ու տեխնիկայի ծանր կորուստներ։ Ջերմ հայրենասիրությունը, ինտերնացիոնալ համերաշխությունը, ընկերակցությունը, մարտական եղբայրությունը, բարոյական բարձր ոգին, մարտական կոփվածությունը, հայրենիքի բախտի նկատմամբ պարտքի ու պատասխանատվության զգացումը, իղձերի ու նպատակների ընդհանրությունը սովետական բազմազգ ռազմիկներին դարձնում էին անընկճելի, նրանց հաղորդում հարձակողական թափ՝ հաղթահարելու ամեն տեսակի դժվարություններ։

---

37 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 416, ց. 10442, գ. 180, թ. 11։

38 Նույն տեղում, թ. 7։

Ռազմի դաշտում մարտական համերաշխության ու ընկերակցության վառ օրինակ է 7-րդ առանձին գվարդիական տանկային բրիգադի մայոր Վ. Վ. Պլատիցինի 1-ին տանկային գումարտակի անմահ սխրանքը Կշենտիցիի շրջանում։ Նովգորոդն ազատագրելուց հետո գումարտակը հրաման ստացավ թույլ չտալ նահանջող հակառակորդին ամրանալ նոր դիրքերում և սրընթաց գրոհով գրավել Կշենտիցի բնակավայրն, ուր թշնամին կենտրոնացրել էր մեծ թվով կենդանի ուժ և մարտական տեխնիկա։ Ծանր կորուստներից խուսափելու համար հրամանատարը որոշեց հետախուզական մարտով պարզել թշնամու հակատանկային ինքնաթիռների տեղն ու դասավորությունը և հետո սկսել գրոհը։ Մարտական կարևոր առաջադրանքը հանձնարարվեց բելոռուս, կրտսեր լեյտենանտ Ն. Ն. Տոմաշևիչին, որը բրիգադում համարվում էր ամենահմուտ նշանառուն։ Հունվարի 22-ի օրվա կեսին նրա տանկը հանկարծակի ներխուժեց Կշենտիցի և թնդանոթային, գնդացրային կրակով խառնաշփոթություն առաջացրեց թշնամու շարքերում։ Մինչ հակառակորդը ուշքի կգար, Տոմաշևիչի տանկը դուրս եկավ բնակավայրի մյուս ծայրը և թնդանոթային մենամարտ սկսեց թշնամու արդեն հայտնաբերված կրակակետերի հետ։ Այդ ժամանակ, գումարտակի հրամանատար մայոր Վ. Վ. Պլատիցինի մտահղացված պլանով հյուսիս-արևելքից Կշենտիցիի վրա գրոհեց ուկրաինական ժողովրդի զավակ, կապիտան Վ. Գ. Լիտվինովի տանկային վաշտը, իսկ հարավ-արևմուտքից՝ ռուս ժողովրդի զավակ, կապիտան Գ. Գ. Տելեգինի տանկային վաշտը։ Ծանր ու համառ մարտեր սկսվեցին աքցանի մեջ առնված հակառակորդի դեմ։ Տանկիստները ոչնչացրին թշնամու 8-րդ հետևակային դիվիզիայի 28-րդ գնդի շտաբը, կազմալուծեցին նրա ստորաբաժանումների կառավարումը։ Տելեգինի տանկային վաշտը ոչնչացրեց 6 թնդանոթ, ռազմամթերքով բեռնված 15 ավտոմեքենա և այլ ռազմական տեխնիկա։ Ջախջախված ու ծանր կորուստներ կրած հակառակորդի ուժերի մի մասը դուրս պրծավ օղակից և շարժվեց դեպի Վիդոգոշչի բնակավայրը։ Բայց Տելեգինի տանկիստները արագություն հաղորդելով իրենց մեքենաներին, շրջանցիկ մանևրով դուրս եկան Վիդոգոշչի և ոչնչացրեցին թշնամու ուժերի մնացորդներին։ Տանկիստները նորից ուղղություն վերցրին Կշենտիցի՝ օգնելու Լիտվինովի տանկիստներին։ Մարտական ընկերներին վիճակված չէր հանդիպել, և այստեղ, հերոսի մահով զոհվեց տանկիստների խիզախ հրամանա-

տար, կապիտան Գրիգորի Գրիգորևիչ Տելեգինը[39]։ Ղեկավարելով տանկիստների գրոհը, հերոսի մահով ընկավ նաև կապիտան Վլադիմիր Գրիգորևիչ Լիտվինովը, ծանր վիրավորվեց կրտսեր լեյտենանտ Նիկոլայ Նիկոլաևիչ Տոմաշևիչը, զոհվեցին տանկիստներ Պիրոգովը, Սերգիենկոն և ուրիշներ։ Մարտական առաջադրանքը պատվով կատարվեց, Թշնամին գլխովին ջախջախվեց։ Յուցաբերած արիության համար Վ. Վ. Պլատիցինին, Ն. Ն. Տոմաշևիչին, Վ. Գ. Լիտվինովին և Գ. Գ. Տելեգինին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

Նովգորոդի համար մղված մարտերում աչքի ընկավ կարմրադրոշ 191-րդ հրաձգային դիվիզիայի 1081-րդ հրետանային գնդի 5-րդ մարտկոցի հրամանատար ավագ լեյտենանտ Հովհաննես Ստեփանի Օհանյանը։ Սիսիանի շրջանի Դարբաս գյուղում ծնված ու մեծացած լեռնեցին հրետանային կենտրոնացված այնպիսի ուժգին հարված հասցրեց թշնամուն, որ վերջինս երկար ժամանակ չկարողացավ դիմադրել հարձակման անցած հետևակին։ Վեցօրյա հարձակողական մարտերում նրա մարտկոցը ոչնչացրեց թշնամու մեկ ականանետային մարտկոց, 21 գնդացիր, 14 կրակակետ, ճնշեց մեկ հրետանային մարտկոցի կրակը և ոչնչացրեց մի քանի տասնյակ հիտլերականներ։ Հրետանային կրակով հետևակի հարձակմանը աջակցելու, ինչպես նաև թշնամուն ծանր կորուստներ պատճառելու համար, հրամանատարությունը ավագ լեյտենանտ Օհանյանին պարգևատրեց Կարմիր դրոշի շքանշանով[40]։

Նովգորոդի ուղղությամբ հարձակվող սովետական զորամասերի անձնակազմի բարոյաքաղաքական ոգին բարձրացնելու գործում մեծ ջանք ու եռանդ ներդրեց 59-րդ բանակի քաղբաժնի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժանմունքի պետ, փոխգնդապետ Մանուկ Դայի Ջարյանը, որը հարձակողական գործողությունների ամբողջ ընթացքում մի քանի անգամ կատարեց Վոլխովյան ռազմաճակատի և 59-րդ բանակի ռազմական խորհուրդների պատասխանատու ու կարևոր մարտական առաջադրանքները։ Քաղաքական աշխատանքում դրսևորած ակտիվ գործունեության համար բաժանմունքի 8 քաղաշխատողներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ փոխգնդապետ Ջարյանը արժանացավ Կարմիր աստղի շքանշանի[41]։

Սովետական զորքերի հարձակման երկրորդ փուլում նորից աչքի ընկան 42-րդ բանակի 220-րդ առանձին տանկային բրիգադի ստորա-

---

39 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 793756, գ. 47, թ. 119—120։

40 Նույն տեղում, ֆ. 33, 690155, գ. 596, թ. 66։

41 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 325, թ. 52։

բաժանումները և նրանց աջակցող Լենինգրադյան 3-րդ հրետանային կորպուսի 79-րդ թեթև հրետանային բրիգադի 871-րդ հրետանային գնդի հրետանավորները։ Հունվարի 25-ին ծանր մարտեր սկսվեցին Վոյսկովիցի կայարանի շրջանում։ Ժամը 14-ին տանկային բրիգադը մարտերով ներխուժեց կայարան և գրավեց այն։ Տանկիստները մտան նաև Իլկինո բնակավայրը։ Կարևոր հենակետերի կորուստը կտրեց կապը հակառակորդի՝ Դատչինայի և Վոլոսովոյի կայազորների միջև։ Հակառակորդը մեծ ջանքեր գործադրեց վերականգնելու նախկին վիճակը։ Նա հակագրոհի նետեց մեկ վաշտ ծանր տանկեր ու ինքնագնաց հրանոթներ՝ երկու գումարտակ հետևակի աջակցությամբ։ Բացի այդ, թշնամու երեք ականանետային մարտկոցից, 15 հակատանկային հրանոթից և 3 գնդացրային դզոտից արձակվող կրակը ծանր վիճակի մեջ դրեց տանկային բրիգադի ստորաբաժանումներին։ Հենց այստեղ տանկիստներին օգնության հասան 871-րդ հրետանային գնդի հրետանավորները, մարտերում մեծ փորձ ձեռք բերած հրամանատար, մայոր Դ. Մ. Յացկովի գլխավորությամբ։ Սկսվեց հրետանային ուժեղ մենամարտ։ Սովետական ռազմիկները չընկրկեցին։ Նրանք դրսևորեցին թշնամուն հարվածելու մարտական բարձր հմտություն, քաջություն ու արիություն։ Մարտկոցի կուսակցական կազմակերպիչ, հրետանու հրամանատար ավագ սերժանտ Ալեքսանդր Մանինինը ոչնչացրեց մեկ «Վագր» տանկ, ինքն էլ հերոսաբար զոհվեց։ Մորդվին ժողովրդի պանծալի զավակին ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Հրետանու հրամանատարներ Սաղանովը և Դյաչենկոն ոչնչացրին 1 «Վագր» տանկ, մի քանի թնդանոթ ու գնդացիր, 40 հիտլերական։ Սանիտար Գոտյանովը ռազմի դաշտից դուրս բերեց 50 մարտիկի[42]։ Հատկապես աչքի ընկավ հրետանային դասակի հրամանատար, արթիկցի ավագ սերժանտ Մկրտիչ Սմբատի Մկրտչյանը[43], որը դիպուկ կրակով ոչնչացրեց 7 հակատանկային հրանոթ և 3 գնդացրային կրակակետ։ Հակառակորդը մեծ ջանք գործադրեց ընկճելու խիզախ հրետանավորների դիմադրությունը, բայց արդյունքի չհասավ։ Մկրտչյանի ընկերներից շատերը զոհվեցին, շարքից դուրս եկան նաև հարևան մարտկոցի հրետանային հաշվարկները, բայց նա վիրավոր վիճակում շարունակեց կրակ տեղալ թշնամու հարձակվող տանկերի ու հետևակի վրա։ Նա խփեց առջևից ընթացող «Վագրին» և ցրեց նրա ետևից շարժվող ավտոմատավորների մարտա-

---

42 Նույն տեղում, ֆ. 79-րդ թեթև հրետանային բրիգադի, ց. 97437, գ. 1, թ. 59։

43 Մկրտիչ Սմբատի Մկրտչյանը բանակ է զորակոչվել 1939 թ. դեկտեմբերի 20-ին։ Նախքան պատերազմը բնակվել է Արթիկ քաղաքում։

կարգերը։ Մինչև օրվա վերջը թշնամու բոլոր գրոհները ետ մղվեցին[44]։ Հրետանավորներից աչքի ընկան Դավիթ Հակոբի Մուրադյանը, Կոլենիկ Զիգնաձեն, Մահմեդ Հաջիևը, Արմենակ Գրիգորի Աբրահամյանը, Իլյա Կոնյուխովը, Արամ Ալեքսանի Գրիգորյանը, Միխայիլ Զայցևը, Բեկ Նազարի Բեկնազարովը և ուրիշներ։ Մկրտիչ Մկրտչյանին բախտ չվիճակվեց տեսնելու բաղձալի հաղթանակը։ Նա հերոսի մահով ընկավ սիրելի քաղաքի հեռավոր մատույցներում։ Այդ մասին նրա պարգևատրման թերթիկում գրված է հետևյալը. «1944 թ. մարտի 19-ին Վայվարա-Կիրիկի մոտ սովետական տանկերի ու հետևակի գրոհին աջակցող Մ. Մըկըրտչյանի դասակը ոչնչացրեց 4 գնդացրային դզոտ, 2 հակատանկային հրանոթ և եկեղեցում տեղավորված թշնամու դիտակետը։ Մարտի թեժ պահին թշնամու ինքնագնաց հրանոթը հարմար դիրք գրավելով եկեղեցու մոտ, կրակ բացեց հարձակվող 187-րդ գնդի մարտիկների վրա։ Մկրտչյանն առանց հապաղելու, հրետանու չորս համազարկով ոչնչացրեց ինքնագնաց հրանոթը։ Այդ պահին եկեղեցու մյուս կողմից դուրս սողաց թշնամու «Վագր» տանկը։ Եվ մինչև Մկրտչյանը և նրա ընկերները հրանոթի փողը կթեքեին տանկի կողմը, «Վագրից» արձակված առաջին կրակոցը շարքից հանեց հրանոթի հաշվարկը, իսկ երկրորդով ոչնչացվեց հրանոթը»։ Հերոսաբար զոհվեցին զինվորական երդումը սրբորեն կատարած Մկրտիչ Մկրտչյանը և նրա ընկերները[45]։

Հունվարի 21-ին Վիտինո բնակավայրի մոտ հակառակորդը ամեն գնով ցանկանում էր կանգնեցնել 98-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերի հարձակումը, որպեսզի ժամանակ շահի և հնարավորություն տա հիմնական ուժերին ետ քաշվելու նախօրոք պատրաստված դիրքերը։ 4-րդ հրաձգային գնդի ավտոմատավորների ջոկի դեմ թշնամին նետեց մեկ գրահամեքենա և «Ֆերդինանդ» ինքնագնաց հրանոթ։ Եվ հենց այստեղ անմահ սխրանք կատարեց ջոկի հրամանատար սերժանտ Տ. Վ. Ֆյոդորովը։ Նռնակների կապոցը ձեռքին, նա սողալով ընդհուպ մոտեցավ ինքնագնաց հրանոթին և այն նետեց նրա թրթուրների տակ։ Նետած նռնակի բեկորից զոհվեց Ֆյոդորովը։ Խիզախին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[46]։

«Հյուսիս» բանակների խմբի հրամանատարությունը հուսահատ փորձեր էր անում կանգնեցնելու սովետական զորքերի հուժկու հարձա-

---

44 Նույն տեղում, ֆ. 217, ց. 1242, գ. 4732, թ. 211—212։

45 Նույն տեղում։

46 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 686043, գ. 103, թ. 135։

կումը։ Սովետական զորքերի սկսած հարձակումը այլևս հնարավոր չէր կասեցնել։ Հունվարի 24-ին 42-րդ բանակի գեներալ-մայոր Ի. Վ. Խազովի 110-րդ հրաձգային կորպուսը ազատագրեց Պուշկին և Պավլովսկ քաղաքները։ Ֆաշիստները բարբարոսական մեթոդներով ավերակների էին վերածել ռուսական այդ հնագույն, պատմական հուշարձաններով հարուստ քաղաք-թանգարանը։ Եվ դա ավելի բորբոքեց սովետական ռազմիկների մեջ կուտակված ատելության զգացմունքը, վրեժխնդիր լինել այդ բոլորի համար։

Պուշկին և Պավլովսկ քաղաքների ազատագրման համար մղված մարտերում հակառակորդին ջախջախիչ հարվածներ հասցրեց ու ծանր կորուստներ պատճառեց 1962-րդ ինքնագնաց հրետանային գունդը՝ վրաց ժողովրդի պանծալի զավակ, փոխգնդապետ Նիկոլայ Գրձելշվիլիի գլխավորությամբ։ Հարձակման առաջին շրջանում՝ հունվարի 14—27-ը, գունդն իր հուժկու կրակով հսկայական աջակցություն ցույց տվեց հարձակվող հետևակային զորամասերին։ Այդ ժամանակաընթացքում հրետանավորները ոչնչացրին 7 ականանետային մարտկոց, 8 հակատանկային հրանոթ, 25 գնդացիր, 20 դզոտ և 200 հատլերական[47]։ Այդ մարտերում հատկապես աչքի ընկավ 72-րդ հրաձգային դիվիզիայի 187-րդ գնդի հակատանկային վաշտը դիլիջանցի ավագ լեյտենանտ Մուշեղ Դալուստի Հակոբյանի հրամանատարությամբ։ Կատարելով հրամանատարության հատուկ առաջադրանքը, նա իր վաշտն անձամբ երեք անգամ գրոհի տարավ «Կիրգոֆ» կոչվող դղյակի վրա և իր սրընթաց ու համարձակ գործողություններով ապահովեց ամբողջ գնդի հաջողությունը։ Նա ծանր վիրավորվեց Մոնդելևո բնակավայրը գրոհելու ժամանակ։ Հրամանատարության առաջադրանքը կատարելու համար Մուշեղ Հակոբյանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[48]։

Հունվարի 25-ին 42-րդ բանակի 123-րդ և 117-րդ հրաձգային կորպուսները գեներալ-մայորներ Գ. Ի. Անիսիմովի և Վ. Ա. Տրուբաչևի հրամանատարությամբ համառ մարտեր մղելով հակառակորդի դեմ, ընդհուպ մոտեցան Գատչինայի ամրացված շրջանին։ 120-րդ հրաձգային դիվիզիան (հրամանատար՝ գնդապետ Ա. Վ. Բատուլկա) ներխուժեց Գատչինա և փողոցային մարտեր սկսեց։ Ամբողջ գիշերը հակառակորդը համառորեն դիմադրում էր, չհաշտվելով պարտության հետ։ Քաղաքում ամրացված հակառակորդի 11-րդ հետևակային դիվիզիան գլխովին

---

[47] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 596, թ. 43։

[48] Նույն տեղում, ֆ. 33, ց. 690155, գ. 467, թ. 15։

ջախջախվեց։ Հունվարի 26-ի առավոտյան 10-ին ավագ Պ. Խ. Սիլինը քաղաքի ամենաբարձր շենքի տանիքին ամրացրեց կարմիր դրոշը։ Քաղաքի ազատագրման մարտերին ակտիվորեն մասնակցեցին գնդապետ Ֆ. Ա. Բուրմիստրովի 224-րդ հրաձգային դիվիզիան, փոխգնդապետ Գ. Ի. Իվանովի 31-րդ գվարդիական տանկային գունդը, գնդապետ Ա. Ֆ. Գորբոցի 96-րդ հաուբիցային ծանր հրետանային բրիգադը, փոխգնդապետ Ն. Դ. Սիլինի և մայոր Ս. Պ. Բորովիկովի 320-րդ և 322-րդ գվարդիական ականանետային գնդերը։ Գատչինան ազատագրելուց հետո 42-րդ բանակի զորամիավորումները, շարունակելով հետապնդել նահանջող հակառակորդին, ուղղություն վերցրին Լուգա։

Գատչինայի ազատագրման մարտերում աչքի ընկավ 320-րդ ականանետային գնդի 349-րդ ականանետային դիվիզիոնի հրամանատար, կապիտան Գրիգոր Թադևոսի Ռեյսյանը։ Մարտերի ողջ ընթացքում Ռեյսյանը գնդի հրամանատարների հետ միասին գտնվում էր դիտակետում, ղեկավարում և ուղղություն տալիս իր ականանետայիններին։ Նրա հրամանատարությամբ ռազմիկները հետ մղեցին թշնամու 21 հակագրոհ, ոչնչացրին մեկ ինքնաթիռ, 3 տանկ, կասեցվեց 4 հրետանային և 7 ականանետային մարտկոցների կրակը։ Հրամանատարության կողմից կապիտան Ռեյսյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[49]։

2-րդ հարվածային բանակը թշնամու Պետերգոֆ-Ստրելնի խմբավորումը ջախջախելուց հետո, հետապնդելով հակառակորդին Կինգիսեպ—Նարվա ուղղությամբ, գրավեց Վոլոսովո կայարանը։ Այդ մարտերում հատկապես աչքի ընկավ գնդապետ Վ. Խրուստիցկու տանկային բրիգադը, որը ճեղքելով հակառակորդի պաշտպանական դիծը, անցավ նրա խոր թիկունքը և գրավեց Վոլոսովոն։ Երբ մարտը ավարտին էր մոտենում, թշնամու գնդակից խոցված ընկավ բրիգադի խիզախ հրամանատարը։ Նրան ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

Հունվարի 24-ին Ֆյուտոլովո բնակավայրի շրջանում թշնամին գրնդացրային ու ավտոմատային ուժեղ կրակով թույլ չէր տալիս գնդապետ Վ. Ի. Շկելյայի 11-րդ հրաձգային դիվիզիայի 219-րդ գնդի մարտիկներին առաջ շարժվել։ Այդ լարված պահին 22-ամյա լեյտենանտ Արթուր Ավետիսի Հարությունովը վեր ցատկեց և բարձր գոչելով «Հանուն Լենինի քաղաքի, առաջ դրոհի» ու նետվեց դեպի թշնամին։ Մարտիկները ոգևորված համարձակ հրամանատարի անձնազոհ ու վճռական

---

[49] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1942, գ. 4730, թ. 22։

քայլից, գրոհեցին հակառակորդի դիրքերի վրա և նրան դուրս շպրտեցին Ֆյուտոլովո բնակավայրից[50]։ Հունվարի 27-ին դիվիզիայի զորամասերը գնդապետ Վ. Խրուստիցկու տանկիստների հետ սերտ համագործակցությամբ ազատագրեցին Վոլոսովո կայարանը։ Լեյտենանտ Ս. Ա. Հարությունովը պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով։ Դիվիզիայի 6531 ռազմիկներից 1450-ը տարբեր աղգությունների ներկայացուցիչներ էին[51]։ Նրանցից շատերը նույնպես պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։

Մինչև հունվարի վերջը Լենինգրադյան և Վոլխովյան ռազմաճակատների զորքերն ազատագրեցին Լենինգրադի մարզի մեծ մասը։ Լենինգրադյան ռազմաճակատի հրամանատարությունը դիմեց Գերագույն գլխավոր հրամանատարությանը՝ խնդրելով թույլատրել հրավառություն Լենինգրադում՝ շրջափակումը վերացնելու առթիվ։ Հունվարի 27-ը լենինգրադցիների համար դարձավ պատմական օր։ 324 հրանոթներից 24 անգամ արձակած համազարկերն աղդարարեցին Լենինգրադի շրջափակման վերացման մասին։ Այդ օրը Լենինգրադը ցնծում էր։ Հրետանային հաղթական համազարկերը բոլոր լենինգրադցիներին դուրս էին հանել իրենց բնակարաններից։ Շատերը ուրախությունից արտասվում էին։ Ռադիոյով հաղորդվեց Լենինգրադյան ռազմաճակատի հրամանատարության դիմումը՝ ուղղված զորքերին և Լենինգրադի բնակչությանը։ «Լենինգրադի քաղաքացիներ։ Արիասիրտ ու դիմացկուն լենինգրադցիներ,— ասվում էր դիմումում,—Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի հետ միասին դուք պաշտպանեցիք մեր հարազատ քաղաքը։ Դուք Ձեր հերոսական աշխատանքով ու պողպատյա դիմացկունությամբ, հաղթահարելով շրջափակման բոլոր դժվարություններն ու տանջանքները, դուք կոփեցիք հաղթանակի զենքը թշնամու դեմ, այդ հաղթանակի գործի համար տալով ձեր բոլոր ուժերը։

Փառք Լենինգրադյան ռազմաճակատի զորքերին։

Փառք Լենինի քաղաքի աշխատավորությանը։

Հավերժ փառք Լենինգրադ քաղաքի, մեր հայրենիքի ազատության ու անկախության համար պայքարում ընկած հերոսներին։

Մահ գերմանական զավթիչներին»[52]։

---

50 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 596, թ. 43։

51 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1069, ց. 1, գ. 1, թ. 28։

52 «Ленинградская правда», 27 января 1944 г.

Լենինգրադյան ու Վոլխովյան ռազմաճակատի զորքերը շարունակեցին հետապնդել հակառակորդին Կինգիսեպ, Նարվա, Լուգա և Պսկով ուղղություններով։ Հունվարի 29-ին Վոլխովյան ռազմաճակատի 54-րդ բանակն ազատագրեց Զուդովո քաղաքը, իսկ հաջորդ օրը գրավեց Նովգորոդ—Լենինգրադ և Զուդովո—Կինգիսեպ երկաթգիծը։ Թշնամին Հոկտեմբերյան երկաթուղուց այն կողմ շպրտվեց 10—20 կմ։ Լենինգրադյան ռազմաճակատի 2-րդ հարվածային բանակի զորամասերը հունվարի 31-ին անցան Լուգա գետը, իսկ հաջորդ օրը գրոհով գրավեցին Կինգիսեպը։ Այնուհետև Նարվա քաղաքի հյուսիսից և հարավից գետանցում կատարելով, հենակետ գրավեցին արևմտյան ափում։ Սլանց քաղաքի արևմտյան մասում Նարվա գետը անցնելու ժամանակ 122-րդ կորպուսի 11-րդ դիվիզիայի 219-րդ գնդի մի խումբ մարտիկներ արհամարհելով մահը, թշնամու գնդացրային-ականանետային ուժեղ կրակի տակ սկսեցին գետանցումը։ Նրանցից քչերին հաջողվեց հասնել գետի աջ ափը։ Մեծ դժվարությամբ մյուս ափը հասած 18 խիզախներ մարտի բռնվեցին թշնամու գերակշռող ուժերի հետ։ Շատ հիտլերականներ ընկան կրտսեր սերժանտ Կ. Պ. Օրգինի գնդացրային հաշվարկի դիպուկ կրակից։ Շարքից դուրս եկավ գնդացիրը, բայց մարտիկները շարունակեցին ավտոմատներով ետ մղել թշնամու գրոհը և ամրացնել գրաված հենակետը։ Հերոսների շարքերը նոսրանում էին։ Խմբի ղեկավարը հրամայեց Օրգինին անցնել գետը և գնդի հրամանատարին զեկուցել իրադրության մասին։ Համարձակ ռազմիկը նետվեց գետը, հաղթահարելով սառցե պատնեշը, լողալով հասավ մյուս ափը և հրամանատարությանը զեկուցեց ստեղծված վիճակի մասին։ Նույն դիշերը օգնություն ուղարկվեց գետի մյուս ափում կռվող ռազմիկներին։ Կ. Պ. Օրգինին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[53]։

42-րդ բանակի զորամասերը փետրվարի 4-ին մտան պարտիզանների կողմից արդեն ազատագրված Գդով քաղաքը, իսկ ձախ թևում գործող 86-րդ հրաձգային դիվիզիան փետրվարի 4—12-ը ազատագրեց Լյադի ու Զարուդինե շրջանային կենտրոնները։

42-րդ բանակի մարտական գործողությունների շրջանում անձնուրաց սխրանք կատարեց 393-րդ հրետանային գնդի հրամանատարի քաղդծով տեղակալ մայոր Ռուբեն Դուրսունի Հարությունովը։ Թշնամին գործադրում էր ամեն մի միջոց մեր զորքերի հարձակումը կասեցնելու հա-

---

[53] *А. В. Буров,* Твои герои, Ленинград., с. 404—406.

մար։ Նա լավ զինված ջոկատներ էր ուղարկում ապատագրված շրջանները՝ սովետական զորքերի թիկունքը կազմալուծելու։ Հրետանիով ու գնդացիրներով զինված այդպիսի ջոկատներից մեկը, անցնելով 42-րդ բանակի թիկունքը, փետրվարի 1-ի երեկոյան Օսլինո բնակավայրի մոտ հանկարծակի գրոհեց կեսամսյա ծանր մարտերից հոգնած ու ուժասպառ եղած 46-րդ հրաձգային դիվիզիայի 393-րդ հրետանային գնդի վրա։ Ռուբեն Հարությունովը, որ այդ ժամանակ գտնվում էր գնդի շտաբում, արհամարհելով մահը, թշնամու հրետանային ու գնդացրային ուժեղ կրակի տակ, մերթ վազելով, մերթ սողալով, հասավ հրետանային դիվիզիոնների դասավորության շրջանը, իր վրա վերցրեց հրամանատարությունը, հրետանային ուժեղ կրակ բացեց հարձակվող թշնամու վրա և հրետանավորներին գրոհի տարավ։ 42-րդ բանակի թիկունքը ներխուժած թշնամին ջախջախվեց ու ետ շպրտվեց, մարտի դաշտում թողնելով 5 հրանոթ, ձեռքի 6 գնդացիր, 2 ականանետ, 30 հրացան ու ավտոմատ, 2 մոտոցիկլետ և 35 սպանված զինվոր ու սպա[54]։

42-րդ բանակի միավորումների և զորամասերի կողմից գետային պատնեշների հաղթահարումը արագացնելու գործում այդ օրերին հրսկայական աշխատանք կատարեց բանակի 127-րդ առանձին կամրջաշինարարական գումարտակը՝ մայոր Արտավազդ Սեդրակի Սարգսյանի հրամանատարությամբ։ Գումարտակը հատկապես աչքի ընկավ Պլյուսայի գետանցման ժամանակ։ Զինվորական շինարարները Կրիվայա Լուկի բնակավայրի մոտ նախատեսված ժամկետից շուտ կառուցեցին կամուրջը և դրանով հնարավորություն տվեցին բանակի զորամասերին արագացնելու նահանջող հակառակորդի հետապնդումը։ Մարտական առաջադրանքը անթերի կատարելու համար մայոր Սարգսյանը պարգևատրվեց Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով[55]։

17-օրյա հարձակողական գործողությունների ընթացքում սովետական զորքերը Լենինգրադից թշնամուն հեռու շպրտեցին 60—100 կմ, իսկ Նովգորոդից՝ 50—60 կմ։ 67-րդ բանակը փետրվարի 12-ին ազատագրեց Լուգա քաղաքը։ Նույն օրը Վոլխովյան ռազմաճակատի 59-րդ բանակը մոտեցավ Լուգա գետին և փետրվարի 15-ին Բլյուխինոյի շրջանում միացավ շրջապատման մեջ գտնվող 8-րդ բանակի 256-րդ հրաձգային դիվիզիային։

---

[54] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 760, թ. 37։
[55] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 660, թ. 23։

Լենինգրադյան ռազմաճակատի 2-րդ հարվածային բանակը մարտեր մղելով թշնամու դեմ, շարունակում էր ընդլայնել Նարվա գետի արևմտյան ափում գրավված հենակետը, իսկ 42-րդ և 67-րդ բանակները, հետապնդելով պարտված թշնամուն, ազատագրեցին հարյուրավոր գյուղեր և մինչև մարտի մեկը ընդհուպ մոտեցան Պսկով քաղաքին։ Նարվայի շրջանում հակառակորդի դեմ մղված մարտերում բաղում սխրանքներ կատարեցին սովետական բազմազգ ժողովուրդների զավակները։ Յուցաբերած արիության համար ետմահու Սովետական Միության հերոսի կոչում շնորհվեց ռուս, ուկրաինացի և բելոռուս ժողովրդի լավագույն զավակներ Մ. Մ. Գորբաչին, Ի. Ս. Գրաֆովին, Ա. Ի. Գրիվցևին, Յու. Վ. Պաստորովին, Ա. Յե. Ռումյանցևին, Մ. Ի. Կոզոմոզովին, Ի. Գ. Ստեփանովին, Ա. Պ. Կուրկոյին, Վ. Ա. Բորիսենկոյին։ Շքանշաններով ու մեդալներով պարգևատրվեցին բազմաթիվ ռազմիկներ։

Նարվայի շրջանում թշնամու դեմ անձնվիրաբար մարտնչեց 2-րդ հրաձգային դիվիզիայի 261-րդ հրաձգային գնդի 1-ին ականանետային վաշտի 82 միլիմետրանոց ականանետային դասակը, որի հրամանատարն էր լեյտենանտ Սերո Նիկոլայի Խանդադյանը։ Նավոլովկի բնակավայրի համար մղված մարտում ականանետայինների դիպուկ կրակով ոչնչացվեց հակառակորդի գնդացրային կրակակետը և դրանով իսկ ճանապարհ բացվեց հետևակի համար։ Այդ մարտում հակառակորդը ականանետայինների կրակից կորցրեց նաև 15 զինվոր ու սպա։ Մարտերում ցուցաբերած սխրանքի համար լեյտենանտ Սերո Խանդադյանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով։ Շուտով հրամանատարությունը նրան նշանակեց ականանետային վաշտի հրամանատար։ Խանդադյանը հետագայում աչքի ընկավ Մերձբալթիկայի և Լեհաստանի ազատագրման մարտերում, մասնակցեց Պրուսիայի միջնաբերդ Քյոնիգսբերգի գրոհին և հաղթանակը դիմավորեց Բալթիկայի ափերին։ Պատմական Սյունյաց լեռնաշխարհից մինչև Գերմանիա հասած հայ քաջորդին իր անցած մարտական ուղին հետագայում շարադրեց Հայրենական մեծ պատերազմին նվիրված իր մի շարք ստեղծագործություններում։

Այժմ տաղանդավոր գրող, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատ Սերո Նիկոլայի Խանդադյանը իրեն նվիրել է մեր ժողովրդի հերոսական անցյալի պատմությունը գեղարվեստորեն շարադրելու գործին։

Նարվայի գետանցման մարտերում թշնամու դեմ քաջաբար մար-

տընչեց և հերոսի մահով զոհվեց Սերո Խանզադյանի հայրենակից, 45-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի մարտիկ, Ապարանի շրջանի Զամբլու գյուղի բնակիչ 22-ամյա կոմերիտական Գրիշա Պողոսի Հովսեփյանը։ Մինչ զոհվելը նա դիպուկ նետած նռնակներով քարուքանդ արեց հակառակորդի մի շարք կրակակետեր և ոչընչացրեց մի քանի հիտլերական։ Խիզախ մարտիկը, որ մինչ այդ պարգևատրվել էր «Արիության համար» և «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալներով, այս անգամ պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[56]։

Լենինգրադյան և Վոլխովյան ռազմաճակատների հետ փոխադարձ սերտ համագործակցությամբ Լենինգրադի հեռավոր մատույցներում հակառակորդի «Հյուսիս» բանակների խմբի 16-րդ բանակի դեմ մարտական ակտիվ գործողություններ սկսեցին Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատի զորքերը, խնդիր ունենալով թույլ չտալ հիտլերյան հրամանատարությանը օժանդակ ուժեր ուղարկել Լենինգրադի շրջանը՝ 18-րդ բանակին։ Ռազմաճակատի այդ հատվածում սովետական ռազմիկների մարտական սխրանքները նույնպես կրում էին մասսայական բնույթ, որովհետև յուրաքանչյուրը քաջ գիտակցում էր, որ իր գործողությամբ նպաստում է Լենինգրադի մատույցներում թշնամու դեմ կենաց ու մահու պայքար մղող սովետական զորամասերին։ Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատում տարբեր ազգությունների պատկանող ռազմիկների թիվը համեմատաբար ավելի շատ էր, քան Լենինգրադյան ռազմաճակատում։ Եթե Լենինգրադյան ռազմաճակատի տասը հրաձգային դիվիզիաների 65732 ռազմիկներից 50866-ը ռուսներ էին, իսկ 14866-ը՝ այլ ազգերի ներկայացուցիչներ, ապա Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատի նույնքան դիվիզիաներում համապատասխանաբար այն 43897 և 17853 էր[57]։ Այդ իսկ պատճառով ռազմաճակատի քաղվարչության «Սուվորովեց» թերթը հրատարակվում էր նաև ղազախերեն, ուզբեկերեն, հայերեն և այլ ազգային լեզուներով։ Դեռևս 1943 թ. նոյեմբերին ռազմաճակատի քաղվարչությունը միայն 11-րդ բանակ ուղարկվող «Սուվորովեց» թերթի այսպիսի քանակ էր սահմանել. հայերեն՝ 250, ղազախերեն՝ 200, ուզբեկերեն՝ 200, վրացերեն՝ 50, ադրբեջաներեն՝ 50 օրինակ[58]։ 10-րդ գը-

---

56 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1148, ց. 2, դ. 185, թ. 88։

57 Հաշվումները կատարվել են ՍՍՀՄ Պաշտպանության մինիստրության արխիվի նյութերի հիման վրա։

58 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 358, ց. 5938, գ. 171, թ. 501։

վարդիական բանակը «Սովորովեց» ստանում էր՝ զաղախերեն—330, ուզբեկերեն—240, թաթարերեն—290[59]։ Թերթը հայերեն հրատարակվում էր «Սովորովական» անունով։

Թերթի հայերեն հրատարակության խմբագիրն էր մայոր Վարդան Վարդանյանը։ Թերթին աշխատակցում էին Վ. Սիմոնյանը, Գ. Խանամիրյանը, Ս. Սահակյանը, Գ. Պողոսյանը և Մ. Գևորգյանը։

«Սովորովական» թերթում լուսաբանվեցին հավատարմության, բարեկամության, ընկերության, հայրենիքին նվիրվածության, զինվորական պարտքի կատարման, սովետական հայրենասիրության, ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության ամրապնդման, համագործակցության և փոխադարձ օգնության հարցեր։ Հոդվածներ տպագրվեցին հայրենակիցների հերոսական սխրագործությունների, մեր անմահ նախնիների փառապանծ գործերի մասին։ Թերթը կոչ էր անում ընդօրինակել հերոսներին, կռվել համարձակ ու ավելի ուժգին հարվածել թշնամուն։

Թերթի 1943 թ. նոյեմբերի 24-ի համարը նվիրված էր սովետական ժողովուրդների բարեկամությանը։ Իրենց ստորաբաժանմանը նվիրված հոդվածում սերժանտ Կասեն Բեյսանովը գրում էր. «Մեզ մոտ իրոք բոլորն էլ մի սիրտ ունեն, որը լի է ջերմ սիրով դեպի հայրենիքը և անարդ ատելությամբ դեպի թշնամին։ Մենք խոսում ենք տարբեր լեզուներով, բայց անում ենք միևնույն գործը՝ ընաջնջում և ոչնչացնում ենք գերմանաֆաշիստական զավթիչներին»[60]։

Սովետական ռազմիկների հերոսական սխրագործությունների մասին էր պատմում ավագ լեյտենանտ Ա. Ալիմովի հոդվածը. «Իմ դասակի ճնշող մեծամասնությունը հայեր են, թեպետ ռուսաց լեզվին նրանք վատ են տիրապետում, բայց իրենց մարտական գործում միշտ առաջավոր տեղ են գրավում։ Նրանցից շատերը մարտական համարձակ սխրագործությունների համար արժանացել են կառավարական բարձր պարգևների»[61]։

Թերթի մեկ այլ համարում վաշտի հրամանատար Պ. Լողվոյի հոդվածում գրված է. «Իմ վաշտը կազմված է ռուս և հայ մարտիկներից։ Նրանք ամուր եղբայրական կապերով են կապված իրար հետ, նրանց սերը ստեղծվել և ձուլվել է պատերազմի դաժան օրերին։ Հենց այդ է

---

59 Նույն տեղում, ֆ. 354, ց. 5814, գ. 81, թ. 254։

60 Տե՛ս «Սովորովական», 24 նոյեմբերի 1943 թ.։

61 Նույն տեղում։

պատճառը, որ իմ մարտիկները բոլոր դժվարությունները հաղթահարել են հեշտությամբ»[62]։

Այնուհետև Լոզվոյը պատմում է սերժանտ Դոդոխյանի, եֆրեյտոր Կիրակոսյանի և կարմիրբանակային Թաշճյանի մարտական սխրագործությունների մասին։ 1943 թ. դեկտեմբերին թերթում աշխատելու ցանկություն հայտնեց գրող Հրաչյա Քոչարը։ Խմբագիր Վարդան Վարդանյանին հասցեագրված նամակում նա գրել է. «Հայերեն թերթի գոյությունն այստեղ ինձ շատ ուրախացրեց... Ուրախ կլինեմ Ձեզ հետ միասին աշխատելու թերթում, եթե դա հնարավոր գտնեիք Դուք։ Մենք միասին կարող էինք «Սուվորովականը» դարձնել ամենահետաքրքրական, ամենաօրիգինալ թերթը բոլոր ճակատային հայ թերթերի մեջ, առաջնությունը չզիջելով նույնիսկ «Боец РККА»-ի հայերեն օրինակին։ Ես կանցնեի տասնյակ դիվիզիաներ, կգտնեի բոլոր հայ, վրացի ու ադրբեջանցի հերոսներին ու միասին նրանց հայտնի կդարձնեինք ոչ միայն մեր ճակատի, այլև ողջ Միության ժողովուրդներին, ձեզ հետ միասին գրելով նրանց մասին նաև Մոսկվայի թերթերի համար։ Ես կարող էի ապահովել Հայաստանի բոլոր նշանավոր մարդկանց աշխատակցությունը «Սուվորովականին», որոնց հետ գրագրություն ունեմ սկսած Իսահակյանից, Օրբելուց մինչև Հովհաննես Շիրազ»[63]։

Խմբագիր Վ. Վարդանյանի միջամտությամբ 1944 թ. հունվարից Հրաչյա Քոչարը աշխատանքի անցավ խմբագրությունում։ Ստալինգրադյան ճակատամարտում կռիվված գրող-մարտիկի մուտքը խմբագրություն թարմություն առաջ բերեց, թերթը դարձավ ավելի հետաքրքիր ու բովանդակալից։ Թերթի հասցեով նյութեր սկսեցին ուղարկել Ա. Իսահակյանը, Հ. Օրբելին, Գ. Սարյանը, Վ. Թերզիբաշյանը, Արաքսը, Սիմակը, Հ. Շիրազը, Աղավնին և շատ ուրիշներ։ «Սուվորովական» թերթը կարճ ժամանակում դարձավ հայ զինվորների խորհրդատուն, նրանց մտքերի ու ցանկությունների արտահայտիչը։ Խմբագրությունը բազմաթիվ նամակներ և թղթակցություններ էր ստանում հայ զինվորներից և խոր թիկունքից՝ մայր հայրենիքից։ Թերթը դարձավ այն հիմնական կապը, որով հայ զինվորը հաղորդակից էր լինում Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին և հակառակը՝ ժողովուրդը իմանում էր Լենինգրադի հեռավոր մատույցներում կռվող իր զավակների մարտական սխրագործությունների մասին և հպարտանում նրանցով։

---

62 Նույն տեղում, նոյեմբերի 29։

63 «Ավանգարդ», 26 հունիսի 1966 թ.։

Այդ օրերին թիկունքային ու ռազմաճակատային բազմաթիվ թերթեր գրեցին 182-րդ հրաձգային դիվիզիայի 140-րդ գնդի սակրավոր Գևորգ Իսրայելյանի մասին, որը սովետական բանակում առաջինն էր, որ արժանացավ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1943 թ. նոյեմբերի 8-ի հրամանագրով հիմնված Փառքի 3-րդ աստիճանի շքանշանին[64]։

Որպես առաջին Փառքի շքանշանով պարգևատրվողի, Իսրայելյանի քաջագործության մասին գրեցին «Правда» և «Красная Звезда» թերթերը։

Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի օրը՝ նոյեմբերի 7-ին, երեկոյան, սակրավորների ջոկատը Իսրայելյանի գլխավորությամբ հաղթահարելով երկաթալարերի արգելափակոցները, առանց աղմուկի մոտեցավ գերմանացիների խրամատներին։ Արագաշարժ սակրավորները դեռ լույսը չբացված վնասազերծեցին ականապատված դաշտը և սողալով մոտեցան թշնամու դզոտին ու հանկարծակի գրոհեցին խուճապի մատնված թշնամու վրա։ Իսրայելյանը և նրա ընկերները ձեռնամարտում ոչնչացրին 15 հիտլերական։ Սակրավորները առաջադրանքը կատարած վերադարձան զորամաս[65]։

Գևորգ Իսրայելյանը պարգևատրվեց Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով, իսկ բանակի գլխավոր քաղաքական վարչությունը ռուսերեն ու հայերեն թողարկեց Իսրայելյանի մարտական սխրագործության մասին պատմող գեղարվեստորեն ձևավորված թերթիկ։ Տեքստը վերջանում էր հետևյալ խոսքերով. «...ընկեր մարտիկ, իմացիր, որ դու էլ կարող ես սերժանտ Իսրայելյանի նման լինել համարձակ, քաջ, խիզախ, վարպետ քո ռազմական գործում։ Հարկավոր է համարձակ և վարպետությամբ խփել թշնամուն։ Հայրենիքն այդ է պահանջում քեզանից։ Այդ են ըսպասում քեզանից հայրդ, մայրդ, քույրդ։

Խփիր և ոչնչացրու գերմանացիներին ինչպես սերժանտ Իսրայելյանը»[66]։

Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատի կազմում Նևել-Նովոսոկոլնիկի ուղղությամբ էր հարձակվում Վորոշիլովի անվան հայկական նախկին 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որը Ստալինգրադյան ճակա-

---

[64] Այս շքանշանով պարգևատրվում էին մարտերում առավել աչքի ընկած շարքայինները, սերժանտները, ավագները և կրտսեր լեյտենանտները։

[65] Հ. Ու. Մելիքսեթյան, Մ. Գ. Սանակյան, Փառքի շքանշանի հայ ասպետները, Երևան, 1982 թ., էջ 41։ Գևորգ Իսրայելյանն այժմ բնակվում է Տաջիկական ՍՍՀ-ի Ռեգար քաղաքում։ Նա աշխատում է կարի արհեստանոցում որպես դերձակ։

[66] ՀՊՊԿ արխիվ, ֆ. 250, գ. 3, թ. 6։

տամարտից հետո վերակազմվել էր 51-րդ գվարդիական դիվիզիայի։ Մարտական փառապանծ ուղի անցած միավորումը վերածվել էր ինտերնացիոնալ դիվիզիայի։ 1943 թվականի հուլիսի 1-ի տվյալներով նրա շարքերում հաշվվում էր 5300 ռուս, 1317 ուկրաինացի, 320 ղազախ, 266 թաթար, 126 հայ, 74 ադրբեջանցի, 76 վրացի և այլ ազգությունների ներկայացուցիչներ[67]։

1944 թ. հունվարի 29-ին Մերձբալթյան երկրորդ ռազմաճակատի զորքերի կազմում հաղթականորեն Նովոսոկոլնիկի մոտավ 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիան։ Դիվիզիայում մյուս ազգությունների զավակների հետ միասին հերոսաբար էին կռվում նաև հայերը։ Անվանի հետախույզներ էին Գուրգեն Ալեքսյանը, Միքայել Նավասարդյանը, Երվանդ Ալիխանյանը, հմուտ բժշկի համբավ էին վայելում կապիտան Վարվառա Վելիկանյանը, Պարթև Սմբատյանը և ուրիշներ։ Վարվառա Վելիկանյանը հմուտ բժշկուհի լինելուց բացի, անգնահատելի աշխատանք էր կատարում նոր կադրերի պատրաստման ուղղությամբ։ Նա տարիների ընթացքում կուտակած աշխատանքային հարուստ փորձը հաղորդում էր երիտասարդ բժիշկներին, քույրերին, ծանոթացնում նրանց վիրահատման բարդ արվեստին։ Նրա դաստիարակած կադրերից էր Մոսկվայի մարտերում անմահացած, Սովետական Միության հերոս, գեներալ Պանֆիլովի դուստրը՝ Վալենտինա Պանֆիլովան[68]։

Մարտական բաղում փառապանծ գործեր կատարեց ավագ լեյտենանտ Պավել Միխայլովիչ Ռոմանենկոյի գլխավորությամբ գործող, ինտերնացիոնալ կազմ ունեցող հրետանային մարտկոցը։ Այստեղ հանդիպում ենք տարբեր ազգությունների մարտիկների, որոնց միավորում էր մեկ միասնական նպատակ՝ վրեժ ֆաշիստական զավթիչներից նրանց կատարած չարագործությունների համար։ Հրանոթի հաշվարկի հրամանատար, կրտսեր սերժանտ Հակոբյանը ամեն անգամ կրակելիս ատելությամբ գոչում էր. «Այս՝ հանուն Բելոռուսիայի, հանուն Ուկրաինայի, հանուն իմ մայր Հայաստանի»։ Մարտերից մեկի ժամանակ նա ետ մղեց թշնամու տանկային գրոհը, որի համար հրամանատարությունը նրան պարգևատրեց Կարմիր աստղի շքանշանով[69]։

Այդ օրերին հսկայական աշխատանք կատարեց ռազմաճակատի 219-րդ ռազմաշինարարական վարչության գլխավոր ինժեներ կապիտան Վաղուշ Միքայելի Սարգսյանը, որի կազմած նախագծերով և անմիջական

---

67 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1163, ց. 1, գ. 1, թ. 47։

68 Տե՛ս «Սովորական», 8 մարտի 1944 թ.։

69 «Ворошиловец», 7 декабря 1943 г.

մասնակցությամբ ռազմաճակատի զորքերի համար վերականգնվեցին կամ էլ կառուցվեցին հոսպիտալներ, մեծ տարողությամբ պահեստներ, բաղնիքներ և այլ կառույցներ[70]։

Հարձակողական գործողությունների ժամանակ աչքի ընկան կուսակցական ու կոմերիտական աշխատողներ Իվան Նահապետի Թումասյանը, Սուրեն Գրիգորի Փահլևանյանը, գումարտակի հրամանատարներ Սերգեյ Ջհանի Խաչատուրովը, Սերգեյ Միսակի Նահապետյանը և շատ ուրիշներ։

Հունվարի 14-ին 22-րդ բանակը ճեղքելով թշնամու պաշտպանությունը, անցավ Նովոսոկոլնիկի—Դնո երկաթգիծը և գրավեց Մանոկովո բնակավայրը։ Սակայն թշնամին խոշոր ուժեր նետեց այդ շրջանը։ Մանոկովո գյուղը պաշտպանում էր 43-րդ հրաձգային դիվիզիայի գումարտակներից մեկը՝ գնդի հրամանատարի տեղակալ փոխգնդապետ Յա. Լ. Ռայնբերգի հրամանատարությամբ։ Հիտլերականները տանկերի ու ինքնաթիռների աջակցությամբ մի քանի անգամ գրոհեցին գումարտակի վրա, բայց միշտ էլ ծանր կորուստներով ետ շպրտվեցին։ Մինչև օրվա վերջը ոչնչացվեց թշնամու մեկ գումարտակ զինվոր ու սպա և 10 տանկ։ Ուշ երեկոյան թշնամին ճիգերի մեծ լարումով ի վերջո նորից գրավեց գյուղը։ Վերախմբավորելով իր ուժերը, հրամանատարը նորից գրոհեց գյուղի վրա և հիտլերականներին դուրս շպրտեց այնտեղից։ Մարտի ժամանակ հերոսաբար զոհվեց Յա. Լ. Ռայնբերգը։ Լատվիական ժողովրդի փառապանծ զավակին ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[71]։ Հակառակորդի դեմ ակտիվ հարձակողական գործողություններ սկսեցին Ղազախստանում կազմավորված ինտերնացիոնալ կազմ ունեցող 8-րդ, 30-րդ գվարդիական, 391-րդ, 150-րդ և 1-ին հրաձգային դիվիզիաները։ Իհարկե այդ դիվիզիաների՝ անձնակազմի գերակշռող մասը ռուսներ էին, բայց միաժամանակ բավական թիվ էին կազմում նաև ազգային հանրապետություններից զորակոչված ռազմիկները։ 1944 թ. հունվարի 1-ի տվյալներով 30-րդ գվարդիական դիվիզիայի 5627 հոգուց բաղկացած անձնակազմից 4438-ը ռուսներ էին, իսկ 1189-ը՝ այլ ազգությունների ներկայացուցիչներ[72]։ Գնդապետ Մ. Ա. Իսաևի հրամա-

---

70 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690806, գ. 2902, թ. 268։

71 И. П. Барбашин, А. Н. Кузнецов..., Битва за Ленинград 1941—1944, с. 351—352.

72 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1114, ց. 1, գ. 1, թ. 9։

նատարությամբ դիվիզիան Նովոսոկոլնիկի շրջանում ծանր հարվածներ հասցրեց հակառակորդին։ Աչքի ընկան սերժանտներ՝ ռուս Ա. Պ. Կոժևինը, ղազախ Ս. Ի. Իսակակովը, վրացի Գ. Օ. Կուրագանիձեն, օս խաջիմաս Զուսովը և ուրիշներ։ Նրանք բոլորն էլ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։ Հակառակորդին ծանր կորուստներ պատճառեց նաև 391-րդ հրաձգային դիվիզիան գնդապետ Ա. Դ. Տիմոշենկոյի հրամանատարությամբ։ Մարտում ցուցաբերած արիության համար այս դիվիզիայից մայոր Ա. Տ. Յակովլևին և ավագ լեյտենանտ Ա. Վ. Գալպերինին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

Հունվարի 16-ի մարտերում հերոսի մահով զոհվեց 154-րդ հրաձգային բրիգադի նշանառու, ղազախ ժողովրդի դուստրը՝ Լիա Մոլդագուլովան։ Հունվարի 14-ին Նասվի շրջանում 54-րդ հրաձգային բրիգադի գումարտակը հանդիպեց թշնամու ուժեղ կրակին։ Ռազմիկների հարձակումը կասեցվեց։ Այդ ժամանակ Մոլդագուլովան «Առաջ հանուն հայրենիքի» գոչելով նետվեց գրոհի։ Աղջկա համարձակությունից ոգևորված ռազմիկները գրոհեցին թշնամու վրա։ Մոլդագուլովան սպանեց 11 ֆաշիստ, իսկ հաջորդ օրը նշանառուի հրացանով ոչնչացրեց ևս 12 հիտլերական։ Հունվարի 16-ին Նասվա շրջանի Կաղաջիխա գյուղի մոտ Մոլդագուլովան նորից գորոհողների առաջին շարքերում էր։ Նա մի պահ կտրվեց իր ընկերներից, մենամարտի բռնվեց ֆաշիստական սպայի հետ, սպանեց նրան, բայց ինքն էլ ընկավ թշնամու դնդակից։ Համարձակ ու խիզախ աղջկան՝ Լիա Մոլդագուլովային ետմահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[73]։ Այդ վայրից ոչ շատ հեռու Նովոսոկոլնիկի քաղաքից արևմուտք Պուստոշկայի շրջանի Յևելովո և Միրոնովո բնակավայրերի մոտ բռնկված ծանր ու համառ մարտերի ժամանակ հատկապես աչքի ընկան զորամասերի բուժաշխատողները և սանիտարները։ 146-րդ հրաձգային դիվիզիայի 512-րդ հրաձգային գնդի 1-ին գումարտակի սանիտար Ավագ խաչատուրի Սահակյանը հունվարի 12—13-ը հրետանային ու ականանետային կրակի տակ ռազմադաշտից, իրենց զենքերի հետ միասին, դուրս բերեց 25 վիրավոր։ Խիզախ արտաշատցին պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[74]։

Լենինգրադյան ռազմաճակատի և հատկապես նրա 54-րդ բանակի մարտական ակտիվ գործողությունները շրջապատման վտանգի տակ

---

[73] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 686042, գ. 50, թ. 34։

[74] ՍՍՀՄՊՄԿԱ, ֆ. 33, ց. 686044, գ. 2328, թ. 166։

դրեցին Ստարայա Ռուսսայի և Խոլմի շրջաններում գտնվող թշնամու զորամասերին։ Շրջապատումից խուսափելու համար թշնամին Ստարայա Ռուսսայի շրջանից նետ քաշեց իր զորքերը և միևնույն ժամանակ նորից ուժեր նետեց 54-րդ բանակի դեմ՝ նրա հարձակումը կասեցնելու նպատակով։ Մշագա-Շելոն գետի շրջանում ծավալված համառ ու արյունալի մարտերից հետո թշնամին հարկադրված նահանջեց և 54-րդ բանակը Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատի 1-ին հարվածային բանակի հետ միասին ազատագրեցին Դնո (փետրվարի 24-ին) և Պորխով քաղաքները (փետրվարի 26-ին)։ Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատի զորքերը ազատագրեցին Ստարայա Ռուսսա (փետրվարի 18-ին), Խոլմ (փետրվարի 21-ին), Պուստոշկա քաղաքները և 900 բնակավայր[75]։

•

Լենինգրադի համար մղված մարտերի բոլոր հատվածներում ու ուղղություններում անձնազոհ ու հայրենանվեր գործերով աշքի ընկան ռազմաճակատների, բանակների, կորպուսների, դիվիզիաների և այլ զորամասերի ու ստորաբաժանումների սանիտարական ու բժշկական ծառայության աշխատողները։ 67-րդ բանակի սանիտարական բաժնի պետն էր բժշկական ծառայության փոխգնդապետ Ավետիս Ասատրյանը։ Նրա նախաձեռնությամբ ստեղծվեցին շարժական վիրահատական օպերատիվ խմբեր, որոնք բանակի հարձակողական գործողությունների ժամանակ անհրաժեշտության դեպքում արագ տեղափոխվում էին ցանկացած զորամասը և օգնություն ցույց տալիս ծանր վիրավորներին։ Այսպես փրկվեց շնորհալի շատ հրամանատարների և զինվորների կյանքը։ Բանակի բժշկապետը լինում էր բժշկական ծառայության բոլոր ստորաբաժանումներում, անցկացնում մասնագիտական սեմինար պարապմունքներ, իր խորհուրդներով օգնում բժիշկներին, բուժակներին, քույրերին, սանիտարներին՝ հաղթահարելու դժվարությունները։ Մեկամսյա հարձակողական մարտերի ընթացքում նրա ղեկավարությամբ բանակի սանիտարական ծառայության զորամասերը պատվով կատարեցին իրենց առջև դրված խնդիրները։ Այդ ժամանակաշրջանում թիկունք տեղափոխվեց 20000 վիրավոր զինվոր ու սպա, որից 8000-ը՝ ծանր վիճակում։ Մահճակալների թիվը 200-ից հասցվեց 400—450-ի։ Բժշկական

---

[75] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 239, ց. 2224, գ. 526, թ. 269։

ծառայության ստորաբաժանումները հստակորեն ղեկավարելու և ձեռք բերած արդյունքների ու հաջողությունների համար փոխգնդապետ Ավետիս Ասատրյանը, որ նախկինում պարգևատրվել էր Կարմիր աստղի շքանշանով և «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով, այս անգամ պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով[76]։

Ասատրյանի անմիջական օգնականներից էր բանակի թերապևտ, բժշկական ծառայության փոխգնդապետ Արամ Գրիգորի Ղուկասյանը, որն անձամբ լինում էր բոլոր հոսպիտալներում, անմիջական օգնություն ցույց տալիս բժշկական կազմին։ Բուժաշխատողների շրջանում քաջածանոթ էին կոմունիստ-բժշկուհիներ Սոֆյա և Ռուզաննա Լալայան քույրերի անունները։ Լենինականի շագեքարշային դեպոյի մեքենավար Լևոնի աղջիկները նոր էին ավարտել Լենինգրադի բժշկական ինստիտուտը, երբ սկսվեց պատերազմը։ Հայրենասեր քույրերը, առանց տատանվելու, զինվորագրվեցին և որպես կամավորներ մեկնեցին ռազմաճակատ՝ պաշտպանելու սիրելի քաղաքի հեռավոր մատույցները։ Նրանք Հյուսիսարևմտյան ռազմաճակատի կազմում մասնակցեցին Նովգորոդի պաշտպանության մարտերին։ Վիրավոր մարտիկներին բժշկական առաջին օգնություն ցույց տալու համար զորամասի հրամանատարությունը 1941 թ. սեպտեմբերին շնորհակալություն հայտնեց քույրերին։ Սոֆյան և Ռուզաննան սկզբից մինչև վերջ մասնակցեցին Լենինգրադի հերոսական պաշտպանությանը։ Քույրերը ընդգրկվեցին 42-րդ բանակի բժշկասանիտարական գումարտակի ուժեղացված խմբում։ Անհրաժեշտության դեպքում նրանց ուղարկում էին ամենապատասխանատու տեղամասերը։ 1943 թ. հունվարի սկզբին նրանք միասին մասնակցեցին Լենինգրադի շրջափակման ճեղքման մարտական գործողություններին, իսկ այնուհետև ընդմիշտ բաժանվեցին։ ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության կենտրոնական արխիվի փաստաթղթերից մեկում Ռուզաննայի մասին գրված է. «Սինյավինի բարձունքների շրջանում բժշկական ծառայության ավագ լեյտենանտ ընկ. Լալայանը դրսևորեց իրեն որպես նախաձեռնող, աննկուն, կարգապահ վիրաբույժ-օրդինատոր։ 1943 թ. օգոստոսի 13—18-ը հրետանային գնդակոծության ժամանակ վիրահատեց 97 ծանր վիրավորի»[77]։ 144-րդ առանձին սանիտարաբժշկական գումարտակի հրամանատար, բժշկական ծառայության

---

[76] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, 686196, գ. 5422, թ. 223։

[77] Նույն տեղում, ֆ. 33, ց. 686044, գ. 1647, թ. 168։

կապիտան Կորովինի միջնորդությամբ Ռուզաննա Լալայանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով։ Իսկ մինչ այդ խիզախ հայուհին պարգևատրվել էր «Մարտական ծառայության» մեդալով։ Իրեն վստահված տեղամասում մեծ եռանդով ու նվիրվածությամբ էր աշխատում ավագ քույրը՝ Սոֆյան։ Հերոսուհու՝ Սոֆյա Լալայանի հոգեկան հարուստ ներքնաշխարհի ու հայրենասիրական ջերմ զգացմունքների մասին են վկայում ռազմաճակատից մորն ուղարկած նամակները։ «Սիրելի Մարգունյա,—նամակներից մեկում գրում է նա,—դու գիտես, թե ինչպես եմ սիրում Լենինգրադը։ Այստեղ եմ ես ընտրել իմ մասնագիտությունը, ստացել բարձրագույն կրթություն։ Ես հպարտ եմ այս ամենի համար և միշտ պիտի հպարտանամ։ Սիրում եմ Լենինգրադը այնպես, ինչպես իմ ծննդավայրը։ Սակայն ֆաշիստական հորդաները ցանկանում են իրենց սև թաթերի մեջ առնել այս լուսավոր քաղաքը։ Մութ ամպեր են կուտակվել Նևայի վրա, բայց միևնույն է, թշնամուն չի հաջողվի իրագործել իր նենգ նպատակը։ Հիշում ես Ալեքսանդր Նևսկու խոսքերը՝ «Ով սրով մտնի մեր հողը, սրից էլ կընկնի»[78]։

Լենինգրադի շրջափակման մարտական գործողությունների ընթացքում, որպես ուժեղացված խմբի վիրաբույժ, Սոֆյա Լալայանը գտնվում էր 72-րդ հրաձգային դիվիզիայի 51-րդ բժշկասանիտարական գումարտակում և իր հրաշագործ ձեռքերով արդեն կյանք էր պարգևել 200 ռազմիկի[79]։ Դիվիզիայի հրամանատարությունը մի քանի անգամ գրավոր շնորհակալություն հայտնեց շնորհալի վիրաբույժին։ 1944 թ. փետրվարի 5-ին Վյազի բնակավայրի մոտ, թշնամու ավիացիայի հարձակման ժամանակ, վիրահատման սեղանի մոտ, թշնամու ռումբի բեկորից զոհվեց բժշկական ծառայության ավագ լեյտենանտ Սոֆյա Լևոնի Լալայանը։ Նա ետմահու պարգևատրվեց Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի շքանշանով։ Սոֆյայի կրտսեր քույրը՝ Ռուզաննան պատերազմի հաղթական ավարտից հետո վերադարձավ Երևան, օգտագործեց ձեռք բերած արժեքավոր փորձը և պաշտպանեց թեկնածուական դիսերտացիա։ Նա այժմ դոցենտ է, Երևանի բժիշկների կատարելագործման ինստիտուտի դասախոս։

Նույն բանակի 90-րդ կարմրադրոշ հրաձգային դիվիզիայի գլխավոր

---

[78] Հայկական ՍՍՀ Հեղափոխության թանգարան։ Նամակը փակցված է Հայրենական պատերազմին նվիրված ցուցափեղկում։

[79] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 397, ց. 9272, գ. 154, թ. 11։

բժիշկն էր բժշկական ծառայության մայոր Անդրանիկ Սարգսի Հակոբյանը։ Հրամանատարության կողմից բժշկասանիտարական ստորաբաժանումներին տրված բոլոր հրահանգներն ու հրամանները կատարելիս նա դրսևորում էր մեծ պատասխանատվություն։ Հունվարի 14—18-ը Հակոբյանն անձամբ ապահովեց դիվիզիայի բոլոր սանիտարաբաժանումների հստակ աշխատանքը, որի շնորհիվ հրամանի ստացումից 6 ժամ հետո բժշկասանիտարական գումարտակը և գնդերի սանիտարական ստորաբաժանումները պատրաստ էին ռազմի դաշտից դուրս բերելու և էվակուացիայի ենթարկելու 1500 վիրավորի[80]։ Մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու համար Ա. Ս. Հակոբյանը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով։ Հակոբյանն այնուհետև մասնակցեց Կարելական պարանոցի, սովետական Մերձբալթիկայի ազատագրման մարտերին և պատերազմն ավարտեց գերմանական հողում։ Նա պարգևատրվեց Հայրենական պատերազմի 2-րդ և 1-ին աստիճանի շքանշաններով։

Անձնվիրաբար էր գործում 2-րդ հարվածային բանակի 34-րդ առանձին գնդացրահրետանային գումարտակի բժիշկ, բժշկական ծառայության կապիտան, սուխումցի Վազգեն Ռուբենի Պապիկյանը։ Նարվա գետի ձախ ափում մղված մարտերի ժամանակ մարտ ամսվա սկզբին նա ռազմադաշտում, թշնամու հրետանային ու ականանետային կրակի տակ, մի քանի օրվա ընթացքում, անձամբ սպասարկեց 328 վիրավորի։ Մարտի 6-ին Պապիկյանը վիրավորվեց։ Ցուցաբերած արիության համար նա պարգևատրվեց Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով[81]։

Լենինգրադի շրջափակման վերացման մարտերում ծառայական պարտականությունների կատարման բարձրության վրա գտնվեցին և իրենց եռանդուն գործունեությամբ շատերի կյանքը փրկեցին՝ բժշկական ծառայության փոխգնդապետ Վարդան Ալեքսանի Թարխանովը, բժշկական ծառայության մայորներ Պավել Լևոնի Աբրահամյանցը, Աշոտ Շմավոնի Հակոբյանը, Արտաշես Մաթևոսի Ալեքսանդրյանը և ուրիշներ։

Լենինգրադի տակ սովետական զորքերի հարձակողական գործողությունների ամբողջ ընթացքում, բազմազգ ինտերնացիոնալ զորամիավորումներում, ծանր ու ահեղ մարտերում ռուս ժողովրդի զավակների կողքին ծնվեցին շատ ու շատ հերոսներ՝ ուկրաինացիներ, բելոռուսներ,

---

80 Նույն տեղում, ֆ. 33, ց. 690155, գ. 760, թ. 73։

81 Նույն տեղում, ֆ. 33, ց. 690155, գ. 629, թ. 269։

հայեր, ադրբեջանցիներ, վրացիներ, ուզբեկներ, ղազախներ, ուդմուրտներ, թաթարներ և այլ ազգությունների պատկանող ռազմիկներ։ Բնականաբար նրանցից յուրաքանչյուրն ուներ իր ազգային սովորությունները, ավանդույթները, բնավորությունը, և դա ոչ թե անջրպետեց, ինչպես այդ սպասում էին ֆաշիստական դաղափարախոսները, այլ, ընդհակառակը, էլ ավելի միավորեց նրանց ռուս ժողովրդի շուրջը։ Չէ՞ որ միայն սովետական իշխանության տարիներին մեր երկրի բոլոր ազգությունները գործնականորեն զգացին ու տեսան սոցիալիստական հասարակարգի առավելությունները։ Նրանք քաջ գիտակցում էին, որ խոշոր հաջողություններն ու պատմական նվաճումներն իրենք ձեռք են բերել կոմունիստական կուսակցության ազգային իմաստուն քաղաքականության շնորհիվ, ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ։ Ահա և հենց այդ պատճառով սովետական բազմազգ ժողովրդի զավակները դիմում էին ամեն զոհողությունների, ունենալով մեկ միասնական նպատակ՝ ջախջախել հայրենի հողը ներխուժած ոսոխին։ Սովետական ռազմիկի բարոյամարտական բարձր հատկությունների, նրա դիմացկունության ու քաղաքական կոփվածության մասին գիտե ամբողջ աշխարհը։ Նրա մասին իրենց բարձր գնահատականն են տվել կապիտալիստական աշխարհի այն ժամանակվա այնպիսի նշանավոր զեկավար-քաղաքական գործիչներ, ինչպես Ռուզվելտը, Չերչիլը և ուրիշներ։ Իսկ այժմ գտնվել են պատմաբան կեղծարարներ, որոնք առանց խղճի խայթի մեր հերոսների սխրանքը, նրանց գործունեությունը գնահատում են այլ ձևով և գտնում, որ նրանց ստիպողական կարգով այդ քայլին էին մղել «անսիրտ կոմիսարները», որ նրանք եղել են ֆանատիկ մահապարտներ, չիմանալով կյանքի գինը։ Սովետական բազմազգ ռազմիկներ Ս. Պ. Տիպանովը, Ի. Կ. Սկուրիդինը, Ա. Ի. Սպիրինը, Ի. Ն. Կուլիկովը, Աբիլխաիր Բայմուլդինը, Ա. Ա. Մանինը, Ժունուսբայ Կաիպովը և շատ ուրիշների ոչ ոք և ոչ մի հրամանատար չի հրամայել զոհեն իրենց կյանքը։ Նրանք կուրորեն չեն դիմել այդ մեծ զոհողությանը։ Հակառակորդի դոտը, դղոտը կամ տանկը պայթեցնելու բոլոր հնարավոր միջոցները սպառելուց հետո, երբ արդյունքի չեն հասել, դիմել են ծայրագույն միջոցի, զոհել են իրենց՝ հանուն կյանքի, հանուն սովետական հայրենիքի, հանուն իրենց երեխաների, մայրերի, քույրերի։

Այդ են վկայում հերոսաբար զոհված կոմունիստներ Ի. Գ. Գորշկովի, Պ. Ի. Գրիգորևի, Մ. Ի. Միտրուկովի և շատ ուրիշների նամակները։ Նրանք մեծ հայրենասերներ, ինտերնացիոնալիստներ էին, որոնք գիտակցաբար զոհեցին իրենց կյանքը հանուն Լենինգրադի, հանուն հաղթանակի։

Լենինգրադի տակ թշնամու «Հյուսիս» բանակների խումբը ծանր պարտություն կրեց։ Հակառակորդը շպրտվեց Նարվա, Պսկով, Օստրով, Նովոռժև սահմանագիծը, ուր թշնամու ուժեղ դիմադրության պատճառով սովետական զորքերի հետագա գործողությունները որևէ արդյունք չտվեցին։ Մեր բանակները մեկ և կես ամսվա հարձակողական գործողություններից հետո անցան ամուր պաշտպանության։ Հարձակման ամբողջ ընթացքում Լենինգրադյան, Վոլխովյան և Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատների զորքերը ծանր պարտության մատնեցին թշնամու «Հյուսիս» բանակների խմբին։ Հարձակման ընթացքում մեր զորքերի կողմից գլխովին ջախջախվեց թշնամու 20 դիվիզիա, գրավվեց 189 տանկ, 1800 հրանոթ, 4660 գնդացիր, 2648 ավտոմեքենա, 615 վագոն, 353 պահեստ և այլ ռազմավար[82]։ Լրիվ աղատագրելով Լենինգրադի մարզը, Կալինինի մարզի մեծ մասը, մեր զորքերն ընդհուպ մոտեցան Մերձբալթյան սովետական հանրապետությունների սահմաններին։

Սովետական զորքերի հուժկու հարվածների տակ դադարեցին գոյություն ունենալուց «Հյուսիսային պատնեշ» կոչվող պաշտպանական ամրությունները, որով այնքան պարծենում էին հիտլերականները, իսկ օտարերկրյա մասնագետների կարծիքով, «միայն երկրաշարժը կարող էր ստիպել գերմանացիներին թողնել իրենց ամրությունները Լենինգրադի տակ»[83]։

Մարտերում ցուցաբերած արիության համար 71 հազար 255 մարդ պարգևատրվեց Սովետական Միության շքանշաններով ու մեդալներով[84]։

2. ՀԱՂԹԱՆԱԿ ԿԱՐԵԼԱԿԱՆ ՊԱՐԱՆՈՑՈՒՄ

«Հյուսիս» բանակների խմբի ծանր պարտությունն իրական պայմաններ ստեղծեց սովետական զորքերի հարձակողական գործողությունները տեղափոխել Լենինգրադից Հյուսիս՝ Կարելական պարանոց, ուր շարունակում էին գործել սպիտակ ֆիններ զորքերը, որոնց 30 կմ տարածություն էր բաժանում Լենինգրադից։

Ֆիննական հրամանատարությունն իր առաջ խնդիր էր դրել մինչև վերջ պաշտպանել գրաված դիրքերը։ Այդ նպատակով երկու ու կես տարում Կարելական պարանոցում կառուցվել էին երկարաժամկետ պաշտպանական հզոր ամրություններ։ Հարյուր կիլոմետր խորությամբ

---

82 *И. П. Барбашин, А. И. Кузнецов...*, Битва за Ленинград, с. 409.

83 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 235, ց. 2086, գ. 197, թ. 179։

84 «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 371.

պարանոցը կտրում էին երեք պաշտպանական գծեր։ Այստեղ հակառակորդը կենտրոնացրել էր լրիվ կոմպլեկտավորված 5 հետևակային դիվիզիա, 1 տանկային դիվիզիա, 1 հետևակային բրիգադ և ափամերձ պաշտպանության 2 հրետանային գնդեր։ Լենինգրադյան ռազմաճակատը գերազանցում էր հակառակորդին հետևակով՝ 2, հրետանիով՝ 6, տանկերով՝ 7, ինքնաթիռներով՝ 5 անգամ։ Ռազմաճակատը իր կազմում ուներ 260000 զինվոր ու սպա[85]։

Հարձակման նախօրյակին Լենինգրադյան ռազմաճակատի 21-րդ և 23-րդ բանակներում հրամանատարները, շտաբները, քաղօրգանները, կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները հսկայական աշխատանք կատարեցին հարձակմանը նախապատրաստվելու համար։ Մեծ ուշադրություն նվիրվեց տարբեր զորատեսակների արդյունավետ համագործակցության և հակառակորդի պաշտպանությունը ճեղքելու ինժեներական ապահովվածությունը գործնականորեն իրականացնելու հարցերին։ Բոլոր զորամասերում և ստորաբաժանումներում անցկացվեցին զորավարժություններ։ Զորքերը սովորում էին բնական արգելքները՝ լճերը, գետակները, ճահիճները, ռելիեֆային բարդ տեղանքները հաղթահարելու դժվարությունները։ Քաղօրգանների, կուսակցական ու կոմերիտական վերադաս տեղական մարմինների եռանդուն ջանքերի, լարված աշխատանքի շնորհիվ ամրապնդվեցին ստորաբաժանումների կուսակցական ու կոմերիտական կազմակերպությունները։ Միայն մայիս ամսին Կարելական պարանոցում գտնվող զորամասերի ու ստորաբաժանումների կուսկազմակերպությունների շարքերն ընդունվեցին 11 հազար մարտիկներ ու հրամանատարներ։ 30-րդ գվարդիական հրաձգային կորպուսի յուրաքանչյուր վաշտում հաշվվում էր 11—18 կոմունիստ[86]։ 1944 թ. մայիսի 3-ի տվյալներով Լենինգրադյան ռազմաճակատի կազմի մեջ մտնող բոլոր բանակներում և ստորաբաժանումներում կար 236909 կոմունիստ և 136123 կոմերիտական[87]։ 21-րդ և 23-րդ բանակների հրամանատարական ու սերժանտական կազմի համար անցկացվեցին գործնական պարապմունքներ, կազմակերպվեցին հանդիպումներ Լենինգրադի աշխատավորության պատվիրակների հետ։ 21-րդ բանակում ելույթներով հանդես եկավ կարմիր բանակի կարմրադրոշ անսամբլը Ա. Վ. Ալեքսանդրովի ղեկավարությամբ։

---

85 Նույն տեղում, էջ 376։

86 Նույն տեղում, էջ 378։

87 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1217, գ. 598, թ. 32։

Նախօրոք մշակված պլանի համաձայն, հակառակորդին մոլորեցնելու ու ապակողմնորոշելու նպատակով կուսակցական-քաղաքական աշխատանքը զորամասերում տարվում էր այնպիսի ոգով, որ իբր 23-րդ բանակը պետք է ամրապնդի իր պաշտպանությունը, իսկ 21-րդը պատրաստվում էր հարձակման (21-րդ բանակը դեռ չէր տեղափոխվել Կարելական պարանոց)։ «На страже Родины» և մյուս զինվորական թերթերը հիմնական ուշադրությունը նվիրեցին պաշտպանությանը վերաբերող հարցերին և հակառակ կողմում ստեղծեցին այնպիսի տպավորություն, որ սովետական զորքերը պատրաստվում են հարձակում սկսել Էստոնիայի ուղղությամբ։

Հարձակումից մի քանի օր առաջ, հմտորեն կիրառելով գործողությունները քողարկող միջոցները, Կարելական պարանոց փոխադրվեց գեներալ-գնդապետ Դ. Ն. Դուսևի 21-րդ բանակը։ Այնուհետև կատարվեց կենդանի ուժի ու մարտական տեխնիկայի վերախմբավորում։ Հունիսի 7—9-ը բանակների բոլոր զորամասերում ու ստորաբաժանումներում անցկացվեցին ժողովներ ու միտինգներ։ Երկու բանակները պատրաստ էին հարձակողական գործողություններ սկսելու։

Զորքերը հարձակման նախապատրաստելու գործում հսկայական աշխատանք կատարեցին Լենինգրադյան ռազմաճակատի քաղվարչության աշխատողները՝ գեներալ-մայոր Դ. Ի. Խոլոստովի գլխավորությամբ։ Աչքի ընկան քաղօրգանների պետեր, գնդապետներ Բ. Ա. Բասովսկին, Ի. Մ. Իվանովը, Ֆ. Կ. Ռումյանցևը, Ֆ. Պ. Ստեպշենկոն, Ն. Ի. Տիտովը, Դ. Գ. Շանշաշվիլին, փոխգնդապետներ Պ. Ի. Բիդախան, Դ. Ն. Դջիտաևը, Մ. Մ. Գուրևիչը, Պ. Ա. Կամենսկին, Մ. Դ. Նեղամաևը, Պ. Ն. Ռուսակովը, մայոր Ա. Ա. Սիլանյանը և ուրիշներ։

Հունիսի 9-ին ռազմաճակատի հրետանին զանգվածային ուժեղ հարված հասցրեց հակառակորդի դիրքերին, քարուքանդ արեց նրա պաշտպանական ամրությունները, դոտերն ու դզոտները։ «Դա այնպիսի կրակային դժոխք էր, որ երբեք չի եղել Ֆինլանդիայի պատմության մեջ», իր հիշողություններում նշեց 10-րդ հետևակային դիվիզիայի 1-ին հետևակային գնդի հրամանատար Տ. Վիլյանեն[88]։ Իրոք սովետական հրետանավորների գործողությունը շատ արդյունավետ եղավ։ Հակառակորդի պաշտպանության ճեղքման գոտում հայտնաբերված 189 նպատակակետերից մեկ օրում ոչնչացվեց 175-ը։ Հրետանային կրակի արդյու-

[88] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 379.

նավետությունը արդյունք էր նաև այն բանի, որ նրա ղեկավարումը իրականացնում էին հրետանու այնպիսի գիտակներ՝ գեներալներ Լենինգրադյան ռազմաճակատի հրետանու հրամանատար Գ. Ֆ. Օդինցովը, նրա շտաբը՝ Գ. Մ. Բրուսերի ղեկավարությամբ, 3-րդ հրետանային կորպուսի հրամանատար Ն. Ն. Ժդանովը, 21-րդ և 23-րդ բանակների հրետանու հրամանատարներ Մ. Ս. Միխալկինը և Ի. Մ. Պյադուսովը։

Հակառակորդի պաշտպանական ամրությունները խորտակելու գործում իր համեստ ավանդը ներդրեց Գլխավոր հրամանատարությանը ենթակա 15-րդ հրետանային դիվիզիայի 18-րդ ականանետային բրիգադի շտաբի պետ մայոր Լազար Վերդիի խաչատրյանը։ Հրամանատարության մարտական առաջադրանքը կատարելու համար նա պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով[89]։ Հրամանատարների կողմից հրետանային կրակը ճշտությամբ վարելու բարձր վարպետության վկայությունը ֆիններին «միլիոններ» անունը կրող երկաթբետոնե հզոր դոտը ավերակույտերի վերածելն էր։ Այդ դոտը ոչնչացնելու գործում հրամանատարական բարձր ունակություններ դրսևորելու համար 18-րդ գվարդիական հաուբիցային հրետանային բրիգադի մարտկոցի հրամանատար կապիտան Ի. Ի. Վեդմեդենկոյին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[90]։

Հակառակորդի պաշտպանության մասին ավելի ճշգրիտ տվյալներ ստանալու համար նույն օրը 21-րդ բանակի հատուկ առանձնացված ստորաբաժանումները՝ հրետանային հզոր պաշտպանության տակ հետախուզական մարտ սկսեցին թշնամու դեմ։ Գրոհողները մխրճվեցին թշնամու պաշտպանության մեջ և ավելի բարելավեցին իրենց դիրքերը։ Հաջորդ օրը, հունիսի 10-ի առավոտյան ժամը 6-ին, հրետանային ու ավիացիոն հզոր նախապատրաստությունից հետո, հարձակման են անցնում 21-րդ բանակի 30-րդ գվարդիական, 109-րդ և 97-րդ հրաձգային կորպուսները՝ գեներալ-լեյտենանտներ Ն. Պ. Սիմոնյակի, Ի. Պ. Ալֆերովի և գեներալ-մայոր Մ. Մ. Բուսարովի հրամանատարությամբ։ Նույն օրը սովետական զորքերը հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը, ճեղքեցին նրա պաշտպանության առաջին գիծը, ընթացքով գետանցեցին Սեստրան և Վիբորգի ուղղությամբ առաջ շարժվեցին 14 կիլոմետր։ Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի անսպասելի ու հանկար-

---

[89] ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1242, գ. 4737, թ. 140։

[90] *А. В. Буров,* Твои герои, Ленинград, с. 467—468.

ծակի հարվածը շշմեցուցիչ վիճակի մեջ դրեց ֆիննական հրամանատարությանը։ «Չէին սպասում ու բոլորովին չէին ենթադրում,— գրում է ֆիննական գեներալ Կ. Լ. Եշը,— որ ռազմաճակատում պաշտպանությունը կճեղքվի»[91]։ Ֆիննական գեներալները Կարելական պարանոցի պաշտպանական ամուր կառույցները համարում էին անխորտակելի և անհաղթահարելի, որովհետև այն ինժեներական տեսակետից գերազանցում էր հանրահայտ «Մաններհեյմի գծից»։ Իսկ այդ ամրությունը, ինչպես գիտենք, 1939—1940 թթ. սովետաֆիննական պատերազմի ընթացքում սովետական զորքերը անհրաժեշտ փորձ չունենալու պատճառով չկարողացան ժամանակին հաղթահարել այն։ Իսկ այժմ մարտերում կոփված ու առնականացած սովետական զորքերը շատ արագ հաղթահարեցին պաշտպանության գիծը և հարձակման հաջորդ օրը մոտեցան ֆիննական պաշտպանության երկրորդ գծին։ Հարձակման բոլոր հատվածներում ահեղ ու դաժան մարտեր էին գնում։ Սովետական ռազմիկները գործում էին համարձակ, դրսևորում հերոսության ու անձնազոհության անկրկնելի օրինակներ։ Զորքերի բոլոր զորատեսակների անձնակազմերը գործում էին պատասխանատվության մեծ զգացումով։ Հրետանավորները և գնդացրորդները հարվածի տակ էին վերցրել թշնամու կրակակետերը, տանկիստները հմտորեն աջակցում էին հետևակին՝ արագ հաղթահարելու հակառակորդի դիմադրությունը, իսկ հետևակն էլ իր հերթին ամրապնդում էր ձեռք բերած հաջողությունը։ Սակրավորներն արհամարհելով մահը, գնդակոծության ու ռումբերի պայթյունների տակ կառուցում էին կամուրջներ, բացում անցուղիներ նպաստում մեր զորքերի անընդհատ աճող հարձակման թափին, կապավորներն անձնազոհ ու համարձակ գործողություններով անում էին ամեն ինչ՝ ապահովելու հրամանատարության ռադիո-հեռախոսային անխափան կապը, սանիտարները, բժշկական անձնակազմերը պայքարում էին յուրաքանչյուր ռազմիկի կյանքի համար։ Իրենց բարձրության վրա գտնվեցին բանակների, դիվիզիաների, զորամասերի, ստորաբաժանումների հրամանատարները, շտաբների ղեկավարները, զորատեսակների հրամանատարները, քաղօրգանները, որոնք դրսևորեցին թշնամու պաշտպանությունը ճեղքելու, մարտական գործողությունները ղեկավարելու, զորքերը կառավարելու, ռազմական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություն ու ճկունություն։

---

[91] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 378.

Մարտական գործողությունների ամբողջ ընթացքում սովետական բազմազգ ռազմիկները՝ ռուսները, ուկրաինացիները, բելոռուսները, ղազախները, վրացիները, ադրբեջանցիները, հայերը, թաթարները և այլ ազգությունների զավակները հոգով ու սրտով միաձուլված կռվում էին անձնազոհությամբ։ Հակառակորդի պաշտպանությունը գրոհող 63-րդ գվարդիական, 72-րդ և 125-րդ հրաձգային դիվիզիաներում 1944 թ. սկզբներին կար 16598 ռուս և 3782 այլ ազգությունների պատկանող ռազմիկներ[92]։ 381-րդ հրաձգային դիվիզիայում հաշվվում էր ռուս՝ 3300, ուկրաինացի՝ 381, բելոռուս՝ 111, ղազախ՝ 101, ուզբեկ՝ 74, կիրգիզ՝ 30, ադրբեջանցի՝ 21[93] և այլ ազգություններ։ Հարձակման առաջին իսկ օրը 381-րդ հրաձգային դիվիզիայից բազմաթիվ ռազմիկներ ներկայացվեցին պարգևատրումների, իսկ թաթար Գ. Ա. Բագաուտդինովին, ուզբեկ Նաբիջան Մինբաևին և ռուս Վ. Տ. Ռուբշենկովին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

Բազմաթիվ հերոս մարտիկներ էին կռվում Սովետական Միության հերոս, գեներալ-մայոր Ա. Ֆ. Շչեգլովի 63-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայում։ Ֆիններին պաշտպանության առաջին գիծը։ հաղթահարելու գործում 63-րդ գվարդիական հրաձգային դիվիզիային մեծ աջակցություն ցույց տվեց հակաօդային պաշտպանության, կրկնակի կարմրադրոշ 83-րդ առանձին զենիթային հրետանային բրիգադի կապիտան Արշավիր Սարգսի Քարամյանի հրամանատարությամբ գործող հրետանային դիվիզիոնի հրետանավորները։ Կարելական պարանոցի պաշտպանությունը ճեղքելու ժամանակ Քարամյանը գտնվում էր 63-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի հրետանու հրամանատարի դիտակետում և այնտեղից ղեկավարում ու ուղղություն տալիս իր զենիթայիններին։ Նրանք հունիսի 10-ին ոչնչացրին երկու ականանետային և երեք հրետանային մարտկոցներ և նոր մղեցին Ստարի Բելոստրով—Ալեքսանդրովկա ճանապարհի արևմտյան շրջանից հակահարձակման անցած թշնամու մի շարք գրոհները։ Կապիտան Արշավիր Քարամյանը պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով[94]։ Համառ մարտերից հետո գվարդիականները ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը և դրա-

---

92 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 1192, ց. 1, գ. 1, թ. 19, 72-րդ հրաձգ. դիվ., ց. 1, գ. 1, թ. 51, ֆ. 1339, ց. 1, գ. 1, թ. 24։

93 Նույն տեղում, ֆ. 381-րդ հրաձգ. դիվ., ց. 484435, գ. 1, թ. 12։

94 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 1068, թ. 13։

վնցին Ստարի Բելոստրովը։ Շարունակելով հարձակումը, դիվիզիան մոտեցավ Թշնամու պաշտպանության հզոր հանգույց Կիվենապին։ Ընթացքով սկսվեց գրոհը։ Լավագույնը գնդապետ Ա. Գ. Աֆանասևի 190-րդ գվարդիական հրաձգային գունդն էր։ Գրոհի ժամանակ աչքի ընկավ 188-րդ հրաձգային գնդի մարտիկ, Փառքի 2-րդ և 3-րդ աստիճանների շքանշանակիր Ն. Ա. Զալետովը։ Մարտի լարված պահին, երբ շարքից դուրս եկավ վաշտի հրամանատարը, կոմունիստ Զալետովն իր վրա վերցրեց հրամանատարությունը և դրանով ապահովեց հարձակման հաջողությունը։ Ցուցաբերած արիության համար նա պարգևատրվեց Փառքի 1-ին աստիճանի շքանշանով և Լենինգրադի ռազմաճակատում առաջինը դարձավ փառքի բոլոր աստիճանների շքանշանի ասպետ[95]։

Հակառակորդի պաշտպանությունը ճեղքելու համար հունիսի 11-ին մեր հայրենիքի մայրաքաղաք Մոսկվան հրավառություն տվեց Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի պատվին։ Նույն օրը հարձակման անցավ Լենինգրադյան ռազմաճակատի 23-րդ բանակը։

Ֆինների պաշտպանության 2-րդ գիծը ճեղքելու համար կատարվեց զորքերի վերախմբավորում, ստեղծվեց հրետանային ուժեղ բռունցք, յուրաքանչյուր կիլոմետրի վրա կենտրոնացվեց 250 թնդանոթ ու ականանետ[96]։

Օգտագործելով փոքր դադարը, քաղաքացիները զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարների հետ միասին նորից սկսեցին զբաղվել գրոհիչ ջոկատների կազմավորման, այն կոմունիստներով ու կոմերիտականներով համալրման կարևոր գործով։ Գրոհիչ գումարտակներում ընտրվեցին համարձակ առաջնորդներ, հիմնականում կոմունիստներ ու կոմերիտականներ, որոնք առաջինը պետք է բարձրանային և իրենց ետևից գրոհի տանեին մարտիկներին։ 64-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի յուրաքանչյուր գրոհիչ գումարտակում հաշվվում էր 266 կոմունիստ և 399 կոմերիտական։ 63-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի կոմունիստ, գրոհի առաջնորդ ավագ Վ. Պ. Տարականովը գրոհից առաջ մի գրավոր երդում ուղարկեց վաշտի մարտիկներին։ «Վաշտի անձնակազմին,— գրում է նա,— երդման խոստում եմ տալիս, որ առաջինը կներխուժեմ թշնամու խրամատը։ Կոչ եմ անում մարտիկներին հետևել իմ օրինակին»։ Տարականովը կատարեց իր խոստումը։ Նա առաջինը ներխուժեց թշնամու խրամատը, ոչնչացրեց 9-ը ֆինների և

[95] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 383.

[96] Նույն տեղում, էջ 384։

դրված դղոտի վրա ամրացրեց կարմիր դրոշակ[97]։ Խիզախ ռազմիկը պարգևատրվեց Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով։ Մարտերի ընթացքում շատ ռազմիկներ դիմումներ էին տալիս կուսակցության շարքերն ընդունվելու համար։ 21-րդ բանակի քաղբաժնի պետ գնդապետ Ա. Ա. Բիստրովի 1944 թ. հունիսի 13-ի զեկուցագրից երևում է, որ հարձակման առաջին օրերին 45-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայում ստացվել է 450 դիմում, 63-րդ գվարդիական դիվիզիայում՝ մինչև 500, 64-րդում՝ 580, 72-րդում՝ 230, 109-րդում՝ 160[98]։ Անձնակազմի բարոյաքաղաքական ու մարտական ոգու բարձրացման գործում հսկայական նշանակություն ունեցան «Правда», «Красная звезда», ռազմաճակատային «На страже Родины», բանակային «Боевой натиск», «Знамя победы» և մյուս զինվորական թերթերում տպագրված Վ. Վիշնևսկու, Կ. Սիմոնովի, Ի. Էրենբուրգի, Լ. Դանիլևի, Դ. Ռուդնևի, Ն. Վորոնովի, Վ. Լուկինի և ուրիշների հոդվածները[99]։

Հունիսի 14-ին հրետանային ու ավիացիոն ուժեղ զանգվածային նախապատրաստությունից հետո 21-րդ բանակը սկսեց ֆիններին երկրորդ պաշտպանության գիծը ճեղքելու մարտական գործողությունները։ Գեներալ-լեյտենանտ Ի. Ֆ. Ալֆերովի 109-րդ հրաձգային կորպուսի միավորումները մխրճվեցին հակառակորդի պաշտպանության մեջ։ Համառ ու արյունալի մարտեր բռնկվեցին Կուտերսելկյա պաշտպանական հանգույցի համար։ Սովետական ռազմիկների անընդհատ ծավալվող գրոհը կասեցնելու համար ֆինները նետվում էին ձեռնամարտի։ Բայց դրանք անզոր փորձեր էին՝ կասեցնելու սկսված հուժկու հարձակումը։ Օրվա վերջին գեներալ-մայոր Ի. Ի. Յաստրեբովի 72-րդ հրաձգային դիվիզիան գրոհով գրավեց պաշտպանական այդ կարևոր հանգույցը, իսկ գեներալ-մայոր Ն. Ա. Տրուշկինի 109-րդ հրաձգային դիվիզիան՝ Սախակյուլա հենակետը։ Հայտնի դարձան թշնամու պաշտպանությունը ճեղքող առաջին խիզախների անունները։ Հերոսների մեջ էր ուդմուրտ ժողովրդի զավակ, սերժանտ Լ. Ա. Արդաշևը։ Քսանամյա այդ պատանին գրոհի ամենալարված պահին փոխարինեց շարքից դուրս եկած վաշտի հրամանատարին և համարձակորեն իր ետևից տարավ մարտիկներին։ Արդաշևին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Այդ բարձր պարգևին ետմահու արժանացան սերժանտներ Վ. Ա. Բլոխինը և Վ. Վ.

---

[97] «Военно-исторический журнал», № 6, 1974, с. 16.

[98] Նույն տեղում, էջ 17։

[99] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 385.

Կորաբլինը։ Նրանք հերոսաբար զոհվեցին հարձակման առաջին օրը՝ հունիսի 14-ին[100]։

Սկսված հաջող հարձակումը զարգացնելու համար 21-րդ բանակի հրամանատար գեներալ-գնդապետ Դ. Ն. Գուսևը մարտի մեջ մտցրեց գեներալ-լեյտենանտ Մ. Ֆ. Տիխոնովի 108-րդ հրաձգային կորպուսը։ Մարտերն ավելի ուժգնորեն բորբոքվեցին։ Կորպուսի միավորումները մոտեցան Մետսյակյուլա պաշտպանության շրջանին, ուր յուրաքանչյուր կիլոմետրի վրա կար 48 երկաթբետոնե պաշտպանական կառույցներ՝ շրջանաձև կրակակետերով։ 46-րդ հրաձգային դիվիզիան, որին վիճակված էր հաղթահարել պաշտպանական այդ ուժեղ հանգույցը, 90 բոպն կործանիչ կրակի հեղեղ տեղաց հակառակորդի գլխին։ Իր կրակային հզորությամբ հունիսի 14-ին դիվիզիային աջակցում էր 393-րդ հրետանային գունդը։ Շատ եռանդուն էր գործում գնդի հրամանատարի քաղաքով տեղակալ, Լենինգրադի շրջափակման վերացման մարտերի հերոս, բաքվեցի մայոր Ռուբեն Հարությունովը։ Հրետանու ու ականանետների գնդակոծության տակ նա կենդանի խոսքով և անձնական օրինակով ոգևորում էր անձնակազմին՝ մինչև վերջ կատարելու մարտական խնդիրը։ Պաշտպանությունը ճեղքելուց հետո հանդիպակաց ջրային արգելքը հաղթահարելու համար Հարությունովին հանձնարարվեց արագ կառուցել կամուրջ։ Հինգ ժամվա ընթացքում նրա ղեկավարությամբ կամուրջը կառուցվեց և դրանով հնարավոր դարձավ արագ մյուս ափը տեղափոխել հետևակ և ռազմական տեխնիկա։ Մարտական հրամանը ժամանակին ու օրինակելիորեն կատարելու համար Հարությունովը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[101]։

Այդ օրը բարձր մարտունակություն դրսևորեցին դիվիզիայի 314-րդ և 340-րդ հրաձգային գնդերը։ Առաջինը գրոհի նետվեցին կապիտաններ Ի. Ս. Զենինի և Ֆ. Ս. Միխալևի գումարտակները։ 314-րդ հրաձգային գունդը փոխգնդապետ Արշալույս Հայրապետյանի հրամանատարությամբ հաղթահարեց փշալարային ու ականապատված գոտին և գրավեց մի շարք դոտեր։ Արշալույս Հայրապետյանը ճանաչված հրամանատար էր։ «Մարտում վճռական է ու համարձակ,— գրված է նրա բնութագրում,— իր որոշումները կարողանում է հմտորեն իրագործել կյանքում։ Մարտի ընթացքում ունի ուժեղ կամք ու համառություն»[102]։ Երկաթե կամքի տեր

---

100 *А. В. Буров*, Твои герои, Ленинград, с. 563, 567, 581.

101 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 801, թ. 66։

102 ՍՍՀՄ ՊՄԿԱ, Ա. Ն. Հայրապետյանի անձնական գործ, թ. 6։

այդ հրամանատարը միայն Լենինգրադի համար մղված մարտերի համար պարգևատրվեց Կարմիր աստղի և երկու Կարմիր դրոշի շքանշաններով։ Հուժկու գրոհով Մետսյակյուլան հաղթահարվեց 46-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերի կողմից։ Հակառակորդի պաշտպանությունը հաղթահարվեց նաև ռազմաճակատի մյուս հատվածներում։ Այդ կապակցությամբ անգլիական «Դեյլի մեյլ» թերթը գրեց. «Այժմ Կարելական պարանոցում ռուսները ճեղքեցին երկաթբետոնային գիծը, որը ինչպես հաստատում են, պատկանում էր աշխարհի ամենաուժեղների թվին»[103]։ Հունիսի 18-ին 21-րդ բանակի զորամասերը մոտեցան երրորդ պաշտպանական գծին, հանրահայտ՝ Մաններհեյմին։ Այդ օրը նորից մեծ հաջողության հասավ գնդապետ Ս. Ն. Բորշչովի 46-րդ հրաձգային դիվիզիան։ Հետախույզների մարտական խումբը՝ ավագ լեյտենանտ Վ. Մ. Ռաշկովսկու հրամանատարությամբ, հակառակորդի կողմից թողնված հեծանիվներով թափանցեց Թշնամու խոր թիկունքը և համարձակ գրոհով գրավեց մի քանի գոտեր։ Անսպասելի գրոհից հանկարծակիի եկած հակառակորդը խուճապահար նահանջեց։ Այդ հաջողությունը զարգացնելով, դիվիզիայի զորամասերը նույն օրը գրավեցին Կոյլիստո (Պրիմորսկ) նավահանգիստը[104]։ Նույն օրը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Լենինգրադյան ռազմաճակատի հրամանատար Լ. Ա. Գովորովին շնորհվեց Սովետական Միության մարշալի կոչում։ Հունիսի 19-ին սովետական զորքերը կոտրելով ֆիններին դիմադրությունն, ընդհուպ մոտեցան Վիբորգի պաշտպանական գոտուն։ Նույն օրը ֆիններին պաշտպանության երրորդ գիծը դուրս եկան 23-րդ բանակի զորքերը։ Հունվարի 20-ին, առավոտյան 21-րդ բանակի 108-րդ հրաձգային կորպուսի առաջավոր զորամասերը մտան Վիբորգ։ Սկսվեցին փողոցային մարտերը։ Օրվա վերջին Վիբորգը լրիվ գրավվեց մեր զորքերի կողմից։ Հաջորդ օրը Մոսկվան մեծ հաղթանակի առթիվ հրետանային հրավառությամբ ողջունեց Լենինգրադյան ռազմաճակատի զորքերին։

Սումմա, Խումոլա, Բարոչինո ամրացված բնակավայրերի և Վիբորգի գրավման մարտերում արիության ու խիզախության բաղում օրինակներ դրսևորեց 26-րդ գվարդիական առանձին ծանր տանկային գունդը՝ փոխգնդապետ Սայենկոյի գլխավորությամբ։ Հատկապես աչքի

---

[103] „Правда“, 16 июня 1944 г.

[104] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 389—390.

ընկավ գնդի հարվածային շարժական խմբի տանկային վաշտը՝ ավագ լեյտենանտ Ա. Գ. Խարլովի հրամանատարությամբ։ Տանկիստները մի քանի օրվա ընթացքում ծանր կորուստներ պատճառեցին հակառակորդին, ոչնչացրին 5 գոտ, 7 թնդանոթ, 10 գնդացրային կետ և 100 զինվոր ու սպա[105]։ Հունիսի 21-ին, Տամիսուո կայարանի համար մղված մարտերում, հրամանատարական տանկը ճեղքելով թշնամու պաշտպանությունը, սեպի նման խրվեց նրա ուժերի դասավորության մեջ և թնդանոթային կրակով գետնին հավասարեցրեց մի քանի գոտներ ու դզոտներ։ Տանկի հրամանատար, լեյտենանտ Ֆ. Ա. Միրոնովը ոչնչացրեց 5 թնդանոթ, 4 գնդացրային կետ, 3 ականանետային հաշվարկ և 40 զինվոր ու սպա։ Հակառակորդը հրետանային ուժեղ կրակ բացեց տանկի վրա։ Արկերից մեկը դիպավ տանկին։ Ֆիններները շրջապատեցին տանկը և խիզախներին առաջարկեցին գերի հանձնվել։ Չորս տանկիստներ՝ տանկային վաշտի հրամանատար Ալեքսեյ Խարլովը, տանկի հրամանատար Ֆիլիպ Միրոնովը, մեքենավար Անատոլի Սկորոբոգատովը և հրանոթի հրամանատար Վիկտոր Վագին մինչև վերջին փամփուշտը կռվեցին։ Հրամանատարական կետում ռադիստը ընդունեց մի քանի խոսք. «զոհվում ենք, բայց չենք հանձնվում»։ Ֆիններները հրկիզեցին տանկը։ Բոլոր չորս խիզախները զոհվեցին, հերոսական մահը գերադասելով ամոթալի գերությունից[106]։ Նրանց համահու շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Այդ նույն գնդի կազմում, հերոսների հետ ուսուսի, թշնամու դեմ մարտնչեց ծանր տանկի հրանոթի հրամանատար Ստեփան Բաբայի Ստեփանյանը։ Տանկիստը միայն Վիբորգի մատույցներում ոչնչացրեց թշնամու 3 գոտ, 2 թնդանոթ, 3 գնդացիր և 20 հիտլերական։ Հայրդին պարգևատրվեց Փառքի 3-րդ աստիճանի շքանշանով։ 1944 թ. հուլիսին գնդի կուսակազմակերպությունը Ստեփանյանին ընդունեց կոմունիստական կուսակցության շարքերը։ Ստեփանյանն իր տանկով անցավ Մերձբալթիկայով և հաղթարշավն ավարտեց Չեխոսլովակիայում։ Մարտերում ցուցաբերած արիության համար նա դարձավ Փառքի երեք շքանշանների լրիվ ասպետ և բացի այդ պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[107]։

Վիբորգից հյուսիս, հուլիսի 3-ին Իխանտալա բնակավայրի շրջա-

---

105 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 795756, գ. 51, թ. 98։

106 Նույն տեղում, ֆ. 33, ց. 793756, գ. 31, թ. 219։

107 Հ. Մելիքսեթյան, Մ. Սահակյան, Փառքի շքանշանի հայ ասպետները, Երևան, 1982, էջ 110։

նում բռնկված ծանր ու դժվարին մարտերում հերոսաբար զոհվեց Լենինգրադյան ռազմաճակատում ճանաչված քաջաշխատող ու մարտական հրամանատար, 63-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 188-րդ գնդի հրամանատարի քաղգծով տեղակալ մայոր Արամ Արշակի Սիլանյանը։ Արխիվային փաստաթղթերից մեկում նշված է, որ Կարելական պարանոցում դիվիզիայի հարձակողական ամբողջ գործողությունների ընթացքում նա միշտ կենդանի խոսքով ու անձնական օրինակով ոգևորել ու բարոյական լիցք է հաղորդել ռազմիկներին։ Նա հուլիսի 3-ին, գտնվելով 1-ին հրաձգային գումարտակում, մարտիկներին գրոհի տարավ հակառակորդի ուժեղ պաշտպանական հենակետի վրա և հերոսաբար զոհվեց[108]։

Հրամանատարությունը բարձր գնահատեց մայոր Սիլանյանի սխրանքը, նրան ետմահու պարգևատրելով Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով։ Մինչ այդ խիզախ քաջաշխատողը Լենինգրադի շրջանում տեղի ունեցած նախորդ մարտերում ցուցաբերած սխրանքների համար արժանացել էր Կարմիր դրոշի, Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի և Կարմիր աստղի շքանշանների։

Լենինգրադից հյուսիս, Վիբորգի շրջանում տեղի ունեցած մարտերում 1944 թ. հունիսի 25-ին հերոսաբար զոհվեց Լենինի շքանշանակիր, 45-րդ գվարդիական Կրասնոսելսկյան կարմրադրոշ հրաձգային գնդի շարքային զինվոր, Ղափանի շրջանի Խոտանան գյուղի բնակիչ Ասատուր Սահակի Պետրոսյանը։ Նա Լենինգրադի հերոսամարտի ակտիվ մասնակիցներից էր, մարտական ընկերների հետ միասին արիաբար դիմացել էր շրջափակման դաժան օրերին և հաղթող դուրս եկել։ Պետրոսյանը արիաբար վրեժ էր լուծում նահատակված հազարավոր լենինգրադցիների, դաժան մարտերում քաջաբար զոհված իր տղաների՝ Ալեքսանդրի ու Երեմի համար։

Ասատուր Պետրոսյանի մարտական ընկերները հողին հանձնեցին խիզախ հայորդուն՝ Լենինգրադի մարզի Վիբորգյան շրջանի արևելյան ծայրամասում գտնվող Լյամպիյալյա գյուղի զինվորական եղբայրական գերեզմանոցում։ Տարիներ անց հերոսի շիրմին այցի գնացին նրա աղջիկը՝ Ժենյան, փեսան՝ Տիգրանը և թոռը՝ Արարատը, որոնք Ղափանից տարած մի բուռ հողը խառնեցին նրա գերեզմանի հողին։ Այդ մարտերին ակտիվորեն մասնակցեց նաև Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպատ

---

108 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 680, թ. 169, գ. 586, թ. 144։

գյուղի բնակիչ, 183-րդ առանձին ղենիթային հրետանու հրամանատարի տեղակալ Տիգրան Հարությունի Խեչումյանը։ Այստեղ նա ծանր վիրավորվեց։

Վիբորգը գրավելուց հետո, Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի առաջշարժումը հյուսիսարևմտյան ուղղությամբ դանդաղեց հակառակորդի համառ դիմադրության պատճառով։ Մինչև հունիսի վերջը զորքերն առաջ շարժվեցին 8—10 կիլոմետր։ Հարձակողական գործողությունների 10 օրվա ընթացքում զորքերի բոլոր ստորաբաժանումներում գընում էր լարված քաղաշխատանք։ Այդ ժամանակաշրջանում կուսակցության շարքերն ընդունվեցին 3520 անդամ և 2328 անդամության թեկնածու[109]։ Հակառակորդի դիմադրությունը ընկճելու համար ռազմաճակատի հրամանատարությունը որոշեց Բալթյան կարմրադրոշ նավատորմի և 59-րդ բանակի ուժերով մաքրել Վիբորգյան ծոցի կղզիները և դեսանտ իջեցնել ֆիններին պաշտպանության թիկունքը։

Հուլիսի 4-ին Բալթյան կարմրադրոշ նավատորմի փոխադրանավերը 224-րդ հրաձգային զորամասերին դեսանտ իջեցրին մի քանի կղզիներում։ 143-րդ հրաձգային գունդը համառ մարտերից հետո ֆիններից մաքրեց Սուոնիոնսաարի և Էսիսաարի կղզիները։ 185-րդ հրաձգային գունդն ազատագրեց Ռավանսաարի կղզին։ Ծանր էր 160-րդ հրաձգային գնդի վիճակը, որը մարտեր էր մղում Տեյկարսաարի կղզին գրավելու համար։ Գունդը հանդիպելով հակառակորդի հակադեսանտային ուժեղ պաշտպանությանը և ականապատված դաշտերի, կրեց ծանր կորուստներ։ Թշնամին մարտի մեջ մտցնելով թարմ ուժեր, ձգտում էր ամեն կերպ սովետական ռազմիկներին դուրս մղել կղզուց, բայց ապարդյուն։ 160-րդ հրաձգային գունդն իր ձեռքում պահեց կղզու հարավային մասը, մինչև հաջորդ օրը օգնության հասան գնդապետ Մ. Դ. Պապչենկոյի 124-րդ հրաձգային դիվիզիայի զորամասերը։ Մինչև հուլիսի 6-ը Վիբորգյան ծոցի կղզիները լրիվ ազատագրվեցին սովետական զորքերի կողմից։

Ծովում ու ցամաքում մղված մարտերում աչքի ընկան սովետական եղբայրական ժողովուրդների բազմաթիվ զավակներ։ Հերոսաբար էր կռվում վրաց ժողովրդի զավակ, Փառքի 2-րդ և 3-րդ աստիճանների շքանշանների ասպետ, 224-րդ հրաձգային դիվիզիայի 160-րդ հրաձգային գնդի հետախուզական դասակի հրամանատարի տեղակալ Իվան Վլադիմիրովիչ Գզիրիշվիլին։

---

109 «История второй мировой войны 1939—1945», т. 9, с. 34.

Երբ 224-րդ հրաձգային դիվիզիայի 160-րդ հրաձգային գունդը Տեյկարսաարի կղզում ծանր մարտեր էր մղում հակառակորդի գերակշռող ուժերի դեմ և կղզու հարավային մասում մի փոքր հողակտոր էր պահել իր ձեռքում, Գոլիրիշվիլին առաջինը բարձրացավ և իր ետևից մարտիկներին հակագրոհի տարավ գրոհող հակառակորդի դեմ։ Խիզախ ռազմիկը պարգևատրվեց Փառքի 1-ին աստիճանի շքանշանով[110]։

Կղզիների ազատագրման մարտերում աչքի ընկավ նույն դիվիզիայի «В бой за родину» թերթի խմբագրի տեղակալ կապիտան Հարությունն Ներսեսի Սարգսյանը։ «Վիբորգի ծոցի կղզիները սպիտակ ֆիններից մաքրելու հարձակողական գործողությունների ընթացքում,— գրված է արխիվային փաստաթղթերից մեկում,— ընկ. Սարգսյանը նույնպես գտավ իր տեղը։ Որտեղ որոշվում էր գլխավոր խնդիրը, որտեղ գնում էր կատաղի մարտ, այնտեղ կարելի էր տեսնել մարտական լրագրողին»[111]։

Կղզիները ազատագրող 224-րդ և 124-րդ հրաձգային դիվիզիաները բազմազգ էին։ 224-րդում 1944 թ. սկզբներին կար 5226 ռուս, 494 ուկրաինացի, 119 բելոռուս, 152 ղազախ, 71 ուզբեկ և այլ ազգությունների ներկայացուցիչներ[112]։ 124-րդում հաշվվում էր 4533 ռուս, 498 ուկրաինացի, 146 բելոռուս, 14 ղազախ, 139 Ղաթար, 101 հրեա, 47 ուզբեկ, 17 հայ և այլ ազգությունների ներկայացուցիչներ[113]։ 59-րդ բանակի 1944 թ. հուլիսի 10-ի քաղաքական ցուցագիրը, ուղղված Լենինգրադյան ռազմաճակատի հրամանատարությանը, ամբողջովին նվիրված էր բանակում գտնվող ազգային փոքրամասնություններին պատկանող ռազմիկների մարտական սխրանքներին։ «Կղզիների համար մղված մարտերում,— գրված է քաղաքական ցուցագրում,— հերոսության, արիության ու խիզախության օրինակներ ցույց տվին բոլոր ազգությունների մարտիկները։ Նրանք մարտընչում էին գերմանաֆիննական զավթիչների դեմ՝ ազատագրելով սովետական երկիրը։ Կան ռազմիկներ, որոնց մարտական ուղին կարմիր բանակի ուղին է։ Այն լի է սխրանքներով, որը պսակվել է փառքով։ Այդ մարտիկներից է վրաց ժողովրդի զավակ, 224-րդ Գատչինյան հրաձգային դիվիզիայի հետախույզ Վանո Գոլիրիշվիլին։ Տեյկարսաարի կղզում ֆիննական ավտոմատավորների խումբն անտառով թափանցելով մեր ստորաբաժանումների սահմանագիծը, փորձեց գրոհել գնդի հրամանատարական կետը։ Կոմունիստ, ավագ Գոլիրիշվիլին, սերժանտ Կո-

110 Նույն տեղում, ֆ. 33, ց. 686046, գ. 25, թ. 239։

111 Նույն տեղում, ֆ. 33, ց. 690155, գ. 624, թ. 136։

112 Նույն տեղում, ֆ. 224-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 484336, գ. 1, թ. 14։

113 Նույն տեղում, ֆ. 124-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 1, թ. 21։

լոսովի և կրասեր սերժանտ Մուվիկայի հետ ֆիններին դիմավորեցին ուժեղ կրակով։ Այդ գոտեմարտում խիզախ մարտիկ Գվիրիշվիլին ըստանեց վեց ֆիննի, իսկ երկուսին գերի վերցրեց։ Այդ նույն գնդի շարքային Նսայանցը գտնվում էր դեպի Թշնամու կողմից գրավված կղզին շարժվող կատերի վրա։ Թշնամու ականի ուղղակի հարվածից կատերի վրա հրդեհ բռնկվեց։ Նսայանցն առաջինը նետվեց հանգցնելու հրդեհը, կրակի բոցերը այրեցին նրա դեմքը և ձեռքերը, սկսվեց այրվել հագուստը, ուշադրություն չդարձնելով, խիզախ ռազմիկը պայքարում էր բոցերի դեմ։ Շուտով հրդեհը հանգցվեց։ Նա իր հերոսական արարքով կանխեց կատերում գտնվող ռազմամթերքի պայթելը և փրկեց ընկերների կյանքը»։ Քաղվածքագրում նշված էր 124-րդ հրաձգային դիվիզիայի շարքայիններ Թաթար Իբրահիմովի և ուզբեկ Ուրալ Խուդայբերդիևի և ավագ սերժանտ Բ. Ս. Գորոյանի մարտական սխրանքների մասին։ Վերջինս իր ջոկի հետ երկու օր առանց քնի ու հանգստի, մինչև գոտկատեղը ջրի մեջ, կառուցեց նավամատույց։ Հրետանային ու ականանետային կրակի տակ անձնական օրինակով Գորոյանը ոգևորում էր իր ենթականերին[114]։ Ֆիննական անմատչելի թվացող ամրությունների դեմ այդպես էին կռվում և գրոհի գնում կարմիր բանակի տարբեր ազգությունների պատկանող մարտիկները։ Հայրենիքի հանդեպ ունեցած սերն ու նվիրվածությունը ձուլել էր նրանց հոգիները, դարձրել ունակ՝ հաղթահարելու ամեն տեսակ դժվարություններ՝ հանուն հաղթանակի։

Կարելական պարանոցում Լենինգրադյան ռազմաճակատի աջ թևում մարտական զգալի հաջողությունների հասան 23-րդ բանակի զորքերը։ 1944 թ. սկզբին բանակի 13-րդ, 92-րդ, 142-րդ, 177-րդ և 281-րդ հրաձգային դիվիզիաներում հաշվվում էր՝ ռուս՝ 22764, ուկրաինացի՝ 1910, բելոռուս՝ 648, ղազախ՝ 528, ուզբեկ՝ 271, կիրգիզ՝ 81, վրացի՝ 72, թաթար՝ 67, ադրբեջանցի՝ 54, հայ՝ 52, թուրքմեն՝ 31 և այլ ազգությունների ներկայացուցիչներ[115]։

Հուլիսի 9-ին բանակի 115-րդ հրաձգային կորպուսի զորամասերը սկսեցին գետանցել Վուոկսի ջրային համակարգը։ Հատկապես աչքի ընկան 142-րդ հրաձգային դիվիզիայի գնդապետներ Սոննիկովի և Բելոուսովի 461-րդ և 588-րդ հրաձգային գնդերը, որոնք հրետանային ուժեղ գնդակոծության տակ շատ արագ անցան գետը և դիրքավորվեցին

---

114 Նույն տեղում, ֆ. 416, ց. 10444, գ. 201, թ. 30—31։

115 Նույն տեղում, ֆ. 1074, ց. 1 գ. 1, թ. 23, ֆ. 1259, ց. 1, գ. 1, թ. 24, ֆ. 142-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 484204, գ. 1, թ. 13, ֆ. 177-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 484382, գ. 1, թ. 28, ֆ. 281-րդ հրաձգային դիվիզիայի, ց. 484281, գ. 1, թ. 13։

մյուս ափին։ Այդ երկու գնդերից 8 ռազմիկներ՝ Գ. Ֆ. Սիմանկինին, Դ. Դ. Սկվորցովին, Ս. Պ. Կոբեցին, Ն. Պ. Օսիևին, Ա. Յե. Բորիսյուկին, Պ. Ֆ. Գոնչարովին, Ա. Մ. Իվանովին և Պ. Ա. Պոտրյասովին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Իսկ ամբողջ դիվիզիայից 1450 ռազմիկներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով[116]։ Բանակի հարձակողական գործողությունների հաջողությունը մեծ չափով պայմանավորված էր հետախուզական տվյալների ճշգրտությունից։ Այդ գործում իր բարձրության վրա գտնվեց 23-րդ բանակի հրետանու շտաբի հետախուզական բաժանմունքը, մայոր Պյոտր Անտոնի Զունչուզովի գլխավորությամբ։ Բաժանմունքը հրամանատարությանը արժեքավոր տեղեկություններ հաղորդեց հակառակորդի կրակակետերի դասավորության մասին և նշեց այն տեղը, որտեղից նպատակահարմար էր գետանցել Վուոկսան։ Հայ ռազմիկը պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով[117]։

Կարելական պարանոցում Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի ծանր հարվածից դեռ ուշքի չեկած սպիտակ ֆիններին մի նոր, ուժեղ հարված ստացան հարավային Կարելիայում՝ հունիսի 21-ին հարձակման անցած բանակի գեներալ Կ. Ա. Մերեցկովի Կարելական ռազմաճակատի զորքերի կողմից։ Լոդեյնոյե Պոլեյի շրջանում Սվիրի գետանցման ժամանակ բազում հերոսական սխրանքներ գործեցին սովետական ռազմիկները։ Նրանցից ամենախիզախներին՝ թվով 16 հոգու՝ 7-րդ բանակի 99-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 300-րդ հրաձգային գնդի և 98-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի 296-րդ գվարդիական հրաձգային գնդի ռազմիկներ Ա. Մ. Ալիևին, Ա. Ֆ. Բարիշևին, Ս. Բեկբոսունովին, Վ. Պ. Ելյուտինին, Ի. Ս. Ջաժիգինին, Վ. Ա. Մալիշևին, Վ. Ա. Մարկելովին, Ի. Դ. Մորոզովին, Ի. Պ. Միտարևին, Վ. Ի. Նեմչինովին, Պ. Պ. Պավլովին, Ի. Կ. Պանկովին, Մ. Ռ. Պոպովին, Մ. Ի. Տիխոնովին, Բ. Ն. Յունոսովին և Ն. Մ. Զուխարևին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Հունիսի 21-ից մինչև 25-ը Ղազախստանյան 310-րդ հրաձգային դիվիզիայի բժշկական ծառայության լեյտենանտ Աբու Մուհամմեդջանովի սանդասակը ռազմադաշտից դուրս բերեց 42 վիրավոր ռազմիկ[118]։

99-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի կազմում աշքի ըն-

---

116 «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 400.

117 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 7326, թ. 30.

118 *П. С. Белан,* Казахстанцы в боях за Ленинград, с. 217—218.

կավ նաև 303-րդ գվարդիական հրաձգային գնդի ավտոմատավորների վաշտի հրամանատար, գվարդիայի ավագ լեյտենանտ Ալեքսան Մաթևոսի Կիրակոսյանը։ Նրա վաշտը հունիսի 21-ին, հրետանային և ավիացիոն նախապատրաստությունից հետո, առաջիններից մեկը սկսեց Սվիր գետի անցումը։ Շնորհիվ Կիրակոսյանի հմտության, ձեռք բերվեցին գետանցման միջոցներ, կարճ ժամանակամիջոցում սակրավորների օգնությամբ պատրաստվեցին լաստեր և թշնամու կրակի տակ սկսվեց գետանցումը։ Սվիրի լայնությունը անցնում էր 300 մետրից, իսկ խորությունը՝ 5—7 մետր էր։ Ռումբերի և ականների պայթյուններից ջրի շատրվաններ էին բարձրանում, անընդհատ սուրում էին թշնամու գնդակները, բայց ոչինչ չէր կարող կանգնեցնել գվարդիականներին, որոնց գգալի մասը նախկին դեսանտայիններ էին, կոփված պարաշյուտիստներ։ Ինքը՝ հրամանատարը ուներ ՍՍՀՄ պարաշյուտային սպորտի հրահանգչի կոչում։ Ոտք դնելով Սվիրի ափին, դեսանտայինները հակառակորդին դուրս շպրտեցին գրաված դիրքերից և առաջ անցան ավելի քան 6 կմ։ Հարվածային խմբի ետևից գետն անցան նաև դիվիզիայի հիմնական ուժերը։ Հաջորդ օրը 37-րդ գվարդիական կորպուսի 98-րդ և 99-րդ գվարդիական դիվիզիաները 92-րդ տանկային գնդի աջակցությամբ հենակետը ավելի ընդլայնեցին։ Հունիսի 25-ին համառ մարտերից հետո ազատագրվեց Օլոնեցը, իսկ հունիսի 27-ին՝ Կարելո-Ֆիննական ՍՍՀ-ի մայրաքաղաք Պետրոզավոդսկը։ Սվիրի գետանցման ժամանակ գվարդիայի ավագ լեյտենանտ Ա. Մ. Կիրակոսյանը կոնտուզիա ստացավ, բայց մնաց շարքում և մինչև վերջ ղեկավարեց վաշտի գործողությունները։ Կարելական պարանոցում և Կարելիայում սովետական զորքերի հաղթանակից հետո խիզախ հայորդին այնուհետև ուկրաինական 3-րդ ռազմաճակատի կազմում մասնակցեց Ավստրիայի ու Հունգարիայի ազատագրման մարտերին։ 1944 թ. ապրիլի սկզբին 99-րդ գվարդիական հրաձգային դիվիզիան ծանր ու համառ մարտեր էր մղում ավստրիական Վիններ-Նոյշտադտ քաղաքը գրավելու համար։ ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության կենտրոնական արխիվում պահվող փաստաթղթերից մեկում գրված է. «1945 թ. ապրիլի 5-ին Վիններ-Նոյշտադտ (Ավստրիա) քաղաքի շրջանում ընկ. Կիրակոսյանը առաջինը իր վաշտով գրոհի նետվեց, շարժվելով առջևից, խիզախության անձնական օրինակով իր ետևից տարավ մարտիկներին։ Վաշտը շեշտակի գրոհով գերմանացիներին դուրս շպրտեց իրենց դիրքերից և հետապնդելով, ոչնչացրեց 70 հիտլերականի, գրավեց 3 գնդացիր և անմիջապես դրանցից

13—534

կրակ բացեց հակառակորդի վրա, որի շնորհիվ ապահովեց տեսակավորման խոշոր կայարանի գրավումը։ Գումարտակը կատարեց առաջադրանքը»[119]։ Նույն օրը Կիրակոսյանը ոտքից ծանր վիրավորվեց։ 303-րդ գվարդիական հրաձգային գնդի հրամանատար, Սովետական Միության հերոս, գվարդիայի փոխգնդապետ Սոկոլովը Ալեքսան Կիրակոսյանին ներկայացրեց շքանշանի, իսկ 37-րդ գվարդիական հրաձգային կորպուսի հրամանատար, գեներալ լեյտենանտ Պ. Վ. Միրոնովը 1945 թ. հունիսի 1-ի 057 հրամանով Ա. Մ. Կիրակոսյանին պարգևատրեց Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով։

7-րդ բանակի միավորումները գետանցելով Սվիրը և հաղթահարելով սպիտակ ֆիններին համառ դիմադրությունը, օգոստոսի 9-ին մոտեցան Ֆինլանդիայի պետական սահմանին։ Պետրոզավոդսկի ուղղությամբ համառ մարտեր էին մղում 32-րդ բանակի միավորումները։ 176-րդ հրաձգային դիվիզիայի 728-րդ հրետանային գնդի ականանետի նշանառու Ռուբեն Արտաշեսի Պապոյանը հուլիսի 31-ին գրոհի ժամանակ առաջինը մխրճվեց խրամատ և իր ավտոմատով ոչնչացրեց 4 սպիտակ ֆիններ, որտեղ էլ ծանր վիրավորվեց։ Վրա հասած ընկերները փորձեցին ուշքի բերել նրան, բայց ապարդյուն, Ռուբենը կենդանության նշաններ ցույց չէր տալիս։ Պապոյանին արդեն մեռած կարծելով՝ լեյտենանտ Գուրևիչը կարգադրեց վերցնել նրա փաստաթղթերը և հանձնել ուր հարկն է։ Մարտական ընկերները սգացին նրա կորուստը, մինչև Ռուբենը հաղթեց մահին։ Երեք օր շարունակ նա մաքառեց մահվան դեմ և վերջապես գերագույն ճիգեր գործադրելով, սողալով գնաց դեպի կրակոցների կողմը։ Մարդիկ նկատեցին նրան և տեղավորեցին Պետրոզավոդսկի զինվորական հոսպիտալում։ Ապաքինվելուց հետո Ռուբեն Պապոյանը կրկին վերադարձավ իր հարազատ գունդը։ Նրա կազմում Փառքի 2-րդ և

---

119 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 686196, գ. 1362, թ. 18։ Ալեքսան Մաթևոսի Կիրակոսյանը ծնվել է 1918 թ. Ախուրյանի շրջանի Այգարաց գյուղում։ Բանակ է զորակոչվել 1940 թ.։ 1941 թ. մասնակցել է սովետական զորքերի պաշտպանական ծանր մարտերին։ 1942 թ. օգոստոսին ավարտել է Խարկովի ռազմաքաղաքական ուսումնարանը (Տաշքենդում)։ 1942 թ. դեկտեմբերից մինչև 1943 թ. փետրվարը սովորել ու ավարտել է կարմիր բանակի հրամանատարական կազմի բարձրագույն ռազմաօդային դեսանտային զորքերի միացյալ դասընթացները։ 1943 թ. սկսած ծառայել է պարաշյուտադեսանտային տարբեր զորամասերում որպես պարաշյուտադեսանտային վաշտի հրամանատար, իսկ 1944 թ. հուլիսից՝ 99-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայում։ Բանակից զորացրվել է 1946 թ. մարտին։ Նա 1977 թ. մինչև 1985 թ. Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալն էր։ Այժմ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր կուլտուրայի ու պատմական հուշարձանների պահպանման ու շահագործման վարչության պետն է։

3-րդ աստիճանների շքանշանների ասպետը հաղթականորեն անցավ Մերձբալթիկայով, Լեհաստանի, Արևելյան Պրուսիայի տարածքներով և պատերազմն ավարտեց Չեխոսլովակիայում՝ 1945 թ մայիսին, արժանանալով Փառքի 1-ին աստիճանի շքանշանի, որը, սակայն, նրան հասավ պարգևատրումից շուրջ քսան տարի հետո[120]։

Սկվորցովի, Կոբեցի, Ալիևի, Յունոսովի, Բեկբոսունովի, Պապոյանի, Գլիրիշվիլու և նման տասնյակ հաղարավոր հերոսների հարվածների տակ Կարելական պարանոցում և Հարավային Կարելիայում ֆիննական բանակը ծանր պարտություն կրեց։ Նույն ժամանակաշրջանում Բելոռուսիայում, Ուկրաինայում, Մերձբալթիկայում ծանր պարտություններ կրեց նրա «հզոր» դաշնակիցը՝ ֆաշիստական Գերմանիան։ Ֆիննական կառավարող շրջանները կանգնեցին ընտրության առաջ՝ կամ վերջ տալ իրենց ժողովրդի համար այդ կործանարար պատերազմին, կամ էլ ընդունել ՍՍՀՄ-ի կողմից առաջարկված զինադադարի պայմանները։ Ֆաշիստական Գերմանիային հավատարմորեն ծառայող պրեզիդենտ Ռ. Ռյուտին հրաժարական տվեց։ Սեպտեմբերի 5-ին սովետական զորքերը դադարեցրին ռազմական գործողությունները Ֆինլանդիայի դեմ։ Սեպտեմբերի 19-ին ստորագրվեց զինադադարի համաձայնագիրը։

Այսպիսով, սովետական զորքերի հուժկու հարվածների տակ պատերազմից դուրս եկավ Գերմանիայի դաշնակիցներից մեկը՝ Ֆինլանդիան։ Լենինգրադի մարզն ամբողջությամբ ազատագրվեց։ Սովետական զորքերի հաղթանակը ռազմական ու քաղաքական մեծ նշանակություն ունեցավ։ Բալթյան կարմրադրոշ նավատորմի գործողությունների շառավիղն ավելի ընդլայնվեց։ Լենինգրադյան ռազմաճակատի զորքերը հնարավորություն ստացան իրենց հիմնական հարվածային ուժերն ուղղել Մերձբալթիկայում ամրացված ֆաշիստական «Հյուսիս» բանակների խմբի 18-րդ բանակի դեմ։ Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի կողմից «Կարելական պատնեշի» խորտակումը բարձր գնահատվեց կոմունիստական կուսակցության և Գերագույն գլխավոր հրամանատարության Ջորակայանի կողմից։ 48 միավորումներ ու զորամասեր ստացան Լենինգրադյան և Վիբորգյան անուններ, 70 հազար ռազմիկներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ 27 ռազմիկի շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[121]։

---

[120] Հ. Ու. Մելիքսեթյան, Մ. Դ. Սահակյան, *Փառքի շքանշանի հայ ասպետները*, էջ 86—88։

[121] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 401.

* *
*

Լենինգրադի շրջափակման վերացման սովետական զորքերի հարձակողական գործողությունների ամբողջ ընթացքում ցամաքային ուժերն հսկայական աջակցություն ցույց տվեցին ռազմաճակատների ռազմաօդային ուժերը։ Լենինգրադյան և Վոլխովյան ռազմաճակատների 13-րդ և 14-րդ ավիացիոն բանակների կազմում հաշվվում էր 1070 մարտական ինքնաթիռ։ Այդ հզոր ուժն իր կործանիչ հարվածներով քարուքանդ արեց հակառակորդի բազմաթիվ պաշտպանական կառույցներ՝ դոտեր, դզոտներ, հրամանատարական կետեր, կրակակետեր, խրամատներ, շարքից հանեց մեծ թվով կենդանի ուժ, ռազմական տեխնիկա և դրանով իսկ մեծապես նպաստեց հաջողությամբ ու ժամանակին կատարելու Գերագույն գլխավոր հրամանատարության կողմից առաջադրված մարտական խնդիրը։ Լենինգրադյան ռազմաճակատի 13-րդ ավիացիոն բանակի կազմում մարտական գործողություններին մասնակցեցին տարբեր ազգերի բազմաթիվ ներկայացուցիչներ։ 1944 թ. սկզբին այդ բանակն ուներ հետևյալ ազգային կազմը (ռուսների, ուկրաինացիների և բելոռուսների թիվը նշված չէ՝). թաթար՝ 396, մորդվին՝ 106, ղազախ՝ 100, չուվաշ՝ 92, բաշկիր՝ 75, կոմի՝ 63, մարիներ՝ 63, վրացի՝ 53, հայ՝ 43, ուդմուրտ՝ 40, լեհ՝ 35, ուզբեկ՝ 34, կարել՝ 26, ադրբեջանցի՝ 25, օս՝ 16, Դաղստանի ժողովուրդներ՝ 16, մոլդովացի՝ 10, այլ ազգեր՝ 75[122]։ Բանակի հիմնական հարվածային ուժը՝ կորիզը ռուս ժողովրդի զավակներն էին, որոնց հերոսական օրինակին հետևելով՝ բաղում սխրանքներ կատարեցին մյուս ազգերի ու ժողովուրդների պանծալի զավակները։

Հունվարի 14-ին, գիշերը Օրանիենբաումի շրջանից հարձակման պատրաստվող 2-րդ հարվածային բանակի ճակատային գոտում գտնվող հակառակորդի հրետանային խմբավորումներին ուժեղ ռումբային հարված հասցրեց ավիացիայի գեներալ-մայոր Վ. Ն. Նեստերցևի հեռավոր գործողության 7-րդ ավիացիոն կորպուսը։ Այնուհետև այդ գործողությունների մեջ ընդգրկվեցին և շատ արդյունավետ գործեցին ավիացիայի գեներալ-մայորներ Դ. Պ. Յուխանովի և Ն. Դ. Անտոնովի հեռավոր գործողության 1-ին և 2-րդ գվարդիական կործանիչ ավիացիոն կորպուսները։ Հակառակորդին ծանր հարվածներ հասցրին գնդապետ Ֆ. Ս. Խատմինսկու 277-րդ գրոհիչ ավիացիոն դիվիզիայի 15-րդ գվարդիական գրոհիչ ավիացիոն գնդի Վ. Ա. Ալեքսենկոյի, Գ. Մ. Միլնիկովի, Ա. Ն. Պրոխորովի, Ա. Կ.

---

122 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 217, ց. 1217, գ. 605, թ. 159։

Երյոմինի, Ա. Ն. Մանոխինի ավիոէսկադրիլիաները։ Նրանք բոլորն էլ քսաներեք, քսանչորս տարեկան երիտասարդներ էին, բայց արդեն ունեին բավական հարուստ մարտական կենսագրություն։ Կուպրիյանովկա բնակավայրի շրջանում 220-րդ տանկային բրիգադի ստորաբաժանումները հանդիպելով հակառակորդի հրետանային ու ականանետային ուժեղ կրակին, դամվել էին տեղում և չէին կարողանում առաջ շարժվել։ Բրիգադի հրամանատար, փոխգնդապետ Վ. Լ. Պրոցենկոն այդ մասին հաղորդեց ավիացիոն զորամասերի ներկայացուցչին։ Անմիջապես նշված վայրը խոյացան 15-րդ գվարդիական գրոհիչ ավիացիոն գնդի բաղնները։ Նրանք օդերևութաբանական անբարենպաստ պայմաններում փնտրեցին, գտան խնամքով քողարկված հակառակորդի կրակակետերը և ոչնչացրին այն։ Տանկային բրիգադը հնարավորություն ստացավ առաջ շարժվել, իսկ տանկիստների հրամանատարը շնորհակալական նամակ գրեց 277-րդ գրոհիչ ավիացիոն դիվիզիայի հրամանատարին։ «Շնորհակալություն,— գրված էր նամակում,—220-րդ առանձին տանկային բրիգադին ուղեկցելու Ձեր գրոհիչների լավ աշխատանքի, տանկիստների հետ լավ համագործակցության և հակառակորդի հակատանկային միջոցների դեմ նրանց ակտիվ մարտական գործողությունների համար»[123]։ Նման բազմաթիվ սխրանքներ կատարեցին սովետական բաղնները։ Նրանք երիտասարդ էին, բայց շատերի մարտական թռիչքն անցնում էր 200-ից։

13-րդ ավիացիոն բանակի բաղմաղդ ընտանիքում հմուտ ռմբարկուներ էին համարվում գիշերային 386-րդ ռմբակոծիչ ավիացիոն գնդի օդաչուներ լեյտենանտ Ալեքսեյ Վենիամինովիչ Դաշկովը, կրտսեր լեյտենանտ Ռաֆայել Արշակի Ղարիբյանը, կապիտան Արմենակ Մարտիրոսի Բաբայանը, լեյտենանտներ Նիկոլայ Իվանովիչ Բարդյուգովը, Վլադիմիր Իվանովիչ Կովալենկոն, Պավել Սվկենևիչ Շամկովը և ուրիշներ։ Նրանք բազմիցս ռմբակոծեցին Նարվա, Զուդովո, Լյուբան, Մինյավինո, Բատեցկի, Նովգորոդ, Շիմսկի շրջաններում գտնվող հակառակորդի ռազմական օբյեկտները։ Մարտական գործողությունների ընթացքում կրտսեր լեյտենանտ Ռաֆայել Ղարիբյանը թշնամու ուժերի վրա նետեց 8 տոննա 200 կիլոգրամ պայթուցիկ բեռ, ոչնչացրեց զորքեր տեղափոխող 9 ավտոմեքենա, 6 զենիթային կրակակետ, 7 հրետանային ու ականանետային մարտկոց, 3 պահեստ և այլն։

---

[123] «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 356.

Փետրվարի 9-ին հակառակորդի առաջավոր գիծը ռմբակոծելու ժամանակ նա նկատեց, որ լավ քողարկված մարտկոցը թույլ չի տալիս առաջ շարժվելու մեր ստորաբաժանումներից մեկին։ Նա հանգցրեց ինքնաթիռի շարժիչը և թշնամու համար անսպասելի երևաց մարտկոցի վրա։ 200 մետր բարձրությունից ռումբերի դիպուկ նետումով շարքից հանեց մարտկոցը՝ անձնակազմի հետ միասին։ Հրամանատարությունը 23-ամյա երիտասարդ օդաչուին պարգևատրեց Կարմիր դրոշի շքանշանով[124]։ Նույն գնդի էսկադրիլիայի շտուրման, կապիտան Արմենակ Մարտիրոսի Բաբայանը 1943 թ. սեպտեմբերից մինչև 1944 թ. հոկտեմբերը էսկադրիլիայի կազմում կատարեց 1250 մարտական թռիչք։ Թշնամու վրա նետվեց 265 տոննա ռումբ։ Բաբայանն անձամբ նետեց 7950 կգ ռումբային բեռ, 118000 թռուցիկ, ոչնչացրեց 8 ավտոմեքենա, 5 թնդանոթ, 2 զենիթային հարմարանք, 6 կրակակետ, առաջացրեց 3 խոշոր հրդեհ և այլն։

Բաբայանը փորձված ավիատոր էր, 1930 թ. կուսակցության անդամ։ Մարտական առաջադրանք կատարելու ժամանակ, բարդ ու դժվարին նպատակակետերը հարվածելիս, առաջինն ինքն էր նետվում դրոհի՝ օրինակ ցույց տալով ենթակա շտուրմաններին։ Բաբայանը, որ նախկինում պարգևատրվել էր Կարմիր աստղի շքանշանով, այս անգամ պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով[125]։

Լենինգրադի շրջափակման վերացումից հետո գունդը տեղափոխվեց 14-րդ ավիացիոն բանակը, ուր ակտիվորեն մասնակցեց «Հյուսիս» բանակների խմբի 16-րդ բանակի դեմ սովետական զորքերի հարձակողական գործողություններին։ 1944 թ. մայիսից մինչև 1944 թ. հոկտեմբերը ավիացիոն գունդը կատարեց 3539 մարտական թռիչք, հակառակորդի զորքերի վրա նետեց 522 տոննա 671 կգ ռումբ, շարքից հանեց 116 կրակակետ, ոչնչացրեց 268 ավտոմեքենա, 192 հրետանային մարտկոց, ռազմամթերքի 16 պահեստ, վառելիքի 12 պահեստ և այլն[126]։ Գնդի քաղաշխատանքն էր ղեկավարում հրամանատար, մայոր Յակովլևի տեղակալ՝ մոսկվացի Լևոն Պետրոսի Ավանեսյանը։ Գնդի ձեռք բերած մարտական հաջողությունները պայմանավորված էին նաև զորամասում տարվող քաղաշխատանքի բարձր մակարդակով։ Ավանեսյանի ամենօրյա ուշադրության կենտրոնում էին կարգապահության, կուսակցության շարքերը համալրելու, անձնակազմի բարոյաքաղաքական ու մարտական

---

124 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 1068, թ. 306։

125 Նույն տեղում, ց. 687572, գ. 2884, թ. 53։

126 Նույն տեղում, ց. 686196, գ. 2460, թ. 4։

ոգու բարձրացման, նրանց հայրենիքի ու կուսակցության նկատմամբ ջերմ սիրով դաստիարակելու և այլ բազմաթիվ հարցեր։ Նա հետևում էր, որ գունդը ժամանակին ապահովվի ռազմամթերքով ու պարենամթերքով։ Գնդում նշանակվելու օրվանից, 1943 թ. դեկտեմբերի 27-ից մինչև 1944 թ. հոկտեմբերը նա կատարեց 161 մարտական թռիչք։ Հմուտ հրամանատարը, որ նախկինում պարգևատրվել էր Կարմիր դրոշի երկու շքանշանով, գնդում եղած ժամանակ պարգևատրվեց երրորդ Կարմիր դրոշի և Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով[127]։ Լենինգրադի համար մղված մարտերում ցուցաբերած արիության համար գնդից, ռուս ժողովրդի պանծալի զավակ, օդակի շտուրման, լեյտենանտ Ալեքսեյ Վենիամինովիչ Գաշկովին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։

Լենինգրադի շրջանում հակառակորդին ծանր կորուստներ պատճառեց 454-րդ ռմբակոծիչ ավիացիոն գնդի էսկադրիլիան բաթումցի, կապիտան Իվան Սարգսի Պետրոսյանի հրամանատարությամբ։ Առաջին անգամ նա հակառակորդի դեմ մարտնչեց Ղրիմի և Վորոնեժի ռազմաճակատների ավիացիոն զորամասերի կազմում, պարգևատրվեց Կարմիր դրոշի երկու և Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով։ Այնուհետև, նույն գնդի կազմում կռվեց Լենինգրադյան, Բելոռուսական 3-րդ և Մերձբալթյան 1-ին ռազմաճակատների կազմում, պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով։ Նա բազմիցս ռմբակոծեց Կարելական պարանոցի պաշտպանական կառույցները, Վիբորգը և այլն։ Խիզախ օդաչուն զոհվեց 1944 թ. դեկտեմբերի 15-ին[128]։

Լենինգրադյան ռազմաճակատի բոլոր հատվածներում հարձակվող զորքերին օդից աջակցում էին գրոհիչ ու կործանիչ ավիացոն զորամասերը։ Իրենց հնարամտությամբ ու համարձակությամբ աչքի ընկան 448-րդ գրոհիչ ավիացիոն գնդի էսկադրիլիաները՝ մայոր Ս. Ս. Օգնովվերշենկոյի, կապիտան Մ. Դ. Նիկիշինի, ավագ լեյտենանտ Ի. Կ. Գուդիմովի հրամանատարությամբ։ Նրանք իրենց բազեների հետ միասին ամեն օր կատարում էին մի քանի մարտական թռիչք, ռմբակոծում ու գնդակոծում հակառակորդի մարտակարգերը, օդանավակայանները, երկաթուղային հանգույցները, տանկերի ու ավտոմեքենաների շարասյունները։ Մինչև Լենինգրադի շրջափակման վերացումը Մ. Դ. Նիկիշինի հաշվին գրանցվեց տարբեր կարգի 82 ոչնչացված հրանոթ, 3 երկաթուղային էշելոն, 45 ավտոմեքենա, 29 քարշակ, 7 ինքնաթիռ, 11

---

127 Նույն տեղում, ց. 690155, գ. 410, թ. 50։

128 Նույն տեղում, ց. 687572, գ. 1321, թ. 38։ Անձնական գործ № 51820, թ. 5։

պահեստ և այլն[129]։ Վորոնեժցի ավագ լեյտենանտ Միխայիլ Դմիտրևիչ Նիկիշինին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Այդ բարձր կոչմանը արժանացան նաև նրա մարտական ընկերները՝ Ի. Կ. Գուդիմովը և Ս. Ս. Օգնովերշենկոն։ Իրենց հերոս ընկերներից ետ չէին մնում 943-րդ գրոհիչ ավիացիոն գնդի էսկադրիլիաների հրամանատարներ՝ կապիտաններ Գ. Մ. Պարշինը, Ա. Ի. Կիզիմը, ավագ լեյտենանտ Պ. Ս. Նովիկովը և ուրիշներ։ Թշնամու դեմ հարազատ քաղաքի համար ատելությամբ ու վրեժխնդրությամբ էր կռվում լենինգրադցի Պյոտր Սերգեևիչ Նովիկովը։ Նա 1944 թ. հունվարի 8-ից մինչև 1945 թ. մարտի 1-ը կատարեց 135 մարտական թռիչք, ոչնչացրեց 4 տանկ, 67 ավտոմոբիլնա, 2 շոգեքարշ, 30 վագոն, 3 պահեստ, 12 դզոտ և այլն։ Գրոհիչները նրա հրամանատարությամբ հակառակորդին հարվածեցին Կրասնոյե Սելո, Ռոպշա, Գատչինա, Լուգա, Նարվա, Վիբորգ քաղաքների շրջաններում, մասնակցեցին Կարելական պարանոցի պաշտպանական կառույցների ռմբակոծմանը, սովետական Մերձբալթիկայի ազատագրման սովետական զորքերի մարտական գործողություններին և հասան մինչև Արևելյան Պրուսիա։ 1944 թ. հունիսի 17-ից մինչև 1945 թ. մարտի 16-ը էսկադրիլիան Նովիկովի հրամանատարությամբ կատարեց 340 մարտական թռիչք, ոչնչացրեց 31 տանկ, 16 ինքնաթիռ, 13 շոգեքարշ, 170 վագոն, 208 ավտոմոբիլնա, 23 պահեստ, 67 քարշակ, 11 դզոտ և ավելի քան մեկ գունդ հակառակորդի զինվոր ու սպա։ Խիզախ լենինգրադցուն շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[130]։

Մարտական գերազանց գործողությունների համար այդ բարձր կոչմանը արժանացան նաև 872-րդ գրոհիչ ավիացիոն գնդի բազեներ Վ. Ա. Տոմարովը, Գ. Գ. Ուլյանովսկին, Ս. Մ. Ֆեդյակովը և Վ. Վ. Տիտովիչը։

Օդում մշտապես հերթապահող հակառակորդի «Մեսսերշմիտները» ամեն կերպ ձգտում էին խանգարել դեպի նպատակակետը թռչող սովետական ռմբակոծիչներին՝ կատարելու իրենց մարտական առաջադրանքը։ Ռմբակոծիչների ու գրոհիչների մարտական թռիչքների արդյունավետությունը պայմանավորված էր նրանց մշտապես ուղեկցող կործանիչներով։ Երբ հակառակորդը հարձակվում էր, հանդիպում էր սովետական կործանիչների վճռական հակահարվածին։ Կործանիչները ոչ միայն ուղեկցում էին մեր ռմբարկուներին, այլև պաշտպանում ցամաքային ուժերի հարձակումը հակառակորդի «յունկերսների» հարվածներից։

---

[129] Նույն տեղում, ց. 793756, գ. 34, թ. 15։

[130] Նույն տեղում, ց. 79375, գ. 34, թ. 135։

1944 թ. հունվարից մինչև հուլիսը Լենինգրադի համար մղված մարտերի բոլոր հատվածներում հերոսության ու անձնազոհության բազում օրինակներ դրսևորեցին 11-րդ, 26-րդ, 27-րդ, 29-րդ, 103-րդ գվարդիական, 154-րդ, 159-րդ, 191-րդ, 254-րդ, 401-րդ ավիացիոն կործանիչ գնդերի և այլ ավիացիոն ստորաբաժանումների անձնակազմերը։ Հունիսի 10-ին Կարելական պարանոցում 21-րդ բանակի զորքերի հարձակումից 30 րոպե առաջ ավելի քան 340 սովետական ռմբակոծիչներ ու գրոհիչներ ռմբակոծեցին ֆիններին պաշտպանության առաջավոր գծի դոտերը, դզոտները, խրամատները և դրանով նպաստեցին ցամաքային զորքերին քիչ զոհերի գնով հաղթահարելու հակառակորդի պաշտպանությունը։ Այդ օրը ավիացիոն բանակի ինքնաթիռները կատարեցին 850 մարտական թռիչք, օդում ոչնչացրեցին 10 ինքնաթիռ[131]։

Հակառակորդին ծանր կորուստներ պատճառեց Սովետական Միության հերոս, մայոր Պ. Ա. Պոկրիշևի 159-րդ ավիացիոն կործանիչ գունդը։ Աչքի ընկան Վ. Ի. Վեդնեևը, Դ. Վ. Երմակովը, Վ. Ա. Զոտովը, Պ. Յա. Լիխոլետովը և ուրիշներ։

Հունիսի 26-ին Կարելական պարանոցում խփելով հակառակորդի 34-րդ ինքնաթիռը, անհավասար մարտում զոհվեց 159-րդ ավիացիոն կործանիչ գնդի էսկադրիլիայի հրամանատար Վ. Դ. Սերովը։ Մանր կորուստը շատ թանկ նստեց հակառակորդի վրա։ Նրա համագնդեցի մարտական ընկերները՝ Վ. Ի. Վեդնեևը, Դ. Վ. Երմակովը, Վ. Ա. Զոտովը, Պ. Յա. Լիխոլետովը վրեժ լուծեցին զոհված ընկերոջ համար։ Մի քանի օրվա ընթացքում Դ. Վ. Երմակովը խփեց հակառակորդի 8 ինքնաթիռ[132]։ Փորձված ու համարձակ օդաչու, էսկադրիլիայի հրամանատար, կապիտան Պյոտր Յակովլևիչ Լիխոլետովը կատարեց 366 մարտական թռիչք, մասնակցեց 72 օդային մարտի, խփեց հակառակորդի 24 ինքնաթիռ։ Լիխոլետովը հատկապես աչքի ընկավ Լենինգրադ քաղաքը մատակարարող բաղանների ու հաղորդակցության ճանապարհների պաշտպանության գործում[133]։ Բոլոր օդաչուներին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում, իսկ նրանց հրամանատարը՝ Ա. Պ. Պոկրիշևը, այդ բարձր պատվին արժանացավ երկրորդ անգամ։

Օդային մարտերի փորձված օդաչու էր 401-րդ կործանիչ ավիագնդի հրամանատարի տեղակալ Արտավազդ Սարգսի Ավետիսյանը։

---

131 «История ордена Ленина Ленинградского военного округа», с. 381—382.

132 Նույն տեղում էջ 396։

133 ՍՍՀՄ ՊՄԿԱ ֆ. 33, ց. 793756, գ. 28, թ. 72։

1944 թվականի մայիս-հունիս ամիսներին նա սովետական ռմբակոծիչներին բաղմիցս ուղեկցեց դեպի թշնամու թիկունքը և առաջավոր գիծ։ Հունիսի 19-ին Վիբորգի շրջանում կործանիչների խումբը Ա. Ավետիսյանի հրամանատարությամբ հարձակման ենթարկվեց հակառակորդի կործանիչների կողմից։ Օդում սկսվեց անհավասար մարտ, 8-ը՝ 22-ի դեմ։ Օդաչուները կատարելով հրամանատարի ցուցումները, հնարամտորեն խուսափելով թշնամու հարվածներից, թույլ չտվեցին նրանց մոտենալու ռմբակոծիչներին։ Ավետիսյանն անձամբ խփեց մեկ ինքնաթիռ։ Ռմբակոծիչները կատարեցին մարտական առաջադրանքը և առանց կորստի վերադարձան օդանավակայան։ 128 մարտական թռիչք կատարելու և թշնամու 5 ինքնաթիռ ոչնչացնելու համար կապիտան Ա. Ս. Ավետիսյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի երկրորդ շքանշանով։ Առաջինը նա ստացել էր Ղրիմի համար մղված մարտերում[134]։

13-րդ ավիացիոն բանակի կազմում հսկայական աշխատանք կատարեցին օդաչու-հետախույզները, որոնք հետևում էին հակառակորդի ուժերի տեղաշարժերին, հայտնաբերում ու նկարահանում քողարկված կրակակետերը, տանկերի ու ավտոմեքենաների շարասյունները, օդանավակայանները։ Ստացված տվյալները անմիջապես հայտնվում էին հրամանատարությանը։ Օդային հետախուզության հմուտ վարպետներ էին 13-րդ ավիացիոն հետախուզական գնդի էսկադրիլիայի հրամանատար, կապիտան Ալեքսանդր Կուզմիչ Տկաչենկոն, հետախուզության գծով շտաբի պետի տեղակալ, կապիտան Վլադիմիր Ֆյոդորովիչ Շալիմովը և օդաչու Նիկոլայ Ստեփանի Վարդանյանը։ Առաջին երկուսին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում, իսկ Վարդանյանը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով։

Լենինգրադյան ռազմաճակատի զորքերին հսկայական աջակցություն ցույց տվեց հեռավոր գործողության 13-րդ գվարդիական ավիացիոն գունդը՝ փոխգնդապետ Դմիտրևի հրամանատարությամբ։ Հակառակորդի պաշտպանական կառույցների, դոտերի, դղյոտների ոչնչացման գործում աչքի ընկավ նույն գնդի էսկադրիլիայի հրամանատարի տեղակալ, կապիտան Սուրեն Արտաշի Ղազարովը։ «Բ-25» ռմբակոծիչի անձնակազմը՝ Տույգունովը, Կոստրովը, Սմիռնովը Բրոխովը՝ Սուրեն Ղազարովի հրամանատարությամբ բաղմիցս ռմբակոծեցին Ֆինլանդիայի ռազմական, քաղաքական ու տնտեսական խոշոր կենտրոնները, Հելսինկին, խճուղային ու երկաթուղային հանգույցները[135]։

---

134 Նույն տեղում, ց. 690155, գ. 1068, թ. 228։

135 Նույն տեղում, ց. 686044, գ. 4618, թ. 114, ֆ. 460, ց. 7110, գ. 139, գ. 218։

Մինչև մեծ Հայրենականի հաղթական ավարտը, հեռավոր թռիչքի փորձված վարպետը կատարեց 199 մարտական թռիչք, պարգևատրվեց Կարմիր դրոշի երկու, Ալեքսանդր Նևսկու և Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով։ Նույն ուղղությամբ էր գործում 12-րդ գատչինյան ռմբակոծիչ ավիացիոն գնդի ինքնաթիռի հրամանատար, ավագ լեյտենանտ Ավագ Ջավադի Մանուչարովը։ Ցուցաբերած արիության համար նա պարգևատրվեց Կարմիր դրոշի երկու և Կարմիր աստղի շքանշաններով։ Շքանշաններով պարգևատրվեցին նաև Մանուչարովի օդանավի անձնակազմը՝ Մատվիենկոն, Սոլովյովը, Սերգեևը, Սմիրնովը և Իվանովը[136]։ Իր մարտական ընկերներ Ա. Լ. Նեդորեզովի, Վ. Մ. Լոնուխովի, Ի. Կ. Սամիշևի, Ա. Դ. Մեշկովի, Դ. Ի. Տիմոշկինի հետ միասին Լենինգրադի համար մարտնչեց հայ ժողովրդի պանծալի զավակ, հեռավոր գործողության 101-րդ ավիացիոն գնդի էսկադրիլիայի շտուրման, մայոր Աշոտ Ջումշուդի Դասպարովը։ Խիզախ օդաչուն, որ նախկինում պարգևարվել էր Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշաններով, Լենինգրադի համար մղված մարտերում ցուցաբերած արիության համար պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով։ Հետագայում նրան շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[137]։

Լենինգրադի համար մղված մարտերում 13-րդ և 14-րդ ավիացիոն բանակների տարբեր ստորաբաժանումների կազմում աչքի ընկան ավիացիոն գնդի հրամանատար Դ. Բ. Կամլաձեն, էսկադրիլիայի հրամանատարներ Ա. Ի. Դորբաշևսկին, Կ. Ի. Կորշունովը, Ի. Ս. Լևոնովիչը, Ն. Ա. Զելենովը, Մ. Խ. Գոնդաձեն, Բ. Մ. Հարությունյանը, օդաչուներ Ա. Դ. Դավթյանը, Դ. Լ. Մայսուրաձեն, Ա. Ա. Կատիմյանը, Ա. Դ. Հակոբյանցը, Ա. Զուբինիձեն, ավիացիոն զորամասերի գլխավոր ինժեներներ Ն. Ա. Դասպարովը, Ս. Վ. Հայրապետովը, ավիացիոն գնդի կապի հրամանատար Ա. Ա. Ասկյարովը և շատ ուրիշներ։

Օդաչուներից ութը՝ Վ. Ս. Ալեքսենկոն, Ա. Տ. Կարպովը, Յ. Մ. Կունդուրցևը, Գ. Մ. Մելնիկովը, Վ. Ի. Միխլիկը, Գ. Մ. Պարշինը, Պ. Ա. Պոկրիշևը, Ա. Ն. Պրոխորովը, շարունակելով իրենց հերոսական սխրանքների պատմությունը, դարձան Սովետական Միության կրկնակի հերոսներ։ Հիշատակվածներից 7-ը վայելեցին հաղթանակի բերկրանքը։

---

136 Նույն տեղում, ֆ. 460, ց. 7110, գ. 141, թ. 192։

137 Նույն տեղում, ֆ. 33, ց. 793756, գ. 20, թ. 373—375։

Ա. Տ. Կարպովը հերոսաբար զոհվեց Մերձբալթիկայում՝ 1944 թ. հոկտեմբերի 20-ին։

Լենինգրադի շրջափակման վերացման և հետագա մարտերում սովետական բաղմները մեծ աջակցություն ցույց տվեցին ցամաքային ուժերին և իրենց հերոսական գործերով բաղմապատկեցին ու հարստացրին սովետական ռազմաօդային ուժերի մարտական փառքը։

3. ԳՐՈՀՈՒՄ ԵՆ ԲԱԼԹՅԱՆ ԿԱՐՄՐԱԴՐՈՇ ՆԱՎԱՏՈՐՄԱՅԻՆՆԵՐԸ

1943—1944 թթ. Լենինգրադյան ռազմաճակատի հարձակողական գործողություններին, ցամաքային զորքերի հետ սերտ համագործակցությամբ, ակտիվորեն մասնակցեց Կարմրադրոշ Բալթյան նավատորմը։

Ռազմանավերի ու երկաթուղային հարթակների վրա դրված ծանր հրետանին, ծովային ավիացիան ու հետևակը մեծ կորուստներ պատճառեցին հակառակորդին և նպաստեցին ռազմաճակատի զորքերի հարձակողական թափի ծավալմանը։

Սովետական զորքերի հարձակման նախօրյակին, նավատորմի ուժերով, հակառակորդի հրետանային կրակի տակ, Մերձծովյան հենակետը՝ Օրանիենբաումի շրջան տեղափոխվեց հինգ հրաձգային դիվիզիա, մեկ տանկային բրիգադ, 13 հրետանային ու ականանետային մարտկոց, երկու տանկային ու ինքնագնաց հրետանային գնդեր և այլ ռազմական տեխնիկա[138]։ Հենակետում գտնվող 2-րդ հարվածային բանակը, ստանալով նոր համալրումներ և ռազմական տեխնիկա, իր տրամադրության տակ եղած միջոցներով գերազանցեց հակառակորդին և պատրաստ էր սկսելու ծավալուն հարձակողական գործողություններ։ Նավատորմի հրետանին հզոր ուժ էր ներկայացնում։ Այն բաժանվում էր հինգ խմբի և իր կազմում ուներ խոշոր տրամաչափի 206 ծովային թնդանոթ[139]։ Երկրորդ խմբի, որի մեջ մտնում էր մեկ գծանավ, երեք հածանավ և երեք ականակիր, հրետանու կրակը ղեկավարում էր առաջին կարգի կապիտան, հայ ժողովրդի զավակ Արտավազդ Սագոյանը։ Վերջինիս հրամանատարությամբ հրետանավորները իրենց խորտակիչ կրակով մեծ աջակցություն ցույց տվեցին հատկապես 42-րդ բանակին և նպաստեցին մարտական առաջադրանքի կատարմանը։ Ա. Սագոյանը

---

[138] *А. К. Селяничев*, Великий подвиг Балтики. М., 1968, с. 189.

[139] *В. Ф. Трибуц*, Балтийцы наступают. Калининград, 1968, с. 32.

պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[140]։ Նավատորմի հրետանու գործողությունները ղեկավարում էր մարտական հարուստ փորձ ունեցող հրամանատար, էստոն ժողովրդի պանծալի զավակ, փոխծովակալ Ի. Ի. Գրենը։ Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի հարձակման առաջին օրը՝ հունվարի 19-ին, նավատորմի հրետանին իր հմուտ ղեկավարի՝ Ի. Ի. Գրենի հրամանատարությամբ զանգվածային կրակ հեղեղ թափեց հակառակորդի գլխին։ Այդ օրը արձակվեց ավելի քան 14533 արկ[141], իսկ հաջորդ օրը՝ 42-րդ բանակի հարձակման գոտում արձակվեց 12000 արկ[142]։

Նավատորմի հրետանու հարվածային ուժը համարվում էր 101-րդ ծովային-երկաթուղային հրետանային բրիգադը (հրամանատար՝ գեներալ-մայոր Դ. Ս. Սմիրնով)։ Բրիգադի կազմում հաշվվում էր 3000 մարտիկ ու հրամանատար։ Նրա մարտական շարքերում հակառակորդի դեմ մարտնչում էին Սովետական Միության ամենատարբեր ազգությունների ներկայացուցիչներ, որոնք դրսևորեցին մարտական հզոր զենքին տիրապետելու մեծ վարպետություն։ Բրիգադի հրետանավորների մարտական փայլուն գործերը չվրիպեցին հրամանատարության տեսադաշտից։ ՍՍՀՄ ռազմածովային նավատորմի գլխավոր հրամանատարի 1944 թ. հունվարի 21-ի և 22-ի հրամաններով 101-րդ ծովային-երկաթուղային բրիգադը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով և վերակազմվեց գվարդիականի[143]։ Բրիգադի հրետանային կրակը հմտորեն վարելու վարպետությամբ աչքի ընկան հրամանատարներ Ա. Ա. Ակոպովը, Գ. Ի. Բարբակաձեն, Դ. Ի. Վիդյաևը, Ս. Ֆ. Կրայնևը, Ս. Ս. Կորեցը, Ն. Վ. Մասլովը, Վ. Ն. Մեսնյանկինը, Լ. Մ. Տուդերը, Գ. Մ. Յաիշնիկովը և ուրիշներ։ Լենինգրադի շրջափակման վերացման կապակցությամբ Կարմրադրոշ Բալթյան նավատորմի նախկին հրամանատար, նավատորմի ծովակալ Վ. Ֆ. Տրիբուցը իր աշխատություններից մեկում հիշատակեց այն հրամանատարների անունները, որոնց հմուտ ղեկավարությամբ նավատորմի հրետանային ստորաբաժանումները ծանր կորուստներ պատճառեցին հակառակորդին։ «Այդ առաջին հերթին 1-ին կարգի կապի-

---

140 ՌԾԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 172։

141 *Н. Гречанюк, В. Дмитриев, Ф. Криницын, Ю. Черков*, Балтийский флот, М., 1960, с. 282.

142 «Борьба за Советскую Прибалтику в Великой Отечественной войне 1941—1945» (книга вторая), Рига, 1967, с. 231.

143 «Краснознаменный Балтийский флот 1944—1945 гг.», М., 1975, с. 248.

տաններ Ա. Ա. Սագոյանը, Պ. Ա. Պետրիշչևը, Ա. Գ. Վանիֆատևը, Ս. Դ. Սոլոուխինը, Մ. Գ. Իվանովն են, 2-րդ կարգի կապիտաններ՝ Գ. Ս. Աբաշվիլին, Ե. Պ. Զբրիցկին, Պ. Ե. Ռոդիշչևը, Վ. Մ. Կլիմովը, Կ. Կ. Զերեմխինը, Վ. Ռ. Նովակը, 3-րդ կարգի կապիտաններ՝ Դ. Դ. Կուտայր, Գ. Ն. Մոտորովը, Բ. Յա. Գորովոյը, փոխգնդապետներ Լ. Մ. Տուդերը, Գ. Ի. Բարբակաձեն, Ն. Զ. Վոլնովսկին, մայոր՝ Ս. Ֆ. Կրայնևը, կապիտաններ՝ Լ. Ն. Վագանովը և Պ. Ե. Մելնիկովը»[144]։ Նավատորմի հրետանին այնուհետև իր հզոր կրակով աջակցեց 1944 թ. հունիսին Կարելական պարանոցում հարձակման անցած 21-րդ և 23-րդ բանակների զորքերին։ Հարձակողական գործողությունների 11 օրում հրետանավորները հակառակորդի դիրքերի վրա արձակեցին 18 հազար ծանր արկ[145]։ Հրետանային կրակի արդյունավետությանը մեծ չափով նպաստեցին ծովային կապավորները։ 1-ին գվարդիական ծովային, երկաթուղային-հրետանային բրիգադի մարտկոցների ու ճշգրտող պոստերի միջև անխափան հեռախոսային կապն էր ապահովում 2-րդ կարգի ավագ Պ. Ա. Կովալենկոն։ 14 անգամ նա վերականգնեց մարտկոցների կապը ճշգրտողների հետ։ Երբ հրետանային կրակը տեղափոխվեց հակառակորդի խոր թիկունքը, Կովալենկոն իր մարտիկներին գրոհի տարավ և հերոսաբար զոհվեց մարտում։ Անձնվիրաբար էր գործում նրա գործակից-ընկեր, կոմերիտուհի Յե. Ի. Ստեպանովան։ Խիզախ աղջիկը մի քանի անգամ վերականգնեց կապը և հնարավորություն տվեց մարտկոցին ոչնչացնելու երեք դոտ ու զնդի շտաբը[146]։

Նավատորմի «За родину» զրահագնացքի գերազանց հրետանավորներ էին կապիտան Սուրեն Սեդրակի Այլոյանը և շարքային Անդրեյ Զորիկի Դավթյանը։ Վերջինս մարտական գործողությունների ընթացքում կատարեց 100 կրակոց, ոչնչացրեց հարյուրավոր ֆաշիստական զինվոր ու սպա։ Խիզախ նավատորմայինը պարգևատրվեց «Արիության համար» մեդալով։ «Հոկտեմբերյան հեղափոխության», «Պետրոպավլովսկ», «Լենինգրադ» ռազմանավերի ու «Նեման» խոշոր տրամաչափի հրանոթի կրակն էր ճշգրտում Աջարիայի զավակ, բաթումցի Մուրման Վաուլամովիչ Թափուրիձեն։ Նա պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[147]։ Տարբեր ստորաբաժանումների կազմում հերոսաբար կռվեցին ու իրենց մարտական գործերով աչքի ընկան ծովայիններ Վոդ-

---

[144] *В. Ф. Трибуц*, Балтийцы наступают, Калининград, 1968, с. 67.

[145] «Краснознаменный Балтийский флот 1944—1945», с. 259.

[146] *ՌՏԿԱ, ֆ. 88, ց. 270, թ. 197։*

[147] *Նույն տեղում, գ. 571, թ. 286։*

նեսենսկովը, Գրիգորևը, Սամոյլովը, Շպակը, Դովլաթյանը, Սարգիսովը, ղաղախներ Աուբակիրովը, Բայբուտովը և ուրիշներ։

Կարելական պարանոցում հարձակվող Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի թևերը ծովից ապահովելու համար, Ֆիննական ծոցում ու Լադոգա լճում ակտիվ գործողություններ սկսեցին նավատորմի գրոհող ու ականաղերծող կատերները, հրետանավակները, դեսանտանավերը և այլ ռազմանավեր։ Վիբորգի ազատագրման օրը նավատորմի ստորաբաժանումները փոխծովակալ Դ. Վ. Ժուկովի հրամանատարությամբ ազատագրեցին Ներվա կղզին։ Դեսանտայինների մարտական գործողությունները պաշտպանում էին տորպեդային կատերները՝ Սովետական Միության հերոս Ս. Ա. Օսիպովի, Բ. Պ. Ուշչևի, Ի. Ս. Իվանովի և Վ. Ի. Տիխոնովի հրամանատարությամբ։ Մարտական բարձր պատրաստակամություն դրսևորեց կործանիչ կատերների ջոկատը՝ Մ. Վ. Կապրալովի հրամանատարությամբ։ Վերջինս ծանր վիրավորվեց, բայց նրա մարտական ընկեր ու զինակից Ս. Ս. Ժամկոչյանի ղեկավարությամբ մարտական առաջադրանքը կատարվեց։ Հունիսի 23-ին ազատագրվեց Պիսարի կղզին, իսկ հաջորդ օրը՝ Բյորկե ու Տիուրինսարի կղզիները և նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հակառակորդից մաքրելու Վիբորգյան ծոցի կղզիները։ Ծովային մարտերի ընթացքում նավատորմայինները կռվեցին անձնազոհաբար։ Հակառակորդի ռազմանավերի վրա գրոհելու ժամանակ արկի դիպուկ հարվածից վնասվեց Ս. Ա. Օսիպովի դիվիզիոնի կատերներից մեկի մոտորային մասը։ Ծանր վերքեր ստացան կատերի հրամանատար լեյտենանտ Խրենովը և բրիգադի շտաբի սպա, ավագ լեյտենանտ Պրուշինսկին։ Ընկերներին օգնության հասան արկի բեկորներից նույնպես վերքեր ստացած Գրիգորի Մատյուխինը և կատերի անձնակազմի կոմերիտական կազմակերպիչ Վիկտոր Կուսկովը։ Նրանք մեծ դժվարությամբ մոտորային մասից վեր բարձրացրին վիրավոր նավաստիներին, փրկարար գոտիներ հագցրին նրանց ու երկու սպաներին և նետվեցին ծովը։ Մոտ երկու ժամ Մատյուխինը և Կուսկովը ջրի երեսին պահեցին վիրավոր ընկերներին, մինչև օգնության հասան յուրայինները։ Երկու խիզախ նավատորմայիններին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[148]։

Կատերի հրամանատարին փրկելու գործում մեծ անձնազոհություն դրսևորեցին նավաստիներ Հարությունովը և Վայտկան, որոնք գիտակցությունը կորցրած լեյտենանտ Մալիկովին ջրի երեսին պահեցին մի

---

[148] *В. Ф. Трибуц*, Балтийцы наступают, с. 113.

քանի ժամ։ Ծովային մարտերում անմահ սխրագործություն կատարեց ականակիր կատերների բրիգադի 1-ին դիվիզիոնի մոտորիստների խմբի ավագ Գեորգի Ջավախովը։ Մարտական առաջադրանքը կատարելու ժամանակ ականակիրը համարձակորեն գրոհելով թշնամու նավախմբի դեմ, խորտակեց երկու ականորս կատեր։ Ջավախովը, որ կանգնած էր ղեկի մոտ, կռահելով հրամանատարի գործողությունը, մոտորիստներին հրամայեց մերթ արագացնել, մերթ դանդաղեցնել կատերի ընթացքը և մանևրելով խուսափել թշնամու հարվածներից։ Արկի բեկորից Ջավախովը ծանր վիրավորվեց, բայց ձեռքից բաց չթողեց ղեկը այնքան ժամանակ, մինչև որ ուժերը դավաճանեցին։ «Չհանգցնել մոտորները,—հրամայեց Ջավախովը մոտորիստ Սոլոմոնին,—հաղթանակը մեր գլխավոր նպատակն է, պահպանեցեք կատերը և ընկերների կյանքը»։ Նա մահացավ այս խոսքերը շուրթերին[149]։

Թշնամու դեմ անձնազոհաբար կռվեց 5-րդ պահակային կատերների դիվիզիոնի շտուրման կապիտան-լեյտենանտ Սուրեն Սմբատի Օգանեսովը։ Նարվայի ծոցում թշնամու ինքնաթիռների խումբը հարձակվեց ԲՄՕ-509 կատերի վրա։ Արկի բեկորից զոհվեց դիվիզիոնի հրամանատար Մորգացկին։ Օգանեսովը հրամանատարությունն իր ձեռքը վերցնելով, կատերը դուրս բերեց հարվածի շրջանից և դիպուկ կրակով խփեց թշնամու մեկ ինքնաթիռ[150]։

Բյորկի արշիպելագի և Վիբորգի ծոցի կղզիների ազատագրման մարտերում աչքի ընկավ կատերների 11-րդ դիվիզիոնի «ԿՄ-334» կատերի հրամանատար Նիկիտա Միքայելի Պետրոսյանը։ Հունիսի 20—29-ը դեսանտային գործողություններից մեկի ժամանակ, Պիսարե կղզին զորքեր տեղափոխող փոխադրանավերը հրետանային ուժեղ գրնդակոծության ենթարկվեցին։ Պետրոսյանը, որ ուղեկցում էր նավերին, չսպասելով հրամանի, առաջ նետվեց և իր կատերով ծխաքողարկեց փոխադրանավերի քարավանը։ Ծովային հետևակն առանց կորստի ափ իջավ Պիսարի կղզին և մեկօրյա մարտերից հետո գրավեց այն։ Ծովամարտի ժամանակ Պետրոսյանը թշնամու հրետանային ու գնդացրային ուժեղ կրակի տակից դուրս հանեց խփված կատերը և փրկեց նրա անձնակազմին։ Յուցաբերած արիության համար նա պարգևատրվեց Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով[151]։

Պիսարի կղզու գրավման մարտերում աչքի ընկավ սանիտարուհի,

---

149 ՌԾԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 275, թ. 350։

150 Նույն տեղում, գ. 461, թ. 204։

151 Նույն տեղում, ֆ. 88, ց. 2, գ. 481, թ. 309։

կոմունիստ Մարտա Բոնժուսը, որը մարտի դաշտից հեռացրեց 20 ռազմիկների և փրկեց ծովային հետևակի հրամանատար, մայոր Ա. Պ. Ռոմանցովի կյանքը։ Հերոսաբար կռվեցին նավատորմայիններ Ի. Մ. Իվանովը, Ի. Ս. Յակունինը, Ի. Ա. Բրալգինը, Ն. Լեբեդևը և շատ ուրիշներ։ Հունիսի 25-ից 27-ը նավատորմի ուժերով ազատագրվեցին Տուապսուրանսարի և Ռուոնտի կղզիները։ Դրանով ավարտվեց Բյորկե արշիպելագի կղզիների լրիվ ազատագրումը։

Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի հարձակողական գործողությունների հետագա հաջողությունը զարգացնելու համար հրամայական անհրաժեշտություն էր հակառակորդից մաքրել Վիբորգյան ծոցի կղզիները։ Այդ նպատակի համար տրամադրվեցին 64 դեսանտային-տորպեդային կատերներ, զրահակատերներ, հրետանավակներ և այլ նավեր։ Դեսանտային ջոկատի հրամանատար նշանակվեց փոխծովակալ Ն. Ե. Ֆելդմանը։ Հուլիսի 1-ին դեսանտային նավերը ուղղություն վերցրին իրենց նպատակակետերը և նույն օրը ափ իջան Տեյկարսարիում։ Հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը, դեսանտայիններն ամրացան կղզում։ Հակառակորդը ուշքի գալով, մարտական գործողությունների վայրը մտցրեց նոր ուժեր և ստիպեց ծովային հետևակին նահանջելու դեսանտանավերը։ Կղզին գրավելու առաջին փորձն ավարտվեց անհաջողությամբ։ Նավատորմի հրամանատարությունը որոշեց երկրորդ անգամ միաժամանակ խոշոր ուժերով դեսանտ իջեցնել Տեյկարսարի, Սուոնիսարի և Ռավենսարի կղզիները։ Հուլիսի 4-ի առավոտյան դեսանտայինների առաջին ջոկատն իր կազմում ունենալով 59-րդ բանակի 224-րդ հրաձգային դիվիզիայի 160-րդ հրաձգային գունդը, ափ իջավ Տեյկարսարի կղզին, իսկ երկրորդ ջոկատը 143-րդ հրաձգային գնդով՝ Սուոնիսարի կղզին։ Ռավենսարի կղզին ափ իջան հիմնականում ինժեներական ստորաբաժանումներ։ Դեսանտայիններին ակտիվորեն աջակցեց ծովային հրետանին և ավիացիան։ Նրանց գործողությունները ծովից ապահովեցին տորպեդային ու պահակային նավերը՝ 2-րդ կարգի կապիտաններ Ի. Մ. Զայդուլինի, Մ. Ս. Բելուշի և 3-րդ կարգի կապիտան Ա. Դ. Սվերդլովի հրամանատարությամբ։ Հուլիսի 4-ին համառ մարտերից հետո հակառակորդից մաքրվեցին Սուոնիսարի և Ռավենսարի կղզիները։ Հուլիսի 5-ին ազատագրվեց նաև Տեյկարսարի կղզին։ Մարտական գործողությունների ընթացքում դեսանտայինները դրսևորեցին հերոսության և անձնազոհության շատ օրինակներ։ Աչքի ընկան Ի. Ս. Սկլիդովը, Վ. Դ. Օլովը, Ա. Տ. Զեմլյանովը, Վ. Պ. Ռոդնևը, Բ. Ն. Կոնովալովը, Ս. Ի. Բուդկոն,

Ա. Ռ. Հայրապետովը, Ա. Ս. Նազարյանը, Հ. Մ. Դանիելյանը, Ժ. Վ. Ալոյանը, Մ. Ս. Մովսիսյանը, Ջ. Իստավլետովը, Ա. Կ. Ալիևը և շատ ուրիշներ։ Նավատորմի ստորաբաժանումներին մեծ օգնություն ցույց տվեց ականատորպեդային գործի հմուտ մասնագետ, Բալթյան կարմրադրոշ նավատորմի ականատորպեդային բաժնի սպա, 3-րդ կարգի կապիտան հոկտեմբերյանցի Արտաշես Մկրտչի Ազատյանը։ Մարտական ծառայությունների համար նա պարգևատրվեց Կարմիր աստղի և Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով[152]։

Մինչև հուլիսի 10-ը Վիբորգյան ծոցի կղզիները լրիվ ազատագրվեցին։ Հակառակորդը կորցրեց 70 տարբեր տեսակի մարտական-փոխադրական նավեր[153]։

Լենինգրադյան ռազմաճակատի զորքերի և նավատորմի մարտական գործողությունների բոլոր փուլերում մեծ արդյունավետությամբ գործեց ծովային ավիացիան գեներալ Մ. Ի. Սամոխինի հրամանատարությամբ։ 1943—1945 թթ. Բալթյան կարմրադրոշ նավատորմի ծովային ավիացիան հզոր ուժ էր, ընդունակ լուծելու ամենաբարդ մարտական խնդիրներ։ Զգալիորեն համալրվել էր ինքնաթիռային պարկը։ Օդաչուական անձնակազմը երկու տարվա մարտական գործողությունների ընթացքում ձեռք էր բերել հարուստ փորձ, բարձրացել էր նրա մարտունակությունը։ Եթե 1942 թ. նավատորմի ռազմաօդային ուժերի պարկում հաշվվում էր 200 ինքնաթիռ[154], 1943 թ.՝ 280[155], 1944 թ. հունվարին արդեն կար 313, հունիսին՝ 494, իսկ 1945 թ. սկզբին՝ 787 մարտական ինքնաթիռ[156]։ Այդ հզոր ուժը մեծ աջակցություն էր ցույց տալիս ցամաքային ուժերին։

1943 թ., երբ հակառակորդի ձեռնարկած հակամիջոցառումների շնորհիվ այլևս հնարավոր չէր սուզանավերի դուրս գալը Բալթիկ ծով, նավատորմի հրամանատարությունը հիմնական ուշադրությունը բևեռեց տորպեդակիր ավիացիայի վրա։ Նրա վրա դրվեց թշնամու փոխադրումները կազմալուծելու ու խափանելու դժվարին խնդիրը։ Լարված սկսեց գործել 8-րդ գվարդիական ականատորպեդային ավիացիոն դիվիզիան

---

152 ՌՇԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 172, թ. 141։

153 «Борьба за Советскую Прибалтику в Великой Отечественной войне 1941—1945 гг.», (книга вторая), с. 248.

154 Նույն տեղում, էջ 155։

155 «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945 гг.», т. 3, с. 412.

156 «Краснознаменный Балтийский флот 1944—1945», с. 172.

գնդապետ Ա. Ն. Սուխանովի հրամանատարությամբ։ Տորպեդակիրների թռիչքը տևում էր 6—8 ժամ և կապված էր մեծ դժվարությունների հետ։ Հակառակորդի զենիթային կրակից և կործանիչներից խուսափելու համար ինքնաթիռները թռչում էին հիմնականում գիշերը, կամ էլ օդերևութաբանական բարդ պայմաններում։ Հենց առաջին թռիչքի օրը՝ 1943 թ. մայիսի 28-ին դիվիզիայի 1-ին գվարդիական ականատորպեդային ավիացիոն գնդի կապիտան, Սովետական Միության հերոս Վ. Ա. Բալերինի և ավագ լեյտենանտ Ա. Ի. Ռաղդոնինի անձնակազմերը Բալթիկ ծովում խորտակեցին երկու փոխադրանավ, իսկ որոշ ժամանակ անց նույնը կրկնեցին կապիտաններ Ա. Պ. Ջերնիշևը և Ի. Գ. Շամանովը[157]։ Այդ գունդը 1943 թ. ընթացքում կատարեց 1300 մարտական թռիչք, որից 227-ը հեռավոր, խորտակվեց 56 նավ՝ 247000 տ. ջրատարողությամբ[158]։ Տորպեդային դիպուկ հարվածի վարպետներ էին բաքվեցիներ, հայ և ադրբեջանական ժողովուրդների զավակներ ավագ լեյտենանտներ Նիկիտա Մարտինի Սաղաթելովը և Սամեդով Ասաֆ Մահմեդ Հուսեյն օղլին։ Սաղաթելովը պատերազմի նախօրյակին սովորում էր Բաքվի համալսարանի քիմիական ֆակուլտետում և երազում էր դառնալ քիմիկոս, բայց նրա երազանքն անկատար մնաց։ Սամեդովը աշխատում էր Բաքվի ավիացիոն ակումբում, որպես թռիչքային հրահանգիչ։ Հայրենիքի պաշտպանությունը ամրապնդելու համար բազմաթիվ երիտասարդներ կոմերիտմիության ուղեգրերով գործուղվեցին սովորելու ՍՍՀՄ զինված ուժերի տարբեր զորատեսակների բարձրագույն ու միջնակարգ ռազմական ուսումնարաններում։ Նրանց մեջ էին նաև Սաղաթելովը և Սամեդովը։ Ավիացիոն ուսումնարանն ավարտելուց հետո նրանք ծառայության նշանակվեցին Կարմրադրոշ Բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերում։ Նրանց մարտական կենսագրությունն սկսվեց 1941 թ. հունիսից։ Նշանավոր 1-ին գվարդիական ականատորպեդային ավիացիոն գնդի կազմում նրանք մասնակցեցին բազմաթիվ մարտական առաջադրանքների կատարմանը[159]։ Հրամանատարությունը բարձր գնահատեց նրանց մարտական ծառայությունը։ 1942—1943 թթ. խիզախ բաքվեցիները երկու անգամ պարգևատրվեցին Կարմիր դրոշի շքանշանով։ Պատերազմի մեկ տարվա ընթացքում Սամեդովը կատարեց 72 մարտական թռիչք, որից

---

157 «Военно-исторический журнал», № 2, 1972, с. 88—89.

158 ՌԾԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 461, թ. 198։

159 Այդ գունդը 1941 թ. օգոստոսին առաջինը ռմբակոծեց Բեռլինը։

59-ը՝ ցերեկը, իսկ 13-ը՝ գիշերը։ Նա ռմբակոծեց հակառակորդի ռազմածովային բազաները, օդանավակայանները, կենդանի ուժի և տեխնիկայի կուտակումները, երկաթուղային հանգույցները, Հելսինկի, Կոտկա, Տալին, Զուդովո քաղաքները, Պերնով և Կլոպիցի օդանավակայանները, Գոգլանդ, Լավինսարի կղզիները։ Այդ ընթացքում Սամեդովը ոչնչացրեց 12 տանկ, 4 ինքնաթիռ և այլ ռազմական տեխնիկա։ 1943 թ. հունվարին ակտիվորեն մասնակցեց Լենինգրադի շրջափակման ճեղքմանը։ Ռմբակոծեց Վոլոսովո կայարանը, շարքից հանեց երկաթգիծը։ 1943 թ. ապրիլի 27-ին ռմբակոծեց Կարամիշևո օդանավակայանը, առաջացրեց մեծ ծավալի հրդեհներ[160]։ 1943 թ. հոկտեմբերի 10-ին Ասաֆ Սամեդովը ծանր փորձություն ապրեց։ Կարելական պարանոցում նրա ինքնաթիռը խփվեց հակառակորդի կողմից։ Նա պարաշյուտով վայրէջք կատարեց և մարմնական ծանր վնասվածք ստացավ և հոկտեմբերի 14-ին գերվեց ֆիններին կողմից։ Մարտական ընկերները նրան համարեցին զոհված և զորամասի զեկուցագրերից մեկում նշվեց, որ Սամեդովը զոհվեց մարտական առաջադրանքը կատարելու պահին[161]։ Մեկ տարի անց, Ֆինլանդիայի պատերազմից դուրս գալուց հետո, Ասաֆը վերադարձավ իր մարտական ընտանիքը և նորից սկսեց ծանր հարվածներ հասցնել հակառակորդին։ Փաստաթղթերից մեկում նրա մասին գրված է. «Գիշեր ու ցերեկ թռչում է լավ, թռիչքի ժամանակ դիմացկուն է և համարձակ»[162]։ 1945 թ. ապրիլից նա արդեն օդակի հրամանատար էր։

Հերոսական բազում սխրանքներ կատարեց նրա մարտական ընկեր, ավագ լեյտենանտ Նիկիտա Սաղաթելովը։ 1943 թ. ընթացքում նա շատ անգամ ռմբակոծեց Տալինը, Հելսինկին, Գատչինան։ Բալթիկ ծովում խորտակեց հակառակորդի երեք փոխադրանավ՝ 13 տոննա ջրատարողությամբ, շարքից հանեց «Ռաումա» փարոսը։ Սաղաթելովը երրորդ անգամ պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[163]։

1944 թ. նավատորմի ավիացիան նոր թափով սկսեց հարվածել հակառակորդին։ Տորպեդակիր ինքնաթիռների թռիչքը, որ դադարեցվել էր 1943 թ. դեկտեմբերին, նորից վերսկսվեց 1944 թ. փետրվարին։ 1-ին գվարդիական ականատորպեդային ավիացիոն գունդն իր խիզախ հրամանատարի, մայոր Ի. Ի. Բորզովի հրամանատարությամբ Բալթիկ ծո-

---

160 ՌԾԿԱ, ֆ. 47242, գ. 116561, թ. 6, 7, ֆ. 88, ց. 2, գ. 525, թ. 144։

161 ՌԾԿԱ, ֆ. 165, ց. 5, գ. 15, թ. 17։

162 Նույն տեղում, ֆ. 4742, գ. 116561, թ. 17։

163 ՌԾԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 523, թ. 559, 162։

վում ծանր հարվածներ հասցրեց հակառակորդին։ Հրամանատարության մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու համար 1944—1945 թթ. ընթացքում գնդի 27 օդաչուների՝ փոխգնդապետ Պ. Ի. Խոխլովին, մայորներ Ի. Ի. Բորզովին, Ն. Դ. Կոտովին, Վ. Մ. Կուզնեցովին, կապիտաններ Ն. Ֆ. Աֆանասևին (զոհված), Գ. Ս. Բաժանովին, Վ. Ա. Բալեբին, Գ. Դ. Վասիլևին, Պ. Լ. Կոշելևին (զոհված), Մ. Վ. Լարինին, Ա. Ի. Ռեզնաևին, Պ. Ֆ. Ստելեցկիին, Ա. Պ. Չերնիշևին, Ի. Գ. Շամանովին, ավագ լեյտենանտներ Յու. Ե. Բունիմովիչին (զոհված), Պ. Ա. Կոլեսնիկին (զոհված), Ա. Վ. Պրեսնյակովին, Մ. Ա. Սովետսկիին (զոհված), Ա. Ի. Ռազդոնինին, Վ. Տ. Չվանովին (զոհված), լեյտենանտներ Ի. Դ. Բաբանովին, Վ. Ա. Բուդուրագինին, Ա. Մ. Դագիևին, Ռ. Ս. Դեմիդովին, Վ. Ն. Եվգրաֆովին (զոհված), Ն. Դ. Իվանովին, Մ. Ֆ. Շիշկովին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ 25-ից 23-ը ռուսներ էին։ Նրանց շարքերում էր օսեթական ժողովրդի փառապանծ զավակ, ականատորպեդային հարվածի հմուտ վարպետ, 22-ամյա լեյտենանտ Ալեքսանդր Մաքսիմովիչ Դագիևը, որը 1944 թ. հուլիսի 5-ից մինչև հոկտեմբերի 12-ը տորպեդային դիպուկ հարվածով Բալթիկ ծովում խորտակեց հակառակորդի 5 փոխադրանավ[164]։ Ամերիկյան կինոդերասան Ռեդ Սկելտոնի նվիրած «Բոստոն» տորպեդակիր ինքնաթիռով էին թռչում օդանավի հրամանատար, ուկրաինացի Պ. Ֆ. Ստրելեցկին և ռուսներ Նիկոլայ Աֆանասևն ու Իվան Տրուսովը։ 1944 թ. փետրվարի 27-ին Վենտսպիլսի նավահանգստի շրջանում նրանք խորտակեցին հակառակորդի «Մոնտ Պասկալ» մեծ փոխադրանավը։ Գրոհի ժամանակ արկի բեկորից Ստրելեցկին ոտքից ծանր վիրավորվեց։ Նա երկու ժամ ինքնաթիռը վարելուց հետո, մեծ դժվարությամբ վայրէջք կատարեց օդանավակայանում։ Արյունաքամ օդաչուին ուշաթափ տեղափոխեցին հիվանդանոց։ Ռուս և ուկրաինացի ժողովուրդների երկու զավակներին՝ Ստրելեցկուն և Աֆանասևին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[165]։

Նավատորմի հրամանատարությունը հաշվի առնելով տորպեդակիր ավիացիայի մարտական արդյունավետությունը, նույն դիվիզիայի կազմում համապատասխան հրամանով ստեղծվեց 51-րդ ականատորպեդային ավիացիոն գունդ (հրամանատար՝ Մ. Ա. Կուրոչկին)։

Նոր կազմավորված ավիացիոն գնդի անձնակազմը յուրացնելով

---

164 Նույն տեղում, ֆ. 3, ց. 2422, գ. 11, թ. 37—38։

165 В. Ф. Трибуц, Балтийцы наступают, с. 71.

1-ին գվարդիական ականատորպեդային ավիացիոն գնդի լավագույն փորձը, կարճ ժամանակում դարձավ հակառակորդին հարվածելու հզոր ուժ։ Ցուցաբերած արիության համար ռուսներ Ա. Ա. Բոգաչևին, Գ. Ա. Զավարինին (զոհված), Մ. Վ. Բորիսովին, Ի. Վ. Տիխոմիրովին (զոհված), Ի. Ի. Ռաչկովին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Այդ մեծ պատվին արժանացան նաև ուկրաինական ժողովրդի զավակներ, գնդի հրամանատարի օգնական Ի. Ն. Պոնոմարենկոն և օդաչու Ի. Կ. Սաչկոն (զոհված)։ Օդում տորպեդակիրների մարտական գործողություններն էր ապահովում դիվիզիայի 21-րդ կործանիչ ավիացիոն գունդը՝ փոխգնդապետ Պ. Ի. Պավլովի հրամանատարությամբ։ Գնդից երեք օդաչուի, այդ թվում նաև գնդի հրամանատարին, շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Մարտական փառապանծ գործերով ավիացիոն դիվիզիայի մյուս գնդերից ետ չէին մնում նաև 12-րդ գվարդիական խոյընթաց ավիացիոն գունդը, որը տվեց 10 Սովետական Միության հերոս, իսկ մարտական կոլեկտիվի հրամանատարը՝ փոխգնդապետ Վասիլի Իվանովիչ Ռակովը և մայոր Ալեքսեյ Եֆիմովիչ Մազուրենկոն այդ բարձր պատվին արժանացան երկրորդ անգամ։ Վերջինս 1944 թ. նոյեմբերին նշանակվեց 7-րդ դրոհիչ ավիացիոն գնդի հրամանատար։ Այդ մարտական ընտանիքում էր ծառայում հմուտ մասնագետ, 2-րդ էսկադրիլիայի ավիացիոն օղակի սպասարկող տեխնիկների հրամանատար, բաքվեցի, կապիտան Հասպետնակ Խաչատուրի Հայրապետյանը։ Նա նախքան պատերազմը, լավագույն աշխատանքի համար 1940 թ. պարգևատրվել էր «Պատվո նշան» շքանշանով։ 1944 թ. հունիսին Հայրապետյանը զորակոչվեց բանակ և ծառայության ուղարկվեց ավիացիոն այդ գունդը։ Օդաչուական անձնակազմը գոհ էր նրա աշխատանքից։ 1944 թ. հունիսից մինչև պատերազմի հաղթական ավարտը նա ապահովեց 842 մարտական թռիչք, դաշտային պայմաններում նրա ղեկավարությամբ վերանորոգվեց 35 ինքնաթիռ և 45 շարժիչ։ Վերանորոգման աշխատանքների զգալի մասը կատարվում էր 30 աստիճան սառնամանիքի պայմաններում։ Նրա եռանդուն աշխատանքի շնորհիվ, նույն օրը վնասվածք ստացած ինքնաթիռները հաջորդ օրը նորից թռչում էին մարտական առաջադրանքի։ Հայրապետյանը պարգևատրվեց Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով[166]։

Այդ մարտական փառապանծ կոլեկտիվը, 8-րդ գվարդիական ականատորպեդային դիվիզիան Մեծ Հայրենականի ընթացքում տվեց 53

166 ՌԾԿԱ, ֆ. 88, ց. 2, գ. 172, թ. 194։

Սովետական Միության հերոս։ Նրանցից 43-ը ռուսներ էին, 8-ը՝ ուկրաինացի, 1 հրեա և 1 օս[167]։

Համարձակ ու եռանդուն էին գործում 9-րդ և 11-րդ գրոհիչ ավիացիոն դիվիզիաները՝ գնդապետներ Գ. Ի. Խատիշվիլու և Դ. Գ. Մանժոսովի հրամանատարությամբ։ Գրոհային օդաչուներն արդեն մարտական փորձ ունեին։ Պատերազմի ամենածանր օրերին, 1941—1942 թթ. մարտընչեցին Լենինգրադի համար, այնուհետև մասնակցեցին Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Օդեսայի համար մղված մարտերին և նորից հարազատ Լենինգրադի համար։ Գրոհայինները, նավատորմի մյուս ավիացիոն ղորամասերի հետ միասին, հիմնականում աջակցում էին գեներալ Ի. Ի. Ֆեդյունինսկու 2-րդ հարվածային բանակի միավորումներին։ Հունվարի 17-ին անմահ սխրագործություն կատարեցին 9-րդ գրոհիչ ավիացիոն դիվիզիայի 7-րդ գվարդիական գրոհիչ ավիացիոն գնդի օդաչու Ի. Ա. Իրժակը և նրա ռադիստ-հրաձիգ Վ. Դ. Ժդանովը։ Զենիթային կրակից նրանց ինքնաթիռն այրվեց։ Խիզախ օդաչուներն, առանց վարանելու, այրվող ինքնաթիռն ուղղեցին թշնամու ուժերի կուտակումների վրա։ Ուժեղ պայթյունը քարուքանդ արեց շենքը և ոչնչացրեց նրա շրջակայքում գտնվող ռազմական տեխնիկան ու կենդանի ուժը։ Մարտի 23-ին ֆինական ծոցում նման հերոսություն կատարեցին նույն գնդի օդաչու Վ. Ն. Կաշտանկինը՝ իր ռադիստ-հրաձիգ Վ. Գ. Կուզնեցովի հետ միասին։ Նրանք այրվող ինքնաթիռով մխրճվեցին հակառակորդի ռազմանավի կենտրոնը։ Պայթյունից նավը խորտակվեց։ Մի քանի օր հետո նույնը կրկնեցին Ա. Ի. Ստրատիլատովը և Ս. Ֆ. Սամոյլովը[168]։ Հակառակորդին ծանր կորուստներ պատճառեցին դիվիզիայի հրամանատարի համերկրացիներ՝ գնդի գրոհիչ օդաչուներ, մարտական մեծ փորձ ունեցող Ա. Ե. Գուրգենիձեն և 22-ամյա կրտսեր լեյտենանտ Ն. Ն. Կակուրիձեն։ 1944 թ. ընթացքում Բալթիկ ծովում նրանք խորտակեցին հակառակորդի մի քանի նավեր։ Գուրգենիձեին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում, իսկ Կակուրիձեն պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[169]։ Գնդում մեծ աշխատանք էր կատարում շուվաշ ժողովրդի զավակ, մարտական երեք Կարմիր դրոշի շքանշանների ասպետ, գնդի շտուրման, մայոր Գ. Ֆ. Լարիոնովը։ Հմուտ հրամանատարի մարտական թռիչքների շառավիղը շատ ընդարձակ էր։ Նա բազմիցս ոմ-

---

167 Հաշվումները կատարվել են ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության կենտրոնական արխիվի նյութերի հիման վրա։

168 *В. Ф. Трибуц*, Балтийцы наступают, с. 62—63, 85.

169 *ՌԾԿԱ, ֆ. 3, ց. 2922, գ. 11, թ. 51—55, ֆ. 88, ց. 2, գ. 320, թ. 82։*

բակոծեց Հելսինկի, Կոտկա, Կունդա, Վինդավա, Զուդովո, Բլանովսկ, Օլոնեց, Լուբան, Մգա, Գատչինա, Կինգիսեպ, Սինյավինո քաղաքների շրջանում գտնվող հակառակորդի ռազմական օբյեկտները։ Լարիոնովը մեծ ուշադրություն էր դարձնում օդաչուների ու շտուրմանների մարտական պատրաստության հարցերին և իր հարուստ փորձը հաղորդում նրանց։ 1943—1944 թթ. ընթացքում նա պատրաստեց 98 օդաչու և ավելի քան 10 շտուրման։ Նրանցից շատերը հետագայում դարձան մարտական շատ շքանշանների ասպետներ և Սովետական Միության հերոսներ։ Զուվաշ ժողովրդի զավակին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[170]։

Փոխադարձ համագործակցությամբ հակառակորդին նյութական ծանր վնասներ հասցրեց դիվիզիայի 35-րդ գրոհիչ ավիացիոն գունդը, ուր ռուս ժողովրդի զավակների հետ ուս-ուսի թշնամու դեմ մարտնչում էին նաև սովետական բազմազգ ժողովրդի ներկայացուցիչները, որոնք միշտ գտնվում էին ավանգարդում։ Մարտական դասավորված շարքով դեպի մարտական նպատակակետն էին թռչում ռուսներ Ի. Ս. Բանիֆատովը, Ն. Ա. Նիկիտինը, Ֆ. Ա. Կոշևոյը, ուկրաինացի Ա. Մ. Բատիևսկին, բելոռուս՝ Վ. Պ. Վասիլչենկոն, Մ. Զ. Ջանսուզյանը, Ս. Մ. Ափինյանը և ուրիշներ։ Առաջին չորսին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Մարտական առաջադրանքը կատարելիս շատ համարձակ ու հնարամիտ էր գործում ավագ լեյտենանտ Ալեքսեյ Միխայլովիչ Բատիևսկին։ Այդ գնդի կազմում նա 1943 թ. հուլիսի 22-ից մինչև 1944 թ. հոկտեմբերի 20-ը կատարեց 130 մարտական թռիչք, ոմբակոծեց հակառակորդի ուժերի դասավորությունը Նարվայի, Սինյավինոյի, Ռոսլշայի, Կինգիսեպի շրջաններում, Վիբորգյան կղզիներում, Ֆիննական ու Ռիգայի ծոցերում, Զուդ լճում և այլ տեղերում։ Բատիևսկին երեք անգամ պարգևատրվեց Կարմիր դրոշի և մեկ անգամ Կարմիր աստղի շքանշաններով։ Այդ մարտերում նա ոչնչացրեց թշնամու 860 զինվոր ու սպա, 7 դաշտային հրանոթ, 18 գնդացրային կետ, 5 ականանետային մարտկոց, 39 ավտոմեքենա, երկու տանկ և այլ ռազմական տեխնիկա[171]։

Այդ խիզախ օդաչուների հետ մարտական առաջադրանքի էին թռչում հայ ժողովրդի զավակներ Հարություն Փորսուղյանը և Մնացական Զաքարի Ջանսուզյանը։ Առաջինն իր մարտական ընկերների հետ միասին Բալթիկ ծովում խորտակեց թշնամու 8 նավ և պարգևատրվեց Կար-

170 Նույն տեղում, ց. 2421, գ. 2, թ. 141—142։

171 ՌՇԿԱ, ֆ. 3, ց. 2422, գ. 11, թ. 12—17։

միր դրոշի շքանշանով[172]։ Մնացական Ջանսուղյանն իր մարտական գործերով ետ չէր մնում հայրենակից ընկերոջից։ 1944 թվականի մարտի 3-ին Կունդա նավահանգիստը ոմբակոծելու ժամանակ անձամբ խորտակեց թշնամու 2 ականորս, իսկ երկու օր հետո, Նարվայի շրջանում, պայթեցրեց ռազմական մեկ խոշոր պահեստ և մեկ զենիթային մարտկոց։ Ջանսուղյանը ծանր վիրավորվեց, բայց չհեռացավ մարտից, մինչև որ ոչնչացրեց թշնամու զենիթային մարտկոցը։ Մարտական առաջադրանքը կատարելուց հետո նա մեծ դժվարությամբ վայրէջք կատարեց օդանավակայանում։ Գիտակցությունը կորցրած վիճակում նրան տեղափոխեցին հոսպիտալ։ Ջանսուղյանը պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով[173]։

Նավատորմի 1-ին գրոհիչ ավիացիոն դիվիզիայի կազմում հերոսաբար կռվեցին Սովետական Միության հերոս, գնդապետ Ն. Վ. Ջելնոկովի, Սովետական Միության հերոս, փոխգնդապետներ Ն. Գ. Ստեփանյանի, Ա. Բ. Ջափարիձեի ավիացիոն գնդերի անձնակազմերը։ Մարտերում փառաբանված ավիացիոն միավորման 8 օդաչուների՝ Կ. Վ. Բլագոդարովին, Մ. Ն. Կաղակովին, Դ. Ա. Կուզնեցովին, Ա. Ս. Պոտապովին, Ն. Վ. Պսինին, Ե. Գ. Ուդալցովին, կումիկ Յու. Ա. Ակաևին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում, իսկ գնդի հրամանատարներ Ն. Վ. Ջելնոկովը և Ն. Գ. Ստեփանյանն այդ բարձր պատվին արժանացան երկրորդ անգամ։

Բալթիկ ծովում տեղի ունեցած մարտերի պատմությունը սկզբից մինչև վերջ անխզելիորեն կապված է դիվիզիայի 47-րդ գրոհիչ ավիացիոն գնդի հրամանատար, փոխգնդապետ Նելսոն Գևորգի Ստեփանյանի հետ։ Լենինգրադի, Հյուսիսային Կովկասի, Ղրիմի և Մերձբալթիկայի համար մղված մարտերը փառք ու անմահություն բերեցին նրան։ Ռազմական մեքենային տիրապետելու հմտությունը և անսահման խիզախությունն ու համարձակությունը ծովայինի ամենալավագույն հատկությունների դրսևորման օրինակ են։ Նելսոն Ստեփանյանը հերոսաբար կռվեց ու հերոսաբար զոհվեց հաղթանակի արշալույսին։ Բայց նա այնքան բան արեց, որը հավասարվում է, և նույնիսկ ավելին, մեկ դիվիզիայի կողմից թշնամուն հասցված վնասին։ Այդ ցույց տալու համար բերենք նրա պարգևատրման թերթիկից վերցված տվյալները. 1941 թ. հունիսից մինչև 1944 թ. օգոստոսի 18-ը նա Իլ-2 գրոհիչ ինքնաթիռով կատարեց 239 մարտական թռիչք, ջրասույզ արեց 13 ռազ-

---

172 Ի. Ա. Իսակով, *Հայ ծովայինները Հայրենական մեծ պատերազմում*, 1946, էջ 26։

173 ՌՇԿԱ, ֆ. 88, ց. 2, դ. 275, թ. 368։

մանավ ու փոխադրանավ, ոչնչացրեց 5000 հիտլերական, 80 տանկ, 600 ավտոմեքենա, 130 թնդանոթ, 130 գնդացրային կետ, 40 երկաթուղային վագոն, 1 շոգեքարշ, 27 ինքնաթիռ, բարուքանդ արեց շորս անցում, առաջացրեց 30 պայթյուն, 70 հրդեհ և այլն։ 1944 թ. ապրիլի 12-ից սկսած ավիացիոն գունդը նրա հրամանատարությամբ կատարեց 1454 մարտական թռիչք, ջրասույզ արեց 53 նավ, ոչնչացրեց 13 ինքնաթիռ, 51 հրետանային մարտկոց, 25 ավտոմեքենա, 4 դղոտ, 3 պահեստ և 4000 հիտլերական[174]։ Այս դեռևս թշնամուն հասցված վնասի լրիվ ցանկը չէ, որովհետև նրա մեջ չի մտնում 1944 թ. օգոստոսի վերջից մինչև 1944 թ. դեկտեմբերի 14-ը՝ թշնամուն հասցված վնասը։ Հարյուրավոր ֆաշիստներ նրա ռումբային ու գնդացրային դիպուկ հարվածներից իրենց գերեզմանը գտան Տալլին, Լիբավա, Պալանգա, Պիլաու քաղաքներում ու Սարեմա կղզում։ Նելսոն Ստեփանյանը թշնամու դեմ վերջին մարտը մղեց 1944 թ. դեկտեմբերի 14-ին՝ Լիբավայի երկնքում։ Մարտական առաջադրանքը կատարելիս մի քանի տասնյակ ինքնաթիռներ հարձակվեցին Նելսոնի և նրա ընկերների վրա։ Անհավասար մարտում նա ցած գցեց թշնամու մեկ ինքնաթիռ, բայց նրա գրոհիչն էլ արկի ուղղակի հարվածից բոցավառվեց և ընկղմվեց Բալթիկայի ջրերի մեջ։ Հերոսական մահով զոհվեց Բալթիկայի մրրկահավը, թշնամու ահն ու սարսափը։ Հրամանատարի կորուստը ծանր վիշտ պատճառեց գնդի անձնակազմին և ավելի բորբոքեց ատելությունը հակառակորդի նկատմամբ։ Նելսոնի մարտական զինակիցները՝ Միխայիլ Կուդրյավցևը, Իվան Պուկասը, օս Գեորգի Կիբիլովը, դաղստանցի Յուսուպ Ակաևը և մյուս օդաչուները, վրեժխնդրությամբ լցված, բազմապատիկ անգամ վրեժ լուծեցին սիրելի հրամանատարի մահվան համար։ Մարտական առաջադրանքը կատարելիս համարձակ էր Նելսոնի հայրենակից Եֆիմ Գրիգորևիչ Ուդալցովը[175]։

---

[174] *Нельсон Степанян*, Сборник документов, 1968, с. 90—92.

[175] Եֆիմ Գրիգորևիչ Ուդալցովը ծնվել է 1922 թ., Կիրովականի շրջանի Վոսկրեսենովկայում (այժմ՝ Ֆիոլետովո), բանվորի ընտանիքում։ 1935 թ. ծնողները բնակություն են հաստատում Թբիլիսիում։ Այստեղ Ուդալցովը ավարտում է յոթնամյակը և ընդունվում երաժշտական դպրոց, բայց նրան վիճակված չէր դառնալ երաժիշտ։ 1938 թ. նա աշխատանքի է ընդունվում՝ սկզբում Թբիլիսիի ավտովերանորոգման գործարանում որպես էլեկտրիկ, իսկ հետո «Большевистская путевка» տպարանում՝ տպագրիչ։ 1941 թ. Ուդալցովը սկսեց հաճախել Թբիլիսիի ավիացիոն ակումբը։ Նույն թվականին կոմերիտմիության ուղեգրով գործուղվում է սովորելու Լևանովսկու անվան ռազմածովային ավիացիոն ուսումնարանը։ 1943 թ. տեղափոխվում է Սարանսկի ռազմածովային ուսումնարանը, որը և ավարտում է հունիսին (ՌԾԿԱ, ե. Գ. Ուդալցովի անձնական գործ, № 170786, թ. 6—15)։

1943 թ. հունվարի սկիզբն էր։ Ծանր ու համառ մարտեր էին գնում Հյուսիսային Կովկասում՝ հարձակման անցած սովետական զորքերի և ֆաշիստական զավթիչների միջև։ Լենինգրադի շրջանից Հյուսիսային Կովկաս տեղափոխվեց Բալթյան կարմրադրոշ նավատորմի 11-րդ գրոհիչ ավիացիոն դիվիզիան։ Այդ դիվիզիայի 47-րդ գրոհիչ ավիացիոն գնդում 1943 թ. օգոստոսին նշանակում ստացավ կոմերիտական Եֆիմ Ուդալցովը, ուր 1944 թ. ապրիլին հրամանատարի պաշտոնը ստանձնեց Նելսոն Ստեփանյանը։ Երիտասարդ օդաչուն հերոսաբար կռվեց Հյուսիսային Կովկասի և Ղրիմի ազատագրման մարտերում, պարգևատրվեց Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի և երկու Կարմիր դրոշի շքանշաններով։ Գունդը 1944 թ. մայիսի վերջին նորից փոխադրվեց Լենինգրադի շրջանը և ակտիվորեն մասնակցեց Կարելական պարանոցում ու Ֆիննական ծոցում նպիտակֆիննների ջախջախման մարտական գործողություններին։ Այդ մարտերում Ուդալցովը մարտնչեց հերոսաբար և արժանացավ կառավարության բարձր պարգևին՝ Սովետական Միության հերոսի կոչմանը։ Մեծ հայրենականի ընթացքում խիզախ օդաչուն կատարեց 106 մարտական թռիչք, խորտակեց 20 նավ, ոչնչացրեց 4 ինքնաթիռ, 6 տանկ, 31 ավտոմեքենա, 21 հրետանային մարտկոց, 1000 հիտլերական և այլն[176]։ Գնալով աճում էր երիտասարդ օդաչուի մարտական հաշիվը։ Գնդի հրամանատար Նելսոն Ստեփանյանը նրան նորից ներկայացրեց պարգևատրման։ Բալթյան կարմրադրոշ նավատորմի հրամանատարի՝ 1944 թ. դեկտեմբերի 23-ի հրամանով Եֆիմ Ուդալցովը երրորդ անգամ պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով[177]։ 1945 թ. մարտի կեսերին Ուդալցովը ծանր փորձություն ապրեց։ Պիլաու նավահանգիստը ռմբակոծելիս, նրա ինքնաթիռը խփվեց, իսկ ինքը վիրավոր վիճակում պարաշյուտով վայրէջք կատարեց և գերվեց թշնամու կողմից։ Համակենտրոնացման ճամբարներ՝ Պիլաու, Բեռլին, Դրեզդեն, Տախաու, Մարիենգաֆ, Վայդան։ 1945 թ. ապրիլի 21-ին նա փախուստի դիմեց, մեծ դժվարությամբ անցավ ռազմաճակատի գիծը և հաղթանակի բերկրանքը ճաշակեց հարազատ միջավայրում[178]։ Էսկադրիլիան, որի կազմում թշնամու դեմ կռվում էր Ուդալցովը, մինչև պատերազմի հաղթական ավարտը բազում հերոսական գործեր կատարեց։ Նրա փորձված հրամանատարը՝ դաղստանցի, կումիկ ժողովրդի

---

176 ՌՇԿԱ, ֆ. 3, ց. 2422, գ. 11, թ. 205։

177 Նույն տեղում, ց. 1, գ. 877, թ. 538։

178 Նույն տեղում, անձնական գործ։

զավակ, կապիտան Յուսուպ Աբդուլաբեկովիչ Ակաևը Նելսոն Ստեփանյանի մարտական ընկերն ու մերձավոր զինակիցն էր։ Նելսոնի զոհվելուց հետո նա ստանձնեց գնդի հրամանատարությունը և շարունակեց սիրելի հրամանատարի գործը։

Լենինգրադի ու Բալթիկայի երկնքում, օդային մարտերում աչքի ընկավ 1-ին գվարդիական կործանիչ ավիացիոն դիվիզիան՝ գնդապետ Վ. Ս. Կորեշկովի հրամանատարությամբ։ Մարտական գործողությունների ամբողջ ընթացքում դիվիզիայի օդաչուները պարեկում էին երկնքում, թույլ չտալով հակառակորդի ինքնաթիռներին ռմբակոծելու հարձակվող սովետական զորքերի մարտակարգերը, ծովում գործող ռազմանավերը, թիկունքի ռազմական օբյեկտներն ու կարևոր ռազմական հանգույցները։ Նրանք մինչև նպատակակետը ուղեկցում էին ռմբակոծիչներին ու գրոհիչներին, ապահովում նրանց մարտական գործողությունները։ Դիվիզիայի 16 օդաչուների՝ Մ. Յա. Վասիլևին, Ի. Ս. Կրավցովին, Ի. Ա. Կաբերովին, Ի. Ի. Յասլովին, Դ. Մ. Տատարենկոյին, Ս. Ի. Լվովին, Վ. Ի. Չերնենկոյին, Դ. Դ. Կոստիլովին, Ա. Ա. Շիլկոյին, Ե. Տ. Ցիգանովին, Տ. Ս. Ժուչկովին, Ա. Յու. Բայսուլթանովին (զոհված), Գ. Դ. Յոկոլևին, Ա. Մ. Սելյուտինին, Վ. Ֆ. Գոլուբևին, Վ. Ֆ. Աբրամովին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Ծովային օդաչուների մարտական հաջող գործողությունները պայմանավորված էին նավատորմի հետախուզական ավիացիայի գործողություններով։ Այդ բարդ ու դժվարին գործում իրենց բարձրության վրա գտնվեցին 15-րդ առանձին հետախուզական ավիացիոն գունդը՝ օդային հմուտ հետախույզ, փոխգնդապետ Ֆ. Ա. Ուսաչևի գլխավորությամբ։ Հրամանատարության մարտական առաջադրանքները պատվով կատարելու համար գնդի 8 օդաչուների, այդ թվում նաև հրամանատարին, շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում։ Այդ հերոսներից 6-ը՝ Ա. Ի. Գրաչևը, Գ. Ի. Դավիդենկոն, Ա. Գ. Կուրղենկովը, Մ. Ն. Տորոլենկոն, Գ. Ի. Զագովեցը և Ն. Վ. Շապկինը հերոսաբար զոհվեցին մարտական առաջադրանքը կատարելիս։

Բալթիական օդաչու-նավատորմայինները հսկայական աշխատանք կատարեցին։ Միայն 1944—1945 թթ. նրանց հարվածներից հակառակորդը կորցրեց 150 փոխադրանավ, 200 մարտական ու օժանդակ նավ և մեծ թվով ինքնաթիռներ[179]։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարու-

---

[179] «Авиация и космонавтика СССР», М., 1968, с. 292—294.

թյունը բարձր գնահատեցին օդաչու-նավատորմայինների սխրանքը։ 112 օդաչուի շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[180]։ Այդ բարձր կոչմանը արժանացավ նավատորմի ռազմաօդային ուժերի հրամանատար, գեներալ-գնդապետ Միխայիլ Իվանովիչ Սամոխինը։

Փոխգնդապետներ Ալեքսեյ Եֆիմովիչ Մաղուրենկոն, Նելսոն Գևորգի Ստեփանյանը, Վասիլի Իվանովիչ Ռակովը և Նիկոլայ Վասիլևիչ Զելենկովը դարձան Սովետական Միության կրկնակի հերոսներ։

Նավատորմի մարտական գործողությունների բոլոր հատվածներում հակառակորդի դեմ հերոսաբար մարտնչեցին ու հսկայական աշխատանք կատարեցին բժշկական ծառայության աշխատողները։ Նրանց անձնազոհ ու եռանդուն աշխատանքը կյանք պարգևեց ու մարտական շարք վերադարձրեց հազարավոր մարտիկների ու հրամանատարների։ Առաջիկա մարտերին լավ նախապատրաստվելու համար սովետական զորքերի հարձակման նախօրյակին անցկացվեց համանավատորմային կոնֆերանս, Կարմրադրոշ նավատորմի գլխավոր վիրաբույժ, պրոֆեսոր Մ. Ս. Լիսիցինի ղեկավարությամբ։ Կոնֆերանսին մասնակցեց նաև Լենինգրադյան ռազմաճակատի գլխավոր վիրաբույժ, պրոֆեսոր Պ. Ա. Կուպրիանովը։ Հիմնական ուշադրությունը դարձվեց վիրավորների էվակուացման հարցի վրա։

1944 թ. հունվարի սկզբին նավատորմի բժշկական ծառայության զորամասերը պատրաստ էին մարտական գործողություններին։ Երբ սկսվեց հարձակումը, բժշկասանիտարական ծառայությունները սկսեցին աշխատել կազմակերպված, համաչափ ու համագործակցված։ Հարձակման մի քանի օրում մեծ թվով վիրավորներ էին կուտակվել Օրանիենբաումի շրջանում։ Անհրաժեշտ էր արագ լուծել խնդիրը։ Կրոնշտադտի ծովային պաշտպանական շրջանի հրամանատար, փոխ-ծովակալ Գ. Ի. Լևչենկոն անմիջապես առանձնացրեց երկու նավ՝ վիրավորներին տեղափոխելու համար։ Նավերի անձնակազմերը, հաղթահարելով մեծ դժվարություններ, Լենինգրադ հասցրին հազարավոր վիրավորների, իսկ այնտեղից 2-րդ հարվածային բանակի համար տեղափոխեցին զենք ու զինամթերք։ Այդ օրերին մեծ աշխատանք կատարեցին Կրոնշտադտի ռազմածովային բազայի բժշկական ծառայության պետ Պ. Ե. Կալինկինը, № 2016 էվակուացիոն հոսպիտալի պետ Ն. Գ. Մերցալովը, էվակուացիոն ջոկատի պետ Ա. Գ. Գոֆմանը, № 35 ռազմածովային

---

180 Ռազմածովային նավատորմի կենտրոնական արխիվի նյութերի հիման վրա հաշվումները կատարվել են մեր կողմից։

հոսպիտալի պետ Շ. Ն. Երմակովը, ավագ վիրաբույժ Ա. Պ. Նիկիտինը, վիրաբույժներ Ֆ. Մ. Դանովիչը, Վ. Ի. Իշխանովը, Ի. Ա. Հոմանովը, Ն. Վ. Պետրովը, Ա. Ի. Խմալաձեն, Ս. Ա. Կորովինը և շատ ուրիշներ։ Իր կատարած բարդ վիրահատություններով ու վիրավորների նկատմամբ ցուցաբերած հոգատար վերաբերմունքով մեծ հեղինակություն էր վայելում 3-րդ կարգի զինբժիշկ Վահան Իսահակի Իշխանովը։ Նրա հմուտ ձեռքերը կյանք պարգևեցին շքանշանակիր ծովայիններ Խրոմովին, Զայցևին, Մալկովին և շատ ուրիշների։ Նավատորմի Լենինգրադի ռազմածովային բազայի քաղբաժինը տարածեց թերթիկ-բյուլետեն, ուր գրված էր Իշխանովի կատարած բարդ վիրահատությունների մասին։ Բյուլետենը վերջում կոչ էր անում բոլոր զինբժիշկներին՝ նրմանվել նրան[181]։ Աղասի Նուբարյանը «Կիրով» հածանավի գլխավոր վիրաբույժն էր, երբ սկսվեց պատերազմը։ Բալթյան կարմրադրոշ նավատորմի՝ Տալինից Լենինգրադ ծովային դժվարին երթի ժամանակ նա փրկեց բազմաթիվ նավաստիների կյանքը։ Ինքնաթիռից նետված բեկորից վիրավորվեց, բայց չհեռացավ վիրահատման սեղանից և այդ վիճակում կատարեց բարդ վիրահատություն՝ փրկեց փոխծովակալ Դրոզդի կյանքը։ 1941 թ. Նուբարյանը նշանակվեց Լենինգրադի ռազմածովային հոսպիտալի վիրաբուժական բաժանմունքի պետ, իսկ որոշ ժամանակ անց դարձավ այդ հիվանդանոցի գլխավոր վիրաբույժը[182]։ Նման մասնագիտական բարձր որակավորում ունեցող բժիշկների թիվը նավատորմում քիչ չէր։ Իրենց պարտականությունները պատասխանատվության մեծ զգացումով ու նվիրումով կատարեցին նավատորմի գլխավոր բժիշկներ Վ. Ռ. Բաուդերը և նրա հաջորդ Ա. Վ. Սմոլենիկովը, գլխավոր թերապևտ Գ. Ա. Սմագինը, գլխավոր համաճարակագետ Վ. Ի. Իոֆֆեն, ռազմածովային նավատորմի գլխավոր բժիշկ Վ. Ն. Կորնևևը հակահամաճարակագետներ Մ. Բ. Օռլովը, Ա. Ա. Կուկլինովը, Մ. Մ. Մինասյանը և ուրիշներ։

Լենինգրադի շրջափակման վերացման մարտերում մեծ աշխատանք կատարեցին նաև ինժեներատեխնիկական, հակաստղանավային, կապի, հակաօդանային, նավերի վերանորոգման, վթարային ու փրկարար ծառայությունների աշխատողները։

Հայրենիքը բարձր գնահատեց Լենինգրադի համար մղված հերոսական մարտերում սովետական ռազմիկների ու լենինգրադցիների մեծ

---

181 ՀՄՊՊԿ արխիվ, ֆ. 253, գ. 24, թ. 2։

182 «Առողջապահություն», 1966, № 6, էջ 51—52։

սխրանքը։ Միայն Լենինգրադյան ռազմաճակատի 350 հազար զինվորներ ու սպաներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով։ Նրանցից 226 լավագույններին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում, իսկ 5-ը այդ բարձր պատվին արժանացան կրկնակի[183]։ 1460 հազար մարդ պարգևատրվեց «Լենինգրադի պաշտպանության համար» մեդալով։ Նրանցից 470 հազարը լենինգրադցիներ էին։ Ֆաշիստական զավթիչների դեմ մղված մարտերում ցուցաբերած տոկունության, արիության ու հերոսության համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1945 թ. հունվարի 26-ի հրամանագրով Լենինգրադ քաղաքը պարգևատրվեց Լենինի շքանշանով[184]։

4. ԹՇՆԱՄՈՒ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Հայրենական պատերազմի տարիներին գերմանաֆաշիստական զավթիչների դեմ սովետական ժողովրդի մղած պայքարի բաղկացուցիչ մասն է պարտիզանական շարժումը։ Այն իր ժողովրդական բնույթով ու կազմակերպվածությամբ, ընդգրկման ծավալով ու թափով անծանոթ էր մինչ այդ եղած պատերազմների պատմությանը։ Պատերազմի հենց առաջին ամիսներին պարտիզանական շարժումը կրեց կազմակերպված բնույթ։ Հիտլերականների կողմից ժամանակավորապես օկուպացված սովետական տարածքում գործող ընդհատակյա մարզկոմների ու շրջկոմների և կուսակցական մյուս կազմակերպությունների համար պայքարի ծրագրային փաստաթուղթ հանդիսացավ Համկ(բ)Պ Կենտկոմի 1941 թ. հուլիսի 18-ի որոշումը՝ «Գերմանական զորքերի թիկունքում պայքար կազմակերպելու մասին»[185]։ Որոշման մեջ ընդգրկված էին հետևյալ խնդիրները. գերմանական զավթիչների համար ստեղծել գոյության անտանելի պայմաններ, կազմալուծել նրանց կապի միջոցները, տրանսպորտը, զորամիավորումները, ոչնչացնել զավթիչներին ու նրանց գործակալներին։ Միաժամանակ թիկունքի խնդիրն էր, ամեն կերպ օգնել հետիոտն ու հեծյալ պարտիզանական ջոկատների, դիվերսիոն և կործանիչ խմբերի ստեղծմանը, ապա զավթած տարածքներում ֆաշիստական զավթիչների դեմ բոլոր գործողությունները ղե-

---

[183] «Правда», 11 հուլիսի 1965 թ.։

[184] «История второй мировой войны 1939—1945». М., 1977 г., т. 8. с. 131.

[185] «История Великой Отечественной войны Советского Союза 1941—1945 гг.», т. 2, М., 1963, с. 121.

կավարելու համար ծավալել բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպությունների ցանցը։ Ղեկավարվելով ծրագրային այդ փաստաթղթով, Լենինգրադի մարզային ու քաղաքային կոմիտեները և նրանց ենթակա կուսակցական կազմակերպությունները բորբոքեցին պարտիզանական պայքարի չտեսնված բոց, որը պատերազմի ընթացքում ավելի ընդլայնվեց ու վերաճեց համաժողովրդական շարժման։

Հիտլերականների կողմից իրականացվող ոչ մի ահաբեկում, ոչ մի տեռոր ընդունակ չէր ընկճելու պարտիզանների կամքը, նրանց ետ պահելու հայրենիքի նկատմամբ սրբազան պարտքը կատարելուց։ Պարտիզաններն իրենց մարտական գործողություններով հսկայական աջակցություն ցույց տվեցին կարմիր բանակին, նպաստեցին սովետական հրամանատարության առաջ ծառացած խնդիրների կատարմանը։

Գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղված պարտիզանական պայքարի պատմության մեջ արժանավոր տեղ են գրավում Լենինգրադի մարզի ժողովրդական վրիժառուների մարտական գործերը։ Պարտիզանական առաջին ջոկատները կազմակերպվեցին Լենինգրադում և ուղարկվեցին թշնամու թիկունք։ Պարտիզանական պայքարը կազմակերպելու, ընդհատակյա կուսակցական կազմակերպությունների և խմբերի աշխատանքը ղեկավարելու համար, Լենինգրադից թշնամու թիկունք ուղարկվեցին կուսակցական աշխատանքի փորձ ունեցող մեծ թվով կոմունիստներ։ Մինչև 1941 թ. վերջը Լենինգրադի մարզում արդեն գործում էր 400 պարտիզանական ջոկատ ու դիվերսիոն խումբ[186], որոնց ղեկավարում և ուղղություն էին տալիս Լենինգրադի պարտիզանական շտաբը և նրան առընթեր գործող օպերատիվ խմբերը։

1941 թ. ամառը, Լենինգրադի հարավային մասում՝ Պոլիստ և Շելոն գետերի ավազանում գործող Ստարայա Ռուսայի, Պոդդորի և Աշևի շրջաններում առանձին գործող պարտիզանական ջոկատները միավորվեցին և ստեղծեցին պարտիզանական 2-րդ բրիգադը։ Հետագայում երկրորդ բրիգադին միացան Դեդովիչի, Դնոյի, Պորխովի, Սլավկովի, Ուտորգոշի և մի շարք այլ շրջանների պարտիզանական ջոկատները։ Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին բրիգադը համառ մարտերից հետո հիտլերականներից մաքրեց Բելբեկովի, Աշևի և Դեդովիչի շրջանները։ Ազատագրված տարածքը ստացավ «Պարտիզանական երկրամաս»

---

[186] *П. Р. Шевердалкин,* Героическая борьба Ленинградских партизан. Л., 1959, с. 31.

անունը, որի երկարությունը հյուսիսից հարավ 120 կիլոմետր էր, իսկ լայնությունը՝ 80[187]։ «Պարտիզանական երկրամասում» վերականգնվեց սովետական իշխանությունը. իրենց գործունեությունը վերսկսեցին կոլտնտեսությունները, սովխոզները, դպրոցները և կուլտուր-լուսավորական հիմնարկները։ Այստեղից պարտիզանները 1941 թ. վերջին և 1942 թ. սկզբին մի շարք համարձակ հարձակումներ գործեցին թշնամու կայազորների վրա, նրանց պատճառելով կենդանի ուժի ու տեխնիկայի ծանր կորուստներ։

Լենինգրադի մարզում պարտիզանական շարժումը գնալով ավելի մեծ ծավալ ընդունեց, իր մեջ ներառելով նոր շրջաններ ու բնակավայրեր։ Ամեն օր, ամեն ժամ ավելի ու ավելի համարձակ ու վճռական էին դառնում նրանց գործողությունները։ Պարտիզանական շարժման հուժկու թափից անհանդստացած հիտլերյան հրամանատարությունը խոշոր ուժեր նետեց «Պարտիզանական երկրամասի» դեմ։ Ծանր ու համառ մարտերից հետո 1942 թ. սկզբներին հիտլերականներին հաջողվեց գրավել «Պարտիզանական երկրամասը»։ Պարտիզանները պահպանելով իրենց հիմնական ուժերը, շարժվեցին դեպի Օստրովի, Սլավկովի, Նովոռժևի, Պսկովի, Կարամիշևի, Սոշիխնի, Սոլեցկի, Ուտորգոշի, Լուգայի, Գդովի և Սլանցի շրջանները և նոր ուժով սկսեցին հարվածներ հասցնել թշնամուն։ 1941 թ. հուլիսից մինչև 1942 թ. մարտը՝ պարտիզանների կողմից ոչնչացվեց 16699 ֆաշիստական զինվոր ու սպա, 11 գնդապետ, 3 գեներալ, գնդակահարվեց գեստապոյի 65 գործակալ, 163 հայրենիքի դավաճան, խորտակվեց 115 երկաթուղային էշելոն, ոչնչացվեցին տասնյակ կայազորներ, 8 շտաբ, 89 ինքնաթիռ, 98 տանկ, 388 կամուրջ, 529 կապի հանգույց և կապի գիծ, 125 պահեստ և այլն[188]։

1943 թ. սովետագերմանական ռազմաճակատում մեր զորքերի փայլուն հաղթանակների շնորհիվ, փոխվեց իրադրությունը թշնամու կողմից օկուպացված շրջաններում, և պարտիզանական պայքարը թևակոխեց իր զարգացման երկրորդ փուլը, երբ մասսայական պարտիզանական շարժումը վերաճեց համաժողովրդական ապստամբության։ Լենինգրադի մարզում ժողովրդական ապստամբության բռնկման անմիջական առիթը հանդիսացավ հիտլերյան հրամանատարության հրամանը՝ մարզի բոլոր բնակիչներին Գերմանիա էվակուացնելու մասին։

---

[187] «Правда», 1942, 19 мая.

[188] «Советские партизаны», М., 1961, с. 55—84.

Հիտլերականները դաժան հաշվեհարդար էին տեսնում նրանց հետ, ովքեր դիմադրություն էին ցույց տալիս։ Բնակիչների էվակուացման ժամանակ Դնոյի շրջանում նրանք այրեցին Յուրկովո, Բոլշոյե Տրեսնո, Գորուշկա և այլ գյուղեր։ Ֆաշիստական գազանություններին բնակչությունը պատասխանեց համընդհանուր զինված պայքարով։ 1943 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ապստամբեցին Ուտորգոշի, Պլյուսայի, Լուգայի, Պորխովի, Ստրուգսկրասնի, Դնոյի, Սոլենցի, Բատեցկի, Պսկովի, Սերեդկինի, Նովոսելսկի, Կարամշևի, Պոլնովի, Գդովի, Սլանցևի, Օսմինի, Լյադի և այլ շրջանների գյուղացիները։

Ապստամբությունը լավ էր նախապատրաստվել և ընդունեց կազմակերպված բնույթ։ Պարտիզանական ջոկատների մասնակիցների թիվն այնքան շատ էր, որ զենքը չէր բավարարում։ Պարտիզանական շտաբն անմիջապես ինքնաթիռներով ապստամբական շրջաններն ուղարկեց 15000 հրացան, 7000 ավտոմատ, հաղարից ավելի գնդացիր, 123 հակատանկային հրացան, 80000 նռնակ, 114 տոննա պայթուցիկ նյութ և այլ ռազմական տեխնիկա[189]։

Հիտլերյան հրամանատարությունը պարտիզանական շարժումը կազմալուծելու և նրա թափը կոտրելու համար բնակչության շրջանում տարածում էր ստահոդ պրովոկացիոն լուրեր, որ իբր կարմիր բանակը ջախջախված է, «Մոսկվան ապրում է վերջին օրերը», «Սովետական կառավարությունը հեռացել է մայրաքաղաքից և գտնվում է Իրանում» և այլն։ Պարտիզանական շարժումը նոր ուժով բորբոքվեց Լենինգրադի մարզում։ Ֆաշիստական ստահոդ պրոպագանդային ուժեղ հակահարված հասցրին 1943 թ. հունվարին Լենինգրադի կուսակցական մարզային կոմիտեի որոշմամբ պարտիզանների ու օկուպացված շրջանների բնակչության համար լույս տեսնող «Ленинградский партизан» և «За Советскую Родину» թերթերը։ Այդ պայքարի մեջ ընդգրկվեցին նաև «Звезда», «Путь к социализму», «Псковский колхозник» և «Народный мститель» պարտիզանական թերթերը։ Վտանգելով կյանքը, շատ հայրենասերներ անցնում էին քաղաքից քաղաք, գյուղից գյուղ, տարածում թերթեր-թռուցիկներ, բնակչությանը հասցնելով կուսակցության ճշմարիտ խոսքը։ Պարտիզան-հետախույզները և ընդհատակյաները իրենց աշխատանքը տարածեցին նաև թշնամու ճամբարում։

1943 թ. ամառը հիտլերյան հրամանատարությունը սովետագերմա-

---

189 Նույն տեղում, էջ 68։

նական ռազմաճակատ տեղափոխեց սովետական ռազմագերիներից կազմված «Ռուսական աղատագրական բանակը»՝ հայրենիքի դավաճան Վլասովի հրամանատարությամբ, որի խնդիրն էր պայքար մղել պարտիզանների դեմ։ Այդ բանակում կային տարբեր ազգություններից կազմակերպված լեգիոններ։ Պարտիզանական բրիգադներից մեկի հրամանատարի տեղակալ Ալեքսանդր Կոնստանդինովը հետախույզների միջոցով կապ հաստատեց լեգիոներների հետ և 1943 թ. մայիսի 26-ին կազմակերպեց հակառակորդի Գուժևոյի կայազորի 38 սպառազեն հայերի անցումը պարտիզանների կողմը։ Այդ համարձակ գործողության համար հրամանատարությունը շնորհակալություն հայտնեց Ֆրունզեի անվան պարտիզանական ջոկատի հրամանատար Ի. Կ. Նիկոնենկոյին, կոմիսար Շ. Զ. Գոլուբկինին, հրամանատարի տեղակալ Ս. Ի. Վինոգրադովին, շտաբի պետ Վ. Ե. Պոլուկեևին[190]։ Այնուհետև նույն թվականի օգոստոսի 20-ին Նովոռժևի ընդհատակյա կազմակերպության միջոցով ընդհատակային Զոյա Բրեյաուսկասի նախաձեռնությամբ կազմակերպվեց մի խումբ հայ լեգիոներների փախուստը պարտիզանների կողմը[191]։ Մինչ այդ, նույն կազմակերպության միջոցով, հուլիսի 29-ին Պոժիկովո գյուղի մոտ կազմակերպվել էր մեկ այլ խմբի՝ թվով 25 հայերի փախուստը[192]։ 3-րդ պարտիզանական բրիգադի հրամանատար Վիկտոր Գերմանը շնորհավորեց հայերին՝ յուրայինների կողմն անցնելու համար և հայտնեց հրամանատարության որոշումը՝ 4-րդ պարտիզանական գնդի կազմում 41-րդ ջոկատ ստեղծելու մասին[193]։

3-րդ պարտիզանական բրիգադը Վ. Գերմանի հրամանատարությամբ հզոր ուժ էր ներկայացնում։ Նրա շարքերում 1943 թ. հաշվվում էր 2000 պարտիզան, որից 350-ը՝ կոմունիստ, 333-ը՝ կոմերիտական[194]։ Բրիգադն ուներ մարտական հարուստ փորձ և հերոսական պատմություն։ 41-րդ ջոկատի համար մեծ պատիվ էր թշնամու դեմ կռվել նրա շարքերում։ Սկզբում ջոկատի հրամանատար նշանակվեց Զավեն Սեդրակի Համբարձումյանը[195]։ Կոմիսարի պարտականությունը ստանձնեց Միգրովը։

---

190 *Н. Макаров,* Партизанские были. Калинин, 1959, с. 100—105.

191 *М. Воскресенский,* Герман ведет бригаду. Ленинград, 1959, с. 102—105.

192 *ՍՄԿԿ ԿԿ առընթեր Մեծ Լենինգրադի մասնաճյուղի արխիվ, ֆ. 0-116, ց. 14, գ. 173, թ. 143 (այսուհետև՝ Լենինգրադի կուսակցական արխիվ)։*

193 *М. Воскресенский,* Герман ведет бригаду, с. 194—197.

194 *П. Р. Шевердалкин,* Народ взялся за оружие, Л., 1959, с. 31.

195 *Երրորդ կարգի ռազմական ինժեներ Զավեն Սեդրակի Համբարձումյանը Երևանի բնակիչ է, ծնվ. 1913 թ., պատերազմի սկզբին ծառայել է 158-րդ առանձին ինժեներական դումարտակում։*

Ջոկատի ենթակայությանը հանձնվեցին երկու վաշտ և այնտեղ ուղարկեցին պարտիզանական պայքարի փորձ ունեցող մայոր Կ. Ֆ. Մատյուշենկոյին, սերժանտ Ա. Ա. Շուլենինին, Գ. Գ. Սվետլովին և ուրիշների։ Հրամանատարական պաշտոնների նշանակվեցին Լազար Բալոյանը, Սուրեն Սարգսյանը, Գառնիկ Ղարիբյանը, Մուրադ Մկրտումյանը, Պարույր Մարտիրոսյանը, Հաբեթնակ Դանիելյանը, Բորիս Բալաևը, Խաչատուր Դադյանը, Գրիգորի Ղարիբովը, Արծվիկ Դավթյանը, Սուրեն Մարգարյանը, Պերճ Աղաջանյանը, Երվանդ Եղիազարյանը և Արտեմ Սաղումյանը[196]։ Ջավեն Համբարձումյանի և մյուս հրամանատարների եռանդուն աշխատանքի շնորհիվ 41-րդ ջոկատի պարտիզաններն արագ կերպով յուրացրին պարտիզանական պայքարի ձևերն ու մեթոդները և կարճ ժամանակից հետո ջոկատը դարձրին պարտիզանական 3-րդ բրիգադի մարտական կուռ ստորաբաժանումներից մեկը։ Շուտով ջոկատն ստացավ իր առաջին մարտական մկրտությունը։ Օգոստոսի 17-ին 4-րդ գնդի հրամանատար Գ. Ի. Եֆիմովը հրաման ստացավ Պսկով—Պորխով երկաթգծում ղանգվածային պայթեցումներ կատարելու մասին։ Երեքօրյա նախապատրաստությունից հետո, նախօրոք մշակված պլանի համաձայն, օգոստոսի 20-ի գիշերը 4-րդ գնդի 35-րդ և 37-րդ ջոկատները տարբեր հատվածներից հանկարծակի հարձակում գործեցին երկաթգիծը պաշտպանող թշնամու պահակակետերի վրա, ոչնչացրին դրանք և ականներ դրեցին պայթեցումները։ Նրանց մարտական գործողությունները պաշտպանում էր 41-րդ ջոկատը, որը Ջավեն Համբարձումյանի ղեկավարությամբ գնդացրային ու ավտոմատային ուժեղ կրակով գետնին գամեցին օգնության շտապող հիտլերականներին և թույլ չտվեցին նրանց մոտենալու երկաթգծին։ 41-րդ ջոկատը ոչնչացրեց հակառակորդի

---

196 Լազար Արզումանի Բալոյան, 1910 թ. ծնվ., Ադրբ. ՍՍՀ Հադրութի շրջանի Աղունակ գյուղից։ Սուրեն Առաքելի Սարգսյան, 1918 թ. ծնվ., Ադրբ. ՍՍՀ Ստեփանակերտի շրջանի Սարման գյուղից։ Գառնիկ Ռուշանի Ղարիբյան, 1916 թ. ծնվ., Էջմիածնի շրջան։ Մուրադ Սամսոնի Մկրտումյան, ծնվ. 1913 թ., Հայկ. ՍՍՀ, Սիսիանի շրջան, գ. Ուղ։ Պարույր Արշակի Մարտիրոսյան, 1915 թ. ծնվ., ՀՍՍՀ ք. Լենինական։ Հաբեթնակ Աղաջանի Դանիելյան, 1910 թ. ծնվ., Ադրբ. ՍՍՀ, ք. Կիրովաբադ։ Բորիս Դավիթի Բալաև, ծնվ. 1916 թ., Ուղբ. ՍՍՀ, ք. Սամարղանդ։ Գրիգոր Ավետիսի Ղարիբով, 1913 թ. ծնվ., ՎՍՍՀ ք. Թբիլիսի։ Խաչատուր Ավետիսի Դադյան, 1913 թ. ծնվ., ՀՍՍՀ Ալավերդու շրջան գ. Հաղպատ։ Սուրեն Միքայելի Մարգարյան, 1920 թ. ծնվ., ՀՍՍՀ գյուղ Նոյեմբերյան։ Արծվիկ Գրիգորի Դավթյան, 1916 թ. ծնվ., ՀՍՍՀ ք. Արթիկ։ Պերճ Սերգեյի Աղաջանյան, ՀՍՍՀ ք. Դիլիջան։ Երվանդ Հովհաննեսի Եղիազարյան, 1922 թ. ծնվ., Ադրբ. ՍՍՀ ք. Կիրովաբադ։

գնդացրային 4 կրակակետ և ապահովեց մարտական խնդրի կատարումը։ Այդ գիշեր պարտիզանները ոչնչացրին 750 մետր կապի գիծ, 2 կամուրջ, 8 պահակակետ և պայթեցրին 789 ռելս[197]։ Մարտական առաջադրանքը կատարելուց հետո, գնդի ստորաբաժանումները հանգստանալու համար տեղավորվեցին Վոլոսովո, Սիշևո և Տիխնովո գյուղերում։ Հակառակորդը, որը դալտնի հետևում էր պարտիզաններին, օգոստոսի 25-ին մեծաթիվ ուժերով (2000 հոգի), հանկարծակի հարձակվեց գնդի ճամբարի վրա։ 41-րդ և 37-րդ ջոկատներն ընդունելով մարտը, Զ. Համբարձումյանի և Պամուևիչի հրամանատարությամբ ետ մղեցին հակառակորդի բոլոր գրոհները[198]։ Թշնամին ղգալով, որ ի վիճակի չէ կոտրել պարտիզանների դիմադրությունը, կրելով ծանր կորուստներ, ետ քաշվեց։ Սպանվեց գերմանական պատժիչ ջոկատի հրամանատարը։ Այդ օրը 37-րդ ջոկատը ոչնչացրեց 60, իսկ 41-րդը՝ 80 հիտլերական[199]։ Մարտում իրենց լավ դրսևորեցին Լազար Բալոյանը և Լևոն Օհանյանը[200]։ Առաջինը ոչնչացրեց 18 հիտլերական, իսկ երկրորդը՝ 15։ Բրիգադի քաղբաժնի զեկուցագրում 41-րդ ջոկատի մասին գրվեց հետևյալը. «41-րդ ջոկատն ամբողջությամբ, հիտլերականների դեմ մղված մարտերում կռվեց քաջաբար և առանց հրամանի չնահանջեց, չնայած հակառակորդի գերակշռող ուժերի ճնշմանը»[201]։

Օգոստոսին 4-րդ գունդը ոչնչացրեց 791 հիտլերական (որից 254-ը 41-րդ ջոկատի կողմից), 1436 ռելս, 2 զինվորական էշելոն, 6 կամուրջ, 7 ավտոմեքենա, 750 մետր կապի գիծ, 1 յուղի գործարան։ Մարտական արդյունքներով գնդում առաջին տեղը գրավեցին 35-րդ և 37-րդ ջոկատները, երկրորդ տեղը՝ 41-րդ, իսկ երրորդը՝ 39-րդ ջոկատը[202]։ Մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու համար 4-րդ գնդի հրամանատարը հրամանով շնորհակալություն հայտնեց 35-րդ, 37-րդ և 41-րդ ջոկատների հրամանատարներ Գորյաչևին, Պամուևիչին, Զավեն Համբարձումյանին, վաշտի հրամանատար Բորիս Բալաևին, դասակի հրամանատարներ Օսիպովին, Լազար Բալոյանին, Իվանովին և Լևոն Օհանյանին[203]։

---

197 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 1, դ. 1694, թ. 54։

198 Նույն տեղում, գ. 1698, թ. 2։

199 Նույն տեղում, դ. 1694, թ. 54։

200 Լևոն Գալուստի Օհանյանը ծնվ. 1921 թ., ՀՍՍՀ Գորիսի շրջ., գյուղ Խանածախ։

201 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 9, դ. 770, թ. 246։

202 Նույն տեղում, ց. 1, դ. 1694, թ. 57։

203 Նույն տեղում, թ. 58։

Սեպտեմբերի սկզբին պարտիզանական 3-րդ բրիգադը ծանր փորձություն ապրեց։ Թշնամու «Հյուսիս» բանակների խմբի հրամանատարությունը, անհանգստացած պարտիզանների աճող ակտիվությունից, պարտիզանական 3-րդ բրիգադի դեմ նետեց խոշոր ուժեր, նպատակ ունենալով շրջապատել և լրիվ ոչնչացնել նրանց։ Կալինինի մարզի Շարիխա-Ստանկի գյուղի շրջանում հակառակորդին հաջողվեց շրջապատել պարտիզանական 3-րդ բրիգադին։ Ամբողջ օրը թշնամու ինքնաթիռները պտտվում էին պարտիզանների դասավորության շրջանում և նետում թռուցիկներ, որոնցում գրված էր. «Դուք շրջապատված եք 6000 գերմանական զինվորների կողմից, ձեր դիմադրությունն անօգուտ է։ Հանձնվեցեք գերի։ Բոլոր գերի հանձնվող պարտիզանների նկատմամբ կվերաբերվեն այնպես, ինչպես գերի կարմիրբանակայինների հետ»[204]։

Պարտիզանական 3-րդ բրիգադի հրամանատարությունը որոշում ընդունեց՝ ամեն գնով ճեղքել թշնամու օղակը և դուրս գալ շրջապատումից։ Սեպտեմբերի 5-ի երեկոյան Ժիտնիցա գյուղում դիրքավորված հակառակորդի ուժերի դեմ առաջինը գրոհի նետվեցին 2-րդ գնդի պարտիզանները՝ Դմիտրի Խուդյակովի հրամանատարությամբ։ Հաղթահարելով թշնամու դիմադրությունը, պարտիզանները ճեղքեցին հակառակորդի պաշտպանությունը և մարտերով անցան գյուղի միջով, իսկ նեռից շարժվող 4-րդ գունդը (հրամ. Գ. Ի. Եֆիմով) չկարողացավ ժամանակին օգտվել ստեղծված հնարավորությունից, որի հետևանքով թշնամին նորից փակեց միջանցքը։ Բրիգադի հրամանատար Վ. Գերմանը, որը հետևում էր մարտին, շփոթություն նկատելով 4-րդ գնդի մարտակարգերում, մաուզերը ձեռքին՝ «Առաջ, հանուն Հայրենիքի» գոչելով, գրոհի տարավ պարտիզաններին։ Ոգևորված հրամանատարի օրինակից, պարտիզանները գրոհով ճեղքեցին հակառակորդի օղակը և դուրս եկան շրջապատումից[205]։ Հերոսի մահով զոհվեց պարտիզանական լեգենդար հրամանատար Վիկտոր Ալեքսանդրովիչ Գերմանը[206]։

Պարտիզանները հեռանալով պատժիչ ջոկատների հետապնդումից, 45 կիլոմետր դժվար անցումից հետո կանգ առան Լոմի բնակավայրի շրջանում, կարգավորեցին իրենց շարքերը և պատրաստվեցին կատարելու մարտական նոր խնդիրներ[207]։ Գնդի հրամկազմի մեջ տեղի ունեցան որոշ փո-

---

204 Նույն տեղում, ց. 2, գ. 767, թ. 90։

205 Նույն տեղում, ց. 9, գ. 767, թ. 91։

206 Լեգենդար հրամանատարի անունը հավերժացնելու համար անձնակազմի պահանջով պարտիզանական բրիգադը սկսեց կոչվել Վ. Գերմանի անունով։

207 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 1, գ. 1698, թ. 14։

փոխություններ։ Սեպտեմբերի 12-ին Զավեն Համբարձումյանն ազատվեց 41-րդ ջոկատի հրամանատարի պարտականություններից և նշանակվեց նույն ջոկատի հրամանատարի տեղակալ՝ հետախուզության գծով[208]։ 41-րդ ջոկատի հրամանատար նշանակվեց կապիտան Արտեմ Սաղումյանը։ Ստանձնելով հրամանատարի պաշտոնը, նա սեպտեմբերի երկրորդ կեսը հիմնականում նվիրեց անձնակազմի մարտունակության ու ռազմական տեսական գիտելիքների բարձրացմանը։ Հոկտեմբերին ջոկատն ամբողջ ուժով մարտական ակտիվ գործողություններ սկսեց հակառակորդի դեմ։ Կատարվեցին մի շարք խոշոր դիվերսիաներ և հանկարծակի հարձակումներ հակառակորդի կայազորների դեմ։ Հոկտեմբերի 1—15-ը 41-րդ ջոկատը Բոլշոկ, Վիբոր, Նովոռժև, Զիմարի և Պետրովսկի բնակավայրերի շրջանում ոչնչացրեց 103 գերմանական զինվոր ու սպա։ Հոկտեմբերի 16-ին Օստրով-Ռեզեկնե երկաթգծում խորտակեց տանկերով ու ավտոմեքենաներով բեռնված թշնամու զինվորական էշելոնը։ Ոչնչացրեց երկու շոգեքարշ և 25 վագոն։ Հոկտեմբերի 18—19-ը 41-րդ ջոկատի պարտիզանները խոշոր պայթեցումներ կատարեցին Դնո-Նովոսոկոլնիկի երկաթգծում։ Պայթեցվեց Ուդա գետի վրայի 40 մետրանոց կամուրջը, ոչնչացվեց 3420 մետր էլեկտրական ու կապի գիծ, 21 հիտլերական և այլն[209]։ Աչքի ընկավ դիվերսիոն խմբի հրամանատար Իգնատովը, նրա տեղակալ Մուրադ Մկրտումյանը և Լազար Բալոյանը։ Մարտական առաջադրանքը կատարելու պահին հերոսաբար զոհվեց 41-րդ ջոկատի դասակներից մեկի հրամանատար Սուրեն Միքայելի Մարգարյանը։ Նրա մասին 41-րդ ջոկատի քաղբաժնի զեկուցագրում գրված է. «Հատկապես աչքի ընկավ դասակի հրամանատար Սուրեն Մարգարյանը։ Դասակի և անձամբ ընկ. Մարգարյանի հաշվին գրանցված է 80 ոչնչացված ֆրից, 3 ավտոմեքենա, 157 ռելս։ Ընկ. Մարգարյանը զոհվեց հերոսաբար»[210]։ Թշնամու հանդեպ ատելության թույնով բորբոքված, 41-րդ ջոկատի պարտիզանները խիստ ուժեղացրին իրենց հարվածները և յուրաքանչյուր գործողության ժամանակ տասնապատիկ անգամ ավելի վրեժ լուծեցին իրենց զոհված ընկերների համար։

Հոկտեմբերի երկու տասնօրյակների ընթացքում մի շարք հաջող դիվերսիաներ կազմակերպելու ու ղեկավարելու համար գնդի հրամանատարի հոկտեմբերի 21-ի № 82 հրամանով շնորհակալություն հայտ-

---

208 Նույն տեղում, գ. 1694, թ. 64, 66։

209 Նույն տեղում, ց. 1, գ. 1698, թ. 49—55։

210 Նույն տեղում, ց. 9, գ. 769, թ. 175։

նրվեց Կիսիլևին, Գորյաչևին, Սաղումյանին, Մատյուշենկոյին, Կրուգլովին, Համբարձումյանին, Ալեքսեևին և Վասիլևին[211]։

Մոտենում էր Հոկտեմբերյան հեղափոխության 26-րդ տարեդարձը։ Անհրաժեշտ էր մարտական լավագույն ցուցանիշներով դիմավորել այդ նշանավոր օրը։ Վ. Գերմանի անվան պարտիզանական 3-րդ բրիգադի հրամանատարությունը որոշեց հոկտեմբերի 26-ի գիշերը միաժամանակյա հանկարծակի հարձակումներ կատարել հակառակորդի Սլավկովսկի, Պոժերևիցկի շրջանների Գորուշկա և Կիվերովո բնակավայրերի կայազորների վրա։ Այդտեղից հիտլերականները ութ ամիս շարունակ պատժիչ գործողություններ էին կատարել պարտիզանների դեմ, ավերել ու թալանել շրջակա գյուղերի բնակիչներին։ Հարձակումից մի քանի օր առաջ նրանք գնդակահարել էին Պորիսովի շրջանի Գուսինո գյուղի 72 կոլտնտեսականների[212]։ Չորրորդ գունդը պետք է հարձակվեր Գորուշկայի թշնամու կայազորի վրա, որը շրջապատված էր դզոտներով, ուներ 8 գնդացիր, 2 ականանետ, 2 հրանոթ և 250 հոգուց բաղկացած անձնակազմ[213]։ Հարձակումն այնպես էր պլանավորվել, որ ոչ մի հիտլերական կենդանի չպետք է մնար։ Փակվել էին նահանջի բոլոր ճանապարհները։ Հոկտեմբերի 25-ի լույս 26-ի գիշերը, թշնամու համար անսպասելի տարբեր կողմերից 41-րդ և 39-րդ ջոկատները հանկարծակի գրոհեցին հակառակորդի դիրքերի վրա։ Առաջին հարվածից հակառակորդը խուճապի մատնվեց և մինչ նա ուշքի կգար, պարտիզանները նռնակներով, գնդացրային ու ավտոմատային ուժեղ կրակով ճնշեցին հակառակորդի պաշտպանությունը և մտան գյուղ։ Սկսվեցին փողոցային մարտերը։ Հակառակորդը կատաղորեն դիմադրում էր, իսկ պարտիզանները ոգևորված սկզբնական հաջողությունից, շարունակում էին հարձակումը թշնամու դիրքերի ու թաքստոցների վրա։ 41-րդ ջոկատի շտաբի պետ Զավեն Համբարձումյանը[214] և վաշտի հրամանատար Մուրադ Մբկրտումյանը չնայած վիրավորվել էին, բայց շարունակելով ղեկավարել մարտիկներին, ուժեղ գրոհով գրավեցին հակառակորդի շտաբը։ Հիտ-

---

211 Նույն տեղում, ց. 1, գ. 1694, թ. 86—87։

212 «Непокоренная земля псковская (документы и материалы из истории партизанского движения и партийно-комсомольского подполья в годы Великой Отечественной войны 1941—1944) Л., 1969, с. 365.

213 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 1, գ. 1694, թ. 95։

214 1943 թ. հոկտեմբերի 24-ին Ն. Վ. Բատալինը նշանակվել էր 41-րդ ջոկատի հրամանատարի տեղակալ՝ հետախուզության գծով, իսկ Զավեն Համբարձումյանը՝ շտաբի պետ։

լերականները ելք էին փնտրում գյուղից մի կերպ ճողոպրելու համար։ Նրանցից մի խումբ փորձեց դուրս պրծնել պարտիզանների օղակից, բայց հանդիպեց Պերճ Աղաջանյանի խմբի դարանին և գլխովին ջախջախվեց[215]։ Մարտում հերոսաբար զոհվեց Աղասի Արշակի Սարգսյանը[216]։ Մինչև առավոտ կռիվն ավարտվեց, պարտիզանների հաղթանակը լիակատար էր։ Այդ օրը ոչնչացվեց 143 հիտլերական, 5 պահեստ, 3 ավտոտանակ, 22 մոտոցիկլետ, 60 հեծանիվ, 8 դզոտ, 1700 մետր կապի գիծ, 2 կամուրջ։ Միայն 41-րդ ջոկատը ոչնչացրեց հակառակորդի շտաբը, 80 հիտլերական, 5 դզոտ, 3 պահեստ, 3 ավտոտանակ, 1 ավտոմեքենա, 22 մոտոցիկլետ, 60 հեծանիվ, 1700 մետր կապի գիծ, 15 ձի[217]։ Բազմաթիվ պարտիզաններ մարտի ժամանակ դրսևորեցին անձնազոհության օրինակներ։ Հերոսաբար կռվեցին ջոկատի հրամանատար Սաղումյանը, կոմիսար Մատյուշենկոն, շտաբի պետ Համբարձումյանը, հրամանատարներ Վահիլը, Մկրտումյանը, Բալոյանը, Խարիտոնովը, Ռումյանցևը, Երմակովը, Պետրովը։ Նրանք բոլորն էլ գնդի հրամանատարի կողմից հրամանով ստացան շնորհակալություն[218]։

Նոյեմբերի սկզբին ամփոփվեցին գնդի ստորաբաժանումների սոցիալիստական մրցության արդյունքները։ 41-րդ ջոկատը հոկտեմբեր ամսվա ընթացքում ոչնչացրել էր 223 հիտլերական, 5200 մետր կապի գիծ, ռազմական տեխնիկայի տարբեր տեսակներ՝ գնդացիրներ, ավտոմեքենաներ, մոտոցիկլետներ, պայթեցրել 897 ռելս, խորտակել մեկ զինվորական էշելոն։ Այս ցուցանիշներով 41-րդ ջոկատը գնդում գրավեց 2-րդ տեղը[219]։ Նշվեցին երկաթուղային ռելսեր պայթեցնող գնդի մի շարք պարտիզանների անունները։ Երմակովը, Բոնդինը, Խարիտոնովը (39-րդ ջոկատ), յուրաքանչյուրը պայթեցրել էր 14 ռելս, Դավրիլովը՝ 16, Բուլատովը՝ 14 (37-րդ ջոկատ)[220], Գիուլենիշը՝ 31, Գեորգի Ցիմերմանը՝ 28, Պարույր Մարտիրոսյանը՝ 23, Արծվիկ Դավթյանը՝ 20, Սուրեն Սարգսյանը՝ 22 ռելս[221]։

Նոյեմբերին 4-րդ պարտիզանական գնդում կար 780 պարտիզան,

---

215 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 1, գ. 1698, թ. 64—65։

216 Նույն տեղում, ց. 1, գ. 1714, թ. 134։ Աղասի Արշակի Սարգսյանը ծնված 1908 թ., Հայկական ՍՍՀ Ամասիայի շրջանի Ջալար գյուղից է (այժմ՝ Ջրաձոր)։

217 Նույն տեղում, գ. 1694, թ. 95—96։

218 Նույն տեղում։

219 Նույն տեղում, թ. 105։

220 «Непокоренная земля псковская», с. 367.

221 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 1, գ. 1694, թ. 87։

որից ռուս՝ 680, հայ՝ 56, ուկրաինացի՝ 19, բելոռուս՝ 8, լատիշ՝ 3, էստոնացի՝ 2, հրեա՝ 2, այլ ազգություններ՝ 5[222]։ Գնդի կազմում էին 35-րդ, 37-րդ, 39-րդ և 41-րդ պարտիզանական ջոկատները։

Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին գնդի մարտական գործողությունները որոշակիորեն սահմանափակվեցին, քանի որ վիրավորները մեծ թիվ էին կազմում և չկար անհրաժեշտ քանակությամբ ռազմամթերք։ Հիմնական ուշադրությունը դարձվեց հետախուզական աշխատանքների և դիվերսիոն գործողությունների վրա։ Նոյեմբերի 1-ի գիշերը գնդի 39-րդ, 37-րդ և 41-րդ ջոկատները խոշոր դիվերսիաներ կատարեցին Պսկով—Պորխով երկաթգծում։ Ոչնչացվեց Կիսելյովո բնակավայրում տեղավորված հակառակորդի կայազորը, վնասվեց ենթակայանը, պայթեցվեց 2107 մետր ռելս և 5 կամուրջ։ 41-րդ ջոկատը ոչնչացրեց 1 գնդացիր իր հաշվարկի հետ, 1625 մետր կապի գիծ, պայթեցվեց 602 մետր ռելս և 2 կամուրջ[223]։

Նոյեմբերի 3-ին 41-րդ ջոկատի պարտիզանների խումբը Պերճ Աղաջանյանի հրամանատարությամբ պայթեցրեց Նովոռժև-Օպոչկա ճանապարհի մեծ կամուրջը[224]։ Հատկապես ակտիվ էին գործում Լազար Բալոյանի[225] և Երվանդ Եղիազարյանի դիվերսիոն խմբերը։ Ե. Եղիազարյանի խումբը նոյեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը Զիխաչևո—Սուշչևո գծում խորտակեց պարենամթերքով բեռնված թշնամու զինվորական էշելոնը, ոչնչացրեց 1 շոգեքարշ և 2 վագոն[226]։ Լազար Բալոյանի խումբը նոյեմբերի 30-ին Օստրով—Ռեզեկնե գծում, Պիրոգի կայարանի մոտ խորտակեց ռազմաճակատ շարժվող տանկերով, թնդանոթներով և ավտոմեքենաներով բեռնված զինվորական մեծ էշելոն. ոչնչացվեց 1 շոգեքարշ, 18 վագոն, 3 հարթակ և ֆաշիստների պահակախմբի անձնակազմից՝ 43 հոգի[227]։ Նոյեմբերին ծանր կորուստ կրեց 41-րդ ջոկատը. մարտական առաջադրանքը կատարելու պահին հերոսաբար զոհվեց ջոկատի լավագույն հետախույզներից մեկը՝ 23-ամյա նախկին օդաչու Սերգեյ Սահակի Օգանեսովը[228]։ Պատերազմի առաջին

---

222 Նույն տեղում, ց. 9, գ. 770, թ. 268։

223 Նույն տեղում, ց. 1, գ. 1694, թ. 102։

224 Նույն տեղում, գ. 1698, թ. 64—71։

225 Լազար Արզոմանի Բալոյան, ծնվ. 1910 թ., Ադրբ. ՍՍՀ Հադրութի շրջանի Աղունակ գյուղում։

226 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 1, գ. 1698, թ. 66։

227 Նույն տեղում, գ. 1698, թ. 70։

228 Սերգեյ Սահակի Օգանեսով, ծնված 1920 թ., Ադրբ. ՍՍՀ Խանլար քաղաքում։

օրերին նա իր ինքնաթիռով բազմիցս ռմբակոծեց ու գնդակոծեց հակառակորդի մարտակարգերը։ Իսկ հետո օդային անհավասար մարտերից մեկում ինքնաթիռը խփվեց և Օգանեսովը պարաշյուտով վայրէջք կատարեց հակառակորդի թիկունքում։ Վիրավոր վիճակում ֆաշիստները գերեցին նրան։ Սկսվեց ծանր ու դժվարին օրեր։ Ի վերջո նրան հաջողվեց փախչել գերությունից, միացավ Լենինգրադի մարդի պարտիզաններին և նրանց մարտական շարքերում հերոսաբար կռվեց թշնամու դեմ։ Կատարեց մի շարք դժվարին հետախուզական բնույթի մարտական առաջադրանքներ։ Օգանեսովը զոհվեց 1943 թ. նոյեմբերի 12-ին[229]։ Մարտական գործողությունների ժամանակ զոհվում էին շատերը, բայց պարտիզանների շարքերը երբեք չէին նոսրանում, այլ, ընդհակառակը, գնալով այն ավելի էր շատանում։ 4-րդ պարտիզանական գնդում եթե նոյեմբերին կար 780 մարդ, ապա դեկտեմբերին այն հասավ 885-ի։ Գնդի կազմում հաշվում էր ռուս՝ 749, հայ՝ 65, ուկրաինացի՝ 20, բելոռուս՝ 10, թաթար՝ 3, լատիշ՝ 3, վրացի՝ 2, այլ ազգություններ՝ 33[230]։

Դեկտեմբերին գնդի ստորաբաժանումները խոշոր դիվերսիաներ կատարեցին Պսկով—Պորխով—Դնո, Դնո—Դեդովիչի—Չիխաչևո, Օստրով—Ռեզեկնե երկաթգծերում։ Պայթեցումներ էին կատարում 42 դիվերսիոն խմբեր, որոնց շարքերում հաշվվում էր 250 պարտիզան։ Ուժեղացվեց հետախուզական աշխատանքը Օստրով—Գորոյ, Օստրով—Պուշկորի—Նովոռժև, Նովոռժև—Բեժանիցի, Աշևո—Չիխաչևո ուղղություններում[231]։ Թշնամու ուժերի դասավորության մասին ձեռք բերված տվյալներն անմիջապես հաղորդվում էին Լենինգրադի պարտիզանական շարժման շտաբին։

Դեկտեմբերի 2-ին Օստրով-Ռեզեկնե գծում Պարույր Մարտիրոսյանի դիվերսիոն խումբը խորտակեց թշնամու զինվորական էշելոնը, ոչնչացրեց 1 շոգեքարշ, 8 վագոն, 2 հարթակ և սպանեց 20 հիտլերական[232]։

Անորսալի հակառակորդի գործողություններից գաղաղած թշնամին դեկտեմբերի 3-ին Խիտրինո կայազորից մոտ 200 ջահակիրներ, զինված ավտոմատներով ու գնդացիրներով, ուղարկեց հրդեհելու ու ավե-

---

229 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 14, գ. 223

230 Նույն տեղում, ց. 9, գ. 770, թ. 284։

231 Նույն տեղում։

232 Նույն տեղում, ց. 1, գ. 1698, թ. 71։

ռելու շրջակայքում գտնվող Տիմոխնովո, Ժուկովո, Գրիգինո, Գորկա և Կոպիլիխա գյուղերը։ Պարտիզանները, որ նախօրոք գիտեին հակառակորդի մտադրության մասին, պատրաստվեցին արժանի հակահարված տալու նրան։ Թշնամուն առաջինը նկատեցին 41-րդ ջոկատի մարտիկները, որոնք անմիջապես մարտակարգ ընդունելով, 300—400 մետր հեռավորությունից ավտոմատային ու գնդացրային կրակ բացեցին ինքնավստահ քայլող հիտլերականների վրա։ Առաջին հարվածից թշնամու առաջատարներն ընկան, իսկ մյուսները փորձեցին փախչել, բայց դարան մտած պարտիզանների խումբը փակեց նրանց ճանապարհը։ Հակառակորդը սեղմվեց Սև լճին և հինգ ժամվա ընթացքում գլխովին ոչնչացվեց[233]։ Արծվիկ Դավթյանի խմբին հանձնարարվեց հավաքել ըստանված հիտլերականների զենքերը։ Այդ պահին ջախջախված թշնամուն օգնության շտապեց հիտլերականների 150 հոգուց բաղկացած մի ջոկատ։ Ս. Դավթյանը որոշեց իր փոքրաթիվ խմբով դիմադրել և թույլ չտալ նրան մոտենալու ռազմադաշտին։ Ավարտված մարտը նորից վերսկսվեց։ Չնայած ուժերի անհավասար լինելուն, Ա. Դավթյանի խումբը ցույց տվեց համառ դիմադրություն։ Սահակ Զաքարի Աղաջանովը[234], որը կատարում էր գնդացրորդի օգնականի պարտականությունը, անմիջապես փոխարինեց սպանված ընկերոջը և շարունակեց գնդացրային կրակ տեղալ թշնամու վրա։։ Հերոսաբար էին կռվում գնդացրորդներ Լերները, Նիկանդրովը և Աշոտ Դավթի Հովհաննիսյանը[235]։ Հակառակորդը կարողացավ հավաքել միայն սպանվածների դիակները և հետո հեռանալ, չհամարձակվելով փորձ անել գրավելու Տիմոխնովո գյուղը։ Այդ օրը հերոսի մահով զոհվեց Արծվիկ Դավթյանը[236], իսկ Աշոտ Հովհաննիսյանը մահացու վերք ստացավ և հաջորդ օրը (դեկտեմբերի 4-ին) մահացավ։ Մինչև մահանալը նա իր մոտ կանչեց համերկրացիներից մեկին և խնդրեց. «Եթե ձեզ բախտ վիճակվի լինել իմ հայրենի գյուղում, հայտնիր ընտանիքիս, որ ես զոհվեցի հանուն Հայրենիքի»[237]։

Սև լճի շրջանում տեղի ունեցած մարտից հետո կարգավորելով իր

---

[233] *Նույն տեղում, ց. 9, գ. 770, թ. 284։*

[234] *Սահակ Զաքարի Աղաջանով, ծնվ. 1917 թ., Ադրբեջանական ՍՍՀ Ստեփանակերտի շրջանի Խանարագ գյուղում։*

[235] *Աշոտ Դավթի Հովհաննիսյան, ծնվ. 1913 թ., Ադրբեջանական ՍՍՀ Ստեփանակերտի շրջանի գ. Դահրավ։*

[236] *Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 1, գ. 1694, թ. 121։*

[237] *Նույն տեղում, ց. 9, գ. 770, թ. 286։*

շարքերը, 41-րդ ջոկատը նորից սկսեց դիվերսիաները հակառակորդի հաղորդակցության ճանապարհների վրա։ Դեկտեմբերի 20-ի գիշերը Լազար Բալոյանի չորս հոգուց բաղկացած խումբը Օստրով—Ռեղեկնե երկաթգծում խորտակեց ավտոմեքենաներով ու զորքով ռազմաճակատ շարժվող թշնամու զինվորական էշելոնը, ոչնչացրեց 1 շոգեքարշ և 25 վագոն։ Դեկտեմբերի 26-ին Պարույր Մարտիրոսյանի խումբը Դեղովիչի-Զիխաշևո գծում խորտակեց մեկ ուրիշ զինվորական էշելոն. ոչնչացրեց 1 շոգեքարշ և 6 վագոն[238]։ Միայն նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին 41-րդ ջոկատը խորտակեց հակառակորդի 10 զինվորական էշելոն։ Իր մարտական ցուցանիշներով նոյեմբերին այն գրավեց երրորդ տեղը, իսկ դեկտեմբերին՝ երկրորդ[239]։ Մարտական առաջադրանքները օրինակելիորեն կատարելու համար գնդի հրամանատարի խրախուսանքին արժանացան Բաբինովը, Պուշկինը, Ջեմբրանլովը (37-րդ ջոկատ), 41-րդ ջոկատի շտաբի պետ Ջ. Համբարձումյանը, դասակի հրամանատարներ Սուրեն Սարգսյանը և Վահան Գևորգի Բաբայանը[240]։ Մարտում իրենց լավ դրսևորելու համար զորամասի հրամանատարի նոյեմբերի 24-ի № 109 հրամանով եֆրեյտորի աստիճան շնորհվեց Աշոտ Գրիգորի Այրումյանին, Միսակ Ներսեսի Բագիրյանին։ Ջոկատին ռազմամթերք ու պարենամթերք կանոնավոր մատակարարելու համար նոյեմբերի 26-ի № 112 հրամանով շնորհակալություն հայտնվեց 2-րդ վաշտի ավագ Աշոտ Խաչատուրի Շահնազարովին[241]։ Վաշտի քաղղեկ Պերճ Աղաջանյանն առաջ քաշվեց ավելի պատասխանատու աշխատանքի։ Նա 1943 թ. դեկտեմբերին նշանակվեց 41-րդ ջոկատի հրամանատարի տեղակալ՝ հետախուզության գծով[242]։ Դիվերսիոն խմբերի հրամանատարներ նշանակվեցին Սարգիս Ավագի Գասպարյանը, Գրիգորի Ավետիսի Ղարիբովը, Խաչատուր Դադյանը, Լևոն Օհանյանը և ուրիշներ[243]։

---

238 Նույն տեղում, ց. 1, գ. 1698, թ. 73—74։

239 Նույն տեղում, ց. 1, գ. 1694, թ. 124, 141։

240 Նույն տեղում, թ. 105, Վահան Գևորգի Բաբայան, ծնվ. 1909 թ., ՀՍՍՀ Սևանի շրջան, գ. Օրդալու (այժմ՝ Լճաշեն)։

241 Նույն տեղում, թ. 117—118։ Աշոտ Գրիգորի Այրումյան, ծնվ. 1913 թ., Ադրբ. ՍՍՀ, գ. Բաքու։ Աշոտ Խաչատուրի Շահնազարով, ծնվ. 1911 թ., Ադրբ. ՍՍՀ, գ. Բաքու, Միսակ Ներսեսի Բագիրյան, ծնվ. 1914 թ., Ադրբ. ՍՍՀ, Հադրութի շրջ., գյուղ Էգիլու։

242 Նույն տեղում, ց. 1, գ. 1694, թ. 138։

243 Սարգիս Ավագի Գասպարյան, ծնվ. 1910 թ., գ. Ծաղկավան։

Հակառակորդի հաղորդակցության ճանապարհների, կամուրջների, պահեստների պայթեցման և այլ դիվերսիաների կազմակերպման գործում հմուտ մասնագետ էր 37-րդ ջոկատի վաշտի հրամանատար Հովսեփ Սողոմոնի Մելիքյանը[244]։ Վերջինս 1943 թ. օգոստոսին ինքնաթիռից պարաշյուտով իջեցվել էր Վ. Գերմանի անվան 3-րդ պարտիզանական բրիգադի գործողությունների շրջանը։ Սկսած օգոստոս ամսից մինչև Լենինգրադի մարզի լրիվ ազատագրումը Հ. Մելիքյանը բազմաթիվ պարտիզանների սովորեցրեց ականապատման ու պայթեցման տեխնիկան։ Նա ոչ միայն սովորեցնում, այլև որպես վաշտի հրամանատար ղեկավարում էր դիվերսիոն գործողությունները։ Դիվերսիոն այն խումբը, որի մեջ էին մտնում Վալենտին Բաբինովը, Վասիլի Բելովը, Կոնստանտին Պանկրատովը, Հ. Մելիքյանի անմիջական ղեկավարությամբ ու մասնակցությամբ նոյեմբերի 12-ին և դեկտեմբերի 8-ին՝ Պսկով—Պորխով, Պսկով—Կարամիշևո գծում խորտակեց տանկերով, թնդանոթներով ու ավտոմեքենաներով բեռնված, ռազմաճակատ շարժվող թշնամու երկու զինվորական էշելոն, ոչնչացրեց 2 շոգեքարշ, 20 վագոն և 9 հարթակ[245]։ Հ. Մելիքյանի մասին 4-րդ գնդի քաղբաժնի դեկտեմբերի 2-ի զեկուցագրում գրված է. «Համկ(բ)Պ անդամ Մելիքյանն իր անձնական հաշվին ունի զենքով ու ռազմամթերքով բեռնված երեք ոչնչացված զինվորական էշելոն։ Էշելոնների խորտակումները կատարվել են բացառիկ դժվարին պայմաններում[246]։

Պարտիզաններն իրենց գործողությունների շրջանում ամենուրեք օգնություն ու աջակցություն էին ստանում բնակչության կողմից։ 4-րդ գունդը գյուղացիների օգնությամբ ապահովեց ձմեռվա իր ամբողջ պաշարը։ Գնդի պահեստներում կար 110600 կգ ցորեն, 117220 կգ կարտոֆիլ, 393 գլուխ անասուն[247] և այլն։ Պարտիզաններն իրենց հերթին մեծ աջակցություն էին ցույց տալիս գյուղացիներին։ 41-րդ և 37-րդ ջոկատների անմիջական օգնությամբ 1944 թ. հունվարի 1-ին հիտլերականներից ազատագրված Գորկա, Յակունի, Բատիխա, Զեմլյանկինա

---

244 Հովսեփ Սողոմոնի Մելիքյանը՝ ծնված 1920 թ. ՀՍՍՀ Բերդ գյուղում, ՍՄԿԿ անդամ է 1942 թ., բանակից զորացրվելուց հետո մի քանի տարի աշխատել է ՆԳՄ-ի ցանցում։ 1953 թ. սկսած աշխատում է Երևանի անասնարուծական-անասնաբուժական ինստիտուտում։ Նա այժմ նույն ինստիտուտի կադրերի բաժնի վարիչն է։

245 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 1, գ. 1698, թ. 65, 75։

246 Նույն տեղում, ց. 9, գ. 770, թ. 268։

247 Նույն տեղում, ց. 9, գ. 7, թ. 286։

և Ջալուժնո գյուղերում բացվեցին տարրական դպրոցներ[248]։ 1943 թ. դեկտեմբերի 28-ին 4-րդ գնդում ստեղծվեց հատուկ ջոկատ, որ հիմնականում զբաղվում էր Գերմանիա ստրկության տարվող սովետական քաղաքացիների փրկության հարցերով։ Այդ ջոկատը մինչև 1944 թ. փետրվարը փրկեց ստրկության տարվող 4500 սովետական քաղաքացիների[249]։

1941—1942 թթ. Լենինգրադի մարզի պարտիզաններին մեծ աջակցություն ցույց տվեց Գդովի շրջանի «Заболотье» կոլտնտեսության վարչության նախագահ էստոնուհի Անտոնինա Կառլովնա Ադամսոնը։ 1941 թ. սեպտեմբերին նա կապ հաստատեց պարտիզանների հետ և նրանց սկսեց հաղորդել տեղեկություններ թշնամու մասին։ Բացի այդ, նրա միջոցով պարտիզանները ստանում էին հաց, այլ պարենամթերք և տաք հագուստ։ Հրամանատարությունը անձնազոհ էստոնուհուն պարգևատրեց Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով[250]։

1944 թ. հունվարի սկզբին սկսվեց սովետական զորքերի մեծ հարձակումը Լենինգրադի 900-օրյա շրջափակումը վերացնելու համար։ 1944 թ. հունվարին Լենինգրադի մարզում արդեն կար զինված 13 պարտիզանական բրիգադ, որոնց մի մասը գործում էր Կալինին մարզի պարտիզանների հետ սերտ համագործակցությամբ։ Պարտիզանական միավորումների ռազմական խոշոր գործողությունները համաձայնեցվում էին Լենինգրադյան և Մերձբալթյան 2-րդ ռազմաճակատների զորքերի հրամանատարությունների հետ։ 1944 թ. հունվարի սկզբին Լենինգրադի շրջանում, երբ սովետական զորքերը սկսեցին հարձակումը, պարտիզաններն ավելի ուժեղացրին թշնամուն հասցվող հարվածները։ Միայն վեց օրվա ընթացքում նրանք ոչնչացրին 60000 ռելս, 200 կամուրջ, խորտակեցին 133 էշելոն, 1620 ավտոմեքենա, 15 կայարան, 21566 հիտլերական և փրկեցին Գերմանիա ստրկության տարվող 400 հազար սովետական քաղաքացիների[251]։

Թշնամու թիկունքում մարտական ակտիվ գործողություններ ըստ ընտրեցին պարտիզանական բրիգադներն ու ջոկատները։ 41-րդ ջոկատն իր մարտական ցուցանիշներով դարձել էր Վ. Գերմանի անվան պարտիզանական 3-րդ բրիգադի առաջնակարգ ստորաբաժանումներից

---

248 Նույն տեղում, ց. 1, գ. 1694, թ. 140։

249 Նույն տեղում, թ. 163։

250 Նույն տեղում, ց. 4, գ. 929, թ. 1։

251 «Ленинградский партизан», 15 апреля 1944 г.

մակը։ Նրա շարքերում արդեն հաշվվում էր 1144 պարտիզան, որից ռուս՝ 1051, հայ՝ 57, ուկրաինացի՝ 12, բելոռուս՝ 6, վրացի՝ 2, այլ ազգություններ՝ 16[252]։ Նրա դիվերսիոն խմբերը՝ Լազար Բալոյանի, Սարգիս Գասպարյանի, Գառնիկ Ղարիբյանի, Սուրեն Աբրահամի Օգանովի[253], Ցիմերմանի գլխավորությամբ հունվարի 1—18-ը Օստրով—Ռեզեկնե, Պսկով—Պորիսով երկաթգծում խորտակեցին ռազմական տեխնիկայով ու զորքով շարժվող թշնամու 6 զինվորական էշելոն. ոչնչացվեց 6 շոգեքարշ, 56 վագոն[254]։ Միայն Լազար Բալոյանի դիվերսիոն խումբը ոչնչացրեց 130 հիտլերական։ Գրիգոր Ղարիբովի խումբը հունվարի 14-ին Տրիդորսկի-Օպոչկա գծում պայթեցրեց 64 ռելս, իսկ հաջորդ օրը Օպոչկա—Օստրով խճուղու վրա գնդակոծեց հակառակորդի ավտոշարասյունը։ Հունվարի 20-ին նրա խումբը հանկարծակի ներխուժեց Մոլոչի-Զուբավի բնակավայրը, փախուստի մատնեց հիտլերականներին և գնդակահարեց վերջինների կողմից ընտրված հայրենիքի դավաճան գյուղի ավագին[255]։ Դիվերսիոն խմբի հրամանատարներ Ցիմերմանը, Գրուշկովը, Բալաևը, Օռլովը և ուրիշներ այդ ամսին խորտակեցին երկուական զինվորական էշելոն[256]։ Հունվարի 21-ին գնդի մյուս ստորաբաժանումների հետ սերտ համագործակցությամբ 41-րդ ջոկատի պարտիզանները հարձակում կատարեցին Դնեպրովիչ—Զիխաչևո երկաթգծի պահակակետերի վրա. ոչնչացվեց 50 հիտլերական և պայթեցվեց կամուրջը։ Այստեղ անձնազոհաբար կռվեցին Սարգիս Գասպարյանը և Միսակ Բագիրյանը[257]։ Վերջինիս բնութագրում գրված է. «Ընկ. Միսակ Բագիրյանը պարտիզանական գործունեության ընթացքում մարտերում դրսևորում է անձնազոհություն և դիմացկունություն, նա իր խումբը հմտորեն է տանում մարտի և միշտ էլ պատվով կատարում մարտական խնդիրները»[258]։

Հունվարի 21-ի մարտում զոհվեցին 41-րդ ջոկատի պարտիզաններ Աշոտ Այրումյանը, Խաչատուր Դադյանը և Երվանդ Հայրապետի Հակոբ-

---

252 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 9, գ. 1384, թ. 25։

253 Սուրեն Աբրահամի Օգանով, ծնվ. Ադրբ. ՍՍՀ ք. Կիրովաբադ։

254 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 1, գ. 1698, թ. 79—80, 81—82, 84—85։

255 Նույն տեղում, թ. 77—83։

256 Նույն տեղում, ց. 9, գ. 1386, թ. 25։

257 Նույն տեղում, ց. 1, գ. 1694, թ. 155։

258 Նույն տեղում, ց. 14, գ. 19, թ. 49։

յանը[259]։ 41-րդ ջոկատի մարտիկներն ու հրամանատարները այրվում էին մարտական առաջադրանքի կատարման ցանկությամբ։ Նրանք խնդրում էին իրենց ուղարկել ամենավտանգավոր և ամենադժվար մարտական առաջադրանքները կատարելու։ Նրանցից շատերը ցանկություն էին հայտնել ընդունվելու կոմերիտմիության շարքերը։ 1944 թ. հունվարին 41-րդ ջոկատի կոմերիտական կազմակերպությանը դիմեց Դարսո Արշակի Աղաջանովը[260], խնդրելով իրեն ընդունել կոմերիտմիության շարքերը. «Մեկնելով մարտական առաջադրանքի,— գրում է նա,— խնդրում եմ ինձ ընդունել ձեր շարքերը։ Կյանքս պատկանում է հայրենիքիս և ես որպես կոմերիտական կտամ իմ կյանքը ի փառս հայրենիքի։ Եթե զոհվեմ, ապա խնդրում եմ ինձ համարել կոմերիտական»[261]։ 41-րդ ջոկատի կոմերիտական կազմակերպությունը նրան ընդունեց իր շարքերը։

Լենինգրադի պարտիզանական շտաբի հրամանով Վ. Գերմանի անվան պարտիզանական բրիգադը փոխեց իր գործողությունների շրջանը և շարժվեց հյուսիս՝ Լուգա—Պսկով երկաթգիծը, խնդիր ունենալով խանգարել հակառակորդի նահանջը։ Հունվարի 17-ին Պսկով—Պորխով երկաթուղու կամուրջն անցնելիս բրիգադի զորամասերն ընդհարվեցին հակառակորդի հետ։ Սկսվեց ուժեղ մարտ։ Ֆաշիստները պարտիզանների դեմ նետեցին զրահագնացք, ինքնաթիռներ, թնդանոթներ և այլն։ Հիտլերականների բոլոր ջանքերը՝ փակել պարտիզանների ճանապարհը՝ ձախողվեց։ Այդ օրը ծանր կորուստներ կրեց 41-րդ ջոկատը։ Զոհվեցին ջոկատի պետի տեղակալ Զավեն Համբարձումյանը, պարտիզաններ Էլբակ Հարութի Մանուկյանը և Հակոբ Բաղդասարի Բաղդասարյանը[262]։ 41-րդ ջոկատն այնուհետև ծանր մարտեր մղեց հակառակորդի դեմ Սվետլի պուտ բնակավայրի շրջանում։ Այստեղ պարտիզանները պայթեցրին կամուրջը և փակեցին անցուղին։ Մյուս ափին երեք օրվա ընթացքում կուտակվեց մեծ քանակությամբ թշնամու կենդանի ուժ և տեխնիկա, որը ոմբակոծվեց մեր ինքնաթիռների կողմից[263]։

---

259 Նույն տեղում, ց. 1, գ. 1714, թ. 73, 134—135։ Երևանդ Հայրապետի Հակոբյանը, ծնվ. 1910 թ., Ադրբ. ՍՍՀ Ստեփանակերտի շրջանի Դահրավ գյուղից է։

260 Դարսո Արշակի Աղաջանով, ծնվ. 1920 թ., Վրացական ՍՍՀ, ք. Թբիլիսի։

261 Նույն տեղում, ֆ. 0-116, ց. 9, գ. 1386, թ. 27։

262 Էլբակ Հարութի Մանուկյան, ծնվ. 1907 թ., Հոկտեմբերյանի շրջան, գյուղ Հոկտեմբեր, Հակոբ Բաղդասարի Բաղդասարյան, ծնվ. 1917 թ., Կամոյի շրջ. գ. Ղուլալի (Կարմիր գյուղ)։

263 ՀՍՍՀ ԴԱ «Տեղեկագիր», 1961, № 1, էջ 16—17։

Հաղթահարելով մի շարք դժվարություններ, Վ. Գերմանի անվան պարտիզանական 3-րդ բրիգադի զորամասերը ի վերջո հասան նշանակված վայրը։ Ժամանակավոր դադարի ընթացքում ամփոփվեցին մեկամսյա մարտերի ու դիվերսիաների արդյունքները։ 41-րդ ջոկատը, որ խորտակել էր 13 զինվորական էշելոն, պայթեցրել 84 ռելս, ոչնչացրել 3 ավտոմեքենա, 2 տրակտոր և այլ ռազմական տեխնիկա, գնդում նորից գրավեց երկրորդ տեղը[264]։

Փետրվարին 41-րդ ջոկատը, գնդի մյուս ստորաբաժանումների համեմատությամբ, հասավ ռեկորդային արդյունքների։ Ոչնչացվեց 1302 հիտլերական, 1 էշելոն, 80 ավտոմեքենա, 65 քարշակ, 105 ռելս, 3 կամուրջ, 4000 մետր կապի գիծ և սոցիալիստական մրցության արդյունքներն ամփոփելու ժամանակ գրավեց առաջին տեղը[265]։

Մարտական բարձր ցուցանիշների համար գնդի հրամանատարը, կարմիր բանակի 26-րդ տարեդարձի առթիվ, 1944 թ. փետրվարի 23-ին շնորհակալություն հայտնեց Արտեմ Սաղումյանին, Պերճ Աղաջանյանին, Սուրեն Սարգսյանին, Գառնիկ Ղարիբյանին, Լազար Բալոյանին, Ալեքսեյ Բաբինովին, Գեորգի Ցիմերմանին, Հայկանուշ Դանիելյանին, Պարույր Մարտիրոսյանին, Մ. Իվանովին և Դ. Նեչաևին[266]։

41-րդ ջոկատն իր մարտական ուղին ավարտեց Ռիգ բնակավայրի շրջանում, որտեղ 4-րդ գնդի մյուս ստորաբաժանումների հետ միացավ կարմիր բանակի զորամասերին[267]։ Յոթ ամիս Վ. Գերմանի անվան 3-րդ պարտիզանական բրիգադի կազմում ջոկատը հերոսաբար մարտնչեց հակառակորդի դեմ, պատվով կատարելով հրամանատարության մարտական առաջադրանքները։ Մարտական ցուցանիշներով գնդում մեկական անգամ գրավեց 4-րդ (սեպտեմբերին) և 3-րդ տեղերը (նոյեմբերին), չորս անգամ 2-րդ, իսկ վերջում՝ 1-ին տեղը[268]։ Իր գոյության ամբողջ ընթացքում պարտիզանական ջոկատը ոչնչացրեց, խորտակեց ու պայթեցրեց 1993 գերմանական զինվոր ու սպա, 25 էշելոն, 88 ավտոմեքենա, 7 գնդացիր, 60 հեծանիվ, 23 մոտոցիկլետ, 65 քարշակ, 2 տրակտոր, 8 կամուրջ, 3 պահեստ, 1688 ռելս, 14700 մետր կապի գիծ և այլն[269]։

---

264 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 1, գ. 1694, թ. 165։

265 Նույն տեղում, թ. 179—180։

266 Նույն տեղում, թ. 178։

267 Նույն տեղում, ց. 9, գ. 1384, թ. 30։

268 Նույն տեղում, ց. 1, գ. 1694, թ. 180։

269 Նույն տեղում, թթ. 54, 57, 104, 124, 141, 165, 180։

Պարտիզանական պայքարի ավարտումից հետո 41-րդ ջոկատի շատ մարտիկներ ու հրամանատարներ կարմիր բանակի տարբեր զորամասերի շարքերում շարունակեցին պայքարը ֆաշիստական զավթիչների դեմ։ Նրանցից մի քանիսին բախտ վիճակվեց տեսնել հաղթանակի բաղձալի օրը։ Հայրենական պատերազմի ռազմադաշտերում զոհվեցին Պերճ Աղաջանյանը, շտաբի պետ Երվանդ Եղիազարյանը, դիվերսիոն խմբի հրամանատարներ Գեորգի Յվետկովը, Անդրեյ Դլուշկովը և ուրիշներ[270]։

Սովետական եղբայրական ժողովուրդների ինտերնացիոնալ ընտանիքում բարեկամության ջերմությամբ աճած ու ամրապնդված հայ ժողովրդի զավակները հերոսաբար մարտնչեցին թշնամու դեմ նաև մյուս պարտիզանական բրիգադներում։ 1941 թ. սեպտեմբերից սկսած, երբ սկսվեց թշնամու առաջշարժումը դեպի Լենինգրադ, կործանիչ գումարտակների ու պարտիզանական ջոկատների կազմում բազմաթիվ հայ ուսանողներ, ասպիրանտներ, բանվորներ, ծառայողներ անցան ռազմաճակատի գիծը և կամավոր մասնակցեցին պարտիզանական պայքարին։ Նրանցից Հմայակ Արամի Աղուզումցյանը Լենինգրադի Լենսովետի անվան տեխնոլոգիական ինստիտուտի 3-րդ կուրսի ուսանող էր, երբ սկսվեց պատերազմը։ 1941 թ. հուլիսին նա, որպես աշխարհազորային, կամավոր մեկնեց ռազմաճակատ, իսկ օգոստոսին 4-րդ պարտիզանական գնդի 40-րդ ջոկատի կազմում անցավ թշնամու թիկունքը և մասնակցեց մի շարք դիվերսիաների։ Նա իր ղեկավարած խմբով ոչնչացրեց հակառակորդի շտաբը, սպանեց գեներալին և երկու պայուսակ փաստաթղթերով վերադարձավ զորամաս[271]։

Պարտիզանական 4-րդ գունդը հակառակորդի թիկունքում մղված մարտերում ծանր կորուստներ կրելու պատճառով համալրում ստանալու համար նորից անցավ ռազմաճակատի գիծը։ Հ. Աղուզումցյանը Լենինգրադից նորից մեկնում է ռազմաճակատ։ Սեպտեմբերին խիզախ պարտիզանը վիրավորվում է և շուտով բուժվելուց հետո մեկնում ռազմաճակատ։ Հոկտեմբերի 26-ից հետո հարազատները նրանից ոչ մի նամակ չստացան։ 22-ամյա հայ երիտասարդի նամակները ներծծված են հայրենասիրությամբ ու լավատեսությամբ. «Ես այսօր ռազմաճակատ

---

270 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1961, № 14, թ. 18։

271 «Технолог», орган партийной, комсомольской, профсоюзной организации и ректората Ленинградского ордена Трудового Красного знамени Технологического института им. Ленсовета. 9 мая 1964.

եմ մեկնում,—գրում է Հմայակը ծնողներին։ —Եղեք հպարտ, չընկճվեք, շարտասվեք, արիաբար ինքներդ համոզվեք, որ զոհեր շատ կլինեն ու եթե զոհվողը մենք լինենք (խոսքը վերաբերում է նաև մյուս երեք եղբայրներին, որոնք նույնպես ռազմաճակատում էին), սառնասրտությամբ ընդունեք այդ, որովհետև մեծ հաղթանակը մեծ զոհեր է պահանջում։ Դուք հպարտացեք նրանով, որ ձեր զավակներն իրենց կրծքով պաշտպանում են սոցիալիստական հայրենիքը»։ Մեկ այլ նամակում նա գրում է. «Հարց է ծագում, ի՞նչն է մարդու համար ամենաթանկը։ Մի՞թե կյանքը չէ։ Այժմ հիմնականն ատելի թշնամու դեմ մղվող պայքարն է, որը կարող է զրկել մարդուն կյանքից, ես ընտրել եմ մտածված և գիտակցաբար։ Այժմ ամբողջ մարդկության առաջ դրված է ամենալուրջ հարցը—ոչնչացնել հիտլերականներին ու ֆաշիզմը։ Ով չի ցանկանում լինել ստրուկ, ով ցանկանում է ապրել, նա պետք է մասնակցի այդ պատերազմին»[272]։

Տեխնոլոգիական ինստիտուտի սաներից Լենինգրադի համար մարտընչեցին ասպիրանտներ Գուրգեն Լևոնի Պետրոսյանը, Խաչիկ Արամի Պետրոսյանը[273], ինստիտուտի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Վ. Աղիդյանը, ուսանողներ Աշոտ Բարսեղի Հարությունյանը և Թումաս Ստեփանի Նաջարյանը։ Լենինգրադի մարզում պարտիզանական գնդի հրամանատար էր գնդապետ Հայկ Թումանյանը[274], պարտիզանական ջոկատների հրամանատարներ էին Արթուր Երվանդի Աբրոյանը և Հովհաննես Հովսեփի Վասիլյանը[275]։ 1941 թ. սեպտեմբերին Կարելական պարանոցում Ս. Աբրոյանի հրամանատարությամբ պարտիզանական 73-րդ ջոկատը, որը հիմնականում կազմված էր «Բոլշևիկ» էլեկտրասարքերի գործարանների բանվորներից (183 մարդ), 23-րդ բանակի հրամանատարության հատուկ առաջադրանքով անցավ ռազմաճակատի դիծը, խնդիր ունենալով հանկարծակի հարձակումներով կազմալուծել հակառակորդի ստորաբաժանումների շտաբների աշխատանքը, ոչն-

---

272 «Ավանգարդ», 1964, մայիսի 9։

273 Գուրգեն Լևոնի Պետրոսյան, ծնվ. 1914 թ. և Խաչիկ Արամի Պետրոսյան, ծնվ. 1910 թ., երկուսն էլ ավարտել են Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ 1938 թվականին։ Առաջինը զոհվեց 1941 թ., իսկ երկրորդը՝ 1942 թ.։

274 Տե՛ս Ն. Մ. Խալեյան, Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին, Երևան, 1975, էջ 80։

275 Արթուր Երվանդի Աբրոյան, ծնվ. 1911 թ., պատերազմի նախօրյակին աշխատել է Լենինգրադի Վ. Ի. Լենինի անվան գործարանում։ Հովհաննես Հովսեփի Վասիլյան, ծնվ. 1918 թ., 1939 թ. ավարտել է Երևանի էլեկտրատեխնիկական տեխնիկումը։

չացնել գերմանական սպաներին, գրավել օպերատիվ կարևոր փաստաթղթեր, պայթեցնել հեռախոսային կապի գծերը, կամուրջները, խճուղային ճանապարհները և այլն։ Ռազմաճակատի գիծն անցնելու ժամանակ թշնամու հետախույզները նկատում են պարտիզաններին և հետևում նրանց։ Սեպտեմբերի 5-ին հակառակորդի մեծաթիվ ուժերը հանկարծակի հարձակվում են Աբրոյանի ջոկատի ճամբարի վրա։ Ս. Աբրոյանը հրամայում է մարտերով ետ քաշվել և նորից միանալ յուրայիններին։ 187 պարտիզաններից վերադառնում են 87-ը[276]։ Չնայած անհաջողությանը, 73-րդ ջոկատը Ս. Աբրոյանի հրամանատարությամբ 41 հոգով հոկտեմբերի 6-ին երկրորդ անգամ անցավ ռազմաճակատի գիծը և նույն օրն էլ մարտական գործողություններ սկսեց թշնամու թիկունքում։ Տուրիշկինո բնակավայրի մոտ պարտիզանները պայթեցրեցին երկաթուղային կամուրջը և ոչնչացրեցին թշնամու պահակակետերը։ Այս գործողությունների ժամանակ աչքի ընկան Շիլովը, Յանուշիսը, Ուվարովը, Կոշելևը և լեյտենանտ Դմիտրիևը։ Հոկտեմբերի 11-ին պարտիզանները Ս. Աբրոյանի հրամանատարությամբ Բերեզովկա—Շապկի խճուղում ոչնչացրին թշնամու բեռնատար ավտոմեքենան և սպանեցին 30 հիտլերական, իսկ այնուհետև ներխուժելով գյուղ, դուրս քշեցին այնտեղից հիտլերականներին և պայթեցրին պահեստները, այրեցին 4800 տոննա խոտ[277]։

Լենինգրադի պարտիզանական շտաբում հմուտ հետախույզի համբավ ուներ Հովհաննես Հովսեփի Վասիլյանը, որը սկզբում 1-ին պարտիզանական հատուկ բրիգադի հետախուզական ջոկատի կոմիսարն էր, իսկ հետո դարձավ նույն բրիգադի շտաբի պետի տեղակալը։ 1943 թ. հունիսից նրան վստահվեց առանձին, հատուկ պարտիզանական հետախուզական ջոկատի հրամանատարի պաշտոնը[278]։ Նրա հրամանատարությամբ ջոկատը գործել է Դեմյանսկի, Դեդովիչի, Պոլովսկի, Բելեբեպովսկի, Աշևսկի, Սլավկովսկի, Պսկովի, Օստրովի, Կարամիշևի շրջաններում և շատ կարևոր տեղեկություններ հաղորդել Լենինգրադի պարտիզանական շտաբին ու Լենինգրադի ռազմաճակատի զորքերի հրամանատարությանը՝ հակառակորդի ուժերի դասավորության, շարժման ուղղության, օդանավակայանների տեղաբաշխման, տանկային ու մոտոմեքենայացված զորամասերի քանակական կազմի ու զինվածու-

---

276 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 1, գ. 689, թ. 1—5։

277 Նույն տեղում, գ. 690, թ. 6։

278 Նույն տեղում, ց. 14, գ. 40, թ. 113։

թյան մասին։ Հետախուզական աշխատանքներում դրսևորած ծառայությունների համար նա պարգևատրվեց Կարմիր աստղի շքանշանով և Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի մեդալով[279]։

Նույն բրիգադի պարտիզանների շարքերում հերոսաբար մարտնչեց վրաց ժողովրդի զավակ, հետախուզական խմբի հրամանատար, լեյտենանտ Գերոն Պլատոնովիչ Գաբրիլիձեն։ 1941 թ. պատերազմի ընկերքին Թշնամու թիկունքում նա մասնակցեց չորս մարտական գործողությունների և Հյուսիսարևմտյան ռազմաճակատի հրամանատարությանը տվեց արժեքավոր տեղեկություններ հակառակորդի ուժերի դասավորության մասին։ 1941 թ. սեպտեմբերի 19-ին մարտական գործողություններից մեկի ժամանակ նա ուղիղ նշանառությամբ սպանեց Թշնամու գնդացրորդին և հնարավորություն տվեց հետախուզական խմբին առանց կորստի հետ քաշվելու։ Վերջին գործողության ընթացքում Գաբրիլիձեն իր խմբով ոչնչացրեց հինգ տուն, որտեղ գտնվում էին 50-ից ավելի հիտլերականներ։ Լեյտենանտը վիրավորվեց, բայց չհեռացավ մարտի դաշտից և իր օրինակով ոգևորեց խմբի մարտիկներին։ Այդ մարտում նա անձամբ ոչնչացրեց 10 հիտլերական։ Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի հրամանատարությունը խիզախ պարտիզանին պարգևատրեց Կարմիր դրոշի շքանշանով[280]։

Թշնամու թիկունքում համարձակ էին գործում դեսանտայինները, որոք օգնում էին պարտիզաններին՝ ստեղծելու դիվերսիոն ջոկատներ ու ռելսեր պայթեցնող խմբեր։ Պարտիզանական 1-ին բրիգադում էր գտնվում ականներ դնող 9-րդ առանձին գվարդիական գումարտակի սերժանտ Սուրեն Մովսեսի Մելքումյանը[281], որը Թշնամու թիկունք էր իջեցվել 1943 թ. օգոստոսին։ Պարտիզանական բրիգադում եղած ժամանակ նա պատրաստեց մի շարք դիվերսիոն խմբեր, որոնց կողմից ռելսային պայթեցումների «համերգները»[282] ծանր վիճակի մեջ էին դնում հակառակորդին։ Նրա հաշվին է գրանցված հակառակորդի ռազմական տեխնիկայով բեռնված զինվորական երկու էշելոնի խորտակումը։ Առաջին զինվորական էշելոնը նա խորտակեց 1943 թ. նոյեմբերի 23-ին,

---

279 Նույն տեղում, ց. 4, գ. 828, թ. 3, գ. 742, թ. 52։

280 ՍՍՀՄ ՊՄԿԱ, ֆ. 221, ց. 1386, գ. 282, թ. 3։

281 Սուրեն Մովսեսի Մելքումյան, ծնվ. 1918 թ., Բերդ գյուղում։ 1944 թ. նոյեմբերին մի խումբ ընկերների հետ թռչում է Թշնամու թիկունքը և մարտերից մեկի ժամանակ հերոսաբար զոհվում։

282 Պայթեցումները պարտիզանները անվանում էին «համերգներ»։

իսկ երկրորդը՝ 1944 թ. հունվարի 28-ին[283]։ Մարտական սխրանքի համար նա պարգևատրվեց Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշանով։

Մարտական մեծ հաշիվ է դրանցված նաև պարտիզանական 10-րդ բրիգադի պարտիզան, դեսանտային Կոնստանդին Հակոբի Մկրտումյանի անունով։ Խմենիցկ գյուղի համար մղված մարտերում նա իր դասակով առաջինը ներխուժեց գյուղը և հնարավորություն տվեց, որ բրիգադի ջոկատներից մեկը դուրս գա շրջապատումից։ Ցիկլիստով բնակավայրի մոտ վաշտը, նրա հրամանատարությամբ, ոչնչացրեց 80 հիտլերական։ Մկրտումյանը թշնամուն ծանր հարվածներ հասցրեց նաև Կարամիշևի, Պորխովի, Պսկովի և Դնոյի շրջաններում։ Թշնամու թիկունքում եղած ժամանակ նրա դասակը խորտակեց հակառակորդի զինվորական երկու էշելոն, պայթեցրեց 16 կամուրջ, 400 մետր ռելս, 1 ավտոմեքենա և ոչնչացրեց 60 հիտլերական[284]։

Լենինգրադի մարզի տարբեր շրջաններում էին գործում պարտիզաններ՝ Աղասի Հակոբի Աղիզյանը (11-րդ բրիգադ) և Պյոտր Պետրոսի Հակոբյանը (5-րդ բրիգադ)[285]։ Նրանք մեկական զինվորական էշելոն խորտակելու համար Լենինգրադի պարտիզանական շտաբի կողմից պարգևատրվեցին Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշանով[286]

Թշնամու դեմ մղված մարտերում իրենց լավ դրսևորեցին պարտիզանական 2-րդ բրիգադի մատակարարման պետ Մանավազ Հասրաթի Հասրաթյանը, 10-րդ բրիգադի հետախուզության պետի տեղակալ, լեյտենանտ Աղվան Հովակիմի Պետրոսյանը[287], զինվորական ինժեներ Վարուժան Իոսիֆի Գասպարյանը, Զաքար Մակարի Սարգսյանը, Քրիստափոր Բագրատի Պետրոսյանը, Ջավեն Արշակի Միրզախանյանը, Մի-

---

283 Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 4, դ. 908, թ. 31։

284 Լենինգրադի կուսակցական արխիվ, ց. 0-116, գ. 136, թ. 27։ Կոնստանդին Հակոբի Մկրտումյան, ծնվ. 1920 թ., Սիսիանի շրջան, գյուղ Անգեղակոթ։ Նա այժմ բնակվում է նույն շրջանի Բազարչայ գյուղում և աշխատում է Որոտանի սովխոզում որպես գլխավոր հաշվապահ։

285 Աղասի Հակոբի Աղիզյան, ծնվ. 1912 թ., ք. Կրասնոդար, կուսակցության անդամ 1940 թ.։ Պյոտր Պետրոսի Հակոբյան, ծնվ. 1918 թ., Ուկր. ՍՍՀ ք. Նիկոլաև։ Սովորել է Լենինգրադի Լեսգաֆտի անվան ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտում։

286 Նույն տեղում, ց. 4, դ. 877, թ. 1, դ. 967, թ. 3։

287 Մանավազ Հասրաթի Հասրաթյան, զինվորական ինժեներ էր։ Աղվան Հովակիմի Պետրոսյան, ծնվ. 1918 թ. Ազիզբեկովի շրջան, գ. Բարցրան, զոհվել է 1944 թ. փետրվարի 11-ին։

քայել Լազարի Թումասովը, Գրիգոր Մատվեյի Հարությունովը, Սասունիկ Վաղարշակի Ավդալյանը, Գրիգոր Ստեփանի Ասախանյանը, Արկադի Վարդևանի Ջաքարյանը և ուրիշներ։

Լենինգրադի մարզում պարտիզանական պայքարի ամբողջ ընթացքում իր հայրենանվեր գործերով ու սխրանքներով աչքի ընկավ սովետական փառապանծ այն օդաչուների ջոկատը, որը ճեղքելով դիշերային մթությունը, դժվարին պայմաններում վայրէջք էր կատարում թշնամու թիկունքում, պարտիզաններին հասցնելով անհրաժեշտ զինամթերք ու պարենամթերք։

1943 թ. վերջերից Լենինգրադի պարտիզանական շտաբը ինքնաթիռների միջոցով ապստամբած շրջանները փոխադրեց 14266 հրացան, 7013 ավտոմատ, 1179 գնդացիր, 123 հակատանկային հրացան, 112 ականանետ, 10730 ական, 80000 նռնակ, 114 տոննա պայթուցիկ նյութ և 17 միլիոն փամփուշտ[288]։ Այդ օրերին լարված էին գործում Գատչինյան 12-րդ հեռավոր գործողության ավիացիոն գնդի օդաչուները, որոնք զինամթերք ու պարենամթերք էին տեղափոխում պարտիզանների համար։ Միայն մեկ դիշերվա ընթացքում, 1943 թ. հունվարի 31-ի լույս փետրվարի 1-ի դիշերը, գնդի օդաչուներ՝ գվարդիայի կապիտաններ Վազգեն Սեմյոնի Բաղդասարովը, Պլատոն Պլետնիկովը, գվարդիայի լեյտենանտ Ավագ Ջավադի Մանուչարովը և գվարդիայի կրտսեր լեյտենանտ Աֆանասի Կոմարովը պարտիզանների համար տեղափոխեցին 11820 կիլոգրամ ռազմամթերք։ Գվարդիայի կապիտաններ Վազգեն Բաղդասարովը և Պլատոն Պլետնիկովը մեկական թռիչքի փոխարեն կատարեցին երկու թռիչք և յուրաքանչյուրը տեղափոխեց 3000 կիլոգրամ բեռ։ Գվարդիայի լեյտենանտ Ավագ Մանուչարովը տեղափոխեց 1560 կիլոգրամ բեռ։ Մարտական առաջադրանքի կատարման ժամանակ աչքի ընկան օդային հրաձիգներ՝ գվարդիայի ավագ Կուզմա Ռակաղովը, Լեոնիդ Տիմանյուկը, Իվան Կիսելյովը և ուրիշներ։ Վերոհիշյալ օդաչուներն ու հրաձիգները պարգևատրվեցին Հայրենական պատերազմի պարտիզանի 2-րդ աստիճանի մեդալով[289]։

Բացի ռազմական ինքնաթիռներից, Լենինգրադին սպասարկում էին նաև քաղաքացիական ավիացիայի օդաչուները։ 4-րդ առանձին գնդում հմուտ տեխնիկի համբավ էր վայելում Սուրեն Գլավուղյանցը, որի կողմից սպասարկվող ինքնաթիռները 1942 թ. օգոստոսից սկսած կատարել

---

[288] *П. Р. Шевердалкин,* Героическая борьба ленинградских партизан, Л., 1959, с. 206.

[289] *Լենինգրադի կուսակցական արխիվ, ֆ. 0-116, ց. 4, գ. 758, թ. 2—40։*

էին 152 մարտական թռիչք, թշնամու թիկունք տեղափոխելով 955 դեսանտային, 144250 կգ ռամամթերք ու պարենամթերք և նետել 1540 թռուցիկ։ Ինքնաթիռների տեխնիկական լավ սպասարկման համար Լենինգրադի պարտիզանական շարժման շտաբը Ս. Գլավուզյանցին պարգևատրեց Հայրենական պատերազմի պարտիզանի 2-րդ աստիճանի մեդալով[290]։ Հրամանատարության առաջադրանքները ճիշտ և ժամանակին կատարելու համար այդ մեդալով պարգևատրվեցին տեխնիկներ Միխայիլ Բայատինը, Անատոլի Կոնդրատևը, Սերգեյ Միխայլովը և Միխայիլ Նաղարովը[291]։

* *
*

Աշխատության այս սեղմ բաժնում հնարավոր չէ ամբողջությամբ շարադրել Լենինգրադի մարդի ընդհատակյինների գործունեության ու պարտիզանական շարժման պատմությունը։ Մի փոքր հատվածով աշխատել ենք ցույց տալ սովետական մարդկանց մարտական եղբայրությունը, նրանց ինտերնացիոնալիզմը և համերաշխությունը։ Այդ տեսակետից վառ օրինակ են 3-րդ պարտիզանական բրիգադի գործերը, որի շարքերում ռուս ժողովրդի զավակների հետ ուս-ուսի թշնամու դեմ հերոսաբար ու անձնվիրաբար մարտնչել են Լենինգրադից հազարավոր կիլոմետրեր հեռու գտնվող Սովետական Հայաստանի զավակները։ Նրանք հերոսաբար մարտնչեցին թշնամու դեմ նաև պարտիզանական մյուս բրիգադների ու ջոկատների շարքերում և իրենց համեստ ավանդը ներդրեցին թշնամուն Լենինգրադի մարզի սահմաններից դուրս շպրտելու մեծ գործում։

Լենինգրադի մարզում մղվող պարտիզանական պայքարը հզոր ուժ էր և մեծ աջակցություն ցույց տվեց սովետական բանակին։ Երկու տարի և ութ ամսվա պայքարի ընթացքում Լենինգրադի պարտիզանները ոչնչացրին 100000 ֆաշիստական զինվոր ու սպա, ավերեցին 175 կմ երկաթուղագիծ, 150 հազար ռելս, 1280 կամուրջ, 48 երկաթուղային հանգույց ու կայարան, խորտակեցին 1103 զինվորական էշելոն, շարքից հանեցին 2150 հեռախոսային ու հեռագրական հաղորդալար և

---

290 Նույն տեղում, գ. 477, թ. 16։

291 Նույն տեղում, թ. 43, 61, 65։

այլն[292]։ 5247 պարտիզան և ընդհատակային պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ 18 խիզախների շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում[293]։

* *
*

Մեծ հերոսամարտի ծանր ու դաժան փորձություններում Լենինգրադը դարձավ մասսայական սխրագործությունների ու անօրինակ հերոսությունների ծննդավայր, որտեղ աճեց, կոփվեց ու ավելի ամրապնդվեց մարտական բարեկամությունը ՍՍՀՄ ամենատարբեր ազգությունների պատկանող մարտիկների միջև։ Բարեկամության հիմքը նպատակի ու խնդիրների ընդհանուր լինելն էր՝ պաշտպանել Լենինգրադը, իսկ այնուհետև ջախջախել ու նրա սահմաններից դուրս շպրտել թշնամուն։ Բարեկամությունն արտահայտվում էր ամենաբազմազան ձևերով՝ ծառայական ուսուցման ընթացքում ետ մնացողներին աջակցելու, նեղ պահին ընկերոջն օգնելու, շարքից դուրս եկած մարտիկին փոխարինելու, կամ սեփական կյանքով նրան փրկելու, մարտում փոխադարձ օգնության ձևով, համատեղ պայքարով։

Ետմահու Սովետական Միության հերոսի կոչմանն արժանացած դպրոց Սուլտան Բայմագամբետովը, ուղբեկ Տույչի Էրջիգիտովը, ռուս Դմիտրի Մոլոդցովը դիմեցին անձնազոհության, սեփական մարմնով փակելով դզոտների հրակնատները, որպեսզի մահացու գնդակները չխլեն գրոհող ընկերների կյանքը։ Սովետական Միության հերոս, լեյտենանտ Ալեքսանդր Մնացականովը մարտի ժամանակ տանկի դիտակետից նկատելով գումարտակի հրամանատարին սպառնացող վտանգը, արագ բացեց տանկի աշտարակի դուռը և տեղնուտեղը սպանեց հրամանատարի վրա նշան բռնած գերմանական սպային։ Տանկիստ Երվանդ Ավետիսյանը մարտից չհեռացավ այնքան ժամանակ, մինչև որ դաշտից դուրս չբերեց թշնամու կողմից խփված «Տ-50» տանկը՝ վիրավոր անձնակազմով։ Մարտի վճռական պահին իրենց երիտասարդ կյանքը չխնայեցին Ալինա Մոլդագուլովան, Թուրքմեն Այդոգդի Տախիրովը, ադրբեջանցի Հուսեյն Ալիևը, վրացի Սերգեյ Կերիաձեն, կիրգիզ Ջամիլ Զոլպոնկուլովը և շատ ուրիշներ։

---

[292] «Ленинградский партизан», 15 апреля 1944 г.

[293] *П. Р. Шевердалкин,* Героическая борьба ленинградских партизан, с. 281.

Լենինգրադի հերոսամարտը թշնամու դեմ մարտնչող ամենատարբեր ազգությունների և, առաջին հերթին, ռուս ժողովրդի ամենալավագույն հատկությունների դրսևորման չգերազանցված փայլուն օրինակ է։

900 օր, որից 500-ը լրիվ շրջափակման պայմաններում, Լենինգրադը հերոսաբար մարտնչեց ֆաշիստական հրոսակախմբերի դեմ։ 900 օր քաղաքի բնակիչները հաղթահարեցին աներևակայելի դժվարություններ և այդ կռվից հաղթող դուրս եկան։

Մեր ժողովուրդը իրավամբ հպարտանում է այդ անկրկնելի հերոսամարտում իր զավակների անօրինակ սխրանքով։

Թշնամու դեմ հերոսաբար մարտնչած սովետական բազմազգ ռազմիկների մարտական սխրագործությունները ցույց են տալիս, թե ինչպիսի մեծ ոգևորությամբ, ինչպիսի հայրենասիրությամբ ու նվիրվածությամբ են նրանք կռվել Լենինգրադի համար, պատվով կատարել իրենց մայրերի, հայրերի, քույրերի, եղբայրների պատգամները և ռազմի դաշտում ցուցաբերել անկոտրում կամք, դիմացկունություն, համառություն ու թշնամուն հաղթելու վճռականություն։

Լենինգրադի ռազմաճակատի քաղվարչության կողմից 1945 թ. հրատարակած «Սովետական Հայաստանի զավակները Լենինգրադի պաշտպաններ» գրքույկում ասված է. «Նրանք Լենինգրադի ուրիշ շատ պաշտպանների նման արիաբար ու խիզախորեն կռվում էին թշնամու դեմ։

... Նրանց սխրագործությունները երբեք չեն մոռանում լենինգրադցիները, նրանց փառապանծ գործերով ըստ արժանվույն կհպարտանա Սովետական Հայաստանի ժողովուրդը»[294]։ Շրջափակման վերացումից անմիջապես հետո ամբողջ բնակչությունը ոտքի կանգնեց՝ վերացնելու պատերազմի հասցրած հետևանքները։ 1944 թ. մարտի 29-ին Պաշտպանության պետական կոմիտեն ընդունեց «1944 թ. Լենինգրադի արդյունաբերության ու քաղաքային տնտեսության առաջնահերթ վերականգնման միջոցառումների մասին» որոշումը։ Լենինգրադին տրամադրեց 790 միլիոն ռուբլի[295]։ Լենինգրադի վերականգնմանը մասնակցեց սովետական ողջ ժողովուրդը, այդ թվում նաև Սովետական Հայաստանի աշխատավորությունը։ Սիսիանի և Ստեփանավանի աշխատավորները 1944 թ. մարտին և օգոստոսին Լենինգրադ ուղարկեցին

---

294 «Սովետական Հայաստանի զավակները Լենինգրադի պաշտպաններ», Լենինգրադ, 1945, էջ 4։

295 *В. Е. Зубаков*, Ленинград город-герой., с. 202.

1917000 ռուբլի[296]։ Ի. Ստալինը և Ա. Ժդանովը շնորհակալություն հայտնեցին եղբայրական օգնության համար։ 1957 թ. Լենինգրադը երկրորդ անգամ պարգևատրվեց Լենինի շքանշանով, իսկ 1965 թ. ֆաշիստական զավթիչների դեմ տարած հաղթանակի 20-րդ տարեդարձի առթիվ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով հերոսքաղաքին հանձնվեց Լենինի շքանշան և «Ոսկե աստղ» մեդալ։ 1984 թ. հունվարի 26-ին, Լենինգրադի շրջափակման լրիվ վերացման 40-ամյակի առթիվ Լենինգրադի մարզը պարգևատրվեց Լենինի շքանշանով։

---

[296] «Советская Армения в годы Великой Отечественной войны». Сборник документов и материалов, с. 278, 284.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Արաձև 86
Արաշիձև 46
Արաշվիլի 59, 206
Արգուսալիմով 48
Արովյան Գուրգեն 132
Արրահամյան Ա. Գ. 158
Արրահամյանց Պ. Լ. 175
Արրամով Վ. Ֆ. 220
Արրոյան Ա. Ե. 244, 245
Ադրուն Իվան 144
Ադամսոն Ա. Կ. 239
Ադամյան Լ. Պ. 147
Ադաշև Լ. Ա. 184
Ադատյան Ա. Մ. 210
Ազարյան Արամայիս 11
Ադիզյան Ա. Հ. 247
Ադիզյան Վ. 12, 244
Ազովցև Ն. Ն. 27, 28, 29, 30, 31
Ալավերդյան Վ. 82
Ալեքսանդր Նևսկի 174
Ալեքսանդրյան Ա. Մ. 175
Ալեքսանդրով Ա. Պ. 96, 97
Ալեքսանդրով Ա. Վ. 178
Ալեքսանդրով Վ. Ա. 95
Ալեքսենկո Վ. Ա. 196, 203
Ալեքսեև 154
Ալեքսեև 232
Ալեքսեև Ն. 19
Ալիխանյան Ա. Ի. 96
Ալիխանյան Երվանդ 169
Ալիխանով Ա. Ի. 97
Ալիմով Ա. 166
Ալիշեր Նավոյի 96
Ալիև Ա. Կ. 210
Ալիև Ա. Մ. 192, 195
Ալիև Հուսեյն 63, 250
Ալոյան Ժ. Վ. 210
Ալֆերով Ի. Պ. 180, 184
Ախմետյարով Ախատա 105
Ակաև Յու. Ա. 217—220
Ակոպով Արմենակ 111
Ակոպով Ա. Ա. 205
Ակոպով Խորեն 48
Ակոպով Վահան 110
Աղաջանյան Մուշեղ 132
Աղաջանյան Պ. Ս. 228, 233, 237, 242, 243
Աղաջանով Գ. Ա. 241
Աղաջանով Ս. Զ. 236
Աղասյան Թ. Մ. 81
Աղավնի 167
Աղուղումցյան Հ. Ա. 12, 243, 244
Ամիրջանյան Նիկոլայ 132
Այլոյան Ս. Ս. 206
Այտուգանով 48
Այրումյան Ա. Գ. 237, 240
Անանյան Ա. Մ. 45, 50
Անանյան Կորյուն 12
Անդրեև Ա. Մ. 39
Անդրիենկո Նիկոլայ 47
Անիսիմով Գ. Ի. 159
Անիսիմով Ի. 121, 123
Անտիպով Ա. Ա. 15
Անտոնենկո Ա. Կ. 48
Անտոնյան 76
Անտոնյան Վ. Ե. 142
Անտոնով Ն. Դ. 196
Անտոնով Ն. Պ. 94
Ապաևա Պավել 112
Առաքելյան 47

Առաքելյան Աշոտ 34
Առաքելյան Հ. Մ. 41
Առուստամով 71
Առուստամով Գուրգեն 111
Ասախանյան 248
Ասատրյան Ավետիս 172
Ասատրյան Դ. Դ. 82, 83
Ասատուրով Դ. Զ. 136—140
Ասեսկ 91
Ասկյարով 203
Ավագյան 69
Ավանեսյան Լ. Պ. 198
Ավդալյան Ս. Վ. 248
Ավետին Մ. Ս. 142
Ավետիսյան Ա. Ս. 201, 202
Ավետիսյան Գուրգեն 169
Ավետիսյան Ե. Ա. 100, 101
Ավետիսյան Ե. Ս. 42, 43, 250
Արարս 167
Արդաշնիկով Վ. 72
Արմյանինով Վ. Ա. 52
Արնոլդ Մերի 17
Արշակունի Պետուշ 12
Արտեմև Իվան 117
Արտյուշենկո Պ. Ա. 151
Աուբակիրով 207
Ափինյան Ս. Մ. 64, 216
Աֆանասև Ա. Դ. 148, 183
Աֆանասև Ն. Դ. 39
Աֆանասև Ն. Ֆ. 213
Աֆանասև Վ. 151

Բարայան Ա. Մ. 197, 198
Բարայան Ի. Ա. 128
Բարայան Վ. Դ. 237
Բարանով Ի. Դ. 213
Բարինով Ալեքսեյ 242
Բարինով Վ. 237, 238
Բագաուտդինով Դ. Ա. 182
Բադիրյան Մ. Ն. 237, 240
Բադախայ Գ. Ա. 59
Բաժանով Գ. Ս. 213
Բալայան Խ. 12
Բալասանյան Գևորգ 34
Բալև Բ. Դ. 228, 229, 240
Բալերին Վ. Ա. 211, 213
Բալոյան Լ. Ա. 228, 229, 231, 234, 237, 240, 242
Բաղդասարյան Գ. Խ. 140, 141
Բաղդասարյան Հ. Մ. 241
Բաղդասարով Բ. Ա. 118
Բաղդասարով Վ. Ս. 248
Բաղիրով Հուսեյն 63
Բաղրամյան Հ. Ք. 89
Բայազիտով 48
Բայատին Միխայիլ 249
Բայրիտով 207
Բայկով Ա. Ա. 10, 96, 97, 98
Բայկով Ս. Դ. 13
Բայմագամետով Սուլթան 128
Բայմուլդին Արիլխաիր 176
Բայսուլթանով Ա. Յու. 49, 63, 91, 129, 220
Բանձելաձե Ս. Ն. 54
Բաննիկով 119
Բանիֆատով Ի. Ս. 216
Բասով Վ. Ի. 60
Բասովսկի Բ. Ա. 179
Բասովսկի Մ. Ա. 66
Բատալին Ն. Վ. 232
Բատինսկի Ա. Մ. 216
Բատուլկա Ա. Վ. 159
Բարաթյան Նելլի 10
Բարանով Կ. 19
Բարանով Վ. Ի. 23
Բարբակաձե Դ. Ի. 205, 206
Բարբաշի Վիկտոր 36
Բարդա 43
Բարդյուգով Ն. Ի. 197
Բարիկով Մ. Դ. 148
Բարիշև 42, 43
Բարիշև Ա. Ֆ. 192
Բարխուդարյան Արամ 128
Բաուդեր Վ. Ռ. 222
Բաուլին Ն. Պ. 54
Բեզրուկով Վիկտոր 63
Բելյաև Ս. 31
Բելկովսկի Եվգենի 11

Բելով 18
Բելով Վասիլի 238
Բելոուսով Լ. Գ. 49, 91
Բելոուսով 191
Բելուշ Մ. Ա. 209
Բեկրոսունով Ս. 192, 195
Բեկնազարով Բ. Ն. 158
Բեյսանով Կասեն 166
Բերգգոլց Օլգա 72
Բերիձե Ա. 72
Բղենկո Ս. Ա. 82
Բիդաման Պ. Ի. 179
Բիկովա Լ. Ֆ. 148
Բիստրով Ա. Ա. 184
Բլոխին Վ. Ա. 184
Բոգաչև Ա. Ա. 214
Բոնդարչուկ 76
Բոնդարև Լ. Ա. 39
Բոնդին 233
Բոնժուս Մարտա 209
Բոյչևսկի Ալեքսանդր 63
Բոյցով Ս. 33, 72
Բոչկով 14
Բորդով Ի. Ի. 212, 213
Բորիսենկո Վ. Ա. 164
Բորիսյուկ Ա. Ֆե. 192
Բորիսով Բ. 72
Բորիսով Մ. Վ. 214
Բորով Ա. 72
Բորշչով Ս. Ն. 186
Բորովիկով Ս. Պ. 160
Բորտնովսկի Դմիտրի 63
Բոև Գ. Ե. 15
Բրադին Վ. Ա. 45
Բրաղդին Ի. Ա. 209
Բրաուխին 51
Բրեյուսկաս Զոյա 227
Բրինկո Պ. Ա. 48
Բրոխով 202
Բրոսլավսկի 42, 43
Բրուսեր Գ. Մ. 136, 180
Բուբնով Սերգեյ 108
Բուդանով Ֆ. Ա. 109
Բուդկո Ս. Ի. 209
Բուդուրագին Վ. Ա. 213
Բուլաև Ա. Դ. 129
Բուխատոյաժ 152
Բունիմովիչ Յու. Ե. 129, 213
Բուչուրին Ի. Ս. 66
Բուռնազյան Ելենա 12, 95
Բուսարով Մ. Մ. 180
Բուրմիստրով Ֆ. Ա. 160

Գաբրելյան Ա. Բ. 98, 99
Գաբրիելյան Ն. Գ. 109
Գաբրելով Գաբրել 10
Գաբրիլիձե Գ. Պ. 246
Գագիև Ա. Մ. 213
Գալստյան Բ. Հ. 66—69
Գալերկին Բ. Գ. 94
Գալիխին Նիկոլայ 118
Գալպերին Ա. Վ. 171
Գալուստյան Վ. Շ. 125
Գանդիկով Դ. Ի. 54
Գանիչև Լ. 184
Գաշկով Ա. Վ. 197, 199
Գասպարյան Արամ 12, 20, 21
Գասպարյան Ս. Ա. 141, 237, 240
Գասպարյան Վ. Ի. 247
Գասպարով Ա. Զ. 203
Գասպարով Ն. Ա. 203
Գավրիլով Յա. Պ. 147
Գավրիլով Պ. Ֆ. 147
Գեշելին 11
Գերասիմենկո Ի. Ս. 101
Գերբիլսկի Ն. Ա. 95
Գերգոլով Ս. Ս. 95
Գերման Վիկտոր 227, 230, 232
Գոլիբիշվիլի Ի. Վ. 149, 189, 190, 191, 195
Գիլերման Վ. Պ. 59
Գլավուզյանց Սուրեն 248, 249
Գլեխ 46
Գլինկա 98
Գլուխով Պ. Ս. 90
Գլուշկո Անդրեյ 243
Գնեդով 148
Գնեզդիլով 108

Դնիպին Ս. Վ. 80
Դնուսով Վ. Ա. 95
Դուլկովսկայա Եվգենիա 117
Գոլուբկին Շ. Զ. 227
Գոլուբև 121
Գոլուբև Վասիլի 129
Գոլուբև Վ. Ֆ. 220
Գոնգաձե Մ. Խ. 203
Գոնչարով Պ. Ֆ. 192
Գովորով Լ. Ա. 186
Գորբանև Մ. Դ. 52, 53
Գորբաշևսկի Ա. Ի. 203
Գորբաչ Մ. Մ. 164
Գորբաչև Ի. Ի. 109
Գորբոց Ա. Ֆ. 160
Գորբունով Միխայիլ 63
Գորգալ Սեմյոն 91
Գորդելաձե Յե. Կ. 141
Գորդոն Մ. 71
Գորյաինով 17
Գորյաչև 229, 232
Գորշկով Ի. Դ. 176
Գորշկով Ի. Դ. 135
Գորոդիսկի Ա. 153
Գորոյան Բ. Ա. 191
Գորովոյ Բ. Յա. 206
Գովորով Լ. Ա. 186
Գոֆման Ա. .Դ 221
Գվոզդև Վ. Մ. 54
Գրանին Բ. Մ. 45, 48
Գրաչև Ա. Ի. 220
Գրաֆով Ի. Ս. 164
Գրեկով Լ. Ի. 39, 56
Գրեն Ի. Ի. 80, 88, 136, 205
Գրեչկո 140
Գրիգորյան Ա. Ս. (Անդրեյ Գրիգորին) 12, 31, 32, 33
Գրիգորյան Ա. Ա. 158
Գրիգորյան Գ. Ն. 27—31
Գրիգորյան Պատո 12
Գրիգորյան Ս. 79
Գրիգորև 19, 207
Գրիգորև Պ. 176
Գրիշին Վ. Ն. 52
Գրիվցև Ա. Ի. 164
Գրաբելշվիլի Նիկոլայ 159
Գրյազնով Միխայիլ 80
Գրուշկով 240
Գուրին Ա. Դ. 45
Գուրին Ն. Պ. 52
Գուրկին Վ. Ի. 95
Գուդիմով Ի. Կ. 199, 200
Գուդմաննկո 53
Գուցով Ն. Տ. 96
Գուլյաև Պ. Ա. 95
Գումաննկո Վ. Պ. 59
Գումերով Ա. Դ. 154
Գուսև Դ. Ն. 179, 185
Գուրգենիձե Ա. Ե. 215
Գուրևիչ Մ. Մ. 179
Գևորգյան Մ. 166

Դադյան Խ. Ա. 228, 237, 240
Դանիելյան Ակիմ 128
Դանիելյան Հ. Ա. 228, 242
Դանիելյան Հ. Մ. 210
Դանիլով Ա. Ա. 141
Դանովիչ Ֆ. Մ. 222
Դավթյան Ա. Գ. 203, 228, 233, 236
Դավթյան Ա. Զ. 206
Դավթյան Ի. Ղ. 105, 106
Դավթյան Մատիկոն 129
Դավթյան Մ. 124
Դավթյան Պարույր 129
Դավիդենկո Դ. Ի. 220
Դավիդով Ա. Վ. 148
Դեմիդով Ռ. Ս. 213
Դեմիդով Վ. Մ. 140
Դենիսենկո Վ. Մ. 66
Դերևյանկո Վ. Դ. 52
Դմիտրիև 245
Դմիտրև 202
Դյակոնով Մ. Ի. 12
Դյաչենկո 157
Դորելով Ն. Ս. 59
Դոդոխյան 167
Դոնսկով Ս. Ի. 108
Դորգոմիժսկի 98

Դովլաթյան 207
Դորժիև Ն. 72
Դջիտաև Դ. Ն. 179
Դվին Գերասիմ 112
Դրոսկովսկի Լ. 71
Դուդին Միխայիլ 72
Դուսյայ Գ. Ս. 59
Դուրմիշյան Մուշեղ 96

Եգորով 19
Եժկով 86
Ելխով 53
Ելյուտին Վ. Պ. 192
Եղիազարյան Ե. Հ. 228, 234, 243
Եղիազարյան Ռ. Ս. 80, 81
Երեմյանց Յա. Ե. 62
Երմակով 76
Երմակով (պարտիզան) 233
Երմակով Դ. Վ. 201
Երմակով Շ. Ն. 222
Երմոլով Ն. Ի. 17
Երյոմին Ա. Կ. 197
Եսայանց 121
Եվգրաֆով Վ. Ն. 213
Եֆիմենկո Ն. Ֆ. 153, 154
Եֆիմով 45
Եֆիմով Գ. Ի. 228, 230
Եֆիմով Մ. Պ. 59

Զաբելին 116
Զաժիգին Ի. Ս. 192
Զայնտով Ն. Ա. 145, 183
Զալիաշվիլի Մ. Ի. 109
Զալումյան Մամիկոն 128
Զախարենկո 146
Զամիրովսկի Ն. Մ. 39
Զայդուլին Ի. Մ. 209
Զայցև 222
Զայցև Միխայիլ 158
Զայցև Վ. Մ. 39, 40, 41
Զավարին Գ. Ա. 214
Զատուլին Ա. Լ. 94
Զաքարյան 105
Զաքարյան Ա. Վ. 248

Զբրիցկի Ե. Պ. 206
Զդորովցև Ս. Ի. 51
Զելդովիչ Յա. Բ. 94
Զելենով Ն. Ա. 203
Զեմլյանով Ա. Տ. 209
Զենին Ի. Ս. 185
Զիկով Կ. Ա. 45
Զոլոտով Վ. Ֆ. 140
Զոտով Վ. Ա. 201
Զվոնով Լ. Յու. 66
Զուբկով Ի. Գ. 127
Զույկով Ս. Գ. 108

Էշ Կ. Լ. 181
Էրենբուրգ Ի. 184
Էրջիգիտով Տույչի 128, 250

Թադևոսյան Պ. 72
Թաշճյան 167
Թարխանով Վ. Ա. 175
Թափուրաձե Մ. Վ. 206
Թերզիբաշյան Վ. 167
Թոմանյան Ի. Ն. 170
Թումանյան Հայկ 244
Թումանյան Սերգեյ 10
Թումասով Մ. Լ. 248
Թուրքմենյան Հ. Խ. 37
Թևոսյան Գ. 72

Ժամկոչյան Ս. Ս. 207, 210
Ժդանով Ա. Ա. 37, 66, 79, 91, 99, 252
Ժդանով Ն. Ն. 80, 136, 180
Ժդանով Վիկտոր 63
Ժդանով Վ. Դ. 215
Ժելբելև Ս. Ա. 11
Ժելեզով 48
Ժելդին Լ. Վ. 90
Ժիդով Գ. Ա. 91
Ժիլին Պ. Մ. 45
Ժուկով 119
Ժուկով Գ. Կ. 37, 88, 121, 126, 138
Ժուկով Գ. Վ. 207
Ժուկով Մ. Պ. 51
Ժումգալիև 142

17—534

Ժույկով Գ. Ս. 56
Ժուչկով Տ. Ս. 220
Ժուսուպով 83
Ժուրավլյով Ի. Պ. 113
Ժուրբա Դ. Վ. 66, 109

Իրներ Վերա 72
Իբրահիմով 191
Իգնատով 231
Իգնատև Ա. Ի. 66
Իգնատև Ի. Գ. 90
Իլին Գերասիմ 60
Իլյարով Գեորգ 111
Իկերտ Վլադիմիր 144
Իշիմով Կիրիլ 122, 123
Իշխանով Վ. Ի. 222
Իոնեսյան Ս. Լ. 151
Իոֆֆե Ա. Ֆ. 10, 96—98, 222
Իպատով 91
Իսակով Գ. 48
Իսակով Հ. Ս. 58, 88, 89
Իսակով Պ. Ֆ. 66
Իսակով Ս. Ի. 171
Իսահակյան Ա. 167
Իսաև Մ. Ա. 170
Իսկանդարով Արդրաշա 81
Իսկանդարով Մամանդար 81
Իսմատով 108
Իստավլետով Ջ. 210
Իսրայելյան Գեորգ 168
Իվանով 203
Իվանով (123-րդ հր. բրիգ.) 120, 121
Իվանով Ա. Ա. 66
Իվանով Ա. Պ. 39
Իվանով Ա. Մ. 192
Իվանով Գ. Ի. 160
Իվանով Ի. Մ. 179, 209
Իվանով Ի. Ս. 59, 207
Իվանով Մ. 242
Իվանով Մ. Գ. 206
Իվանով Ն. Դ. 213
Իվանով Ֆ. Ի. 140
Իտրբայկենով 48
Իրժակ Ի. Ա. 215

Լարուտին 18
Լագուտկին Գ. Գ. 91
Լաղաշվիլի Նիկո 67
Լալայան Ռուզաննա 12, 173, 174
Լալայան Սոֆյա 12, 173, 174
Լապին Իվան 144
Լապկո Վլադիմիր 36
Լասկով Պավել 144
Լավրով Լ. Ի. 12
Լարին Մ. Վ. 213
Լարինով Գ. Ֆ. 215
Լերեզև Ն. 209
Լենին Վ. Ի. 24, 47, 74
Լեոնիդ Լինչ 25
Լեոնովիչ Մ. Տ. 49
Լեսկոնոժենկո Ն. Գ. 39
Լերներ 236
Լիդիա Ալեքսեևնա 99
Լիզունով Ն. Վ. 32
Լիխոլետով Պ. Յա. 201
Լինիկ Յ. Վ. 12
Լիսաբոյ Պյոտր 80
Լիսիցին Մ. Ս. 221
Լիտավրին Ս. Գ. 129
Լիտվինով Վ. Գ. 155, 156
Լյաշչենկո 45
Լյուլկա 29, 31
Լորաչ Գ. Լ. 52
Լոզովոյ Պ. 166, 167
Լոկշին Վ. 72
Լոկտիկ Գ. Դ. 66
Լոմաձե Գ. Մ. 52
Լոնախով Վ. Մ. 203
Լոպատին Անատոլի 148
Լոսև 91
Լոսկուտով Ս. Պ. 104
Լվով Ս. Ի. 220
Լուկայտիս Վլադիմիր 108
Լուկյանով Ա. Մ. 52
Լուկին Դ. Վ. 109
Լուկին Յու. Վ. 46, 47
Լուկին Վ. 184
Լուկնիցկի Պավել 72
Լուչենկո Վլադիմիր 80

Լուպենկով Մ. Գ. 19
Լևոնովիչ Ի. Ս. 203
Լևչենկո Դ. Ի. 221

Խազով Ի. Վ. 159
Խամիտով Կանյաֆի 63
Խանամիրյան Գ. 166
Խանզադյան Ս. Ն. 106, 164, 165
Խանին 152
Խաչատրյան Ա. Մ. 103
Խաչատրյան Լ. Վ. 180
Խաչատրյան Վ. Ա. 80
Խաչատուրով Գուրգեն 59, 111
Խաչատուրով Ս. Զ. 170
Խաչիկյան Սարգիս 66, 72, 73
Խատիշվիլի Գ. Ի. 215
Խատմինսկի Ֆ. Ս. 196
Խարիտով 233
Խարիտոն Յու. Բ. 94
Խարիտոնով Պ. Տ. 51, 52, 57
Խարիտոնով Վ. Ն. 56
Խարլով Ա. Գ. 187
Խարմիշև Ի. Կ. 147
Խեչումյան Տ. Հ. 189
Խիտուրուև 47
Խլոցին Վ. Գ. 96
Խմալաձե Ա. Ի. 222
Խմել Ա. Յե. 66
Խոզին Մ. Ս. 37
Խոզից Վիկտոր 57
Խոլոպով Գեորգի 72
Խոլոպով Միխայիլ 148
Խոլոստով Դ. Ի. 179
Խոխլով Պ. Ի. 213
Խրոմով 222
Խրուստիցկի Վ. Վ. 116, 160, 161
Խուդարբերդիև Ուրազ 191
Խուդյակով Դմիտրի 230

Կարանով Ս. Ի. 45
Կարերով Ի. Ա. 220
Կարիև Սմագուլ 90
Կադացկի Ս. Զ. 109
Կազակով Մ. Ն. 217
Կազակպան Ա. 84
Կազաչյոնոկ Վ. Ս. 147
Կաիպով Ժունուսբայ 153, 176
Կալինկին Պ. Ե. 221
Կալուգով Խ. Ա. 121, 122, 132,
Կակուրիձե Ն. Ն. 215
Կամենսկի Պ. Ա. 179
Կամլաձե Գ. Բ. 203
Կանոնով Ալեքսանդր 24
Կանոնով Թամարա 24
Կաշտանկին Վ. Ն. 215
Կապրալով Մ. Վ. 207
Կապուտին Բ. Ի. 95
Կասյանով Դ. Դ. 140
Կատիմյան Ա. Ա. 203
Կարամեդդինով Սամիտ 40
Կարապետյան Ռ. 82
Կարգին Վ. Տ. 91
Կարելին Պ. 72
Կարետնիկ 47
Կարնաչ Ֆ. Ե. 66
Կարճիկյան Ստեփան 95
Կարպով Ա. Տ. 203
Կարպով Վ. 72
Կարպովիչ Մ. 72
Կարուզեն Պ. Գ. 46
Կաուզն Պ. Գ. 60
Կետիլաձե Ս. Պ. 102
Կերխաձե Սերգեյ 250
Կիրիլով Գեորգի 218
Կիզիմ Ա. Ի. 200
Կիսելև Մ. Գ. 17
Կիսիլյով Ս. Յե. 45
Կիսիլյով Իվան 248
Կիստոստուրով Ի. Ն. 151
Կիրակոսյան 167
Կիրակոսյան Ա. Մ. 193, 194
Կիրով Ս. Մ. 15
Կլավդիա Ֆյոդորովնա 33
Կլիմենկո 154
Կլիմենկո Մ. Գ. 109
Կլիմենկո Մ. 128
Կլիմով Վ. Մ. 206
Կլուկով Ն. Վ. 66

Կորախիձե 105
Կյուշարիանց Արթուր 95
Կոբենկո Պ. Պ. 94
Կորեց 195
Կորեց Ս. Ս. 45, 205
Կորեց Ս. Պ. 192
Կոզլով 19
Կոզին Մ. Դ. 79
Կոզոմոլով Մ. Ի. 164
Կոժանով Պ. Պ. 91
Կոժև Ա. Պ. 171
Կոլեսնիկ Պ. Ա. 213
Կոլիվերդով Ն. Մ. 90
Կոլորանով Զ. Գ. 23
Կոլչակ 74
Կոլչանով Ս. Պ. 148
Կոլոսով 191
Կոկորին Անատոլի 44
Կոմարով Աֆանասի 248
Կոնդրատև Անատոլի 249
Կոնդրին Ս. Պ. 90
Կոնկով Վ. Ֆ. 37
Կոնյուխով Իլյա 158
Կոնոնենկո 53
Կոնոնով Մ. Դ. 146—149
Կոնոպլիցին 43
Կոնովալով Բ. Ն. 209
Կոնստանդինով Ալեքսանդր 227
Կոշելև 245
Կոշելև Պ. Լ. 213
Կոշկոմբայ Օսպանով 91
Կոշևոյ Ֆ. Ա. 216
Կոշետով Վ. Ա. 95
Կոպիտ 116
Կոռնել 98
Կոսենկո Յու. Խ. 129
Կոսիդին Ա. Ն. 93
Կոսինով Ս. Վ. 52
Կոսով Մ. Ս. 90
Կոստենկո Մ. Պ. 11
Կոստիլով Գ. Դ. 220
Կոստրով 202
Կոստրուբայ Ա. Յա. 108
Կոսումբեկով 69
Կովալենկո Ա. 153
Կովալենկո Պ. Ա. 206
Կովալենկո Վ. Ի. 197
Կովշարով Ի. Ա. 39
Կոտիձե Արկադի 63
Կոտով Ն. Դ. 213
Կոտով Ն. Ս. 45
Կորաբլին Վ. Վ. 185
Կորեշկով Վ. Ս. 220
Կորյուն Ա. Ս. 52, 53
Կորնեև Վ. Ն. 222
Կորնիլենկո Ի. 72
Կորշունով Կ. Ի. 203
Կորոբով Կոնստանդին 118
Կորոբչենկո Վ. Ս. 136
Կորովին 174
Կորովին Ա. Ս. 46
Կորովին Ս. Ա. 222
Կորովին Ֆյոդոր 80
Կորոտկով Վ. Ի. 90
Կորսարևա 117
Կոֆման Յե. Ա. 90
Կրայնև Ս. Ֆ. 205, 206
Կրաչկովսկի Ի. Յու. 11
Կրասիլով Ա. Ս. 101
Կրասնոպեև Ի. Ի. 95
Կրավեց Տ. Պ. 11
Կրավչենկո 152
Կրավցով Ի. Ս. 220
Կրիլով Ա. Ն. 10
Կրիվոնոսով 91
Կրուգլով 232
Կուզրյաշև Ս. Ֆ. 45
Կուզրյավցև Միխայիլ 218
Կուզմին Բ. 19
Կուզմին Մ. Կ. 39
Կուզմին Ն. Ա. 45, 48
Կուզնեցով 35
Կուզնեցով Ա. 15
Կուզնեցով Ա. Ա. 37, 66
Կուզնեցով Ա. Ի. 49, 129
Կուզնեցով Ա. Ն. 94
Կուզնեցով Գ. Ա. 217
Կուզնեցով Ն. Վ. 91

Կուզնեցով Պ. 31
Կուզնեցով Պ. Ֆ. 109
Կոնզնեցով Վ. Դ. 215
Կուզնեցով Վ. Մ. 213
Կուզովկին Ն. Ֆ. 82
Կուլիզադե 86
Կուլիկ Կ. Ֆ. 66
Կուլիկով Ի. Ն. 176
Կուլիշ Իվան 80
Կուկանով 19
Կուկլինով Ա. Ա. 222
Կուկորենկո Ն. 108
Կունդուրցև Յ. Մ. 203
Կուշնիր 35
Կուպրիյանով Ն. Ս. 45
Կուպրիանով Պ. Ա. 95, 221
Կուսկով Վիկտոր 207
Կուտայ Դ. Դ. 206
Կուրաշենկո 152
Կուրբատով Ա. Ս. 142
Կուրգանիձե Գ. Օ. 171
Կուրեզնկով Ա. Գ. 220
Կուրիլով Պ. Վ. 45
Կուրկին 35
Կուրկո Ա. Պ. 164
Կուրմադաղին 46
Կուրոչկին Մ. Ա. 213
Կուրչատով Ի. Վ. 96, 97
Կուրուզյան Տարաս 63

Հալաջյան Մարատ 128
Հակորյան 169
Հակորյան Արտուր 111
Հակորյան Ա. Շ. 175
Հակորյան Ե. Հ. 240
Հակորյան Հակոբ 10
Հակորյան Մ. Գ. 159
Հակորյան Մուշեղ 46
Հակորյան Մանուկ 129
Հակորյան Պ. Պ. 247
Հակորյանց Ա. Դ. 203
Համբարձումյան Զ. Ս. 227, 229, 232, 233, 237, 241
Համբարձումյան Վ. Հ. 97
Հայրապետյան Արշալույս 185
Հայրապետյան Գրիգոր 16
Հայրապետյան Ե. Շ. 12
Հայրապետյան Հ. Խ. 214
Հայրապետով Ա. Ռ. 210
Հայրապետով Ա. Վ. 203
Հաջիև Մահմեդ 158
Հասանով 105
Հասրաթյան Էդրաս 96
Հասրաթյան Մ. Հ. 247
Հարությունյան Աշոտ 128
Հարությունյան Ա. Բ. 244
Հարությունյան Ա. Պ. 12
Հարությունյան Բ. Մ. 203
Հարությունյան Պարույր 12
Հարությունյան Ռ. Ա. 103, 104
Հարությունյան Ս. Ս. 141
Հարությունյան Վահան 10
Հարությունյան Վերա 12
Հարությունյան Վերգինե 12, 95
Հարությունյան Վռամ 111
Հարությունով 207
Հարությունով Ա. Ա. 160, 161
Հարությունով Գ. Մ. 142, 248
Հարությունով Ռ. Դ. 162, 163, 185
Հյուգո 98
Հովակիմյան Հակոբ 111, 112
Հովհաննիսյան 91
Հովհաննիսյան Ա. Դ. 236
Հովհաննիսյան Սաքո 12
Հովհաննիսյան Սուրեն 34
Հովհաննիսյան Տունիկ 12
Հովսեփյան Գ. Պ. 165
Հրաչյա Քոչար 167
Հունանով Ի. Ա. 222
Հուսեյն Մահրամ 118

Ղազարյան Ա. Վ. 16, 124
Ղազարյան Պ. Կ. 80
Ղազարյան Սերգո 36
Ղազարյան Ս. Ս. 105
Ղազարով Ս. Ա. 202
Ղամբարյան Աշոտ 34
Ղարիբյան Գ. Ռ. 228, 240, 242

Ղարիբյան Ռ. Ա. 197
Ղարիբով Գ. Ա. 228, 237, 240
Ղուկասյան Ա. Գ. 173

Մազարենկո Ա. Ն. 109, 214, 221
Մալիկով 207
Մալինովսկի Յ. Կ. 146
Մալիշև Վ. Ա. 192
Մալկով 222
Մալևսկի Ի. Ի. 59
Մակարենկո 116
Մակարենկո Մ. Դ. 60
Մակարենկով Իվան 117
Մահմեդով Ա. Մ. 62
Մամեդով Իսմադ 60, 112
Մամեդով Ս. Ս. 128
Մամկին Գ. Ա. 56
Մամյան Խ. Ն. 93, 94
Մամոնտով Աֆանասի 54
Մայակով Վ. 72
Մայիլյան Ն. Հ. 81
Մայսուրաձե Դ. Հ. 203
Մանանով Ի. Մ. 39
Մանգալիմով Նիկոլայ 112
Մանժոսով Դ. Դ. 215
Մանին Ալեքսանդր 157, 176
Մանշտեյն 107
Մանոխին Ա. Ն. 197
Մանուկյան Ե. Հ. 241
Մանուկյան Մ. Բ. 42, 43
Մանուչարով Ա. Ջ. 203, 248
Մաշկով Կ. Գ. 17
Մասալսկի Վլադիմիր 144
Մասլեննիկով Ի. Ի. 146
Մասլով Ն. Վ. 205
Մատիշև Վ. Ա. 44
Մատյուխին Գրիգորի 207
Մատյուշենկո 228, 232, 233
Մատվեև 142
Մատվեև Պավել 144
Մատվեև Վ. Ի. 52, 91
Մատվիեենկո 203
Մատրոսով Ալեքսանդր 22, 128, 144
Մարգարյան Ս. Մ. 228, 231
Մարկելով Վ. Ա. 192
Մարո Ս. Մ. 66
Մարչենկո Իվան 144
Մարտիրոսյան 150
Մարտիրոսյան Ե. Վ. 80
Մարտիրոսյան Համբարձում 111
Մարտիրոսյան Մինաս 34
Մարտիրոսյան Պ. Ա. 228, 233, 235, 237
Մարտիրոսյան Վարազդատ 132
Մարտիրոսյան Տիգրան 10
Մարտուսյան 115
Մարսապետյան Հ. Վ. 90
Մարսիմով Պ. Դ. 45
Մեղամինով 67
Մեժիրով Ալեքսանդր 72
Մեղվեդև Ա. Վ. 95
Մելիքաձե Շ. Ի. 40
Մելիքյան Հ. Ս. 238
Մելիքսեթյան Է. Ա. 41
Մելնիկով 53
Մելնիկով Գ. Մ. 203
Մելնիկով Պ. Ե. 206
Մելնիկով Պ. Վ. 118, 121, 122, 123, 124
Մելքոնյան 116
Մելքոնյան Հ. 66
Մելքոնյան Հ. Հ. 118—124
Մելքումյան Ս. Մ. 246
Մեշկով Ա. Դ. 203
Մեշկով Լեոնիդ 11
Մեսնյանկին Վ. Ն. 205
Մետոյան Յ. Ա. 80
Մերեցկով Կ. Ա. 192
Մերժանով Մ. 20
Մերցալով Ն. Գ. 221
Միգրով 247
Միլիկով Իվան 59
Միլնիկով Գ. Մ. 196
Միխալկին Մ. Ս. 80, 180, 136
Միխայլով Ա. 121
Միխայլով Լ. Վ. 52
Միխայլով Սերգեյ 249
Միխալև Ֆ. Ս. 185
Միխլիկ Վ. Ի. 203
Միկոյան Ա. Ի. 87, 93

Մինասյան Բ. Տ. 142
Մինասյան Մ. Մ. 222
Մինրաև Նարիջան 182
Մինգալիմով Նիկոլայ 59
Միտաև Ի. Պ. 192
Միտրուկով Միխայիլ 135, 176
Միրգունով Ալեքսանդր 144
Միրզախանյան Զ. Ա. 247
Միրզաև Միրզա 144
Միրոլյուբով Ն. Ն. 94
Միրոնով Պ. Վ. 194
Միրոնով Ֆ. Ա. 187
Միրով Մ. Ս. 19
Միքայելյան Հ. Ս. 151
Մկրտչյան Հովհաննես 111
Մկրտչյան Մ. Ս. 157, 158
Մկրտումյան Կ. Հ. 247
Մկրտումյան Մ. Ս. 228, 231, 232, 233
Մնացականով Ա. Ս. 146, 149, 250
Մոխսեննկո 120
Մոլդագուլովա Լիա 171, 250
Մոլդախմետով 48
Մոլոդչենկո Իվան 144
Մոլոդցով Դմիտրի 116, 117, 250
Մոնասելաձե Շոթա 112
Մոսկալենկո Յե. Ա. 10
Մովսեսյան Սահակ 12
Մովսիսյան Մ. Ա. 210
Մոտորով Գ. Ն. 206
Մորգացկի 208
Մորոզով Ա. Ա. 10
Մորոզով Ի. Դ. 192
Մորոզով Ի. Ռ. 45
Մորոզով Կ. Դ. 10
Մուդֆերշտադ 20
Մուխադինով Դանիլամ 59
Մուխատինով Դանիլամ 112
Մուխին Դ. Վ. 15
Մուհամեդով Գ. Գ. 45
Մուհամմեդջանով Արու 192
Մուշեղյան Կ. Ա. 117
Մուսաթյան Աշոտ 34, 35
Մուստաֆաև Հասան 107
Մուվիկա 191
Մուրադյան Դ. Հ. 158
Մուրդա Կիրիլ 57

Յաիչնիկով Գ. Մ. 205
Յակովլև Ա. 23
Յակովլև Ա. Վ. 15
Յակովլև Ա. Տ. 171
Յակովլև Մ. Ի. 104
Յակունին Ի. Ս. 209
Յանուշիս 245
Յաստրեբով Ի. Ի. 184
Յացկով Դ. Մ. 157
Յեղիմբաև Կարսբեկ 36
Յոլկին 29, 31
Յուգենիչ 74
Յուլիաս Վախտ 112
Յուխանով Դ. Պ. 196
Յունուսով Բ. Ն. 192, 195
Յուրչենկո Ֆ. Ս. 129

Նազարյան Ա. Ն. 125
Նազարյան Ա. Ս. 210
Նազարով Միխայիլ 249
Նաֆիֆ Սադիկով 118
Նահապետյան Ս. Մ. 170
Նաշանով Աբդուլա 85
Նաջարյան Բ. Ս. 244
Նաջարյան Տ. Ս. 12
Նասաձե Զախար 81
Նավասարդյան Միքայել 169
Նատրոշվիլի Սեմյոն 103
Նարինյան Ն. Ա. 127
Նարինյան Ս. Ի. 12, 150
Նաումով 53
Նեդորեզով Ա. Լ. 203
Նեզամաև Մ. Դ. 179
Նեմշիկով Վ. Ի. 192
Նեշաև Դ. 242
Նեստերցև Վ. Ն. 196
Նեստրուև Ի. Պ. 56
Նիզամի 96
Նիկանդրով 236
Նիկանորով Ն. Ս. 45, 47
Նիկիշին 154

Նիկիշին Մ. Դ. 199, 200
Նիկիտին Ալեքսեյ 57, 58
Նիկիտին Ա. Պ. 222
Նիկիտին Ն. Ա. 216
Նիկոլաև 31
Նիկոլաև Վ. Ա. 151
Նիկողոսյան Վահան 10
Նիկոնենկո Ի. Կ. 227
Նիշիպորուկ Ի. Ս. 45
Նովակ Վ. Ռ. 206
Նովիկ Կուզմա 60
Նովիկով 119
Նովիկով Պ. Ս. 200
Նովիկով Ս. Ֆ. 154
Նովիցկի Եվգենի 63
Նորովչատով Սերգեյ 72
Նուրարյան Աղասի 222
Նուրուլլաև Պ. 72

Շաթիրյան Սերգեյ 72
Շալիմով Վ. Յե. 129
Շալիմով Վ. Ֆ. 202
Շահինյան Գևորգ 111
Շահնազարով Ա. Խ. 237
Շամանով Ի. Գ. 211, 213
Շամբետով 48
Շամկով Պ. Ն. 197
Շանշաշվիլի Դ. Գ. 179
Շապկին Ն. Վ. 220
Շապոշնիկով 18
Շատելեն Մ. Ա. 10, 94
Շատվորյան Հայրապետ 128
Շատովսկի Վ. Կ. 154
Շարիկին Ս. Ի. 90
Շարկով Ա. Ֆ. 15
Շաքիրով Իվան 105
Շելչկա Ն. 72
Շեխովցև Ի. Ի. 52, 53
Շերստնև Ա. Ի. 148
Շիլկո Ա. Ա. 220
Շիլով 245
Շիլով Ա. Մ. 90
Շինբեկով Ժյուսենբայ 83, 105
Շիշկին Ի. Մ. 129
Շիշկով Մ. Ֆ. 213
Շիշով Ֆյոդր 122, 124
Շիրազ Հ. 167
Շկելյա Վ. Ի. 160
Շկրեբտիենկո Ս. Ֆ. 59
Շոկուն Դ. Կ. 108
Շոստակովիչ Դ. Դ. 11
Շորին Ն. Ա. 23
Շչեգլով Ա. Ֆ. 148, 182
Շպակ 207
Շվագիրև Ա. Պ. 151
Շվարցգորն Բ. Մ. 46
Շվեցով 47
Շտիկով Տ. Ֆ. 66
Շտրաուս 98
Շուրին Ա. Մ. 23
Շուլենին Ա. Ա. 228
Շումիլին Պ. Ի. 15
Շումով Ալեքսանդր 124
Շումով Ավկսենդիյա 124
Շումով Լուկա 124
Շումով Սեմյոն 124
Շումով Վասիլի 124
Շուշին Ի. Ֆ. 128

Ոսկանյան Ռ. Ա. 94, 95

Չայովնց Գ. Ի. 220
Չակլինով Լ. Ա. 90
Չակովսկի Ալեքսանդր 72
Չայկովսկի 98
Չաչավա Ս. Վ. 105
Չարուխչյան Վարդուհի 99, 100
Չափչախով Լ. Ս. 53, 54
Չելնոկով Ն. Վ. 63, 217, 221
Չերեմխին Կ. Կ. 206
Չերեմնով Լ. Ա. 101
Չերեպանով Ս. Մ. 153
Չերնենկո Վ. Ի. 220
Չերնիխ Ի. Ս. 52
Չերնիկով Ս. Ս. 12
Չերնիշ Մ. Դ. 147
Չերնիշև Ա. Պ. 211, 213
Չերնյախովսկի Ի. Դ. 22

Զերնյավսկի Բ. Բ. 136
Զերշիլ 176
Զիրիսով Ա. Պ. 153
Զիժկով 154
Զիշնաձև Ամերոն 112
Զիբնաձև Կ. 158
Զմշկյան Քնարիկ 12, 95
Զոլպոնկուլով Ջամիլ 250
Զվանով Վ. Տ. 213
Զուրինիձև Ա. 203
Զուպունով 76
Զուխարև Ն. Մ. 192
Զումակով Օ. Ն. 140
Զունչուզով Պ. Ա. 192
Զուսով Խաջիմաս 171
Զևելև Ա. Ի. 80

Պալիև Գեորգի 56
Պանին Ռ. Ի. 151
Պանկով Ա. Վ .59
Պանկով Ի. Կ. 192
Պանկրատով Ա. Կ. 22, 144
Պանկրատով Կոնստանտին 238
Պանֆիլով Վ. Դ. 39
Պանֆիլովա Վալենտինա 169
Պապիկյան Վ. Ռ. 175
Պապոյան Ռ. Ա. 194, 195
Պապչենկո Մ. Դ. 36, 189
Պաստորով Յու. Վ. 164
Պավլով Ա. Պ. 10
Պավլով Դ. Վ. 87, 88
Պավլով Պ. Ի. 109, 209
Պավլով Պ. Պ. 192
Պատկանյան Վ. Մ. 117
Պատվականյան Վ. Մ. 117
Պատուցա Սերգեյ 117
Պարշին Դ. Մ. 200, 203
Պետրայտիս 44
Պետրարկա 98
Պետրիշչև Պ. Ա. 206
Պետրոսյան (բաղրեկ) 33
Պետրոսյան 47
Պետրոսյան Ա. Հ. 247
Պետրոսյան Ա. Մ. 90
Պետրոսյան Ա. Ս. 188
Պետրոսյան Գ. Ե. 54, 55
Պետրոսյան Դ. Լ. 12, 244
Պետրոսյան Գ. Ս. 129
Պետրոսյան Ի. Ս. 199
Պետրոսյան Խ. Ա. 244
Պետրոսյան Ն. Մ. 208
Պետրոսյան Պետրոս 59, 111
Պետրոսյան Պ. Պ. 148
Պետրոսյան Վ. Խ. 101, 102
Պետրոսյան Ք. Բ. 247
Պետրով 31
Պետրով (սպարտիզան) 233
Պետրով Ա. Ա. 94
Պետրով Ն. Ն. 95
Պետրով Ն. Վ. 222
Պետրով Վ. Ի. 91
Պերեպելով Լ. 72
Պիդտիկա Ի. Ռ. 56, 129
Պիլյուտով Պ. Ա. 91
Պլատիցին Վ. Վ. 155, 156
Պլատոնով 22
Պլատոնով Ն. Դ. 141
Պլետնիկով Պ. 248
Պլետնև 154
Պլոտկին Միխայիլ 63
Պյադուսով Ի. Մ. 180
Պյատիկով Մ. Յե. 39
Պորիտով Պ. Ն. 60
Պոդլուցկի Ս. Ա. 109
Պոլեգան Մ. Դ. 45
Պոլուդին 120
Պոլուկեև Վ. Ե. 227
Պոկրիշև Պ. Ա. 51, 91, 201, 203
Պողոսյան Գ. 166
Պոնոմարենկո Ի. Ն. 214
Պոպով Դ. Ս. 90
Պոպով Մ. Ռ. 192
Պոտապով Ա. Ս. 109, 217
Պոտիֆորով Ի. Պ. 80
Պոտրյասով Պ. Ա. 192
Պորշունով Վ. Ա. 90
Պշելինցև Վ. Ն. 104
Պսինին Ն. Վ. 217

Պրեոբրաժենսկի Ե. Ն. 61
Պրեսնյակով Ա. Վ. 213
Պրիդան Վ. Պ. 140
Պրոխորով Ա. Ն. 196, 203
Պրոկոֆև 91
Պրոկոֆև Ա. Ա. 11
Պրոկուդին Դ. Ի. 141
Պրոցենկո Վ. Լ. 197
Պրուշինսկի 207
Պրուսյան Լ. 71
Պուլատով Իսման 70
Պուկաս Իվան 218
Պուշկին 237

Ջամբուլ 83
Ջանոյան Հ. Ա. 117
Ջանսուզյան Մ. Զ. 216
Ջավախով Գեորգ 208
Ջարոյան Մ. Դ. 156
Ջափարիձե Ա. Բ. 217
Ջեմբրալով 237

Ռադուլին 72
Ռադիգին Պյոտր 122, 124
Ռազգոնին Ա. Ի. 211, 213
Ռախմանինով 98
Ռախմանով Կայում 105, 126
Ռակազով Կուզմա 248
Ռակով 121
Ռակով Վ. Ի. 214, 221
Ռայնբերգ Յա. Լ. 170
Ռաշչուպկին Ա. Ի. 39—41
Ռաչկով Ի. Ի. 214
Ռաչկովսկի Վ. Մ. 186
Ռասկին Ա. Լ. 45
Ռատով Պ. Ֆ. 141
Ռեզնաև Ա. Ի. 213
Ռեզնիկ 48
Ռեյզեն Մ. Օ. 11
Ռեյնբերգ Ս. Ա. 95
Ռեյնով Ն. Մ. 94
Ռեյսյան Գ. Թ. 160
Ռեշետնիկով 46
Ռեշետով Ա. Ե. 11
Ռիբալչենկո Ս. Դ. 113
Ռիշակին Վասիլի 80
Ռյուտի Ռ. 195
Ռոգով 46
Ռոգով Ն. Վ. 152
Ռոդիշչև 206
Ռոդիոնով 118
Ռոդնև Վ. Պ. 209
Ռոժդեստվենսկի Վ. 72
Ռոմանցով Ա. Պ. 209
Ռոմանով Դ. Պ. 66
Ռոմաննիկո Պ. Լ. 141
Ռոմաննիկո Պ. Մ. 169
Ռոմանցով Ի. Դ. 39
Ռոմաշկին 43
Ռոյ Գրիգորի 117
Ռոյտման Մ. Դ. 46
Ռտով Ն. Ա. 142
Ռուակավշինիկով Վ. Ա. 140
Ռուբչենկո Վ. Տ. 182
Ռուդենկո Ն. Դ. 47
Ռուդնև Դ. 184
Ռուդիև Յուլդաշ 80, 82
Ռուզվելտ Ֆ. Դ. 127, 176
Ռումյանցև 233
Ռումյանցև Ա. Ի. 46
Ռումյանցև Ա. Յե. 164
Ռումյանցև Ֆ. Կ. 90, 179
Ռուսակով Պ. Ն. 179

Սարուրով 108
Սագարաձե 53
Սագոյան Ա. 59, 204, 206
Սազանով 157
Սազանով (հրետանավոր) 47
Սազաթելյան Կ. 23
Սազաթելով Ն. Մ. 64, 211, 212
Սազումյան Ա. 228, 231, 232, 233, 242
Սահակյան Ա. Խ. 171
Սահակյան Տ. Ա. 108
Սամեդով Ա. Մ. 211, 212
Սամիշև Ի. Կ. 203
Սամոխին Մ. Ի. 210, 221
Սամոյլով 207

Սամոյլով Ս. Ֆ. 215
Սայանով Վ. Մ. 11
Սայենկո 186
Սանթրոսյան Ռաֆիկ 46
Սաչկո Ի. Կ. 214
Սասլարով Ա. 72
Սավլևիչ Ա. Մ. 59
Սավկին 18
Սավչենկո Ա. Պ. 56, 63
Սավաշկին Մ. Ս. 129
Սարգիսով 207
Սարգսյան Անդրանիկ 14
Սարգսյան Արմենակ 67
Սարգսյան Ա. Ա. 233
Սարգսյան Ա. Ս. 163
Սարգսյան Գևորգ 132
Սարգսյան Զ. Մ. 247
Սարգսյան Հ. Ն. 190
Սարգսյան Ս. Ա. 228, 233, 237, 242
Սարգսյան Ս. 46
Սարգսյան Վլադիմիր 60, 111
Սարգսյան Վ. Մ. 169
Սարկիսով Միր 111
Սարյան Դ. 167
Սարոյան Ռ. Հ. 117
Սուֆյան Ի. Ի. 79
Սելիվանով 154
Սելյատին Ա. Մ. 220
Սեմենով Ն. Ն. 94, 96, 98
Սեմյոնով 116
Սենդունով Ս. 71
Սենկևիչ Ս. Ֆ. 54
Սերգեև 203
Սերգեև Ի. Ս. 90
Սերգեև Մ. 66
Սերգիյան Մամիկոն 63
Սերեբրյակով Պ. Ա. 11
Սերով Վ. Գ. 201
Սիդնև Բ. Ա. 52
Սիլանյան Ա. Ա. 46, 66, 145, 146, 179, 188
Սիլանտև Ա. Պ. 39
Սիլին Պ. Խ. 160
Սիմակ 167
Սիմանկին Գ. Ֆ. 192
Սիմանովսկի 48
Սիմարշուկ 48
Սիմկին Ա. Ա. 66
Սիմոնյակ Ն. Պ. 45, 116, 144, 180
Սիմոնյան Վ. 166
Սիմոնյան Վարդգես 128
Սիմոնով Կ. 184
Սիմոնով Ս. Վ. 95
Սինյավին Ֆ. Ֆ. 104
Սլեպենկո Յա. Զ. 109
Սլոնով Ալիբեկ 57
Սկելտոն Ռեդ 213
Սկլիպով Ի. Ս. 209
Սկոտինկով Մ. Դ. 109
Սկորոբոգատով Անատոլի 187
Սկվորցով 195
Սկվորցով Դ. Դ. 192
Սկրուդին Իվան 143, 176
Սմագին Գ. Ա. 222
Սմբատյան Պարթև 169
Սմիրնով 202, 203
Սմիրնով Դ. Ս. 205
Սմիրնով Ն. Պ. 60
Սմոլենցև 43
Սմոլյաչկով Ֆ. Ա. 104, 105
Սմոլնիկով Ա. Վ. 222
Սմուլյան Ի. Կ. 66
Սոլոմանով Ա. Վ. 102
Սոլոմոն 208
Սոլովյով 119
Սոլովյով (օդաչու) 203
Սոլովյով Կ. Վ. 129
Սոլովյով Ն. Վ. 66
Սոլոուխին Ս. Դ. 206
Սոկոլով 194
Սոկոլով Ի. Մ. 66
Սոկոլով Ն. Դ. 45
Սոկուր Պ. Տ. 47, 48
Սոմինչ 91
Սոննիկով 191
Սովետսկի Մ. Ա. 213
Սորոկին 46
Սպիրին Ա. Ի. 143, 176

Սպրինցո Ռուֆիմ 108
Սվետլով Դ. Դ. 228
Սվերդլով Ա. Դ. 209
Սվիտենկո Նիկոլայ 57
Սվիրիդով Վ. Պ. 80, 88
Ստալին Ի. 252
Ստանովա Ի. Յա. 59
Ստարշինին Ա. Ա. 95
Ստերել Ալեքսանդր 60
Ստելեցկի Պ. Ֆ. 213
Ստեպանով 116
Ստեպանով Նիկոլայ 125
Ստեպանովա Յե. Ի. 206
Ստեպանով Պ. Ի. 96
Ստեպշենկո Ֆ. Պ. 179
Ստեփանյան Ն. Դ. 61, 109, 217—221
Ստեփանյան Ն. Ս. 80
Ստեփանյան Ս. Բ. 187
Ստեփանով Ի. Դ. 164
Ստրատիլատով Ա. Ի. 215
Սուլեյկին Ա. Դ. 141
Սուխանով Ա. Ն. 211
Սուխոդին Յա. 72
Սուխով Ա. Ա. 108
Սուխովեյ Ա. Դ. 90
Սուշկին Վ. Մ. 109
Սուրաժկին Ի. Պ. 81

Վագանով Լ. Ն. 206
Վադին Վիկտոր 187
Վահունի Սուրեն 83
Վայտկա 207
Վանիֆատև Ա. Դ. 206
Վաչակաշվիլի 125
Վասիլյան Հ. Հ. 245
Վասիլչենկո Վ. Պ. 216
Վասիլև (պարտիզան) 232, 233
Վասիլև 47
Վասիլև Դ. Դ. 129, 213
Վասիլև Միխայիլ 129
Վասիլև Մ. Յա. 129, 220
Վասիլև Յե. Ֆ. 90
Վասիլևսկի 121
Վարդանյան Աստատուր 111
Վարդանյան Կարապետ 55
Վարդանյան Նիկոլայ 129
Վարդանյան Ն. Ս. 202
Վարդանյան Վ. Մ. 80
Վարդանյան Վարդան 167
Վարլամով Դ. Վ. 91
Վարլամով Ի. Ի. 141
Վացուրա 34
Վեդմեդենկո Ի. Ի. 180
Վեդնև Վ. Ի. 201
Վեժլիվցև Ի. Դ. 104
Վելիկանյան Վարվառա 169
Վեխին Գ. Ի. 39
Վերխովսկի Դ. Ն. 95
Վերով Ֆ. Ֆ. 66
Վերտլյուգով 108
Վիդյաև Դ. Ի. 205
Վիլյանեն Տ. 179
Վիխաև Ֆյոդր 144
Վինոգրադով 43
Վինոգրադով Ս. Ի. 227
Վիշնևսկի Վսեվոլոդ 72
Վիշնևսկի Վ. 184
Վիտտե Ն. Պ. 80
Վլասյակ 152
Վլասով 227
Վլասով Պ. Ի. 46
Վոզնեսենսկով 207
Վոլկով Ալեքսանդր 144
Վոլնովսկի Ն. Զ. 206
Վոկալ Ի. Ս. 52, 53
Վոնաշև Ե. 79
Վորորյով Բ. Ն. 10
Վորոնին Ն. Ն. 12
Վորոնով Ն. 184
Վորոնցով Յե. Պ. 91
Վորոշիլով Կ. Ե. 88
Վորոտնիկով Ն. Ի. 91

Տազաև 86
Տախիրով Այդոգդի 250
Տատարենկո Դ. Մ. 220
Տատուսյանց Ա. Տ. 95
Տարասենով Վ. Պ. 183

Տարասով Յակով 46
Տարասով Ն. Կ. 46
Տափուրաձե Ս. Վ. 60
Տելեգին Գ. Գ. 155, 156
Տերենտև Գեորգի 120
Տեր-Սիմոնով Գ. Ա. 10
Տիգրանով Գևորգ 10
Տիխոմիրով Ի. Վ. 214
Տիխոնով Մ. Ի. 192
Տիխոնով Մ. Ֆ. 185
Տիխոնով Նիկոլայ 68
Տիխոնով Ն. Ս. 11
Տիխոնով Վ. Ի. 207
Տիմանյուկ Լեոնիդ 248
Տիմոշենկո Ա. Դ. 171
Տիմոշկին Դ. Ի. 203
Տիմչուկ Պապիլո 63
Տիշչենկո Դ. Վ. 94
Տիպանով Ալեքսանդր 143
Տիպանով Ս. Պ. 176
Տիտով Ն. Ի. 179
Տիտովիչ Վ. Վ. 200
Տխակումաշև Արդուլախ 63
Տկաչենկո Ա. Կ. 202
Տյուտև Միխայիլ 108
Տորոլենկո Մ. Ն. 220
Տոմաշևիչ Ն. Ն. 155, 156
Տոմարով Վ. Ա. 200
Տոպուրկով 46
Տոտմին Ն. Յու. 52
Տվերդոխլեբ Մ. Ե. 90
Տրետյակով Իվան 148
Տրիբուց 88, 205
Տրիպոլսկի Ա. Վ. 96
Տրխոնովիչ Ա. Դ. 90
Տրոյան Մ. Պ. 12
Տրոշին 146
Տրուբաչև Վ. Ա. 159
Տրուբչենկո Վ. Ա. 90
Տրուշկին Ն. Ա. 184
Տրուսով Իվան 213
Տրոֆիմենկո 40
Տուդեր Լ. Մ. 45, 205, 206
Տումանով Գեորգի 96
Տոմորին Ս. Ֆ. 60
Տույգունով 202
Տուչկով 24
Տուրյան Ի. Մ. 147

Ցապով Ի. Ի. 220
Ցարենկո Գ. Պ. 91
Ցիգանով Ե. Տ. 220
Ցիդանով Յե. Ա. 91
Ցիմմերման Գեորգի 233, 240, 242
Ցորև Ա. Ֆ. 60
Ցոկոլաև Գ. Դ. 49, 129, 220
Ցվետկով Ալեքսանդր 117
Ցվետկով Գեորգի 243

Ուդալցով Ե. Գ. 217--219
Ուլիտենկո 152
Ուլմասով Շ. 72
Ուլյանով Ֆ. Ռ. 35, 36
Ուլյանովսկի Գ. Գ. 200
Ուխտոմսկի Ա. Ա. 11, 95
Ուշակով Կ. Պ. 39
Ուշչև Բ. Պ. 207
Ուսաչև Ֆ. Ա. 220
Ուսով Ա. Մ. 23
Ոսվարով 245
Ուտկին Ն. Ն. 66
Ուրազով Ա. Ա. 10
Ուրալով Վ. 23

Փափազյան Վահրամ 98
Փեհլևանյան Ս. Գ. 170
Փորսուղյան Հարություն 216

Քավթառաձե Ա. Ս. 52
Քարամյան Արշավիր 182

Օբրոսով Ֆ. Ի. 60
Օբուխով Ա. Ա. 60
Օգանեզով Գրիգորի 61
Օգանեսով Ս. Ս. (ծովային) 208
Օգանեսով Ս. Ս. (պարտիզան) 234, 235
Օգանովա Թամարա 12, 95
Օգանով Ս. Ա. 240

Օդինցով Դ. Ֆ. 136, 180
Օդնովերշենկո Ս. Ս. 199, 200
Օլենիշև 91
Օհանյան Լ. Գ. 229
Օհանյան Հ. Ս. 156
Օհանջանյան Հուսիկ 126
Օձկոտսկի Ա. Զ. 141
Օմարով 46
Օմելնիցկի Ա. Լ. 81
Օպլեսնին Ն. Վ. 39, 103, 104
Օռլով 240
Օռլով Մ. Բ. 222
Օռլով Վ. Դ. 209
Օսատյուկ 116
Օսիյանց Արամայիս 60
Օսիպով Ա. Ա. 59
Օսիպով Ս. Ա. 207
Օսիև Ն. Պ. 192
Օսկալենկո Դ. Յև. 129
Օվեչկին Վ. Պ. 91
Օվչիննիկով Կ. 79
Օրբելի Լ. Ա. 97, 98
Օրբելի Հ. Ա. 11, 95, 96, 98, 167
Օրգին Կ. Պ. 162
Օրլովսկի Մ. Դ. 90

Ֆարֆել Ս. 72
Ֆեդյակով Ս. Մ. 200
Ֆեդյունինսկի Ի. Ի. 141, 215
Ֆելդման Ն. Ե. 209
Ֆետիսով 47
Ֆիլատով 142
Ֆիլիպով Նիկոլայ 117
Ֆիսենկո Մ. Պ. 147
Ֆյոդորով 19
Ֆյոդորով Յև. Ա. 52
Ֆյոդորով Տիմոֆեյ 143
Ֆյոդորով Տ. Վ. 158
Ֆոմին Ֆ. Ֆ. 104
Ֆոն-Գոգենբրոյչ 26
Ֆրանտիշև Բ. 72

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Լենինգրադի հերոսական պաշտպանության մարտերում 9
1. Սովետական ժողովուրդների զավակների մասսայական սխրագործությունները 9
2. Պաշարում։ Լենինգրադը դիմանում է դժվարին փորձությանը 77
3. Շրջափակման ճեղքումը։ Անառիկ ամրոցը շարունակում է մարտնչել . . 115

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների զավակները Լենինգրադի շրջափակման լրիվ վերացման և մարզի ազատագրման մարտերում 133
1. Լենինգրադի շրջափակման լրիվ վերացումը 133
2. Հաղթանակ Կարելական պարանոցում 177
3. Գրոհում են Բալթյան կարմրադրոշ նավատորմայինները 204
4. Թշնամու թիկունքում 223
Անձնանունների ցանկ 253

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆ. ԸՆ. ՀԱՆՐԱՊԵՏԱՐԱՆ
ՍԱՎՈՒԵՏԻ ՍՈՒ

ՄԱՐԱՏ ԳՈՒՐԳԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԻԿՆԵՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐՈՒՄ (1941—1944)

Հրատ. խմբագիր Ա. Հ. Շաղգամյան
Նկարչական ձևավորումը Կ. Կ. Ղաֆադարյանի
Գեղ. խմբագիր Հ. Ն. Կոռծակալյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարությունյան
Սրբագրիչ Ա. Ա. Ավանեսյան

ИБ № 1091

Հանձնված է շարվածքի 4.06.1985 թ.։ Ստորագրված է տպագրության 21.03.1986 թ.։ ՀՖ 04536։ Չափը 60×84 1/16, թուղթ № 1։ Տառատեսակ՝ «գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 17,2 մամ., տպագր. 17+12 թ. ներդիր մամուլ։ Ներկ. մամուլ 17,2։ Հրատ. հաշվարկ. 16,6 մամուլ։ Տպաքանակ 2000։ Հրատ. № 6604։ Պատվեր № 534։ Գինը 2 ռ. 55 կ.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։
Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։
Типография Издательства АН АрмССР, 378310, г. Эчмиадзин.

A II 73435